# Վախթանգ Անանյան

## Բովանդակություն


ԱՌԱՋԱԲԱՆ....7
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ....8
Թե ինչպես մի սովորական փոստարկղ պատճառ դարձավ մի շատ մեծ թյուրիմացության....8
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ....11
Թե ինչպես մի տղայի ցնորամիտ բնավորության պատճառով խումբը շեղվեց իր ուղիղ ճանապարհից....11
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ....15
Թե ինչպես մեր պատանիները հարթ ճանապարհները թողած՝ ընթանում էին դիվային կածաններով....15
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ....17
Թե ինչպես բնությունը բոլորովին էլ նկատի չառավ, որ պատանիները պիտի ժամանակին վերադառնան տուն....17
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ....23
Թե ինչպես հույսն ու հուսահատությունը պարբերաբար հաջորդում էին իրար....23
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ....26
Թե ինչպես կարիքն առանց հապաղելու սկսեց բախել նրանց դուռը....26
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ....28
Թե ինչպես մեր պատանիները երազում էին նախամարդու հզոր բազուկներն ունենալ....28
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ....32
Թե ինչպես պետք եկավ բնության մեջ ձեռք բերած փորձը....32
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ....35
Թե ինչպես պարզվեց, որ մեր պատանիների վիճակը ավելի ծանր է լինելու, քան կարծում էին իրենք....35
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ....40
Թե ինչպես դժվար է անցնում կյանքը, երբ մարդուս ստամոքսը հարմարեցված չի լինում բնության պարգևած ձրի սննդին....40
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ....47
Թե ինչ կատարվեց Այգեձոր գյուղում, երբ ֆերմայից ստացվեցին այն չարաբաստիկ նամակները....47
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ....51
Թե ինչպես ոչ մի շնչավոր չի համաձայնում կեր դառնալ ուրիշին....51
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ....54
Թե ինչ է ստացվում, երբ անփորձ մարդը փորձում է որսորդությամբ զբաղվել....54
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ....56
Թե ինչպես բախտը հաճախ ժպտում է անարժան մարդկանց....56
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ....59
Թե ինչպես հայելի պիտի դնել մարդու առաջ, որ տեսնի իր կերպարանքը....59
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ....65
Թե ինչքան դառն է լինում մարդուս վիճակը, երբ դուրս է մնում կոլեկտիվից....65
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ....69
Թե ինչն էր այնքան թանկ Աշոտի համար....69
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ....71
Թե ինչպես, այնուամենայնիվ, մարդս գտնում է կենդանուն խաբելու և նրան իր ստամոքսին ծառայեցնելու հնարը....71
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ....73

Թե ինչպես գնդակը գտնում է վախկոտին, որտեղ էլ որ պահած լինի նա իր գլուխը ..... 73
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ..... 79
Թե ինչպես ամբողջ երկիրն էր փնտրում կորածներին ..... 79
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ..... 80
Թե երբեմն ինչ կարող է պատահել մարդուս հետ, եթե ժայռից գլորվի անդունդը ..... 80
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ..... 85
Թե ինչպես նեղության ժամին մարդուս միտքը արագացնում է իր ընթացքը ..... 85
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ..... 89
Թե ինչպես նույնիսկ շունը չի հանդուրժում կոպիտ վարմունքը ..... 89
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ..... 91
Թե ինչպես Աշոտը հասավ այն բանին, ինչին որ ձգտում էր այնպես համառորեն ..... 91
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 94
Թե ինչպես մեր պատանիները շարունակում էին նորանոր միջոցներ հորինել իրենց ընկերոջը փրկելու համար ..... 94
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ..... 96
Այն մասին, թե ինչպես է ծնվում մարդկայնությունը ..... 96
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ ..... 100
Թե ինչպես, այնուամենայնիվ, դժվարությամբ է դուրս գալիս արյան միջից այն, ինչ այնտեղ է մտել երեխա հասակում ..... 100
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ..... 102
Թե ինչպես մեծ փոթորիկներից առաջ միշտ խաղաղ է լինում բնության մեջ ..... 102
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ..... 105
Թե ինչպես հանկարծ գործեց բնության նիրհող և կույր ուժերից մեկը ..... 105
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ..... 107
Թե ինչեր ասես չէր հորինում ժողովուրդը, երբ անգետ էր ու սնահավատ ..... 107
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ..... 109
Թե ինչքան ցանկալի է արևը, երբ շուրջդ մութ է ու խավար ..... 109
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ..... 112
Թե ինչպես իսկական ընկերը երևում է նեղության մեջ ..... 112
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ ..... 116
Թե ինչ է սովորեցնում Հովազաձորում անցկացրած ծանր օրերի փորձը ..... 116
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 119
Թե ինչպես մեր պատանիները ստիպված էին ամեն ինչ սկսել նորից ..... 119
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ ..... 121
Թե ի՞նչ անակնկալ է սպասում այն մարդկանց, ովքեր իրենց գրված պաշտոնի պատճառով մեծամտանում և վերևից են նայում ընկերներին ..... 121
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ ..... 124
Թե ինչպես հիվանդությունը եկավ առանց հարցնելու՝ Հովազաձորում բժիշկ ու բուժկայան կա՞, թե ոչ ..... 124
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ ..... 127
Թե ինչպես արհեստ ունեցող մարդը չի կորչի կյանքում ..... 127
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ ..... 130
Թե ինչպես չիրագործվեց հովիվ պատանու իղձը ..... 130

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ ..... 132
Թե ինչպես դեպք է լինում, երբ ընկերոջդ համար պիտի զոհես ամենաթանկագին բանն անգամ ..... 132
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ..... 136
Թե ինչպես ահավոր վտանգը գաղտագողի մոտենում էր անձավի շեմքին... ..... 136
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ..... 139
Թե ինչպես ապրելու հույսը մեկ բոցավառվում, մեկ աղոտանում էր մեր գերիների մեջ ..... 139
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ..... 144
Թե ինչպես մահը դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտենում էր բնակարան-անձավին ..... 144
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ..... 147
Թե ինչպես ձախորդությունն էլ, հաջողությունն էլ մարդուս այցի գալիս՝ միշտ ընկերով են գալիս ..... 147
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 149
Թե ինչպես մեր տղաները ջանում են պարզելու խորհրդավոր այգու գաղտնիքը ..... 149
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ..... 152
Թե ուր է տանում խորհրդավոր շավիղը ..... 152
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ..... 157
Թե ինչպես մեր պատանիները արագությամբ կարճացնում էին դեպի ազատություն տանող ճամփան ..... 157
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ..... 160
Թե ինչպես ջուրը սառույց է դառնում, իսկ սառույցը փակում է ճամփան... ..... 160
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ..... 162
Թե որքան մոտ և որքան հեռու էր ազատությունը ..... 162
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ..... 165
Թե ինչպես անցկացրին ձմռան առաջին օրը Հովազաձորի գերիները ..... 165
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ..... 168
Թե երբեմն որքան ձեռնտու չէ ձմռան քուն մտնելը ..... 168
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ..... 171
Թե ով է բնակվել խորհրդավոր անձավում ..... 171
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ..... 172
Թե ինչպես ժամանակավոր զինադադար կնքվեց Հովազաձորի գերիների և բնության միջև ..... 172
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ..... 176
Թե ինչպես մի անակնկալ դեպք հիշեցրեց մեր պատանիներին, որ վրա հասած խաղաղությունը երկար չի տևելու ..... 176
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 181
Թե ինչպես անշունչ չղջիկները հարություն առան և թռան-գնացին ..... 181
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ..... 183
Թե ինչպես գլխարկը գլխին մի այծ էր շրջում սարերում... ..... 183
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ..... 186
Թե ինչպես ձեռնտու չէ կենդանուն, երբ մարդու գլխարկ է ծածկում... ..... 186
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ..... 190
Այն մասին, թե ով է եղել մեր գերիներին կողոպտող ավազակը ..... 190
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ ..... 192
Թե ինչու ճգնավորը անպատճառ մի այլ կածան ևս պիտի գցեր իր «սրբազան ոտքերով» ..... 192

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 196
Թե ինչ են պատմում մեծ և փոքր կճղակները ..... 196
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ ..... 197
Թե ուր են տանում հետքերը ..... 197
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ ..... 203
Թե նորից ինչեր կատարվեցին անակնկալ դեպքերով հարուստ այն զարմանալի օրը ..... 203
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ ..... 207
Թե ինչպես ձախորդությունն ու հաջողությունը հարազատ քույր ու եղբայր են ..... 207
ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ ..... 210
Այն մասին, թէ ինչից էր այնքան դժգոհ Միրուք Ասատուրը ..... 210
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ ..... 211
Թե ինչպես ցնդեց այն առասպելը, որ իբր թե երեխաները փախել են Հեռավոր Արևելք ..... 211
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ..... 214
Թե ինչպես մարդուս սիրտը ամրանում է փորձանքների մեջ ..... 214
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ..... 216
Թե ինչպես թյուրիմացաբար կռիվ ծագեց նրանց միջև, ովքեր միշտ խուսափում են իրար հանդիպելուց ..... 216
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ..... 218
Թե ինչպես բուռն արկածներից հետո կարող են վրա հասնել մանր հոգսերով լի ձանձրալի ժամանակներ ..... 218
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ..... 221
Թե ինչ մտադրություններ է ունեցել արջը Հովազաձոր մտնելիս ..... 221
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 224
Թե ինչպես Հասոն չէր հասնում այն բանին, ինչին որ ձգտում էր, այլ հասնում էր նրան, ինչին որ չէր ձգտում.. 224
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ..... 226
Թե ինչպես մի խեղճ կենդանի գերի գնաց իր մայրական զգացմունքներին ..... 226
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ..... 229
Թե ինչպես նյութական ապահովությունը նոր, կուլտուրական պահանջներ է ծնում մարդուս մեջ ..... 229
ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ..... 230
Թե ինչ օգուտ կարող էր քաղել երկիրը մեր պատանիներին հասած դժբախտությունից ..... 230
ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ..... 233
Թե ինչպես մեծ ճակատամարտից առաջ մարդ նախ պետք է հոգեպես և ֆիզիկապես պատրաստվի՝ դիմագրավելու վերահաս վտանգները ..... 233
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ..... 236
Թե ինչպես պայքարի մեջ ամրանում է մարդուս սիրտը ..... 236
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ ..... 240
Թե ինչպես խավարում շարժվող կրակները ճիշտ ճամփա ցույց տվին մարդկանց, բայց սրանք գլխի չընկան 240
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ..... 241
Թե ինչպես կորածները փնտրում են կորածին... ..... 241
ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ ..... 244
Թե ինչպես բնության մեջ հրաշք են թվում շատ հասարակ երևույթներ, երբ դրանց պատճառը չես իմանում. 244
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ..... 251
Թե ինչպես վտանգը վճռականություն և քաջություն է ծնում մարդուս մեջ ..... 251

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ ..... 255
Թե ինչ անձավ էր դա և ինչեր հայտնագործեցին մեր պատանիները նրա մթին խորքերում ..... 255
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ..... 258
Թե ինչպես խաղաղությունը վերջնականապես մտավ Հովազաձոր ..... 258
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՑՈՒԹԵՐՈՐԴ ..... 259
Թե ինչպես Աշոտը կկառավարեր գյուղը, եթե... ..... 259
ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ..... 262
Թե ինչ էր գրում անվանի որսորդ Միրուք Ասատուրը Այգեձորի իր բարեկամներին ..... 262
ՎԵՐՋԱԲԱՆ ..... 268

# ԱՌԱՋԱԲԱՆ

Տոթ էր Արարատյան դաշտում, այնպես տոթ, որ օդը թանձրացել է մառախուղի նման: Շնչավորներից ով թև ունի թռել-գնացել է հով երկրներ, իսկ ով թև չունի՝ երկրի ընդերքն է անցել: Օձերն անգամ սողալով բարձրացել են լեռները՝ ամառանոց: Ուր չի հասել ջուրը՝ երկիրը չորացել է կիզիչ արևից: Փոքր Արարատի դիմաց, լերկ տափաստանի մի հատվածում, ծուռումուռ ուղտափշերն են ցցված մնացել այստեղ-այնտեղ և նվաղած օշինդրն է իր եթերայուղերը տալիս մթնոլորտին ու օդը լցնում անուշ բուրմունքով: Մեռելային լռություն է տիրում շեներից հեռու ընկած այդ տափաստանում. այնտեղ դեռ չի հասել Հրազդանի ջուրը և նրա հետ էլ՝ հզոր տեխնիկայով զինված մարդը:

Եվ ահա, կեսօրին, երբ հարավի արևը զենիթից կրակ է թափում երկրի վրա, երբ երկնքում ամպի մի փաթիլ անգամ չկա, հանկարծ դաշտի վրա կախված պղնձագույն ժայռերից գոռում-գոչյունով հեղեղ է թափվում ցած...

Ճամփին հանդիպած հող ու քար, փուշ ու խոտ իր բաշին առած՝ այդ անակնկալ հեղեղը, վիշապի նման մռնչալով, գալարվելով, մեջքը ուռցնելով, լայնքին կտրում-անցնում է Արարատյան դաշտը և Արաքսի պարզ ջրերը պղտորելով՝ վազում դեպի ծով:

Որտեղի՞ց է ծնվում, որտեղի՞ց է գալիս այդ հանելուկային հեղեղը, երբ ահա երկու շաբաթ է երկնքից մի կաթիլ անձրև չի ընկել, երբ Արարատի դիմացի սարերում մի բուռ ձյուն չկա:

Խանձված ու ջրի կարոտ այդ վայրերում որտեղի՞ց այդ հրաշք հեղեղը...

Ճամփորդը տարակուսած կանգ է առնում իր ճամփան անակնկալ կերպով կտրող հեղեղի տեսքից, իսկ սա տեսիլքի նման գալիս-անցնում է և մի քանի րոպե հետո արդեն գոլորշի է բարձրանում նրա դատարկ հունից , քարերը չորանում են և շուրջը նորից այնպես է խաղաղվում, կարծես ոչինչ չի էլ պատահել:

Գլուխն օրորում է ահաբեկված ճամփորդը և նրա ուղեղում նույն հարցն է ծնվում, որը տանջել է Արարատյան դաշտի բնակչության հարյուրավոր սերունդների:

- Ի՞նչ հեղեղ է դա և որտեղի՞ց է գալիս անամպ ու պարզ օրը...

Եվ դարեր շարունակ մարդկանց միտքն զբաղեցնող այդ առեղծվածը այդպես էլ անլուծելի կմնար, եթե 1953 թվի նոյեմբերի վեցին Այգեձոր գյուղից մի խումբ աշակերտներ չգնային անասնապահական ֆերմայի ձմեռանոց իրենց ենթաշեֆ հորթերին խնամելու...

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Թե ինչպես մի սովորական փոստարկղ պատճառ դարձավ մի շատ մեծ թյուրիմացության

Իսկապես, եթե այդ օրը Այգեձոր գյուղի փոստատար Մուրադը փոստարկղ չկախեր կաթնապրանքային ֆերմայի շենքերից մեկի պատին, տեղի չէր ունենա այն մեծ թյուրիմացությունը, և այս վիպակն էլ չէր գրվի: Բայց դե հո չե՛ս կարող ամեն բան կանխատեսել. ձախորդությունը հաճախ ա՛յն կողմից է գալիս, որ կողմից նրան երբեք չես սպասում: Հետո՛, Մուրադն ինչպե՞ս փոստարկղ չտաներ լեռների գրկում տեղավորված իրենց ֆերման, երբ շրջանի բոլոր ֆերմաներում էլ կան այդպիսի արկղեր. հո Այգեձորը պոչից չի՞ գնալու: Իսկ Այգեձորի հովիվներն ու տավարածները այնքան գրագետ մարդիկ են, որ նույնիսկ թղթակցություններ են գրում թերթերին, նամակներ են գրում Շահումյանի շրջանի անասնապահներին՝ իրենց փորձը հաղորդում են նրանց, գրում են գյուղ՝ իրենց հարազատներին, - դե առանց փոստարկղի ինչպե՞ս կլինի:

Եվ այդպես, փոստատար Մուրադը, արագաշարժ ու աշխույժ մի ծերունի, առանց հետևանքների մասին մտածելու, մի նոր, փայլուն փոստարկղ բերեց գյուղից, հանդիսավոր կերպով ամրացրեց ֆերմայի շենքերից մեկի պատին, ետ-ետ գնաց, ձեռքերը կողքերին կանթած՝ նայեց հպարտ ու հայտարարեց.

- Այլևս ձեռքով նամակ չուղարկե՛լ գյուղ: Էս ո՞ր դարում ենք ապրում: Նամակները գցեցեք արկղը, տանողը կտանի, ուղարկողը՝ կուղարկի, ինչպես որ կարգն է: Քաղաքի՛ նման...

Ու սկսեց թուղթ, ծրարներ և դրոշմանիշեր վաճառել ֆերմայի աշխատողներին:

Այդ ժամանակ քիչ հեռու, առվի մյուս ափին, դեղնած սաղարթները թափող վայրի տանձենու տակ, մի խումբ դպրոցականներ դաս էին պատրաստում: Կաթ փոխադրող բեռնատար մեքենայով նրանք եկել էին ֆերմա, խնամել էին պիոներական ջոկատի ենթաշեֆ հորթերին և այժմ, ընդմիջումի ժամին, պատրաստում էին իրենց դասերը:

Հերթը հասավ «ՍՍՀՄ աշխարհագրությանը»: Լայն թիկունքը ծառի բնին հենած, խոշոր սև աչքերը երկար թարթիչների տակից բաց գրքին հառած, ամեն բառը շեշտելով, ընթերցում էր մի պատանի՝ Աշոտը, որ դասարանում աչքի էր ընկնում բնագիտական առարկաների մեջ: Կարդում էր ոգևորությամբ, բայց զգացվում էր, որ դասագիրքը չի բավարարում, նա երկրի բնության մասին ավելի բան գիտեր, քան դասագրքերի սեղմ շարադրանքներն են: Հասավ գլխի վերջին և հիսաթափված կանգ առավ:

- Հենց այսքա՞նը հեռավոր Արևելքի կենդանական աշխարհի մասին...

- Այդքանն էլ շատ է, ո՛վ գլուխ ունի... - քթի տակ փնթփնթաց մեջքի վրա խաշամին պառկած մի տղա և բարձրացնելով իր մեծ գլուխը՝ մոխրագույն աչքերով նայեց ընթերցողին:

- Շա՛տ է... Տասնութ էջ է բռնում հեռավոր Արևելքի նկարագրությունը, իսկ կենդանիների մասին ընդամենը հինգ տող կա: Այնինչ ռուս ճանապարհորդները հատորներ են գրել այդ երկրի մասին, - տաքացավ Աշոտը: - Ի՞նչ բան է սա, երկու խղճուկ նախադասություն մի երկրի կենդանիների մասին, որը Եվրոպան իր փորի մեջ կտեղավորի և նրանից հարուստ է իր բնությամբ, իր հանքերով, գետերով: Իսկի պատկերացնո՞ւմ եք, թե ինչպես Խաղաղ օվկիանոսից ձկները վտառներով սև շվաքի նման մտնում են հեռավոր Արևելքի գետերն ու գնում նրանց հոսանքն ի վեր: Այնքան են գնում, որ գետերը բարակում են, դառնում առուներ և ձկների մեջքերը երևում են ջրի միջից... Ու այն ժամանակ նույնիսկ արջերը դառնում են ձկնորսներ, պպզում են ջրի ափին ու թաթերը գցում-դուրս շպրտում իրար հրմշտելով դեպի վեր գնացող ձկներին... Պատկերացնում եք, չէ՞, արջը ձուկ որսալիս... Ինչպե՞ս կարելի է այդ մասին չգրել:

- Էլի դու դասը թեքեցիր որսորդությա՞ն կողմը: Մենք աշխարհագրություն ենք սովորում, հո որսորդություն չե՞նք սովորում, - ներողամիտ ժպիտը շեկ ու բարակ դեմքին, դիտեց խմբի միակ աղջիկը՝ Շուշիկը, որ արմունկներին կռթնած, հայացքը տղայի լայն ու արդեն առնականացող դեմքին՝ ուշադիր լսում էր նրան:

- Բայց այդպիսի թեքումը դուրեկան է, - պառկած տեղից իր կարծիքը հայտնեց մի թուխ, նիհար տղա՝ Գագիկը, և ծիծաղը սև-խաղող աչքերի մեջ՝ շարունակեց: - Քանի որ հենց «որսորդություն» բառից անգամ ես խորովածի հոտ եմ առնում...
Ոմանք ծիծաղեցին, մեծագլուխ տղան՝ Սարգիսը խեթ ու հեգնական նայեց նրան, իսկ Աշոտը լուրջ-լուրջ շարունակեց.
- Եվ ինչո՞ւ մանրամասն չի գրված այդ երկրի անտառներում իրար խճճված ու լիանոսների նման ծառերը բարձրացած վայրի խաղողի մասին, հովիտներում վխտող վարազների մասին, մարալների մասին, որոնց նմանը ո՛չ մի երկրում չկա... Բա վագրերը, վագրե՛րը, որոնք ապրում են խոր ձյան մեջ, սառնամանիքում...
Տղան աշխուժացավ, առաջ թեքվեց, նրա մեծ-մեծ աչքերում կրակներ երևացին:
- Դե ցույց տվե՛ք աշխարհում մի երկիր, ուր վագրն ապրի քսանհինգ աստիճան սառնամանիքում...
Ասաց և հարցական, հրացայտ աչքերով նայեց ընկերներին, այնպես, կարծես այդ վագրերն իր գյուտն էին կամ իր աճեցրած կենդանիները:
- Չկա՛: Այդպիսի երկիր չկա: Ամեն տեղ վագրն ապրում է տաք վայրերում, եղեգնուտներում, ջունգլիներում, - ո՛չ մի երերում նա ձյուն չի տեսնում: Իսկ մեզ մո՞տ... Ա՛խ, Արսենևի գրվածքները չեք կարդացել, թե չէ վեր կկենայիք հենց հիմա կգնայինք հեռավոր Արևելք՝ տեղում նայելու այդ հրաշք երկիրը: Ի՞նչ կա այստեղ որ...
Եվ Աշոտը արհամարհանքով մի կողմ նետեց դասագիրքը:
- Իսկ դու կարդա ինչ-որ գրքում է գրված, քո ֆանտազիան ինձ պետք չի, - կոպտեց Սարգիսը:
Չէր սիրում նա Աշոտին, չէր սիրում նրա ցնորամիտ բնավորությունը, նրա մեծ-մեծ խոսելը, համարձակությունը: Չէր սիրում, երբ «այդ պարծենկոտը», հոր հետ որսից վերադառնալիս, դպրոցականներին հավաքում է գլխին ու փչում, իսկ նրանք բերանները բաց լսում են, մանավանդ աղջիկները...
- Սարգի՛ս, ախր դու Պրիշվինի «ժեն-շենը» չես կարդացել, որ կարդացած լինեիր, կառաջարկեիր հենց հիմա գնալ կայարան, գնացք նստել և՝ ուղիղ դեպի հեռավոր Արևելք...
Այնպես կարոտով ու երազուն է խոսում այդ Աշոտը հեռավոր Արևելքի մասին, որ եթե բաց թողնեն, իրոք կգնա:
- Էն ինչե՛ր են գրում ռուս ճանապարհորդնե՛րը... Էն ի՞նչ հրաշք երկիր է հեռավոր Արևելքը, - երազող հայացքը դիմացի ժայռերին հառած շշնջում էր պատանին:
- «ժեն-շե՞ն», ես հո դա կարդացե՛լ եմ, արձակ պոեմ է, - վրա բերեց Շուշիկն աշխուժանալով: - Նույնիսկ մի դարձվածք էլ հիշում եմ... «Որսո՛րդ, որսո՛րդ, ինչո՞ւ բռնեցիր եղնիկի ոտքից...»:
- Կբռնե՛ր, ոնց չէ...
- Իհարկե, կբռներ: Ինքը թաքնված է լինում վայրի խաղողի խիտ թփի տակ: Եղնիկը գալիս տերևներ է պոկում ու առաջին ոտքը խոթում թփի մեջ: Բայց այնքան գեղեցիկ է լինում այդ ոտքը և կենդանին այնքան անմեղ, որ մարդը խղճահարվում ու ձեռքը չի մեկնում նրա ոտքին... Կարծեմ այդպես է, լավ չհասկացա, ռուսերեն էի կարդում... Հա՛, այդ ժեն-շենը նա չի՞, Աշո՛տ, որի տերևի մոտ զինված մարդիկ ապրում են տասնհինգ-քսան տարի, որ մեծանա: Հետո հանում են այդ բույսի արմատը ու զինված խմբով տեղափոխում Չինաստան, որ վաճառեն շա՛տ, շա՛տ մեծ գնով, չգիտեմ քանի հազար ոսկով...
- Պա՛հ, հազար ոսկի մի արմատի՞ն...
- Այո՛, որովհետև այդ արմատը «կյանքի արմատ է», երիտասարդացնում է ծերունիներին... Վա՛յ, մի դենը նայեցե՛ք, փոստարկղ են կախում ֆերմայում: Ձա՛ն, սրանից հետո մայրս ֆերմայից շուտ-շուտ նամակ կգրի ինձ...
Վեճը դադարեց, բոլորն էլ շուռ եկան դեպի այն կողմ, ուր ֆերմայի աշխատողները հավաքված նայում էին նոր փակցված փոստարկղին:
- Սպասեցե՛ք, առաջին նամակը ե՛ս պիտի գցեմ, - գոչեց Գագիկը: - Բայց ո՞ւմ գրեմ, ի՞նչ գրեմ: Սպասիր, քո հեռավոր Արևելքի մասին գրեմ իմ պապին...
Եվ Գագիկի խելքին փչեց այսպիսի մի կատակ անել իր պապի հետ.

«Մնաս բարի, պապիկ ջան, ես գնում եմ հեռավոր Արևելք քեզ համար բերելու «կյանքի արմատը», որի մասին գրված է Պրիշվինի «ժեն-շեն» գրքում: Նրա ջուրը խմեցիր թե չէ՝ իսկույն կերիտասարդանաս: Լազաթ կտա, հը՞, պապի՛, մարդ քեզ տեսնի մորուքդ սև, հրացանն ուսիդ Աշոտի հոր հետ որսի գնալիս: Քո ջահելությամբ շատ ես պարծենում, պիտի քեզ ջահելացնեմ՝ տեսնեմ ի՞նչ տեսակ ջահել ես: Քո թոռ Գագիկ, որ գրում է ֆերմայի մեծ տանձենու տակից»:
Գրեց, կարդաց բարձրաձայն, ծիծաղեցրեց ընկերներին:
- Թո՛ղ, ա՛յ տղա, կկարծի, թե իսկապես գնացել ես հեռավոր Արևելք, կանհանգստանա, - լրջացավ Աշոտը:
- Որտեղի՞ց պիտի կարծի, ես նամակից շուտ եմ գյուղ հասնելու:
Ու Գագիկը թուղթը ձեռքին վազեց փոստատարի մոտ: Նրանից ծրար վերցրեց, նամակը դրեց մեջը, հասցեն գրեց և գցեց արկղը:
- Առաջին նուբարը ե՛ս արի, - երեխավարի թռվռաց նա՝ ընկերների մոտ վերադառնալով:
Աշոտն էլ գրեց իր որսորդ հորը՝ Արամին.
«Հայրի՛կ, այսօր դաս սովորելիս ծանոթացանք հեռավոր Արևելքին: Ինչ երկիր է՛, ինչքան որս կա՛... Ե՞րբ ենք քեզ հետ հրացաններով զինված հեռավոր Արևելք գնալու... Այնպես եմ ուզում գնալ այդ երկի՛րը, ուղղակի հոգով-սրտով այնտեղ եմ...»:
Այդպես, դասի թե՞ Աշոտի գունագեղ պատմության ազդեցության տակ, երկու նամակն էլ հեռավոր Արևելք գնալու մասին դուրս եկան:
Ծրարները փոստարկղը գցելուց հետո, նրանք խուզեցին հորթերի պոչերի արմատները, դաղեցին պարագիտներ ոչնչացնող լուծույթով և պայուսակները վերցնելով, պատրաստվեցին ճամփա ընկնելու դեպի գյուղ:
Դա շաբաթ օրն էր, նոյեմբերի 7-ին: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 8-ին ևս տոն էր, այնպես որ նրանք մեկ օր ևս կարող էին մնալ ֆերմայում: Բայց կայանալիք տոնական շքերթը, թմբուկների ու շեփորների ձայները նրանց քաշում էին գյուղ, և պատանիները սկսեցին հրաժեշտ տալ ֆերմայի իրենց հարազատներին:
Կթվորները ճամփի ուտելիք դրին նրանց հետ՝ ոչխարի անքաշ պանիր՝ սաջի վրա թխված լավաշի մեջ փաթաթված:
Շուշիկի մայրը՝ ֆերմայի կթվոր Աշխենը, դույլը ձեռքին անցնում էր, երբ աղջկան տեսավ պայուսակը ուսը գցած՝ ճամփա ընկնելու պատրաստ:
- Դեռ երեսդ կարգին չեմ տեսել, էդ ո՞ւր ես գնում, աղջի՛, - հարցրեց նա անհանգստացած:
- Ո՞ւր... հեռավոր Արևելք, - ծիծաղեց աղջիկը և հետն էլ մտածեց. «Այդ Աշոտն էլ զարմանալի տղա է. հանրահաշվի դասին ննջում է, իսկ աշխարհագրության ժամին կրակ կտրում»:
- Վիի՛ , քոռանամ ես, Արևե՞լք... ի՞նչ կա էնտեղ, աղջի՛...
- Ի՞նչ... ձուկ որսող արջեր և ձյան մեջ ապրող վագրեր... - շարունակում էր ծիծաղել Շուշիկը: Իսկ Աշոտը, հոնքերը խոժոռած՝ լսում էր նրան, գիտեր, որ իրեն է հեգնում:
Երբ ճամփա ընկան, հետևներից լսվեց քուրդ պատանի Հասոյի ծանոթ ձայնը.
- Դո՛ւ ո՞ւր ես գնում, տո սատկած, բա ոչխարն ո՞վ պահի...
Շանն էր նախատում:
- Իսկ դո՞ւ ուր ես գնում, Հասո՛, - հարցրեց Աշոտը:
- Գյո՛ւղ: Խանութից շաքար ու թութուն եմ առնելու:
Հասոն ֆերմայի հովիվներից մեկի՝ Ավդալի որդին էր, ծնվել էր սարի ճամփին, մեծացել էր հանդերում՝ հոտի հետևից շրջելով, և իրենց գյուղից բացի, կյանքում մի քանի գյուղ էր տեսել, իսկ քաղաք բոլորովին տեսած չկար: Ասենք, գյուղ էլ նա հազվադեպ էր գնում հոր համար ծխախոտ, շաքար գնելու, կամ ուշ աշնան այն օրերին, երբ ոչխարներ էր տանում մթերման կայան հանձնելու:
Տասներեք-տասնչորս տարեկան մի պատանի էր դա, սաթի նման սև ու պսպղուն մազերով, բրոնզագույն քամիարված դեմքով և ածուխի պես սև աչքերով: Նա դրել էր հոր «քոլոզը» (թաղիքե կլոր գլխարկ), որի վրա փաթաթված ապարոշի ծոպերը իջել էին ճակատին ու ծոծրակին: Գոտու տեղ նույնպիսի մի մետաքսյա հնամաշ շարֆ փաթաթված էր նրա բարակ մեջքին: Հագին ուներ անթև աբա կոշտ ու հաստ շալից, իսկ շալվարը լայն էր ու զոլավոր, որպիսիք հագնում էին շատախցիները:

Սիրում էր Հասոն իր ազգային տարազով մտնել գյուղ, սիրում էր, երբ ամեն կողմից իրեն էին նայում, չէ՞ որ Այգեձորում միայն նա էր այդ հագուստով:
- Դե լավ է, ճամփին քո չոմբախով ու Բոյնախով կպաշտպանես մեզ, - ուրախացավ Գագիկը:
- Ինչի՞ց պաշտպանեմ, - միամտորեն հարցրեց Հասոն:
- Ինչի՞ց... Նալած նապաստակներից...
Այդ կատակի վրա միայն Շուշիկը ծիծաղեց. այնպես զվարճալի է այդ Գագիկը, հենց բերանը բաց արավ, գիտես, որ մի ծիծաղաշարժ բան պիտի ասի: Իսկ այդ Սարգիսը միշտ լուռ է, նույնիսկ ճամփա գնալիս ետ է մնում, որ ոչ ոքի հետ չխոսի... Երևի դրա համար են դպրոցում նրան «ուրբաթախոս» կոչում:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Թե ինչպես մի տղայի ցնորամիտ բնավորության պատճառով խումբը շեղվեց իր ուղիղ ճանապարհից

Ճանապարհը մեր պատանիներին ձորից դուրս հանեց Արարատյան դաշտն իջնող մի լեռնամատի ուսը և նրանց հորիզոնը միանգամից ընդարձակվեց:
Ետ նայեցին. ահա ձորում, լեռներից ցած իջնող երկու գիժ առուների միացման կետում, կարմրին են տալիս ֆերմայի նոր շենքերի թիթեղյա տանիքները: Ձորն այնքան նեղ է, որ վերին ժայռերից պոկ եկած քարը դղրդոցով գլորվում-հասնում է գոմերին, զարկվում է որևէ պատի, նոր միայն կանգ առնում: Ֆերմայի ձմեռանոցից վերև, մինչև լեռների ճերմակած գագաթները մերկ է, խանձված ու գորշ, մանրածառ անտառներ կան միայն հույսիս նայող լանջերին: Ներքևում, մինչև Արարատյան դաշտը, բուսականությունն ավելի աղքատ է: Այդտեղ շիկակարմիր ժայռեր են՝ կազմված կրաքարից, իսկ ավելի ցած՝ լեռները վեր են ածվում դեպի դաշտ իջնող մաշված բլրաշարքերի, որոնց արանքներով հոսող առուների ափերին է, որ կյանք կա՝ այգիներ, ցանքեր, մնացած վայրերը օձառատ «ղռեր» են:
Բայց երբ հայացքդ այդ բլուրներից սահեցնում ես ավելի ցած և իջնում Արաքս գետի հովիտը, սիրտդ փառավորվում է, հայացքդ՝ շոյվում:
Սկսած Ջուլֆայի մոտերքից, ուր Արաքսը դաշտից մտնում է խոր-խոր կիրճերը, մինչև Հոկտեմբերյանի բլուրները՝ մոտ 250 կիլոմետր երկարությամբ, հովիտը ծածկված է ոսկեգույն խաղողի, ընտիր դեղձի, Արարատյան աշխարհի գույնզգույն պտուղների այգիներով և «ճերմակ ոսկու» պլանտացիաներով: Իսկ հովտի մյուս ափից մինչև ամպերը, և ամպերից էլ վեր՝ մինչև երկնի լազուրը՝ վեհորեն բարձրանում են Մեծ ու Փոքր Արարատները՝ փեշները վառ զգեստներով ծածկված, իսկ գլուխները ճերմա՛կ- ճերմա՛կ...
Տարված դիտում էր բնության սիրահար պատանին հայրենի երկրի աննման տեսարանները և մի պահ մոռացել էր և՛ իրեն, և՛ ընկերներին:
Վերջապես նա սթափվեց և ծանր ու հեղինակավոր ասաց.
- Այսպիսի օրը մարդ գյո՞ւղ գնա... Եկեք ես ձեզ տանեմ վայրի այծերի մոտ:
- Խոսքերիցդ խորովածի հոտ չի գալիս, Աշո՛տ, ձեռքիդ հրացան չկա, - առարկեց Գագիկը:
- Դու էլ՝ խորովա՛ծ, խորովա՛ծ, գոնե ուտողներից լինի: - Վգին նայեցեք, ոնց որ տանձի պոչ, դա խորոված ուտողի՞ վիզ է: Իսկապե՛ս, գնանք ձեզ քարայծեր ցույց տամ:
- Հա՛, ոտները կապած քեզ են սպասում, - ասաց Սարգիսը: - Ընկերնե՛ր, գնանք գյուղ շքերթին մասնակցենք, թե չէ որ դրան լսենք, մեզ իսկապես գլխից կհանի, հեռավոր Արևելք էլ կտանի:
- Արդեն ուշ է, շքերթին չենք հասնի... Մեր աջ կողմի այս ժայռոտ լեռը որ շուռ գանք, մյուս երեսին Հովազաձորն է: Ձո՛ր, ի՛նչ ձոր, իսկական այծանոց, - շարունակում էր համոզել Աշոտը: - Այնքա՜ն անձավներ կա՜ն, ամեն մեկը այծերի մի փարախ: Ժայռերի ճակատով մի նեղ կածան է իջնում ձորը: Այդ կածանով այծերը գնում-թաքնվում են անձավներում: Ապահո՛վ, գայլն էլ չի հասնում նրանց...
- Իսկ դու հասե՞լ ես, - հարցրեց Շուշիկը:
- Ե՞ս: Ինչ սուտ ասեմ, ես էլ չեմ հասել, հայրս չթողեց: Բայց ես ժայռի գլխից նայում էի, թե մայրիկս իր ընկերների հետ ո՛ր կածանով գնաց ձորը: Գնա՜նք, էլ մի՛ կանգնեք, մի ժամվա ճամփա է: Կտեսնենք Հովազաձորի հրաշքները, կգնանք-կպատմենք գյուղում, կգրենք «Պիոներ կանչին» ու բոլորը կիմանան, թե ի՜նչ սրտոտ տղերք կան Այգեձորում...

- Կգրենք «Պիոներ կանչի՛ն»... Չլինի՞ ուզում ես Կամոյի նման անուն հանել երկրում, - իր չարաճճի աչքերով նայում էր տղային Շուշիկը՝ հեգնախառն մի ժպիտ սիրուն բերանի անկյուններում:
Այդ մերկ ակնարկից պատանին շփոթվեց, բայց և իսկույն իրեն տիրապետելով, շպրտեց.
- Տեսնում եմ, որ քո ցնորքների մեջ շարունակ լճավանցի Կամոն է... Ուռեցրել են գրքերում, կարծում ես նա մեզնից լա՞վ է...
Պատանին մատնվել էր, դրանից էլ աշխատում էր իր շփոթմունքը արտաքին զայրույթով քողարկել: Իրոք, այն օրից, երբ կարդացել էր Սևանի Լճավան գյուղի փոքրիկ բնասերների և նրանց խիզախ ղեկավար Կամոյի սխրագործությունների մասին, այդ օրից նա հանգիստ չուներ:
Որոշ բաներով գերազանցում էր Աշոտն իր ընկերներին, ընդունակություններով, ֆիզիկական ուժով և մանավանդ՝ համարձակությամբ: Նա դպրոցի առաջին բնասերն էր և միակ որսորդը:
Իր այդ առավելությունները մի փոքր գոռոզամտություն և իր ուժերի գերագնահատություն էին առաջ բերել պատանու մեջ: Նրան թվում էր, որ եթե դեպքերի բերումով ինքը ևս ընկներ լճավանցիների դրության մեջ (Ճանճաքարի անձավները բարձրանալը, մուտքը «Դժոխքի դուռ» կոչվող զարհուրելի քարայրը) ոչ պակաս սրտոտ կլիներ, քան այդ Կամոն:
Չէր տեսել Աշոտը լճավանցի Կամոյին, բայց երբ նրա մասին հիացմունքով էին խոսում, սիրտը նեղվում էր: Բարի նախա՞նձ էր դա, մրցությո՞ւն, թե՞ մի այլ զգացմունք, - նա իրեն հաշիվ տալ չէր կարողանում: Միայն զգում էր, որ իր ներքին ուժերի աճման հետ միասին մեկը մյուսից ֆանտաստիկ ցնորքներ են ծագում գլխի մեջ և սխրագործությունների մղում: Ա՜խ, ինչպես կուզենար ինքը ևս գրքի հերոս դառնա՛լ...
- Կամոն իսկի չէր էլ թողնի, որ մեր շարքերում տատանում լինի, մեզ կտաներ ուղիղ Հովազաձորի հովազների բերանը, - Շուշիկին գաղտնի աչքով անելով գրգռեց Գագիկը:
-«Կամո՜ն, Կամո՜ն», զարմացրիք դուք էլ ձեր Կամոյով: Գնա՛նք, - զայրացած շպրտեց Աշոտը:
Նրա աչքերը վառվեցին ֆանատիկ փայլով, ձախ այտին և վզին ցրված խալերը ցնցվեցին, որից նրան լավ ճանաչող ընկերներին պարզ դարձավ, որ այլևս ոչ մի ուժ չի կարող այդ տղային ետ պահել իր մտադրությունից:
Հասոն լսում էր ու զարմանում, որ այդ հասարակ ու պարզ բանի վրա վիճում են: Նա իր մահակն ուսին դրեց և դիմեց շանը.
- Դե, Բոյնա՞խ, գնացի՛նք:
- Ո՞ւր, - հարցրեց Շուշիկը:
- Հովազաձո՛ր...
- Ուրեմն, ձեր մեջ վախկոտը հենց ե՞ս եմ: Ես ուղղակի չեմ պատկերացնում որսորդությունն առանց խորովածի, ուրիշ ոչինչ: Գնացի՛նք:.
Ու Գագիկը վճռական քայլերով առաջ անցավ:
Բոլորն էլ դուրս եկան ճամփից և սկսեցին մագլցել դիմացի լեռան լանջը: Սարգիսը մնաց ճամփին կանգնած:
- Գնա, գնա մորդ փեշի տակը մտիր, - վերևից ձայն տվեց Գագիկը: Ձայրույթից ու վիրավորանքից Սարգսի բարակ վզի երակներն ուռան, մոխրագույն աչքերն արյունով լցվեցին:
Ոչ ոքի հայտնի չէր, թե ինչ քաջություններ էր արել Սարգիսը, բայց ուր երևում էր նա իր բարակ ու երկար հասակով, խաղացող տղաները կամ ձայները կտրում էին, կամ չքվում: Այնքանն էր միայն հայտնի, որ նա միշտ հրամայական տոնով էր խոսում իր հասակակիցների հետ և ով չէր ենթարկվում նրան, տուժում էր որևէ կերպ, իսկ ամենից շատ ձմեռը՝ ձնագնդի խաղալիս. Սարգիսը սովորություն ուներ քար դնելու գնդակի մեջ...
Չէր պատժվում Սարգիսն իր արարքների համար, շատերն էին ներողամիտ նրա նկատմամբ: Գուցե այն պատճառով, որ նրա հայրը՝ կոլտնտեսության պահեստապետ Պարույրը ազդեցիկ մարդ էր համարվում գյուղում...
Հիմա այս կաչաղակ Գագիկը եկել ծաղրում է իրեն՝ գյուղի տղաների «ահ ու սարսափ» Սարգսին: Ի՞նչ անես, թե բռնես քոթակ տա՛ս՝ վաղը պիոներական կազմակերպությունում հարցդ կքննեն: Ասենք, հիմա նրան «քոթակել» չի էլ կարող, թիկունքն ամուր չի, ընկերները հետը չեն: Ի՞նչ անի, այդ մեծամտին

հետևի՞, թե՞ գյուղ գնա: Ինչպե՞ս գնա: Որ գնաց, այդ անպիտան, Գագիկի ծաղրից ազատվե՞լ կլինի, գյուղում մեկը հազար է շինելու, էնպես բաներ է հնարելու, որ մարդ ծամոն կդառնա գյուղի բերանում: Ճար չկա, պիտի գնալ այդ խելագարի հետևից:
Եվ Սարգիսը անսիրտ և ծույլ-ծույլ սկսեց բարձրանալ խմբի հետևից:
- Ուզում է աչքի ընկնի... Փառասե՛ր, - փնթփնթում էր նա ինքն իրեն Աշոտի հասցեին:
Քանի գնում էին լանջն ի վեր՝ նրանց հորիզոնը փակ էր, բայց երբ դուրս եկան Հովազաձորի ժայռերի գլուխը և նայեցին սարի մյուս երեսը, այնպիսի տեսարան բացվեց, որ մի պահ նրանք ոչ մի բառ չկարողացան արտասանել և կարկամած նայում էին հայրենի երկրի նոր, փառահեղ բնանկարին:
Ներքևում տարածվում էր Արաքս գետի հովիտը: Այս հովտի երկու կողմերից խստադեմ ու խոժոռահայացք լեռներ են վեր ելնում՝ բարձունքներին ամպ ու մշուշ, - գուցե դրանի՞ց է այս դաշտն այսքան մեղմ ու գրավիչ: Թե՞ հովտի երկարությամբ արծաթե գոտի կապած ուրախ գետն է հմայք տալիս այս երկրին: Կամ գուցե գեղանի դեղձենիներն են այս հովտի զարդը, բարակիրան բարդիները, ծառաստաններն ու պտղաբեր այգիները, որոնց միջից հանդարտ ու խաղաղ հայկական գյուղերն են ծխում: Թե՞ այդ հովտի զվարթությունը հյուսիսից եկող թռչունների երամներն են իրենց հետ բերում հեռավոր ափերից...
Պատանիները կանգնած էին Փոքր Կովկասի բազմաթիվ լեռնաշարքերից վերջին շարքի բարձունքներից մեկին: Այդ լեռնաշղթան ձգվում էր դեպի Իրան և նրա ժայռոտ կատարները հեռվում մխրճվում էին կապույտ երկնքի սիրտը ու հետզհետե ծածկվելով մանիշակագույն շղարշով՝ կորչում էին հեռավոր հորիզոններում: Լեռնաշղթայի հարավ-արևելյան ծայրին, երկնի մովի մեջ, երևում էին Կապույտջիղ լեռան կնճռոտ կատարի ուրվագծերը:
Դեպի աջ, դեմ առ դեմ, Հայկական Պար կոչվող լեռնաշղթան էր ձգվում իր բազմաթիվ կամարներով: Մեծ Արարատը փաթաթված էր ամպի շղարշով, իսկ Փոքր Արարատն իր սուր գագաթը մխրճել էր երկնի կապույտի մեջ: Ո՛չ մի ժայռ, ո՛չ մի անհարթություն չէր երևում այդ լեռան վրա: Կարծես տիեզերական մի հսկա մեքենայով հղկել էին նրա կողերը և շաքարի գլխի ձև տվել:
Ավելի շուտ դա վիթխարի մի արկի էր նման, որ տնկված էր Արարատյան դաշտի ափին, սուր ծայրը դեպի երկինք...
Ահա այդ կախարդական հովտի կենտրոնով դեպի Կասպից ծովը հոսող Արաքս գետը բաժանում է սովետական աշխարհը կապիտալի աշխարհից:
Իր արևային շամբուտների մեջ այստեղ-այնտեղ կայծկլտալով, Արաքսը գնում-կորչում էր Կապույտջիղի և հյուսիսային Իրանի Ղարադաղ կոչված լեռների միջև ընկած խորխորատներում:
- Մի տեսեք այդ գետը քանի՛ երկիր է բաժանում իրարից, - ձեռքը ճակատին հով արած՝նայում ու խոսում էր Աշոտը: - Այն կողմինը՝ մինչև Փոքր Մասիսը՝ Թուրքիան է, նրանից այս կողմ՝ ձախ՝ Իրանն է: Մեր կողմից, - վերևից եմ գալիս, - Վրաստան, Հայաստան, Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան: Բա՛, մի տեսեք, թե մեր փոքրիկ ու գիժ Արազը քանի երկրի սահման է, է՛... - պարծեցավ Աշոտը: - Հեյ գիտի հա՛, պապս ասում է, մեր դիմացի սարերն էլ, աշխարքներն էլ մերն էին: Ասում է՝ թուրք փաշաները սրի քաշեցին մեր ժողովրդին, խլեցին մեր օջախը, իսկ ով կենդանի մնաց՝ քոչեցրին-տարան կոտորեցին Արաբիայի անապատներում...
Բայց պատանիները այնպես խանդավառված էին հայրենի երկրի տեսարաններով, որ ժամանակ չունեին վերապրելու թուրք փաշաների կատարած չարագործությունները:
- Աշո՛ւտ, մի ցած նայիր, ներքևում իսկական գարուն է... Մի հոտերին նայիր, դաշտերում փռված արածում են, - թռվռում էր Շուշիկը: Անսպասելի տեսարաններից նա մանկացել էր:
Իսկ Սարգիսն այդ ժամանակ մտածում էր. «էդ Աշոտն էլի սկսեց փչել: Որտեղի՞ց գիտի այդ բոլորը»: Եվ նա չթաքցրեց իր մտածածը:
Իր «հակառակորդին» տեսնելով քարե բարձր պատվանդանին հպարտ կանգնած և պաթեթիկ խոսքեր արտասանելիս, նրա մեջ նորից շարժվել էր հին մաղձը:
- Հայրս է այստեղից ցույց տվել, - պարզ, առանց վիրավորվելու պատասխանեց Աշոտը, որ շարունակում էր մտազբաղ նայել Արարատյան երկրին:
- Ի՜նչ լավ է բարձունքներից դիտել հայրենի աշխարհը...

- Այո՛, մենք կանգնած ենք Սովետական Միության հարավային սահմանում, - անսովոր լրջությամբ ասաց Գագիկը: - Մարդ որ մի կուշտ ուտի ու պարսատիկով քար նետի՝ կընկնի կապիտալիստական աշխարհը... Մի դենը նայիր, Աշո՛տ, - գոչեց նա հանկարծ, - տեսնո՞ւմ ես Նոյի տապանի կտորը Արարատի կատարին: Նկատեցի՞ր: Էն էլ ամերիկյան արշավախումբն է չոքեչոք բարձրանում[1]... Ծիծաղո՞ւմ ես, Շուշի՛կ... Էն էլ գեներալ Ռիջուեն, ձեր արևը վկա, Արարատի փեշին տնկված, հեռադիտակն աչքերին կարոտով նայում է սոցիալիզմի երկրին... Երևի սիրտը չի կտրվում մեր հարստություններից... [2]:
Ընկերները ծիծաղում էին, միայն չգիտես ինչու Գագիկի հեգնական ուրախ տոնը դուր չէր գալիս Սարգսին և ոչ էլ այն, որ Շուշիկը Գագիկի ամեն կատակին արձագանքում էր իր անհոգ ու զրնգուն ծիծաղով:
Նրանց ոտքերի տակ կարմրագույն ժայռեր էին, հարկ առ հարկ իրար վրա բարդբարդված ժայռեր, որոնց ճակատներով զուգահեռ նեղ դարավանդներ ու շավիղներ էին ձգվում: Այդ շավիղներով է, որ վազում են վայրի այծերը և թաքնվում անմատչելի խոռոչներում ու անձավներում:
Այդ վայրերում ստվար հոտերով վխտում են նաև վայրի ոչխարները կամ «հայկական մուֆլոնները»: Բայց ոչխարը նկարագրածս ժայռերում չի բնակվում: Նա կամ լեռան ուսի սիզավետ սարահարթերում է, կամ ժայռերից ցած ընկած ձորակներում ու հովիտներում, կամ ավելի հաճախ՝ այն մաշված ու լերկ բլուրներում, որոնք հազարամյակների ընթացքում քայքայվել, պոկ են եկել մայր լեռնաշղթայից ու այժմ ցրված են Արաքսի հովտի ձախ ափին, նրան զուգահեռ:
Մեքենայով սլանում ես այդ բլուրների մոտով և ահա հեռվից նկատում ես մի ստվար հոտ՝ փռված արածում է գորշ լանջին: Մտածում ես՝ հիմա շները աղմուկով կդիմավորեն քեզ, հովիվը հիմա կհրավիրի ու ոչխարի թարմ կաթով կհյուրասիրի: Բայց ոչ հովիվ կա, ոչ շներ: Որսորդի փորձված աչքը դեռ հեռվից նկատում է բլրի գագաթին կանգնած վայրի խոյին, որը, քարե պատվանդանի վրա գլուխը բարձր պահած, աչալուրջ դիտում է շրջակայքը: Հոտի ժամապահն է դա:
Նկատելով հեռվից մոտեցող ձեր ավտոմեքենան, նա զիլ սուլոց է արձակում և սլանում դեպի հաջորդ բլուրները: Մեկ էլ տեսար փռված հոտը արագ կենտրոնացավ, պոկ եկավ այդ լանջերից և իր առաջնորդի հետևից անհետացավ բլրի հետևում:
Այդպես, այդ լեռներում ու բլուրներում երբեմն միրաժի պես երևում են վայրի ոչխարների հոտեր և միրաժի պես էլ անհետանում: Եվ շրջապատումդ նորից մնում է նույն գորշ ամայությունն ու մեռելային անդորրը:
Այդ բոլորը գիտեր Աշոտը, նա հոր հետ շրջել էր լեռնային ոչխարների հետևից: Եվ այժմ գիտակ մարդու նման շարունակում էր ընկերներին ծանոթացնել իր որսի վայրերին: Նա ցույց տվեց դիմացի սարի կոնաձև գագաթը:
- Այստեղ են վայրի ոչխարները կանգնում ու նայում Մասիսներին: Դրա համար էլ հնում այդ սարին Մարալ-բախան[3] են կոչել, - բացատրեց նա:
Ապա մատը մեկնեց դեպի ձորն ու ավելացրեց.
- Հովազաձորը սա է, որ երեք կողմից շրջապատված է ժայռերի բնական պարիսպով: Դիմացը, որ նայում է Արարատյան դաշտին, բաց է, բայց ներքևը նորից բարձր ժայռեր են, իջնելու, տեղ չկա, միայն հեղեղի ջրերն են ցած թափվում: Այս ձորը միայն մեկ մուտք ունի, այն նեղ քարե շավիղը, տեսե՞ք: Մյուս շավիղները ժայռի ճակատին կտրվում են այստեղ-այնտեղ, իսկ այդ մեկը գնում է հասնում ձորը: Դրանով են այծերը գնում Հովազաձոր, և դրանով էլ վերադառնում ձորից, ուրիշ ելք չկա: Դե՛հ, ինչպես Գագիկի պապը կասեր, ով պլոճիկ ունի, թող հետևի ինձ:
Եվ Աշոտը, քարից-քար թռչկոտելով, իջավ ցած:
Ընկերները հետևեցին նրան: Սարգիսը մեկ վճռեց մնալ և այդտեղից իջնել գյուղ, մեկ էլ նորից մտածեց, որ վախկոտի անուն կհանի: Դա էլ կարելի էր արհամարհել և գյուղ գնալ: Բայց երբ ընկերները ցած իջան

---

*[1] Նկատի ունի ամերիկյան «տուրիստների» այն արշավախումբը, որ 1951թ. Ամռանը Արարատ լեռը բարձրացավ, իբր թե Նոյի տապանի մնացորդները փնտրելու նպատակով:*
*[2] Եվրոպայում ամերիկյան օկուպացիոն կորքերի գլխ. Հրամանատար Ռիջուեն իրոք 1952թ. Մեր պատանիների կանգնած վայրի դիմաց հեռադիտակով դիտել է Արաքսի ձախ ափը, ուր Սովետական սահմանամերձ գոտին է: Նա շրջապատված էր թուրքական բանակի բարձրաստիճան սպաներով...*
*[3]Մարալ-բախան ադրբեջաներեն է և նշանակում է՝ եղջերվի (կամ վայրի ոչխարի) դիտակետ:*

և անհետացան սեպ-սեպ քարերի հետևում, մնացին ինքը, ուժեղ փչող հողմը և ժայռերին լուռ կանգնած արծիվները, տղան զգաց, որ ահի անորոշ մի զգացում սողոսկում է սիրտը:
- Ա՛յ քեզ բա՛ն, ուրեմն ես մենակ չե՞մ կարող գյուղ գնալ, - շշնջաց ինքն իրեն և այդ նորությունից նրա սիրտը ճմլվեց: Առաջին անգամ էր նա հանդում փորձում իր սիրտը, և արդյունքը մխիթարական չէր: Տեղում կանգնած մտածեց, տատանվեց: Է՛հ, ո՞վ էր գժվել մենակ ճամփա գնալ ժայռերով ու ձորերով... Ինչ կրակի մեջ գցեց գլուխը ցնորքներով լիքը այդ մեծամիտը...
Եվ Սարգիսը դժգոհ իջավ խմբի հետևից:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Թե ինչպես մեր պատանիները հարթ ճանապարհները թողած՝ ընթանում էին դիվային կածաններով

Այն երկար ժայռաշարքերը, որոնց մեջ մտան մեր պատանիները, վերևից չեն երևում: Բայց երբ ցած ես նայում, ինչպես տափակ կտուրից, գլուխդ շշմում է. ներքևում ահռելի անդունդներ են:
Հեղեղները մի տեղ ճեղքել էին ժայռի պարիսպը: Այդ ճեղքով Աշոտն իր ընկերներին իջեցրեց ցած:
- Ժայռի ատամից բռնիր... Ոտքիդ տեղ արա... Կամա՛ց... - զգուշացնում էր նա:
Այդ երկրի ժայռերը բոլորը կրաքարից են կազմված և ծեր մարդու ճակատի կնճիռների նման զուգահեռ շավիղներ, դարավանդներ ու «կառնիզներ» ունեն իրենց ճակատներին:
Մեր ճանապարհորդներն ընկան այդ նեղ շավիղներից մեկն ու առաջ գնացին ժայռի երկայնքով, որպեսզի ցած իջնելու մի այլ հեղեղատ գտնեն:
- Թող ե՛ս առաջ ընկնեմ, ես քարափներով էծի նման եմ գնում, - առաջարկեց Հասոն, որ գոտին դրել էր շան վզին և օգնում էր կենդանուն անց կենալու դժվարին տեղերը:
Աշոտը խեթ-խեթ նայեց նրան, այսինքն՝ որ դո՛ւ ես առաջնորդելու, էլ ես ո՞ւր եմ ապրում...
Այն ժամանակ Հասոն սկսեց օգնել Շուշիկին, որը թեև ճկուն էր, բայց անդունդին նայելիս սոսկում էր:
- Ցած չնայեք, - հրահանգում էր Աշոտը: Ապա կանգ առավ, ետ նայեց և կատակեց.
- Կարծես նման չի պահեստի ճամփին, հը՞, Սարգի՛ս...
Ոչ ոք չհանդիմանեց Աշոտին այդ ակնարկի համար, որովհետև Սարգիսն ամբարտավան էր, թեև այստեղ, դժվարին կացության մեջ խեղճացել էր:
Իր վիճակը գիտակցելով՝ նա լուռ կուլ տվեց վիրավորանքը, սրբեց ճակատի քրտինքն ու շարունակեց քայլել խմբի հետևից:
Կարծես վայրէջքը հաջող էր ընթանում, բայց մի զվարճալի դեպք պատահեց Աշոտին, որ արժե այստեղ հիշատակել:
Աշնան արևն ընկել էր ժայռերին, թեև նոյեմբերի սկիզբն էր, բայց շոգ էր: Պատանիները հանեցին իրենց պիջակները և թևներին գցած զգուշությամբ առաջ էին գնում: Նրանց վերև ժայռն էր դիք պատի նման վեր բարձրանում, իսկ ներքևում նույն ժայռի շարունակությունն էր ուղղահայաց անդունդն իջնում: Կածանի վրա, որով ընթանում էին, շեղջերով հին ու նոր կտիտ կար թափթփված իսկ շավիղի ափին, ժայռի մեջ, նույնպիսի կտիտով լիքը խոռոչներ ու փոքրիկ անձավներ կային:
- Էս բոլորը վիրու էծերն են արել... Էս ծակերն էլ նրանց բներն են, - շշուկով ասաց Հասոն: Նա իր բնազդով զգում էր որսի մոտիկությունը և հենց ուզում էր զգուշացնել ընկերներին, այդ պահին մի արու քարայծ հանկարծ դուրս թռավ մոտիկ խորշից, ուր հավանաբար ննջում էր նա, և վազեց խմբի առաջից քայլող Աշոտի վրա:
Կենդանին կամ պիտի շուռ գար փախչեր դեպի Հովազաձոր, կամ գահավիժեր անդունդը, կամ տրորեր-անցներ իր ճամփան փակող տղային, - ուրիշ ճանապարհ չուներ:
Չգիտես ինչու, այծը ընտրել էր վերջին միջոցը: Աշոտը անակնկալի եկավ և ժամանակ չունեցավ կշռադատելու իր անելիքը: Երբ վայրի նոխազը գլուխը ցած կախած և վիթխարի եղջյուրները սպառնագին առաջ մեկնած վրա վազեց, տղան մեջքը հենեց ժայռին և, գլխից վերցնելով իր ականջավոր գլխարկը, նրանով բնազդորեն խփեց կենդանու գլխին: Եղջյուրի ծայրը մտավ գդակի մեջ, տղան քաշեց, որ ազատի, բայց այծն էլ իր հերթին փնչոցով թափ տվեց գլուխը, գլխարկը պատռվեց և

խրվեց եղջյուրի մեջ մինչև նրա արմատը... Կենդանին խրտնած ու սարսափահար փախավ՝ հափշտակած գլխարկն օդում թափահարելով... Աշոտը կորցրեց հավասարակշռությունը և հավանաբար անդունդը գլորվեր, բայց այդ ակնթարթին մեկն ամուր բռնեց նրա ձեռքից և դեպի ետ հրելով, ականջին գոչեց.
- Նստի՛ր...
Աշոտը տեղն ու տեղը նստեց, իսկ Հասոն օդում ֆռռացրեց իր երկար մահակը, բայց արդեն ուշ էր. նոխազը քարից-քար ցատկելով, հեռացավ:
Բոյնախը ձորը դղրդացնելով փորձեց վազել փախչող նոխազի հետևից, բայց Հասոն ամուր քաշեց նրա վզի գոտին.
- Ո՞ւր ես զոռում, տո սատկած... Դու էդ սատանի կածանով գնացո՞ղ ես...
Երբ վտանգն անցավ և տղաներն ուշքի եկան, սկսեցին ծիծաղել: Իսկ Հասոն գլուխն օրորում էր ու ասում.
- Փափախդ ջհանդամը, անտերը քեզ ձորն էր գլորելու... Բա էդպես ռիսկ կանե՞ն... Դա հո մեր տանու էծը չի, չտեսա՞ր գլխի մեծությունը, նա մի արջառի ուժ կունենա:
- Գլխարկդ գնա՛ց վայ տեր կանչելով, - ասում էր Գագիկն ու կամաց ծիծաղում:
- Իմ գլխարկը նրա գլուխը կուտի, - սիրտը հովացնելու համար պատասխանեց Աշոտը:
- Չհավատա՛ս, - քմծիծաղ էր տալիս Գագիկը, - քո գլխարկը նրան փրկեց, հիմի ոչ մի գայլ նրան չի մոտենա:
Անակնկալից և զարմանքից Աշոտը դեռ լրիվ ուշքի չէր եկել. «Մեզ տեսնելուն պես այծը պետք է շուռ գար ու փախչեր ետ՝ դեպի Հովազաձոր, այդ ինչպե՞ս էր, որ ուղիղ քշեց դեպի ինձ... Ախր մարդը սարսափելի է ամեն վայրի կենդանու համար, նա չպիտի դեպի ինձ գար, - մտածում էր Աշոտը: - Սա ի՞նչ հանելուկ է... Թե՞ հետևում ավելի սարսափելի թշնամի կար... Մարդուց սարսափելի ի՞նչ կարող է հիմա լինել այս ձորում...»:
- Դեհ, շարունակենք արկածներով լի մեր ճամփան, - ձայնեց նա:
Քարայծի դեպքը այնպես էր շարժել տղայի երևակայությունը, որ արյան հոսքն զգում էր քունքերում: Դե ինչպես չոգևորվեր, այդպիսի դեպք հավանաբար ոչ մի որսորդի հետ պատահած չլիներ: Ա՛յ թե գյուղում պատմելու նյութ է հա՛... Այդ դեպքի նկարագրությունը կարելի է նույնիսկ տպագրել տալ «Ավանգարդ» թերթի «Պատանի բնասերի անկյունում»: Բայց լավ է իջնել, ուշ է... Տեսնես իրենց համար է՛լ ինչ անակնկալներ կան պահված Հովազաձորում:
«Դիվային կածանը» գնալով դառնում էր դժվարին ու վտանգավոր:
- Երեսներդ դեպի պատը... Միայն պատին նայեցեք ու եկեք, կողքահանց, ինձ նման, - շավիղի ամենանեղ տեղը հրահանգեց, Աշոտը: «Ի՜նչ տեղեր են», ահով, բայց և հրճվանքով մտածում էր նա. «Իսկի Կամոն այսպիսի տեղերով գնացած չի լինի...»:
Այդ մտքից նրա սիրտը թնդաց:
Մի տեղ հեղեղը կիսել էր կածանը: Աշոտը կանգ առավ այդ խորխորատի ափին:
Եթե բնածին պատվասիրությունը և ամոթի զգացումը ուժեղ, չլինեին այդ պատանու մեջ և եթե իրեն ակնարկած չլինեին Կամոյի սրտոտության մասին, շուռ կգար և կհրահանգեր ետ դառնալ: Բայց ամոթից թաքցրեց իր երկյուղն ու ցատկեց ճեղքի մյուս ափը: Ընկերները տեղ հասան, կանգ առան և ահով նայեցին խոր ճեղքին, որի հատակը աղջամուղջի մեջ չէր երևում:
«Չէ, սա բոլորովին իմ տեղը չի, էս ո՞ւր է տանում ինձ», - երկյուղով մտածեց Գագիկը: Ահը պատել էր նրան, բայց դե ինչպե՞ս ասեր զգացածը: Գոնե խմբի հետ աղջիկ չլիներ...
Նա ուժ գործադրեց իր վրա, շինծու ժպիտ առաջ բերեց դեմքին և նույնիսկ փորձեց կատակել.
- Ա՛յ հրաշալի վեր ընկնելու տե՛ղ: Իսկի ճչալու ժամանակ է՝ չես ունենա...
Հասոն քմծիծաղով նայում էր նրան:
- Եթե ձեր դռանը մի գերան լինի ընկած, կարո՞ղ ես վրայով վազել, - հարցրեց նա:
- Լա՛ավ...
- Հո վեր չե՞ս ընկնի:
- Երբե՛ք...

- Իսկ եթե էդ գերանը գցված լինի գետի կամ ձորի վրա՞...
- Դժվար է...
- Դժվար բան չկա: Մտքիցդ հանիր, որ ներքևում գետ է կամ ձոր... Տե՞ս...
Եվ Հասոն, առանց ցած նայելու, այնպես հանգիստ ցատկեց նեղլիկ անդունդի այն կողմը, ինչպես եթե հարթ ճանապարհին մի ճեղք կամ առու պատահեր:
- Հասկացա՞ր, - հարցրեց նա:
- Ես հասկացա, դու թե կարող ես ոտներիս հասկացրու...
Իրոք, Հասոյի նման դատելիս վերանում էր խորխորատի վրայով ցատկելու դժվարությունը: Իրար օգնելով նրանք բոլորն էլ անցան վիհը, ապա, երբեք ցած չնայելով՝ այնպես հանգիստ գնացին, ինչպես կգնային, եթե շավիղը չձգվեր անդունդի եզրով:
Ամբողջ ճանապարհին Գագիկը միայն մի բանի մասին էր մտածում, ինչպե՞ս անի, որ ընկերները չնկատեն իր վախը: Այդ նպատակով նա ամեն քայլափոխի հոխորտում էր ու սիրտ տալիս ուրիշներին.
- Ի՜նչ եք դողդողում, տո՛, սա հո ասֆալտած մայթ է...
Կամ՝
- Թռի՛ր, գալիս եմ կրնկակոխ, չվախենա՛ս...
Կամ՝
- Կա՛ց, Աշո՛տ, ձեռքդ բռնեմ, որ վեր չընկնես...
Աշոտը նրան նայեց վերևից, արհամարհանքով, ինչպես սովոր էր երբեմն նայելու իրենից թույլերին:
- Բայց դողում ես, - առանց խնայելու մատնեց նա:
- Ոչի՜նչ, հուզմունքից է, - մի կերպ տակից դուրս եկավ Գագիկը: Այդպես, նա վարպետությամբ կարողացավ քողարկել իր երկյուղը, մի բան, որ չհաջողվեց Սարգսին:
Քրտնամխած ու անսիրտ, նա քարշ էր գալիս խմբի հետևից և առաջին անգամ պարզվեց, որ նա այն չէ, ինչ երևում էր գյուղում:
Եվ երբ գործով տեսավ, որ «չոբան Հասոն» անգամ իրենից և՛ ճարպիկ է, և՛ համարձակ, և՛ սրտոտ, Սարգիսը փոքրացավ ինքն իր աչքում:
Փոքրացավ, բայց և լցվեց անզոր կատաղությամբ իր դպրոցական ընկերների դեմ, որոնց հետ այժմ ակամայից իջնում էր Հովազաձոր...

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. Թե ինչպես բնությունը բոլորովին էլ նկատի չառավ, որ պատանիները պիտի ժամանակին վերադառնան տուն

- Ահա և մենք հռչակավոր Հովազաձորում ենք, - ժայռերից, իջնելով և ոտքը արևից խանձված շագանակագույն հողի վրա դնելով՝ հայտարարեց Աշոտը:
- Ուռա՜ա... Իսկ ո՞ւր են խոստացածդ այծերը, դե գնա բեր նայեմ...
- Համբերի՛ր, Գագի՛կ, համբերի՛ր, ցերեկով նրանք հանգստանում են այրերի մեջ: Վեր բարձրանանք, ցույց կտամ: Հիմա ես ձեզ մի քանի տեղեկություններ տամ այս ձորի մասին, որ լսել եմ իմ հորից: Սա քարայծերի ամրոցն է. տեսե՛ք, այնպես է շրջապատված, որ այստեղ ոչ մի գայլ չի կարողանում մտնել: Ինչո՞ւ: Որովհետև...
- Որովհետև գայլը ձեռքեր չունի, որ քարերից բռնի իջնի, - վրա բերեց Գագիկը:
- Իսկ արջը՞, - հարցրեց Շուշիկը:
- Արջին ի՜նչ կա որ, արջը ծառ էլ է բարձրանում: Հա՛, քարայծերը միայն այստեղ են իրենց ապահով զգում գայլերի վտանգից, - շարունակեց Աշոտը: - Իսկ նրանք հեշտությամբ են իջնում ժայռերի ճակատներով, որովհետև այծի կճղակի տակը փափուկ ու կպչուն է ռեզինի պես...
- Դու տեսե՞լ ես, - խումար աչքերը տղայի խոշոր ու սև աչքերին հառած՝ հարցնում էր Շուշիկը:
- Տեսել եմ, իհարկե: Մի անգամ, երբ հայրս քարայծ խփեց, ցույց տվեց կճղակները, փափո՛ւկ...
Քարերին նստոտած, մեր ճամփորդները հայացքով հետազոտում էին այն ձորը, ուր միայն որսորդ Արամն էր այցելում իր երկու ընկերների հետ, այն էլ մի քանի տարին մեկ անգամ:

Ձորի կողքերից ու թիկունքից շիկակարմիր ժայռեր էին բարձրանում ատամնավոր ու աշտարակներով պարիսպների նման: Իսկ ձորի ներքևը, որ նայում էր Արաքսի հովտին, բաց էր, այնպես բաց, որ ցանկացողը կարող էր հեշտությամբ գահավիժել այն խորխորատը, ուր ամեն գարնան գոռում-գոչյունով թափվում էին լանջերից հոսող հեղեղները: Ժայռերի ծերպերին և նրանց ստորոտներում կարճ ու գանգուր եղևնիներ կային, կենու մանր ու փշատերև ծառեր, թփուտներ, մի քանի տասնյակ ծուռումուռ ծառեր (ինչպիսիք լինում են պապակ վայրերում աճած ծառերը), որոնք իրենց հզոր արմատները ապառաժների ճեղքերով ցած մեկնած՝ մնում էին անսասան փոթորիկների դեմ և սնունդ էին ստանում ժայռերի խորքերից:

Հովազաձորը և նրա լանջերը ծածկված էին արդեն չորացած փետրախոտով և սիզախոտով: Վերջինս պարարտ փոսերում ու դարավանդներում այնպես բարձր էր, որ երբ Բոյնախն ուրախ հաչոցով վազվզում էր նրա մեջ, մեջքն էլ չէր երևում:

Լավ ձմեռային արոտ էր այդ ձորը վայրի այծերի համար, միայն ցամաք էր ու չոր և հայտնի չէր, թե որտե՞ղ են իրենց ծարավը հագեցնում այդ կենդանիները: Բայց որ նրանք շատ էին այդ ձորում, դա երևում էր Աշոտին ծանոթ նշաններից: Նրանք խիտ խոտը ճեղքել, կածաններ էին բացել աջ ու ձախ. տեղ-տեղ նստել էին որոճել և իրենց տակ ճխլել-տափակացրել խոտը: Մյուս ապացույցն էլ այն էր, որ սուր զգայարաններով օժտված հովիվ Հասոն այդ ձորից պարզ առնում էր այն հոտը, որ բնորոշ է թե՛ վայրի և թե՛ ընտանի այծերին, քանի որ վայրի այծերը մեր այծերի նախահայրերն են և նրանցից քիչ են տարբերվում իրենց տեսքով, կենցաղով, հոտով:

Երբ մեր պատանիները մի լավ հանգստացան և կերան իրենց ճամփի պաշարի մի մասը, Աշոտը վեր կացավ.

- Դե հիմա գնանք փնտրելու այծերի բնական փարախները...

Ձորի հատակով, հեղեղատի հունով նրանք բարձրացան-հասան Հովազաձորը թիկունքից փակող ժայռերի տակ:

Վերելքը դժվարին էր և երկար տևեց:

Այդտեղ մի փոքր հանգստացան և մագլցեցին վեր, ուր ժայռի հակատին, իրար զուգահեռ, դարավանդներ էին ձգվում, կածաններ ու նրանց եզրերին երևում էին այրերի մթին երախները:

Շունը որսի հոտից գայթակղված՝ վազվզում էր ժայռերի ծերպերում և երբեմն էլ հաչում:

Նրա ահարկու ներկայությանը չդիմանալով՝ դիմացի ժայռի խոռոչներից դուրս թափվեցին մի խումբ քարայծեր և վազեցին դեպի վեր: Խմբի առաջից վազում էր ծեր նոխազը՝ ահագին եղջյուրները պատյանի մեջ դրված զույգ սրերի նման օդում ճոճելով: Չգիտես ինչու, նա ստեպ-ստեպ կանգ էր առնում ու ետ նայում: Կանգ էին առնում և որսորդի համար հիանալի թիրախներ դառնում նաև մյուս արու այծերը: Իսկ մայր այծերը վազում էին դանդաղ, սպասում էին իրենց ուլերին:

Հոտի ղեկավարը, երբ հասավ ժայռի ատամնավոր բարձունքին, մի պահ կանգ առավ և հորիզոնի վրա հիանալի նշան դարձավ:

- Ա՜խ, թե հրացան կլիներ ձեռքի՜ս, - ալեկոծված ու վառված ասում էր Աշոտը:

Գագիկը խլեց Հասոյի մահակը, բարձրացրեց և օդում ճոճելով՝ բարձր կանչեց.

- Գնացե՜ք, ձեր կյանքը ձե՜զ բախշեցի, գնացե՜ք...

Ընկերները ծիծաղեցին, իսկ Բոյնախը ծմրում էր, հաչում և սրտապատառ դեպի վեր ձգտում, բայց ի՞նչ աներ, քարայծի հետքով էլ գնա՞լ կլինի:

- Ի՜նչ լավն են, ի՜նչ լավն են... - մրմնջում էր Շուշիկը:

- Տեսա՞ք թաքաները[4] ոնց են կանգնում ետ նայում: Հասկացա՞ք, - հարցրեց Աշոտը:

Տղաները լուռ էին:

- Երևի վերելքը դժվար էր, հանգստանում էին, - իր կարծիքը հայտնեց Շուշիկը:

- Վայրի այծի համար դա ի՜նչ վերելք է որ... Ուզենային կես րոպե չքաշած սարն անց կկենային... Ետ էին նայում, տեսնեն ինչ եղան իրենց ընկերուհիները...

- Այո՜, իրենց զավակների մայրերը, - հաստատեց Շուշիկը:

---

[4] *Թաքա – արու այծ:*

- Ապրե՛ս, հենց էդպես էլ կա... Կանգնում է տեսնի ո՞ւր մնաց իր զավակների մայրը: Բա՞, չասեք թե անասուն են, սիրտ չունեն, - ավելացրեց Աշոտը՝ բնության գաղտնիքներին ծանոթ մարդու տոնով:
- Ոչ թե սիրտ, այլ բնազդ, - ուղղեց Շուշիկը:
- Ես սիրտ կասեմ, դու բնազդ հասկացիր...
Քարից-քար թռչկոտելով այծերը հեռանում էին դեպի ձորի արևելքից եզերող ժայռերը: Նրանք երբեմն անհետանում էին քարքարոտ լանջի ծալքերում, երբեմն հազիվ գորշին էին տալիս գորշ կածաններում:
- Ի՜նչ լավն են... Ի՜նչ լավ են... - ձեռքը ճակատին՝ տարված, շշնջում էր Շուշիկը: Իր կյանքում նա առաջին անգամ էր վայրի այծ տեսնում և դրանից էլ ալեկոծված էր: Ասենք, քիչ չէին հուզված նաև տղաները:
Տեսնելով, որ ոչ ոք իրենց չի հետապնդում, քարայծերը խաղաղվեցին, կանգ առան և սկսեցին խոտ պոկել գետնից և երբեմն էլ զգոն նայել դեպի հետ. հո վտանգ չկա՞ այդ անկոչ հյուրերից: Բայց հենց նոր խաղաղված կենդանիները հանկարծ, չգիտես ինչու, նորից խուճապի մատնվեցին և գլխակորույս սլացան-անցան սարի հետևը:
- Այս ի՞նչ բան էր, - զարմացած ինքն իրեն շշնջաց Աշոտը:
- Տեսա՞ք, տեսա՞ք, մի շեկ բան երևաց քարերի արանքում, - մատն առաջ մեկնելով շնչակտուր ասաց Սարգիսը:
Պատանիները որքան լարեցին իրենց տեսողությունը, բացի մռայլ ու գորշ ժայռերից ոչինչ չէր երևում:
Այն ժամանակ Գագիկն սկսեց հեգնել.
- Տղայի աչքին բաներ են երևում... Շատ սրտոտությունից կլինի, հը՞... Սրտոտ մարդկանց հետ դա պատահում է...
Բայց Աշոտը այս անգամ Սարգսին հեգնելու հիմք չուներ:
«Ի՞նչը կարող էր այդպես խուճապահար անել այծերին... Այս ձորում ոչ գայլ կա, ոչ որսորդ...», - մտածում էր նա տարակուսած: Եվ, չգիտես ինչու, այդ պահին նա հիշեց իր գլխարկը փախցնող այծին: «Նա էլ էր խուճապահար... Բայց ո՛չ մեզնից... Ուրիշ պատճառով...»:
Քարայծերի անհետանալու հետ աստիճանաբար անցավ և պատանիներին համակած հուզմունքը:
- Դե՛հ, գնանք տեսնենք ուրիշ ինչ հետաքրքիր բաներ կգտնենք այս ձորում, - սթափվելով ձայն տվեց Աշոտը և պատանի բնասերների խումբը նրա հետևից շարժվեց նեղ շավիղով դեպի վերին ժայռերը: Լուռ ու քրտնաթոր նրանք քայլում էին և յուրաքանչյուրի մտապատկերի մեջ դեռ այն գողտրիկ կենդանիներն էին փախչում նազանի թռիչքներով...
Գագիկը սրբեց ճակատի քրտինքն ու կանգ առավ: Նա հևում էր խմբի մյուս անդամների նման:
- Աշո՛ւտ, արի կլինի համաձայնիր, որ դեպի ցած գնալն ավելի հեշտ է, քան դեպի վեր, - ասաց նա ամենայն լրջությամբ:
- Ի՜հ, բա քիչ առաջ աքլորանում էիր... Գնա՛, մի՛ վսվսա... Ապա նայեց արեգակին և միտքը փոխեց. - Լա՛վ, կեսօրն անց է, իջնենք:
Բայց Գագիկը շուտով համոզվեց, որ այդ ժայռոտ վայրում դեպի ցած գնալը նույնքան դժվար է ու տանջալի, որքան դեպի վեր գնալը: Նրա բարակ սրունքները տնքում էին, ոտքերի տակը կարծես այրված լիներ:
Շեկ ժայռերի տակ սևին էր տալիս մի լայն երախ: Խումբն այդտեղ կանգ առավ, մութ ու խոր անձավ էր: Նրանից ինչ-որ ժամանակ ջուր էր դուրս հորդել և, քարերը մաշելով՝ ցած էր գնացել:
- Երևի խորքից գարնանը աղբյուր է բխում, - շտապեց իր կարծիքը հայտնել Գագիկը:
- Սա աղբյուրի բան չի... մի լայնքը տե՞ս... Կարծես գետ է գնացել, - մտախոհ պատասխանեց Աշոտը և ներս մտավ:
Այրի հատակը նույնպես մաշված-փորված էր: Մի՞թե դա ևս ջրի աշխատանքն է: Որքա՞ն ջուր պիտի դուրս հորդեր այդ անձավից, որ մեկ-երկու քայլ լայնությամբ փորեր այրի քարե հատակը...
- Բան չեմ հասկանում... - գլուխն օրորեց Աշոտը:
Սարգսի բերանի անկյունում հազիվ նկատելի հեգնական ժպիտ էր խաղում, որ կարծես ասում էր. «Քեզ գիտուն բնասեր ես հայտարարել, դե բացատրիր է՞...»:
- Օձը՛... օձը՛, - ճչաց Շուշիկը ընկրկելով: Տափակ գլխով, հաստ ու կարճ մարմնով մի գորշ գյուրզա պոչը փաթաթել էր անձավի ճակատին «քյաքուլի» նման ցցված թփից և մարմնով ցած կախվել:

- Քարերո՜վ, քարերո՜վ...
Արարատյան դաշտի բնակիչ լինելով, նրանք գիտեին, որ գյուրզան իժերի մեջ ամենաթունավորն է: Գյուղի անասուններից ամեն տարի մի քանիսը զոհ էին գնում այդ զզվելի սողունին: Ուստի հասկանալի է այն ահն ու բուռն ատելությունը, որով համակված մեր պատանիները քարկոծեցին և ցած գցեցին օձին:
Աշոտը հանում էր սողունի շապիկն ու հետն էլ ցույց տալիս:
- Տեսե՛ք, շապիկով նույնիսկ աչքերն են ծածկված: Օձը նայում է իր շապկի միջով, դրանից է, որ վատ է տեսնում...
- Սպասի՛ր, ուրեմն կոպեր չունի՞, աչքը չի՞ թարթում, - հետաքրքրվեց Շուշիկը:
- Չէ, չի թարթում, դրանից է նրա հայացքը այնպես սառը և ազդու... Այս լավ եղավ, կհանձնենք դպրոցի թանգարանին... Վա՞յ, այս ի՞նչ ոսկորներ են, սպասիր մի որոշեմ...
Աշոտը վերցրեց շավիղից ներքև ընկած ոսկորը, ծալեց և նրա միջից դուրս պրծած ծուռումուռ վեգից որոշեց, որ զոհ գնացածը քարայծ է եղել:
Նա ոսկորը դեն նետեց և առաջ անցավ: Իսկ Շուշիկի գլխում հետևյալ միտքն էր ծնվել, եթե գայլ չի մտնում այս ձորը, ապա ո՞ր գազանին է զոհ գնացել այծը:
- Աշո՜տ, կա՛ց, - ձայն տվեց նա և իր կասկածը հայտնեց: - Ուրեմն, դու ճիշտ չես, գայլ է մտնում այս ձորը:
- Ոնց ճիշտ չեմ, - շիկնեց Աշոտը: - Իսկ դու կարծում ես արծիվը փոքր քարայծ չի՞ ուտում:
Նրա ինքնավստահ տոնը դուր չէր գալիս Սարգսին: «Ոչ մի բանում չի հարցնում ընկերների կարծիքը: Ու իրեն թվում է, թե ամեն բանի բացատրությունը գիտի անսխալ», - մտածում էր նա: Սարգիսը շատ կուզենար, որ իր «հակառակորդը» գոնե մի բանում սխալվի: Ուստի ետ գնաց, զննեց թափթված ոսկորները և վեգն ու պատյանից հանված եղջյուրները ձեռքին ետ եկավ:
- Սրան արծի՞վ կմոտենա, - բարկացած ցույց տվեց նա բերած նշանները, որոնք, անշուշտ, խոշոր և արու քարայծի պիտի պատկանելիս լինեին:
- Աշոտը կմկմաց. առարկելու հիմք չուներ, թեև շատ էր ցանկանում առարկել:
- Երևի սատկել է, - փնթփնթաց նա:
Սարգիսը լուռ ցույց տվեց ժանիքների քերծած հետքեր ոսկորների վրա: Այդ նշաններից անորոշ երկյուղ ծնվեց Շուշիկի ա Գագիկի սրտերում: Բոլորն էլ լուռ էին և հավանաբար բոլորի գլխում էլ նույն հարցն էր. «Ուրեմն գազա՞ն կա այստեղ, Հովազաձորում...»;
- Լա՜վ... երևի հին բան է... - անհոգ ձևանալով կանչեց Աշոտը և քարայծի գլուխն առնելով Սարգսի ձեռքից, առաջ անցավ:
- Սա էլ կտանք բնագիտական կաբինետին... խխունջների պատյաններ հավաքեցեք, պա՛հ, ինչքան կա...
- Իսկ սա ի՞նչ խեցի է, Աշո՜տ, - ժայռի ճեղքից իր ձեռքի ափի մեծության մի ոսկրե պատյան հանելով, ցույց տվեց Շուշիկը:
Աշոտը զննեց և դեն նետեց:
- Լա՜վ բնասերների ղեկավար ես, - ծաղրեց Սարգիսը խեցին վերցնելով: - Սա գին չունի, իսկ դու շպրտում ես:
- Որ անգին է, քեզ լինի, տար ձեր սնդուկում պահիր...
Սարգիսը չպատասխանեց: «Ի՞նչ ասես այդ մեծամտին, - մտածում էր նա, - չի հասկանում, որ ծովային խեցի ենք գտել ժայռերում... Ու չի հասկանում, թե ինչ է նշանակում դա... Ի՜նչ ասես...»: Նա խեցին խնամքով թաքցրեց գրպանում:
խումբը լանջին ցրված պտրտումների մեջ էր, ամեն մեկը ցանկանում էր մի բան տանել դպրոցական թանգարանին, այնպիսի աչքի ընկնող բան, որ արժանանա գովասանքի:
Աշոտը արծվի մեծ-մեծ թևեր գտավ և իսկույն պարծեցավ իր գյուտով: Գագիկը մի քար գտավ՝ մեջը լիքը պսպղան հատիկներով և լրջորեն երդվեց, որ դա ալմաստի հանք է: Շուշիկը, երեխայի նման հրճվելով, խխունջների պատյաններ ու բոժոժներ էր հավաքում: Իսկ Հասոն գտածը սուսուփուս և աննկատելի հանձնում էր Շուշիկին՝ անգղի մեծ փետուր, կաքավի կարմիր կտուց, իսկ մի այրից մի ծաղկեփունջ

հանեց, որ բազմաթիվ գույներով հուրհրատին էր տալիս արևի տակ, բայց հոտ չուներ, որովհետև... քարից էր...
- Քարե ծաղիկների փո՞ւնջ... Որտեղի՞ց գտար – շփոթված, շառագունած հարցրեց Շուշիկը:
Տղաները խմբվեցին նրա շուրջը, ծանր ու անհոտ «ծաղկեփունջը» ձեռքից-ձեռք անցավ:
Փողփողում էր նրբերանգ ու տարօրինակ այդ «ծաղկեպսակը» և զարմանք պատճառում մեր պատանիներին: Հասոյի հետևից նրանք մտան նեղ մուտքով մի անձավ և քիչ առաջ գնալով՝ կանգ «առան ապշահար, այրի հատակը ծածկված էր քարե ծաղիկների գույնզգույն գորգով... Այրի մի ճեղքից արեգակի շողերի մի հաստ խուրձ ներս էր ընկել և նրա շեկ-ծիրանագույն լույսի տակ հուրհրատին էր տալիս քարե ծաղիկների այդ հեքիաթային աշխարհը...
Ահով ու զարմանքով նայում էին մեր պատանիները այդ չքնաղ ու անբացատրելի տեսարանին և մի պահ ոչ մեկը չէր համարձակվում շարժվել:
Անձավի առաստաղից կարծես սառցե լուլաներ էին կախված, որոնք նույնպես շողշողում էին և շքեղություն տալիս այդ ստորերկրյա աշխարհին: Փորձեցին մի քանի «ծաղիկ» պոկել՝ չհաջողվեց. բոլորը կպած էին իրար իրենց քարե թերթիկներով ու ցողուններով: Խումբը լուռ դուրս եկավ: Աշոտը գլխահակ էր. նրա համար ծանր էր խոստովանել, որ բացատրություն չի գտնում, թե ինչ էր իրենց տեսածը: Բայց եթե մեր պատանիները բնության զարմանալի երևույթները հասկանալու համար բավականաչափ փորձ և գիտություն ունենային, իսկույն կհասկանային, որ իրենց տեսած «ծաղիկներն» էլ, «սառույցի լուլաներն» էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ ստալակտիտներ՝ հանքային նյութերի գոյացումներ, որ պատահում են առանձնապես կրաքարային կազմություն ունեցող անձավներում: Իր մեջ կրաքար լուծած ջուրը առաստաղից կաթում է դանդաղ՝ ծը՛լթ... ծը՛լթ... ինքը գոլորշիանում է, իսկ լուծույթը նորից քար է դառնում՝ սառույցի, ծաղիկների, թփերի, երբեմն նույնիսկ «անտառի» ձևեր ընդունած: Այդ բանը չգիտեր Աշոտը և իր շփոթությունը թաքցնելու համար նա աղմուկով ցած վազեց.
- Ձկե՛ռը... զկե՛ռը...
Մինչ պատանիները կողոպտում էին զկեռի ոչ բարձր ծառը, Հասոն անհանգիստ հայացքով խուզարկում էր հյուսիսում, լեռան գագաթին կուտակվող ամպերը և, քիթը ցցած, խոր ներս էր ծծում հանկարծակի Հովազաձոր խուժած օդի հոսանքը, կարծես նրա հոտից, սառնությունից ցանկանում էր ինչ-որ բան հասկանալ:
Օդը հանկարծ ցրտեց, թփերի վրայի դեղնած տերևները սկսեցին սվսվալ որբ ճուտերի նման: Վատ բան գուշակելով, Հասոն համարձակվեց շտապեցնել ընկերներին.
- Շուտ արեք, գնանք, ուշ է:
Բայց մեր պատանիները այնպես էին տարվել հասուն զկեռները խփշտելու գործով, որ ոչ ոք Հասոյին ուշադրություն չդարձրեց:
Իսկ երբ ծառի վրա այլևս ոչ մի պտուղ չմնաց, Աշոտը ասաց.
- Մեկ էլ ո՞վ գիտի մենք Հովազաձոր կընկնե՞նք որ... Եկեք գնանք տեսնենք մյուս ժայռաշարքի տակ ինչ կա:
Հասուն նայում էր շան անհանգիստ շարժումներին, հասկանում որ կենդանին իր նուրբ բնազդով բնական աղետ է զգում: Եվ որովհետև հանդում Բոյնախը նրա համար միշտ «ծանրաչափի» դեր էր կատարել և այժմ ինքը ևս մոտալուտ փոթորկի նշաններ էր զգում, ուստի հարկ համարեց մի անգամ ևս զգուշացնել ընկերներին: Բայց սրանք այնպես էին ոգևորվել, երեխայացել իրենց խուզարկություններով և «նշանավոր ու աննշան գյուտերով», որ Հասոյի խոսքը տեղ հասավ միայն այն ժամանակ, երբ արդեն ուշ էր: Բայց այդ մասին՝ հետո: Իսկ այժմ մեր պատանիները զանազան դիրքերով նստոտել էին քարերին: Մայր մտնող արևի ցոլքերի տակ հրդեհվում էին նրանց կարմիր վզկապները և վառվում հուզմունքից ու թարմ օդից շիկնած նրանց դեմքերը:
Աշնան մեղմ քամին խաղում էր նրանց վարսերի հետ, շոյում էր այրվող դեմքերը: Ի՜նչ լավ էր այստեղ, բնության գրկում... Նրանք զգում էին, թե ինչպես ժամ առ ժամ հանգստանում են դասերից հոգնած իրենց նյարդերը:

Գոհ էին մեր պատանիներն իրենց ճամփորդությունից, գոհ էին, որ դպրոցի բնասերների ղեկավար Աշոտը իրենց ցույց տվեց հայրենի բնության հրաշալիքներից մեկը՝ Հովազաձորը, իր զարմանալի կենդանիներով:
- Գնանք, - լսվեց Աշոտի ձայնը:
Մինչ խումբը կիջներ ձորի հատակը և ոտք կդներ այն շավղին, որը նրանց «լույս աշխարհ» պիտի հաներ, երկինքը ծածկվեց ամպերով և մի ուժեղ քամի բարձրացավ, այնքան ուժեղ, որ մեր պատանիները մի քիչ գնալուց հետո կանգ առան: Ասենք, նրանց անցած «Դիվային կածանից» անդունդը գլորվելու համար չէ ուժեղ, թույլ քամին էլ բավական էր, ուստի նստոտեցին արահետի եզրին այն հույսով, որ քամին կդադարի: Բայց նա շնկշնկում ու ոռնում էր ժայռի խոռոչներում, զգեստահան էր անում, մերկացնում ծառերն ու թփերը, և չոր տերևները առաջն արած, սրբում-տանում խցկում էր ժայռերի ճեղքերը:
- Տեղ է բաց անում ձյան համար, - ահով ասաց Հասոն և նրա այդ մի հատիկ խոսքը երկյուղ առաջ բերեց մեր պատանիների մեջ:
Հասոն սխալվել չէր կարող, Հասոն քամու լեզուն անգամ հասկանալ կարող էր, այնքան հաճախ էր գործ ունեցել նրա հետ...
Շատ երկար թվացին այն մի քանի տասնյակ րոպեները, որ մեր պատանիները անցկացրին սառը քամու դեմ նստած: Ցերեկով, շեկ պալատների նման արևի շողերով ողողված ժայռերը այժմ դարձել էին մռայլ ու ահարկու: Ձորում հետզհետե թանձրանում էր աղջամուղջը և անդունդներից լսվում էր քամու վայնասունն ու հեծեծանքը...
Շուշիկը ահով հպվել էր Աշոտին և երբ ուժեղանում էր շառաչյունը ժայռերում, նա դողդողում էր ամբողջ մարմնով:
Քարայծերի մի խումբ խուճապարար եկավ-անցավ պատանիների մոտով և Դիվային կածանով սլացավ առաջ: Քիչ անց վերջին այծը երևաց դիմացի «քյանարին», մի պահ կանգ առավ, ետ նայեց դժոխքի նման փոթորկվող Հովազաձորին և անցավ լեռան մյուս երեսը:
Այո, նույնիսկ քարայծերը այլևս չեն ուզում մնալ այս ձորում... Դա արդեն լավ նշան չէր...
«Որ ձյուն գա՝ փակված կմնան... Դրա համար էն փախչում...», - անցավ Աշոտի գլխով և նա այդ մտքից սարսռեց:
- Սա դադարելու միտք չունի, վեր կացեք փորձենք առաջ գնալ, - ասաց նա: Այդ պահին մի քար պոկվեց և շխկրտոցով գլորվեց անդունդը: Իսկ ժայռի արանքից վեր ելնող գիհի ծառը իր գանգուր գլուխը խոնարհում էր գետնին ու հեծեծում...
- Նստի՛ր, - Աշոտի փեշից քաշեց Շուշիկը: - Նստիր, թե չէ քամին քեզ ձորը կշպրտի...
- Գնա՛նք, - իրենը պնդեց Աշոտը: - Իրար ձեռքից ամուր բռնեցեք-շղթա տվեք...
Խումբը քսան քայլ հազիվ կարողացավ գնալ շղթա տված: Հասնելով շավիղի նեղ տեղը, պատանիները կանգ առան և որպեսզի ցած չգլորվեն, իսկույն տեղն ու տեղը նստեցին:
Ի՞նչ անել: Աշոտը հայացքով խուզարկում էր ժայռը, բայց մոտերքում անձավ չէր երևում:
- Ետ գնանք, - գոչեց նա: Բայց ընկերները չհամաձայնեցին. վախենում էին վեր կենալ, վախենում էին քայլել: Մթնում էր, մի անզգույշ քայլ՝ և մեկն ու մեկը կարող էր զոհ գնալ գիժ տարերքին: Այն ժամանակ Աշոտի հայացքը կանգ առավ քիչ հեռու, ժայռի պատին սևին տվող խորշի վրա: «Ճար չկա, այդ փոսում ենք կուչ գալու... Բայց ինչպե՞ս հասնենք», - մտածում էր նա և սպասում քամու թուլանալուն, որպեսզի խմբին առաջնորդի այդ պատսպարանը:
Բայց իրար խառնված տարերքը ոչ մի րոպե խաղաղվելու մտադրություն չուներ:
- Չոքեչոք եկեք հետևիցս, - գոչեց Աշոտը և չորեքթաթ, քարերից բռնելով շարժվեց դեպի առաջ, դեպի իր նշան արած խորշը:
Իրենց արմունկներն ու ծնկները քերծելով՝ մեր պատանիները դժվարությամբ հասան կածանի ձախ պռնկին, ժայռի պատի մեջ խորացած կիսանձավին և մտան նրա մեջ: Մտան, իրար հպվեցին, դարձան կենդանի կծիկ: Ափսոս, այդ խորշը խոր չէր և նրա մուտքը ավելի լայն էր, քան ներսը. քարայրեր կերտող բնություն- ճարտարապետը նոր միայն սկսել էր այդ ապագա անձավը փորել...

Այնուամենայնիվ այդտեղ լավ էր նրանով, որ քամին խփում էր միայն դիմացից, թիկունքից և կողքերից նրանք պաշտպանված էին քարե պատերով:
Աշոտը իր բարակ, բայց լայն վերարկուն փռեց և նրանով դրսի կողմից ծածկեց մարմինների կույտը: Այդպես լավ էր, այդպես կարելի էր դիմանալ մի գիշեր:
- Համբերեք, լույսը բացվի դուրս կգանք ձորից, - սիրտ էր տալիս ընկերներին:
...Մթնեց, ժայռերը դարձան ահավոր, քամու ոռնոցը՝ չարագուշակ: Վերևում, երկնքի ֆոնին, հազիվ նշմարվում էին բարդբարդված ապառաժները, իսկ ներքևում ձորն էր՝ իր ահավոր երախը բաց արած:
Սկզբում կարծես ոչինչ, իրար սեղմված նրանք նույնիսկ մի քիչ տաքացան: Բայց տակից և թիկունքից քարի սառնությունը հետզհետե ներծծվեց մինչև նրանց ոսկորները և մեր պատանիները սկսեցին դողալ:
«Ա՛խ, կրա՛կ... մի թեժ կրակ լինե՛ր...»: Եվ յուրաքանչյուրը մտովին սառած ձեռքերը պարզում էր խարույկին... Այո՛, կրակը կյանք է, առանց կրակի կյանք չկա...
Գագիկը ստիպված իր գլխարկը դրեց տակը: «Էլ ո՞ր օրվա համար եմ պահել խուճուճ մազերս, որ գլուխս չեն պաշտպանելու», - յուրովի մտածում էր նա: Այդպես լավ էր, գլխարկը չէր թողնում, որ քարի սառնությունն անցնի մարմնին:
Սարգիսը որքան ջանում էր կուչ գալ, չէր հաջողվում, նրա երկար ոտքերի ծայրերը դուրս էին մնում խորշից: «Չէ, երկար բոյն էլ մի բան չի... Ա՛խ, այս քյալլագյոզը ո՞ւր հասցրեց մեզ...», - մտածում էր նա դառնացած: Իսկ Հասոյի խիղճը տանջում էր այն մտքից, որ մի քնքուշ ու թույլ աղջիկ ստիպված է սրթսրթալ այդ չոր քարերի վրա...
Քրդերը միշտ սարում են, քրդերը հաճախ են գիշերում բացօթյա: Այդ է պատճառը, որ նրանք միշտ տաք են հագնվում, նույնիսկ ամռանը: Պատանի քուրդը իր հագին կոշտ աբայից բացի, մեջը բամբակ դրած պիջակ ուներ և ոչ մի ցուրտ չէր զգում: Նա շատ կուզենար իր պիջակը հագցնել Շուշիկին, բայց քաշվում էր. «Ով գիտի, ինչ կասեն...»:
Շուշիկը մտքով իրենց տանն էր, իրենց արևոտ ու տաք բակում, ուր ծառերի վրա փոքրիկ արևների նման վառվռում էին հասուն դեղձերը: Թմբիր էր իջել նրա վրա և քաղցր նիրվանայի մեջ Արարատյան դաշտի ջերմ ու անուշ աշունն էր երազում... Կարծես յոթ սարի, յոթ ձորի հետևից լսվում էր Աշոտի հուսատու ձայնը. «Մի քիչ էլ դիմանանք՝ լույսը կբացվի, նորից արև կլինի ու մենք երգելով գյուղ կգնանք...»:
Կես քուն կես արթուն այդ միտքն էին գուրգուրում մեր պատանիներն իրենց մեջ և այդ հույսով էլ անցկացրին գիշերը:
Իսկ երբ ծանր ու ահալի գիշերից հետո վերջապես լուսացավ, սկսվեց ձյան փոթորիկը և արար աշխարհ խառնվեց իրար:
Ճիշտ էր գուշակել քուրդ պատանին, քամին նախապես երկիրը սրբում-մաքրում էր, որ տեղ բացի ձյան համար...
Այդպես է սկսվում ձմեռը մեր լեռնային երկրում...

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես հույսն ու հուսահատությունը պարբերաբար հաջորդում էին իրար

Մի գիշերվա մեջ մեր պատանիները զգալիորեն նիհարել էին. մինչև լույսը բացվելը նրանք աչք չէին փակել:
Լուսացավ, իրար երես նայեցին, փորձեցին ժպտալ, անհոգ ձևանալ, - դե անհարմար էր հուսահատության նշաններ ցույց տալ ընկերների մոտ:
- Կարգին հով էր, չէ՞, - առաջինը խոսեց Գագիկը: - Ձեր արևը, իսկական ամառանոց ենք ընկել, օդը սա՛ռը, մաքո՛ւր... Ամբողջ Հովազաձորում մի հատիկ միկրոբ չեք գտնի...
«Թե գյուղ կգնա՛նք, ես ձեզ ամառ... ամառ... ամառանոց ցույց կտամ», - զնգր-զնգր դողալով և արցունքոտ աչքերը բռունցքով տրորելով մտքի մեջ սպառնաց Սարգիսը:

Աշոտը խորշից դուրս եկավ և իսկույն ընկավ փոթորկի մեջ: Քամին առատությամբ նրա դեմքին էր խփում ձյան չոր հատիկները: Արար-աշխարհ կորել էր թափվող ձյան մառախուղի մեջ:
Նա նորից խորշը մտավ և հանդիպեց ընկերների հարցական հայացքներին: «Հը՛, հույս կա՞...» ասում էին այդ հայացքները:
- Պիտի սպասենք, - մռայլ ասաց նա, ապա տոնը փոխեց. - Ա՛յ քեզ արկա՛ծ... հիմի իմ որսորդ հայրը ամբողջ գյուղը ոտքի է հանել, սարերն ընկած մեզ են փնտրում:
Ու ժպտաց անհոգ, կարծես բավականություն էր ստանում այն մտքից, որ «ամբողջ գյուղը սարերն ընկած» իրեն է փնտրում:
- էդ լավ է, մեզնից ով սիրելի չէր, հիմի սիրելի դարձավ, - արձագանքեց Գագիկը, - օ՛ֆ, ինչ կլիներ, որ քարն էլ փափուկ լիներ բրդի նման...
- Ինչ կլինե՞ր: Նրանից ոչ տուն կշինվեր, ոչ կամուրջ, ինչ պիտի լիներ... Ա՛խ, հիմի իմ խեղճ մայրը աղի-աղի լաց է լինում. Աշո՛տ, կարո՞ղ է պատահել, որ մնանք այստեղ փակված:
Շուշիկը հուսադրող խոսքի էր սպասում:
- Չենք մնա, մի՛ վախենա, հիմի ուր որ է ձյունը կդադարի, կգնանք...
Բայց ձյունը դադարելու մտադրություն չուներ:
Կեսօրի մոտ նա արդեն լցրել էր սեպ-սեպ քարերի արանքները և ամեն ինչ հավասարեցրել խորշի առաջ:
Հասոն դուրս եկավ, նայեց պղտորված-խառնված բնությանը և բացասաբար շարժեց գլուխը: Ապա ձեռքը բռնեց թափվող ձյան տակ և տնտղեց նրա կոշտ, սառը հատիկները:
- Հը՛, ի՞նչ եզրակացության եկար, - հարցրեց Աշոտը, երբ քուրդ պատանին նորից տեղավորվել էր:
- Երկար է գալու... շա՛տ երկար... Ու շատ խոր...
- Թո՛ղ, հիմի կկտրվի-կգնանք, - ձեռքը թափ տվեց Աշոտը: - Տե՛ս, ինչքան մանրացել են հատիկները:
Խորքի աղջամուղջում ճերմակին տվին Հասոյի ատամնաշարքերը:
- Հենց վատն էլ էդ է, որ մանր է գալիս: Եթե խոշոր փաթիլներով գար՝ շուտով կկտրվեր, - ասաց նա վստահ:
Դե ով-ով, Հասոն է՞լ չհասկանար «ձյան գործերից»:
Հասոյի այդ խոսքից փուլ եկավ Շուշիկի ամբողջ հույսը:
- Ուրեմն փակվա՞ծ ենք մնալու...
Եվ նա սկսեց լուռ լալ:
Աշոտը, որ քիչ առաջ լավատեսորեն էր տրամադրված, նորից մռայլվել էր: Նրան վրդովեցնում էր բնության «համառությունը», սպասում ես, սպասում, մի ժամ, հինգ ժամ, չի կտրվում, թափվում է միալար: Է՛, Աշոտն այդքան համբերությո՞ւն ունի:
- Լաց լինելն արգելվում է, - չոր և կտրուկ հայտարարեց նա: - Լռենք և սպասենք, տեսնենք ինչ մտադրություն ունի բնությունը... Շուշի՛կ, դու Բոյնախի մոտ նստիր... Այդպե՛ս, մեջքդ դեմ արա նրա փափուկ կողին, - մեջքդ որ տաք մնա, չես հիվանդանա...
Լռեցին: Ձյունը շարունակում էր թափվել առատությամբ, բուքը չէր դադարում: Գյուղում, տաք բնակարաններում նրանք երբեք չէին զգացել բնության արհավիրքը, նրա կործանարար ուժը: Այստեղ, զուրկ այն զենքերից, որոնցով մարդս պայքարում է բնության դեմ՝ զուրկ բնակարանից, տաք հագուստից, սննդից, գործիքներից, նրանք միանգամից զգացին տարերքի դաժանությունը, զգացին, թե ինչքան անճար է լինում մարդս բնական աղետների դեմ, երբ մնում է մերկ ձեռքերով:
Ի՞նչ հոգ քարայծերին: Հիմա իրենց անձավներում նստած՝ հանգիստ որոճում են, իսկ երեկոյան դեմ դուրս կգան արոտի, կճղակներով կքանդեն ձյունը, կբացեն փափկած խոտը կհագեցնեն իրենց քաղցը: Նապաստակները թփեր կկրծեն: Սկյուռը իր շտեմարանից կսկսի սնվել, արջն ու գորշուկը քուն կմտնեն ու առանց կերի կանցկացնեն ամբողջ ձմեռը:
Նրանց բանը հեշտ է, նրանք բոլորն էլ հարմարվել են բնության խստություններին: Ի՞նչ անեն անզեն ու անփորձ պատանիները...
Այսպիսի մռայլ մտքեր էր առաջ բերում թափվող ձյունը մեր պատանիների մեջ, բայց և հույսը դեռ չէր լքել նրանց: «Հիմի ուր որ է դրսից կգտնեն մեզ», - մտածում էին նրանք և դա համբերություն էր տալիս:

Շատ սպասեցին այդպես լուռ, բայց ոչ ձյունը դադարեց, ոչ նրանց փնտրողները երևացին:
Օրն անցավ, ձյունը տեղում էր հա տեղում, քաղցն ու ծարավը գլուխ էին բարձրացնում և մռայլ մտքեր առաջ բերում: Ոչ մեկի մոտ ժամացույց չկար: Օրվա ո՞ր ժամն էր. մառախուղը չոքել էր ժայռերին և շարունակ իրիկնադեմ էր թվում: Ժամանակն անցնում էր ծանր, սրտամաշ...
- Տեսա՞ր մեզ ուր հասցրեց այդ քյալլագյոզը, - վրդովված քրթմնջում էր Սարգիսը: Նրա դեմքի աղվամազը բիզ-բիզ կանգնել էր, իսկ մաշկը կարծես փետրած հավ լիներ:
Աշոտը, որ շուտ-շուտ խորշից դուրս էր գալիս եղանակն ստուգելու, դարձել էր անհամբեր:
- Հերի՛ք կռկռաս, - նեղացավ նա, - տղամարդը ձյան տակ էլ կընկնի, ժայռերում փակված էլ կմնա: Սովորե՛լ ես կոլխոզի տաք պահեստին...
Աշոտը խոսում էր արտաքին զայրույթով: Էապես նա աշխատում էր իր խղճի ձայնը լռեցնել, իրոք, ծանր կացության մեջ գցեց ընկերներին իր ցնորամիտ բնավորության պատճառով:
- Վերջը լավ կլինի, - հույս էր տալիս Գագիկը, բայց սոսկում էր այն մտքից, որ կարող է իրականանալ Աշոտի սպառնալիքը Սարգսին՝ կարող են փակված մնալ ձորում:
Միայն Հասոն էր, որ իր ընկեր Բոյնախի վիզը գրկած, թիկն էր տվել ապառներին ու անքթիթ նայում էր դրսում առատորեն թափվող ձյունին: Թեթև, հազիվ նկատելի հեգնանք կար դրոշմված նրա բրոնզագույն դեմքին, «Է՛հ, ձյուն է էլի՛, ինչ եք գլուխներդ կորցրել», - կարծես ասում էր նրա հայացքը:
Թաղիքե կլոր գլխարկին փաթաթած փուշիի[5] աբրշումե ծոպերը իջնում-ծածկում էին նրա կոպերը և տղան իր սև աչքերով նայում էր այդ ծոպերի արանքից: Դա առանձին խորհրդավորություն էր տալիս կարծես Արաբիայի անապատներում կիզված նրա դեմքին:
- Խուշկե[6] Շուշիկ, Բոյնախին փաթաթվիր, Բոյնախը տաք է, - այդ ցրտին անգամ կարմրելով դիմեց նա աղջկան: Ապա ինքն իրեն ասաց քուրդ հովիվների առածը.- Հեյ վա՛խ, ո՞ւր ես, ամա՛ռ... ամառը չոբանի հարազատ ծնողն է:
Այնուհետև, առանց Շուշիկի կողմը նայելու, կամաց ու դուրեկան ձայնով քթի տակ երգում էր քրդական տխուր մի երգ.
Լո, լո, լո, լո, լո...

Քուրդիստանի խուլ գյուղերից
Լաց ու հառաչ եմ լսո՛ւմ.
Քուրդ հովիվը անհուն վշտից
Տխուր խաղեր է կանչո՛ւմ...

- Քեռի Ավդալը առանց շաքարի ու թութունի կարո՞ղ է մի օր էլ դիմանալ, - չգիտես լուրջ, թե կատակով հարցրեց Գագիկը:
- Կդիմանա՛:
- Հա՞, դե լավ է: Որ դիմանա՝ վերջը լավ կլինի, էգուց տանը կլինենք: Դե, որ էգուց տանը կլինենք, բերեք մաքրազարդենք ուտելիքի մնացորդը:
- Այո՛, ուտելիքը մեջտեղ բեր, ժամանակն է, - համաձայնեց Աշոտը: Նա պայուսակից հանեց լավաշն ու պանիրը, բաժանեց վեց հավասար մասերի և յուրաքանչյուրի բաժինը հանձնեց իրեն:
Երբ Բոյնախը ևս ստացավ ու իսկույն խփշտեց իրեն հասանելիք բաժինը, հովիվ պատանու աչքերը լցվեցին ջերմությամբ, և եթե նա բնավորությամբ քաշվող չլիներ, շնորհակալություն կհայտներ Աշոտին իր այդ մեծահոգության համար:
Նա պանրի փշրանքը շարեց լավաշի մեջ, փաթաթեց-«դուռում արավ» և սկսեց կծել նրա մի ծայրից՝ հովվի անհատնում ախորժակով:
Նույն կերպ «դուռումներ» էին արել և լուռ ուտում էին նաև մյուս պատանիները: Իսկ Բոյնախը, նրանց առաջ պպզած, կարմիր լեզուն հանած հերթով հարցական նայում էր մեկ սրա, մեկ նրա աչքերի մեջ...

---

[5] Փուշի – ծոպավոր գլխակապ:
[6] Խուշկե - քույրիկ

Կերան, քաղցները հագեցրին, բայց աղի պանիրը սաստկացրեց նրանց ծարավը: Բուռ-բուռ ձյուն վերցրին կերան, իրար զգուշացնելով, թե սառը կարող է վնասել: Զգուշացնում էին, բայց ամենազոր ծարավը հարկադրում էր գաղտագողի մի բուռ ևս վերցնել...
Երևի դրսում քամին դադարեց, դրանից էր օրը տաքացավ, թե՝ կշտանալուց: Եվ տաքությունը թմբիր բերեց, նախորդ անքուն գիշերից հետո այժմ բոլորի կոպերն էլ ծանրացել էին:
Այդպես թմրած ննջելով նրանք անցկացրին հավանաբար մեկ-երկու ժամ ևս:
Հանկարծ լսվեց Աշոտի ուրախ ձայնը.
- Վե՛ր կացեք, ձյունը դադարել է...
Պատանիները վեր թռան, տրորեցին իրենց աչքերը և առաջին բանը, որ տեսան՝ իրենց պատսպարանի դռանը կիտված ձյունն էր՝ ճերմա՛կ, փափո՛ւկ, նոր հավաքած և կույտ կազմած բամբակի նման:
Շարժվեցին, հորանջեցին, ձգեցին իրենց մարմինների սառած ու թմրած անդամները: Լսվեցին ճրթճրթոցներ, մեկի տնքոցը:
- Օ՛ֆ, այս ծակոցներն էլ... ժամանակ են գտել, - գանգատվեց Գագիկը: - Ո՞վ է հիվանդացել, թող մատ բարձրացնի:
Բոլորի մարմիններն էլ ջարդվում էին, նրանք ծակոցներ էին զգում իրենց թիկունքներում, ոմանք հարբուխ էին ընկել, բայց զարմանալի բան, ոչ մեկը լրջորեն չէր հիվանդացել: Սովո՞ր էին, թե՞ այդպիսի դեպքերում օրգանիզմը մոբիլիզացնում է իր «ներքին ռեսուրսները» ցրտի ու կոշտության դեմ:
Վատ էր միայն Սարգսի վիճակը: Շունչ քաշելիս կողն էր ծակում, իսկ թիկունքը «տախտակ էր դարձել», ինչպես մրսած թիկունքի մասիս պատկերավոր արտահայտվում էին այգեձորցիք:
- Քիթս ու գլուխս այնպես է բռնվել, կարծես մրսած ոչխար լինեմ, - գանգատվում էր Աշոտը:
- Հա՛, այծը լավ ժամանակին փախցրեց գլխարկդ, - հաստատեց Գագիկը: - Ոչի՛նչ, հով գլխով մարդիկ ավելի պարզ են մտածում: Մի դուրս գանք այս արջաբնից, տեսնենք ի՞նչ կա աշխարհում:
Առաջինը Աշոտը փորձեց դուրս գալ խոռոչից, բայց հենց ոտքը դուրս դրեց՝ մինչև գոտին խրվեց ձյան մեջ: Նայեց ձորին, Արարատներին և ստիպված էր կկոցել աչքերը, ամե՛ն, ամեն ինչ, ողջ տեսանելի աշխարհը ծածկված էր ճերմակ սավանով...
Նրա հետևից դուրս սողացին ընկերները, տրորեցին, տափակացրին ձյունը և նայեցին իրենց շրջակայքին, լո՛ւռ, կենդանության ոչ մի նշան, կարծես ձյունը իր տակ քար ու կապանի հետ թաղել էր և բոլոր շնչավոր արարածներին: Թփերը բոլորովին կորել էին ձյան տակ, իսկ ժայռերի արանքներում բուսած մանր ծառերը իրենց ճյուղերը խոնարհել էին գետին:
Արահետը, որով եկել էին մեր պատանիները, բոլորովին չէր երևում...

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. Թե ինչպես կարիքն առանց հապաղելու սկսեց բախել նրանց դուռը

Այո, փոթորիկն անցել էր, բայց մնացել էր ձյունը, սառը և խոր ձյունը...
Ո՞ւր գնալ, դեպի ետ՝ ձո՞րը, թե դեպի առաջ, դեպի ազատություն:
Վերջինը գրավիչ էր. բայց անհնարին: Պատանիները հայացքով զննում էին Դիվային կածանը, խոր ձյան տակից միայն նրա նշաններն էին երևում, տեղ-տեղ՝ կածանի ներքին պռունկը եզերող քարերը և այն տեղերը, ուր շավիղը լայնանալով փոխվում էր տափակ դարավանդի:
Մառախուղ չկար, բայց օրը գորշ էր, երկինքը՝ անուրախ: Բոլոր նշաններից երևում էր, որ օրը մոտենում է իր վախճանին:
- Ետ գնանք, մի հարմար այր գտնենք, - առաջարկեց Աշոտը:
- Տուն չե՞նք գնալու... էլի քարերի վրա՞ ենք քնելու... Ծարավ եմ, Աշո՛տ...
- Գիշերելու տեղ գտնենք, վաղը տեսնենք ինչ ենք անում...
- Մի՛ հուսահատվիր, Շուշի՛կ, մի գիշեր էլ որ դիմանանք, էգուց, կամ մենք ճամփան կբացենք, կամ գյուղից կգան կգտնեն... Դե՛հ իրար ձեռքից բռնեցեք: Գնացինք...

Բոյնախը հասկացավ պատանիների մտադրությունն ու առաջ ընկավ: Նրա հետևից իր մահակով կածանը շոշափում և զգուշությամբ առաջ էր շարժվում Հասոն: Մնացածների համար արդեն դժվար չէր քայլել նրա հետքերով:
Հասան կածանի վերջը, ցած թռան զառիթափի գլխից և տափարակի վրա հաստատուն կանգնելով, ազատ շունչ քաշեցին, այժմ արդեն անդունդ չկա նրանց ոտքերի տակ:
Բայց ո՞ւր գնալ:
- Գնանք քարե ծաղիկների վրա մեկնվենք, - հեգնախառն առաջարկեց Գագիկը:
- Իսկապես, Հասո՛ն, ծաղիկը պահե՞լ ես, - հետաքրքրվեց Շուշիկը;
- Իսկի կգցե՞մ որ... քեզ համար եմ գտել, - ասաց քուրդ պատանին և իր համարձակ խոսքից խիստ կարմրեց:
- Չէ, քո ծաղկոտ մարգագետինը շատ կոշտ է, գնանք մյուս այրը, որի ճակատից օձ գցեցինք ցած:
Խումբը համաձայնեց Աշոտի այս առաջարկին: Իրոք, Օձի այրը (ինչպես նրանք կոչեցին նրան) բավական խոր էր և հարմար բնակության համար:
Ձյունը ճեղքելով՝ խումբը ընթանում էր դեպի վեր, ժայռերի տակ կուչ եկած նոսր ու գաջաջ անտառակը: Առջևից խոր ձյան մեջ ալիքաձև լողում էր Բոյնախը: Նրա հետևից, իր երկար մահակի վրա հենվելով, խմբի համար ճամփա էր բացում Հասոն:
Սարգիսը քայլում էր վերջից: Եվ թեև իրենից առաջ ընթացողները արահետ էին բացում նրա համար, սակայն այդ արահետը բոլորովին էլ նման չէր իր անցած ճանապարհներին՝ խորդուբորդ էր, նրա հատակում թաքնված քարեր կային, որոնք «քոռ- քոռ» ընկնում էին ոտքերի տակ և հարկադրում, որ տղան շուռ գա և իր ահագին հասակով մեկ պառկի սառը ձյան մեջ:
Այդպիսի դեպքերում նա զգուշանում էր բարձրաձայն «օֆ» ասելուց, որպեսզի իրենից առաջ ընթացող Շուշիկը չզգա իր անճարությունը: Չորս կողմ նայելով՝ թափ էր տալիս վրայի ձյունը, բայց, այնուամենայնիվ, մտքում մի «օֆ» էր անում, մի «ախ» քաշում և մի զույգ էլ անպարկեշտ խոսք շպրտում Աշոտի հասցեին, որը, նրա կարծիքով, կործանման դուռը հասցրեց ամբողջ խմբին:
- Արագ քայլեցեք, որ ծակոցներդ կտրվեն, - հրահանգեց Աշոտը:
Իրոք, լարվելուց և ջանքեր թափելուց մեր պատանիները շուտով տաքացան, քրտնեցին, աշխուժացան, սակայն ծարավը տանջում էր բոլորին:
- Ձյուն ուտելն արգելվում է, - լսվեց Աշոտի ձայնը: - Համբերեցե՛ք, շուտով ջուր կգտնենք:
Հասան ձորը թիկունքից պատնեշող ժայռերի ստորոտին, ուր ծուռումուռ ճյուղերով կաղնիներ էին կանգնած՝ ձյան կույտերն իրենց ճյուղերի վրա, որով նրանք ավելի շուտ ճերմակ ու անճոռնի տաղավարների էին նմանվում, քան ծառերի:
- Օձի անձավը նայենք, - առաջարկեց Աշոտը՝ ծառերից վեր ժայռի մութ երախը ցույց տալով:
Ձյունը ճեղքելով հասան, ներս մտան: Շատ հարմար էր բնակության համար այդ անձավը. բարձր առաստաղ, ողորկ պատեր, նեղ մուտք, կոկ հատակ: Խորքում մի նեղ անցք գնում էր դեպի ժայռի ընդերքը: Հասոն սողաց-խցկվեց այդ անցքն ու այնտեղից ձայն տվեց.
- Ջուր եմ գտել, տղե՛րք, պինդ կացեք:
Բայց ջրի ձայնը՝ ծ՛լթ, ծ՛լթ, ծ՛լթ, գալիս էր հեռու՝ գետնի խորքից և այնպես էլ Հասոն չկարողացավ հասնել նրան: Առաջ մեկնեց իր մահակը և ետ քաշեց, չոր էր:
Նստոտեցին այրի պատերի տակ և մի պահ մնացին լուռ: Բոլորն էլ պահանջ էին զգում քննարկելու իրենց վիճակը: Նրանք Աշոտին էին նայում:
- Եկեք անկողիններ պատրաստենք գիշերվա համար, որ չմրսենք: Մեր առաջին գործը դա է լինելու, - ասաց նա ծանր-ծանր: - Հանգստացա՞ք, դե վեր կացեք:
Ոչ ոք չհարցրեց, թե ինչից պիտի պատրաստեն «անկողինները». դժվար չէր հասկանալ, որ երեկվա քամին զգեստահան է արել ծառերը և չոր տերևները խցկել ժայռերի ճեղքերը և որ հիմա այդ տերևները պիտի գտնել և հավաքել:
Աշոտը նրանց չառաջնորդեց դեպի խաշամի «պահեստները», այլ կանգ առավ եղևնու ընտանիքին պատկանող «գիհի» կոչվող մի ցածլիկ ծառի մոտ: Գիհու բունը կարճ է ու բարակ, բայց արմատից սկսած

մինչև գագաթը պատած է մշտադալար փարթամ ճյուղերով: Հեռվից նայելիս այդ ծառը խոտի կանաչ բլրակի է նման: Աշոտը թափ տվեց նրա վրայի ձյունը և սկսեց ծալել-ջարդել ճյուղերը:
- Սրանք մեզ համար դառնալու են զսպանակավոր մահճակալներ... Հասկացա՞ք.. Դե՛հ, ջարդեցեք:
Յուրաքանչյուրն իր ուժի ու շնորհքի չափ, մեկը շատ, մյուսը քիչ՝ ճյուղեր ջարդեցին-կրեցին անձավը և փռեցին նրա քարե հատակին: Այդ նպատակին չորս ծառ զոհ գնաց:
Երբ արդեն պատրաստ էին «մահճակալները», հերթը հասավ «ներքնակներին»:
Ժայռերի ճեղքերը խուզարկելիս Շուշիկը, որ սկզբում սվսվում էր ցրտից, ճչաց.
- Հասո՛, արի՛, այնքան տերևներ եմ գտել...
Քարե բնական ծածկի տակ տերևները այնպես չոր էին մնացել, որ ձեռք տալիս խշխշում էին: Շուշիկը ջանում էր գիրկը լցնել տերևներով, բայց չէր ստացվում, թափվում էին:
- Կա՛ց, խուշկե Շուշիկ, էդպես չի լինի, - մեղմությամբ միջամտեց Հասոն: - Առ լցրու իմ պենջակի մեջ, իսկ ես հիմա բլուզս տոպրակ կշինեմ...
- Հիսունչորս հատ տերև եմ գտել, Աշո՛տ, ուղիղ հիսունչորս, հաշվել եմ, քո արևը, - ներքևից լսվում էր Գագիկի ուրախ ձայնը:
Կրում էին պատանիները ինչ ձեռքներն էր ընկնում՝ տերև, չորացած խոտ, միամյա բույսերի ցողուններ ու փռում էին «մահճակալների» վրա:
Այս զբաղմունքն այնպես ոգևորեց նրանց, որ մի պահ մոռացան և՛ քաղց, և՛ ծարավ, և՛ ձորում փակվելու վտանգը:
Նրանք այնքան տերև կուտակեցին, որ երբ Գագիկը փռվեց իր «անկողնուն»՝ նրա լղարիկ մարմինը կիսով չափ թաղվեց «ներքնակի» մեջ:
- Ա՞յ հրաշալի տեղ, Աշո՛տ, ինձ համար ճարիր կրակ, ջուր ու հաց և ես էստեղից գնացողը չեմ... Ձեր արևը, արդեն ես մաթեմատիկայից փախչելու միտք ունեի...
Կրա՛կ, ջո՛ւր, հա՛ց...
Լավ ձևակերպեց Գագիկը մեր խմբի անդամների ամբողջ հոգսը:
Կրա՛կ, ջո՛ւր, հա՛ց...
Վայրկենական ոգևորությունն անցել էր և մնացել էր ապրելու նվազագույն պահանջը. - իսկ եթե օգնությունն ուշանա՞, իսկ եթե օրեր տևի ճամփա բացե՞լը, ինչպե՞ս ապրեն առանց կրակի, ջրի, հացի...
Այդ օրը նրանք մի քիչ կերել էին, դեռ կարելի էր համբերել: Իսկ ինչպե՞ս դիմանալ ցրտին, ծարավին:
Աշոտը պառկեց-խցկվեց այրի խորքի անցքը, որտեղից ջրի ծլթոց էր լսվում: Ա՛խ, այդ հեռավոր ծլթոցը...
- Չէ, այդ ջուրը շատ հեռու է մեզնից, - ասաց նա վերադառնալով:
- Իսկ եթե անցքը փորենք-լայնացնե՞նք, - հարցրեց Շուշիկը, որ, ըստ երևույթին, բոլորից շատ էր տանջվում ծարավից:
- Հատակը քար, կողքերը քար, ո՞նց կփորես... Չէ, ուրիշ բան պիտի մտածել: Եթե կարողանանք կրակ ստանալ, ջուր էլ կունենանք: Քանի բոլորովին չի մթնել, շտապ կարգով պետք է վառելիք հավաքենք... Դե՛հ, մի՛ հուսահատվեք... Շարժվեցե՛ք, ի՞նչ եք նոթներդ կախել...
Դե իհարկե կշարժվեն, ո՞վ կարող է տեղում հանգիստ նստել, երբ բոլորի համար էլ պարզ է, որ իրենց կյանքը կրակից է կախված և որ առանց կրակի նրանք կոչնչանան...

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես մեր պատանիները երազում էին նախամարդու հզոր բազուկներն ունենալ

Արդեն հոգնե՞լ էր, թե հուսահատությունից՝ Սարգիսը տեղից չէր շարժվում:
- Գուցե կրակ չենք ստանում, ինչի՞ իզուր տեղը վառելիք հավաքենք, - բողոքեց նա:
- Այդպես է կարգը, առաջ պետք է լուծը առնել, հետո՝ եզները, - Շուշիկին աչքով անելով բացատրեց Գագիկը և Աշոտի հետևից դուրս ելավ այրից:
Աշոտը մագլցեց մի կաղնու ու սկսեց ջարդել նրա չորացած ճյուղերը: Ձյունը խռռոցով թափվեց ծառի տակ՝ իր ահագին հասակով մեկ տնկված Սարգսի գլխին:

- Գնա էն ցածրիկ եղևնու ճյուղերը կտրիր, ի՞նչ ես ցցվել շամփուր կուլ տվածի նման, - վերևից գոչեց Աշոտը:
Մինչ Սարգիսը դժկամ կշարժվեր, Հասոն մագլցեց վեր, եղևնին արմատահան արավ ու քարշ տվեց այրը:
Շուշիկը չարչարվում էր մի մամխի թփի վրա, բայց մի ոստ անգամ չկարողացավ պոկել նրանից: Սառը ձյունը այրում էր նրա բարալիկ ու նիհար մատները:
- Դա պինդ է, խուշկե՛ Շուշիկ, դա թո՛ղ... մատներդ կծակի, - մեղմությամբ համոզում էր Հասոն: - Հետս արի: Առ էս ճյուղը, սա էլ առ, քարշ տուր-տար էրի առաջ թափիր:
Հովիվ Հասոն, որ ամբողջ կյանքն անց էր կացրել հանդերում, իր տարերքի մեջ էր: Նա մագլցում էր ձյունոտ ժայռերը, փշրում էր նրանց ծերպերում բուսած գանգրահեր, գաջաջ կենու և գիհի ճյուղերը, ցած էր նետում ու հետն էլ գոչում.
- Խուշկե Շուշի՛կ, եկա՛վ...
Գագիկը կոխ էր բռնել մի հին կոճղի հետ, քրտնքի մեջ մտած չարչարվում էր ու ինքն իրեն փնթփնթում.
- Հիմի կպարզվի՝ տղամա՞րդ եմ դառել, թե ոչ...
- Այդ ո՞ւմ հետ ես խոսում, - հետաքրքրվեց Շուշիկը:
- Հե՛չ, քոթուկի՛... դիմադրելու փորձեր է անում, համոզում եմ, որ վերջ տա անիմաստ դիմադրությանը՝ չի լսում:
Այնպես էլ կոճղը չլսեց նրա խորհուրդը, և Գագիկն ստիպված եղավ խուզարկել քարերի խոռոչներն ու երևան հանել այնտեղ թաքնված չոր տերևները:
- Գնանք ծառայեցեք-տաքացրեք բնության թագավոր մարդ, արարածին, ի՞նչ եք մտել ծակուծուկ, - ասում էր նա և տերևները լցնում թևքերն ու վիզը կապած, տոպրակ դարձրած իր բլուզի մեջ:
Այսպես, ամեն մեկը մի բան բերելով, անձավը լցրին և՛ չոր, և՛ թաց վառելիքով: Միայն Սարգիսն էր մոլոր կանգնել շեմքին, նա ոչ մի բան չէր հաջողացրել գտնել:
Երբ արդեն վառելիքի կույտը բավական բարձրացել էր այրի պատն ի վեր, խումբը նստեց խորհրդակցության:
Ինչպե՞ս, ինչո՞վ կրակ ստանալ:
- Հո պատահաբար ոչ մեկիդ մոտ լուցկի չի՞ մնացել, - հարցրեց Աշոտը:
Բոլորն էլ լուռ խուզարկեցին իրենց գրպանները՝ ոչինչ չկար:
- Ա՜խ, իմ հեր ջան, մի անգամ ծխելու փորձ արի, մռութս քաղաքավարի ջարդեց... Դե որ թողնեիր ծխեմ, հո հիմի ցրտից չէի՛ սրթսրթա, - գանգատվում էր Գագիկը:
Բոլորն էլ լուռ էին:
- Աշո՛տ, երդվում եմ բոլորի առաջ, չեմ մատնի: Թե թաքուն ծխում ես՝ լուցկիդ հանիր, - անսպասելի ասաց Գագիկը և խուզարկու նայեց ընկերոջ աչքերի մեջ: Սա շփոթվեց, կարմրեց:
- Հիմար բաներ մի ասի... լսողն էլ կհավատա, - կմկմաց նա:
- Բա որ ծխող չես, ի՞նչ հույսով ես առաջ փայտ հավաքում, հետո մտածում վառելու մասին...
- Դե, մթնում էր...
- Ուրեմն թաքուն ծխող չե՞ս... Ափսո՛ս:
Ապա քիչ մտածելուց հետո ավելացրեց.
- Գուցե նախամարդու նման կրակ ստանանք, հը՞... էն որ նկարած է մեր դասագրքում:
- Հա՛, ստիպված դա՛ պիտի փորձենք... Դե՛հ, գիհի չոր ճյուղերը քսեցեք իրար, տեսնենք ով շուտ կրակ կստանա:
- Ձեռքով կրակ հանել կլինի՞, - տատանվեց Շուշիկը:
Աշոտը խեթ-խեթ նայեց նրան:
- Իսկ ձեռքով փլավ կուտվի՞, որ ուտում ես: Կրակն ի՞նչ է, որ չհանենք, - պարծեցավ նա ու այդպես էլ ինքնավստահ գործի կպավ:

Մինչ նրանք գետնին նստոտած աշխատում էին կրակ ստանալ մեր նախնիների պարզ ու դժվարին եղանակով, Հասոն պտրտեց իր տոպրակը, գտավ մի կտոր ղավ[7], որ օրեր առաջ պոկել էր մի կոճղից, չորացրել տաք մոխրի մեջ և պիտի ծեծեր-աբեթ դարձներ ու հանձներ հորը:
- Դե՛հ, դուք ձե՛ր իմացած ձևով կրակ արեք, ես՝ իմ, - հայտարարեց նա և սկսեց զբաղվել իր չորացած ծառասունկով:
Նախ քարի տակ դրեց ծեծեց, փափկացրեց: Ապա այրի խորքից մի կտոր կայծքար գտավ, հետո եղևնու չոր ու յուղոտ արմատից բարակ տաշեղներ տաշեց: Այդ էլ բավական չհամարելով, նա քանդեց իր պիջակի աստառը, բամբակ հանեց և այրի մի անկյունում, երեսը դենը պպզած, սկսեց կրակի պատրաստություն տեսնել:
- Պտտի՛ր, Սարգի՛ս, ուժե՛ղ պտտիր, այդպես կրակ չի ստացվի, - հորդորում էր Շուշիկը, բայց Աշոտի քրտնած ճակատին և արագ-արագ բարձրացող ու իջնող կրծքին նայելով, բոլորովին հույսը կտրեց, թե շփելով կարելի է կրակ ստանալ:
- Բան չի դուրս գալիս, - վերջապես հևալով խոստովանվեց Աշոտը, առանց Շուշիկի կողմը նայելու: Անհարմար բան ստացվեց. գոնե չպարծենար աղջկա առաջ...
- Այո՛, մածուն ուտելուց դժվար է, - համաձայնեց Գագիկը: Եվ լրջանալով շարունակեց: -Նախնադարյան մարդու նման կրակ ստանալու համար նրա բազուկները պիտի ունենալ... մի դեսը նայեցեք, այնքան գրիչ ենք բռնել, որ գրչակոթի նման բարակ են մնացել, - ցույց տվեց նա իր բարակ-երկար մատները:
Նրանք նստել էին լուռ ու հուսահատ:
Խոնավ քարանձավի մի անկյունում դանդաղ կաթում էր, որից հասկացվում էր, որ ձյունը հալվում է ու դրսում տաք է: Բայց այդ մռայլ ու մութ խորշում այնպես սառն էր, որ Շուշիկը դողում էր ամբողջ մարմնով:
Աղջամուղջի մեջ, այդ բորբոսնած և խորդուբորդ պատերին պսպղում էին խխունջների թողած հետքերը:
Աշոտը վեր կացավ տեղից և գլորելով այրից դուրս նետեց ինչ-որ ժամանակ առաստաղից պոկված-ընկած քարը: Մթնում խարխափելով նա դարձյալ քարեր գտավ և նյարդային շարժումներով դուրս նետեց, պարզ էր, որ վրդովված էր կրած անհաջողությունից:
- Չխ՛կ, չխ՛կ, - լսվում էր այրի մի անկյունից:
- Ի՞նչ ես անում, Հասո՛, չեղա՞վ, - հարցրեց Աշոտն անհամբեր:
- Չէ, - մեղավորի տոնով պատասխանեց Հասոն: - Կայծքարն անպետք է...
Երկար մնացին այդպես լուռ և բոլորի գլխում էլ նույն տանջող հարցն էր. ինչպե՞ս, ի՞նչ հնարքով կրակ ստանալ: Նրանք լիովին գիտակցում էին, որ ամեն բանից առաջ իրենց կրակ է հարկավոր, որ առանց կրակի իրենք կոչնչանան:
Ա՛խ, գոնե մի հատիկ լուցկի մնացած լիներ մեկն ու մեկի գրպանում.., Ո՞ւմ մտքով կանցներ, որ կգա ժամանակ, երբ իրենց կյանքը կախված կլինի մի լուցկուց...
- Պարապ նստելով չի լինի, շարունակեցեք փայտերն իրար քսել, - ասաց Աշոտը, երկու չոր ճյուղ վերցրեց և մի գաղտագողի հայացք գցելով Շուշիկի կողմը՝ ամբողջ թափով նորից սկսեց կիսատ մնացած գործը:
Բոլորն էլ ուժասպառ եղան՝ ոչինչ չի ստացվում: Աշոտի մարզված բազուկների տակ գիհի յուղոտ ճյուղը փոս ընկավ իրար քսելուց և այդ փոսիկից սկսեց հազիվ նկատելի ծուխ բարձրանալ ու այրվածահոտ բուրել:
- Հը՞, ստացվո՞ւմ է, թե՞ չէ, - Շուշիկի կողմը մի հաղթական հայացք ձգելով հոխորտաց Աշոտը:
Այրվածահոտը գնալով ուժեղանում էր: Մի առ ժամանակ դա ոգեշնչեց պատանիներին և նրանք փոխն ի փոխ շարունակեցին իրար քսել այդ փայտի կտորները:
Բայց բոլորի ջանքերն էլ ապարդյուն անցան:
Հևալով և ուժասպառ, նրանք նստոտած էին այրի քարե սառը հատակին:
- Այդպես կրակ կստացվի՞... հենց մեծ-մեծ խոսել գիտեք, - լսվեց Սարգսի դժգոհ ձայնը:

---

[7] Ղավ կամ աբեթ – մի տեսակ ծառասունկ, որ չորանալուց հետո դառնում է շատ դյուրավառ նյութ:

- Իսկ նախամարդը ինչպե՞ս է ստացել, - սրտնեղած պատասխանեց Աշոտը. նրա բազուկները տնքում էին հոգնածությունից:
- Նախամա՛րդը... տես ո՛ւմ հետ է համեմատվում... Ֆիզիկա չե՞ս անցել: Ապա մի բացատրիր ֆիզիկայի օրենքներով, թե ինչո՞ւ շփումից ոչ մեկս կրակ չստացանք, և ինչ պիտի անենք, որ ստանանք:
Այդ հարցից Աշոտը անակնկալի եկավ, իսկ ինքը կարծում էր, թե Սարգիսը ֆիզիկայից բան չգիտի: Նա լուռ էր, ի՞նչ պատասխաներ: Եթե անձավում լույս լիներ, Աշոտը կնկատեր այն հեգնական հայացքը, որ Սարգիսը ուղղեց նրան:
- Փայտերի շփման մակերեսը լայն է, դրանից տաքանում է, բայց կրակ չի ստացվում, - բացատրեց Սարգիսը նեղացածի տոնով: - Գոնե ընկերներիդ հարցրու, հետո վճիռ արձակիր, հրամաններ տուր...
Դիտողությունը տեղին էր, բայց Աշոտը իսկի կընդունե՞ր որ:
- Իսկ մեր դասագրքի նկարը ի՞նչ է ցույց տալիս, - տաքացավ նա:
- Ցույց է տալիս, որ դու կրակ հանելու ձևը չգիտես, - շպրտեց Սարգիսը: - Ցույց է տալիս, որ պետք է մի հարթ փայտի վրա փոս փորել, ձողի սրած ծայրը մտցնել այդ փոսի մեջ ու երկու ձեռքով արագ պտտել ձողը: Այն ժամանակ փայտերի շփման մակերեսը հինգ անգամ փոքր կլինի քո ստեղծած մակերեսից, ուրեմն և հինգ անգամ արդյունավետ կլինի շփումը... իմացա՞ր: Հիմի համոզվեցի՞ր, որ նախամարդը քեզնից լավ գիտեր ֆիզիկան... Ոչ թե գրքերից, այլ՝ գործով...
Աշոտը այս անգամ կուլ տվեց վիրավորանքը:
- Ինչ է, հիմի քեզ համար ես հարթ փայտ որտեղի՞ց ճարեմ, - փնթփնթաց նա փայտի կտորները զննելով:
- Գոնե մի դանակ լիներ տաշեինք-հարթեցնեինք... Թո՛ւհ, ոչինչ չկա ձեռքներիս... ինչի ենք պետք առանց դանակի... Հասո՛, ի՞նչ ես անում
այդտեղ...
Իսկ Հասոն կուզեկուզ ինչ-որ բան էր փնտրում: Նա այրի հատակից քարի կտորներ հավաքեց, տարավ մեկ-մեկ զննեց այրի մուտքի լույսի տակ, դեն նետեց և դուրս եկավ այրից: Ու՞ր գնար, որ կողմ շարժվում էր՝ մինչև գոտին խրվում էր ձյան մեջ:
- Ի՞նչ ես ուզում, ասա՛, - նրա հետևից գոռաց Աշոտը:
- Սատանի եղունգ... սուր անկյուններով...
- Դե այդպես ասա: Գագի՛կ, հետս արի: Շուշի՛կ, դուրս արի այրի շեմքին կանգնիր, արևի տակ...
Շուշիկը տաքանում էր մայր մտնող արևի տակ, իսկ տղաները իրար հետևից շարք կազմած ընթանում էին ժայռերի ստորոտով: Մի տեղ ժայռը կռացել էր, ուստի նրա տակը չոր էր: Այդտեղ տղաները թափ տվին իրենց շորերը և սկսեցին խիճերը խուզարկել:
- Սա՞ է կայծքարը, - մի սև քարի կտոր Հասոյին մեկնելով հարցրեց Աշոտը:
- Չէ, սատանի եղունգը սև շուշի նման կոկլիկ է, նրա նման պսպղում է ու բարակ շերտերով է լինում՝ ծայրն ու բերանը դանակի նման սուր:
Սարգիսը դեղնաճերմակ մի քարի կտոր էր վերցրել և ուշադիր զննում էր:
- Քեզ ասացին սևը փնտրիր, - կոշտ դիմեց նրան Աշոտը:
- Սարգսի վրա մի՛ բարկանա, Աշո՛տ, - մեղմությամբ դիտեց Հասոն, - դա էլ է չախմախաքար: Իսկական կայծքարը դա է: Տուր մի էն մթնում փորձեմ...
Քարե ծածկոցի մութ խորշում, դեմքով դեպի պատը չոքած, պողպատի կտորով նա խփեց Սարգսի գտած քարին և գոչեց.
- Իսկական չախմախաքար է, գնա՛նք...
Վերադարձի ճամփին ձյունը տրորված էր, ուստի Գագիկն առաջ էր ընկել և կուրծքը դուրս ցցած գնում էր դեպի Շուշիկը այնպիսի ցույցով, կարծես վերադառնում էր հաղթական կռվից:
- Ի՞նչ կա... ի՞նչ գտաք, - հետաքրքրվեց Շուշիկը:
- Հետո կիմանաս, - խորհրդավորություն տվեց Գագիկը, և խումբը հանդիսավոր մտավ անձավ:
Հասոն գնաց խորքը և չոքեց իր պատրաստած չոր խռիվի կույտի մոտ: Ի՞նչ է անում այդքան երկար ու բարակ... Գոնե երեսն այս կողմ լինի, մարդ աշխատի դեմքից մի բան գուշակել....
Տղաները բոլորովին անհամբեր էին դարձել, երբ այրի անկյունից չրխկոցներ լսվեցին, և աղջամուղջի մեջ կայծեր ցրիվ եկան:

- Ջա՛ն, - ճչաց Շուշիկը:
- Կա՛ց, - նրա ձեռքից բռնեց Գագիկը. կարծես վախենում էր, որ կայծերը կփախչեն-կչքանան իրենց ձայնից:
- Չ՛խկ, չ՛խկ, չ՛խկ, - պողպատի կտորով Հասոն անընդհատ խփում էր քարին և կայծեր ցրում այրի աղջամուղջի մեջ՝ մերթ հատուկենտ, մերթ փոքրիկ խրձիկներով:
Տղաները նրա հետև պպզած և վիզներն առաջ մեկնած սպասում էին: Նրանք շունչները պահել էին և լարված նայում էին Հասոյի աջ ձեռքի հատու շարժումներին և փուշիի ծոպերին, որ ամեն հարվածի հետ թեթև թափահարվում էին ու զարնվում տղայի թուխ վզին:
Ա՛խ, կրակ ստանայի՞ն, գոնե ցրվեր իրենց սառն՛ ու անհրապույր բնակարանի այս մռայլը... Պաշտելի բան է եղել կրակը, իսկ իրենք նրա կարևորության մասին չեն էլ մտածել մինչև այս ցուրտ ու խոնավ անձավն ընկնելը: Չէ՛, մեր նախնիներն իզուր չեն պաշտել կրակը...
Հասոյի համար կարծես այդ պահին աշխարհը գոյություն չուներ, գոյություն չունեին և ընկերները: Ո՛չ, հենց ընկերների համար էր նա մոռացել իր շրջապատը և իր ամբողջ էությանը կենտրոնացրել աննկատելի ծուխ արձակող այդ աբեթի կտորի վրա... Նա գիտեր, որ իր և իր ընկերների կյանքը այդ չորացած սունկի կտորից է կախված...
Մի կտոր չոր փայտ վերցրեց, աբեթը դրեց նրա փտած ճեղքի մեջ ու փչեց այնպես դանդաղ և զգուշությամբ, որ ծնվող կրակը չմեռնի իր շնչից, այլ օդի մի քանի թեթև ալիք ստանալով բորբոքվի:
- Հը՛, ի՞նչ, եղավ, - անհամբեր գոչեց Աշոտը:
Հասոն այնպես էր կլանվել իր գործով, որ մի պահ մոռացել էր իր շրջապատը: Նա ցնցվեց այրի կամարների տակ կրկնապատկված ձայնից, ցած դրեց ձեռքին ծխացող փայտը ու մեղմությամբ պատասխանեց.
- Սպասի՛ր, հիմի կլինի...
Եվ երբ ձեռքը նորից տարավ ծխացող փայտին, դողաց. կրակը հանգել էր դեռ չծնված...
- Հիմի կերա՞ր... Ա՛խ, քո այդ գոռալդ... - սրտնեղած շպրտեց Շուշիկը և դուրս եկավ այրից: Նրա հետևից դուրս եկան խմբի մյուս անդամները և բոլորից վերջում՝ Հասոն, գլուխը կախ, մթագնած: Կրակը նա արդեն ստացել էր, ստացել էր մեծ լարումի գնով, բայց խանգարեցին իրեն, չթողեցին գործը մինչև վերջ տանի: Հիմա իրեն համար հասկանալի է, թե ինչու ֆերմայի մեխանիկ Գարեգինը ոչ մի գործիք չի նորոգում պատվիրատուի ներկայությամբ:
- Կգաս վաղը այսինչ ժամին կտանես, - ասում է նա ու մենակ փակվում իր փոքրիկ արհեստանոցում:
- Հը՛, հուսահատվեցի՞ր... Ինչո՞ւ չես շարունակում խփել քո կայծքարին, - հարցրեց Աշոտը խեթ նայելով Հասոյին:
- Չի լինում, մաշվեց... էլ սուր անկյուններ չունի, - պատասխանեց տղան՝ ձեռքի քարը ցույց տալով:
Խումբը նորից գնաց մեզ ծանոթ ծածկի տակ կայծքար փնտրելու:
Ի՜նչ անհասկանալի բան է եղել կրակը, երբ զուրկ ես այն ստանալու միջոցներից: Այն կրակը, որ այնքան էժան ու առատ է աշխարհում...

Մի գիշեր ևս իրար հպված դողացին մեր պատանիները, այրի դռնից ներս էր խուժում ձյան սառնությունը:
Գիշերը Հասոն դուրս ելավ և քարերով փակեց այրի մուտքը: Երբ վերադարձավ իր տեղն ու գրկեց իր անբաժան ընկեր Բոյնախին, լսեց Շուշիկի տնքոցը: Քուրդ պատանու սիրտը ճմլվեց: «Գոնե էս աղջիկը չլիներ մեգ հետ...», - մտածեց նա և իր հաստ աբան զգուշությամբ գցեց Շուշիկի թիկունքին: Աղջիկը իր շեկ գլուխը դրել էր Գագիկի ոտքին ու քնել:
Այրի խորքից լսվում էր անհայտ ջրի ծլթոցը, իսկ դրսում բուքն էր ոռնում:
Ինչո՞ւ գիշերն այնքան երկար է լինում անքուն մարդու համար...

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես պետք եկավ բնության մեջ ձեռք բերած փորձը

Մեր պատանիները առավոտյան վեր կացան ծանր տրամադրությամբ և ծանրացած գլուխներով:

Հասոն լուսադեմին աղջկա վրայից զգուշությամբ վերցրել էր իր աբան («Թող վրան չտեսնեն, անհարմար է...») և հագնելով դուրս էր սողացել անձավից ու մռայլ դիտում էր շրջակայքը: Ծանր ու սառն ամպերը չոքել էին Հովազաձորի ժայռերին և ձյան նոսր ու կարծր հատիկներ էին մաղում ցած: Դրանք ավազի հատիկների նման ցավեցնում էին տղայի սառած ականջները:
- Հը՛, օրը բացվելու միտք չունի՞, - լսվեց թիկունքից. Աշոտն էր:
- Չէ՛, չի բացվելու... Ոչ մի նշան չկա...
Աշոտը գլխաբաց ու մոլոր մտածում էր: Եղանակը չի լավանում՝ լա՛վ, դա բնության գործն է, իսկ ինչո՞ւ գյուղից մարդ չերևաց: Ով գար-չգար՝ իր որսորդ հայրը հանդերը ման գալով անպայման կհասներ Հովազաձոր: Սա ի՞նչ հանելուկ է: Ուրեմն, է՞լ պիտի սպասեն այս սառնամանիքին, առանց կրակի, առանց սննդի... Թե՞ ճամփան բացելու մի հնար մտածեն:
Նրանք ցած ձայնով խորհրդակցում էին, սակայն ելք չգտնելով, որոշեցին շարունակել կրակ ստանալու ձախողված փորձերը: Հասոն աբեթը և փտած փայտի կտորը լուսադեմից տաքացրել- չորացրել էր իր ծոցում, ուստի ավելի հույս ուներ հաջողության հասնելու, քան նախորդ օրը: Նա դրսից մի բուռ կայծքար ճարեց և ներս գալով, նորից չոքեց իր անկյունում՝ երեսով դեպի պատը:
Երբ ընկերները հետաքրքրությունից մղված նորից հավաքվեցին նրա թիկունքին, Հասոյին պատեց անհանգստությունը: Նրա ձեռքը դողում էր, չէր կարողանում կենտրոնանալ գործի վրա, որ շատ զգուշություն և ուշադրություն էր պահանջում, քանի՛- քանի վտանգավոր աստիճաններ է անցնում կայծը, մինչև կրակ դառնալը: Նախ աբեթը պիտի վառվի, ապա նա կրակը պիտի տա բամբակի կտորին, սա էլ իր հերթին պիտի վառի փտած փայտը, իսկ փտած փայտը սովորաբար ինքն իր մեջ այրվում է, ծխում, բայց բոց չի արձակում: Բոցը պիտի ստանալ արդեն չոր տաշեղների միջոցով: Դե եկ փտած փայտի մեջ նվվացող-ծխաթաթախ կրակը փոխանցիր տաշեղներին և նրանցից բոց ստացիր: Ըստ որում փչելդ կարող է կամ հանգցնել, կամ բոցավառել, նայած ինչ հեռավորությունից և ինչ ուժի ես փչում: Մոտիկից, օրինակ, թոքերիցդ եկող ածխածինը վնասակար է թույլ կրակին, կխեղդի նրան: Բայց երբ հեռվից ես փչում, այն էլ թույլ, քո շնչով դեպի մարող կայծն ես հրում թթվածնով հարուստ օդը և շունչ տալիս նրան:
Իր արհեստի այս բոլոր նրբություններն ինչպե՞ս հասկացներ Հասոն ընկերներին, երբ ինքն էլ այդ մանրուքը բացատրել չէր կարող: Մանավանդ որ իր քաշվող բնավորության պատճառով չէր ուզում որևէ դիտողություն անել գյուղից եկած այդ «ուսումնական մարդկանց», որոնց նկատմամբ նա հատուկ ակնածանք ուներ: Դե նրանք դպրոցականներ էին, հո կատակ բան չէր...
Լավ ժամանակին վրա հասավ Շուշիկը, որ իր սեռի դիրքերից ավելի համարձակորեն կարող էր խոսել Աշոտի հետ:
- Դե, երեկվա խաղը չխաղաք տղայի գլխին: Հեռացե՛ք, ի՞նչ եք բկին չոքել, - գոչեց նա և բոլորը հնազանդությամբ հեռացան Հասոյի թիկունքից:
Բայց ո՞վ կարող էր աչքը կտրել քուրդ պատանու ռիթմիկ շարժումներից և փուշիի թափահարվող ծոպերից:
- Չխ՛կ, չխ՛կ, չխ՛կ, - խփում էր նա քարին ու կայծերի խրձիկներ ցրում այրի աղջամուղջի մեջ: Իսկ խումբը լարված սպասում էր:
Տղան մի պահ դադարեցրեց հարվածները և լուռ ինչ-որ բանի էր:
Աշոտը ջահել ձիու նման դոփում էր տեղում, բայց հանդիպելով Շուշիկի խիստ հայացքին, զսպեց իրեն:
Հազիվ նկատելի ծխի մի շիթ բարձրացավ Հասոյի ականջն ի վեր, և պարուրվեց ճերմակ քոլոզի շուրջը: Պատանիները շունչները պահեցին և երբ առան այրվող աբեթի սուր հոտը, թվաց, թե ժամանակը դանդաղեցրեց իր ընթացքը:
Իրենց փոքրիկ կյանքում նրանք ոչ մի բանի այդպես անձկությամբ, այդպես լարված չէին սպասել, ինչպես թույլ բոցի այն շիթին, որ վերջապես երևաց մթնշաղի մեջ: Այդ բոցը հետզհետե մեծացավ և ցոլաց Հասոյի բրոնզագույն պարանոցին, աջ ականջի թուխ բլթակին, ապա մութը պատռելով սկսեց կարմիր խալերով ցոլցլալ ու երերալ այրի խորդուբորդ պատին: Չոքած տղայի հետևից սկսեց երկարել նրա ստվերը:

Երբ նա շուռ եկավ ու խնդագին ժպտաց, սալի վրայի տաշեղների փոքրիկ կույտը մխում էր, ճարճատում և բոցի լեզվակներ արձակում:
- Ուռա՛... - կարծես հրամանով գոչեցին մեր պատանիներն ուրախացած և այրի կամարների տակ դմբդմբաց Բոյնախի խլացուցիչ հաչոցը, նա չէր ըմբռնում, թե ինչ է կատարվել, բայց ուրախանում էր իր տերերի ուրախության վրա:
- Ուռա՛, - իրենց ծանր վիճակը մի պահ մոռացած, խնդագին բացականչում էին պատանիները: Նույնիսկ Սարգսի դեմքը շողում էր:
- Այդ ի՞նչ է ձեռքինդ... Ինչո՞վ էիր խփում կայծքարին, - հետաքրքրությունից վառվում էր Աշոտը և գուցե սիրտը մի քիչ էլ ճմլվում այն բանից, որ իրեն չհաջողվեց կրակ ստանալ:
Հովիվ պատանին բարեսրտորեն ժպտում էր և կրակի թույլ լույսի տակ կրակներ էին ցոլանում սև խաղողի նման սև աչքերի մեջ:
- Ի՞նչ է... հրահան է, ի՞նչ է... Ամեն չոբան էլ սրանից ունի:
- Էդ լավ է, պահի՛ր, պետք կգա: Փչի՛ր, փչի՛ր, կրակդ հոգեվարքի մեջ է...
Նորից խանգարեցին Հասոյին, նորից նրա ուշադրությունը կտրեցին կրակից: Ա՛խ այս ուսումնականները, որ փոքր անհաջողությունից գլուխները կորցնում են, իսկ չնչին հաջողությունից հանկարծ ուրախանում, - գլուխն օրորում ու ներողամտորեն մտածում էր հովիվ Հասոն:
Այդպես, ուրեմն, մեր պատանիների ուրախությունը երկար չտևեց, կրակը գրեթե հանգավ:
Բայց Հասոն, ինչպես և մեր երկրի յուրաքանչյուր հովիվ, կարող էր անձրևի տակ, փոթորկի ժամին անգամ կրակ վառել, ո՛ւր մնաց քամիներից պաշտպանված քարայրում: Նա վառված տաշեղների կարմիր ծայրերն իրար մոտեցրեց, պառկեց և թշերն ուռցնելով սկսեց օդի ալիքներով հանդարտ և զգույշ շոյել հանգչող կրակը: Ծուխն ուժեղացավ, լցվեց նրա աչքերը, արցունքներ քամեց, դարձյալ ուժեղացավ, քուլա-քուլա բարձրացավ դեպի առաստաղը, տարածվեց-ամբարվեց նրա տակ, իսկ Հասոն շարունակում էր փչել, այս անգամ հետզհետե ուժեղացնելով, քանի որ հետզհետե ինքը կրակն էր ուժեղանում:
Եվ հանկարծ բռթկոց լսվեց, բոցը խանձեց նրա հոնքերն ու փուշիի ծոպերը և կարմիր շատրվանի նման նետվեց դեպի առաստաղը...
Ոչ ոք ծպտուն չհանեց, վախենում էին նորից հանգչի: Միայն շեկ շողքերի տակ նկատելի էր, թե ինչպես արագ բարձրանում և իջնում են հուզմունքից ալեկոծված կրծքերը, իսկ դժվար երկունքով ծնված կրակը մեղմ ցոլանում էր նրանց աչքերի մեջ...
Քիչ անց խումբն արդեն բոլորել էր խարույկի շուրջը, որի բոցերը, ճարճատելով, լիզում էին այրի պատն ու հասնելով առաստաղին՝ ծխի հետ թեքվում դեպի դուրս:
Մինչ պատանիները, այնքան դողալուց հետո, վայելում էին կրակի դուրեկան ջերմությունը, Հասոն դարձյալ ինչ-որ գործի էր:
- Աշո՛տ, ծարավ եմ, - երեխայի նման թնկթնկաց Շուշիկը:
Ծարավը տանջում էր բոլորին էլ, ավելի շատ, քան քաղցը: Միշտ այդպես է, մարդ ծարավից ավելի է տանջվում, քան քաղցից:
- Ջո՞ւր... ջրի բանը դժվար է, - մտախոհ ասաց Աշոտը: - Դեռ քանի ձյուն չէր եկել ես լավ նայեցի ձորին, ջրի ոչ մի նշան չկա...
- Ինչի՞ց գիտես... չկա՛, չկա՛, - երեխավարի, խռովածի տոնով հարցրեց Շուշիկը:
- Որ լիներ, գոնե մի քիչ կհոսեր դեպի ձորը: Գոնե մի քիչ կանաչ կամ եղեգ կլիներ մոտը... Գոնե...
- Լա՛վ, համոզվեցինք, էլ պատճառաբանություններդ մի շարունակիր, - մեջ մտավ Գագիկը: - Դու այն ասա, ինչի՞ մեջ ձյուն հալենք: Գուցե մի փոս քար գտնենք...
Ինչպիսի փոս քար պիտի ճարեին, որ ամանի տեղ ծառայեր: Իսկ ձյունն առանց հալելու ուտելը վտանգավոր էր, մանավանդ Շուշիկի համար, որը հաճախ էր հիվանդանում անգինայով:
- Հասո՛, դո՛ւ ի՞նչ կասես, - դարձավ Աշոտը երեսը դենը ինչ-որ բանով զբաղված տղային:
- Ե՞ս... ես ի՞նչ ասեմ... տեսնում եք, որ ջուր եմ պատրաստում... Շուշիկի համար...
Ասաց ու իր համարձակության վրա կարմրեց:
- Ջո՞ւր... ո՞ւր է ջուրը...

- Հիմա կբերեմ, խուշկե Շուշիկ...
Նա հավաքեց, քոլոզը լցրեց ընկույզի, դեղձի, ծիրանի մեծության քարեր, բերեց թափեց խարույկի մեջ և դուրս գնաց:
- Կրակը թեժացնելու համար է... էլի քար լցնենք, տղերք, - աչքով արավ Գագիկը:
Քարով կրա՞կ կթեժացնեն, չէ՛, երևի ուրիշ մտադրություն ունի Հասոն, որ հիմա դրսում ինչ-որ գործի է:
Նա ներս եկավ՝ իր գլխից մեծ մի ձնագունդ ձեռին, որը ձվի ձև ուներ, վերևը՝ բութ, ներքևը՝ սուր:
Երբ քարերը կարմրեցին, նա մեկ-մեկ հանեց-դրեց ձնագնդի բութ ծայրին ու սկսեց ձյունով ծփծփել շիկացած քարերը: Լսվեց թշթշոց, գոլորշի բարձրացավ ինչպես դարբնոցում, երբ շիկացած երկաթը գցում են ջրի մեջ: Ձնագունդը օդում վեր պահած, Հասոն շարունակում էր մոխրոտ քարերը դնել նրա վրա:
Վերջապես ձյունը հալվեց, մոխիր ու քար մնացին վերևը, իսկ ներքևի սուր ծայրից սկսեց հոսել զտված-մաքրված ջուրը:
- Խուշկե՛ Շուշիկ, բերանդ պահիր, - քաշվելով ասաց տղան և ջրի ծորակը դեմ արավ: Աղջիկը բերանը պահեց վերևից ծլլացող ջրի տակ և սկսեց ագահությամբ կուլ տալ կենարար հեղուկը:
Երբեք այդքան դուրեկան, այդքան ցանկալի չէր եղել ջուրը: Երկու օր տոչոր մնալուց հետո, Շուշիկը կլանում էր սառը ձնաջուրը և չէր կարծում, թե վերջ կլինի իր ծարավին, վերջ կունենա այն անպատմելի բավականությունը, որ բերում է այդ հեղուկը ծարավ մարդուն:
- Սրանից հետո էս է լինելու մեր ջուրը, - ասաց Հասոն՝ հալվող ձնագունդը ցույց տալով:
Եվ երբ հերթով բոլորն էլ հագեցրին իրենց ծարավը, նա իր տոպրակից մի կտոր հաց հանեց, բաժանեց հինգ հավասար մասի և ամեն մեկի բաժինն իրեն հանձնելով, ասաց.
Նեղ օրվա համար էի պահել: Ափսո՛ս, քիչ է...
Կարծես մեղավոր էր, որ տոպրակում մնացած հացը շատ չէր: Այդ հացի ներկայությունը երեկվանից հանգիստ չէր տվել տղային. գիտնականների ասած «պայմանական ռեֆլեքսները» այնպիսի իրարանցում էին առաջ բերում նրա ստամոքսում, որ քիչ էր մնում գիշերը գաղտնի ոչնչացնի իրեն այդքան տանջող մթերքը:
Բայց ընկերը Հասոյի համար ամեն բանից բարձր էր, նա առանց ընկերոջ հաց չէր ուտի:
Չոր, թուխ հացը բոլորին էլ գաթայից համեղ թվաց: Ի՜նչ գաթա. Շուշիկը չէր հիշում իր կյանքում, որ այդքան համեղ պատառ կերած լիներ:
- Այս հացի միակ պակասությունն այն էր, որ քիչ էր, - սրախոսեց Գագիկը, գետնին ընկած փշուրը խնամքով վերցնելով և բերանը գցելով: «Ափսո՛ս, մայրս հաց տվեց, ինչո՞ւ չվերցրի» - մտածեց Շուշիկը, երբ շեմքից լսվեց Հասոյի մեղմ ձայնը.
- Խուշկե՛ Շուշիկ, արի էս փետը ներս տար...
Երբ աղջիկը դուրս եկավ անձավից, քուրդ պատանին, անհարմարությունից քրտնելով՝ մեկնեց իր բաժին հացի կտորն ու շշնջաց..
- Վերցրո՛ւ, ես կուշտ եմ... շատ եմ կերել...
Ու գնաց դեպի ծառերը՝ վառելիք հայթայթելու:
Այդպես անցավ մի սրտամաշ օր ևս:

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ. Թե ինչպես պարզվեց, որ մեր պատանիների վիճակը ավելի ծանր է լինելու, քան կարծում էին իրենք

Արեգակը դուրս եկավ և ժայռերի ճերմակ աշտարակներն ու բուրգերը հուրհրատին տվին: Երկնքում ոչ մի կտոր ամպ չկար, ամբողջը ձյուն դառած իջել էր ցած և երկնի լազուրն այնպես էր հստակվել, կարծես մի վիթխարի ձեռք խնամքով ու ջանացողաբար մաքրել էր այն:
Արծիվները, ժայռերի ձյունածածկ պատնեշներին կանգնած՝ լուռ դիտում էին Հովազաձորի անկոչ հյուրերին: Վիթխարի էին երևում նրանք երկնքի ֆոնին, այնքան խոշոր, թվում էր սև յափունջին ուսներին գցած հովիվներ լինեին, որ անշարժ կանգնած հսկում են արածող ոչխարի հոտը: Ավելի շուտ,

աչալուրջ և խստադեմ պահակների էին նման այդ թռչունները, Հովազաձորի բնական բերդը պաշտպանող պահակների...
Արևաձագի հետ ժայռերից լսվեց կաքավների տաղը: Չէ՞ կյանք կա անգամ ձյունով ծածկված այս ապառաժներում...
Պատանիների տրամադրությունը բարձրացավ:
Աչքները կկոցած նրանք նայում էին Դիվային կածանին ու մտածում՝ ի՞նչ հնարքով «լուս աշխարհ» դուրս գան:
- Ա՛խ, մի թիակ լիներ, մի հասարակ փայտե թիակ... Փոխնիփոխ աշխատելով կարող էինք երկու օրում ճամփան բացել, - կարծես ինքն իրեն խոսում էր Աշոտը:
- Բա ասում էիր կգան մեզ կգտնե՞ն, - հարցրեց Շուշիկը: Նա կասկածանքով զննում էր տղայի դեմքը և ջանում էր պարզել, հո իրեն չե՞ն խաբել...
- Կգա՛ն... Երևի դեռ գլխի չեն, որ Հովազաձորում կլինենք... Երբ բոլոր հանդերը ման գան-պրծնեն, երևի մեկն ու մեկը կառաջարկի այս ձորը գալ... Չփորձե՞նք թիակի նման մի բան գտնել...
- Սոված փորով ես ճամփա բացողը չեմ, - ապստամբեց Գագիկը:
Աշոտը խեթ նայեց նրան, բայց որովհետև ինքը ևս քաղցած էր, չնախատեց:
- Լավ, գնանք պտուղներ ճարենք, - համաձայնեց նա:
Բայց ո՞ւր գնային, բոլոր թփերը, ծառերը ծածկված էին ձյան հաստ շերտով:
- Մեկել օրվա զկեռը որտե՞ղ էր, Աշո՛տ, նրա վրա կարծեմ մի քիչ մնաց:
- Հա՛, Շուշի՛կ, գնանք զկեռի կողմը, այն փոսումն էր, ես տեղը գիտեմ:
Եվ Աշոտն առաջ ընկավ:
Մեծ դժվարությամբ ձյունը ճեղքելով, մեր պատանիները հասան ծանոթ ծառին, թափ տվին նրա վրայից ձյունը և զղջացին, որովհետև ձյան մեջ ցած թափվեցին և կորան վաղուց հասած պտուղները:
Սառչող ձեռքերին նրանք գոլ շունչ էին փչում և «մաղում» ձյունը: Արդյունքը այնքան քիչ էր, որ պատանիների տրամադրությունը խիստ ընկավ: Եթե մի քանի օր փակված մնան ձորում, որքա՞ն պտուղ պիտի ճարեն, որ ապրեն...
Եվ սովի ահը հետզհետե համակեց նրանց: Ի՞նչ պտուղ պիտի մնացած լինի քարերով հարուստ, բույսերով աղքատ այս ձորում, որով սնվեն-ապրեն նրանք: Գոնե գարուն լիներ, կարելի էր կանաչով ապրել: Հիմա ամեն ինչ չորացել է, հատապտղի խղճուկ մնացորդներն էլ թաղվել են խոր ձյան տակ...
Այդպիսի մռայլ մտքեր առաջ բերեց սնունդ ճարելու առաջին փորձը:
Է՛հ, լավ է, շուտով կգան իրենց կգտնեն, թե չէ այս պայմաններին ո՞վ կդիմանա... «Կգան... հիմի փնտրում են...», - յուրաքանչյուրը մտքում սիրտ էր տալիս իրեն:
- Մի դենը նայիր, Հասո՛, մարդիկ չե՞ն... Հե՛յ, հե՛յ, էստեղ ե՛նք, էստեղ ե՛նք, - գոչեց Աշոտը:
Շուշիկի սիրտը թնդաց, մի՞թե արդեն եկան իրենց փրկարարները...
Բայց «մարդիկ» ոչ շարժվեցին, ոչ արձագանքեցին: Երկնքի բաց-կապույտ ֆոնին սևին էին տալիս ճերմակ քարերին կանգնած հսկա գառնանգղերը, որ անթթիթ հայացքով լեշ էին փնտրում:
- Չէ, չեն երևում...
- Հիմի որ փակված մնացինք... - ինքն իրեն փնթփնթաց Սարգիսը...
- Այսինքն, դարձանք Հովազաձորի Ռոբինզոններ, - լրացրեց Գագիկը: - Բայց, ափսո՛ս, Ռոբինզոնին փնտրող չկար, իսկ մեզ փնտրելու և, դժբախտաբար, գտնելու են:
Այդ հույսն էր նրան պահում, թե չէ այլևս ուժ չէր ունենա իր երկյուղն ու տագնապը թաքցնելու:
- Լա՛վ դժբախտություն կլինի... Իսկապես, ի՞նչ եք նոթներդ կիտել, հիմա ամբողջ գյուղը հանդերն ընկած մեզ է ման գալիս...
- Այո՛, ամբողջ գյուղը, բացի պահեստապետ Պարույրից, - Աշոտի խոսքը կտրեց Գագիկը՝ ընկերներին աչքով անելով:
Սարգիսը ավելի մռայլվեց և ծնոտները սեղմեց իրար. «Ա՛խ, թե այստեղից դուրս կգա՛նք...»:
- Քանի որ սիրտը պահեստից չի կտրվում, - իր միտքը բացատրեց Գագիկը և մի ժպիտ պարգև ստացավ Շուշիկից:

- Կգա՛ն, հիմա բոլորը կգան՝ քո որսորդ հոր ղեկավարությամբ: Հիմա ինքնաթիռ էլ կգա: Պետք է մի մեծ խարույկ վառել՝ ինքնաթիռին նշան տալու համար: Գնանք ծառերի կողմը:
- Այո, գնանք կրակ անենք... բայց նրա համար, որ չսառչենք գիշերը և գազաններին կեր չդառնանք, քանի որ մեր հետևից ոչ գյուղացիք են գալու, ոչ էլ ինքնաթիռը, - մի բան գլխի ընկնելով ասաց Գագիկը և կարծես իր խոսքի միտքը նոր միայն հասկանալով գունատվեց ու ճչաց. - Տղե՛րք, մենք կորած ենք...
Նրա ձայնից ընկերները սարսռեցին:
- Ինչո՞ւ... Եվ այդ դո՞ւ ես ասում, դու, Գագի՛կ, որ լոզունգ ունես, թե՝ ամեն բանի վերջը լավ կլինի, - հանդիմանեց նրան Աշոտը:
- Էլի լավ կլինի: Բայց հույսներս մեզ վրա պիտի դնենք: Այս կողմ ոչ ոք չի գալու, բոլորն էլ Հեռավոր Արևելքում են փնտրելու մեզ...
- Իսկապես ո՛ր... - բացականչեց Աշոտը և կարծես կայծակից հարված ստանալով՝ թևերը թուլացած նստեց քարին: - Ա՛յ քեզ հիմար կատա՛կ... Հիմա ստացել են մեր նամակները...
Բոլորի հույսերն էլ փուլ եկան, և եթե Շուշիկը չամաչեր, իսկույն կսկսեր լաց ու կոծը:
Կարծես պայծառ օրը մթնեց պատանիների գլխին: Թևները թուլացան, հուսահատությունը միանգամից համակեց նրանց:
- Կորած ենք, վա՛յ... - Գագիկի խոսքին խուլ արձագանքեց Սարգիսը և նրա երկար ոտքերն սկսեցին դողդողալ, իսկ շրթունքները կապտել էին:
Շուշիկը լուռ լալիս էր և մտքում մեղադրում-նախատում Աշոտին:
Այդպես, զանազան դիրքերով նրանք երկար մնացին լուռ:
Աշոտը փորձեց սիրտ տալ ընկերներին.
- Լավ, առայժմ վատ բաներ չմտածեք...
- Ճիշտ է, **խոդե յըկը՝ դըրգե խազար**, - հաստատեց Հասոն և Շուշիկին նայելով շիկնեց:
- Եվ դու էլ կարծում ես հասկացա՞նք քո քրդերենը, - հարցրեց Գագիկը հեգնախառն, ջանում էր թաքցնելու իրեն համակող ահը:
Հասոն ցույց տվեց իր արտասովոր ճերմակ և ամուր ատամների շարքերը:
- Սա քրդերի առածն է, այսինքն՝ աստված մեկ է, դուռը՝ հազար, - բացատրեց նա:
- Հա՞... որ այդպես է հազար դռնից երևի մեկը կբացվի, գնա՞նք...
Եվ Աշոտը վճռական քայլերով առաջ ընկավ:
Չի կարելի ասել, թե Հովազաձորում փակված մնալու վտանգը նրան չէր անհանգստացնում: Սրտոտ էր նա բոլորից, բայց երկյուղը խորթ չէր նաև նրա հոգուն:
Սակայն այդ ցնորամիտ պատանին կարծես մի կողմից էլ ուրախ էր, որ ակամայից ընկավ այդպիսի արտասովոր արկածի մեջ: Մնալ Հովազաձորում փակված, դառնալ իսկական Ռոբինզոն, բայց շրջապատված անհամեմատ ավելի աննպաստ պայմաններով, - կարո՞ղ էր դրանից լավ առիթ լինել ցույց տալու աշխարհին, և այս «շեկլիկին», որ լճավանցի Կամոյից բացի, նրա նման սրտոտ պատանիներ էլի կան մեր երկրում: «Ճանճաքարի մեղրի՞ն էր սովոր...», - չարախնդությամբ մտածում էր նա:
- Տեսա՞ր, քո մի անզգույշ արտահայտությամբ մեզ ուր հասցրիր, - ցածր ձայնով նախատեց Գագիկը Շուշիկին և ձյան միջից նրան վեր քաշեց ու նրա ձյունոտ հագուստը իր գլխարկով թափ տվեց:
- Ո՞ր անզգույշ արտահայտությամբ... Հա՛, Կամոյի՞ մասին:
- Իսկ դա, կարծում ես, քի՞չ է սրա գլխի քամիները շարժելու համար...
- Ի՞նչ եք այդտեղ փնթփնթում, - կանգ առնելով հարցրեց Աշոտը:
- Հենց քո մասին ենք խոսում, - բորբոքվեց Շուշիկը: - Չես ՛ընդունում, որ աշխարհի երեսին կարող է քեզնից քաջը լինել...
Եվ նա նորից սկսեց արտասվել:
- Հիմի իմ խեղճ մայրը... Բոլորը քո այդ, այդ... մեծամտությունը...
Աշոտը անակնկալի էր եկել, ինքը մեծամի՞տ, այդ որտեղի՞ց հնարեցին: Է՛հ, այդ աղջիկներն արդեն սվսվան են: Բայց Գագիկը կհասկանար իրեն, Հասոն՝ նույնպես:

- Այո՛, ձորը մտնելուց առաջ դու ճիշտ գուշակեցիր, հիմի գրքի հերոս դարձանք: Մանավանդ Աշոտը, - դառնությամբ ասաց Գագիկը:
- Ի՞նչ է, ուրիշները կարող են դառնալ, մենք չե՞նք կարող, - տաքացավ Աշոտը:
«Մենք» էր ասում, բայց ընկերներին պարզ էր, որ մենակ իրեն նկատի ունի:
Շուշիկը աչքերը սրբել և գլուխը հանդիմանորեն շարժում էր, իսկ Գագիկը այս անգամ արդեն չէր կարող զսպել իրեն.
- Չէ, ախպե՛ր, ես այդպիսի կարծիք չունեմ իմ մասին: Կամոյի խմբից Գրիգորը (հո գիտեք, որ քեռուս տղան է) ինձնից սիրուն է, ինձնից խելոք, ինձնից սրամիտ, ինձնից քաջ և նույնիսկ ինձնից շատակեր, մի բան, որ ես նույնպես առավելություն եմ համարում...
Աշոտը չպատասխանեց, բայց երևում էր, որ վիրավորվել է:
Նյարդային մի շարժումով նա նորից առաջ ընկավ:
- Ընդունիր, քո՛ գործն է, - քիչ հետո մռայլ ասաց սա՝ ծնկահար ձյան մեջ խրված կանգ առնելով: - Բայց ես, քանի գլուխս ուսերիս վրա է, կարող եմ շատ-շատերին իմ հետև թողնել: Եվ կթողնեմ... Իսկ դուք դա մեծամտությո՞ւն եք համարում: Համարեցե՛ք, ձե՛ր գործն է...
Նրանք հասան իրենց «բնակարանին», ոտքների ձյունը թափ տվին շեմքին և ներս մտան:
Կրակն իջել էր և անձավը ցրտել: Եղած վառելիքը լուռ դարսեցին խարույկի վրա ու պառկեցին յուրաքանչյուրն իր խաշամե անկողնուն: Ծուխը մլմլալով լցվեց անձավը, ապա ճրթճրթոց լսվեց և բոցը գրկեց ցախի ծուռումուռ կույտը: Կարմիր լեզուները սկսեցին խլվլալ ճյուղերի արանքներում, կրակի դուրեկան ջերմությունը սփռվեց չորս կողմ, գունատ դեմքերին արյուն խաղաց:
Կրակը կյանք է, կրակը ցրում է մռայլը: Պատանիները հետզհետե ուշքի եկան իրենց կրած ծանր հարվածից: «Է՛հ, կյանք է, էլի՛, ես էլ փորձենք... ընկերներով չես կորչի...», - մտածում էր Գագիկը և երևի լավատես ու հանգստացնող մտքեր ծնվում էին նաև մյուս պատանիների մեջ:
Բոլորն էլ անհրաժեշտություն էին զգում քննելու ստեղծված իրադարձությունը, քննելու իրենց անելիքը: Դե հո նրանք ուրիշ անգամ չէին փակվել որևէ ձորում, որ փորձ ունենային: Նրանք սպասում էին Աշոտի խոսքին:
Հոր որսորդությանը հաճախակի մասնակից լինելով այդ տղան առաջին անգամը չէր դժվարին կացության մեջ ընկնում, ուստի և ելքը նրանից պետք էր սպասել: Աշոտն էլ զգում էր, որ ակամայից և առանց ընտրվելու ինքն արդեն այդ խմբի ղեկավարն է դարձել:
- Ուրեմն, ընկերնե՛ր, - իրեն հատուկ հանդիսավորությամբ սկսեց նա, կարծես ժողովում լիներ, - մենք պետք է կարողանանք դիմանալ, մինչև որ մեզ գտնեն դրսից և ազատեն, կամ ինքներս դուրս գանք այս փակ բերդից: Ռոբինզոնի նման մենք բնության մեջ ինքներս պետք է հայթայթենք մեր ապրուստը...
- Ռոբինզոնի նմա՞ն... Լա՛վ ես ասում, - լացակումած բողոքեց Շուշիկը: - Ռոբինզոնը մի կղզի էր ընկել, ուր ձմեռ չկար: Տա՛ք, շուրջն էլ առատ բուսականություն...
- Հա՛, լամա էլ էր կթում, Ռոբինզոնին ի՞նչ էր պատահել որ... - լրացրեց Գագիկը:
- Այո՛, չեմ թաքցնում, գուցե մեր վիճակը Ռոբինզոնի վիճակից ծանր է լինելու: Բայց չէ՞ որ մենք միայնակ չենք, մենք խմբով ենք: Կոլեկտիվը մեծ ուժ է, դուք դա լավ գիտեք: Հետո, չէ՞ որ մենք պիոներներ ենք, - ձայնը բարձրացրեց Աշոտը և շեշտակի նայեց ընկերներին: - Ինչպե՞ս էր դաստիարակվել Ռոբինզոնը և ինչպե՞ս ենք մենք դաստիարակվել, տարբերություն կա՞, թե ոչ...
Աշոտն զգում էր, որ իր ընկերները կարիք ունեն ամուր խոսքի ու խրախուսանքի: Եվ շարունակեց հաստատուն տոնով, թեև իրեն հատուկ «ժողովային ոճով».
- Ճիշտ է, մեր ընկած վայրը աղքատ է ու ժլատ, այդ տեսակետից Ռոբինզոնը մեզանից բախտավոր էր: Բայց եթե կազմակերպված գործենք՝ կդիմանանք: Գործներս շատ դժվար է լինելու, կռիվ ենք տալու բնության դեմ: Այդ կռվում չկորչելու համար ամենից առաջ կարգապահություն է հարկավոր: Ուրեմն, առաջարկում եմ մեկին պետ ընտրել, որին մենք պետք է ենթարկվենք և կատարենք նրա կարգադրությունները: Թե չէ, եթե գործենք Կռիլովի «Կարապը, ձուկն ու խեցգետինը» առակի հերոսների նման (հո հիշում եք մեր դասագրքից), կկորչենք: Ուրեմն, այսուհետև մենք գործելու ենք կարգ ու կանոնով, կազմակերպված...
- Լա՛վ, պետս որն է: Էլի դու պաշտոնական դի՞րք բռնեցիր, - առարկեց Գագիկը:

- Նո՛ւ, պետ չլինի, ավագ լինի. մեկը հարկավո՞ր է, որ կիրառի, ասենք, կոլեկտիվի մշակած ռեժիմը: Ինձ որ մնա, նույնիսկ մենք կարող ենք պիոներական օղակ կազմել, - իրենը պնդեց Աշոտը:
- Այո՛, մեկին ավագ կընտրենք և նա կծառայի մեզ, ինչպես դեպուտատը ծառայում է իրեն ընտրող ժողովրդին:
Թեև Աշոտը պետի դերը այլ կերպ էր պատկերացնում, բայց չառարկեց Գագիկին:
- Լա՛վ, ինչ կուզեք անվանեցեք՝ օղակավար, պետ, ավագ, կամ մի ուրիշ բան: Բայց մենք պետք է ենթարկվենք մեր ընտրածին:
- Այո՛, եթե նա լավ ծառայի իրեն ընտրողներին, - նորից իր ուղղումը մտցրեց Գագիկը: - Իսկ եթե վատ ծառայի, կամ գոռոզանա, հիմիկվանից զգուշացնում եմ հա՛, կտապալենք... գաղտնի քվեարկությամբ...
- Աշո՛տ, մեր պետը դու կլինես, - շտապեց իր կարծիքը հայտնել Շուշիկը. կարծես երկյուղ ուներ, որ մեկ ուրիշը կընտրվի:
- Այո, դու հարմար ես, - հաստատեց Գագիկը:
- Ինչո՞վ, - հարցրեց Աշոտը: Գագիկի լրջության տակ ինչ-որ հեգնական բան էր զգում:
- Ինչո՞վ: Հենց թեկուզ նրանով, որ ընկերական զրույցի ժամանակ անգամ պաշտոնական տոնով ես խոսում:
Աշոտը հոնքերը խոժոռեց:
- Դո՞ւ ինչ կարծիքի ես, Սարգի՛ս, - հարցրեց Գագիկը:
- Ինձ համար մեկ է... Ինքը մեզ բերել է, ինքն էլ թող մտածի մեր ապրելու մասին, ես ոչ մի բանի չեմ խառնվի...
- Կխառնվե՛ս, - ամուր ասաց Աշոտը: - Կստիպենք, որ խառնվես:
Նրա ձայնը հնչում էր սպառնագին:
- Տեսա՞ր... Որ ասում եմ ամենից հարմարը դու ե՞ս, - ժպտաց Գագիկը: - Հո ամեն մարդու չի հաջողվի այդպես կարգադրելով խոսել:
Աշոտին ավագ ընտրեցին: Միայն Շուշիկին թվում էր, նա ավելի է խիստ, քան հարկավոր է: Աղջկան նույնպես դուր չէր գալիս նրա չոր, հրամայական տոնը: Ով գիտե, գուցե այս դաժան պայմաններում հարկավոր է, որ իրենց պետն օժտված լինի հենց այդ հատկություններով:
- Լա՛վ, ե՛ս կլինեմ ավագ կամ, ավելի ճիշտ՝ օղակավար: Սարգիսը ճիշտ ասաց, ես պատճառ դարձա ձեր այս ձախորդությանը, ես էլ կաշվիցս դուրս կգամ՝ ինձ ու ձեզ փրկելու համար: Ճիշտ ասացիր, բայց քո այդ հակառակությունդ թող և այլևս դժգոհություն չլսեմ, - խստությամբ դիմեց նա Սարգսին: - Իսկ մեր անելիքը ես այսպես եմ հասկանում, սնունդ ճարել և հարմարություններ ստեղծել ապրելու: Կարող է պատահել, որ երկար մնանք այս ձորում: Ձյուն մաքրող գործիքներ պատրաստել և փորձել դուրս գալ սեփական ուժերով... Ա՛խ, թե մի դանակ կլինե՛ր... Դանակը մեզ կյանքի չափ անհրաժեշտ է: Առանց դանակի ոչ մի գործիք չենք կարող պատրաստել:
Հասոն ժպտաց և ձեռքը տարավ գրպանը:
- Դանակ մենք ունենք, - հանգիստ ասաց նա:
- Ունե՞նք, - ուրախացած տեղից վեր կացավ Աշոտը: Նրա աչքերն այնպես էին փայլում, կարծես արդեն գտնվել էր ձորից դուրս գալու հնարը: - Տեսնեմ, հո կատակ չե՞ս անում:
Հասոն գրպանից հանգիստ հանեց և նրան մեկնեց իր խոշոր, կոպիտ, բայց միշտ սուր հովվական դանակը:
- Դանա՞կ... վայ հոգուդ մեռնեմ, քուրդ ախպեր, - ոգևորվել էր Գագիկը:
- Է՛, հա՞յ եմ, որ դանակ չունենամ... ամեն քուրդ էլ գոտուց կախած դանակ ունի:
Ոչ ոք չվիրավորվեց, իհարկե: Այգեձորցիք իրենք էին իրենց մասին առած հնարել, թե՝ «Հայն էլ դանա՞կ կունենա...»:
Դանակը ձեռքից ձեռք էր անցնում և պատանիները զննում էին այդ կոպիտ իրը մեծ հետաքրքրությամբ:
- Այո, այժմ շատ բան կարելի է շինել այդ դանակով, գուցեև ձյուն մաքրելու գործիք...
Կարծես խմբի ուժը միանգամից ավելացավ:
- Հա, դանակդ մեր միակ զենքն է ու այս պայմաններում մի թնդանոթի արժեք ունի, - իր գնահատականը տվեց Գագիկը:

Իսկ Աշոտը, ղեկավարի դիրք ընդունած, մի հայտարարի էր բերում խմբի առաջին նվաճումները.
- Մենք հիմա բնակարան ունենք, թեև ոչ հարմար բնակության: Ունենք կրակ, որ ամեն բանից կարևոր է: Ունենք մի դանակ որ մեզ շատ հարկավոր կգա: Ահա առայժմ մեր ամբողջ տնտեսությունը: Ո՞րն է մեր հերթական անելիքը: Իմ կարծիքով ամենից առաջ հարկավոր է...
- Ներողություն, իսկ մեր շորե՞րը... Թե՞ շորերը կարևոր չեն, - հարցրեց Գագիկը:
- Այո, շորերն էլ հաշվենք...
Խումբը բավական ապահով էր հագուստի տեսակետից: Ֆերմա մեկնելու օրը բարակ անձրև էր տեղում և դա առիթ էր հանդիսացել հոգատար մայրերի համար իրենց զավակներին ստիպելու, որ տաք հագնվեն: Բոլորն էլ տաք փոխնորդ ունեին հագներին, Աշոտի մայրը ուժով նրա թևն էր գցել աշնանային բարակ վերարկուն, թեկուզև հագին պիջակ կար: Հասոն, ինչպես արդեն գիտենք, տաք պիջակից բացի, հաստ աբա էլ ուներ հագին, Շուշիկը հագել էր իր աշնանային կանաչ վերարկուն: Ամենից բարակ հագնված էր Գագիկը. նրա գորշ պիջակը առանց աստառի էր:
Այնուհետև, նրանք ունեին մեկական պայուսակ՝ մեջը գրքեր ու տետրեր:
Այս բոլոր ունեցվածքը հաշվի առնելուց՝ իր խոսքերով ասած՝ «կոլեկտիվի գույքը ինվենտարիզացիայի ենթարկելուց» հետո Աշոտը հրահանգեց.
- Դե՛հ, վեր կացեք, գնանք ուտելիք փնտրենք...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ. Թե ինչպես դժվար է անցնում կյանքը, երբ մարդուս ստամոքսը հարմարեցված չի լինում բնության պարգևած ձրի սննդին

Ո՞վ ասաց, որ Հովազաձորն աղքատ է, ո՞վ ասաց, թե սննդի պակասություն կա այնտեղ:
Շա՛տ բան կար այդ ձորում, բայց այն ինչ գտնում էին մեր պատանիները ձյունը փորելով, քարերը շուռ տալով, փչակները խուզարկելով՝ ոչ մեկն էլ պիտանի չէին մարդուս սննդի համար. հազարամյակների ընթացքում խոհանոցը մարդուն հետզհետե հեռացրել է բնությունից...
Թեկուզ ձյունը խոր էր, բայց Հովազաձորում բնակություն հաստատած բոլոր շնչավորներն էլ սնվում-ապրում էին. և՛ քարայծերը, և՛ արծիվները, և՛ կաքավները, և՛ այն նապաստակը, որի հետքը գտան այդ օրը: Միայն մեր պատանիներն էին մնացել քաղցած, և որքան սնունդ էին փնտրում, այնքան հուսահատությունը պատում էր նրանց: Դե ինչպես չհուսահատվես, երբ կաղնիների տակ կաղին անգամ չկա, թեև բոլոր նշաններից երևում էր, որ այդ տարի առատ բերք էր եղել, այդ էին վկայում ծառի վրա, տերևների արանքում ցցված կաղնի դատարկ պատիճները:
Ժայռերի տակ մի պառավ ընկուզենի էր կանգնած, ճյուղերը մեկնած դեսուդեն: Հետաքրքիր է, մա՞րդ է տնկել, թե՞ վայրի է: Այս լեռնաշղթայի հարավային լանջին քի՞չ վայրի ընկուզենիներ կան, որոնց պտուղները ոչնչով չեն տարբերվում ընտանի ընկույզներից:
- Ձյունը ետ տվեք, տղե՛րք, ընկույզն էլ վատ սնունդ չի, - աշխուժացած, թե՞ իր խմբի մեջ աշխուժություն առաջ բերելու համար ձայն տվեց Աշոտը:
Տղաները իրենց մատներին փչելով ձյունը ետ տվին, քրքրեցին ամեն ծակուծուկ, ոչ մի ընկույզ չգտան:
Լավ, ասենք թե սկյուռները հավաքել են բերքը, իսկ կաղի՞նը: Կարո՞ղ է արջ լինել այս փակ բերդում:
Երբ նրանք իրիկնադեմին հոգնած, քաղցած և հուսահատ հավաքվել էին քարայրում, Աշոտն ասաց.
- Ամեն կենդանի իր հետքը թողել է ձյան վրա: Իսկ այստեղի կենդանիները երևի բոլորն էլ ապրում են ժայռերի փչակներում: Ուրեմն վաղվանից գնում ենք որևէ կենդանու հետքով, գտնում ենք բնի մեջ ու...
- Ու մեկիս գլխարկը պոզին հագցնելով, ետ ենք գալիս գլխաբաց, - լրացրեց Գագիկը:
Ծիծաղելի բան ասաց, բայց ո՛վ սիրտ ուներ ծիծաղելու, բոլորն էլ զգում էին քաղցից ոչնչանալու վտանգը:
- Եթե հինգով շղթա տված կտրենք քարայրի առաջը, կենդանին ո՞ւր պիտի փախչի, - շարունակեց իր միտքը Աշոտը:
- Չի փախչի, իսկ ինչո՞վ ես սպանելու, հենց մեծ-մեծ ծրագրեր ես կազմում, - փնթփնթաց Սարգիսը, առանց գլուխը վեր քաշելու:

- Հիմի դրա հնարն էլ կգտնենք: Իմ կարծիքով, մենք պետք է դանակի օգնությամբ գործիքներ ու զենքեր շինենք: Պատմության դասագրքում հո տեսե՞լ ենք նախնադարյան մարդու զենքերի նկարները:
Ընկերների հավանությունն առնելով, Աշոտը դիմեց Հասոյին.
- Գնա թփուտները ու դանակովդ ամեն մեկիս համար դալար կաղնուց մի-մի փայտ պատրաստիր:
- Աչքիս վրա... Երկա՞ր, թե կարճ, - ձեռքն աջ աչքին դնելով՝ իսկույն տեղից վեր կացավ և պատրաստակամ հարցրեց տղան:
- Ե՛վ կարճ, և՛ երկար: Կացնի կոթի չափ: Բահի կոթի չափ: Լծան չափ: Այնպես որ կարճով մոտիկից խփենք, երկարով՝ հեռվից...
Նա այնպես գործնական էր խոսում, կարծես կենդանիները անձավներում նստած՝ նրան են սպասում, որ գնա, մուտքը փակի և գործի դնի «թե՛ կարճ, թե՛ երկար» մահակները:
- Գագի՛կ, հետևիր ինձ: Սարգի՛ս, մի քանի քար գտիր բեր: Բայց կլոր չլինեն, կապելու տեղ ունենան: Իսկ դու, Շուշի՛կ, կրակին հետևիր: Առհասարակ հիշիր, որ սրանից հետո կրակի համար դու ես պատասխանատու: Հանգավ՝ կորած ենք, հասկանալի՞ է:
Եվ Աշոտը վճռական շարժումներով վեր կացավ ու դուրս ելավ քարայրից:
- Կրակը չի հանգչի, ես էլ եմ գալիս, մի բանի էլ ես պետք կգամ, - տեղից վեր կացավ Շուշիկը:
Գագիկի ինքնասիրությունը գլուխ բարձրացրեց:
- Դուռ՞ւ... բա ուրեմն մեր գլխին գդակ չկա՞... Ինչքան մեռած պիտի լինենք, որ չորս տղամարդով չկարողանանք մի աղջիկ կերակրել... Գնա՛նք:
Եվ նիհարած կուրծքն առաջ ցցելով՝ դուրս գնաց:
- Ի՛հ, տղամարդիս նայիր, զենքերին նայիր, - թույլ ժպտաց Շուշիկը և կրակին փայտ ավելացրեց.
- Մի՛ պարծեցիր կռվի գնալիս, այլ պարծեցիր վերադառնալիս, - դրսում խրատում էր Աշոտը իր պարծենկոտ ընկերոջը:
- Շեքսպիրից փոխ առար... ափսո՛ս, որ ուտելու չի... Է՛հ, թող սուտի-մուտի գլուխներս գովենք, սիրտ տանք էդ աղջկան, թե չէ դրանց ցեղը հո գիտես, մեկ էլ տեսար սուգ ու շիվանն սկսեց...
Մինչ Հասոն անձավի մուտքից ոչ հեռու կտրում էր ապագա զենքերի կոթերը, Աշոտը զննում էր շրջապատն ու մտածում, «հարկավոր է կապելու դալար կեղև գտնել...»:
Քարայրը, որի մեջ տեղավորվել էին մեր պատանիները, գտնվում էր բուն ձորի վերին մասում: Կարծես հենց այրի պռնկից էլ սկսվում էր ձորի հատակը, որ ցած գնալով խորանում էր ու լայնանում:
Բայց այդ ձորակը քարայրից քիչ ներքև փոխարկվում էր կալի չափ մի հարթության: Երևում էր, որ նրա տեղը ինչ-որ փոս էր եղել, որ ժամանակի ընթացքում լցվել էր տիղմով, հավասարվել:
Ահա այդ հարթության ներքին պռնկին բարձր աճած եղեգներ կային, մի ծեր և մի ջահել ուռենի և թեղի երկու ծառ, որոնք սովորաբար աճում են խոնավ հողերում:
Դալար թեղին ամուր և ճկուն կեղև ունի: Այնպես որ, երբ Աշոտը Հասոյի դանակի օգնությամբ կտրեց կեղևը և դեպի վեր թափ տվեց-քաշեց, թեղու մի ճյուղը մինչև ծայրը պլոկվեց-մերկացավ:
Քիչ անց, թեղին արդեն կիսով չափ մերկացած էր և նրա տակ թափթփված էին զանազան մեծության «չվաներ» ու «գոտիներ»:
- Հիմա մենք արդեն կապելու բան ունենք, - ասաց Աշոտը: - Դե՛հ, հավաքենք մեր «պարանները», տանենք կրակի մոտ: Հասո՛, առ դանակդ ու շարունակիր քո գործը:
Գիշերը կրակի լույսով Աշոտը Հասոյի բերած կոթերի վրա թեղու ճիլոպներով փաթաթեց-ամրացրեց զանազան ձևի ու մեծության քարեր, ճիշտ այնպես, ինչպես նկարած էր իրենց դասագրքում: Ստացվեցին նախնադարյան զենքեր՝ կացին, մուրճ, մկունդ, բոլորն էլ ծուռումուռ, բայց բոլորն էլ ծանր ու հարվածելու հարմար:
- Սրանով, իհարկե, կարելի է խփել, բայց վախենում եմ արյուն հանի, - մեծ «մուրճը» զննելով ինքն իրեն ասում էր Գագիկը:
Այս անգամ ընկերները թույլ ծիծաղեցին, զենքերի տեսքը նրանց որոշ հույսեր էր ներշնչել:
Բայց Աշոտը գոհ չէր:
- Սրանով, իհարկե, կարելի է հարվածել, բայց ոչ մեկով կտրել չի կարելի, - ասում էր նա:
- Իսկապես, ձեր զենքերը բերան չունեն... ոչ մեկը սուր չեն, - հիասթափված ասաց Շուշիկը:

- Է՞լ կոթեր պատրաստեմ, - հարցրեց Հասոն և, հավանություն ստանալով, իսկույն դուրս գնաց:
Նրան հետևեց Աշոտը: Քիչ անց նա տնքալով ներս գլորեց երկու քար, խփեց իրար, ջարդեց, ստացվեցին սուր անկյուններով կտորներ:
Բոյնախը կրակի մոտ պպզած հետաքրքրությամբ նայում և ուզում էր հասկանալ, թե ինչով են զբաղված այս մարդիկ, իսկ Շուշիկը հետևում էր խարույկին և քիչ-քիչ փայտ ավելացնում, կամ ածխակոթերը հրում դեպի կրակի կենտրոնը:
Այրի հատակը ամբողջովին բազալտից էր և, ինչպես գիտենք, հղկված էր խնամքով:
- Դե հիմա, Սարգի՛ս, առ այս քարի կտորն ու սուր կողմով քսիր բազալտին, թող հղկվի, սա մեզ համար կացին է դառնալու, - ասաց Աշոտը:
Նրա տո՞նն էր անբարյացակամ, թե՞ ինքը դեռ չէր մոռացել Հովազաձորի ճամփին կրած վիրավորանքները, դժվար էր որոշել, բայց Սարգիսը տեղից չշարժվեց: Նա թիկն էր տվել մի կոճղի և լուռ նայում էր կրակին:
Աշոտը ինքը հղկեց կացնացու քարի բերանը և ճիլոպով փաթաթեց-ամրացրեց փայտի ծայրին:
- Հիմա մենք կացնի նման բան էլ ունենք, քարե մուրճ էլ: Բայց սա քիչ է, Եթե օրերս մեզ չհաջողվի այստեղից դուրս գալ, ուրիշ իսկական զենքեր պիտի պատրաստենք:
- Դու հենց զենքից ես շարունակ խոսում, իսկ անկողինները՞: Սրանց վրա պառկե՞լ կլինի, - նեղացավ Շուշիկը:
Իրոք, եղևնու ասեղանման տերևները չորացել և մարմինների ծանրության տակ փշրվել էին և այժմ խաշամի տակից դուրս էին ցցվել կոշտ-կոշտ ճյուղերը: Հարկավոր էր չոր խոտով և խաշամով լրացնել-փափկացնել անկողինները: Գոնե այդպես էր կարծում Շուշիկը, որը, բնականաբար, կոշտությունից ավելի էր նեղվում, քան տղաները:
- Դե նա որսորդ է, անկողինը նրա ինչի՞ն է պետք, - հեգնեց Սարգիսը:
- Անկողի՛ն... զսպանակավոր մահճակալներ չե՞ք ուզում, - հեգնանքին հեգնանքով պատասխանեց Աշոտը, բայց զգաց, որ սխալ են արել, ի՛նչ զենքի ժամանակ էր, հարկավոր էր նախ «նորոգել» անկողինները, հետո մտածել զենքի մասին: Բայց արդեն ուշ էր, կարճ օրը վերջացել էր, դուրսը ցուրտ էր ու մութ, այդ ժամին ինչ կարելի էր գտնել անկողնուն հարմար:
- Ուտելիք և անկողնու համար նյութ վաղն ենք փնտրելու: Իսկ հիմա մի բան մտածենք այս զահրումար ծխից ազատվելու, - ասաց Աշոտը հազալով և կսկծացող աչքերը տրորելով: - Քոռացրեց անտերը: Գագի՛կ, մի հնար չունե՞ս...
- Ինչու չունեմ: Որ դու էլ պառկես՝ ծխից չես նեղվի, - պատասխանեց Գագիկը գլխի շարժումով Սարգսին ցույց տալով:
- Պառկենք, իհարկե, բոլորս էլ պառկենք, տեսնենք ով է մեր գործն անելու...
Թաց փայտը մլմլում էր, առատ ծուխ արձակում: Այրի մուտքը ցածր էր, ուստի ծուխը ամբարվում էր ներսում, խտանում՝ իջնում գրեթե մինչև հատակը: Դառը, խեղդող, կսկծացնող... Բոլորի աչքերն էլ կարմրել էին, բոլորն էլ փռշտում էին ու հազում և համեմատաբար ազատ շնչում էին միայն այն ժամանակ, երբ պառկում էին հատակին:
Աշոտը դուրս եկավ այրից, զննեց իրենց բնակարանի արտաքինը. ծուխը դուրս էր ելնում միայն այրի մուտքից և լիզում ժայռը՝ նրա ճակատն ի վեր: Ծխից ազատվելու համար հարկավոր էր վերևից անցք բացել, բարձրից: Բայց ինչո՞վ, քարե մուրճո՞վ, թե՝ Հասոյի դանակով: Ուրիշ ի՞նչ կարելի էր անել...
Մտածեց-մտածեց դրսում Աշոտը և ոչ մի ելք չգտնելով, ներս եկավ սրտնեղած, մաղձոտ:
Հենց այդ տրամադրությամբ էլ նա դառը խոսակցություն սկսեց Սարգսի հետ:
- Ես գոհ չեմ քո շարժ ու ձևից, Սարգի՛ս, - դիմեց նա ընկերոջը: - Այստեղ մենք պետք է կրակ կտրած աշխատենք, որ գլուխներս պահենք: Այդպես ծույլ-ծույլ շարժվելով...
- Ես շարժվում եմ այնպես, ինչպես սովոր եմ, - սրա խոսքը կտրեց Սարգիսը:
- Այդպես ես սովոր, գիտեմ, բայց այն ժամանակ տանն էիր և ամեն բան պատրաստ կար: Հիմա մենք ոչինչ չունենք: Հասարակ կրակն ինչ է, կրակը միշտ վառ պահելն անգամ մեզնից մեծ ջանք է պահանջում: Եթե բոլորս էլ քեզ նման շարժվենք, նույնիսկ փայտ չենք կարող հասցնել կրակին, ուր մնաց սնունդ ճարենք...

Աշոտի այս դիտողությունը հիվանդագին կերպով ընդունվեց:
- Ի՞նչ է, ուրեմն ձեր մեջ թամբալը հենց ե՞ս եմ... - գոչեց Սարգիսը նեղացած:
Ինչպե՞ս վարվես այս մարդու հետ: Տենդագին դես-դեն ընկած՝ ամեն մեկը մի բան է անում, իսկ սա ձեռքերը գրպաններում դրած նայում է, կամ պառկում օջախի մոտ ու աչքը գցում առաստաղին, կամ գործի գնալիս այնպես է գնում, կարծես մեկը առաջ ընկած պարանով քաշում-տանում է իր հետևից... Եվ հետո էլ չի ընդունում, չի զգում, դիտողություն անելիս էլ վիրավորվում է:
- Մի՛ վիրավորվիր, Սարգի՛ս, աշխատել չես սիրում, - մեղմությամբ մեջ մտավ Շուշիկը:
- էդ էր պակաս, որ մազից երկար, խելքից կարճ աղջիկներն էլ ինձ վրա խոսեն...
- Դու հենց էդպես ես... Հիշո՞ւմ ես, որ ծառուղի էինք գցում դեպի Մեյլու, էն ժամանակն էլ հրաժարվեցիր մասնակցել, - տաքացավ Շուշիկը:
- Եվ լավ արի: Չէ՛, ես ճամփի կողքին մրգատու ծառեր տնկեմ, գնացող-եկողը բերքն ուտի...
Աշոտը հանդիմանանքով օրորում էր գլուխն ու մտածում՝ ինչ լեզվով խոսել սրա հետ, որ զգա իր սխալը: Շուշիկի ակնարկն այն մեծ նախաձեռնության մասին էր, որ սկսեցին Այգեձորի պատանի բնասերները Աշոտի ղեկավարությամբ: Սկսեցին և պատվով էլ վերջացրին: Այգեձորից մինչև հարևան Մեյլու ադրբեջանական գյուղը մի հարթ ճանապարհ ձգվում է բամբակի պլանտացիաների միջով: Չորս կիլոմետր երկարություն ունի այդ ճանապարհը, իսկ եզրին՝ ոչ մի ծառ, ոչ մի թուփ չկա: Ամառը ճամփորդը խորովվում է հարավի բարկ արևի տակ ու մրմնջում՝ «Ա՛խ, մի շվա՛ք...»:
Երկու գյուղի պիոներները անցյալ գարնանամուտին որոշեցին պտղատու տունկեր տնկել այդ ճանապարհի եզերքին: Որոշեցին և գործի կպան: Մեյլվի պիոներներն իրենց գյուղից սկսեցին, Այգեձորինը՝ իրենց:
Ի՜նչ ոգևորությամբ էին աշխատում հայ և ադրբեջանցի երեխաները: Գործը նախաձեռնել էր Այգեձորի պատանի բնասերների խմբակը, բայց գյուղի գրեթե բոլոր պատանիները մասնակցում էին ծառատնկմանը: Միայն Սարգիսն էր իր մի քանի ընկերներով մի կողմ քաշվել և դեռ չարախոսում էլ էր Աշոտի հասցեին. «Մա՛րդ է զարմացնում...»:
Այդպես, իրենց դասերից ազատ ժամանակ ամեն մեկը մի քանի շիվ տնկելով՝ հայ և ադրբեջանցի պիոներները ճամփի կեսին հասան իրար, «ուռա» գոչեցին ու գրկախառնվեցին: Չորս կիլոմետր երկարությամբ ծառուղին պատրաստ էր, որին պիոներները տեղն ու տեղը «Եղբայրության ծառուղի» կոչեցին:
Ի՜նչ ոգևորությամբ ընդունվեց այդ լուրն այն ժամանակ շրջանում, կենտրոնում, նույնիսկ «Պիոներ» ամսագիրը գրեց այդ մասին:
Այժմ եթե ընթերցողը Այգեձորից գնալու լինի Մեյլու, կտեսնի, որ ճամփի երկու կողմերից պատվի առած պիոներների նման շարք են կանգնել զվարթ ու մատղաշ տունկերը: Նրանցից յուրաքանչյուրի «վզից» քառակուսի մի տախտակ է կախված, որի վրա գրված է իրեն խնամող պիոների անուն ազգանունը: Մեյլվի կողմից՝ Մեհթի Աբասօղլի, Բյարիմ Մուստաֆաև, Խալա Մամադկզի... Այգեձորի կողմից՝ առաջին և ամենից փարթամ երեք տունկի «ցուցանակների» վրա կարմիր տառերով գրված է՝ Աշոտ Սարոյան, Անահիտ Միրզոյան, մի հիսուն քայլ այն կողմ՝ Գագիկ Կամսարյան, իսկ նրա կողքին՝ Շուշիկ Միրաքյան: Եվ այդպես, ամեն կողմից մի քանի հարյուր անուն...
Անցնում են այդ ճամփով թե՛ տեղացի, թե՛ օտարական մարդիկ և կարդալով այդ անուններն ու նայելով մատղաշ տունկերին, համեմատում են իրար և իսկույն որոշում, թե պիոներներից ո՛վ ինչպե՛ս է խնամում իրեն ամրացված տունկերը: Ավելի ճիշտ, ոչ թե ճամփորդն է որոշում, այլ այդ տունկերն են նրան պատմում իրենց տերերի բարեխղճության մասին, պատմում են լուռ, իրենց տեսքով... Ամեն առավոտ Մեյլվի և Այգեձորի կոլխոզնիկները «Եղբայրության ծառուղիով» են գնում բամբակի պլանտացիաները մշակելու և նույն ծառուղիով էլ վերադառնում են դաշտից: Եվ ծնողները օրինական հպարտությամբ են նայում իրենց որդիների անուններին, բերկրանքով դիտում են, թե ինչպես արագ բոյ են քաշում լավ ջրված ու սնված շահել տունկերը ու գոհ մրմնջում են. «Մեր բալաների ձեռքի գործն է... Թող իրենք էլ էս տունկերի պես բոյ քաշեն, ծլեն-ծաղկեն ու բար տան...»:
Կանցնեն տարիներ, մեր պատանիները հասուն մարդիկ կդառնան, իսկ այսօրվա ընձյուղները՝ վիթխարի ծառեր, որոնք ստվեր կգցեն ճամփի վրա: Նրանց ստվերում կհանգստանա հոգնած ու

քրտնած ճամփորդը, կվայելի քաղցրահամ պտուղներն ու կօրհնի արևելյան եղանակով. «Թող դալար մնա ձեզ տնկողի ու խնամողի կոները...»:

* * *

Բացվեց մեր խմբի գերության չորրորդ առավոտը: Տղաները մեկիկ-մեկիկ դուրս ելան այրից, ապա վաղորդյան ցրտին չդիմանալով, ներս մտան, կրակը բորբոքեցին, տաքացրին իրենց սառած անդամները: Բայց շուտով ծուխը նորից թանձրացավ այրի կամարների տակ և սկսեց խեղդել նրանց:

Է՛հ, ինչ արած, պիտի նորից պառկեն արդեն կոշտացած «անկողիններին»:

Ի՞նչ էլ ուշ է արևը նայում այդ ձորին, արար աշխարհ ողողված է նրա ճառագայթներով, իսկ Հովազաձորը դեռ աղջամուղջի մեջ է:

Վերջապես արեգակն իր ջերմ ու շեկ դեմքը ցույց տվեց Հովազաձորը արևելքից պարսպող ժայռաշարքի գլխից և մի կաքավ սկսեց իր սրտառուչ երգով նրա գովքն անել:

Այդ երգը ալեկոծեց Աշոտին, շարժեց նրա որսորդական ցնորքները:

- Չվախենա՛ք, - դիմեց նա ընկերներին, - հիմա մենք ուր որ է կամ նապաստակ կխփենք, կամ կաքավ: Ձյունը շատ է խոր, իսկական որսի օր է...

- Իսկ մեզ համար խոր չի՞, - միամտաբար հարցրեց Շուշիկը:

- Մեզ համար խոր է, բայց ոչ քեզ համար: Դու կրակի պահապանն ես, հասկացա՞ր...

Ապա Աշոտը դարձավ ընկերներին և գիտակ որսորդի տոնով բացատրեց, որ քանի ձյունը շատ խոր է՝ կաքավն էլ, նապաստակն էլ ստիպված են մտնել նրա խորքը ու տակից ուտելիք ճարել իրենց համար:

- Մենք նրանց պիտի պատահեցնենք ու բռնենք հենց այդ թաղված ժամանակ... Հասկացա՞ք:

- Հասկացանք, բայց չյուրացրինք, - պատասխանեց Գագիկը և դառնալով Շուշիկին, պատվիրեց.- Առ էս մահակը և մնա կրակի մոտ: Արջը որ գա, կասես թող սպասի մինչև գանք լեշը փռենք: - Ապա հանդիպելով Աշոտի հայացքին, ետ քաշվեց: - Ներողությո՛ւն, մտա ֆունկցիաներիդ մեջ...

- Այո՛, մտնել պետք չի: Բայց ճիշտ էր կարգադրությունդ. Շուշի՛կ, դու մնա համ կրակը պահպանիր, հաս էլ աշխատիր քարերի արանքներից խոտ ու տերև հավաքել՝ անկողինները փափկացնել: Ձյունն արագ վեր է կենում, խոտ շատ կարելի է հավաքել:

- Ինչո՞ւ միայն խոտ, մամուռ էլ կարելի է հավաքել ծառերի բներից:

- Լա՛վ, մենք գնացինք: Բոյնախին ճիլոպով կապիր, որ մեզ չխանգարի, թե չէ կհաչի, որսը կփախցնի...

Եվ խումբը քարե զենքերով զինված սկսեց լանջով ցած իջնել. Աշոտը հույս ուներ, որ գիշերը նապաստակները այցի եկած կլինեն մերկացած թեղի ծառին, - չէ՞ որ նրա համեղ կեղևներից կային թափթփված ձյան վրա:

Ահա թե ինչ է նշանակում որսորդ լինել, դիմացի լանջից իրոք նապաստակները եկել-հավաքել են կեղևի կտորտանքը, ցատկոտել են, հազար ու մի պտույտներ գործել: Այնպես որ անփորձ մարդուն կթվար, թե նապաստակների մի ամբողջ նախիր է շրջել այդտեղ: Բայց Աշոտի փորձված աչքը հենց սկզբից նկատել էր, որ մի հետք է իջել ծառի տակ և բազմաթիվ հետքերի այդ լաբիրինթոսից միայն մեկն է ջոկվել-գնացել ձորի հատակով դեպի ցած:

Աշոտը ձեռքը բերանին դրած, նշան արավ լուռ հետևել իրեն: Այնպես տենդի մեջ էր նա, շարժումներն այնպես խորհրդավոր էին, որ Գագիկը հազիվ էր զսպում իր ծիծաղը:

Ցած գնալով՝ ձորը հետզհետե լայնանում էր, փռվում դեպի աջ և Հովազաձորը ներքևից պարսպող ժայռերի գլխին վեր էր ածվում տափարակի:

Նապաստակի հետքը գնում էր դեպի այդ տափարակը: Ձյունը խոր էր, տղաները հազիվ էին շարժվում նրա մեջ:

- Սպասեցե՛ք, - ձայն տվեց Գագիկը: - Աշո՛ւտ, նայիր տես, քանի՞ կիլո միս ունի...

- Ի՞նչը:

- Նապաստակը:

- Ինչի՞դ է պետք...

Աշոտն արդեն սկսում էր վրդովվել:

- Ախպե՛ր, ես խամ գործ չեմ բռնի, մինչև չիմանամ քանի կիլո է, սոված փորով ինչի՞ պիտի ես դրա հետևից ման գամ...

Ի՞նչ անես, վրդովվե՞ս, թե՞ ծիծաղես: Աղիքներդ կտրատվում են քաղցից, գլուխդ պտույտ է գալիս, մարդ քիչ է մնում գոռա հուսահատությունից, իսկ նա նապաստակի կշիռն է հարցնում...
- Գնա՛նք, մեր կողմի նապաստակները մոտ երեք կիլո են լինում, - ճարահատյալ նապաստակի կշիռն ասաց Աշոտը:
- Երե՞ք...
Ու Գագիկն սկսեց մատների վրա մտազբաղ և լուրջ հաշիվներ անել՝ «փորը Բոյնախին՝ տակին կմնա երկու և կես կիլո... մորթին երկու հարյուր գրամ...»:
Աշոտը վրդովված քաշեց նրա թևից: Մահակները ձեռքներին պատրաստ պահած, մեր պատանիները զգուշությամբ հասան տափարակին և հեռվից տեսան, որ կենդանին ձյունը ծակել-մտել է մեջը: Անձայն սկսեցին մոտենալ ձյան մեջ բացված փոքրիկ թունելին, բայց այդ պահին Գագիկը կանգ առավ, նայեց իր անճոռնի «մուրճին» ու հարցրեց.
- Տղե՛րք, անհարմար չի՞, որ չորս հոգով, ահագին մահակներով մի նապաստակի հետևից ենք ընկել... Ես ուղղակի ամաչում եմ իմ այս...
- Մ՛ս՛ս՛... - ձեռքը բերանին դնելով, խստությամբ ընդհատեց Աշոտը, բայց արդեն ուշ էր. նապաստակը թափով դուրս պրծավ ձյան տակից և երկու զույգ ոտք էլ փոխ առնելով, սլացավ դեպի ժայռերն ու անհետացավ նրանց ծերպերում: Փախչելիս նրա ծանրության տակ տեղ-տեղ ջարդվում էր ձյան կեղևը: Այդպիսի դեպքերում կենդանին ընկղմվում էր ձյան մեջ և լողալով մի կերպ դուրս պրծնում: Ափսո՜ս, Բոյնախն այստեղ լիներ՝ հավանաբար հասներ հետևից:
- Կերա՞ր, - վրդովված շպրտեց Աշոտը: - Տեղի-անտեղի դուրս ես տալիս, դե հիմա գնա սոված վնգստա... Դե Գագիկը որտեղի՞ց իմանար որսորդներին հայտնի կանոնը՝ որսի տեղը ձայն հանել չի կարելի:
- Ը՛հը, պապանձվել եմ, - ձեռքը բերանին դնելով շշնջաց նա:
Էլ ո՛ւր, նապաստակը ձեռքից թռել էր...
Նրա հետքերով հևիհև բարձրացան զառիվերով, բայց խրտնած կենդանին դեռ հեռվից դուրս էր պրծնում թաքստոցից ու փախչում, իսկ արծիվները, ժայռերին կանգնած՝ հայացքով հետևում էին որսին:
Վերջապես նրանցից մեկը՝ ճերմակ «շալվարը» հագին մի խոշոր գառնակեր, թափահարեց լայն թևերը և խոյացավ դեպի փախչող կենդանին: Նապաստակը կանգ առավ, գլուխը մտցրեց ձյան մեջ և ջանաց անցնել նրա սառը ծոցը, բայց գիշատիչը իր հզոր մագիլները խրեց նրա կորացած մեջքն ու իր զոհին տարավ ժայռի աշտարակներից մեկի կատարը...
- Գագի՛կ, քանի՞ կիլո միս կունենա, - դառն հեգնանքով հարցրեց Աշոտը:
Գագիկն ազդված էր այդ անակնկալից: Այդ ինչպե՞ս շուռ եկավ ամեն ինչ: Նա նույնիսկ մտքում բաժանել էր, թե նապաստակի որ մասը ով է ուտելու: Ո՞նց թռավ անպիտա՜նը... «Դե որ կեր էիր դառնալու, հիմա՛ր, գոնե մեզ կեր դառնայիր», - դառնորեն մտածում էր նա:
Իսկ արծիվը, ժայռի անմատչելի կատարին ապահով կանգնած, անուշ էր անում իր որսը և հավանաբար ծիծաղում մեր տղաների վրա, որոնք երկար նրան նայելուց հետո, հուսահատ իջան ժայռերից, դես-դեն շրջեցին ձորում և ոչ մի հետքի չհանդիպելով, հոգնած ու տխուր վերադարձան քարայր:
Ի՜նչ էլ կարճ է աշնան օրը. Հովազաձորը դեռ լրիվ չէին շրջել, .երբ արևն արդեն կախվել էր Հայկական Պարի վրա: Ճիշտ է ասում Գագիկի պապը. «Առավոտյան հացի ես նստում, մինչև կշտանալդ մթնում է»: Երբ մտան քարայր, Բոյնախը վնգստալով փաթաթվեց տիրոջ ոտքերին (նա էլ էր քաղցած, խեղճը), իսկ Շուշիկը հարցական նայեց ընկերների մթնած դեմքերին և հասկացավ, որ ձեռնունայն են: Այնուամենայնիվ անհոգ դեմք ընդունեց և զվարթ ասաց.
- Մի տեսեք ի՜նչ անկողիններ եմ պատրաստել ձեզ համար...
Բայց որպեսզի ընթերցողը պատկերացնի Շուշիկի պատրաստած «անկողինները», պիտի նկատի ունենա, որ այդ անձավի կենտրոնը վերին խորքից մինչև շեմքը կարծես փորված էր տաշտի նման: Այդ տաշտի մեջտեղը խարույկն էր վառվում, իսկ երկու կողերին քարե բնական «թախտեր» էին, որոնց վրա փռել էին կանաչ փշատերևը՝ վրան եղևնու փափուկ ճյուղեր, իսկ վրայից մի շերտ չոր խոտ, խոտի վրա էլ մի շերտ չոր, խալավոր տերևներ, ապա՝ մամուռ: Այդպիսով, թեև խարույկը իր դիրքով ցածր էր, բայց նրա վեր բարձրացող բոցերը ջերմություն էին սփռում դեպի երկու կողմի բարձրադիր որմնաթախտերը:

- Այո՛, այսպիսի որսից հետո արժե, որ փափուկ թախտերին հանգստանանք... հալալ լինի մեզ, - ասաց Գագիկն ու մեկնվեց:
Բոլորն էլ պառկեցին ու ընկան մտքերի մեջ:
- Ձյունը արագ է հալվում, կեսն էլ չի մնացել, - ասաց Աշոտը: - Լսո՞ւմ եք, կաթիլքն ուժեղացել է:
Երևի ցանկանում էր սիրտ տալ ընկերներին:
Բոլորն էլ ականջ դրին: Ի՜նչ կաթիլք, ժայռի խորքում ստորերկրյա ջուր էր թափվում՝ նրա թիկունքում հալվող ձյան ջուրը: Թեև երեկո էր, բայց օդը տաք էր և ձնհալը դեռ շարունակվում էր: «Հետաքրքիր է, ո՞ւր է գնում այսքան ջուրը, ծծվո՞ւմ է, թե ավազան կապում ժայռերի տակ...», - մտածում էր Աշոտը:
- Հալվում է, բայց կածանը չի բացվի: Քամին այնպես է լցրել-հավասարեցրել ո՜ր... - մռայլ ասաց Սարգիսը:
Ընկերները համաձայն էին, ուստի չառարկեցին: Նրանք ևս գիտեին, որ «Դիվային կածանը» հատող խորխորատներում հիմա այնքան ձյուն է կուտակվել, որ մինչև գարուն չի հալվի, իսկ ձյան վրա քայլել վտանգավոր է. մի անզգույշ քայլ արիր, մի փոքր կորցրիր հավասարակշռությունդ՝ կգլորվես անդունդը: Իսկ հավասարակշռությունը խախտելու բոլոր հարմարությունները կան այդ արահետում, եթե ձյան երեսը սառած լինի՝ պիտի սայթաքես. եթե հալված լինի՝ պիտի խրվես: Երկու դեպքում էլ կործանում է: Մնում էր կազմակերպել իրենց կյանքն այնպես, որ քաղցից չմահանան:
Ի՜նչ էլ երկար է նոյեմբերի գիշերը, օջախի շուրջը բոլորած, նրանք զրուցում էին ցածր ձայնով, իսկ Բոյնախը դրսում հաչում էր՝ ինքն էլ չգիտեր ում վրա: Հասոն օջախի մոտ փռեց իր աբան, գրպանից մասուր հանեց, թափեց նրա վրա և հատ առ հատ համրելով՝ բաժանեց հինգ հավասար մասերի:
- Որտեղի՞ց, - հարցրեց Աշոտը:
- Վերևից: Բայց շատ չկա, անտեր արջը մեզանից շուտ է գտել:
- Հիմա այստեղ ա՞րջ կա...
- Չէ, հետքերը հին են: Ձյունը գալուց շաբաթներ առաջ ջարդել է թփերը: Կաղինն էլ է նա հավաքել, երևի պոպոքն էլ: Բան չի թողել անտերը...
- Ոչի՜նչ, թող ուտի չաղանա, - հանգստացրեց Գագիկը: - Դառը կաղնից մեզ համար անուշ ճարպ է պատրաստել, դուք էլ գոհ չե՞ք...
- Որ լինի լա՞վ է...
Թույլ ու անսիրտ ծիծաղեցին, մասուրը ավելի էր գրգռել սրանց դատարկ ստամոքսները և քունը վերջնականապես վանել աչքներից:
Գագիկը, Շուշիկի աջ կողքին նստած, երբեմն կատակներ էր անում ու երբեմն էլ ընկերներին սիրտ տալիս, թե՝ վերջո լավ կլինի:
- Համա, տղե՛րք, - ասում էր նա, - առաջս ամառ է, հետևս՝ ձմեռ:
Իսկապես, թիկունքից սառնամանիքն էր զոռում, դեմից՝ թեժ կրակը:
- Հա, ձախ կողմդ էլ գարուն է, - որպես բացառություն կատակեց Աշոտը՝ Շուշիկին նայելով:
- Հա, հա, Աշոտ ջան, էն էլ ի՜նչ գարուն, վարդո՜վ, մանիշակո՜վ...
Շուշիկը ներողամտաբար ժպտում էր ընկերների շաղակրատանքի վրա, բայց նրա վիճակն էլ լավ չէր. ծակում ու ցավում էին մարմնի մասերը և ամենից շատ՝ մեջքը:
Ինչպե՜ս պիտի այդ սրտամաշ ու հավիտենական թվացող գիշերները լուսացնեին նրանք, եթե չլիներ քուրդ պատանի Հասոն: Նա գոտուց դուրս էր քաշել հովիվ մարդու անբաժան զրուցընկերը՝ թթկենուց պատրաստած սրինգն ու նվագում էր քրդական մեղմ ու տխուր մեղեդիներ: Եվ մեջ ընդ մեջ էլ երգում էր իր խանձված, բայց դուրեկան ձայնով.

Լո՛, լո՛, լո՛, լո՛.
Լսեք ինձ,
Ա՛յ սարեր,
Ա՛յ քարեր,
Իմ վառվող կուրծքը բացել եմ ձեր դեմ,
Կարո՞ղ է ձեր քամին հանգցնի
էն հուրը, որ վառվում է իմ սրտում:
Կարո՞ղ է ձեր հովը

չորացնել աչքերիս արցունքը,
Որ թափվում է Բինգյոլա սարից
Իջնող աղբյուրների պես...

(Ջասըմե Ջալիլի պոեմից)

- Է հե՛, Հասո՛, չեղա՛վ, հուսահատ բաներ ես երգում, - դիտեց Աշոտը:
Հովիվ պատանին բարեսրտորեն ժպտաց և նրա բրոնզագույն դեմքին շողացին ճերմակ ատամնաշարքերը:
- Ես հուսահա՞տ... Չէ՛... Ինչի՛ պիտի հուսահատ լինեմ, ձեզ պես ընկերներ ունեմ: Ընկերը գիտե՞ք ինչ է, ընկերոջ հետ մահը հարսանիք է... Սա Խչեզարեի երգն է: Իր սիրած տղային՝ Սիաբանդոյին ասում է. մի՛ գնա վայրի ցուլի հետևից, մի՛ գնա: Թե որ դու որսորդ ես, ես ահա քո որսն եմ, մի՛ գնա: Սիաբանդոն չլսեց, ջահել էր, սիրահարված, արյունը եռում էր: Ընկավ ցուլի հետևից, իր նետերն արձակեց, վիրավորեց նրան: Բայց կույր Ֆալագը[8] չթողեց, ցուլն առավ իր պոզերի վրա, շպրտեց ներքև, խփեց մի չոր, ցցված ճյուղի, ճյուղը մտավ Սիաբանդոյի սիրտը...
Մուժը պատեց Սիփանա սարը, բայց մուժի մեջ էլ Խչեզարեն փնտրեց-գտավ իր վիրավոր յարին: Գտավ, լաց եղավ, իսկ Սիաբանդոն տնքում էր ու ասում, մի՛ լար, Խչեզարե, մի՛ լար իմ անգին...
Խչեզարեն ասաց.

- Ա խ, ինչպե՞ս ես լաց չլինեմ,
Երբ քո տնքոցն եմ լսում,
Երբ քո հառաչն եմ լսում,
Սիաբանդո՛:
Սիփանա գլուխը քարով է պատած,
Սիփանա գլխին մի զուլալ լիճ կա,
Նրա ջրով քո վերքը լվանամ,
Արևին աղաչեմ՝ բալասան լինի
Քո վերքին,
Իմ Սիաբանդո՛...

Երգում էր դժբախտ Խչեզարեի երգը հովիվ Հասոն, երգում էր մորմոքված սրտով և մորմոք էր առաջ բերում իրեն լսող պատանի հոգիներում:
Բոյնախը ներս էր եկել, գլուխը դրել թաթերի վրա և ուշադիր լսում էր իր տիրոջը: Նա անվրդով էր ու խաղաղ, երբ Հասոն շվի է նվագում, ուրեմն վտանգ չկա գայլերից, ուրեմն ամեն ինչ բարեհաջող է...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե ինչ կատարվեց Այգեձոր գյուղում, երբ ֆերմայից ստացվեցին այն չարաբաստիկ նամակները

Այգեձոր գյուղը գտնվում է Արարատյան դաշտի եզրին, այնտեղ, ուր Փոքր Կովկասը իր բազմաթիվ «ոտքերից» երկուսը զուգահեռ կախել է դեպի Արաքս: Այդ «ոտքերի» արանքում է Այգեձորը, ուրեմն և քամիներից պաշտպանված, արևահայաց: Ասենք, հենց անունից էլ երևում է, որ այդ գյուղը ձորի մեջ է և այգեշատ: Լեռներից եկող բարակ առուն վերևի այգիներն է ջրում, իսկ Արաքսից եկող ջրանցքը՝ գյուղի առաջի տափարակը, որ ծածկված է բամբակի պլանտացիաներով:
Դե էլ ինչ Այգեձոր, որ ամեն տան նկուղում գոնե երկու-երեք կարաս գինի չլինի, - այդքան գինի հո կոլտնտեսականներն իրենց տնամերձ այգուց կստանան, որքան էլ ձախլիկ նախագահ Հարութը տարեց-տարի խուզել-կրճատել է նրանց տնամերձ հողակտորների տարածությունը:
Մինչև հոկտեմբեր Այգեձորի յուրաքանչյուր բակում, յուրաքանչյուր ծածկի տակ իրենց լայն բերանները արևին հառած չորանում են կավե կարասները: Ամառն ինչքան կարաս կա Այգեձորո՛ւմ... Իսկ հիմա՝

[8] Ֆալագ – բախտ, ճակատագիր

նոյեմբերին շրջիր գյուղը՝ ոչ մի կարասի չես հանդիպի: Մտի՛ր մառանները, նրանք այնտեղ են, լցված Արարատյան դաշտի «արևային հեղուկով» և բերանները ծեփած սպասում են տոներին...
Հենց տոնի հետ կապված ծիսակատարությունները վերջանում են, մարդիկ կավե ամանները ձեռքներին մտնում են մառանները և առաջին անգամ կարասները բացում: Արբեցուցիչ գազը խփում է դեմքիդ, շշմում ես, բայց և հաճույք ես զգում:
Ահա այդ օրերից է, որ սկսվում են խնջույքներն ու հարսանիքները, և այդ ժամանակ այգեձորցիք ճրագով մարդ են փնտրում, որ տանեն-հյուրասիրեն իրենց անմահական գինիով ու խորովածով: Ասենք, Արարատյան բերրի հովտի ո՛ր գյուղում այդպես չեն, անծանոթ մարդուն երբեմն նույնիսկ գյուղամիջով կոպտությամբ քարշ են տալիս տուն... հյուրասիրելու: Ով էլ դիմադրում է, վիրավորվում են, նախատում. «Ուրեմն ինձ մարդ չե՞ս հաշվում, ուրեմն չե՞ս ուզում իմ օջախը մտնել, չե՞ս ուզում ինձ հետ աղ ու հացի նստել...»:
Այդպես, տոների հետ սկսվում էր «կծպծան» մաճառի և խնջույքների շրջանը:
Ափսո՜ս, այս անգամ առատ ձյուն էր տեղում և այգեձորցիք զրկվեցին տերևաթափ այգիներում, ուշ աշնան թավիշ կանաչին ծալապատիկ նստոտելու և բացօթյա զվարճանալու հաճույքից: Բայց, այնուամենայնիվ, նրանք տներում խնջույքներ կազմակերպեցին և ով ինչ ուներ հանեց-դրեց սեղանին, եփը նոր իջած կարմիր գինու գավերի մոտ:
Ո՞ւմ հյուր կանչես, բոլորն էլ առատ սեղան ունեն, բոլորն էլ հյուրի կարոտ: Իսկ մենակ էլ հո քեֆ անել չի լինի:
Աշոտի հայրը՝ Արամը, և Գագիկի հայրը՝ այգեգործ Արշակը, «կատարները տաքացած» վեճի էին բռնվել գյուղամիջում, մեկը մյուսին դեպի իր տունն էր քաշում:
- Քու արևը, Արշա՜կ, կնիկս էնպիսի կաքավներ է տապակել, որ մատներդ հետը կուտես, - համոզում էր Արամը:
- Ինչի՞, բա ես օջախ չե՞մ... - գոռգոռում էր Արշակը, որ իր բարալիկ որդու հակապատկերն էր՝ կուրծքը լայն, ձայնը հզոր մի ամրակազմ հողագործ:
Վերջապես նա ուժի դիմեց. Արամին շալակեց և, չնայած գյուղացիները հռհռում էին հետևից, մի ջվալ կարտոֆիլի նման տարավ գցեց իր տուն ու դուռը հետևից փակեց:
- Դե շորերդ հանիր լող տուր մեջը, - ասաց նա՝ միջանցքում պատն ի վեր կանգնած ահռելի կարասի խուփը վերցնելով:
- Էդպես բաներից ես վախեցող տղա չեմ, ես արջերի հետ կռիվ տված մարդ եմ, խելքդ ո՞ւմ վրա է գնում, - բոլոր որսորդների նման գլուխը գովեց Արամը:
Բայց երբ Արշակի կինը գինով լիքը կավե գավը ձեռքին առաջ եկավ, թե՝ «Արամ եղբա՛յր, իմ ու քո երեխեքը իրար հետ ախպոր պես են, առ խմիր նրանց հաջողության կենացը», Արամն այդ վիթխարի գավի տեսքից ահով ետ-ետ գնաց, թեև կյանքում արջի առաջ անգամ նահանջած չկար... (այո՛, այդպիսի ազդեցիկ գավեր ունեն Արարատյան դաշտի բնակիչները...), «Էդքանը որ խմեմ, հո խելքս բոլորովին կկորցնեմ», - մտածեց նա:
Այդ ժամանակ դուռը ծեծեցին, ձյունակոլոլ ներս մտավ փոստատարն ու ասաց.
- Վա՛հ, Արա՞մ, դու էլ ես էստե՞ղ, էդ հո լավ է, նամակդ հեզ կտամ, թե չէ, էս ձյուն ու ցրտին հավես չունեի ձեր տուն գնալու:
Ու երկու նամակ հանձնեց՝ մեկը Արամին, մյուսը տանտիրոջը:
- Մուրադ քեռի, մրսած կլինես, ներս համեցեք:
- Չէ, պառավս սպասում է, ներս եկողը չեմ: Գինի՞, հա՝ էդ կարելի է...
Ու ծերունին հենց շեմքում գլխին քաշեց իրեն առաջարկված գավը, մի սրտալի «օխայ» արավ, և երբ ընդհատված շունչը տեղը եկավ, խորին բավականությամբ արտասանեց.
- Գինի հո չի, ասլանի կաթ է...
Այդ ժամանակ Արամն ու Արշակը, ծրարները բացած՝ նամակներն էին աչքի անցկացնում:
- Վա՛հ, էս հո ասլան-բալեն է գրել, արևը կծեմ, բա ինքն ինչի՞ չեկավ, - բացականչեց Արամը՝ որդու ծանոթ ձեռագիրը իր թավ բեղերին հպելով:
- Ո՛նց թե, տեղ չեն հասե՞լ որ... Երեկ են ֆերմայից դուրս եկել...

Ասաց փոստատարը և զղջաց իր խոսքի վրա. Արշակի կինը, «Վո՜ւյ քոռանամ, երեխե՛ս», - գոչեց ու գինու ամանը վայր գցեց ձեռքից:
- Կաց մի տեսնենք, այ կնիկ, ի՞նչ է պատահել, էս լեն աշխարքում ո՞ւր պիտի կորչի, - ավելի շատ իրեն, քան կնոջը սիրտ տալու համար ասաց ամուսինն ու շարունակեց նամակը կարդալ:
- Էս հո իրեն պապին է գրել: Ա՛յ հեր, թոռդ ֆերմայից քեզ նամակ է ուղարկել, - գոչեց Արշակը՝ գլուխը սենյակի բաց դռնից ներս խոթելով:
- Հաա՜... ի՞նչ ա գրում, - լսվեց ներսից:
- Ի՞նչ, հիմի կարդամ: Գրում է, թե քեզ ջահելացնելու է... հա՜, հա՜, հա՜... - ծիծաղեց Արշակը, ապա շարունակությունը կարդալով, իսկույն լրջացավ, աչքերը ճպճպացրեց.
- Ո՞նց թե Հեռավոր Արևելք... սարսաղ է լակոտը....
- Այ տղա, չլինի՞ թե սրանք խոսքները մեկ են արել, - հարբածի ծիծաղով խնդաց Արամը: - Հրես իմ մոզին էլ է գրում, թե՝ սիրտս ուզում է գնալ Հեռավոր Արևելք: Հոր տղեն է, է՜, միշտ ուշքը սարերում, օտար երկրներում, որսի հետ... Դե լա՜վ, ի՜նչ եք ռանգներդ գցել, գնացել են գնացել... կգնան էլ, կգան էլ...
Ճիշտ են ասում, թե՝ խմած մարդու համար ծովը մինչև ծունկն է: Ո՛չ իր որդու, ո՛չ Արշակի որդու նամակները և ոչ էլ Գագիկի մոր վշտահար դեմքը առանձին ազդեցություն չունեցան Արամի վրա:
Իսկ երբ ուշ գիշերին տուն վերադարձավ և այդ գույժն իմանալով՝ նրա կինը սկսեց ծնկներին խփել ու լալ, Արամը բարկացավ.
- Ի՜նչ ես ձենդ գլուխդ գցել: Տղա է, բա հո փեշդ չի բռնելու տանը նստի...
Բայց երբ քնեց, գինու ազդեցությունն անցավ, իր սովորության համաձայն զարթնեց լուսադեմից առաջ, այն պահին, երթ սովորաբար որսի էր գնում, որդու մահճակալը դատարկ տեսավ ու սիրտն ահ ընկավ... «Չլինի՞ թե մի բան է պատահել երեխիս...»:
Նա տագնապահար սկսեց հագնվել: Կինը, շորերը հագին նստած, «ախ ու վիշ» էր անում, ամբողջ գիշերը աչքը չէր կպել: «Վա՛յ բալես... վա՛յ բալես... յարաբ ո՞ր չոլում մնաց...», - մրմնջում էր նա ու կոտրտում մատները:
- Ես հիմի բրիգադիրի ձիով թռչում եմ ֆերմա, արևը դուրս չեկած մի լուր կբերեմ, - մռայլ ասաց ամուսինը, հրացանը վերցրեց ու դուրս ելավ տնից:
- Այ մարդ, թող լուսանա, գելերոց կլինես, էս բուք-բորանին ո՞ւր ես գնում, - հետևից ձայնեց Սիրանը:
Ի՜նչ բուք, ի՜նչ գայլ, Աշոտի նման որդի էր կորցրել որսորդ Արամը, դադա՞ր կարող էր ունենալ...
Բայց նա ֆերմա չհասավ: Կես ճանապարհին պատահեց Արշակը. ֆերմայից էր վերադառնում: Դեռ երեկոյան կինն ստիպել էր գնալ ձմեռանոց՝ տղայի մասին, մի լուր առնելու:
- Հաստատ փախել են Արևելք, - կարճ ու վշտահար հաղորդեց Արշակը:
- Ինչի՞ց գիտես:
- Ամեն ինչից: Նամակները կա՞ն: Աշխենի աղջիկ Շուշիկը մորն ասել է՝ գնում ենք արևելք, ձուկ որսող արջերի մոտ... Երևի տղիդ խոսքերն է կրկնել...
Ասաց և իր խոսքից զղջաց. «Արամի սրտին չկպչի՞...»: Եվ նրբանկատորեն ավելացրեց.
- Ասենք, իմն էլ մի բարի պտուղ չի, նրա գլխից էլ են քամիներն անպակաս...
- Բա հիմի ի՞նչ անենք, չգնա՞նք հանդերը ման գանք, ժողովրդին ոտքի չհանե՞նք...
- Հանդում լինեն՝ կգան, հո խամ չեն: Քո տղեն՝ որսորդ, Ավդալի տղեն՝ չոբան, ուստա շունը հետները: Որ մեր հանդերում լինեին՝ ուր որ է գոնե շունը կերևար... Չէ՜, գլուխները քամի մտած մոզիների պես կորան-գնացին...
Եվ Արշակը գլուխն օրորելով, խթանեց ձին:
Կենդանիները, քրտինքի ու փրփուրի մեջ կորած, լողում էին խոր ձյան մեջ, դեպի գյուղ տանելով իրենց մտախոհ ու լուռ հեծյալներին:
Պատանիների կորչելու լուրը արագորեն տարածվեց գյուղում: Դպրոցականները մտահոգ դեմքերով շրջապատել էին իրենց դասատուներին, դպրոցի դիրեկտորը հեռախոսով խոսում էր շրջանի միլպետի հետ:

Նորից կարդացին ֆերմայից ստացված նամակները, նորից հարցաքննեցին փոստատարին ու Արշակին, որոնք եղել էին «տեղում» ու խոսեցրել մարդկանց, և եկան այն եզրակացության, որ պատանիները իրոք գնացել են Հեռավոր Արևելք:
- Այդ հասակում պատահում է... Այդ հասակի երեխայի գլուխը լիքն է լինում ցնորքներով, մանավանդ Աշոտի նման տղայի, ես նրան գիտեմ, - ասաց դպրոցի դիրեկտորը՝ փոքրիկ մորուքով և կլոր մեջքով մի հին մանկավարժ: - Ցնորամի՜տ մանկություն... ես էլ իր ժամանակին փախել եմ տնից, - իր հուշերից ալեկոծված, քնքշությամբ խոստովանեց նա:
- Ուրեմն ժողովրդին հանդը չհանե՞մ, - գոռաց նախագահ Հարութը: - Օ՜օ՜ֆ, իբր թե ես քիչ հոգս ունեի, էդ երեխեքն էլ մի կրակ դառան իմ գլխին...
Ու միշտ հոգսի տակ, միշտ խուճապահար Հարութը հարձակվեց Արամի ու Արշակի վրա:
- Որ հիմիկուց փախչում են գյուղից, նրանցից ի՞նչ կոլխոզնիկ դուրս կգա, - գոռգոռում էր նա:
Պարույրի որդուն նախագահը պաշտպանեց:
- Ականջները կախ, գառան նման տղա է, - ասում էր նա: - Արամի էն թոկից փախածն է նրան խելքից հանել, կամ ահ տալով հետը տարել: Կանե՜ն, դրանք էդպես են, հերը ժողովներում ինձ ահ չի տալի՞ս, տեռոր չի՞ անում... Իրեն խելքովը քննադատող է դառել...
Լսում էր այս բոլորը Արամը, արյունը պղտորվում էր ու տնքում ինքն իրեն.
- Ի՜նչ անեմ, թիկունքը պինդ է, շրջանում պաշտպան ունի, թե չէ ես գիտեմ, թե դրա բմբուլը ոնց քամուն կտամ..,
Թեև շրջանի օրգանները հեռագրեր տվին բոլոր կողմերի վրա, բայց հարկավոր էր, որ մարդ գնար փախած պատանիների հետևից:
Ո՞վ կար Այգեձորում հարմար մարդ: Ամենից հարմարը դարձյալ պահեստապետ Պարույրն էր, մանավանդ որ իր որդին Էլ Էր խմբի հետ:
Պարույրին սկսեցին համոզել, որ մեկնի երեխաներին որոնելու:
- Ռուսերեն գիտես, աշխարք տեսած մարդ ես, - ասում Էր Գագիկի հայրը: - Թե մենակ հարմար չի, միասին գնանք, Արամն էլ կգա...
- Արա՜մը... Արամը որ մարդ լիներ, ավազակ չէր ծնի: Տղիս խելքահան են արել, - ասում էր Պարույրը: Նրա ականջները կարմրել էին բարկությունից, ճակատը՝ քրտնել, մոխրագույն աչքերը պղտորել, - այդքան էլ նմանությո՞ւն իր որդուն:
- Վեճերը թողնենք, հիմի պետք է երեխանց կողմը թռչել, առաջները կտրել, քանի անց չեն կացել, - խաղաղասիրաբար ասում էր Արշակը:
- Նրանց հերն էլ անիծած, ես տղա չունեմ, թող գնա, - կտրեց Պարույրը և նախագահ Հարութին տեսնելով, շտապեց նրա մոտ:
Նա չէր հավատում երեխաների Հեռավոր Արևելք փախչելու լեգենդին:
Դե քանի որ նա «որդի չունի», կթվոր Աշխենն էլ այրի կին է, երկու երեխայի տեր, գյուղից դուրս գալ չէր կարող, հովիվ Ավդալն էլ իր հոտը չէր կարող թողնել, մնում էր, Արշակն ու Արամը մեկնեին:
- Հիմար բան են ասում, ե՞րբ գնացին, կայարանից ո՞նց գնացք նստեցին, որ ոչ ոք չտեսավ: Իսկ տոմսի փողը նրանց որտեղի՞ց, - դատողաբար ասում էր Պարույրը: - Խելքների՜ն մտիկ, ասում են՝ գործդ թող գնա Հեռավոր Արևելք...
Հարութի մանր աչքերում հեգնանք երևաց:
- Նրանք ի՞նչ են հասկանում քո գործերից... Հա, էն գինիները էս գիշեր պատրաստիր, որ էգուցվանից սկսում եմ ուղարկել Երևան, խանութին...
«Պատրաստիր» բառը նախագահը հատկապես շեշտեց և նրա մանր աչքերը պսպղացին: Պահեստապետը հասկացավ և ուրախ աչքով արավ:
- Կպատրաստենք, բա հո էնպես չենք ուղարկի, որ մարդիկ խմեն-թունավորվեն:
- Ո՞նց թե թունավորվեն, ինչե՞ր ես դուրս տալիս: Ուրեմն մեր գինին թունավո՞ր է, - նախատինքով շշնջաց նախագահը:
- Բա տասնվեց աստիճանը թույն չի, ինչ է...
- Հա՜... Ա՜յ ավազակ... Իջեցրո՜ւ..

Եվ նախագահը, մի թաքուն ուրախություն սրտում, գնաց:
«Իջեցրո՛ւ» - նրա այդ մի հատիկ բառը հարյուր հազարի գին ուներ: «Իջեցնե՛մ, բա հո չեմ թողնի, որ քաղաքի սովետական ազնիվ բնակիչները տասնվեց աստիճանի գինի խմեն, խելքները կորցնեն ու սկսեն իրար վիրավորել... Չէ՛, Պարույրն այդպիսի անխիղճ բան չի անի: Հիսուն տակառին մի քսան տակառ սարից եկող զուլալ ջուր խառնիր, թող աստիճանն իջնի, մարդավարի գինի դառնա, թե չէ էս գինին խմե՞լ կլինի...»:
Եվ Պարույրը ամուր որոշեց՝ չմասնակցել կորած պատանիներին որոնելու գործին. «Որ իրենցը գտնեն՝ իմն էլ հետը կգտնվի...»: Այդ որոշումով էլ նա մտավ գինու նկուղը:
Եվ երբ մտավ, իրար կողքի շարքերով մեկնված տակառների տեսքից սիրտը փառավորվեց, այնքան էր հոգով կապված նրանց հետ: Նրա հոգեկան աշխարհը, հուզումները, խիղճը, վշտերը և ուրախությունները, ինչպես և առհասարակ նրա ողջ էությունը կապված էր իր վստահությանը հանձնված պահեստներին և նրանցում ամբարված հանրային մթերքին: Դրանից դուրս Պարույրը կյանք չուներ: Պահեստը նրան ուժ էր տալիս, խոսքին՝ հեղինակություն, կամքին՝ ամրություն: «Որ զգում եմ թիկունքումս պահեստներ կան, թվում է, թե կողքիցս մաուզեր է կախված՝ կրակելու պատրաստ...», - մտածում էր նա: Պարույրի խոսքն էլ էր անցնում գյուղում, շրջանում, բարեկամներն էլ էին շատ, հեռվից գլխարկները խոնարհաբար հանողներն էլ («Մարդ ուղղակի փառավորվում է, երբ երեկ քեզ արհամարհողը, էսօր ժպիտը դեմքին մինչև գոտին խոնարհվում է առաջդ ու քաղցր հարցնում՝ ո՞նց է առողջությունդ, Պարույր Ամբակումիչ...»):
Ի՞նչ հարկ կար այսքան խոսելու պահեստապետ Պարույրի մասին, - կհարցնի ընթերցողը: Պարզեմ: Մեզ հետաքրքրողը Պարույրը չէ, այլ նրա որդի Սարգիսը: Ժողովուրդն ասում Է՝ «Պտուղը ծառից հեռու չի ընկնի»: Սարգիսը ոչ այնքան ժառանգաբար ստացել էր հոր այդ՝ սոցիալիստական համակեցությանն անհամատեղելի՝ գծերը, որքան մանկուց հոր արարքները տեսնելով («Աչքը տեսածից կսովորի») և նրա ձեռքի տակ դաստիարակվելով՝ այնպիսի մի արարած էր դարձել, որի համար աշխարհը պտտվում Է իր սեփական շահի շուրջը:
«Աշխարքը դմակ Է, դու դանակ, կտրի՛ր, ինչքան որ ուժդ կպատի», - միշտ այդ էր լսել նա հորից և այդ էլ ամրացել էր նրա ուղեղի ծալքերում ու արյան մեջ:
Ահա ամբողջովին, մինչև ուղն ու ծուծը էգոիզմով ներծծված այս տղան էր, որ պետք է ընկերների հետ թև-թևի, մեջք-մեջքի տված կռվեր դաժան բնության դեմ:
Այնպիսի ընկերների, որոնց ծնողներն ազնիվ հողագործներ էին և որոնք դաստիարակություն էին ստացել աշխատանքի բովի մեջ, համառության և աշխատասիրության ոգով:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ինչպես ոչ մի շնչավոր չի համաձայնում կեր դառնալ ուրիշին

Բացվեց մեր խմբի գերության հինգերորդ օրը: Երբ Աշոտը գլուխը վեր բարձրացրեց՝ տեսավ, որ Հասոն դանակով կտրտում է իր «տոլաղներից»[9] մեկը:
«Ի՞նչ գործի ես», - անձայն, ձեռքի շարժումով հարցրեց նա: Հասոն աջ ձեռքը պտտեց գլխի վերև, քար նետելու նշան արավ և ժպտաց:
- Պարսատի՞կ...
Հասոն հաստատեց գլխի շարժումով:
Գագիկը արթնացավ Աշոտի շշուկից, աչքերը տրորելով կուզեկուզ դուրս գնաց և շեմքից ձայն տվեց.
- Աչքներդ լույս, նորից մի մետր ձյուն է եկել...
Տղաները սարսուռով ընդունեցին այդ լուրը, իսկ Շուշիկն սկսեց լուռ հեծկլտալ: Նա վաղուց էր արթուն. այդ ցրտին աչք փակե՞լ կլիներ...
- Այդ լավ է, ես հենց այդ ձյունին էի սպասում, - կեղծ անհոգ ձևացավ Աշոտը: - Ձյան երեսը սառել էր, կաքավները փախչում էին: Հիմա կխրվեն-կմնան:

---

[9] Տոլաղ – կոշտ և ամուր կտոր, որով հովիվները փաթաթում են իրենց անդրավարտիքի ծայրերը:

- Որտեղի՞ց ենք բռնելու, պոչի՞ց, թե գլխից, - լրջորեն հարցրեց Գագիկը:
- Եվ ամեն մեկը քանի՞ կիլո կլինեն, - առաջին անգամ ուրիշների խոսակցությանը խառնվեց Հասոն և շիկնեց իր համարձակության վրա:
- Վա՞յ, Հասո՞, մուկն էլ աղա՞նձ կուտի, դու է՞լ ես ինձ ձեռ առնում, - զարմացավ Գագիկը: - Մի դեսը տուր, էդ որ տոլաղդ կտրտել ես, իսկ թե՞լ որտեղից ես ճարելու պարսատիկի համար:
- Իմ գուլպան կքանդենք, - արցունքը սրբելով առաջարկեց Շուշիկը:
- Ես չեմ թողնի, որ քո գուլպան քանդեն, խուշկե՛ Շուշիկ, - կարմրելով ասաց քուրդ պատանին: - Ա՞յ, տե՞ս, ինչքան թել կա իմ տրեխների վրա:
Հասոյի հագին «աջամի» կոչված տրեխներ էին, նրանց երեսը ամբողջովին պատած է լինում լավ ոլորած հաստ և գունավոր թելերի ցանցով: Հասոն այդ ցանցը նոսրացրել էր և թել խնայել: Թելերի ծայրերը նա կապեց տոլաղի կտորներին և ստացվեցին իսկական պարսատիկներ:
- Սրանով խփել կարողանո՞ւմ ես, - հարցրեց Հասոն Աշոտին և իր հարցից շփոթվելով, իսկույն ուղղեց: - Դե, իհարկե, կկարողանաս...
- Իսկ դո՞ւ...
- Ե՞ս... քիչ-միչ կարողանում եմ, - համեստորեն արտասանեց Հասոն և իսկույն զղջաց, «հիմի կասեն գլուխը գովում է»:
- Լա՛վ, եկեք երեսներս շփենք ձյունով: Պա՛հ, ինչ շատ ձյուն է եկել... Այս ամբողջ օրը մենք պետք է որսով զբաղվենք... Նայեցեք, մոշահա՛վը, մոշահա՛վը...
Եվ Աշոտը, իր բաժին պարսատիկի մեջ մի կլոր քար դնելով՝ վազեց դեպի թփերը, ուր փորի տակը շագանակագույն, թևերը և ամբողջ մարմինը թխավուն, իսկ կտուցը կարմիր մի փոքրիկ թռչուն ճչում էր անհանգստացած և պոչը տմտմբացնելով ճյուղից ճյուղ թռչում:
Ձյունը խոր էր, քայլելը՝ դժվար: Մի քանի անգամ թռչունի վրա քարեր նետելուց հետո, Աշոտը վերադարձավ քրտնած, հևալով:
- Դա չի պրծնի, դա մերն է, - իր անհաջողությունը քողարկեց նա: - Դա հեչ, գնանք կաքավի: Շուշի՛կ, կրակը վառ պահիր, հիմի մենք կգանք:
Տղաները, իրենց զենքերը վերցնելով, լուռ դուրս եկան ու, մնացին այրի շեմքին կանգնած, ինչպե՛ս մտնել այդ ծով ձյունի մեջ, ինչի՞ համար, ի՞նչ հույսով...
Ձյունը շարունակում էր բարակ մաղել, օրը թխպոտ էր, մառախուղը իր թափանցիկ փեշերով ծածկել էր Հովազաձորի ապառաժե կատարները: Ոչ մի կաքավ չէր երևում շրջակայքում և ոչ էլ ամեն օրվա նման նրանց ձայնն էր լսվում:
- Բան չկա, մեզ ո՞ւր ես տանում, - մի տասնյակ քայլ գնալուց հետո տրտնջաց Սարգիսը:
Դե ինչ դուրեկան բան էր խոր ու սառը ձյունի մեջ քայլելը:
Աշոտն իր վրդովմունքը հազիվ զսպելով բացատրեց ոչ այնքան նրան, որքան Գագիկի ու Հասոյի համար:
- Այսպիսի եղանակին կաքավները տապ են անում ժայռախոռոչներում: Պետք է թռցնել... Որ իջնեն փափուկ ձյան վրա, այն ժամանակ մերն են...
- Ձե՞րն են՝ գնա բեր, - փնթփնթաց Սարգիսը և ընկերների գցած շավիղից շեղվելով՝ մտավ թփուտները, ուր կարելի էր մասուր և մամուխ ճարել:
- Չե՞ս գալիս, - խստությամբ հարցրեց Աշոտը աչքերը փայլեցնելով:
- Ի՞նչ տոնով ես հարցնում տո՛, ես հո քո ճո՞րտը չեմ...
- Լա՛վ, չփոշմանե՛ս... Եկեք հետևիցս, տղե՛րք...
Եվ զայրույթից կարմրատակած, Աշոտը փնչոցով սկսեց ճեղքել ձյունը դեպի դիմացի ժայռը, որի լանջին ամեն օր նա կաքավի երգ էր լսում: Քարակաքավները «նստակյաց» թռչուններ են, եթե այդտեղ էին օրեր առաջ, ուրեմն այդտեղ էլ մնացած կլինեն:
Գագիկը լուռ հետևում էր ընկերներին, նրա կատակները չքացել էին: «Անհույս գործի ենք, բայց դե ոնց ետ դառնաս...», - մտածում էր նա:
Այդ պահին բազեից հալածված մի խումբ ճնճղուկներ անցան նրանց գլխի վրայով և կորան թփերի մեջ: Ձարմանքը պատեց բնության գործերին գիտակ պատանուն, Հովազաձորում ճնճղուկն ի՞նչ գործ ունի...

Նա գիտեր, որ սարերում, հանդերում գրեթե ճնճղուկ չկա, - ճնճղուկներն ապրում են մարդու հարևանությամբ, նրա շինած շենքերում, նրա դրած դեզերում, նրա հովանու տակ: Մարդը նրանց պահպանում է բազեներից, աղվեսներից, նրանք ձրի օգտվում են մարդու ստեղծած հազար ու մի բարիքներից: Մա՛րդն է նրանց ապավենը, Հովազաձորում ճնճղուկն ի՞նչ գործ ունի:
- Տղե՛րք, այս ձորում մարդ է ապրել...
Բայց «տղերքի» ուշադրությունն այն թփերի կողմն էր, ուր իջան ճնճղուկները, - Աշոտին լսող չկար:
Նրանք ուսներից ցած դրին իրենց ծանր զենքերը, պարսատիկները պատրաստ մոտեցան թփուտին, և երբ թռչնիկները թռան խուճապահար, երեքով միասին «համազարկ տվին» խմբի մեջ:
- Ազնիվ խոսք, մեկին վիրավորեցի, ցած գնաց, - ճչաց Գագիկը ալեկոծված:
- Մի՛ գնա, Գագի՛կ, էն իմ քարն էր... Առաջ, երբ խամ էի, իմ աչքին էլ էր էդպես երևում... Դա շփոթմունքից է... Գնա՛նք... - ասաց Աշոտը:
Չգնային ինչ պիտի անեին, թևավորի հետևից ոտքով չես հասնի: Չէ՛, էն փոքրիկ ճնճղուկ որսալն անգամ դժվար բան է եղել, նա էլ ամեն հնարք գործադրում է, որ ապրի, մեկ թփերի տակն է անցնում, մեկ՝ թևերին զոռ տալիս:
Նրանք շարունակեցին իրենց ճամփան դեպի ժայռերը, բայց Գագիկի ուշքը դեռ ճնճղուկների կողմն էր. «Մի՞թե ոչ մեկը չընկավ... Մի՞թե էն ընկնողը ճնճղուկ չէր», - մտածում էր նա:
Մեծ տանջանքներով կտրեցին նրանք այն երկու-երեք հարյուր քայլ տարածությունը, որ բաժանում էր տղաների բնակարանը Կաքավի ժայռից, այդպես կոչեցին նրանք ամբողջովին ձյունով ծածկված և իր ճեղքերում աղքատիկ թփեր ունեցող այն ժայռին, որ ընկած էր Օձի անձավից դեպի արևմուտք և Հովազաձորը արևմտյան կողմից փակող բնական պարսպի անճոռնի բուրգերից մեկն էր կազմում:
Ուղղահայաց չէր այդ ժայռը, ուստի ձյունը առատությամբ նստել էր նրա թեք լանջին և նրա համատարած ճերմակի մեջ այստեղ-այնտեղ սևին էին տալիս խոռոչները, ոմանց պռնկին մի քանի փունջ դեղնած խոտ, ոմանց մեջ չորացած ցողուններ կամ մի լղարիկ թուփ, չէ՞ որ քամին հող ու փոշի է լցնում այդ ճեղքերը, ուստի և աղքատ բուսականություն է այդտեղ աճում, որն արմատների իր ցանցով դարերի ընթացքում քայքայում է ապառաժը ու նրա հաշվին ավելացնում իր հողի ու սննդի պաշարը:
Դրանք էլ հենց կաքավների տաքուկ բներն են խոր ձյունի ժամանակ. այդտեղ նույնիսկ քիչ-միչ կեր կա՝ խոտերի սերմերի թփերի կոկոններ, հատապտուղ:
Դեռ ժայռին չհասած, Աշոտը հրահանգեց ընկերներին.
- Քարեր շպրտեցեք ու աղմկեցեք...
Տղաները շոշափելով քարեր էին հանում ձյան տակից ու աղմկելով նետում ժայռն ի վեր:
Աշոտի հաշիվները ճիշտ դուրս եկան, տղաների ձայներից և շան հաչոցից խրտնած կաքավները դուրս թափվեցին ճեղքերից ու. սկսեցին վազել ժայռի ճակատն ի վեր: Նրանց ոտքերի տակը հաստատուն չէր, թաղվում էին նոր նստած փափուկ ձյան մեջ, ոմանք էլ նույնիսկ գլուխները խրում էին նրա խորքը, կարծելով, թե թաքնվեցին թշնամուց. երբեմն այդպես է վարվում կաքավը, երբ փախչելը դժվար է լինում, չէ՞ որ փափուկ ձյան միջից թռչելը հեշտ չի. ոտքը հենարան պիտի ունենա, որ ուժ տա-թռչի:
Ափսոս, հնարավոր չէր ժայռը բարձրանալ, թե չէ կարելի էր բռնել նրանց, որոնք գլուխները հիմարաբար տնկել էին ձյան մեջ:
- Պարսատիկներո՜վ, պարսատիկներո՜վ... Հասո, գրպանումդ քարեր չկա՞ն...
Ֆռ՛ռ, ֆռ՛ռ, ֆռ՛ռ - նետում էին նրանք քարերը, բայց այդ որ շնչավոր արարածը կհամաձայնի կեր դառնալ ուրիշին, այն մոշահավի և ճնճղուկների նման սրանք ես իրենց կյանքը փրկելու հնարը գտան, ձյան մեջ խրվելով հասնում էին որևէ քարի սեպ կատարի, թևերի թափահարումից ձյունը սեպի ծայրից ցած էր թափվում, քարը բացվում էր, ուրեմն և բացվում էր նրանց «տրամպլինը» թռչելուն օժանդակող պատվանդանը:
Թռ՛ռ, թռ՛ռ, թռ՛ռ... ձյունը ժայռի ճակատից ցած թափելով կաքավները իրար հետևից թռան-գնացին դեպի արևելք և իջան Օձի անձավից քիչ վերև:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչ է ստացվում, երբ անփորձ մարդը փորձում է որսորդությամբ զբաղվել

Այդպես, որսը ձեռքից թռավ: Մինչ Հասոն ու Գագիկը ափսոսանքից թևները թուլացած կանգնել էին, Աշոտը, չգիտես ինչու, նորից ոգևորվել էր:
- Տեսա՞ք, - ալեկոծվեց նա: - Հիմի որ մերն են, գնա՛նք...
Գագիկը տեղից չէր շարժվում:
- Մինչև չհամոզվեմ, որ մերն են, ես դրանց հետևից գնացողը չեմ, - հայտարարեց նա կտրուկ: - Ասա՛, ինչո՞վ են մերը:
- Քննության ժամանա՞կ է, տո՛, - գոռաց որսի տեսքից տաքացած Աշոտը, բայց ճարահատյալ պիտի բացատրեր: - Դմբո՛, չե՞ս տեսնում, որ իջան ժայռի տափակ կտուրին...
- Է, հետո՞, որ տափակ տեղը իջան, ուրեմն մե՞րն են... Բան ասա գլուխս մտնի:
Եվ Գագիկը ցուցամատով սկսեց կտկտացնել իր ճակատին:
Հասոն ևս չէր հասկանում Աշոտի միտքը (նա կաքավ որսած չկար և չգիտեր այդ թռչունը որսալու ձևերը), բայց անհարմար էր, ինչ վիճելու, ինչ հարցուփորձի ժամանակ էր: Պե՞տ կա, կարգադրո՞ւմ է՝ գնա առանց առարկելու, ուրեմն մի բան գիտի, որ կարգադրում է: Գոնե Հասոն այդպես էր սովորել ֆերմայում, ավագ հովիվը բա՞ն է պատվիրում, ձեռքդ դիր աջ ունքիդ ու ասա՝ «Լա՛վ, աչքիս վրա...»:
- Դմբո՛, չասացի՞, որ խոր ձյունի ժամանակ կաքավները կամ ճեղքերն են մտնում, կամ եթե ճեղք չկա՝ անցնում են ձյան տակ: Էնտեղ ճեղք չկա, տափակ կտուր է... Չտեսա՞ր, որ իջնելուն պես անհետացան... Գնա՛նք, շո՛ւտ...
- Տե՛ղ հասավ, - մատը ճակատին կտկտացնելով համաձայնեց Գագիկը և հետևեց ընկերներին:
Այս անգամ քայլելը դժվար չէր, որովհետև նրանք վերադարձնում էին իրենց գցած ճամփով: Մոտեցան իրենց բնակարանին և ծռվեցին դեպի ձախ. պիտի վեր բարձրանային: Այստեղ էր, որ սկսվեցին անասելի տանջանքները, ձյունը մինչև գոտկատեղն էր հասնում, այդպիսի ձյան միջով կարելի է դեպի ցած գնալ, իսկ դեպի վեր գնալու համար առնվազն պետք է կուշտ լինել, «ներքին այրման» պաշար ունենալ:
- Հասո՛ն, Բոյնախին տար Շուշիկի մոտ ու շուտ ետ արի, - հևալով և ճակատի քրտինքը սրբելով պատվիրեց Աշոտը:
- Տվեք՝ մուրճեր են, ինչ են, դրանք էլ տանեմ:
- Հա՛, տա՛ր, ծանր են... հիմա սրանք պետք չեն...
Ներքև, դեպի աջ, թփերի մեջ երևաց Սարգսի գլուխը: Նա շարժում էր որևէ թուփ, ձյունը վրայից թափում ու տնտղում՝ հատապտուղ էր փնտրում: Ի՜նչ հաջողություն ուներ նա այնտեղ, հայտնի չէր, բայց քանի որ դուրս չէր գալիս թփուտից և չէր գնում կրակի մոտ, ուրեմն մի բան կար:
Հասոն վերադարձավ իր մահակը ձեռքին ու թափով առաջ ընկավ: Այդպիսի ձյուն նա շատ էր տեսել, շատ անգամ էր հոր հետ միասին ձյան մեջ հոտի համար ճամփա բացել դեպի հանդը: Իսկ հանդում թիակով քերում էին ձյունը և ոչխարները արածում էին նրանց բացած խոտը:
Եվ հիմա Հասոն հենվում էր իր ամուր մահակին, ուժ տալիս ու ցատկում դեպի առաջ, ինչպես փայտի օգնությամբ կցատկեն որևէ խոչընդոտի վրայից:
Այդպես ցատկոտելով նա հասավ կաքավների իջած «կտուրի» եզրին և լուռ ցած նետեց իր մահակը:
Նույն ձևով, բայց պակաս վարպետությամբ փայտից օգտվելով, տեղ հասավ նաև Աշոտը, իսկ նրա հետևից արդեն տրորված ճամփով վեր էր բարձրանում Գագիկը: Նրա լեզուն թեև «քոր էր գալիս» (սուր բան ուներ ասելու Աշոտի հասցեին), բայց պապանձվել էր թե՛ նապաստակի դեպքը հիշելով և թե՛ այն պատճառով, որ Աշոտը ձեռքն իր բերանին դնելով՝ շարունակ լուռ մնալու նշան էր տալիս:
Երեքն էլ «կտուրի» եզրին շունչ առան: Աշոտը զգուշությամբ առաջ գնաց մի քանի քայլ և երբ ետ նայեց, ընկերները արտակարգ ալեկոծության նշաններ նկատեցին նրա դեմքին: Աշոտը ձեռքը դնում էր շրթունքներին, առաջ գալու նշան անում, ապա մատը մեկնում դեպի «կտուրի» կենտրոնը:
Գագիկը այնտեղ կաքավների փոխարեն նկատեց իրարից մոտիկ փոսիկներ, կարծես վերևից բռնցքաչափ քարերով խփել էին ձյունին: Քարերը ամբարված ձյան խորքն էին գնացել, իրենց հետևից թողնելով ծուռումուռ փոսիկներ:

Պարզ էր, որ այդ փոսերից յուրաքանչյուրի խորքում մի կաքավ կար նստած...
Աշոտը մի քանի քայլ արավ այնպես անշշուկ, որ ձյունով ծածկված թռչունները չլսեցին վտանգի մոտենալը: Հասավ առաջին փոսին, ձեռքը զգուշությամբ խոթեց նրա մեջ (այդպես էր սովորեցրել նրան իր հայրը) և ձյան խորքից դուրս բերեց ձեռքի մեջ խլրտացող թռչունը:
Այդ թպրտո՜ցը... Նա իսկույն տեղահան է անում ու թպրտեցնում որսորդ մարդու սիրտը: Այդ թպրտոցը հանկարծակի հրճվանքով է լցնում մարդուս հոգին և ուզում ես ուրախությունից ճչալ, ճչալ...
Ուրեմն զարմանալի չէ, որ Գագիկը ալեկոծված վրա ընկավ հաջորդ փոսին, պառկեց նրա վրա և երբ ձեռքը փետուրներ ընկան, ճչաց ցնծագին.
- Աշո՜տ, բռնե՛լ եմ... հասե՛ք...
Նրա թևի տակից թռչունը դուրս թռավ, իր թևերով ձյուն շաղ տալով տղայի դեմքին:
- Սս՜ս՜ս, կամա՜ց, - ֆշշացրեց Աշոտը, բայց Գագիկը որսի տեսքից գլուխը կորցրել էր: Նա մեկ այս փոսի վրա էր կռթնում ու խառնում նրա խորքը, մեկ այն փոսի վրա էր պառկում ու փռում իր պիջակի փեշերը, բայց խրտնած թռչունները մե՛կ ոտքերի արանքից, մե՛կ կռնատակից, մեկ դնչի տակից մեծ աղմուկով-ֆռռոցով դուրս էին պրծնում ու ձյունը տղայի աչքերը լցնելով՝ թռչում սարսափահար...
Հասոն ևս դես-դեն ընկավ, մի քանի փոսի վրա էլ ինքը պառկեց, բայց կաքավները կողքից դուրս էին թռչում:
Աշոտը կանգնած էր կաքավը ձեռքին և դողում էր զայրույթից: Նրան ժամանակ չտվին ձեռքի թռչունը տեղավորի, ձեռքերն ազատի ու շարունակի իր որսը:
- Հիմա՛ր, ի՞նչ ես անում, - գոռաց նա, երբ արդեն ուշ էր, բոլոր կաքավներն էլ ճողոպրել էին և ազատվել ուրիշին կեր դառնալու վտանգից:
- Էս ինչի՞ չկարողացանք բռնել, - զարմացած հարցրեց Գագիկը: Իսկ Հասոն գլուխը կախել և մեղավորի նման ժպտում էր:
- Հիմա՛ր, չտեսա՞ր էս ոնց բռնեցի... Ի՞նչ ես չտեսի նման վրա ընկնում... Ձեռքդ էնպես պիտի մեկնես անցքով, որ... Թո՛ւհ, ում եմ ասում... Մենակ սրան-նրան ձեռ առնել գիտես... Թո՛ւհ, ոնց թռա՛ն...
Այնպիսի ափսոսանքով էր համակվել որսորդ պատանին, որ քիչ էր մնում նստի ձյան վրա ու լաց լինի: Այդպիսի հաջող որս էլ ե՞րբ կպատահի իրենց: Բավական է ձյան երեսի մի բարակ շերտը սառավ՝ կաքավները փրկված են, այնպես կտկտալով կփախչեն, որ հետևներից «ձիավորը չի հասնի», ինչպես սիրում էր արտահայտվել հայրը:
Խումբը լուռ և գլխիկոր վերադարձավ անձավ:
- Վա՞յ, կաքա՞վ եք բռնել, - ուրախությունից թռվռաց Շուշիկը: - Բա ինչի՞ է քիթներդ կախ...
Աշոտը չպատասխանեց:
Լուռ փետրեցին թռչունը, գլուխն ու փորոտիքը տվին շանը:
Այնուամենայնիվ Գագիկը չհամբերեց և կաքավը ձեռքի մեջ ծանր ու թեթև անելով, հարցրեց.
- Աշո՜տ, ինչքա՞ն կկշռի...
Աշոտը լուռ էր ու մռայլ, նրա մտքում դեռ իրար հետևից՝ ֆռ՜ռ, ֆռ՜ռ, թռչում էին սարսափահար կաքավները:
- Կես կիլո կլինի... Հա՛, մեր կողմի կաքավները մի վառեկի չափ լինում են... Տասը-տասներկու կաքավ, ամեն մեկը կես կիլո... Ուրեմն, Հասո՛, մեր անփորձության պատճառով ես ու դու հինգ-վեց կիլո միս ենք փախցրել մեր ձեռքից: Ափսո՜ս, ափսո՜ս, - գլուխը տարուբերելով դառնացած ասում էր Գագիկը: Միայն փոքրիկ բերանի անկյունում հազիվ նկատելի ժպիտը և սև աչքերի չարաճճի փայլը մատնում էին նրա խոսքի մեջ թաքնված հեգնանքը:
Կաքավը իրոք խոշոր էր և գեր: Արագ խորովեցին, հինգ հավասար մասի բաժանեցին և կերան ախորժակով:
Սարգիսը մեկ ցանկացավ հրաժարվել իր բաժնից, բայց թեժ կրակի վրա խորոված կաքավի հոտին դիմանա՞լ կլինի, որ նա դիմանար: Ինքնասիրությունը մի կողմ դրեց և վերցրեց իրեն լուռ առաջարկված բաժինը:
Բոյնախը հափշտակում էր իրեն նետված ոսկորները ու նրա ագահ հայացքը պարզ ասում էր. «էլ չկա՛...»:

Դե հովիվ Հասոն ինչպե՞ս դիմանար իր «անլեզու եղբոր» այդ աղերսական հայացքներին: Եվ ոսկորի հետ իր բաժին մսի մի մասը ևս տվեց Բոյնախին:
Իսկ Սարգիսը իր բաժին ոսկորն անգամ լավ փշրելուց-ծծելուց հետո հիշեց իր այդ օրվա արարքը, հիշեց, թե ինչպես ինքը խմբից անջատ իր համար մասուր ու մամուխ է ճարել, հիշեց, որ իր «որսից» նա բաժին չի հանել ընկերներից ոչ մեկին ու տարակուսանքով մտածեց.
«Այդ ինչո՞ւ ինձ էլ բաժին տվին...»:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչպես բախտը հաճախ ժպտում է անարժան մարդկանց

Այդ դեպքը պատահեց մեր խմբի գերության վեցերորդ օրը: Այդ այն օրն էր, երբ բնությունը նորից հույսեր էր խոստանում նրանց, չգիտես իրակա՞ն, թե սին հույսեր: Այնպես անամպ էր երկինքը, այնպես արագ էր հալվում ձյունը ձորի հարավ նայող լանջերին, որ նրա թաց, ծանրացած զանգվածները խռռալով ցած էին թափվում ժայռերից, ծառերի վրայից, զառիվայրերից:
Խոր ձյունը դեռ ոչինչ չի նշանակում, ժամանակից շուտ եկած ձյունը ինչո՞ւ պիտի երկար մնա: Նոյեմբերի արևը Փոքր Կովկասի հարավային լանջերին նույն ուժն ունի, ինչ օգոստոսի արևը Ուրալում:
Սարգիսը, չգիտես ինչու, բոլորից շուտ դուրս էր եկել այրից և նախնադարյան մարդու «մուրճը» ձեռքին սպասում էր. հավանաբար դեռ ազդված էր «կաքավի դեպքից» և մտքում որոշել էր կոլեկտիվի հետ աշխատանքի դուրս գալ: «Այդ ինչպե՞ս էր, որ այնքան չարչարանքով բռնած կաքավից ինձ էլ բաժին հանեցին...», այս հարցը դեռ հնչում էր նրա ուղեղի մի անկյունում,..
Երբ մեր պատանիները դուրս եկան քարայրից և արևի տակ հուրհրատին տվող ձյունը նրանց ստիպեց կկոցել իրենց աչքերը, Աշոտն ընկերներին դիմեց հետևյալ խրատական ու ճոռոմ խոսքերով.
- Ահա չորս օր է, որ մենք կարգին ուտելիք չենք գտել: Բայց դա չի նշանակում, թե ուտելիք չկա Հովազաձորում: Դա միայն նշանակում է, որ մենք վատ ենք ճանաչում բնությունը, ինչպես իմ որսորդ հայրն է ասում՝ բնության գիրքը կարդալ չգիտենք: Ամեն չնչին բանի ուշադրություն դարձրեք, ամեն հետք տնտղեցեք, գուցե մի բան գտնենք...
- Ձեկուցումդ վերջացրի՞ր, - հեգնեց Գագիկը:
- Ի՞նչ զեկուցում, - վրդովվեց Աշոտը:
- Ներողությո՛ւն, զեկուցում չէր, այլ՝ ելույթ... Հիմա ի՛նձ լսիր: Իմ կարծիքով մենք պետք է այս ձորից դուրս գալու ուրիշ ելք փնտրենք, իսկ դու ուտելիքի մասին ես խոսում:
- Իզուր նեղություն չքաշես: Հայրս ասել է, որ միակ ելքը այն կածանն է, որով մենք եկանք: Տեսե՞ք, մեր աջ ու ձախ կողմերում և թիկունքում ժայռի պարիսպներ են: Մնում է մեր դիմացը, կուզե՞ք, գնանք նայենք:
- Իսկ մեր եկած կածանը երբե՞ք չի բացվի, - հարցրեց Շուշիկը:
- Մինչև գարուն դժվար թե բացվի... Տե՛ս, հիմա ժամը տասնմեկը կլինի, բայց արևը դեռ այն կածանին չի հասել. այդ լանջը նայում է արևմուտքին:
Նրանք լուռ դիտում էին այն լանջը, որով եկել էին Հովազաձոր. իրոք, ձյան հալվելու ոչ մի նշան: Այդտեղ փոսերը, քարերը, դարավանդներն ու շավիղները հավասարվել էին առատ ձյան վերմակի տակ:
- Իսկ այս ձորն ո՞ւր է գնում... Ներքև ինչ կա... Գնանք նայենք, գուցե իջնելու տեղ լինի, - լրջացած իրենն էր պնդում Գագիկը:
- Լա՛վ, գնանք աչքովդ տես...
Խումբը ցած գնաց և կանգ առավ Հովազաձորը ներքևից եզերող ժայռի գլխին: Պատանիները ցած նայեցին և ահով ընկրկեցին. ներքևում ահռելի անդունդ էր, որի հատակից սկսվում էր Արարատյան դաշտի մի նեղ կտորը: Երևում էր, որ անձրևի ու ձնհալի ջրերը Հովազաձորից այդ ժայռով են թափվում, հազարամյակների ընթացքում նրանք հղկել էին ուղղահայաց իջնող ժայռի ճակատը:
- Հը՛, կարո՞ղ ես այստեղից իջնելու հնար գտնել, - հարցրեց Աշոտը: - Առաջ գնա, ցած նայիր, ի՛նչ ես...

Նա չշարունակեց, թեև շատ էր ցանկանում վրեժ հանել Գագիկից՝ իր խոսելու մասին նրա արած կծու ակնարկների համար:
- Ե՞ս... Սա ի՞նչ է որ... Դու էլ վախեցող մարդ գտար.. Մի պարան տուր, էս ոոպեիս կախվեմ:
Եվ Գագիկը ահով ետ-ետ գնաց, բայց այնպես, որ իբր քար է փնտրում անդունդը նետելու: Քարը գնաց դղրդաց ներքևում ու լռեց:
Տղաները հայացքով լուռ զննում էին շրջապատի ժայռերը ու ելք էին որոնում:
Արևելքից դեպի ցած էր ձգվում ժայռերի այն պարիսպը, որի ճակատով անցնում էր այժմ փակված կածանը: Նույնպիսի մի ժայռաշարք արևմտյան կողմից իջնում դեմ էր առնում անդունդին: Այդ ժայռ-պարիսպները աջից ու ձախից իրենց ծայրերը բերել-մոտեցրել էին իրար ու գրեթե փակել Հովազաձորի դեմքը, ինչպես երկու կողմերից իրար մոտեցած վարագույրի փեշերը: Նրանց միջև մի նեղ տարածություն էր մնացել, երկու բարձր պատերի միջև սեղմված մի նեղլիկ միջանցք: Այդ միջանքով ներքևում երևում էր Արաքսի հովտի մի նեղ շերտը:
Եթե որևէ հրաշքով աջ ու ձախ ժայռաքարերի ծայրերը մոտենային իրար մի քիչ ևս, այնպես կփակվեր Հովազաձորի առաջը, որ միայն Մասիսների գագաթները կերևային, մեկ էլ՝ երկինքը:
Ավելի պարզ պատկերացում տամ ընթերցողին: Լվացվելիս միացնում ես երկու բուռդ, որ ջուր լցնես մեջը: Հենց այդպես միացրած ափերդ ցած կախիր և վերևից նայիր: Վերևի կողմից հենց այդպիսի տեսք ունի Հովազաձորը: Իսկ եթե ջուրը երեսիդ խփելուց հետո ձեռքերդ այդպես կուց արած պահես աչքերիդ դեմ՝ դարձյալ նույն Հովազաձորի տեսքը կլինի, բայց այս անգամ արդեն դիմացից, Արաքսի հովտի կողմից:
Ոչ մի կողմից այդ ձորը երևալ չէր կարող: Հովազաձորը երևում է միայն դիմացից, երկու կողմից իրար մոտեցած ժայռերի արանքով: Այդ արանքով էլ ձորի կենտրոնն է միայն երևում, նրա մանր ձորակներն ու խորշերը այդպես էլ ծածկված են դրսի աշխարհից:
Ահա ինչպիսի թաքուն ու փակ վայր էին ընկել մեր պատանիները:
- Ի՞նչ նյութից կարելի է պարան պատրաստել, - ինքն իրեն շշնջում էր Աշոտը: Ապա սթափվեց ու կանչեց.
- Պարանի մասին՝ հետո: Հիմա գնանք սնունդ ճարելու...
- Կաքավներն էլ թաղվելու միտք չունե՞ն, - հազիվ նկատելի հեգնանքով հարցրեց Գագիկը:
Աշոտը խեթ-խեթ նայեց նրան, երևի դեռ սիրտը մղկտում էր ձեռից թռած որսի համար:
Պատանիները գնացին դեպի աջ ժայռաշարքի ստորոտը, ուր ցաքուցրիվ, մեծ ու փոքր ծառեր կային: Նրանցից մեկի բունն ի վեր բարձրացել էր սնձի մի ճյուղ՝ կատարին կարմիր հատապտուղներ:
Հասոն հևալով ու դժվարությամբ ծառը բարձրացավ և սկսեց քաղել ու ձյան վրա թափել թոռոմած, իսկ շատերն էլ արդեն չորացած պտուղները, առանց սրանցից մի հատիկ իր բերանը դնելու:
Սինձը քիչ քաղցրավուն, բայց անհամ պտուղ է, մեջը լիքը խոշոր կորիզներով և չնչին «մսով»: Բայց այնպես, ինչպես մեր պատանիներն էին քաղցած, կբազմապատկվեր այդ հատապտղի համն էլ, արժեքն էլ:
- Ամեն մեկն իր համար ուտի՞, թե՞ հավաքենք, հետո բաժանենք, - հարցրեց Գագիկը և նրա տոնից հասկացվեց, որ նա ձեռքն ընկածը տեղն ու տեղը խժռելու կողմնակից է:
- Իմ կարծիքով մենք օրինակ կվերցնենք Հասոյից, - ասաց Շուշիկը:
Դե Հասոյի համբերությունը Գագիկին որտեղի՞ց: Եվ նա հատապտուղը հավաքելիս երբեմն մոռանում և գլխարկի մեջ գցելու փոխարեն բերանն էր գցում:
- Վա՛հ, էս սունկն ի՞նչ գործ ունի էստեղ, - վերևից գոչեց Հասոն՝ սնձենու փշին խրված և չորացած մի սունկ ցած նետելով: Բոյնախը հոտոտեց և՛ սինձը, և՛ չորացած սունկը, և իր ճաշակին ոչ մեկը հարմար չգտնելով, շարունակեց պպզած նայել դեպի վեր, տիրոջը: Նա լեզուն հանած անհամբեր ծմրում էր, որ նշանակում էր. «Վերջապես մի կտոր ուտելիք էլ ինձ համար ես ճարելո՞ւ, թե ոչ...»:
Ի՞նչ աներ Հասոն, սիրտը մղկտում էր շան համար, բայց ուտելիք որտեղի՞ց: Նա իջավ ծառից և սկսեց ընկերների հետ հավաքել թափված պտուղները:
Սարգիսը դժվարությամբ խոնարհում էր իր երկար հասակը և պտուղը վերցնելով, գողունի բերանը գցում այնպիսի ճարպիկ ու արագ շարժումով, որ նկատողը չէր ասի, թե սա թամբալ Սարգիսն է:

Ուտելիքի տեսքից նա մոռացել էր երեկոյան ստացած լուռ նախատինքը, ինչպես և մոռացել էր մտքում տված խոստումը՝ իրեն պահել այնպես, ինչպես վայել է մարդուն:
Երբ Աշոտը փռեց իր պիջակը և հավաքված հատապտուղը հինգ հավասար մասերի բաժանեց, Հասոն նրան մեկնեց չոր սունկն ու հարցրեց.
- Բա էս ո՞նց բաժանենք... Եվ իսկույն կարմրելով ավելացրեց. - էս էլ տանք մեր Շուշիկին...
- էլ չկա՞ր... որտեղի՞ց գտար, - հետաքրքրվեց Աշոտը:
- Ծառի վրա տնկված էր փշին... Սպասիր մի լավ մտիկ անեմ:
Տերևներից զրկված ծառի վրա դժվար չէր նկատել երկու գորշ կետ ևս: Նորից սունկեր էին:
Հասոն գլուխը քորեց:
- Բարակ ճյուղերի վրա է... ես դժվար հասնեմ...
Ուժ չուներ, ինչպե՞ս բարձրանար:
Տղաները ներքևից սկսեցին փայտեր նետել և հաջողեցրին սունկերից մեկը ևս վայր գցել:
Աշոտը, չգիտես ինչու, ոգևորվել էր:
- Թրջենք-փափկացնենք, որ հետո խորովենք, - առաջարկեց նա, սունկերը դնելով քարե մի գուշի մեջ հավաքված ձնաջրի մեջ:
- Հա, թրջիր, թող մեծանան... Բայց աչքերդ պսպղում են, ի՞նչ է պատահել, Աշո՛տ, - հարցրեց Գագիկը:
- Շատ կարևոր բան: Հասոն շատ կարևոր գյուտ արավ: Ի՜նձ լսեցեք: Տեսնո՞ւմ եք, որ ասում էր բնության գործերից վատ ենք հասկանո՞ւմ: Հիմի որ կուշտ ընկույզ կուտենք...
Ոչ ոք ոչինչ չհասկացավ: Քաղցած մարդու ագահությամբ ծամում էին նրանք հատապտուղն ու հարցական նայում իրենց պետին: Աշոտը ծիծաղեց:
- Դժվա՞ր եք հասկանում... Մոռացել եմ, որ ոչ կարգին, բնասեր եք, ոչ էլ որսորդ: Ախր այս սունկը սկյուռն է տնկել ծառին, չորացրել, որ ձմեռն ուտի: Ի՜նչ էլ բարձր տեղ է տնկել, որ ոչ ոք չփախցնի իր պաշարը... Հիմա, հարցը դա չի: Հիմա մի բան մենք հաստատ գիտենք, որ այստեղ, մեզնից քիչ հեռու, սկյուռ է ապրում...
- Քանի՞ կիլո միս կունենա, - իսկույն հետաքրքրվեց Գագիկը:
Շուշիկի նիհար դեմքին մի թույլ ժպիտ երևաց:
- Մի՛ ծաղրիր, հարցը միսը չի: Սկյուռը չնչին միս ունի, բայց, մեծ պաշարներ... Նրա շտեմարանը պիտի գտնել, ահա թե ինչ...
- Ա՛յ, հիմի որ մարդավարի ես խոսում... Իսկ ինչպե՛ս- գտնենք:
- Խելքո՛վ: Տեսե՛ք, ընկույզի ծառը մի քսան քայլի վրա է՛ ու տակին ընկույզ չկա: Ուրեմն, սկյուռը հավաքել-պահել է: Կհարցնեք՝ որտե՞ղ: Պարզ է, կամ ծառի մեջ, կամ նրա շրջակայքում: Վեր կացեք խուզարկենք ամեն ծակուծուկ...
Մեր պատանիները նախ հետազոտեցին ընկուզենին և նրա՛ մեջ ոչ մի փչակ չգտնելով, սկսեցին քրքրել խաշամը, չոքեչոք փոցխել հողը, խուզարկել ծառի տակ մեկնված «եզնաքարերի» խորշերը:
Այդ տաք լանջին, ուր քամիներ չէին բռնում և ուր ժայռը անդրադարձնում էր արևի ճառագայթներն ու ջերմություն թափում իր տակ, ձյունը հալվել-«չալ էր ընկել», և եթե երկու օր էլ եղանակը այդպես գնար՝ ձյան հետք չէր մնա:
Շատ չոքեչոք արին մեր պատանիները և հոգնած ու ձեռնունայն նստոտեցին ջերմացած խաշամին:
- Վա՛յ մեզ, որ մի խեղճուկրակ սկյուռի աշխատանքով ենք ապրելու... - գանգատվում էր Գագիկը.- Բռունցքիս չափ էլ չկա, նա ի՜նչ է, որ հինգ մարդ կերակրի... Մարդ այդ մասին մտածելիս նույնիսկ անհարմար է զգում... Այ, մի քարայծ լինե՞ր, ուրիշ բան: Գնանք նախամարդու մահակներն ուսներիս դնենք, ընկնենք այրերը, գուցե այծերի պատահենք... թե չէ մեր մահակները պարապությունից ձանձրացան:
- Իզուր է, - ձեռքը բացասաբար շարժեց Աշոտը: - Չե՞ս ՛տեսնում, այսքան ման ենք գալիս քարայծի հետքի չենք հանդիպում: Հենց ձյունն սկսել է գալ, թողել-հեռացել են: Երևի նրանք էլ են վախեցել, որ փակված կմնան այս ձորում...
Մինչ նրանք զրուցում էին, Հասոն ընկել էր մի մոշահավի հետևից: Սա թփից-թուփ էր թռչում և ճչում տագնապով, մինչև որ պարսատիկի ուղարկած քարերից մեկը վերջ տվեց նրա փոքրիկ կյանքին:

- Թփերում մոշահավ շատ կա, չվախենա՛ք, - թռչունը ձեռքին խմբին մոտենալով հայտարարեց Հասոն:
- Է՛հ, դու էլ... Մի լորի չափ էլ չկա... - ձեռքը արհամարհանքով թափ տվեց Աշոտը:
Հասոյի թափն իջավ, իսկ Շուշիկը հանդիմանանքով նայում էր Աշոտին ու մտածում. «Բոլորովին նրբանկատ չի... Ինքը որ խփած կլիներ, կգովեր, երկինք կհաներ իր որսը...»:
- Ձյունը հալվեց, կաքավ բռնելու մեր մեթոդը անպետքացավ: Գուցե մազից թակարդներ շինենք, հը՞... Բայց ոչ ձիու մազ ունենք, ոչ թակարդի մեջ շաղ տալու հատիկ...
Աշոտը խոսում էր ինքն իրեն, ավելի շուտ՝ մտածում էր բարձրաձայն:
Այսպես մեր պատանիները ծանր վիճակից ելք էին որոնում, իսկ Սարգիսը ներքևում, ժայռի մի բեկորի տակ մեկնված-արևկող արած՝ ննջում էր ու երազում այն երանելի ժամանակները, երբ իր հայրը ճոխ սեղաններ էր բացում շրջանից եկած (մանավանդ ստուգման համար եկած) մարդկանց համար:
Ինչե՛ր չկային այդ սեղանների վրա... Եվ ինչպե՛ս ինքը նազ էր անում, երբ ճաշի էին հրավիրում: Ինչպե՛ս էր չարչարում մորը: «Մարդ ուտելիքից կկշտանա՞ որ», - մտածեց տղան և նրան թվաց, թե իր կյանքում երբեք կշտացած չկա: «Ա՛խ, մի կտոր սև հաց լինե՛ր, էն, որ գցում էինք մեր շանը, հավերին...»:
Թուլացած և հուսահատ նա նվում էր: Բայց ապրելու բնազդը թելադրում էր շարժվել, մի բան ձեռնարկել: Նա ձեռքով սկսեց փորփրել քարի տակ, խառնել խաշամը:
Հանկարծ ժայռի բեկորի տակ, տերևներով քողարկված մի անցք բացվեց և նրանից մի ընկույզ գլորվելով լույս աշխարհ դուրս եկավ: Սարգիսը մի ակնթարթում ընկույզը թևքի մեջ թաքցրեց և գողունի նայեց չորս կողմը, հո ոչ ոք չնկատե՞ց: Ո՛չ, ընկերները ինչ-որ բանի մասին տաք-տաք խոսում էին: Նա առաջ սողաց, անցքը լայնացրեց և աչքերը պսպղացին. խորքում ընկույզի կույտ, էր երևում...
Տղայի մեջ վայրկենապես ինչ-որ ուժեր ծնվեցին, վերակենդանացավ: Ընկեր ու աշխարհ մոռացած, նա մեծագույն զգուշությամբ գրպանները լցրեց ընկույզով և մի քար խցկեց անցքը, Որ շտեմարանի տերը մնացածը չտեղափոխի (որպես պահեստապետի որդի՝ նա այդքանը հասկանում էր...): Ապա վեր կենալով՝ քայլերն ուղղեց դեպի մոտակա թփուտը, որի մեջ իրենց գլուխներն էին ցցել մանր ժայռերն ու ժայռաբեկորները:
- Ո՞ւր, Սարգիս, - հետևից լսվեց Աշոտի ձայնը:
- Տեսնեմ թփերում մամուխ կգտնե՞մ, - շուռ գալով, անսովոր սիրալիրությամբ պատասխանեց նա:
- Հա, Աշո՛տ, ես էլ մամխի գնամ, - համեստությամբ ասաց Հասոն և, թույլտվություն ստանալով՝ Սարգսից վերև մտավ թփուտը:
Մնացածները նույնպես ցրվեցին և ում հաջողվեց մի քանի բուռ մասուր կամ վայրի ունաբ գտնել, գրպանում պահեց՝ երեկոյան ընկերների հետ կիսելու համար:
Միայն Սարգիսն էր ժայռի հետևն անցած՝ գաղտագողի ուտում համեղ ու յուղալի ընկույզները և որքան ուտում էր, այնքան ագահությունը մեծանում էր նրա մեջ:
Մի բան վատ էր, որ այդ աներես Հասոն չէր թողնում, որ տղան հալալ իր բանին կենա:
- Սարգի՛ս, մամուխ եմ գտել, արի քաղենք, - վերևից ձայնեց նա:
Այս Բոյնախն էլ մի կողմից է խանգարում, պպզել է առաջը և ծմրկտալով, խաշամն ավլելով ուշադիր նայում է, թե ինչ է ուտում ինքը: Անպիտանը չմատնի՞... Լավ է, որ լեզու չունի, չի կարող պատմել, թե չէ... Քաղցած կենդանուց ամոթ զգաց, թե՞ վախենում էր, որ Հասոն նկատի, - նա ժայռի տակ պառկեց բերանքսիվայր և կենդանական բնազդով շարունակեց մեկը մյուսի հետևից ջարդել ու ոչնչացնել բարակ կեղևով և լիքը միջուկով պտուղները:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես հայելի պիտի դնել մարդու առաջ, որ տեսնի իր կերպարանքը...

Երկու օր ևս անցավ, այնքան ծանր օրեր, որ պատանիները գրեթե հասան հուսահատության շեմքին, ծանր մահակներն ուսներին, թուլացած ոտքերով նրանք քարշ էին գալիս Հովազաձորի ծերպերում, բայց մի քանի բուռ խղճուկ հատապտուղներից բացի, ոչինչ չէին գտնում:
- Տղե՛րք, քարից կակուղ ինչ ճանկներդ ընկնի՝ կերեք, վերջը լավ կլինի, - խրախուսում էր Գագիկը:

Քարից կակուղ ի՞նչ կար Հովազաձորում: Հա՛, ուռենիների մոտ եղեգներ կային բուսած: Ի՞նչ արած, «անճարն է կերել բանջարը», - այդ եղեգների քաղցրավուն արմատները ևս կերան, հետո հողը փորփրեցին զանազան արմատիք հանեցին կերան:
Կերան, բայց զղջացին. Շուշիկը գլխապտույտ զգաց և սկսեց գժություններ անել: Նրա աչքերի պարզ հայացքը պղտորվել էր, հարբածի նման երերում էր ու անկապ բաներ ասում:
- Ի՞նչ ես կերել աղջի՛, - սթափեցնելու համար նրա ուսերից բռնած ուժգին թափահարում էր Աշոտը: - Թե՞ վախից է ցնորվել...
Խումբը լուռ քարայր վերադարձավ:
- Ահա քո քյալլագյոզության արդյունքը, - խայթեց Սարգիսը:
Թեև նա խմբի հետ արմատիք ուտելու չէր գնում, բայց, զարմանալի բան, նույնիսկ աշխուժացել էր և նկատելի կազդուրվել, ձայնը զվարթացել:
- Մի՛ կռկռա, - սրտնեղած կտրեց Աշոտը:
Երեկոյան դեմ Գագիկը նորից իջավ ձորակը և ինչ-որ արմատների մնացորդներ ձեռքին վերադարձավ:
- Բանգի է կերել, մի վախեցեք, - ասաց նա՝ արմատները ցույց տալով:
- Բանգի՞... Հա՛... թեթևացած շունչ քաշեցին պատանիները: Այգեձորի երեխաներից ոմանք գիտեին, որ բանգ կամ բանգի կոչված բույսի արմատը և սերմը հարբեցնելու-՞գժվեցնելու՞ հատկություն ունի, և գիտեին, որ դա անցողիկ բան է:
- Բա ասում ես՝ քարից կակուղ ինչ պատահի, կերե՛ք, - Գագիկին նախատեց Աշոտը: - Խնդրեմ, այսուհետև սխալ լոզունգներ չտաս:
- Այո՛, լոզունգս իրեն չարդարացրեց. հարկավոր է ճշտել և դարձնել այսպես. «Քարից կակուղ ինչ պետքական բան պատահի, կերե՛ք»:
Լռեցին: Շուշիկը օջախի մոտ պառկած, Հասոյի տաք աբան մեջքին գցած՝ մուշ-մուշ քնել էր:
Քիչ հետո երբ արթնացավ, աչքերը տրորեց և վրա նստելով՝ քնաթաթախ մարդու ցրվածությամբ հարցրեց.
- Էս որտե՞ղ ենք...
- Ձեր բակում, - պատասխանեց Գագիկը: - Կրակը թեժացրել ենք, որ պոմիդոր խորովենք: Վազիր բոստանից մի փեշ բեր: Տաքդեղն ու բադրիջանը չմոռանաս:
Աղջիկը վեր կացավ, քայլեց դեպի այրի շեմքը, ապա ուշքի գալով՝ լաց եղավ:
- Էլի փակված ենք ձորո՛ւմ... Ուրեմն, մեռնելո՞ւ ենք...
- Շուշի՛կ, հետո՞.. անհարմար չի՞՛, - հանդիմանեց Աշոտը:
Աղջիկն զգաստացավ, ամաչեց իր արարքից:
Շուշիկի անակնկալ ճիչն ու լացը ազդել էր բոլորին: Իրոք, մահը մոտենում էր անձավի շեմքին, պատանիներն այնքան էին նիհարել-թուլացել, որ շատ դժվարությամբ էին վառելիք հայթայթում: Իսկ որ կրակը հանգչեր, սառը քարայրը ականատես կլիներ նրանց վախճանին... Այդ բանը բոլորն էլ գիտակցում էին և լուռ մտածում:
Ի՞նչ աներ հովիվ Հասոն, ինչպե՞ս սրտապնդեր իր ընկերներին: Նա քաշվելով քրդական մի փոքրիկ հեքիաթ պատմեց, հետո սրինգ նվագեց և այրի բնակիչների ուշադրությունը առավ-տարավ Փոքր Կովկասի զմրուխտյա բարձունքները...
Երբ այդ էլ վերջացավ, սովորականի նման փռեց իր աբան ու գրպանների պարունակությունը դատարկելով նրա վրա, ասաց.
- Այս անգամ վեց բաժին պիտի անենք... Եկեք Բոյնախին էլ տանք:
- Կուտի՞, - հարցրեց Աշոտը՝ թառամած վայրի մամուխին նայելով:
- Ճարն ինչ, ստիպված պիտի ուտի: Փորձի համար մի քանի հատ տվի՝ կերավ...
Բոյնախն էլ իր բաժինն ստացավ և իրոք սկսեց կրտկրտոցով, կորիզները ջարդելով խժռել այն, ինչի համն իր կյանքում տեսած չկար:
- Տեսա՞ք, շունը մեզանից փորձված է. կորիզները ջարդեցեք, տղե՛րք, ես պատասխանատու եմ, - խրախուսեց Գագիկը:

Երբ հատապտուղը կերան-վերջացրին, շունը սկսեց անհանգիստ ծմրալ և պոչն արագ-արագ շարժելով, տիրոջից էլի ուտելիք խնդրել: Խեղճ կենդանին շատ էր քաղցած:
- Չկա, ազիզ ջան, չկա, ի՞նչ անեմ, - մղկտում էր հովիվ պատանին, և կենդանու բրդոտ վիզը գրկած՝ ընկերներից թաքուն արտասվում էր մութի մեջ: Դե, նրա զգացմունքները հասկանալի էին մեր պատանիներին, նրանք գիտեին, որ շունը հովիվ մարդու համար եղբոր նման մի արարած է: Զգալուն կենդանին երևի հասկացավ. նա պառկել էր, գլուխը դրել տիրոջ ազդրին և մեղմ լիզում էր նրա ձեռքը, կարծես ներողություն էր խնդրում վշտացնելու համար...
Ապա ինչ-որ չրխկոց լսվեց, վեր թռավ, մոտեցավ Սարգսին և նրա գրպանները հոտոտելով, սկսեց բարկացած հաչել: Այնպես արտահայտիչ էր նրա հայացքը, որ կարծես պարզ ասում էր. գրպանիդ ուտելիքը դատարկիր, թե չէ հիմա կպատառոտեմ քեզ...
- Ի՞նչ է ասում, - հարցրեց Աշոտը:
Հասոն անհարմարությունից լռում էր:
- Դենը կորի՛ր, - գունատված գոռաց Սարգիսը, բայց շունն ավելի վրդովվեց:
- Ինչ է ասո՞ւմ... պարզ չի՞ որ, - թոթովեց Հասոն:
Աշոտը հասկացավ և վեր ելավ տեղից:
- Գրպաններդ դատարկի՛ր, - որոտաց նա՝ զայրագին նայելով մեղավորի գունատ դեմքին:
Գագիկը խուզարկեց և բավականաչափ ընկույզ հանեց Սարգսի գրպաններից:
- Ի՞նչ իրավունք ունեք... Ե՛ս եմ գտել... Ամեն մարդ ի՛ր համար...
- Իսկ ի՞նչ իրավունքով և ի՞նչ խղճով ես դու ուտում էս թույլ աղջկա բերածը, Հասոյի բերածը, մեր բերածը, - վրդովված հարցրեց Աշոտը և ձեռքը ետ տանելով մի ծանր ապտակ հասցրեց նրա դեմքին: Շուշիկը ճչաց, Հասոն շուռ եկավ, նրան ցնցեց այդ տեսարանը: Նույնիսկ Գագիկը շփոթված մտածում էր, թե ինչ դիրք բռնի, - դեպքն այնպես ծանր էր, որ կատակով չես հարթի: Սարգսի դեմքին սառել էր ինչ-որ տարօրինակ, ծուռ մի ժպիտ, որից նա ավելի ողորմելի էր երևում: Իսկ Աշոտը կարծես ուժասպառ էր եղել: Վրդովմունքից գունատված, նա դողում էր: Որպես որսորդի որդի, իր փոքրիկ կյանքում նա մի սկզբունք ուներ. հանդում ձեռք բերածդ կիսի՛ր ընկերոջդ հետ: Քանի՛-քանի անգամ հայրն իր աչքի առաջ, առանց ափսոսելու, և նույնիսկ հատուկ բավականությամբ բաժանել էր ընկերներին իր խփած կենդանու միսը: Միշտ հավասար, միշտ արդարացի: Նույնիսկ հրաժարվում էր պապենական օրենքով խփողին պատկանող որսի մորթուց ու ազդրից: Իսկ նա գիտեր, թե ինչ չարչարանքով է հայրը ձեռք բերում որսի կենդանուն, ինչ տանջանքներով է նա խփածը շալակով իջեցնում սարերից: Բայց բաժանում էր հավասար, այդպես է հնուց դրված կարգը, այդպես է պահանջում ընկերությունը, մարդկայնությունը: Իսկ սա՞, այս տակա՞նքը: Ա՛խ, զզվելի էգոիստ, նույնիսկ այժմ երբ գրպանները լիքն են, դարձյալ ձեռքը մեկնում է քաղցած ընկերների ողորմելի պատառին...
Այս բոլոր մտքերը մի վայրկյանում փոթորկեցին Աշոտի փոքրիկ ուղեղը և նա ոչ միայն չզղջաց իր հասցրած ապտակի համար այլև քիչ մնաց նախնադարյան մարդու մահակի զորությունը փորձեր Սարգսի գանգի վրա, բայց զսպեց իրեն և խեղդված ձայնով հարցրեց.
- Հիմի քեզ ի՞նչ անենք...
Սարգիսը քմծիծաղ տվեց:
-Ի՛նչ է, գողությո՞ւն եմ արել... Կա՛ց, Աշոտ տղա, թե մի այստեղից դուրս կգա՛նք...
Դեռ սպառնում է, այդքան էլ անամոթությո՞ւն:
- Ինձ խոսք չի հասնում, բայց մի բան ասեմ, - քաշվելով մեջ մտավ Հասոն և դիմեց Սարգսին: - Դու քեզ մեզանից մի՛ ջոկի, լավ չի... Մեր քրդերն ասում են՝ սուրվից ջոկված ղոչը գելի բաժին կդառնա...
Սարգիսը միայն մի արհամարհական հայացքով չափեց Հասոյին և խմբին դառնալով, շպրտեց.
- Աչքներդ տնկել եք իմ աշխատանքի՞ն... Տեղներդ նե՞ղ է, թող ամեն մարդ իր գլխի ճարը տեսնի...
- Հաա՞, ուրեմն այդպե՞ս... Լա՛վ...
Եվ Աշոտը տեղում լարված մի պահ, մտածեց և մի վճիռ կայացնելով, կարգադրեց.
- Ընկուզենու տակ մի փայտ եմ պատրաստել, գնա բեր, որ գիշերը վառենք:
- Ինչո՞ւ պիտի ես գնամ...
- Հերթը քոնն է: Գնա՛, թե չէ դուրս կշպրտենք, դրսում կսառչես...

Այդ սպառնալիքը իսկույն ներգործեց:
- Բա մենա՞կ գնամ, - խեղճացած հարցրեց նա:
- Հասո՛, Բոյնախի հետ դուրս եկեք, շեմքում կանգնեցեք, որ չվախենա: Դե՛, մա՛րշ...
Երբ Սարգիսը վրեժը սրտում, բայց ճարահատյալ դուրս եկավ այրից, Աշոտը դարձավ ընկերներին.
- Փայտը պատրվակ էր: Ուզում եմ վճռենք, թե ինչպես վարվենք դրա հետ:
- Դու շատ խիստ ես և կոպիտ, Աշո՛տ, - մեղմությամբ դիտեց Շուշիկը: - Այդպես չի կարելի մարդ ուղղել: Նա վիրավորանքներից ավելի կհակառակվի և կփչանա:
Շուշիկի այդ խոսքով էլ սկսվեց կարծիքների փոխանակությունը:
- Իսկ դո՛ւ ի՞նչ կասես, Գագի՛կ:
- Ե՞ս: Ես իմ պապի նման կասեմ. ՞Սևին սապոնը, խևին խրատն ի՞նչ անի...՞:
- Ուրեմն այդպես էլ թողնե՞նք: Չազդե՞նք վրան, - վրդովվեց Աշոտը:
- Ազդենք... բայց ինչո՞վ: Իմ պապը հո գիտես ինչ առակախոս մարդ է: Ասում է՝ գայլի ճուտին նստեցրին, որ գիր սովորեցնեն: Ասացին՝ ասա **ա**, ասաց այծ, ասա **բ**, ասաց բադ (թե՞ բուդ...), ասա **գ**, ասաց գառ, ասա **դ**, ասաց դմակ... հիմա, քանի չի վերադարձել, լսեցեք ի՛մ վճիռը: Շուշիկը իրավացի է, բայց նրա խոսքը շեղված ընկերոջը ուղղելու մասին է: Սա շեղված չի, այլ մինչև ուղնուծուծը այլասերված: Դա գայլի ճուտ է, հասկանո՞ւմ ես, դա իրեն եսից դուրս աշխարհ չունի, - զայրույթից չափը կորցրած հայտարարեց Գագիկը: - Մեկ է, ուժով բաց արած վարդը հոտ չի ունենա... Իզուր է...
- Իզուր չի, նա կամ պիտի մնա այստեղ, կամ մարդ դառած պիտի դուրս գա Հովազաձորից... Գայլի ճո՛ւտ է, պիտի ժանիքները հանենք: Դու քո պապի առակներն ես մեջ բերում, ես էլ իմ հոր ասածները կբերեմ. ՞Սոխի կողքին պետք է սխտոր ծեծես...՞, ՞խաթրով չեկավ, չվանով կգա...՞:
Եվ ոգևորվելով, Աշոտը, իր սովորության համաձայն, Գագիկի խոսքով ասած՝ ՞մի ամբողջ դասախոսություն՞ սկսեց Սարգսի մասին: Նա ասաց, որ այդպիսի մարդիկ իրենց պակասությունները չեն նկատում: Շատերն են քծնում նրա հոր առաջ և նրան թվում է, թե իր հորից էլ լավ մարդ չկա: Շատերն են հոր դիրքի պատճառով երես տալիս և սա իր մասին թյուր կարծիք է կազմել: Պետք է քողը դեն տանել և պարզ ցույց տալ, թե ո՛վ է ինքը և ո՛վ է իր հայրը: Հորը պետք է մերկացնել, որովհետև նա իր հոր դիրքով է այդպես մեծամտացել: Իսկ իրեն պետք է իր տեղը ցույց տալ և նույնիսկ ստորացնել: Եվ երբ զգաց, որ ինքը ոչնչով ավելի չէ ուրիշներից և դեռ շատ բաներով էլ պակաս է, այն ժամանակ միայն կարելի է քիչ-քիչ վեր քաշել...
- Դա իմ առաջարկն է, - վերջացրեց նա: - Գուցե մանկավարժության կողմից չընդունվի դաստիարակելու մեր այս մեթոդը, չգիտեմ: Բայց մեղմ միջոցները նրան չեն օգնի, ես դրանում համոզված եմ: Այդպիսի մարդու հետ եթե մեղմ վարվեցիր, բոլորովին կփչանա, գլխիդ կնստի...
- Միտքդ լավն էր, բայց ափսո՛ս, գրաբար էր ու երկար, - իր գնահատականը տվեց Գագիկը:
- Ի՞նչ է, դու իմ ամեն խոսքը կշռելու-քննադատելո՞ւ ես:
- Այո՛, ճիշտ ես գլխի, ամեն խոսքդ կշռելու եմ: Ե՛կ, Աշո՛տ, մարդավարի զրույց անենք, ինչի՞ ես չոր ճառեր ասում, ախր ափսոս ես...
Աշոտը մի գողունի հայացք գցեց Շուշիկի կողմը և մի պահ կարկամեց. անսպասելի հանդիմանությունից նա շիկնել-քրտնել էր:
- Իսկ պետը իր մտքերը պետք է արտահայտի՞, թե ոչ... Իսկ...
Գագիկը հանդարտ ու լուռ ծիծաղում էր. նրան դուր էր գալիս, երբ իր կծու խոսքից Աշոտը վեր-վեր էր թռչում և, մանավանդ, իր պետ լինելը հիշեցնում: Համով ու հեգնական մի միտք ՞քոր էր ածում՞ նրա լեզուն, բայց զսպեց իրեն: Զսպեց, որովհետև զգում էր, թե ինչպես իր յուրաքանչյուր դիտողությունը, յուրաքանչյուր կծու կատակը վիրավորում է իրենց ինքնասեր (և գուցե մի փոքր էլ գոռոզ) պետին: Մանավանդ Շուշիկի ներկայությամբ Աշոտը ոչ մի դիտողություն չէր կարողանում սառնարյուն կերպով ընդունել, ուստի Գագիկը բարվոք համարեց լռել:
- Ինչի մասին հարցնում են, նրա մասին խոսիր, - բարկացավ Աշոտը: - Ասա քո կարծիքը, ինչպե՞ս վարվենք այդ, այդ...
Այսպես, Գագիկը բուն հարցին կողմնակի վեճ խառնեց և չթողեց, որ խումբը մինչև տղաների վերադարձը եզրակացության գա իր անուղղելի համարվող անդամի մասին:

Ընկերները Աշոտին դեռ իրենց վերջնական կարծիքը չէին հայտնել, երբ ներս մտավ Հասոն, հետևից էլ Սարգիսը, մի ճյուղ ուսին: Չէր հևում իր ընկերների նման, խեղճ սկյուռի յուղալի պաշարը ուժ էր տվել նրա հյուծված օրգանիզմին:
- Այդպես, սրանից հետո պիտի մեզ հետ հավասար աշխատես: Թե չէ ինչի՞ նման է՞ Հացից մոտիկ, բանից հեռու՞, ինչպես իմ պապը կասեր, - այս անգամ անսովոր լրջությամբ խրատեց Գագիկը: - Դե հիմա նստիր և լսիր մեր անուշ-անուշ զրույցները...
- Ինչի՞ մասին, - կասկածանքով հարցրեց Սարգիսը՝ փոխեփոխ նայելով նրան և օղակավարին. ջանում էր գուշակելու, թե ինչ վճիռ են կայացրել իր մասին:
- Ինչի մասի՞ն: Քո՛ մասին, հո՛րդ մասին...
Ու նայելով Աշոտին, հարցրեց.
- Այդպես չի՞... Չսկսե՞նք...
- Այդպես է, սկսենք...
Այդ լավ է, ուրեմն Գագիկն էլ կողմնակից է իր ՞մեթոդին՞: Իսկ Շուշի՞կը: Աշոտը հարցական նայեց աղջկան և նրա լռությունը համաձայնության նշան համարելով, սկսեց.
- Սարգի՛ս, դու շատ ես հպարտանում քո հորով և քեզնով: Այստեղ թյուրիմացություն կա, ուզում ենք պարզենք, որ դու ամեն բան տեսնես այնպես, ինչպես որ կա... Ուզում ենք համոզվես, որ օրինակ, հենց այս քուրդ հովիվ Հասոն քեզնից մի քանի գլխով բարձր է...
Սարգիսը շանթահարվեց:
- Քուրդ Հասո՞ն, - խեղդված հարցրեց նա: - Թե այստեղից դուրս կգա՛նք...
Եվ նա սեղմեց բռունցքները, բայց Աշոտի հայացքից վատ բան գուշակելով, կուչ եկավ, աչքերը երկյուղով խոնարհեց:
- Այո՛, Հասո՛ն: Հիմա լսիր և կհամոզվես: Հասո՛, խնդրում եմ պատմես, թե այս տարի ինչո՞ւ եք դուք վատ ապրում, չէ՞ որ մայրդ ֆերմայում կթվոր է, դու՝ հովիվ, իսկ հայրդ՝ անվանի անասնապահ: Ո՞ր անխիղճն է ձեր ապրուստը վատացրել...
Հարցն անակնկալ էր: Հասոն անճարակությունից մեկ Աշոտին էր նայում, մեկ Գագիկին և նրա հայացքն աղերսում էր. «Թո՛ղ, հարամ լինի իրենց գլխին, ինձ ազատեցեք էդ ծանր պարտականությունից...»:
- Ասա՛, մարդի՛ց կամաչեն, սա ի՞նչ մարդ է որ... Հո տեսա՞ր ոնց բռնվեց գողության մեջ... Դու հո էդպիսի բան չէի՞ր անի:
- Ե՞ս: - Հասոն ցույց տվեց իր ճերմակ ատամները: - Ես ո՛ր օրը էդպես բան անեմ, լավ է էդ օրը մեռնեմ, - արժանապատվությամբ պատասխանեց սա:
- Իմացա՞ր ինչով է քեզանից բարձր հովիվ Հասոն, - շեշտակի հարցրեց Աշոտը: - Իսկ դու քեզ նրա հետ համեմատելը ամոթ էիր համարում, չէ՞: Այդ դու և նա: Դե հիմա լսիր նրա՛ հոր ու քո՛ հոր մասին, և ինքդ համեմատիր նրանց երկուսին իրար հետ: Հասո՛, պատմի՛ր:
Դե Հասոն ինչպե՞ս հակառակեր Աշոտին: Եվ անհարմար զգալով ու երբեք Սարգսի կողմը չնայելով, նա սկսեց իր պատմությունը.
- Դե ինչ ասեմ, սաղ գյուղը գիտի: Երկու տարի առաջ ֆերմայի վարիչը թոխլիները իմ հոր առաջն արավ, թե՝ Ավդա՛լ, տար գյուղ, հանձնիր Պարույրին, որ մուտք անի ու մթերման տանի: Հերս գնաց, ես էլ հետը: Տարանք, երկինքը վկա, լրիվ հանձնեցինք իրեն՝ ուղիղ հարյուր ութսուն երկու գլուխ: Ստացական առանք եկանք ֆերմա: Մյուս օրը Պարույրը խաբար ղրկեց, թե՝ մնացած վաթսունհինգ թոխլին ինչի՞ չեք բերում:
Ֆերմայի վարիչը կարդաց հորս ձեռքի ստացականը, թե՝ Պարույրը ճիշտ է, բա մնացածն ո՞ւր է, ախր ես քեզ հարյուր ութսուն երկուսն եմ հանձնել... Հերս մնաց շշմած, հասկացավ, որ Պարույրը խաբել է իրեն: Դե հայերեն կարդալ չգիտեինք, ստացականը չէինք կարդացել, նա էլ թիվը բառերով էր գրել... Ես ու հերս մրմնջալով գնացինք գյուղ՝ Պարույրի մոտ, մտածում էինք, թե՝ երեսը երեսից կամաչի: Բայց աչքը գցեց մեր աչքին ու մաքուր հրաժարվեց: Ասում է՝ ստացականում գրված է, թե ինչքան եմ ընդունել... Մղկտացինք, հերս թաթա տվեց, չեղավ: Գործը հասավ դատախազին, բայց ամեն տեղ էլ էդ սուտ ստացականը մեր մեջքը կոտրեց, էդ թղթի կտորին հավատացին, մեզ չհավատացին...
Հասոն ընդհատեց պատմությունը, աչքերը լցվել էին:

- Շարունակի՛ր...
- Ինչ շարունակեմ, Պարույրը տարածեց, սուտ վկաներ սարքեց, թե տեսել են, որ Ավդալը ճամփի կիսից թոխլիների մի մասը քշել հասցրել է Ադրբեջան գնացող քոչվորներին ու ծախել նրանց: Քիչ մնաց հորս բանտ նստեցնեն: Լավ էր, կուսբյուրոյի քարտուղարն էլ պաշտպանեց, գյուղսովետն էլ և էնպես, ներքին կարգով որոշեցին, որ մենք էդ վաթսունհինգ թոխլու պակասորդը առայժմ լրացնենք, մինչև որ հարցը վերևում նորից քննեն... Հիմի աշխատում ենք, աշխատում, էդ պարտքից չենք պրծնում: Բա դա խի՞ղճ է, - անսպասելիորեն ձայնը բարձրացրեց հովիվ պատանին: Զայրույթից նա շառագունել էր, աչքերը շողում էին անսովոր փայլով:
- Պարզվե՞ց հորդ կերպարանքը, Սարգիս, իմացա՞ր ում աշխատանքն ես ուտում... Բա ի՞նչ խղճի տեր ես դու, որ էս աղքատ տղի քրտինքը լափում ես: Դու գիտե՞ս, որ սա ո՛չ գիշերն է քնում, ո՛չ ցերեկը, ու անձրևին էլ, կարկուտին էլ, ձյունին էլ պետք է աչքը չորս արած հսկի կոլխոզի հոտին, որ գայլը վնաս չտա: Դու գիտե՞ս, որ սրանք՝ հայր ու որդի՝ ամիսներով շոր չեն հանում... էն ժամանակ, երբ սա խոնավ խրճիթում է ապրում, դու հարամ փողով շինված սիրուն շենքում ես ապրում: Էն ժամանակ, երբ դու տաք սենյակում փռվում ես փափուկ անկողնուդ վրա, սա մեկնվում է թաց գետնին ու գլուխը դնում չոր քարին: Ասա՛, դու ի՞նչ խղճով ես ուտում սրա աշխատած հացը...
Այնպես էր խոսում Աշոտը, նրա մեծ-մեծ աչքերը այնպես էին վառվում արդար զայրույթով, որ քար լիներ Սարգսի տեղը - կհալվեր: Իսկ Գագիկը համակրանքով նայում էր արդարացի վրդովմունքից շառագունած ընկերոջ դեմքին ու մտքում ասում՝ «Էլի ճառ ես ասում, Աշոտ շան, բայց այս անգամ տեղին է. խփի՛ր ամբիոնիցդ փթանոց խոսքերով, խփիր առանց խնայելու»:
Իսկ Սարգի՞սը: Նա ընկճվել էր այդ անակնկալ հարձակումներից և մեծ գլուխը կախ լուռ լսում էր: Դեմքը չէր երևում, իսկ կախ ականջներից դժվար էր գուշակել, թե ինչ ներգործություն են ունենում օղակավարի փթանոց խոսքերը այդ տղայի վրա:
Աշոտը մի պահ լռեց, բայց դեռ ալեկոծված էր: Վերջապես նա խոսեց.
- Իմ հայրը ասում է՝ ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մեռնում... Իհարկե, վերջիվերջո կպարզվի և գերագույն դատարանը կբեկանի Հասոյի հոր մասին հանված սխալ որոշումը: Բայց ինչպե՞ս կարելի է... Լա՛վ, թողնե՛նք... Շուշի՛կ, հերթը քոնն է...
- Ես բան չգիտեմ... եսիմ... - կմկմաց աղջիկը:
- Պատմիր, թե ո՛ւմ փոխարեն է կռիվ գնացել հայրդ...
Կարծես աղջկան շանթահարեցին: Նա գույն տվեց, գույն առավ և առանց խնայելու շպրտեց.
- Դրա հոր փոխարեն ուղարկեցին... Մայրս մինչև օրս էլ մղկտալով պատմում է այդ դեպքը: Հայրս բրինձ էր մշակում գյուղի համար: Ցանքից սկսած մինչև հունձը շարունակ ջրերի մեջ էր, դրանից ծանր ոսկրացավ էր ստացել: Քանի եղանակը տաք էր, կարողանում էր աշխատել, որ սկսվում էր ձմեռը՝ անկողին էր ընկնում. նրանից ի՞նչ զինվոր դուրս կգար: Ազատել էին զինվորական ծառայությունից, ձեռքը բրոնյա էին տվել: Մի օր էլ կանչում են զինկոմիսարիատ: Նախագահ Հարութն ու դրա հայրը մարդ են գցում մեջը, ինչ են անում՝ չգիտեմ, քարտը փոխում են իմ հոր քարտի հետ, Պարույրին ետ ուղարկում, իմ հորը կանչում, նրա տեղ գնացք նստեցնում... Գնաց կռիվ ու էլ ետ չեկավ... Իսկ դրա հայրը առողջ մնաց թիկունքում, որովհետև... որովհետև պահեստապետ էր, ուտեցնում էր, ում որ պետք էր... Բա մեր հարևան գյուղերում ինչի՞ այդպես չի: Մայրս ասում է՝ Մեղրաձորի պահեստապետն էլ է մաքուր մարդ, նախագահն էլ... Այդ կեղտոտները հենց մե՞ր գյուղում պիտի լինեին, որ իմ հորը... իմ հորը...
Շուշիկն այլևս չկարողացավ շարունակել: Սիրտը լցվեց, հնացած վիշտը նորոգվեց, արցունքները դեմ առան կոկորդին:
- Ճանաչեցի՞ր, թե ո՛վ ես և ո՛ւմ զավակը, - հերթական հարվածը հասցրեց Աշոտը: - Հիմա թող ե՛ս շարունակեմ նրա պատմությունը. Պատերազմի տարիներին, երբ Շուշիկի հայրը կռվի դաշտում էր, իսկ մայրը չէր կարողանում կուշտ կերակրել իր երեք երեխաներին, քո հայրը տաշած տուֆից երկու հարկանի տուն շինեց: Ո՞ւմ աշխատանքով, իսկի հարցրե՞լ ես, պիոնե՛ր Սարգիս...
Սարգիսը գլխահակ լսում էր իր հոր արարքների մասին և կյանքում առաջին անգամ ամոթի զգացումը պատում էր նրա հոգուն, մի զգացում, որ նրան բոլորովին անծանոթ էր եղել: Ամոթ՝ իր հոր անարդար արարքների համար: Ամոթ այն բանի համար, որ ինքը, պիոներ լինելով, աչք է փակել այդ արարքների

հանդեպ, պարծեցել է իր հոր դիրքով, օգտվել է նրա բերած հարամ եկամուտից: Չէ՜, սրանք, դժվար ապրող, բայց ազնիվ մարդկանց այս որդիները, իրավունք ունեն իրեն արհամարհելու, - գիշերը ինքն իրեն երկար խորհելուց հետո եզրակացրեց նա: Հը՞, թե՞ շուտ եմ զինաթափ լինում, - լսեց նա իր հոգում մանկուց ի վեր բուն դրած եսի ձայնը: Ո՞նց կարող է քուրդ Ավդալը իմ հորից բարձր լինել, իմ անվանի հորից... Կամ նրա որդին, էն հասարակ, անճար չոբանը՝ ինձանից...
Այսպես, և՛ զղջում, և՛ դատապարտում, և՛ ինքն իր մտքում հոխորտում, աքլորանում էր Սարգիսը:
Թեև նրա գլխում հակասական մտքերը բախվում էին իրար, Բայց և այնպես Աշոտի ՞ոչ-մանկավարժական մեթոդը՞ ներգործել էր:
Փուլ էր եկել այդ տղայի կեղծ հպարտությունը ավազի վրա շինված խարխուլ շենքի նման: Խորտակվել էր նրա մեծամտությունը, նա այլևս ոչ ոքի վերևից նայել չէր կարող:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ. Թե ինչքան դառն է լինում մարդուս վիճակը, երբ դուրս է մնում կոլեկտիվից

Ձմեռը երբ նայում ես Հովազաձորի բարձունքից, թվում է մառախուղ է իջել Արաքսի հովտի վրա: Իսկ վերևում, ուր մեր պատանիներն էին, օդն այնպես հստակ էր ու պարզ, երկինքն այնքան ջինջ ու արևը պայծառ, որ եթե սովամահ լինելու ահը չլիներ, այնտեղ փակված պատանիները կզգային այն հրճվանքը, որն ունենում է տափարակից լեռ բարձրացած մարդը, որի առաջ նոր ու անակնկալ հորիզոններ են բացվում, իսկ ինքն իրեն զգում է թե՛թև- թեթև:
Այրի շեմքին կանգնած, նրանք մի պահ դիտեցին այդտեղից բացվող տեսարանները և շարժվեցին դեպի Մասրուտը. այդպես էին կոչել նրանք ժայռերի միջև թաքնված այն թփուտը, ուր նախորդ օրը Հասոն շատ մասուր էր հայտնաբերել: Հեշտ չէր հասնել ծերպերին թառած այդ հողակտորին: Բայց ճարն ինչ, պիտի գնային:
Դա Հովազաձորում փակվելու տասներորդ օրն էր:
Սարգիսը այրի շեմքից հայացքով հետևում էր ընկերներին: Ոչ ոք նրան չնկատեց, ոչ ոք ետ չնայեց: Ասենք, ո՛չ, Հասոն ետ նայեց և կանչեց ետ մնացած Բոյնախին: Շանն անգամ կանչում են, իսկ իրեն՝ ոչ...
Երկու օր էր ոչ ոք ոչ մի խոսք չէր փոխանակել իր հետ: Խումբն առավոտը գնում էր հատապտուղ հավաքելու, երեկոյան վերադառնում, և որպես կանոն Սարգիսն ստանում էր իր բաժինը: Ամեն անգամ վճռում էր չվերցնել, բայց ապրելու բնազդն ստիպում էր մի կողմ դնել ինքնասիրությունն ու պատիվը: Ուտելիքի տեսքից նա մոռանում էր մտքում տված երդումը, բայց և ուտում էր իրեն անծանոթ մի նոր զգացումով համակված, հավանաբար ամոթի զգացումն էր, որ ծնվում էր նրա մեջ:
Ծերպերից իջնում էին ընկերները ուժասպառ, բայց ամբողջ երեկոն կրակի շուրջը զրուցում էին խաղաղ, հերթով հեքիաթ պատմում և նույնիսկ երբեմն էլ ծիծաղում Գագիկի թե՛ անհամ, թե՛ համով կատակների վրա:
Սարգսի ներկայությունն անտեսում էին, նրա կողմը ոչ չէր նայում, նրան ոչ մի հարց չէին տալիս - կարծես Սարգիսը կամ չկար քարայրում, կամ օջախի մոտ թափթփված փայտերից մեկն էր:
Ինքը՝ Սարգիսը թեև քչախոս էր (այդ էր վկայում նաև նրա ՞ուրբաթախոս՞ տիտղոսը), բայց բոլորովին լռելը մահվան էր հավասար: Այժմ, երբ իրեն հետ ոչ ոք չէր խոսում, նա խոսելու, կատակելու, շաղակրատելու պահանջ էր զգում:
Ի՜նչ սարսափելի բան է եղել անխոս մնալը... Մի քանի անգամ փորձեց խառնվել խոսակցությանը, բայց ոչ ոք չպատասխանեց, ուշադրության չարժանացրեց նրան: Տղան զայրույթից քիչ էր մնում պայթի: Գնաց մամուխ գտավ, բերեց յուրաքանչյուրին մի-մի բուռ առաջարկեց՝ ոչ ոք չվերցրեց, սրանից երես դարձրին և սկսեցին իրար հետ զվարթ զրուցել, կարծես ինքը բացակայում էր անձավից:
Տխուր էր Սարգիսը, մենակ մնալով՝ ավելի տխրեց, միայնակ մարդը ուրախանալ չի կարող:
Եվ կյանքում առաջին անգամ նա զգաց, թե ի՜նչ ահավոր բան է եղել մենակությունը...
Հիմա խմբի հետևից քարշ է եկել, հասել Մասրուտ, բայց չի համարձակվում մոտենալ ընկերներին: Ասենք, այդպիսի մի փորձ արդեն արել էր նախորդ օրը և զղջացել, նրանից խույս էին տալիս...

Թփերի մեջ ցրված, պատանիները մասուր էին քաղում: Երբեմն որևէ մոշահավ դուրս էր թռչում ճյուղերի միջից և այդ պահերին յուրաքանչյուրի մեջ հավանաբար նույն միտքն էր՝ ինչպե՞ս խփել այդ թռչուններին: Որքան էլ Աշոտը իր ժամանակին նսեմացրել էր Հասոյի առաջին որսը, բայց ոչ ոք, և ոչ էլ ինքը՝ Աշոտը, չէր մոռացել մոշահավի հիանալի համը: Չէ՛, մասուրով բան չի դուրս գա, պիտի որս անելու հնար գտնել: Որսի միսը կարող էր նրանց ուժ տալ՝ ճամփան բացելու, - մասուրով ճամփա՞ կբացվի...

- Պարսատիկներ շինեցիր, պարծեցար աղջկա առաջ... Ո՞ւր է որսը, - կարծես Աշոտի միտքը կռահելով գրգռեց Գագիկը:

Ի՞նչ աներ Աշոտը, պարսատիկով էլ թռչուն խփե՞լ կլինի, քարը դեռ տեղ չհասած, մոշահավը տեղից պոկվում է: Ավելի հիմնավոր միջոց պիտի գտնել: Գյուղում մի անգամ նա տեսել էր Սարգսին ՞ռագատկայով՞ թռչուններ խփելիս, տեսել էր և նախատել: Հիմա նա պատրաստ էր քաջալերելու այն, ինչ առաջ դատապարտել էր, բայց ռեզին որտեղի՞ց գտներ:

Տղաները, մի քարի տակ հավաքված, խորհրդակցում էին նոր, ավելի արագ և հատու հարվածող զենք շինելու մասին:

- Ռեզի՞ն... ռեզին ես ունեմ, - ձայն տվեց Շուշիկը, որ թփերում և՛ մասուր էր հավաքում, և՛ «մի ականջով» լսում տղաների խոսակցությունը:

Նա իր գուլպաների ռեզինները հանեց և մեկնեց Աշոտին:

- Թո՞ւյլ են... թե՞ մանր թռչուններ խփելու համար պետք կգան:

Սարգիսը Հասոյից խնդրեց դանակը և մի երկճյուղ փայտ պատրաստելով, մեկնեց Աշոտին: Ոչ ոք նրա կողմը չնայեց և տղայի ձեռքը մնաց օդում պարզած...

Աշոտը ինքը երկու փայտ պատրաստեց, ռեզինները ամրացրեց նրանց ճյուղերին և սկսեց քաշքշել, փորձել...

- Թույլ են... Տղե՛րք, եկեք նետ-աղեղ պատրաստենք, - ոգևորվեց նա: - Նետ-աղեղով մենք կարող ենք նույնիսկ արծիվ խփել:

- Այո, նետով միայն արծիվ կսպանենք, հո մոշահավ չենք սպանելու՝ միսը կփչանա, - լրջորեն հաստատեց Գագիկը:

- Վճռված է, - Գագիկի հեգնանքը չհասկանալով շարունակեց Աշոտը: - Ուրեմն, մենք կունենանք ռագատկաներ (որին, կարծեմ, գրական լեզվով ճեղապարսատիկ են ասում), պարսատիկներ և նետ-աղեղներ...

Այդ առաջարկը բոլորից շատ դուր եկավ Հասոյին. նա հանդերում շատ անգամ էր նետ-աղեղ պատրաստել և ծայրերը բութ նետեր արձակել անհնազանդ այծերի վրա, որոնք հարթ տեղերը թողած միշտ բարձրանում էին ժայռերը՝ ոչխարներին էլ մոլորեցնում- տանում իրենց հետևից:

Ժայռերում աճող դալար թփերը շատ ամուր են լինում, այնքան ամուր, որ չորացած վիճակում, երբ խփում ես կացնով, զրնգում են պողպատի նման: Այդ ամրությունը հարավի արևն է տալիս նրանց:

Հասոն մարդու բութ մատի հաստությամբ դալար շիվեր կտրեց վայրի ունաբի ծառաթփից և քիչ անց աղեղների համար կտրած փայտերն արդեն պատրաստ էին, մնում էր շատ ամուր թել գտնել: Մինչ Աշոտը մոլորվել էր, Հասոն հանեց իր թաց տրեխները: Նրանցից յուրաքանչյուրի մեջ մի կտոր եզան կաշի կար. նեղ օրվա համար էր պահում պատանին (ինչպես սովոր էր ամեն բանից նեղ օրվա՞ համար պահելու), թե՞ տրեխների տակը հաստացրել էր, որ քարերի վրայով քայլելիս ներբանները չցավեն: Հասոն վերցրեց դանակն ու սկսեց ՞սրիմ՞ քաշել կաշվից:

Շուշիկը տաք խաշամին նստած իր խատուտիկ աչքերով հետաքրքրությամբ հետևում էր հովիվ տղայի շարժումներին և նրան շփոթմունքի մեջ գցում: Նրա խնդագին հայացքն ասում էր. ՞Տեսա՞ք ինչպես հնարը գտավ՞: Գագիկը թփերում զկեռ էր փնտրում, իսկ Սարգիսը, մեջքը մի քարի հենած, տաքանում էր հեռվում:

Դանդաղ, հավասար ու երկար քուղ քաշեց Հասոն իր ունեցած կաշվի կտորներից, ապա մի փայտի ծայրի կապելով, սկսեց քուղը ոլորել, ձգել ու հետզհետե փաթաթել ձեռքի փայտի կտորին: Բոյնախը նրա դիմաց պպզած՝ սիրալիր նայում էր տիրոջը և աշխատում էր գուշակել, թե ինչ պատրաստություն է տեսնում նա:

Երբ քուղը ոլորած-պատրաստ էր, հանձնեց Աշոտին ու համեստությամբ ասաց.

- Դու ուժեղ ես, առ դու կապիր...
Աշոտը, իհարկե, չառարկեց իր ուժի մասին հայտնված կարծիքին, ծնկի տակ դրեց կռացրեց փայտերից մեկը և նրա դիմադրական ուժից տղայի երակները ուռան:
- Կապի՛ր, - փնչաց նա:
Հասոն քուղը կապեց աղեղի երկու ծայրերին և երբ Աշոտը բաց թողեց, քուղը չդիմացավ շտկված փայտի ուժին և կտրվեց: Մնացին մոլորված:
- Ոլորենք երեքտակ, ի՞նչ ես մտածում, - մեջ մտավ Շուշիկը:
Եղած քուղը նա երեքտակ դարձրեց, ոլորեց, ստացվեց այնպիսի փոկ, որ «գոմեշն էլ չէր կտրի», ինչպես բնորոշեց Հասոն: Եվ երբ արդեն աղեղը պատրաստ էր, Աշոտը մատով ձգեց ու նորից բաց թողեց նրա լարը և հաճույքով տեսավ, որ նա դողդողում է գզրարի պրկված աղեղի նման:
Այդ ձևով պատրաստեցին ևս երկու աղեղ:
Շուշիկը ձեռքերը շփում էր իրար և հրճվում, չէ՞ որ ինքը մասնակցություն է ունեցել խմբի համար զենք շինելուն:
- Հա՛, լարը ուժեղ ստացվեց, խուշկե Շուշիկ, սրանով կարելի է հո արջ էլ սպանել, - կատակելու փորձ արավ Հասոն, որով շատ ուրախացրեց աղջկան:
Մնաց նետեր շինելը: Դե նետ պատրաստելուց էլ հեշտ բա՞ն:
Ծանր ու չոր ձողերից պատրաստված նետերը ևս հաջող դուրս եկան:
- Լավ կլինի ամենքի ծայրին կայծքարի մի սուր կտոր ամրացնենք, - առաջարկեց Աշոտը:
- Սարգիսը կայծքար լավ է գտնում, Աշո՛տ, այդ էլ նրա՛ն հանձնարարենք, - մեջ մտավ Շուշիկը: Նա առիթ էր որոնում ընկերներին հաշտեցնելու Սարգսի հետ:
- Չէ, ժամանակը չի, - առարկեց Աշոտը: - Չէ՞ որ ձեզ հետ միասին որոշել ենք բոյկոտով ազդել նրան... Գագի՛կ, ման արի, տես կայծքար կգտնե՞ս:
- Սևը՛, սևը՛, սպիտակը պետք չի, - լրացրեց Հասոն: Նա լավ գիտեր, որ ճերմակ և դեղին կայծքարերը թեև լավ կրակ են հանում, բայց սուր եզրեր չունեն: - Էն, որին «սատանի եղունգ» են ասում:
- Իսկ երկրաբանի լեզվով՝ «հրաբխային ապակի»:
Շուշիկը նկատեց, որ տղաների ձայները լսելուն պես Սարգիսը, որ քարին հենված ննջում էր տաք արևի տակ, սթափվեց, վեր կացավ տեղից և սկսեց կուզեկուզ պրպտել ժայռի խոռոչները, պարզ է, որ կայծքար է փնտրում, ուրեմն և կամուրջ է փնտրում ընկերներին միանալու...
Այդ մտքից Շուշիկը, որ բնականից զգայուն սրտի տեր աղջիկ էր, զգացվեց: «Խե՜ղճ տղա... երևի ծանր բան է մենակությունը...»:
Ինչպե՞ս համոզի այս հաստակողին: Ստիպե՞ս, մեկ էլ տեսար մի նոր կոպտություն՝ ու պառակտումը խորացավ: Իսկ նա այնքա՜ն էր վախենում պառակտումի՜ց... Հենց մեկը մի փոքր խախտում էր տակտը, նա լարվում էր. չլինի՞ կոնֆլիկտ առաջանա, չլինի՞ կռվեն... Ա՜խ այս տղաները, որ աքաղաղների նման միշտ իրար կատար են արյունոտում: Չի՞ կարելի, որ միշտ հաշտ լինեն իրար հետ, միշտ մեղմ ու սիրալիր...
Այս մտքերի մեջ էր Շուշիկը, երբ անհամարձակ քայլերով մոտեցավ Սարգիսը և, առանց Աշոտին նայելու, մի բուռ պսպղուն ու սև քարեր թափեց նրա առաջ:
- Վա՞յ, ինչ սուր են, - թռվռաց Շուշիկը, բայց Աշոտի խիստ հայացքին հանդիպելով՝ հիշեց կոլեկտիվի դրած պայմանն ու լռեց:
- Քար հո չի, ածլի է, ածլի, - ձեռքի կայծքարը գովալով ներքևից գալիս էր Գագիկը:
Աշոտը նրա բերած կայծքարը ջարդեց և այնպիսի սուր կտորվածք ստացավ, կարծես փշրված ապակու կտորներ լինեին՝ ասեղի նման սուր ծայրերով և դանակի նման կողերով:
Սարգիսը նյարդային մի շարժումով շուռ եկավ ու գնաց, բայց Աշոտը կարծես չնկատեց էլ նրա ո՛չ մոտենալը, ո՛չ բերած քարերը, ո՛չ հեռանալը: Իր գործով կլանված, նա դանակի ծայրով փոքրիկ ճեղքեր էր անում նետերի ծայրերին, մի-մի կտոր քար հագցնում, բութ մատով ստուգում ծայրի սուրը ու բարակ թել փաթաթում-ամրացնում:
Երբ ամեն ինչ պատրաստ էր, Աշոտը ոգևորված վեր կացավ.
- Դե՛հ, հիմի ինձ ու քեզ կտեսնենք, - դիմեց նա Հասոյին:

- Գնում եք որսի, էլ մրցելս ո՞րն է, - անհանգստացավ Շուշիկը. երկյուղ ուներ, որ Հասոյին կարող է վիրավորել Աշոտի գոռոզ ու գրգռող տոնը: Բայց Հասոն այնպես համեստ ու ներողամտաբար էր ժպտում, որ թվում էր ոչ մի բանով չես հանի նրան ափերից:
- Դո՞ւ ուր ես գալիս, - շուռ գալով հարցրեց Աշոտը Գագիկին:
- Սպանածներդ հավաքելու...
- Ես էլ Հասոյի սպանածները կհավաքեմ, - ծիծաղեց Շուշիկը: - Մենք ձեր որսը շալակողներն ենք...
Ընկերների այդ զվարթ խոսակցությունը հասնում էր Սարգսի ականջին, պղտորում էր նրան ու ստիպում լուրջ մտածել իր բռնելիք դիրքի ու վարքի մասին...
Զարմանալի բան, այդ փայտե զենքերն ուժ ու ինքնավստահություն էին ներշնչել մեր պատանիներին: Կատակ բան չի է՛, նրանք նետ ու աղեղ ունեն նախամարդու նման... Աշոտը տնտղում էր թևին հագցված լայնալիճ աղեղը, շոշափում նրա պրկված լարը, որ դրնգում ու դողդողում էր սազի ձգված լարի նման և հրճվում էր, հրճվում... Նրա հոգին ճախրում էր այն մտքից, որ ինքը նախնադարյան որսորդի է նման, նորից շարժվել էին ցնորքները նրա փոքրիկ ուղեղում:
«Հիմի, շեկլի՛կս, կտեսնես, թե ով եմ ես...», -կարծես ասում էին Շուշիկին ուղղված հայացքները, երբ նա թփերը փշրելով առաջ էր գնում ու երբեմն շուռ գալիս նայում իրեն հետևող աղջկան:
Մի սև մոշահավ (կեռնեխ) թռավ ճչալով և տասը քայլի վրա նորից իջավ, այդպես է մոշահավը, նրա «մանգզիլը» տասը-քասը քայլ է: Միշտ թփերի մեջ է նա, թփերն են նրա պաշտպանը. հեռու թռչելու կարիք չունի այդ թռչնակը և այդպես էլ կարճ թռիչքները սովորություն են դարձել նրա համար:
Մինչ մոշահավը շուռ էր եկել և պոչը ցնցելով ճչում էր անհանգիստ, Աշոտը չոքեց, ուժգին քաշեց լարը և նետը բաց թողեց: Թռչնակը քարի նման ցած ընկավ, որին հետևեց մեր պատանիների ճիչն ու աղմուկը: Այնպիսի ուրախություն էր պատել նրանց, կարծես այծյամ էին խփել, կամ մի մեծ թռչուն, համենայն դեպս, ոչ փոքր վայրի հնդուհավից...
Կանգնել էր Աշոտը խփված թռչունը ձեռքին, երջանկությունից հրդեհվող դեմքով, գոհունակությունը սիրուն աչքերի մեջ:
Հասոն իր աղեղը հանդիսավոր կերպով դրեց նրա ոտքերի տակ ու ետ քաշվեց:
- Չեղա՛վ, չեղա՛վ, մի՛ հանձնվիր, - բողոքեց Շուշիկը: - Դեռ հայտնի չի... գուցե դու ավելի շատ կխփես...
Այդպես աղմուկով նրանք շրջեցին թփուտները և ծախսեցին իրենց բոլոր նետերը:
- Օ՜Ֆ, մեջքս կոտրվեց որսի ծանրությունից, - կռացած գանգատվում էր Գագիկը՝ Շուշիկին աչքով անելով: Նա մի թել էր կապել մոշահավի վզից, ուսն էր գցել ու նրա «ծանրության տակ» քայլում էր կռացած, տնքալով...
Ինչ աներ Աշոտը, ծաղրը կուլ պիտի տար: Բայց դժվար էր կուլ տալ ու մարսել այն, ինչ վերջում արավ Հասոն, իր արձակած նետերից նա գտավ մի քանի հատ և շեշտակի հարվածներով երկու կեռնեխ սպանեց:
- Ուռա՛, - թռվռում էր Շուշիկը և Աշոտին ակամա մտածել տալիս. «Ինչո՞ւ իմ խփածի վրա չուրախացավ...»: Դրանից ընկավ նրա տրամադրությունը:
Տեղն ու տեղը կրակ արին, փետրեցին թռչունները, Բոյնախին հասանելիք բաժինը հում վիճակում տվին իրեն, մնացածը խորովեցին:
- Իսկ Սարգսի բաժինը՞, - հարցրեց Շուշիկը անհամարձակ:
- Նրան ո՞վ է զրկել բաժնից, որ հիշեցնում ես, - նեղացավ Աշոտը: - Ինձ կարգ մի սովորեցնի, ես կարգը լավ գիտեմ: Ես պատրաստ եմ նույնիսկ թշնամուս հետ կիսելու իմ խփած որսը, այդպես է որսորդական կարգը... Գնանք նրա մոտ, համ միասին ուտենք, համ բան ունեմ ասելու...
Նրանք խորոված թռչունները վերցրին և հասնելով Սարգսին, նրա բաժինը լուռ դրին առաջը՝ չորացած տերևների վրա:
Տղան շփոթվեց, կարմրեց, բայց վերցրեց իր բաժինը: Կերավ անհարմարությունից քրտնելով, ապա վեր կացավ կանգնեց իր ողջ հասակով մեկ և բերանը բացեց, որ զղջման խոսք ասի, հավաստիացնի կոլեկտիվին, որ ինքը կաշխատի չխախտել ընկերության կանոնները, բայց քաջություն չունեցավ լռեցնելու իր հիվանդոտ ինքնասիրությունը: Նրան առանձնապես հակառակեցնում էր Աշոտի ամբարտավան տոնը: Ուստի կեղծ հազաց, քար նետեց դեպի ձորը և այնպես ձևացրեց, թե իբր ինքը

բան չունի ասելու կոլեկտիվին և առանձնապես չի էլ հետաքրքրվում, թե իր մասին ինչ կարծիքի են ընկերները:
Բայց, իհարկե, բոլորն էլ զգում էին, որ խմորում է տեղի ունենում նրա հոգում...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչն էր այնքան թանկ Աշոտի համար

Երեկոյան, երբ օջախի շուրջը բոլորած նրանք զրույց էին անում և հեքիաթ պատմելու հերթը հասել էր Աշոտին, սա հայտարարեց, որ ինքը հիմա հավաքույթում պետք է խոսի մի հարցի՝ ընկերասիրության մասին:
«Ի՞նչ հավաքույթ, ի՞նչ բան... Հովազաձորում է՞լ ազատ չենք հավաքույթից...», - մտածում էր Գագիկը և ուզում էր բողոքել բարձրաձայն, բայց Աշոտն արդեն սկսել էր:
- Վախենում եմ էլի քարոզներ կարդաս գլխներիս, - առանձին, այնպես որ Շուշիկը չլսի, այնուամենայնիվ զգուշացրեց Գագիկը:
- Իսկ զրույցը հավաքույթում դու պատկերացնո՞ւմ ես առանց խրատի, առանց դատողությունների, - վրդովվեց Աշոտը: - Քեզ որ մնա հավաքույթներում անեկդոտներ կպատմես...
- Ախր, Աշո՛տ...
- Ոչ մի ախր, նստիր ու ականջդ կախ լսիր, ինչ որ ասում են: Եթե ինձ եք ընտրել, ապա բարի եղեք ենթարկվել և ոչ թե բան սովորեցնել...
Եվ Աշոտը սկսեց իր զրույցը՝ իրեն հատուկ վերամբարձ և պաշտոնական ոճով: Է՛հ, ի՞նչ աներ, նա համոզված էր, որ հավաքույթում հենց այդպես էլ պետք է խոսել...
- Ընկերը նեղ օրերին կճանաչվի, - ասել են մեր իմաստուն պապերը, - սկսեց նա: - Եվ իսկապես, այստեղ՝ նեղության մեջ՝ մի քանի օրում մենք իրար ավելի լավ ճանաչեցինք, քան դպրոցում, թեև այնտեղ ահա յոթ տարի է, որ ընկերություն ենք անում...
Աշոտն այս ասելիս Սարգսի կողմը չէր նայում, բայց սա լավ գիտեր, թե ում են ուղղված այդ խոսքերը, ուստի գլուխը կախ նայում էր ձորին, բայց ուշադրությունը խոսողի կողմն էր:
- Դու էլ՝ ընկե՛ր, ընկե՛ր... Մեկից որ օգուտ չկա, նրա հետ ի՞նչ ընկերություն անես, - Սարգսի կողմն աչքով անելով՝ տեղից վրա բերեց Գագիկը:
Սարգիսն այդ ևս հասկացավ և կուլ տվեց:
- Հիմի տեսեք ես ինչպես եմ հասկանում ընկերասիրությունը, - շարունակեց Աշոտը:
Նա ասաց, որ երբ պատվիրում են, թե՝ սիրիր ընկերոջդ, նվիրված եղիր նրան, դա հենց այնպես, քաղցր-մեղցր խոսք չի: Դա կյանքի պահանջն է, ապրելու պահանջը: Դա հո այնպես վերացական բան չի: Կոնկրետ, եթե ընկերական սիրով կապված լինեն իրար հետ, կապրեն՝ իրար օգնելով, իրար սիրտ տալով, ցուրտ ժամանակ իրար տաքացնելով, քաղցի ժամանակ իրար համար ուտելիք գտնելով, վտանգի դեպքում իրար պաշտպանելով: Կենտ-կենտ ընկնեին Հովազաձորի նման տեղեր, նույնիսկ կրակ չէին ունենա ու ցրտից կոչնչանային: Եթե նույնիսկ ամեն բանն էլ առատ լինի մարդ մենակությունից կխելագարվի...
Ուրեմն, ընկերասիրությունը հենց այնպես, վերացական բան չի: Նա մեծացնում է մարդկանց ուժը, անհաղթելի է դարձնում նրանց՝ բնության դեմ մղվող պայքարում: Եթե չլիներ ընկերասիրությունը, դաշտում ինչպե՞ս պիտի հարյուրավոր մարդիկ աշխատեին միասին...
- Առանձնապես այստեղ, Հովազաձորում, մեզ օդի ու ջրի նման հարկավոր է ընկերասիրությունը, քանի որ առանց ընկերոջ այստեղ մեզնից ոչ ոք ապրել չի կարող և ոչ ոք չի կարող մենակ բացել ճամփան ու դուրս գալ այս բերդից, - ներշնչում էր Աշոտն ընկերներին: - Այդ բանը օղ արեք ձեր ականջներին: Իսկ ով այդքան գիտակից չի լինի՝ իրեն դուրս կդնի կոլեկտիվից և այնպես կտուժի, որ կզղջա: Անպայմա՛ն կզղջա: Այդ պատճառով էլ ես իմ պատմությունը նվիրում եմ այդ հարցին: Ուզում եմ պատմությանս նյութը հենց բնությունից էլ վերցնել:
Ինչպես գիտեք, մեր յայլաղում ջուր քիչ կա: Երաշտ տարին եղած մի քանի աղբյուրները ցամաքում են և սարվորներն սկսում են ջուր կրել լեռան կատարի Կապույտ լճից: Այս ամառ երկու շաբաթ ես սարում

մնացի: Գնում էի լճի ափին ծաղիկների մեջ պառկում ու գիրք կարդում, մեկ-մեկ էլ քար էի նետում բադերին:
Արդեն ցրտել էր, առավոտները երկինքը կանաչի վրա եղյամ էր դնում: Ադրբեջանցի հովիվներն ասում էին՝ Ղույրուղը ծնվել է, քոչելու ժամանակն է, թեև, ճիշտն ասած, Հասո՛, ես չհասկացա, թե ինչ բան է այդ Ղույրուղը և եթե նա ծնվի, ինչու պետք է մենք մեր սիրուն սարերը թողած՝ իջնենք տխուր ձորերը:
Ստվերի մեջ Հասոյի ճերմակ ատամները պսպղացին:
- Դա իմ հերն էլ է ասում, ինձ էլ ցույց է տվել, - ասաց նա: -Ղույրուղը աստղ է, վառ աստղ, «Շամփուր-կշեռքի» ծայրին: Դա որ ծնվում է, այսինքն իրիկնադեմին երկնքում երևում է, սարում գիշերները միանգամից ցրտում է: Ու մեզ հետ ընկերություն անող ադրբեջանցի չոբանները հենց այդ աստղը տեսնում են երկնքում, մյուս օրը վրանները հավաքում են քոչում... Հա՛, հետո՛, խոսքդ ասա...
- Ասեմ: Որ Հասոյի ասած այդ աստղը երևաց երկնքում, ադրբեջանցիները սկսեցին քոչի պատրաստություն տեսնել, մենք էլ հետները:
Մորս հետ վերջին անգամ Կապույտ լիճը ջրի գնացինք, մեկ էլ երկնքից ձայն լսվեց: Վերև նայեցինք, տեսանք կռունկները շարվեշարան հյուսիսից գալիս դեպի հարավ են գնում: Նրանցից մեկը նկատեց ջուրը և խմբից ջոկվելով, իջավ: Այդ որ տեսավ, ընկերը նույնպես անջատվեց երամից, եկավ լճի վրա պտույտներ գործեց, ճչաց-կանչեց՝ ոչինչ չօգնեց, ընկերը փռվել էր լճի ափին, մեզնից քիչ հեռու ու խղճալի ձայն էր հանում: Չհասկացանք՝ թև՞ն էր վնասվել, հիվա՞նդ էր, թե ուժասպառ էր եղել երկար ճանապարհորդությունից: Վերևում պտտվող կռունկը մնացել էր մոլորված՝ խմբի՞ն հետևի, թե՞ իջնի ընկերոջ մոտ... Նա, իհարկե, գիտեր, որ երամը սարն անցկացավ՝ իր բանը վերջացած է, մենակ ո՞ւր պիտի գնա: Բայց չուզեց հիվանդ ընկերոջը մենակ թողնի ու իջավ մոտը:
Մենք թողեցինք հեռացանք:
Յայլաղից Կապույտ լիճը չի երևում, բայց մենք մինչև ուշ գիշեր լսում էինք կռունկի ձայնը, նրանցից ո՞րն էր ձայն հանում, ի՞նչ էր ուզում...
Առավոտյան կոլխոզի ավտոները եկան, բայց ուշքս-միտքս կռունկների կողմն էր, իսկի քոչի հետ կգնայի՞ որ... Ղանձիլ քաղելու պատրվակով սարը պատ տվի ու դուրս եկա Կապույտ լճի վերևը: Էլի՛ ճչում է, էլի՛ ծվում է... Նայեմ ի՞նչ տեսնեմ՝ առողջ կռունկը կտուցով վեր է քաշում իր թուլացած ընկերոջը ու ձայն է տալիս, մղկտում, երևի համոզում է, որ իր հետ օդ բարձրանա, միասին թռչեն-գնան հասնեն իրենց երամին...
Շատ մնացի ես այդ լանջին նստած, աչքս լճի ջրերին, ականջս կռունկի ձայնին: Երեկոյան դեմ ստիպված եղա հեռանալ: Ու քանի հեռանում էի լճից, այնքան հեռանում էր և իր ընկերոջ համար երամից ետ մնացած կռունկի ձայնը... Գնում էի ու ցավով մտածում, թե մեզ մոտ մարդիկ կան, որ հազար անգամ խելոք ու գիտակից են այն կռունկից, բայց սիրտ չունեն, ընկերոջ համար իրենց կյանքը վտանգի չեն ենթարկի, ինչպես այն անլեզու թռչունը...
- Հետո՞, հետո՞, ինչ եղավ, ընկերոջը հետը տարա՞վ, - անհամբեր հարցրեց Շուշիկը, որ շատ էր ազդվել այդ պատմությունից:
- Չգիտեմ, ես այլևս սար չբարձրացա, և չգիտեմ գոնե ինքը գնա՞ց հասնելու երամին, թե՝ մնաց մեռնող ընկերոջ մոտ: Միայն երբ ձյուն եկավ սարում, հովիվներից մեկը պատմել էր իր ընկերներին, որ Կապույտ լճի մոտ շատ փետուրներ է տեսել ցրված, աղվեսները թռչուն էին հոշոտել...
Պատանիները մի քանի րոպե լուռ մտածում էին: Ի՜նչ քնքուշ սրտի տեր արարածներ կան աշխարհում...
- Հերթն ի՞մն է, թե՞...
Ու Գագիկը նայեց Սարգսի կողմը:
- Նրանն է, բայց նա մեզ բան չունի ասելու: Պատմի՛ր, - խստությամբ շպրտեց Աշոտը, թեև դրա համար Շուշիկից մի հանդիմանական հայացք ստացավ:
- Լա՛վ, պատմեմ: Այս ամառ, ոնց որ գիտեք, ես էլ գնացի Շահալվի պիոներական ճամբարը: Իմ բախտն ինձ հետ է. իմ քեռու տղա Գրիգորի նման ուր գնում եմ համեղ ուտելիքի եմ պատահում. անտառում վայրի մեղվի մի ընտանիք գտանք: Անիրավ մեղուները ծառի փչակը լցրել էին մեղրով, ի՜նչ մեղր, որ արևի տակ ծորում էր, ոնց որ ադամանդներ թափվեին ցած:

Փչակը մաքրազարդեցինք, խեղճ մեղուները մնացին առանց պաշարի, իսկ մի մասն էլ զոհ գնաց, դե կողոպուտը հո առանց զոհի չի՛ լինի...
Բայց դա էժան չնստեց մեզ: Դրանից հետո մի ամիս մնացինք Շահալվում ու մի ամիս շարունակ այդ մեղուները անտառում ում որ պատահում էին մեր ճամբարից՝ վրա էին հասնում խայթում: Որ ասեմ այդ մի ամսվա մեջ ճամբարի բոլոր պիոներներին էլ խայթեցին անտուն մնացած այդ միջատները՝ հավատացե՛ք: Մի ծեր մեղվաբույծ ասում էր՝ բա հե՞շտ է դրանց հանրային սեփականությանը ձեռք տալ... Համ էլ, ասում էր, իրենց սպանված ընկերների վրեժն են հանում... Վրեժ էին հանում, ճիշտ է, բայց խայթողը մեռնում էր... Մեռնում էր կոլեկտիվի՛ համար, ընկերո՛ջ համար, - ձայնը բարձրացրեց Գագիկը և մի շանթող հայացք նետեց Սարգսի կողմը:
Տիրեց անհարմար լռություն: Երեք օրվա բոյկոտից հետո բոլորն էլ, կարծես խոսքները մեկ արած՝ Սարգսին էին նստում:
Սա չդիմացավ այդ հայացքներին, վեր կացավ և մռայլ ու մոլոր դուրս գնաց:
- Ի՞նչ եք կարծում, տե՞ղ է հասնում, թե չէ, - դեպի անձավի շեմքն աչքով անելով՝ հարցրեց Աշոտը:
- Կաց, պապիս առածով պատասխանեմ, գայլի գլխին ավետարան էին կարդում, ասաց՝ շուտ արեք, ոչխարը սարն անցկացավ...
- Չար ես դու և չար կատակներ ես անում, - վրդովվեց Շուշիկը: - Ինչո՞ւ համար են քո այդ...
Նրա խոսքը կիսատ մնաց. Սարգիսը ներս մտավ և զգալով, որ իր մասին են տաք-տաք վիճում, շեմքին կանգ առավ:
Այրում տիրում էր նույն անհարմար լռությունը, ինչ քիչ առաջ: Եվ այդ լռությունը արճճի նման ճնշում էր տղային:
Ի՜նչ ծանր բան է եղել մենակությունը...
Եվ նա նախանձեց նույնիսկ հովիվ Հասոյին, որին ընկերներն այնպես սիրալիր են նայում, իսկ իրեն՝ արհամարհանքով:
Կա՞ աշխարհում ավելի ծանր բան, քան այն, երբ ընկերներդ երես են դարձնում քեզնից...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես, այնուամենայնիվ, մարդս գտնում է կենդանուն խաբելու և նրան իր ստամոքսին ծառայեցնելու հնարը

Այդ երեկո, քնելուց առաջ, Հասոն հարցրեց Աշոտին.
- Գիտե՞ս արևը մտնելիս որտեղ էի...
- Իսկապես, դու մի ժամանակ անհետացար, թփերում մասո՞ւր էիր ուտում:
- Ես ընկերից թաքուն բան չեմ ուտի, - արժանապատվությամբ և բոլորի համար էլ անսպասելի խստությամբ կտրեց Հասոն: Ոչ ոք չնկատեց, թե նրա այդ խոսքից ինչպես ցնցվեց իր տեղում դեմքը դեպի առաստաղը պառկած Սարգիսը. նրա կողմը ոչ ոք չէր նայում:
Ապա Հասոն տոնը մեղմացրած շարունակեց.
- Նայում էի, թե ճնճղուկները որտեղ են թառում:
- Հետո՞... տեսա՞ր...
- Տեսա: Կաքավի քարի տակ մի խոր զաղա[10] կա, մտան նրա մեջ:
- Շա՞տ էին, - վրա նստեց Աշոտը:
- Շա՛տ... Ամեն կողմից եկան լցվեցին: Ի՞նչ հնար կա նրանց բռնելու, չգիտե՞ս...
- Վա՛հ, այ տղա, բա ինչո՞ւ շուտ չես ասում: Վե՛ր կացեք....
Եվ Աշոտը այնպես հապճեպորեն վեր կացավ տեղից, կարծես եթե մի քիչ էլ ուշանար՝ ճնճղուկները կչքանային:
- Դանակդ տուր, իսկ դուք էս խոտից փաթաթեցեք փայտերի գլուխը...
Նա արագ դուրս գնաց և քիչ անց հետը քարշ տալով բերեց արմատից կտրված մամխի թփերը: Դրանք իրար խճճված խիտ ճյուղեր ունեին, որոնք ծածկված էին բազմաթիվ փշերով:

---

[10] Զաղա - այր

Աշոտը դանակով տաշեց-մաքրեց այդ թփերի կոթերը, բռնելու տեղ պատրաստեց և ընկերներից յուրաքանչյուրին մի-մի ճյուղ հանձնելով, պատվիրեց.
- Հետևիցս եկեք...
Է, Գագիկը մինչև չհավաստիանար գործի հաջողության մեջ, տեղից կշարժվե՞ր...
- Մի՛տքդ բացատրիր, - համառորեն պահանջեց նա:
- Դմբո՛, ձմեռը մարագում ծիտ որսած չկա՞ս, - բարկացավ Աշոտը:
Գագիկը գլուխը բացասաբար շարժեց.
- Նրանք ի՞նչ քաշ ունեն, որ ժամանակ կորցնեի որսայի...
- Քաշ չունեն, բայց ծտի շորվան հրաշալի է, իսկ փլավը՝ անմահական: Լսիր, թե ոնց է դրանց խփելու ձևը. հենց որ ցրտին լցվեցին ներս՝ դարմանի մեջ տաքանալու, մարագի դուռը կիսաբաց արա ու դեմը մամխի ճյուղը շարժիր օդում: Խրտնած ծտերը դուրս են թռչում, իսկ դու օդում հա՛ թափահարիր ձեռքիդ ճյուղը: Գնա՛նք... Հասո, շունը կապիր թող մնա...
Նրանք վերցրին երկու վառվող ածխակոթ, իրենց պատրաստած խոտի «ջահերը» և դուրս եկան այրից: Մի «ջահ» և մի մամխի ճյուղ էլ ինքը վերցնելով, Սարգիսը առանց հրավերի հետևեց նրանց:
Դրսում խավար չէր, պարզ երկնքից աստղերը նայում էին ճերմակ ձյան սավանին ու ցրում մութը: Մի տեսակ գորշ գիշեր էր, կարծես արևը վաղուց մայր էր մտել, բայց դեռ չէր մթնել: Շուրջը քնած էր ամեն ինչ խաղաղ քնով, կարծես նիրհում էին և սեպ-սեպ ժայռերը, երկնքի ֆոնին ուրվագծված իրենց ֆանտաստիկ աշտարակներով...
Հասոյի հետևից ընթացող խումբը անձայն տեղ հասավ և կանգ առավ մի անձավի մութ երախի առաջ: Զարհուրելի էր նրա ներսը. հետաքրքիր է, ի՞նչ է Աշոտի միտքը, պիտի ջահերո՞վ մտնեն, թե՞... Չէ՛, ջահերը նա վերցրեց ընկերների ձեռքից և դրեց մի կողմ, ածխակոթերը նույնպես՝ ծխացող ծայրերն իրար դեմ արած: Ապա Գագիկին մի կողմ տարավ, ականջին ինչ-որ բան փսփսաց ու իր վերարկուն հանձնեց նրան: Ձեռքի փշփշոտ ճյուղը առաջ մեկնած, նա մտավ անձավը և նշան տվեց արագ հետևել իրեն:
Երբ ընկերները լուռ, չարքերի նման կուլ գնացին անձավի խավարին, Գագիկը բացեց ձեռքի վերարկուն, նրանով փակեց անձավի մուտքը և նրա հետևն անցած՝ պահեց բաց առագաստի նման. վերարկուի հետ միասին նրանք մի ծուռումուռ դուռ էին կազմել, որով և փակել էին անձավի մուտքը:
Հենց նա մուտքը փակեց, ներսից աղմուկ լսվեց և բազմաթիվ թևերի շափշափյուն: Քնահարամ եղած և սարսափահար ճնճղուկները պատեպատ էին դիպչում, բնազդով թևածում էին դեպի դուռը և վերարկուին խփվելով՝ ետ էին փախչում ու տագնապալի պտույտներ գործում մթին քարայրում... Իսկ մեր «որսորդները»: Նրանք ոչինչ չէին տեսնում և տեսնելու կարիք էլ չկար, օդը լիքն էր թռչող արարածներով, հարկավոր էր միայն փշոտ ճյուղը գլխից վեր պահած պտտել ուժգին...
Շատ ճնճղուկներ թափվեցին այդ կույր հարվածներից, շատերն էլ մտան այրի ճեղքերը, բայց ահարկու գոռում-գոչյուններից նորից դուրս պրծան սարսափահար և զոհ գնացին օդում շեշտակի դես-դեն հարվածող փշոտ թփերին:
Հետաքրքրությունից մղված Գագիկը իջեցրեց վերարկուն և գլուխը ներս խոթեց: Այդ պահին մեկն իր փշով հարվածեց նրա բաց գլխին, - մթնում ինչ հասկանաս գլո՞ւխ է, թե՞ քար...
Տղան ետ ցատկեց:
- Այ մարդ, ճնճղուկները վերջացրիք հիմի էլ ի՞նձ եք որսում, - գոռաց նա:
Հարվածողը փորը բռնած ծիծաղում էր, իսկ կենդանի մնացած թռչունները դուրս էին փախչում:
- Փակի՛ր, Գագի՛կ, դուռը փակիր, - ներսից գոչում էր Աշոտը:
- Չէ՛, ախպեր, ես հանդում գտած ձրի գլուխ չունեմ, որ հասնողը խփի... Օ՛ֆ... մի լույս վառեցեք..
Ածխակոթերը փչեցին, նրանց վրա դրված «ջահը» բոցավառվեց: Չէր կարելի նայել Գագիկի ճանկռված ճակատին և չծիծաղել: Նա իր գլխի սև «քյաքուլի» միջից մի ջարդված փուշ հանեց և Աշոտին մեկնելով նեղացած արտասանեց.
- Համա որս ես անում հա՛... Դրա համա՞ր ինձ շեմքին կանգնեցրիր, որ սուտ շշկլվես կարկաջիս հասցնես...

- Ոչի՛նչ, Գագի՛կ, քեզ մի ծիտ ավելի կտանք: Շուշի՛կ, ջահդ ներս բեր, տեսնենք ինչ է իրենից ներկայացնում մեր պատերազմի դաշտը:
Իսկապես որ պատերազմի դաշտ... Այրի որմե հատակին այստեղ-այնտեղ թափթփված էին փշերին զոհ գնացած ճնճղուկները:
Շուշիկի սիրտը չդիմացավ, նա շուռ եկավ:
- Վերցրեք ջահը, ես դուրս եմ գնում... Դուք խիղճ չունեք...
«Պատերազմում» տաքացած տղաների գլխին կարծես սառը ջուր լցրին: «Իսկապե՜ս, այս ի՞նչ բարբարոսություն էր...»: Եվ բնասերի իր ապստամբած խիղճը հանգստացնելու համար, Աշոտը մռթմռթաց.
- Լենինգրադի պաշարման ժամանակ մարդիկ իրենց մեծացրած կատուներին էին մորթում... Ի՞նչ անեին, իրենց կյա՞նքն էր թանկ, թե՞ կենդանունը...
Տղաները հավաքեցին իրենց որսը, լցրին գլխարկները և ճամփա ընկան դեպի տուն:
Խմբի վերջից այս անգամ ընթանում էր Հասոն: Այդպես էր նա. տնից հանդ գնալիս՝ ավանգարդում, վերադառնալիս՝ արյերգարդում, այսինքն միշտ վտանգի առաջին գծում:
Շատ են զարգացած բնության մեջ մեծացած մարդու զգայարանները, այդ թվում գիտության համար անգամ դեռ անորոշ «վեցերորդ զգայարանը»: Դրա շնորհիվ չէ՞ր, որ Հասոյին թվաց, թե մի զույգ աչքեր հետևից շեշտակի նայում են իր ծոծրակին: Նա շուռ եկավ և նկատեց, որ թփերի մեջ ֆոսֆորային սառը շողով մի զույգ աչքեր շողացին և անհետացան:
«Գազա՛ն էր...», - անցավ տղայի մտքով և նա ձեռքի ածխակոթը օդում շարժելով արագացրեց իր քայլերը:
Այդ դեպքի մասին նա ոչինչ չասաց ընկերներին. «Կվախենան, լավ չի...»:
«Ի՞նչ գազան կարող է լինել այստեղ... Որտեղի՞ց և ո՞նց է եկել...», - գիշերը մտածում էր նա:
Մի բան նրա համար պարզ էր, որ գայլ չէր իր տեսածը, գայլի աչքերը նա ճանաչում էր...
«Գայլը չի կարող էս ձորը մտնել... Նա ուրի՛շ բան էր...», - մտածում էր տղան կեսգիշերին, երբ ընկերներն արդեն քնած էին, երջանիկ իրենց հաջող որսով:
Բայց Աշոտին այլ մտքեր էին հուզում այդ գիշեր: Մինչև հիմա նրանք փակված ճամփան բացելու փորձ չէին անում, որովհետև քաղցը ժամանակ չէր տալիս, նա հրամայողաբար պահանջում էր սնունդ ճարելուց բացի ուրիշ ոչ մի բանի մասին չմտածել: «Հենց որ կշտացանք և մեկ-երկու օրվա սննդի պաշար ունեցանք, կարելի է սկսել...», - նախորդ օրերին ասել էր Աշոտն ընկերներին և ստացել նրանց հավանությունը: Այժմ սնունդը կա, էլ ինչի՞ն էին սպասում:
«Վաղը փորձում ենք բախտներս... Բայց ինչո՞վ... Գործիք չունենք... Դանակով թիա՞կ կշինվի... Մեր բակում ընկած էն կոտրած թիակն էստեղ լիներ...»:
Քունը վրա հասավ և այնպես էլ Աշոտը չկարողացավ որոշել, թե ինչով կարելի է բացել փակված ճամփան: Երազում այդ հարցը ինքն իրեն լուծվեց, բոցամուղը (ֆարսունկա) ձեռքին թեժ բոցի հոսանքը նա ուղղում էր կուտակված ձյուներին և Դիվային կածանը հալվում-բացվում էր անհավատալի արագությամբ:
- Հետևիցս եկեք, - անզուսպ ուրախությամբ գոչում էր նա՝ բոցի հետևից արագացնելով ընթացքը: Ընկերները՝ շարք կազմած՝ իր հետևից գնում էին դեպի ազատություն թե՛թև, ուրա՛խ...
Աշոտը ետ նայեց՝ հո Սարգիսը էլի ետ չի՞ մնում: Չէ՛, «Հիմի ե՞տ կմնա որ», - ներողամտորեն ժպտաց նա: Իսկ բոցամուղը հրեղեն վիշապի նման իր ռունգներից ծուխ ու հուր արձակելով հալեցնում-ոչնչացնում էր իր ճամփին պատահած ամեն բան:
Դեպի տո՛ւն... Դեպի տո՛ւն...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ. Թե ինչպես գնդակը գտնում է վախկոտին, որտեղ էլ որ պահած լինի նա իր գլուխը

Գերության տասնմեկերորդ օրը...

Հովազաձորում փակվելու պահից սկսած այդ օրը ամենից ուրախն էր մեր պատանիների համար: Նրանք այժմ զինված էին ոչ միայն քարե գործիքներով ու պարսատիկներով, այլև դիպուկ խփող նետ-աղեղներով: Իսկ թե նետ-աղեղն ինչ զենք է, դրա մասին վկայում են անձավի անկյուններում ցրված սև փետուրները... Բայց ոչ, ամենից ուրախալին այն էր, որ...
Լավ, հերթով:
Լույսը բացվելուն պես նրանք վեր էին կացել, ձյունով «լվացվել», կրակը թեժացրել և այժմ նայում էին պատի այն խորշին, ուր Հասոն խնամքով պահել էր գիշերվա իրենց որսը՝ ագահ Բոյնախից ազատելու համար: Հիմա նա խորշից ճնճղուկները մեկմեկ նետում էր Շուշիկի փեշը ու հարցական նայում Աշոտին.
- Հերի՞ք է, թե էլ գցեմ...
- Ո՞ւմ ես հարցնում, մթերքի պահեստապետը ես եմ, - մեջ մտավ Գագիկը և, Հասոյին մի կողմ հրելով, ձեռքը մեկնեց ճնճղուկներին:
- Ճիշտ է, ուտելիքի գործում մեզնից ոչ ոք չի հասնի Գագիկին, - համաձայնեց Աշոտը: - Նա էլ կլինի մեր խմբի տնտեսվարը...
- Ինչ տնտեսվար, - կտրեց Գագիկը, - ասա՝ տնտեսական գործերի վարչության պետ...
Եվ կուրծքն առաջ ցցեց:
- Նախաճաշի համար ամեն մեկիդ հասնում է յոթանասունհինգ գրամ թռչնամիս, - իսկական սանատորիայի նորմա, - հայտարարեց նա:
- Դե յոթանասունհինգ գրամս ուղիղ կշռիր տուր ինձ, - դիմեց Շուշիկը ծիծաղելով:
- Բնությունն ինքն է կշռել. հայկական ճնճղուկը քսանութ գրամ մաքուր միս ունի: Դա՝ աքլորը: Մարին կշռում է... կշռում է քսանչորս գրամ, իսկ վառեկը՝ քսանմեկ գրամ: Չե՞ս հավատում՝ ստուգիր: Իրար վրա միջին հաշվով՝ քսանչորս ու կես գրամ: Ուրեմն ստացեք ամեն մեկդ երեք ճնճղուկ: Պահեստը պարտք է մնում յուրաքանչյուրիդ մեկ ու կես գրամ միս:
Այսպես շաղակրատելով, Գագիկը Շուշիկի փեշից վերցրեց ճնճղուկները և բաժանեց ընկերների միջև:
- Իսկ քեզ ինչո՞ւ ես չորսը վերցնում, - բողոքեց Աշոտը: Գագիկը լուռ հանեց գլխարկը և խոնարհվելով ցույց տվեց գլխի ճանկռվածքը:
- Մոռացե՞լ ես...
- Հա՛, գլխիդ խփելու համար իսկապես մի ճնճղուկ ավելի խոստացանք... Դե՛հ, Գագի՛կ, կատակները մի կողմ դնենք և որոշենք մեր անելիքը...
- Մենք ամենից առաջ կավ պիտի գտնենք և մի վառարան շինենք մեզ համար, ախր ծխից խեղդվեցինք, - շտապեց իր պահանջը ներկայացնել Շուշիկը: - Հա՛, նաև ջուր պահելու հարմարություն...
- Դուք ի՞նչ կասեք...
- Նիզակներ շինենք, երկար պոչերով նիզակներ...
Եվ Գագիկը ցույց տվեց, թե ինչպես կարելի է հեռվից նետել որսի վրա:
- Նիզակ դժվար թե մեզ պետք գա, - առարկեց Աշոտը: Ձյունը նստելուց հետո Հովազաձորում միայն թևավորներն են մնացել:
- Ի՜նչ լավ է, ուրեմն ոչ մի գազան չկա՞, - ուրախացավ Շուշիկը:
- Կա՛... Կարող է լինել...- կմկմաց Հասոն՝ զույգ փայլուն աչքերը հիշելով:
Նրան չհարցրին, թե ինչ հիման վրա է այդպես կարծում:
- Էհե՛, չեղա՛վ, - գոչեց Աշոտը: - Ինչպես տեսնում եմ, դուք պատրաստություն եք տեսնում այստեղ ձմեռելու: Իսկ իմ միտքն ուրիշ է: Իհարկե, այդ բոլորը պետք է, բայց եկեք դրանց վրա ժամանակ չկորցնենք: Քանի ուտելիքի պաշար ունենք, եկեք գնանք մեր փակված ճամփան բացելու:
Ասաց և հարցական նայեց ընկերներին: Իրոք, ի՜նչ ծուխ, ի՜նչ բաց դռնից ներս խուժող սառնամանիք, - հարկավոր էր ձորից դուրս գալու միջոց գտնել:
- Քարոտ տեղերից ձյունը վեր է կացել, իսկ մնացած տեղերում՝ իջել: Ժամանակն է, որ մենք այստեղից դուրս գալու փորձ անենք: Վերցրեք գործիքները գնանք, - կրկնեց իր առաջարկը Աշոտը:
Նա դեռ իր տեսած երազի ազդեցության տակ էր. դեռ մտքում բոցեղեն վիշապը ֆշշոցով հալեցնում էր Դիվային կածանի կուտակված ձյունը:

Բոլորն էլ ուրախ եղան նրա առաջարկին, նույնիսկ Սարգիսը, որը ստացած բարոյական ապտակներից այժմ ուշքի էր եկել ու մեկ ընդունում էր, որ ընկերներն իրավացի են իր նկատմամբ, մեկ էլ վրդովված մտածում էր. «Հասոյի հե՜տ են համեմատում...»: Օրեր առաջ, երբ նրան ասացին, որ ինքը, այդքան երկար հասակ ունենալով, մի քանի գլխով ցածր է այդ «չոբանից», Սարգսի մեջ սկսեց խոսել վիրավորված ինքնասիրությունը: Առավոտյան շուտ նա ընկերներից ծածուկ իջավ ընկուզենու տակ, բաց արավ փոքրիկ չորքոտանու շտեմարանը (խե՜ղճ կենդանի...) և առանց խղճի խայթ զգալու, սկսեց խժռել ընկույզները:

Բայց նոր էր սկսել սիրած զբաղմունքը, երբ էլի այդ աներես շունը՝ պուպուստ՝ տնկվեց առաջը և կարմիր լեզուն հանած՝ սկսեց պոչով ավլել խաշամը:

Անասելի ատելությամբ լցվեց նա այդ անմեղ կենդանու նկատմամբ, բայց ճարն ինչ, պիտի հոր նման վարվեր, չպիտի բռնվել, որ բռնվել ես գողության տեղում, բարի եղիր կիսելու քեզ բռնողի հետ...

Եվ մեղրածոր ժպիտ դեմքին խաղացնելով (դե ինչ աներ՝ «աչքը տեսածից կվախենա», այդ հիմար կենդանին մեկ էլ տեսար էլի գնաց խուզարկողներ բերեց...) մի քանի ընկյուզ կճպեց ու գցեց շան առաջ՝ հոգին էլ հետը:

Կենդանին, որ արդեն վարժվել էր բուսական սննդին, ախորժակով խփշտեց ստացած պարգևը և նորից պահանջեց:

Այն ժամանակ Սարգիսը ամուր փակեց իր պահեստի դուռը և գնաց-միացավ ընկերներին: Տեսավ բարակ ոտքերի վրա երերող Շուշիկին (որը կողմնակից չէր, որ իր հետ կոպիտ վարվեն), խղճաց և կգնար կբացեր իր «պահեստի դռները», եթե...

«Ի՜նձ ինչ, թող ամեն մեկն իր գլխի ճարը տեսնի...», - մտքում կրկնեց նա այն, ինչ մի քանի անգամ բարձրաձայն ասել էր ընկերներին:

Այս անգամ էլ նրա վրա նայող չեղավ, նույնիսկ աշխատելու չեն կանչում: Դե եկ, համբերիր:

Բայց ինչու աշխատանքի չէին հրավիրում նրան: Այդ հարցը կոլեկտիվը քննել էր արևաածագին, երբ Սարգիսը գնացել էր սկյուռի շտեմարանից օգտվելու: Նրա բացակայությամբ Շուշիկը պահանջեց բոյկոտը վերացնել:

- Մինչև մեղա չգա կոլեկտիվի առաջ, չենք վերացնի, - իրենը պնդեց Աշոտը:

- Իսկ մեղա գալ չէ՞ր, երբ գիշերը ճնճղուկներ էր որսում: Դա գործով մեղա գալ է. դա աշխատա՜նք է...

- Մե՞ծ աշխատանք է, - ծաղրեց Աշոտը:

- Իսկ քոնը մե՞ծ է, - տաքացավ Շուշիկը: - Ինչ գիտես, մթնում գուցե նա քեզնից շատ է ճնճղուկ խփել... Ես դեմ եմ այդպիսի խստության...

- Խիստ ենք, որովհետև մեր պայմաններն են խիստ, - արդարացավ Աշոտը: - Ինչո՞ւ զղջման խոսք չի ասում, - ձայնը բարձրացրեց նա:

Մի փոքր վիճեցին և որոշեցին մի օր էլ համբերել և տեսնել, թե ինչպես է իրեն պահում Սարգիսը այնպիսի կարևոր գործում, ինչպիսին ճամփա բացելն է: Եվ որովհետև որոշել էին փորձել, ուստի աշխատանքի չհրավիրեցին: Հետաքրքիր է, կուզենա՞ կամավոր կերպով աշխատել, առանց հարկադրանքի:

Սարգիսը խմբի հետևից քայլեց դեպի փակված արահետը:

Երբ անցնում էին այն տեղով, ուր նապաստակն էր թաքնվել, Աշոտը կանգ առավ և մի պահ մտածեց, թե ինչո՞ւ պիտի այդ շլդիկը, ժայռերի ապահով փչակները թողած, թաքնվեր այդ բաց տեղը, ձյունի տակ: «Այստեղ մի բան կա, երևի կեր է գտել, դրա համար է թունել բացել ձյան մեջ»: Ահա թունելն էլ դեռ մնում է: «Բայց հետաքրքիր է ի՞նչ կեր... Մեզ հարկավոր չի՞ գա նրա, կերը», - մտածում էր տղան:

Նա մի քանի քայլ արավ դեպի դիմացի անցքը, բայց մինչև, ծնկները խրվելով հալ ընկած, թաց ու ծանր ձյան մեջ, կանգ առավ, ուժ չուներ առաջ գնալու:

- Գիտեմ, գիտեմ, սիրտդ չի կտրվում լուսահոգի շլդիկից... Ո՜նց փախավ երկու կիլո փափուկ խորոված՝ացո՜ւն...

Աշոտը սիրտ չուներ արձագանքելու Գագիկի կատակին: Նա ձեռքը թափ տվեց, շուռ եկավ և գնաց ցած, դեպի այն չարաբաստիկ արահետը, որ խաբեությամբ ներս թողեց անմեղ պատանիներին ու անմիջապես փակվեց նրանց հետևից...

Քանի ժայռը դեռ բարձր չէր, նրանք «իծաշար» իրար հետևից հանգիստ ընթանում էին «Դիվային կածանով»: Բայց երբ անդունդն սկսեց խորանալ նրանց ոտքերի տակ, սիրտներն ահ ընկավ: Դե ինչպես ահ չընկներ, երբ ոչ մեկի տակ ամուր ու հաստատուն ոտք չկար... Ո՛ւր էին չքացել այն ոտքերը, որոնցով նրանք տրտնգի էին տալիս, ցատկում իրար վրայով...
Տեղ-տեղ արահետը բոլորովին բաց էր, իսկ մեծ մասամբ՝ ծածկված թե՛ տեղացած և թե՛ քամու բերած ձյունով: Բայց ի՞նչ ձյուն, հալվել, շիլա էր դարձել:
Խումբը կանգ առավ, նրանք ուշադիր նայում էին փակված ճամփին: Ձորից նա ժայռոտ լանջի լայնքով ձգվում էր մինչև Հովազաձորը ձախ կողմից եզերող ժայռապատի ուսը: Այնտեղ, ուր կածանը լայն էր, նման էր ձյունով ծածկված դարավանդի, որի ներքին պռունկը հազիվ նկատվում էր: Իսկ տեղ-տեղ էլ քամին այնքան էր ձյուն լցրել, որ լանջը լրիվ հավասարեցրել էր և արահետի հետքն անգամ չէր երևում:
- Կածանը նեղ է, միայն մի մարդ կարող է աշխատել: Դե՛հ, դուք տաքացեք արևի տակ, ես սկսեմ...
Եվ Աշոտը իր ձեռքի մահակով սկսեց ցած թափել թաց ձյունը: Արևի ճառագայթները շողշողում էին ձյան շեղջերի վրա, անդրադառնում և ջերմ ալիքներով զարնվում պատանիների դեմքերին: Դրանից էր, թե արագ աշխատելուց, Աշոտը շուտով շոգեց և իր գորշ վերարկուն հանելով, հանձնեց Հասոյին:
Քուրդ պատանին վերարկուն վերցնելու փոխարեն առաջ -ընկավ:
- Հերթն իմն է, - կարճ հայտարարեց նա և գործի դրեց իր մահակը:
- Սրանով բան չի լինի, ես գնամ թիակի նման մի բան շինեմ, - ասաց Աշոտը շուռ գալով:
- Խնդրեմ, դու էլ իմ ֆունկցիաների մեջ չմտնես, - զգուշացրեց Գագիկը և շտապեց դեպի ետ: Գնում էր «թիակներ» շինելու անձավ-բնակարանում:
Ամենից առաջ նա մատիտի հաստության դալար շիվեր կտրեց և կույտ արավ օջախի մոտ: Ապա նրանցից սկսեց գործել լաստի նման մի բան, բայց շատ փոքր ծավալով: Երկար տևեց նրա այդ աշխատանքը, հավանաբար մի ժամից ոչ պակաս: Եվ երբ գործը վերջացրեց, հիացմունքով նայեց իր «լաստին», և թարեքի ճնճղուկները տեսնելով գլուխն օրորեց. «Ափսո՜ս, պետն այստեղ լիներ գոնե երկու ճնճղուկ պարգև կտար...»:
- Եկա՜վ, թիակը եկա՜վ, - այրից դուրս գալուն պես իր շինած գործիքը գլխից վեր ճոճելով ցած էր վազում ու գոչում Գագիկը:
Թփերի մեջ մուկ փնտրող Բոյնախը նրա գոչյուններից ոգևորված սկսեց ձորը դմբդմբացնել իր հաչոցով և վազեց տղայի հետևից:
Այդպես աղմուկով տեղ հասավ Գագիկը և իր նիհար կուրծքը դուրս ցցելով, հարցրեց.
- Բերի՛, թե չէ...
Ուռի ճյուղերից գործած թիակի թաթի նման մի բան էր նրա ձեռքին, որն ամրացրին մահակի կոթին ու նրանով սկսեցին քերել-ցած թափել արահետի ձյունը: Գործը հեշտացավ և որքան առաջ էին գնում, այնքան ավելանում էր «լույս աշխարհ» դուրս գալու հույսը:
- Այսպես չեղավ, ընկերնե՛ր, մի մասը թող աշխատի, մյուս մասը գնա ուտելու բան ճարի, լրացնի մեր ուտելիքի պաշարը, - առաջարկեց Աշոտը: - Առանց այն էլ կածանի վրա բոլորիս կանգնելու տեղ չկա:
Խմբի մեջ ոտքից թեթև և ամենից ճարպիկ քարագնացները Գագիկն ու Հասոն էին, նրանք էլ գնացին ժայռի ծերպերը: Մասրուտի մասուրը վերջացել էր, նրանք ստիպված եղան հատապտղի նոր թփուտներ փնտրել և խիստ հոգնեցին: Վերջապես հեռավոր, մի անկյունում, հաջորդ ժայռի բարձունքում, կարմրին տվեց մասրի մի թուփ: Գագիկը քիթը վեր տնկած նայում էր թփին ու մրմնջում իր քեռու տղա Գրիգորի «ոճով».
- Ա՛խ, ես քո ցե վիտամիններին մատաղ, կա՛ց, գալիս եմ...
Հասոն կարծեց, թե ընկերը զառանցում է. դե նա ինչ իմանար ինչ բան է «ցե վիտամինը» և ինչպես հարուստ է նրանով մեր արևոտ երկրի մասուրը:
Մինչ նրանք մասուր էին հավաքում, Աշոտն ու Շուշիկը փոխնիփոխ մաքրում էին արահետը:
Իսկ Սարգիսը լուռ կանգնած նայում էր և սիրտ չէր անում առաջարկել իր օգնությունը:
- Դու գնա կրակի մոտ, Շուշի՛կ: Եվ իզուր էլ եկել ես, չէ՞ որ խումբը քո մասին որոշում ունի, - ասաց Աշոտը:

- Կրակի մո՞տ.... Ես ո՞նց մնամ կրակի մոտ, երբ դուք, ամեն մեկդ մի գործ եք անում, - և՛ խղճահարված և՛ բողոքի շեշտով ասաց Շուշիկը: Նա թափում էր ձյունը ժայռի ճակատով, ցած էր նայում անդունդը գլորվող ձյան կոշտերի հետևից և երեխայաբար հրճվում.
- Ձա՛ն, շուտով այստեղից կազատվենք չէ՞, Աշոտ... Մերոնք ինչքա՛ն կուրախանա՛ն...
Սարգիսը զգում էր, թե ինչպիսի մեծ հաճույք են ստանում իր ընկերները, երբ աշխատում են և տեսնում իրենց արած գործի արդյունքը:
Միայն ինքն էր զուրկ այդ բավականությունից...
Իրեն քաջալերելով, նա մոտեցավ Շուշիկին և ձեռքը մեկնեց.
- Տուր մի քիչ էլ ես մաքրեմ...
Շուշիկը ժպտաց և մեկնեց թիակը, բայց Աշոտը խլեց նրա ձեռքից և սկսեց արագ ու նյարդային շարժումներով քերել ձյան կույտերը: Նրա ամեն շարժումից վրդովմունք էր կաթում և Սարգիսը զգում էր, որ իր ներկայությունն է վրդովեցնում նրան:
«Վա՛հ, արդեն ատելի՞ եմ դառել...»: Եվ այդ մտքից Սարգսի արյունը կարծես կանգ առավ երակներում...
Գործը շատ դանդաղ էր առաջ գնում (դե Շուշիկն ի՞նչ օգնական էր Աշոտի համար): Բայց երբ կերան ընկերների բերած մասուրը և մի փոքր էլ հանգստացան, նոր ուժեր զգացին իրենց մեջ, և դա ոչ այնքան ստացած սննդից, որքան այն հույսից, որ զորեղանում էր նրանց մեջ՝ մաքրած կածանը երկարելու հետ միասին:
Այդպես փոխնեփոխ նրանք աշխատեցին մինչև կեսօր և հաշվեցին տեսան, որ մաքրել են ճանապարհի մոտ մի քառորդ մասը:
Ճիշտ է, քանի գնում ժայռը դառնում էր ուղղահայաց, նույնիսկ տեղ-տեղ կռացած անդունդի վրա, իսկ կածանը հատող խորխորատները դեռ հետո էին գալու, բայց գործն այդպես ընթանալու դեպքում կարելի էր վեց-յոթ օրում բոլորովին մաքրել կածանը և մնաս բարի ասել Հովազաձորին: Եթե, իհարկե, մինչ այդ նորից ձյուն չտեղար... Եվ եթե նրանք ամեն օր այնքան սնունդ ստանային, որ ուժները վերջնականապես չդավաճանեին իրենց:
Վերջապես, երբ բոլորն էլ խիստ հոգնել էին, Շուշիկը ցած ձայնով և նախատինքի շեշտով հարցրեց.
- Աշո՛տ, ինչի՞ ես թարսվել, ինչի՞ չես թողնում Սարգիսն էլ աշխատի...
Սարգիսը հեռու նստած ձորին էր նայում:
- Եվ դու կարծում ես, որ թույլ տվի, նա գո՞րծ կանի:
- Կանի՛, բոլորիցս լավ կանի: Չե՞ք տեսնում ինչպես է զղջում:
- Զղջում է, որովհետև տեղը նեղ է: Դու միամիտ ես, նրան լավ չես ճանաչում: Երկու թիակ ձյուն կգցի ցած, կգնա գյուղում կպարծենա, թե ինքն է մեզ ազատել:
- Այդքան խիստ մի լինի, Աշո՛տ...
- Լավ, փորձենք... Գնա աշխատանքի հրավիրիր...
Շուշիկն ուրախ-ուրախ առաջ գնաց և ձայնեց.
- Սարգի՛ս, եկ դու էլ մեզ հետ աշխատիր, օղակավարը ինքն է խնդրում...
Սարգիսը քիչ մնաց հեգնանքով պատասխանի՝ «Հա՞ա, վերջապես խելքի՞ եկավ...», բայց զսպեց իրեն:
Առաջին րոպեներին նա հաճույք զգաց աշխատանքից: Բայց շուտ հոգնեց, այնպես հոգնեց, որ հետզհետե թիակը գործածելը նրա համար դարձավ տանջանք: Չէ՛, նա սովոր չի իր ուժը լարելու, սովոր չի քրտնելու...
Լավ էր, Գագիկը շուտով եկավ նրան փոխարինեց, թե չէ թիակին զոռ տալով մարդու շունչը կկտրվի...
Պատանիները հանգստացան և նոր թափով գործի կպան:
- Աշո՛տ, ինչ ես կարծում, Շուշիկին չուղարկե՞նք մեր սիրելի ճնճղուկներին օգնության կանչի, - համեստորեն հարցրեց Գագիկը:
Դե այդպիսի «օգնությանը» ո՞վ դեմ կլիներ: Շուշիկին ուղարկեցին ճաշ պատրաստելու, իսկ տղաները շարունակեցին հերթով աշխատել:
Արեգակն արդեն թեքվել էր դեպի Հայկական Պարը, երբ Շուշիկը վերադարձավ՝ խորոված ճնճղուկները փայտե շամփուրներին շարած: Բոյնախը երջանիկ վնգստոցով և շրթունքները լիզելով ուղեկցում էր նրան:

Յուրաքանչյուրն ստացավ իր շամփուրը՝ երեքական ճնճղուկ վրան շարված, և նրանք ճաշեցին աշխատած-դադրած մարդու ախորժակով: Իզուր Բոյնախը պպզած ոսկորի էր սպասում, ոսկո՞ր կազատվեր ջահել ատամնաշարքերի տակից...
Է՛հ, կարծես օրն էլ ավելի պայծառացավ, աշխարքն էլ վարդագույն դարձավ...
- Դե՛հ, արծվի ճուտեր, վեր կացեք, - հրահանգեց Աշոտը: Աշխատանքը նոր թափով առաջ էր գնում:
Մի բան վատ էր, որ Սարգիսը նորից գլուխ էր պահում: Նա շուտ էր հոգնում և շուտ էլ ձանձրանում աշխատելուց, իսկ երբ հերթը հասնում էր իրեն, արդեն դժկամությամբ էր թիակը ձեռքը վերցնում: Ճիշտ է, ոչ մի բանի չէր հակառակվում և այլևս առաջվա նման թշնամական հայացքներ չէր ուղղում իր «հակառակորդներին»: Իսկ օրվա վերջին արդեն գերադասեց նորից քարշ գալ խմբի պոչից, օղակավարի աչքից հեռու...
Պոչում ոչ միայն գործ չկար, այլև ապահով էր. նրա ոտքի տակ շարունակ մաքրված, բացած շավիղ էր: Վտանգն առջևում էր, ուր նեղլիկ կածանի վրա թին խրում էին ձյան կույտերի մեջ և ուժ տալիս մեջքին ու ծնկներին: Մեկ էլ տեսար հավասարակշռությունդ կորցրիր ու ցած գնացիր: «Չէ՛, Նազարը կռիվ գնացողը չի... Ի՞նչ գործ ունես...»:
Բայց ինչպես որ պատերազմի դաշտում թշնամու գնդակը հաճախ իր գլուխը խրամատներում թաքցնող վախկոտին է գտնում, այդպես էլ Սարգսին պատահեց: Նա, որ բոլորից շատ էր հոգ տանում իր կյանքի համար, հանդիպեց այն ձախորդությանը, որից շատ էր զգուշանում:
Աշոտը վաղուց էր գլխի ընկել Սարգսի ոչ այնքան էլ խորամանկ քաղաքականությունը, այնպես ցույց տալ, որ իբր թե աշխատում է: Նկատելով, թե ինչպես ծույլ ու անսիրտ է նա շարժում ձեռքի փայտը, Աշոտը սկսում էր վրդովվել: Վերջապես համբերությունից դուրս գալով, գոչեց.
- Սարգի՞ս, մի դեսն արի... Արի իմ տեղը գործ արա, ինչ ես անտեղի փետդ շարժում: Առ թիակը...
Ի՞նչ աներ Սարգիսը, հրաժարվե՞ր: Այդ դեպքում հենց նոր վերացված բոյկոտը նորից կմտներ ուժի մեջ: Նորի՛ց մենակ մնար... Հիշելով վերջին օրերի սրտամաշ մենակությունը, սարսռեց: «Լավ է վեճի մեջ չմտնեմ...», - մտածեց նա և հենվելով ձեռքի փայտին, սկսեց շատ զգուշությամբ առաջ շարժվել: Ահա անցավ Շուշիկին, որ նրան ճամփա տալու համար հպվել էր ժայռի պատին, ահա և Գագիկը, որ սրբում էր քրտինքը, երբ հանկարծ... Ախ անիծված քար... Սարգիսը չուզեց, որ ընկերները նկատեն իր վախկոտությունը ու անհաստատ քայլվածքը: Նա մի վայրկյան աչքը կտրեց կածանի մեջտեղ ցցված քարից ու գլուխը վեր բարձրացրեց: Հենց այդ վայրկյանին ոտքը քարին առավ, հավասարակշռությունը կորցրեց և գլորվեց անդունդը... Ներքևից փափուկ թրմփոց լսվեց, ժայռին զարնվող քարի չրխկոց և ամեն ինչ լռեց:
Շուշիկը ճչաց և նստեց տեղում, իսկ Բոյնախը սկսեց տագնապահար հաչել:
- Վա՜յ, էս ինչ սոսկալի բան եղավ, - ծնկները դողդողալով ասում էր Գագիկը: Նա բռնեց շավիղի պռնկից ցած նայող Աշոտին:
- Ե՛տ կանգնիր, հիմա դու էլ ցած կգլորվես, - գոչեց նա սփրթնած:
Գագիկի նախազգուշացումը տեղին էր. ձյունոտ ու սառած արահետի վրա մի անզգույշ շարժում՝ և կարելի էր սայթաքել ու գահավիժել ձորը:
Աշոտը կես քայլ ետ կանգնեց և մռայլ ու կենտրոնացած ցած նայեց, դեպի անդունդն ուղղահայաց իջնող ժայռի լանջը չէր երևում, միայն նրա հատուկենտ քիվերից մեկին, ժայռի նեղ գոգի վրա, կանաչին էր տալիս գանգրահեր ու փոքրիկ մի եղևնի՝ հաստ և ծուռումուռ բնարմատով, ինչպես լինում են անջուր ժայռերում աճած ծառերը:
- Սարգի՛ս, - ցած կռանալով կանչեց Աշոտը:
Նրա ձայնն արձագանքեց ժայռերում և լռեց: Պատանիները ամբողջովին լսողություն էին դարձել, բայց շրջապատում մեռելային անդորր էր տիրում:
Այն ժամանակ Աշոտը նստեց շավիղին և գլուխն առավ ափերի մեջ:
- Այս ինչ սարսափելի բան էր... Այս ինչ արի ես...
Ընկերները սկսվել էին. ահավոր լռություն էր տիրում, միայն երբեմն լսվում էր Շուշիկի թույլ հեծկլտոցը:
Գնաց, ժայռերի տակ փշրվեց իրենց նեղ օրերի ընկերը, իր թերություններով, եսապաշտ իր հոգեբանությամբ, բայց և այնպես՝ Ընկերը:

Եվ դա այն ժամանակ, երբ սկսել էր դարձի գալ, երբ առաջին քայլերն էր անում դեպի կոլեկտիվը, դեպի մարդկայնությունը...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ. Թե ինչպես ամբողջ երկիրն էր փնտրում կորածներին

Այգեձորը, որ մինչ այդ անհայտ մի գյուղ էր մեր ընդարձակ երկրում, մի քանի շաբաթվա ընթացքում հայտնի դարձավ ամբողջ Սովետական Միությանը: Արամն ու Արշակը Հեռավոր Արևելքի թերթերում հայտարարություններ էին հրապարակել կորած երեխաների մասին: Ռադիոն էլ իր հերթին հաղորդել էր գույժը: Եվ որովհետև ոչ մի պատնեշի ու սահմանի առաջ կանգ չի առնում ռադիոալիքը, ուստի և մեր մեծ աշխարհով մեկ տարածվել էր Այգեձորի հինգ պատանիների խորհրդավոր անհետացման լուրը:
Հետաքրքրությունը այդ առեղծվածի շուրջը գնալով մեծանում էր: Հեռավոր հյուսիսի Պիոներ կղզու մի խումբ բևեռախույզներ ռադիոյով հարցնում էին Հայաստանի ԼԿԵՄ Կենտկոմին, թե արդյոք չե՞ն գտնվել կորած պիոներները: «Դեռ փնտրում ենք», - պատասխանել էին Երևանից:
Փոստատար Մուրադը հանգիստ չուներ այդ օրերին, եթե առաջ ըստ «գյուղական կապի կանոնների» նա երկու օրը մեկ անգամ պիտի գնար շրջկենտրոն փոստ բերելու, այժմ օրական երկու-երեք անգամ էր գնում, միշտ այն հույսով, որ վերջապես «աչքալուսանք» կբերի կորած պատանիների վշտահար ծնողներին: Բայց բարի լուրի փոխարեն ծերունին բերում էր կապոցներով հեռագրեր ու նամակներ, որ ստացվում էին Սովետական Միության բոլոր ծայրերից և ամենից շատ՝ Հեռավոր Արևելքից, ուր կոմերիտականներից կազմվել էին «Այգեձորցի պատանիներին փնտրող ջոկատներ»:
Ուրալի պիոներները գրում էին, որ իրենք ևս իրենց քաղաքներում ու գյուղերում հարցուփորձ են անում հայ պիոներների մասին, որովհետև ենթադրում են, որ Աշոտի նման բորբոքուն երևակայության տեր պատանին կարող է հանքեր գտնելու հույսով հրապուրված՝ Ուրալ գնալ: Կարագանդայի միջնակարգ դպրոցի աշխարհագրության դասատու Աննա Վինոգրադովան գրում էր.
«Գտնվեցի՞ն արդյոք ձեր որդիները: Գտնվելուն պես խնդրում եմ հեռագրով տեղեկացնեք մեզ, որ մենք ևս՝ ձեր հեռավոր բարեկամները՝ ուրախանանք»:
Խարկովշչինայի մի գյուղից ուկրաինացի մի կին՝ Լեսյա Զախարովնան իր ցավակցությունն էր հայտնում կորած պատանիների մայրերին, սիրտ էր տալիս նրանց և իր համոզմունքը հայտնում, որ երեխաները անպայման կգտնվեն, քանի որ իր երեխան ևս այդ հասակում անհետացել էր ընկերոջ հետ, լացացրել իրեն, բայց վերջը գտնվել էր Արևմտյան Կարպատներում... «Իմ խենթուկը գնացել էր աշխարհ տեսնելու: Այդպես պատահում է, մի՛ հուսահատվեք...»:
Իսկ Վոլգոգրադի մարզի Կարպովկա գյուղից կոլտնտեսական Տիխոն Միխայլովիչը գրում էր.
«Այգեձոր գյուղ, կորած պատանիների ծնողներին: Իմ հեռավոր կոլխոզնիկ բարեկամնե՛ր, առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ ես եղել եմ ձեր չքնաղ երկրում, խմել եմ Արարատյան դաշտի անմահական գինին և հայերի հետ միասին կռվել եմ տաճկական ֆրոնտում: Մի կատելյոկից եմ ճաշ կերել ես հայերի հետ, մի խրամատում քնել, - լա՛վ, ընկերասեր մարդիկ են: Վիրավորվել եմ ես նրանց երկրի համար և նրանք էլ փաթաթել են իմ վերքերը, շալակով դուրս հանել կրակի տակից և Արարատյան դաշտի մի գյուղում հյուր եմ մնացել, մինչև որ բուժվել են իմ վերքերը: Ձեր աղ ու հացը, ձեր հյուրասիրությունը ես չեմ մոռանում և հիմա ուզում եմ դա ցույց տալ գործով: Սիրելի կոլտնտեսականնե՛ր, այս տարի մենք առաջին անգամ ջուր ստացանք Վոլգա-Դոն ջրանցքի վրա կառուցված Ցիմլյանսկի ջրամբարից (Ի՜նչ ջրամբար, ձեր Սևանի չափ մի ծով է...): Այդ ջրով մենք ոռոգեցինք մեր խոպան հողերը և այնքան հաց վերցրինք, որ կրելով չէր վերջանում: Իմ աշխօրերի դիմաց այնքան եմ ստացել, որ երեք տարի հերիք է իմ ընտանիքին: Ուրեմն և ինձ համար դժվար չի մասնակցել այն ծախսերին, որ դուք կատարում եք ձեր կորած երեխաներին փնտրելիս:
Ձեզնից իրավունք եմ խնդրում՝ իմ լուման մուծելու այդ գործին: Ասացե՛ք, ո՞ւմ հասցեով ուղարկեմ դրամը, և ինձ իրավունք տվեք այդ բանն անելու, չէ՞ որ ես էլ երեխաների տեր եմ, ես էլ եմ ծնող...»:
Սիրանը կարդում էր այդ նամակներն ու հեռագրերը, սիրտը մորմոքվում էր, բայց և զգում էր, որ հեռավոր, սակայն հարազատ ձեռքեր հոգատարությամբ սպեղանի են դնում իր հոգու վերքին: Ամբողջ

երկիրն է ապրում իր որդու կորուստով, դրանից էլ մեծ մխիթարություն կարո՞ղ է լինել մայր արարածի համար:
- Մենակ մեր անսիրտ նախագահն է մի կողմ քաշվել, - լալով գանգատվում էր նա հարևանուհիներին:
- Մեջն օգուտ ունենա՞, տես ոնց կհետաքրքրվի, - պատասխանում էին նրան՝ գլուխներն օրորելով:
Ուշացումով ստացվեց և Լճավանի պատանի բնասերների կարճ ու գործնական նամակը.
«Պատանի բնասերների մեր ֆոնդից[11] դրամ ենք փոխադրում, օգտագործեցեք պատանիներին որոնելու համար: Մեր խումբը կազմ ու պատրաստ է որոնելու Այգեձորի կորած պիոներներին: Հեռագրով հաղորդեցեք մեզ ո՞ւր գնանք և որ շրջանում փնտրենք: Կամո, Արմեն, Գրիգոր, Հասմիկ, Միրուք Ասատուր»:
Հարևան Մեյլու գյուղի պիոներները ևս ամեն օր խումբ-խումբ գալիս էին Այգեձոր և ամեն անգամ «Եղբայրության ծառուղիով» անցնելիս մորմոքով էին հիշում իրենց հայ ընկերներին, որ այնպես սրտանց էին իրենց հետ տնկել այդ տունկերը: Եվ որովհետև այլևս չկար Աշոտն իր ընկերներով, թվում էր, տունկերը որբացել էին և նույնպես տխուր սվսվում էին ցրտաշունչ քամու առաջ:
Այսպես, օրերն անցնում էին ծանր ու սրտամաշ և դեռ ոչ մի նշան չէր երևում:
Սիրանը աչքը ճամփին սպասում էր փոստատար Մուրադին և երբ երևում էր ծերունին արագ ու մանրաքայլ մոտենալիս, կնոջ սիրտը թպրտում էր և ջանում էր հուսատու նշաններ կարդալ նրա դեմքին:
- Չէ՛, էլի երեսիս չի նայում... քոռանա մերդ, Աշո՛տ, - ծնկներին խփելով մրմնջում էր կինը՝ իր մայրական բնազդով դեռ հեռվից անսխալ որոշելով, թե ինչ լուր է բերում փոստատարը:
Իսկ սա նոր նամակների կապոցը դնում էր սեղանին, շոյում էր նոսր բեղերն ու հանդիսավոր ասում.
- Մի կարդա տես ինչե՛ր են գրում պիոներները: Աշխարհով մեկ ցրված ընկերներ ունի քո Աշոտը... Էս նամակը Ռիգայից է, էս՝ Տաշքենդից, էս՝ Բաթումից, էս՝ Աղստաֆից... Կարծում ես ամեն կնիկ էլ էդ պատվին կարժանանա՞...
- Ա՛խ, իմ երեխեն գտնվե՛ր, ես աշխարքից ուրիշ բան չեմ ուզում...
- Կգտնվի՛, անպայմա՛ն կգտնվի... Էդքան մարդ որ նրան է ման գալիս, ասեղ էլ լինի՝ չի կորչի, կգտնվի...
Այնպիսի համոզմունքով էր ասում ծերունին, որ Սիրանը մի պահ խաղաղվում էր:
Ապա փոստատարն ասում էր մի քանի սրտապնդող խոսքեր ևս ու վեր էր կենում.
- Դե՛հ, ես էլի գնամ փոստ, գուցե մի նոր լուր եկած լինի:
- Կաց, գոնե մի գավաթ գինի խմի՛ր, քեռի Մուրադ, - աչքերը սրբելով թախանձում էր Սիրուշը:
Խե՛ղճ ծերուկ, ցրտին ու բքին շարունակ ճանապարհներին է. նա էլ է մաշվել, իսկ դեմքի ճերմակած մազերը երկարել են, երևի ժամանակ չի գտնում սափրվելու...
- Կխմե՛նք, ժամանակը գա՝ կխմենք: Էնպես մի քեֆ եմ անելու քո տանը, Սիրա՛ն, էնպես պար եմ գալու, որ առաստաղից հող թափվի: Սպասիր մի լավ տեղեկություն բերե՞մ...
Այսպես անհոգ էր խոսում ծեր Մուրադը ու իր անհոգությամբ սրտապնդում վշտաբեկ մորը: Բայց հենց դուրս էր գալիս բակից, չքանում էր անհոգությունը նրա դեմքից, քայլերը դառնում էին դանդաղ ու մոլոր և կսկիծով մտածում էր. «Յարաբ կգտնվե՞ն էն երեխեքը...»:
Իսկ երբ նրա սուր աչքը դեռ հեռվից նկատում էր կորած երեխաներից մեկն ու մեկի հարազատին, իսկույն նորից անհոգ դեմք էր ընդունում, արագացնում էր քայլերը և հասնելով, հարցնում էր անփույթ.
- Երեխեքից տեղեկություն չստացա՞ք: Չէ՞: Ոչինչ, կստանա՛ք: Էս է ղշի թևով գնում եմ շրջկենտրոն, աչքալուսանքը պատրաստեցեք, կարող է մի լավ լուր բերեմ:
Ու միշտ լավատես, միշտ խրոխտ քայլերով շտապում էր շրջկենտրոն՝ մի թաքուն իղձ իր բարի սրտում.
- Ա՛խ, յարաբ կուրախացնե՞մ ես էն դարդոտ մայրերին...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե երբեմն ինչ կարող է պատահել մարդուս հետ, եթե ժայռից գլորվի անդունդը

[11] Ընթերցողը հավանաբար գիտի, որ Լճավանի պատանի բնասերները Ճանճաքարից բերված մեղրի կարասներից մեկի մեջ գտան Սևանա աշխարհի զորավար Արտակ իշխանի գանձը, հանձնեցին իշխանությանը և իրենց ստացած օրինական տոկոսները՝ մի պատկառելի գումար, տրամադրեցին պատանի բնասերների ֆոնդին: Այդ մասին պատմված է «Սևանի ափին» վիպակում:

Կարծես ժամանակը կանգ առավ:
Տարի թվացին այն վայրկյանները, որ անցկացրին անակնկալ դեպքից շանթահարված պատանիները, լարված ականջ դնելով: Շրջապատի քար լռության մեջ նրանք իրար ծանր շնչառությունն էին լսում և մեկ էլ՝ յուրաքանչյուրն իր սրտի անհանգիստ տրոփյունը:
Ոչ ոք չէր հիշում ինչից, ինչպես սայթաքեց և ցած ընկավ իրենց ընկերը: Այդ ամենը կատարվեց այնպես արագ ու անակնկալ, որ ոչ ոք ժամանակ չունեցավ օգնության հասնել աղետյալին:
- Մենք դաժան էինք նրա նկատմամբ, - հեծկլտանքից ուսերը ցնցելով գանգատվում էր Շուշիկը, և բոլորն էլ գիտեին, թե ում է ուղղված նախատինքով լի նրա խոսքը:
Եվ նա, ում ուղղված էր այդ բողոքը, խղճի խայթ էր զգում: Եթե իմանար, որ Սարգիսը վերջ ի վերջո զոհվելու է, նրան դառն խոսքեր չէր ասի, նույնիսկ հետն աշխատանքի չէր բերի:
- Գնանք դիմացից նայենք քարափին, գուցե մի տեղ դեմ առած լինի, - առաջինը ուշքի գալով առաջարկեց Հասոն:
Իր բացած կածանով խումբը ետ գնաց, իջավ ձորակը, անցավ ժայռի դիմաց:
Տագնապով լի հայացքով նրանք զննում էին իրենց դիմաց վեր ելնող ժայռի ճակատը, նրա ծերպերը, խոռոչներն ու ճեղքերը: Ավա՜ղ, կենդանության ոչ մի նշան չէր երևում, միայն արծիվներն էին ծանր-ծանր թևածելով պտտվում ձորի վրա: «Արյան հոտի վրա են հավաքվում», - մտածեց Աշոտը, և նրա սիրտը ճմլվեց, արցունքը դեմ առավ կոկորդին: «Այս ի՜նչ արի, այս ի՜նչ արի...», - իրեն անիծելով անընդհատ կրկնում էր նա մտքում, թեև արտաքուստ խրոխտ էր ձևանում:
- Իջնենք քարափի տակ, - հրահանգեց նա:
Քարերից բռնելով նրանք իջան անդունդը՝ այնտեղ, ուր գահավիժել էր իրենց ընկերը, բայց ժայռի տակ վերևից ցած թափած ձյունից և քարի հատուկենտ կտորներից զատ ոչինչ չկար:
- Ժայռի ճակատին է մնացել, - վճռեց Աշոտը և վեր վազեց:
Քիչ անց մի այլ դիրքից տղաները հայացքով նշաններ էին փնտրում դիմացի ժայռի ճակատին:
- Իմ կարծիքով եղևնու թփին է դեմ առել, - գոչեց Աշոտը; Նրա ձայնը հնչում էր հուսատու: - Տեսե՛ք, թուփը ճիշտ այն ուղղությամբ է, որտեղից գլորվեց Սարգիսը:
- Այն թափով, որ գլորվեց, դժվար թե թուփը պահեր, - լալով ասում էր Շուշիկը: - Որ դեմ առած լինի՝ կամ ոտը կերևա, կամ գլուխը...
- Թփից վերև մի թարեքի նման բան պիտի լինի, մի կտոր
փափուկ հող, թե չէ այդ թուփը ժայռի ճակատին իր սնունդն ու ջուրը որտեղի՞ց է ստանում: Գոնե կես մետր լայնությամբ մի կտոր հող ունի նա իր համար, թե չէ չէր ապրի, - բնասերի տրամաբանությամբ իրենն էր պնդում Աշոտը:
- Է՜հ, - ձեռքը հուսահատ թափ տվեց Գագիկը: - Ջաղացը կորցրել ես չախչախին ես ման գալիս: Հողի կտորը ինչի՞ս է պետք, մեզ Սարգսի տեղն ասա...
- Սարգիսը հենց այդ հողի կտորի վրա պիտի լինի... Այստեղից թուփը նրան ծածկում է մեր տեսողությունից, գնանք վերևից նայենք...
Նրանք վերադարձան իրենց եկած ճանապարհով: Բոլորն էլ լուռ էին, մտախոհ, սրտները լի ահով ու կսկիծով: Միայն Աշոտը ճանապարհին ինքն իրեն քրթմնջաց.
- Ա՜խ, թե հողի կտորը լայն կլինի ու վրայի ձյունը խո՜ր...
Ոչ ոք չճգնեց հասկանալու նրա այդ ցանկության իմաստը:
Բոլորն էլ անդառնալիորեն կորած էին համարում իրենց ընկերոջը և ոչ մի «թարեք», կամ «հողի կտոր»՞, որքան էլ խոր ձյուն ունենար իր վրա, չէր սփոփի վշտահար պատանիներին:
Երբ հասան Սարգսի անկման վայրին, Աշոտը գոտին արձակեց, կապեց իր կռնատակերից և ծայրը հանձնելով Հասոյին, պատվիրեց.
- Ետ կանգնիր ու ամուր բռնիր: Գագի՛կ, դու էլ Հասոյից բռնիր:
Երբ զգաց, որ գոտու ծայրն ամուր ձեռքերում է, Աշոտը շավիղի պռնկին պառկեց, առաջ սողաց և անդունդի վրա կռանալով, ցած նայեց:
-Այնտեղ է, - ետ սողալով գոչեց նա, - թփի վերևում շորի, փեշը երևաց... Ոտներիցս բռնեցեք մի քիչ էլ առաջ գնամ...

- Կենդանի՞ է...
- Չի՞ շարժվում...
- Թարեքի վրա ձյունը խո՞ր է...
- Չգիտե՛մ... Հիմի կպարզեմ.. պի՛նդ բռնեցեք ոտներիցս... Չէ, այդպես չեղավ, չեք կարող պահել... Ամեն ոտիս մի գոտի անցկացրեք... Այդպես: Դե հիմի գոտիները պատ տվեք մեկն այս քարի ատամին, մեկն այն ու պինդ բռնեցեք... Ա՛յ, այդպես, հիմի որ կպահեք... Դե՛, ես գնացի...
Շուշիկը երկյուղով տեսավ, թե ինչպես տղան ոտքերը թողեց արահետում, իսկ ինքը գրեթե ամբողջ մարմնով կախվեց անդունդի վրա...
Նա ձեռքերով ծածկեց աչքերը և եթե ընկերներին շփոթեցնելու ահը չլիներ, կճչար սարսափից: Բայց իզուր էր նրա սարսափը, քանի որ Աշոտը գլխիվայր կախվելուն պես ձեռքերով բռնել էր ժայռի սեպաձև ցցունքից և նրա բազուկները հուսալի հենարաններ էին դարձել մարմնի համար: Մոտ մի րոպեի չափ այդ դիրքով մնալուց հետո ներքևից լսվեց նրա ձայնը.
- Վեր բարձրացրեք...
Երբ վեր քաշեցին, տեսան, որ նրա աչքերը լցվել են արյունով և ուռել-փքվել են ճակատի ու վզի երակները:
- Մեր թափած ձյունը կուտակվել է թփի վերևի թարեքին, - հևալով հաղորդեց նա: - Սարգիսը թաղված է ձյան կույտի մեջ... Գուցե կենդանի լինի... Սարգի՛ս, Սարգի՛ս, - երեսով դեպի անդունդը դառնալով՝ իրար հետևից կանչեց նա:
Բոյնախը անհանգիստ հաչում էր և տագնապահար ցած նայում. նա լավ հասկացել էր, թե ինչ է կատարվել և հոտից զգում էր, թե որտե՛ղ է հիմա խմբի անհետացած անդամը:
- Ձայնդ կտրի մի լսենք, - բարկացավ Հասոն և գոտիով կապեց շան դունչը: - Սարգիս, հե՛յ, որտե՛ղ ես, կուռո[12], որտե՛ղ, - քրդավարի գոռաց նա ժայռն ի վար:
Ոչ մի պատասխան:
Նստել էին պատանիները արդեն ձյունից բացված քարերին լուռ ու վշտահար: Արծիվները թևածում էին ձորի վրա, անգղները՝ կռնչում չարագուշակ: «Կը՛ռթ-կը՛ռթ-կը՛ռթ»՝ երկու գայլագռավ անցան նրանց գլխի վրայով: Այդ ձայներից նրանք սարսռում էին և վախենում իրար հարցնել, թե ինչու են աշխուժացել ու շատացել թևավոր գիշակերները: Վախենում էին հարցնել, որովհետև նրանցից յուրաքանչյուրը գիտեր, թե ինչ է նշանակում այդ բոլորը...
Երկու գառնակեր արծիվ թռան եկան և իջան եղևնու թփից ոչ հեռու, ժայռի քիվին ու դժգոհությամբ նայեցին խմբի կողմը: Հասոն քարերով հալածեց նրանց, բայց ուրիշները եկան և պտտվում էին անդունդի վրա: Մեկը, որ կամ ավելի համարձակ էր, կամ քաղցից խելագարված, ցած խոյացավ դեպի թարեքը և հավանաբար կամ ճանկեց տղային, կամ հարվածեց կտուցով, որովհետև նրա այդ հարձակումից անմիջապես հետո ներքևից տնքոց լսվեց և մի թույլ ու աղիողորմ ձայն. «Վա՛յ... վա՛յ...»:
Հավանաբար արծվի հարվածից տղան ուշքի էր եկել: Տղաները քարերով հալածեցին գիշակերին ու կարծես խոսքները մեկ արած սկսեցին աղաղակել.
- Սարգի՛ս, չվախենա՛ս...
- Այստեղ ե՛նք...
- Պինդ կա՛ց, պի՛նդ...
Շուշիկը դարձյալ լալիս էր, բայց այս անգամ արդեն ուրախությունից:
- Կենդանի է, չէ՞, Աշոտ, - հարցնում էր նա:
- Կաց մի տեսնենք ինչ ենք անում, - բարկացավ Աշոտը: Նա ավելի լրջացավ և կենտրոնացավ.- Որ կենդանի է ո՞նց ենք ազատելու...
Նրա մտահոգ ձայնից ընկերները, որոնք ընդամենը մի քանի վայրկյան էր, որ ուրախացել էին, միանգամից լրջացան:
Իրոք, իրենց ընկերը թեկուզ մի գիշեր էլ մնալու լիներ ձյան մեջ, անխուսափելի էր նրա մահը...

---

[12] Կուռո - տղա

- Դե, մի՛ մոլորվեք, ոտքերս բռնեցեք, - գոչեց Աշոտը և նրա տոնից ու նախատինքով լի հայացքից ընկերները հասկացան, որ ծանր ժամին մարդ ոչ թե պիտի ձեռքերը ծալի հուսահատ, այլ գործի վստահ ու կտրուկ:
Նա կախվեց անդունդից ու ձայն տվեց.
- Վրա նստի՛ր... մի՛ վախենա...
- Մեռա՛... մեռա՛... - թույլ նվվոցի նման լսվում էր կարծես անտակ հորի հատակից:
- Ձա՛ն, որ ասում է մեռա, ուրեմն կենդանի է, - թռվռաց Գագիկը:
- Չվախենա՛ս, Սարգի՛ս, - գոռաց Աշոտը վերևից, - սողա, դուրս արի ձյունից... Ա՛յս կողմ, ա՛յս կողմ, դեպի ժայռը... Ա՛յ տղա, ո՞ւր ես թփի կողմը շարժվում, թփից դենը անդունդն է...
Աշոտի այս խոսքերից ընկերները պատկերացնում էին, թե ինչ է կատարվում ներքևում:
- Դե՛սը, դե՛սը: Պատի տակ չոր տեղ չկա՞, խոռոչ չկա՞.. Չի կարող չլինել, դեսը ծածկ պիտի լինի... Կա՞... քաշվիր ծածկի տակի չոր տեղը... Շո՛ւտ... Վեր քաշեցեք, գլուխս պայթեց...
Երբ Աշոտին վեր քաշեցին, առանց սոսկումի չէր կարելի նայել նրան, դեմքը կարծես եփած ճակնդեղ լիներ:
Քիչ անց, երբ արյունը քաշվեց, նա գոռաց դեպի անդունդը.
- Սարգի՛ս, ծածկ կա՞, չոր տեղ կա՞...
- Կա՛... մեռա՛... ո՛տս, ո՛ւսս...
- Ուսն ու ոտը՝ հե՛չ, գլուխդ ողջ լինի... Չոր տեղն ինչքա՞ն է, կտեղավորվե՞ս...
- Պատը ներս ընկած է... Երկու մարդ կտեղավորվի... վա՛յ մեռա՛...
- Չես մեռնի, - հուսադրեց Աշոտը: - Առ այս թիու կոթը: Որ արծիվները գան, մեջքդ ժայռին դեմ արա օդում շարժիր...
Եվ կռանալով փայտը ցած սահեցրեց...
- Ի՞նչ ենք անելու... Կցրտահարվի, - նորից լացակումած հարցրեց Շուշիկը:
- Ինչ ենք անելո՛ւ: Ի՞նչ կաներ ձեր Կամոն... Ձեռքներս ծալելու ենք նստենք: Է՛հ, ձեզ պիոներ ասողին: Գագի՛կ, Հասո՛, դուք նորից գնացեք պտուղներ ճարեցեք, իսկ ես ու Շուշիկը գնում ենք կրակ ու վառելիք բերենք: Դե՞հ, ռանգներդ բացվե՞ց, ի՞նչ եք ատամներդ ցույց տալիս, մա՛րշ...
Տղա հո չի, կրակ է, կրակ այդ Աշոտը:
Հասոն և Գագիկը թեթևացած սրտով գնացին դեպի թփուտները. իսկապես, եթե վառելիք, կրակ և ուտելիք մատակարարեն Սարգսին, հո շաբաթով էլ կարող է ապրել իր այն «բնում», ուր բախտը նետել է նրան:
Կես ժամ անց, երբ նրանք մասուր էին քաղում, այդ պահին Աշոտը ժայռի ճակատից մեկ-մեկ ցած էր նետում վառելափայտերն ու հարցնում.
- Այ տղա, ի՞նչ ես ձենդ փորդ գցել, մի խոսիր է՞: Փայտերը ո՞ր կողմ գցեմ, այստեղից բան չի երևում:
- Ձախ, ձախ գցիր, օ՛ֆ... - լսվեց ներքևից:
- Գցածս ձո՞րն է գնում, թե թաղվում է ձյունի մեջ:
- Թաղվում է... Ես կմեռնե՛մ... մամա ջա՛ն...- ներքևից բառաչում էր վերջնականապես ուշքի եկած տղան:
Թփի հետև խորացող անդունդը տեսնելով, նոր միայն նա ըմբռնել էր, թե որքան հուսահատական է իր վիճակը: Լալիս էր ու հետն էլ մղկտում.
- Ձեզ մատա՛ղ, ինձ ազատեցե՛ք...
- Լացուկոծ մի անի, - գոչեց Աշոտը, - թե չէ կթողնենք կգնանք, արծիվների բաժին կդառնաս...
Շուշիկը հանդիմանանքով նայեց նրան:
- Ի՛նչ չարն ես, Աշոտ...
- Չար չեմ, սիրտ եմ տալիս... Տես ինչպես ձենը կտրեց... Սարգի՛ս, փայտերը ներս տար ծածկի տակ կրակ արա: Առ, կրակը եկավ...
Այս ասելով նա մի քանի թեժ ածխակոթեր ցած նետեց՝ վառվող ծայրերը դեպի վեր:
- Շո՛ւտ, վերցրո՛ւ, իրար միացրու փչիր, որ չհանգչեն...
Մի քանի րոպեաչափ լռություն տիրեց:
- Ի՞նչ բանի ես այ տղա, - հարցրեց Աշոտը:

Որպես պատասխան՝ ներքևից ծխի մի քուլա բարձրացավ:
- Փչում է... տեսա՞ր, որ սպառնալիքս օգնեց:
- Լա՛վ մեթոդ է, խոսք չկա: Որ հայհոյես, գուցե ավելի օգնի...- դժգոհեց Շուշիկը: Իր անկումի պահից սկսած Սարգիսը նրա համար նույնիսկ շատ կողմերով համակրելի էր դարձել:
Իսկ Աշոտը խրատում էր մեծի տոնով.
- Երբ դրությունը ծանր է, պետք է խիստ լինել, տեղ-տեղ՝ նույնիսկ դաժան: Իմացել ե՞ս, որ ամենաբարի հրամանատարն էլ կռվում խիստ է լինում... Կմեծանաս կհասկանաս... Տղաներն ուրախ են գալիս, երևի պտուղներ են գտել... Ինչ ես կարծում, ճնճղուկներից քանի՞սը պիտի տալ Սարգսին:
- Բոլո՛րը, - կտրուկ հայտարարեց Շուշիկը:
Աշոտը ծիծաղեց:
- Գիտեի, որ այդպես ես պատասխանելու... Դե գնա բեր հում-հում ցած թափենք, ինքը կխորովի...
- Ճիշտ, բոլո՞րը, - բացականչեց աղջիկը խնդագին նայելով Աշոտի դեմքին, և զգալով, որ նա լուրջ է ասում, այնպես ուրախացավ, որ եթե չամաչեր կհամբուրեր նրան:
Շուշիկը վազեց դեպի քարայր և լավ էր, որ մինչև Գագիկի վերադարձը ետ եկավ՝ փեշում մի քանի ճնճղուկ:
- Այս է մնացել, - հիասթափված ցույց տվեց նա:
- Ինչո՞ւ, պետք է որ շատ լիներ... Սարգի՛ս, ստացիր բաժինդ...
Արևն արդեն մայր էր մտել, երբ եկան Գագիկն ու Հասոն՝ գլխարկները հատապտղով լիքը:
- Շուռ տամ՝ դեպի ցա՞ծ, - սրտաբաց հարցրեց Հասոն:
Գագիկը նրա ձեռքը բռնեց.
- Տնտեսվարը ես եմ, նա չի... Բաժինդ եկա՛վ, հավաքի՛ր, Սարգի՛ս... Այ տղա, ոսկորներդ տե՞ղն են, հո ոչ մեկը չի՛ ջարդվել... Չէ՞... Դե լավ է, թե չէ ամբողջ Հովազաձորում մի սնդչի[13] չես գտնի:
Ձորի հատակում աղջամուղջը թանձրացավ և մութը սկսեց դանդաղ բարձրանալ դեպի գագաթները: Հետզհետե ժայռերը սկսեցին կուլ գնալ խավարին և Հովազաձորի կնճռոտ, խորդուբորդ, դեմքը աստիճանաբար հավասարվեց:
Խումբը մինչև ուշ գիշեր մնաց արահետում: Մի փոքր աշխատեցին, բայց ավելի շատ զրուցում էին Սարգսի հետ, սիրտ տալիս, վառելիք և հատապտուղ ցած թափում նրա համար: Թեև գիշերվա սառնամանիքը սեղմում էր, բայց նրանցից ոչ մեկը քարայր վերադառնալու ցանկություն չէր հայտնում: Բոլորն էլ հոգով իրենց կապված էին զգում այդ քարե արահետին, որի ներքևից ծուխ էր բարձրանում և կրակի շողքերն ընկել էին ժայռի լանջերին:
- Այ տղա, մի կրակի շուրջը պտտվի, գուցե շողքդ տեսնենք, լոլոզ բոյիդ կարոտել եմ, - ապրած սարսափից հետո առաջին անգամ կատակեց Գագիկը և երևի նրա կատակը տեղ հասավ, որովհետև հաջորդ վայրկյաններին մի վիթխարի ուրվական երևաց Հովազաձորի ճերմակ տափարակին և հսկայական մի ձեռք մեկնվեց դեպի դիմացի ժայռը, կարծես Տորք Անգեղն իր գերանաչափ ձեռքով ուզում էր պոկել ժայռերն ու նետել թշնամու վրա:
- Ա՛յ, հիմի որ կարոտս առա... Մեկ-մեկ շողքդ ման ածա, տեսնենք, մխիթարվենք...
Մինչ Գագիկն ուրախությունից այսպես շաղակրատում էր, Աշոտը ցած կռացավ և բարձր ձայնով հարցրեց.
- Սարգի՛ս, գնա՞նք, թե գիշերը մնանք այստեղ...
Սարգիսը լուռ էր:
- Տեսնո՞ւմ եք, էլի իրեն մասին է մտածում, -շշնջաց Աշոտը և բարձր ձայնով կրկնեց իր հարցը:
- Բա ինձ մենա՞կ եք թողնում, - լսվեց ներքևից:
- Չվախենա՛ս, հիմի ոչ մի գազան չի կարող քեզ մոտ գալ. անառիկ բերդի մեջ ես...
- Մենք դիմացում ենք, քեզ շուտ-շուտ ձայն կտանք, - սիրտ էր տալիս Հասոն:
- Դե, ի՞նչ ես ասում, դողում են, ախր սրանք էլ են մեղք, - անհամբեր գոչեց Աշոտը և նրա հարցի մեջ նախատինք զգացվեց:

---

[13] Սնդչի – ջարդվածքներ կապող հեքիմ

- Ի՞նչ ասեմ... դո՛ւք գիտեք...
- Դե հիմի դեսը լսիր: Մի մեծ փայտով կրակը սրբիր դեպի թուփը, իսկ դու պառկիր կրակի տաքացրած քարին: Դու միշտ ներսում եղիր, կրակը՝ դրսում: Այնպես արա, որ առաջիցդ կրակը պաշտպանի քեզ, հետևիցդ՝ ժայռի պատը: Հասկացա՞ր:
- Հասկացա...
- Լրիվ չհասկացար: Որ տակդ սառչի, նորից կրակը տեղափոխիր ու նրա տեղը ինքդ գրավիր: Այդ ձևով դու միշտ տաք կմնաս... Հիմի հասկացա՞ր...
- Հասկացա... Օ՜ֆ, ցավում է...
- Ոչինչ, պինդ կաց: Դե՛, բարի գիշեր...
- Բարի գիշեր, Սարգիս ջան, - խավարում լսվեց Շուշիկի բարակ և քնքուշ կանչը:
Ամո՞թ զգաց Սարգիսը, թե՞ ջերմություն, բայց Շուշիկի այդ կարեկից խոսքից հետո այլևս չտրտնջաց: Մթնում խարխափելով, խումբը իջավ ձորը և գնաց պատսպարվելու իր անձավ-օթևանում:
Ներս մտնելուն պես Գագիկը դիմեց դեպի այն խորշը, ուր մթերքի պահեստն էր:
- Ղուրբան ձեզ, շա՛տ մրսեցիք, հիմի ձեզ փետրահան կանենք ու կրակի վրա կտաքացնենք... Վա՛յ, էս ո՞ւր են ճուտիկներս...
Նա մթնում շոշափեց խորշը ոչինչ չկար: Իսկ Աշոտն ու Շուշիկը շեմքին կանգնած լուռ ծիծաղում էին:
- Աշո՛տ, պահեստս թալանել են, - խուճապարար գոչեց Գագիկը, բայց արձագանք չստացավ:
Շուշիկը չոքեց օջախի մոտ և քանդեց անթեղը: Բացվեցին մոխրի մեջ պահված շեկ ածխի կտորները: Աղջիկը նրանց իրար մոտ հավաքեց, իսկ Հասոն իր դանակով տաշեղներ էր պատրաստում և մեկնում նրան:
- Չլինի՞ թե առնետներն են տարել... Աշո՛տ, այստեղ առնետ կարո՞ղ է լինել...
- Ո՛վ գիտի...
Այդպես էլ Գագիկը մնաց կասկածների մեջ և տրամադրությունն ընկած կուչ եկավ խարույկի մոտ:
- Ա՛յ քեզ բա՛ն... Էլի առանց ուտելիքի մնացինք, - գլուխս օրորելով շշնջում էր նա ինքն իրեն:
Այդ ծանր միտքը զբաղեցնում էր նաև խմբի մյուս անդամներին:
Գիշերը մինչև լուսադեմ տղաները երբեմն դուրս էին գալիս անձավից, տեսնում էին հրե ցոլքերը ժայռի ճակատին և կարճ՝ եղևնու ստվերը դեպի ձորը երկարած:
- Սարգի՛ս, ո՞նց ես, Սարգի՛ս, - ձայն էին տալիս նրանք:
Սրտապնդվում էր աղետյալ պատանին այդ ձայներից և զգում, որ դրանք են իրեն կապում կյանքին, իր ընկերների հուսատու կանչերը:
Չլինեին իր ընկերները թեկուզ մի օր, նա կորած էր անդառնալիորեն...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ինչպես նեղության ժամին մարդուս միտքը արագացնում է իր ընթացքը

Վատ էին քնել այդ գիշեր մեր պատանիները և վատ տրամադրությամբ էլ դուրս ելան անձավից: Դուրս ելան դիմավորելու իրենց գերության տասներկուերորդ օրը... Բնությունն էլ լավ օր չէր խոստանում, երկինքն ամպած էր ու մռայլ: Ուտելիք չկար, փայտ չկար, ի՞նչ տանեին ժայռերում գերի մնացած իրենց ընկերոջը:
Լուռ ու անտրամադիր սկսեցին արմատական անել թփերը, ծառերից ճյուղեր ջարդել: Սառած ճյուղերին ձեռք տալ չէր լինում, այրում էին: Ուժ չկար, իսկ ճյուղերից ոչ մեկը չէր ուզում ջարդվել, նրանք դիմադրում էին կարծես կենդանի արարածների նման: Դա ևս պայքար էր, պայքար՝ կյանքի համար:
Հետզհետե տաքացան այդ պայքարում, բայց տրամադրությունները դեռ մռայլ էր: Ի՞նչ անեին հիմա, ինչպե՞ս շարունակեին ճանապարհ բացել դեպի ազատություն, երբ միջոցներ պիտի մտածեին փրկելու Սարգսի կյանքը: Ոմանց մտքում այդ հարցն էր, երբ Գագիկը դադարեցրեց աշխատանքն ու դիմեց Աշոտին:
- Օղակավա՛ր, մեզ սխալ ճամփով ես տանում:
- Ինչո՞ւ:

- Չգիտեմ ինչու, բայց բռնածդ ճամփան սխալ է, կարող է բոլորս էլ ոչնչանանք: Քանի ձյունը նորից չի փակել կածանը, մենք պետք է միայն այս ձորից դուրս գալու մասին մտածենք:
- Իսկ Սարգի՞սը:
- Իսկ նա մեր մասին մտածե՞լ է, որ մենք նրա մասին մտածենք, - հանկարծ բորբոքվեց Գագիկը: Քաղցն ու զրկանքները այդ բարի և կատակասեր պատանուն ևս հանում էին ափերից: - Թող դիմանա, գուցե կարողանանք կածանը բացել:
Գագիկի խոսքն ազդեց, իրոք, Սարգսի պատճառով խումբը կարող էր վերջնականապես փակված մնալ Հովազաձորում:
Գուցե, իսկապես, ավելի ճիշտ կլիներ ամեն ինչ թողնել և ճամփան բացել: Այդ դեպքում կազատեին և՛ իրենց, և՛ Սարգսին:
Նրանք շալակեցին ջարդված ճյուղերը և լուռ ու մտախոհ քայլեցին դեպի Դիվային կածանը (ինչպես հենց առաջին օրվանից անվանել էին նրան):
- Սարգիս, ո՞նց ես, Սարգի՛ս, - վերևից ձայն տվեց Աշոտը:
- Լավ եմ... Ցավում է՛... Հանեցեք ինձ այստեղի՛ց, հորս կասեմ մեծ նվերներ կտա ձեզ:
Լսելով մի գծուծ ու անարժան մարդու անունը, բոլորն էլ մռայլվեցին: Դե արի ու կյանքդ դիր սրան ազատելու համար: Վաղն էլ, իրոք, մի չնչին նվեր կտան քեզ այդ մարդիկ, ՞քվիտ՞ կլինեն հետդ ու հողին կհավասարեցնեն քո անձնազոհ արարքը:
- Նվերի անուն չտաս, թե չէ ոչ վառելիք կստանաս, ոչ սնունդ, - բարկացավ Աշոտը և փնթփնթաց. – Չարչի հոր նման կաշառքներ է խոստանում... Թո՛ւհ...
- Բա որ ասում եմ եկեք մեր գործը շարունակե՞նք, - իրենը պնդեց Գագիկը:
- Դո՛ւ ի՞նձ կասես, Հասո՛, իսկի չես խոսում:
- Ի՞նչ խոսեմ... պարզ չի՞ որ...,
Շուշիկը հետաքրքրությամբ նրան էր նայում:
- Պարզ է, իհարկե, - հաստատեց Գագիկը, - թիերը վերցրեք ճամփան բացենք:
- Ինձ չհասկացար, Գագի՛կ... Մենք՝ քրդերս՝ կամ կազատենք մեր ընկերոջը, կամ կմեռնենք նրա հետ միասին...
Եվ կարծես անհարմար զգալով, որ գովեստով է խոսում իր ազգակիցների մասին, նա գլուխը կախ սկսեց ցած թափել վառելիքը:
Շուշիկն այնպես խնդագին էր նայում Հասոյին, որ տղան նրա հայացքն զգում էր մերթ իր ծոծրակին, մերթ այտին, նայած ինչ դիրք էր ընդունում ճյուղերը ցած թափելիս:
Հասոյի այդ կտրուկ խոսքը սթափեցրեց թե՛ Գագիկին, որը թիակը ձեռքին պատրաստվում էր ճամփան բացելու, թե՛ Աշոտին, որ մինչ այդ տատանման մեջ էր:
- Կարծում ես մենք քրդերից պակա՞ս ընկերասեր ենք, - գոչեց նա, ապա ավելացրեց հանդիսավոր, երդումի նման. - Մենք Հովազաձորից դուրս չենք գա, մինչև որ չազատենք մեր ընկերոջը... Դե՛հ, գնանք Կաղնուտը, գուցե ելարանի նման մի բան ճարենք:
Աշոտը Կաղնուտ էր անվանում վերին ժայռի տակի այն քարքարոտ լանջը, ուր ցրիվ եկած մի քանի տասնյակ ծառեր կային:
Երբ տեղ հասան, Աշոտն ասաց.
- Պետք է մի երկար-բարակ ծառ գտնենք:
Այդ արևախանձ ու քարքարոտ վայրում երկար ծա՞ռ կլինի:
Շատ փնտրեցին, վերջապես կանգ առան զույգ ուռենիներից մեկի մոտ:
- Էլի շատ թե քիչ սա՛ բոյ ունի, այս ջահել ուռենին: Բացի դրանից, տակը փափուկ հող է, հեշտ է արմատահան անել:
Եվ Աշոտը թքեց ափերի մեջ ու սկսեց մագլցել ծառը:
- Հետևեցեք ինձ, - հրահանգեց նա:
- Ես է՞լ բարձրանամ, - ներքևից հեգնախառն հարցրեց Շուշիկը:
- Չէ՛, դու գնա Սարգսի համար մասուր ճարիր:
- Բոյնախին հետդ տար, որ թալանված սկյուռը քեզ չուտի, - խորհուրդ տվեց Գագիկը:

Աշոտը մագլցեց ջահել ծառի գագաթը և այնտեղից ցած կախվեց: Ծառի կատարը խոնարհվեց, տղան ճոճվում էր օդում...
- Վա՛յ, կընկնե՛ս, - շուռ գալով հեռվից կանչեց Շուշիկը:
- Գնա գործի՛դ, - գոչեց Աշոտը: - Հասո՛, մոտեցի՛ր, դու էլ կախվիր... Գագի՛կ, չվախենա՛ս, կախվի՛ր...
Երեք պատանիներ ճոճվում էին ծառի խոնարհված կատարին: Դալար և ճկուն ուռենին կռանում էր մինչև «գոտկատեղը», բայց արմատները ամուր էին, դեռ դիմանում էր:
- Աշո՛տ, էլ չեմ դիմանում, - տնքաց Գագիկը. նրան թվում էր, թե իր բազուկները հիմա պոկ կգան ուսերից:
- Ետ գնացեք, չեղա՛վ...
Դժվարությամբ նրանք ցած իջան ճոճվող կատարից և ծառի տակ նստելով, սկսեցին մտածել:
- Արմատը չի ուժեղ, մենք ենք թեթևացել, - դառնորեն նկատեց Գագիկը: - Քաշ չունենք, քա՛շ...
Աշոտը բրիչով փորում էր ծառի տակը:
- Ա՛յ, սա է պահում, - ցույց տվեց նա մի հաստ արմատ, որ ծառը անսասան էր պահում վերևից եկող փոթորիկների դեմ: - Հասո՛, գնա քարե դարի կացինը բեր:
Երբ Հասոն գնաց, Գագիկը դիմեց ընկերոջը.
- Խղճով ասա, արժե՞, որ մենք էսքան չարչարվենք նրա համար:
Աշոտը պատասխանեց հանդիմանական մի հայացքով: Երկար լռելուց հետո, երբ Հասոն վերադարձավ, նա շարունակեց իր միտքը հատու, ոչ առանց պաթոսի.
- Գուցե նա մարդ չի, բայց մենք պարտավո՛ր ենք մա՛րդ լինել: Բոլո՛ր դեպքերում և բո՛լոր պայմաններում...
Քարե կացնով նրանք փոխնիփոխ հարվածում էին ուռենու արմատին:
- Կացին հո չի, ծամում է անատամ գոմեշի նման, - դժգոհում էր Գագիկը:
Շատ չարչարվեցին, շատ հևացին ու քրտնեցին, մինչև որ արմատը ջարդելով մի կերպ կտրեցին:
- Դե հիմա բարձրանանք:
Երբ երեքն էլ կախվեցին ուռենու կատարից և նրան հակեցին դեպի ձորը, կարծես խուլ տնքոցներ լսվեցին երկրի ընդերքից, ճրթճրթոցներ, իսկ կատարը դանդաղ կռանում էր ու կռանում: Դիմադրում էր ծառը, մաքառում էր մահվան դեմ: Վերջապես կատարից կախված մարդկանց ծանրությանը չդիմացավ և տնքալով ու հեծեծալով ցած տապալվեց...
Տղաները թեթև քերծվածքներ ստացան, Հասոյի ոտքը ոլորվեց, Գագիկի արմունկը սևացավ քարին խփվելուց, բայց բոլորն էլ ուրախացան ծառի դեմ տարած իրենց փոքրիկ հաղթանակի համար:
- Ճյուղերը ջարդենք՝ կդառնա մեզ համար վառելիք, իսկ ինքը՝ ելարան: Դե՛հ, սկսենք:
Ավելի շուտ իրենց բազուկների ուժով, երբեմն էլ քարե կացինների օգնությանը դիմելով, նրանք վերջապես ճյուղերից ազատեցին արմատահան արած ծառը և քարշ տվին դեպի ձորը:
Շատ տանջանքներ կրեցին նրանք մինչև Դիվային կածանով իրենց անճոռնի ելարանը տեղ հասցրին և փորձեցին գոտիներով կախել ցած:
Հանկարծ Գագիկը վիզը երկարեց, քիթը առաջ մեկնեց ու սկսեց հոտոտել.
- Ժողովո՛ւրդ, հրա՛շք... ներքևից խորոված հոտ եմ առնում... Այ տղա, Սարգի՛ս, երևի ոտդ մոռացել ես կրակի մեջ թողել, ե՛տ քաշիր...
Պատասխանի փոխարեն խորոված հոտը ծխի հետ բարձրանում էր ժայռն ի վեր և խելքամաղ անում քաղցած պատանիներին:
Այնուամենայնիվ Աշոտի և Շուշիկի համար զվարճալի էր տեսնել Գագիկին այդպես անտեղյակ ու զարմացած:
- Հը, Սարգսին խորոված ացուն որտեղի՞ց, - ինքն իրեն ասում էր նա ու չէր կարողանում լուծել այդ հանելուկը: - Սարգի՞ս, - գոչեց նա կռանալով, - այ տղա, չլինի՞ արծիվներին բռնել խորովում ես...
- Ի՞նչ արծիվ, ծիտ եմ խորովում, - լսվեց ներքևից:
- Ծի՞տ... ծիտն էդտեղ ի՞նչ գործ ունի...
Ապա հանդիպելով Շուշիկի ժպտացող հայացքին, վերջապես գլխի ընկավ և մատը վրան թափ տվեց.
- Այ դու դավաճա՛ն...
Ապա ինքն իրեն ավելացրեց մեծավարի.

- Կինարմատի վրա իսկի կարելի՞ է հույս դնել... Ալմաստը չէ՞ր, որ Թմկաբերդի բանալիները հանձնեց թշնամուն...
Կարճ դուրս եկավ թե՛ ելարանը, թե՛ նրա ծայրին կապած գոտիների շարքը: Իր ծանրությամբ ծառը տղաների ձեռքից խլեց գոտիների ծայրը և զարնվելով ժայռի քիվին, որի խորքում Սարգիսն էր թաքնվել, մնաց կանգնած ապառաժյա պատն ի վեր:
- Սարգի՛ս, կարո՞ղ ես բարձրանալ այդ սանդուղքով, - ձայն տվեց Աշոտը:
- Կարճ է... շատ է կարճ... ո՞նց բարձրանամ, - քիչ հետո լսվեց հուսահատ պատասխանը:
Տղաները արահետին նստած լուռ մտածում էին: Օրվա կեսը նրանք անց էին կացրել այդ «ելարանը» պատրաստելու վրա: Ինչպե՜ս կորավ իրենց աշխատանքն ու թանկագին ժամանա՜կը... Այդքան ժամանակում արահետից առնվազն քսան քայլ բացած կլինեին:
Հիմա ի՞նչ անեն: Անողոք քաղցն էլ մի կողմից էր նեղում, ոչ ոք վեր կենալու կամ մի բան ձեռնարկելու տրամադրություն չուներ:
- Գագի՜կ, Հասո՜, զկե՜ռը, զկե՜ռը, եկե՜ք... - դիմացի ժայռից լսվեց Շուշիկի բարակ ձայնը:
Այդ կանչը տղաներին հանեց թմրած վիճակից: Գնացին ձայնի ուղղությամբ և գտան Շուշիկին մի ցածրիկ ու փշփշոտ ծառի վրա: Բոյնախը աչքը վեր տնկած, շրթունքները լիզելով սպասում էր պտուղ ընկնի, որ խփշտի, իսկ աղջիկը քաղում էր զկեռն ու լցնում փեշը:
Զկե՜ռ, ի՜նչ զկեռ: Ով ուշ աշնանը զկեռ է գտել անտառի՝ խորքում, նա կիմանա, թե ինչ բարիք է դա՝ մանավանդ քաղցած մարդու համար: Ծառի տերևները վաղուց էին թափվել, իսկ պտուղները մնացել էին մերկ, անսքող և ճյուղերի ծայրերից իրենց միշտ բաց թարթիչներով ակնապիշ նալում էին երկնքին: Դրանք կարծես մի-մի փոքրիկ պարկեր լինեին՝ թանձր ու քաղցր հյութով լցված մատնոցաչափ պարկեր:
Երբ կշտացան և Սարգսի բաժինն առանձնացրին, խումբը նորից խորհրդակցության նստեց:
Ինչպե՞ս ազատել Սարգսին, որ ծանր ջրաղացքարի նման կախվել էր իրենց ոտքերից և խանգարում էր քայլելու դեպի ազատություն:
Խելք-խելքի տվին և բոլորը միասին եկան այն եզրակացության, որ պետք է երկար պարան պատրաստել, կապել եղևնու բնից և ստիպել Սարգսին, որ այդ պարանով իջնի անդունդը:
Միակ «շինանյութը» այդ նպատակի համար կարող էր լինել թեղու ճկուն ու բարակ կեղևը:
Նրանք մինչև երեկո քրտնաթոր աշխատեցին և մինչև ճյուղերի ծայրը մերկացրին դժբախտ ծառին:
Գիշերն անքուն ու անհանգիստ անցավ: Օջախի շուրջը բոլորած, նրանք լուռ պարան էին գործում թեղու ճիլոպներից: Վերջապես բոլորի գործած կտորները միացրին, իրարից ոչ հեռու կապեր պատրաստեցին և լուսադեմին քուն մտան ծանր տրամադրությամբ:
Պառկելուց առաջ Հասոն դուրս եկավ այրից, որ քարերով փակի նրա մուտքը, ինչպես անում էր ամեն երեկո: ՞«Ո՞ւր է կորել մեր Բոյնախը», - մտածեց նա և վերադարձավ, որ վերցնի մահակն ու գնա շանը փնտրելու:
Այդ պահին շեմքում շխկրտոց լսվեց, թույլ ծմրոց և Բոյնախը ներս ընկավ տագնապահար: Նա փաթաթվել էր տիրոջ ոտներին և ստեպ-ստեպ շուռ էր գալիս, նայում շեմքին սև պատի նման կանգնած խավարին, կարծես մեկն այնտեղ դարան մտած սպասում էր շան դուրս գալուն, որ հափշտակի նրան:
Այո՜, ամեն ինչից երևում էր, որ շունը մի ահռելի բանի է հանդիպել ու խիստ վախեցել, և՛ աչքերն էին վախ արտահայտում, և՛ դողում էր ամբողջ մարմնով, և՛ պոչն էր խոթել հետևի ոտքերի արանքը, ինչպես անում են շները իրենցից ուժեղ հակառակորդի առաջ:
Հասոն շոյեց շան գլուխը, հանգստացնող խոսքեր շշնջաց քրդերեն, բայց կենդանին շարունակում էր դողալ և ձգտել դեպի այրի խորքը:
«Ի՞նչ կարող է լինել... Գայլից սա էսպես չի վախենա...», - տարակուսած շշնջաց Հասոն և երկաթած գլխով իր չոմբախը վերցնելով, դուրս եկավ այրից: Շունը չհետևեց նրան...
Պատանին քար նետեց դեպի թփերը, ձայն տվեց՝ ոչինչ չկար: Այնպես խաղաղ էր շրջակայքը, կարծես ամբողջ Հովազաձորում ոչ մի շնչավոր չկար:
«Էլի էն է...», - մտածեց Հասոն, մթնում շողացող աչքերը հիշելով: Ապա տարակուսանքի մեջ նա վերադարձավ անձավը, քարերով փակեց նրա մուտքը և կրակն անթեղելու փոխարեն թեժացրեց:

«Պետք է վառ պահել, ամեն գազան էլ կրակից վախենում է...», - վճռեց նա և Բոյնախի բրդոտ վիզը գրկելով՝ թիկն տվեց իր կոշտ անկողնուն:
Նրա գրկում շունը դեռ շարունակում էր դողդողալ...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչպես նույնիսկ շունը չի հանդուրժում կոպիտ վարմունքը

Բացվեց խմբի գերության տասներեքերորդ օրը: Դարձյալ առաջին օրերի նման մառախլապատ, դարձյալ չարագուշակ...
Եթե արեգակի դեմքը ծածկված չլիներ, նա իր շողքը գցած կլիներ անձավի մրոտ պատին, կարթնացներ պատանիներին և նրանք այրից դուրս գալով կտեսնեին, որ երկրին կյանք տվողը արդեն անցել է իր օրվա ճամփի կեսը ու այժմ ցած է նայում զենիթից: Նախորդ օրվա մեծ ապրումներից ու մեծ չարչարանքներից, ինչպես և անքուն գիշերից հետո նրանք երևի քնեին մինչև իրիկնադեմ, եթե հեռվից չլսվեր Սարգսի աղիողորմ կանչը:
Այրի քարե դուռը հրելով՝ մեր պատանիները դուրս ելան, հորանջեցին, շարժումներ արին՝ քունն ու թմրությունը վանեցին:
- Գալի՛ս ենք, համբերիր, գալի՛ս ենք, - ձայն տվեց Աշոտն ու մտահոգ ավելացրեց.- Ի՞նչ ենք տանելու Սարգսի համար...
- Հա՛, այսպիսի պարանով անդունդն իջնելու համար պետք է կուշտ լինել, - համաձայնեց Գագիկը:
Երեկվա հավաքած զկեռից մի քիչ մնացել էր, լուռ կերան, ձյուն հալեցին-խմեցին վրան և անտրամադիր վեր կացան:
- Շուշի՛կ, դու մասուր գտիր տար Սարգսին և սիրտ տուր: Ասա, որ երկար պարան ենք պատրաստել իր համար, միայն... Հասո՛, ձեռաց մի երկու մոշահավ չխփե՞նք, հետո...
Շուշիկը հավանություն տվեց Աշոտի մտքին, բայց շտապեցրեց.
- Որսին՝ կես ժամից ոչ ավելի... Չուշանա՛ք, մեղք է տղան... Իսկ Գագի՞կը:
- Գագիկը վառելիք կհավաքի Սարգսի համար: Չէ՛, կարիք չկա, նրան այսօր կազատենք: Գագի՛կ, վառելիքը դու մե՛զ համար հավաքիր:
Այսպես ամեն մեկի անելիքը որոշելով, Աշոտը վերցրեց իր աղեղն ու նետերը և դուրս ելավ: Նրան հետևեց Հասոն և նկատեց, որ Բոյնախը այրից դուրս է գալիս վարանոտ քայլերով, վախվխելով:
Եվ Հասոն Աշոտին պատմեց իր տեսած վառ աչքերի ու շան տարօրինակ վարմունքի մասին:
Դա քիչ մտահոգություն չպատճառեց որսորդ պատանուն:
- Գնանք հետքը փնտրենք, - առաջարկեց նա:
Բայց ուր երևացել էին այն խորհրդավոր կենդանու աչքերը, արևահայաց ու քարքարոտ լանջ էր, - վաղուց ձյուն չկար այստեղ: Իսկ ձյունոտ լանջերին հետք փնտրելու ոչ ժամանակ կար, ոչ ուժ:
«Գիշերը կատվի աչքերն էն այդպես ուժեղ լույս տալիս... Բայց կատուն այստեղ ի՞նչ գործ ունի», - մտածում էր Աշոտը: - «Հա՛, երևի մանուլ կատու է եղել...»:
Մանուլը միջինասիական տափաստանային խոշոր կատու է, որ Մուղանի վրայով երբեմն մտնում է Արաքսի հովիտը: Հենց Այգեձորի հանդում կենդանաբանները այդպիսի մի կատու էին հայտնաբերել և խնդրել Արամին՝ ձեռք բերի կենդանաբանական թանգարանի համար: Շատ օրեր և գիշերներ հետապնդելուց հետո, որսորդը վիրավորել էր գազանիկին և զարմացել նրա խիզախ վարմունքից. վիրավորը ցատկել էր, որ բռնի Արամի կոկորդից, բայց անհաջող. կոտորակը հենց օդում շամփրել էր նրան:
«Գուցե ա՛յդ կատվից է եղել...», - ինքն իրեն նորից հանգստացրեց Աշոտը:
- Լա՛վ, Սարգսին ազատենք՝ հետո կզբաղվենք քո աներևույթ գազանով, - վճռեց նա: - Որ գազան է երևացել, ուրեմն մենք պետք է տեգ ու նիզակ էլ շինենք, թե չէ... Վա՛յ, մոշահավ, կաց ե՛ս կրակեմ...
Շատ դես-դեն ընկավ, շատ նետեր կորցրեց Աշոտը, մինչև որ հաջողվեց խփել առաջին պատահած մոշահավին: Այն էլ անպիտան Բոյնախը վերցրեց ու փախավ դեպի Կաղնուտը, ուր Հասոն մի սկյուռի ծառն էր բարձրացել և ներքևից նրա վրա նետեր էր արձակում:

- Դեսը բեր, ա՛յ սատկած, - գոռում էր Աշոտը շան հետևից վազելով:
Ամեն որսորդ որևէ կենդանի խփելուց անմիջապես հետո, բնականաբար ցանկանում է տեսնել իր կրակոցի արդյունքը, շոշափել իր խփած որսը, կախել կողքից, բավականություն տալ իր որսորդական կրքին: Դե որսորդների այդ բնավորությունն ինչ իմանար Բոյնախը: Նա էլ ի՛ր ներքին ձայնին էր ունկնդրում, «Ճանկդ ո՞րս ընկավ, շուտ հասցրու տիրոջդ...»:
Աշոտը՝ որսի պահին գրգռված մարդ, զայրացավ շան այդ վարմունքից, քարեր նետեց հետևից: Իսկ երբ հևիհև հասավ Հասոյին, ոտքով մի հարված հասցրեց նրա մոտ գոհ կանգնած կենդանուն:
Հովիվ պատանին վայրկենապես կարմրեց, աչքերը փայլատակեցին թուխ դեմքի վրա: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե Աշոտը այդպես անխիղճ կերպով իրե՛ն խփեր, ոչ թե իր սիրելի Բոյնախին...
- Ա՛ռ- ասաց նա մռայլ, մոշահավը տիրոջը հանձնելով: Հանձնեց և շուռ եկավ դեպի ծառը, որի վերին ճյուղերից մեկին մեկնվել էր սկյուռն ու իր մանր, պսպղուն աչքերով ցած էր նայում: Այնպես ուժգին տղան քաշեց լարը, որ աղեղը կորացավ, գրեթե երկուտակվեց և նրանից պոկ եկած նետը գնդակի նման վզզաց ծառն ի վեր:
«Սրան նայիր... Սա էլ է ինքնասիրություն ունեցել...», - զարմացավ Աշոտը՝ աչքը զարնված գազանիկին: Սկյուռը ճյուղից-ճյուղ խփվելով ցած եկավ ընկավ, բայց Բոյնախը իսկի կթողնե՞ր գետին ընկնի, վեր թռավ և՝ հա՛մփ՝ բռնեց օդում:
- Տո՛ւր, - նորից կոշտ տոնով պահանջեց Աշոտը:
Շունը ետ-ետ գնաց, թշնամաբար մռռացրեց և որսը հանձնեց իր տիրոջը:
Հասոն ենթարկվում է, բայց ահա այս կենդանին ըմբոստանում է իր դեմ, չի ենթարկվում: Դա զայրացնում էր Աշոտին:
- Ես դրան կստիպեմ, որ խփած որսը ինձ տա, - կտրուկ հայտարարեց նա:
- Փորձի՛ր, - համեստորեն, բայց հեգնանքով պատասխանեց Հասոն:
- Դե ասա, թող հետս գա ինձ համար որս փնտրի, տես ոնց եմ դրան դաստիարակում...
Հովիվ տղայի բերանի մի անկյունում հեգնական ժպիտ երևաց և իսկույն չքացավ:
- Թե՞ որս փնտրել չգիտի, - հարցրեց Աշոտը արհամարհանքով:
- Գիտի... Մի քիչ գիտի... Հայրս է սովորեցրել, - հոնքերը խոժոռելով պատասխանեց Հասոն և կարգադրեց.
- Բոյնա՛խ, գնա՛...
Շունը հասկացավ և դժկամությամբ հետևեց Աշոտին: Հետևեց, բայց Հասոն նրա աչքերի մեջ կարդում էր քիչ առաջ կրած վիրավորանքը:
Ժայռերի ստորոտով անցնելիս, Աշոտը կարգադրեց.
- Բոյնա՛խ, փնտրի՛ր...
Շունը ծույլ-ծույլ սկսեց խուզարկել ժայռի ճեղքերը, մանր թփերի տակ և հանկարծ կանգ առավ մի քարի մոտ, որ նստած եզան էր նման: Բոյնախը որսորդական շուն չէր, բայց երբ հարկավոր էր շատ զգոն լսել որևէ շշուկ, սովորություն ուներ առաջին աջ ոտքը կտրելու գետնից և լարված դիրք ընդունելու, ինչպես դա անում է աղվեսը:
Աշոտը աղեղը լարին դրած զգուշությամբ մոտեցավ: Շունն այնպես էր ոտքը բարձրացրած քարացել տեղում, որով ուզում էր հասկացնել, թե քարի տակ թաքնված որս կա, և շա՛տ կարևոր որս, որի հոտն ինքն առնում է, բայց չի տեսնում նրան:
«Քնած նապաստակ է... էն մյուսի ընկերը...», - անցավ տղայի մտքով և նա ալեկոծվեց, ա՛յ թե հաջողվեր բռնել կամ խփել այդ նապաստակի՛ն...
Եվ իր համար էլ անսպասելի կերպով, այդ մտքի հետ նրա առաջ պատկերացավ Շուշիկի շիկաճերմակ դեմքը՝ խարտյաշ ու մետաքսի նման փայլուն մազերի շրջանակի մեջ: Իր խաժ աչքերով այնպե՛ս, սիրալիր ու մեղմ է նայում նա մարդու, երբ տեսնում է նրա լավ արարքը...
Աշոտը շունչը պահած մոտեցավ քարին, աղեղն առաջ մեկնեց՝ ոչինչ չկա: Կռացավ նայեց քարի տակ՝ ոչ մի շունչ արարած:
Հանկարծ քարի ճեղքից մի մեծ բզեզ դուրս թռավ բզզոցով, և հենց նա թռավ, շունը ոտքը ցած դրեց և յուրովի «ժպտաց»: Կարծես արդեն կատարվել էր իր նպատակը:

- Սրա՞ համար ինձ քարշ տվիր բերիր, տո սատկած, - զայրացավ Աշոտը մի քար վերցնելով:
Բոյնախը փախավ ուրախ վնգստոցով, երևի մտքում զվարճանում էր իր չարաճճի արարքի վրա ու «սիրտը հովացնելով» ասում. «Կերա՞ր...»:
Հետևից զուսպ ծիծաղի ձայն լսվեց: Շուռ եկավ՝ Հասոն էր:
«Տեսնո՞ւմ ես, շունն էլ չի տանում կոպտությունը», - կարծես ասում էր նրա հայացքը:
Աշոտը շփոթվեց ու գլխիկոր քայլեց դեպի Դիվային կածանը...
Գագիկն ու Շուշիկը արդեն այնտեղ էին: Նրանք կեղևե պարանը հասցրել էին Սարգսի անկման վայրն ու անհամբեր սպասում էին որսորդների վերադարձին:
- Ա՞յ հիանալի որս, - գոչեց Գագիկը՝ տղաներին ընդառաջ գնալով: - Մորթին կգցենք Շուշիկի վիզը, կուղարկենք ակումբ՝ պարահանդեսի, իսկ միսը կկախենք այրի մի անկյունում, մինչև գարուն առատ-առատ կուտենք... Իսկ էդ ի՞նչ թռչուն է, վայրի հնդուհա՛վ...
Աշոտը չէր արձագանքում կատակներին և ոչ էլ զգում էր այն հաճույքը, որ հայտնի է միայն հանդից որսով վերադարձող մարդուն: Բայց այդ հաճույքը համակել էր քուրդ պատանուն: Տեսնելով իր սպանած սկյուռը Շուշիկի ձեռքին, նա ալեկոծված մտածում էր. «Երանի իմանա, որ ես եմ խփել...»: Բայց որտեղի՞ց իմանար, Հասոն իսկի կասե՞ր որ, իսկի ընկերոջ թիկունքը գետնովը կտա՞ր... այն էլ աղջկա մոտ...
Իսկ Բոյնախը: Նա հեռու կանգնած սառը և օտարոտի նայում էր Աշոտին: Տղան բռնեց այդ հայացքը և գլուխը կախ գցեց. այդ հայացքը նրան մտածել էր տալիս իր վարմունքի մասին...
Շուշիկը թռվռաց, սկյուռի թավամազ պոչը հպեց իր այտին: Դրանից Աշոտն ավելի մռայլվեց. «Որ իմ խփածը լիներ, այդպես չէր գուրգուրի...», - անցավ նրա մտքով:
Աշոտն ակնհայտորեն պղտորված էր: Նրա համար անսպասելի էին թե՛ շան այն զարմանալի վարմունքը, թե՛ քուրդ պատանու այն ըմբոստ հայացքը...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչպես Աշոտը հասավ այն բանին, ինչին որ ձգտում էր այնպես համառորեն

Աշոտը սթափվեց Գագիկի կանչից:
- Ա՛յ տղա, թռչում ես առանց պարաշյուտի ու մեզ թողնում ցավի մեջ, - ժայռի դիմաց կանգնած նախատում էր նա Սարգսին, որ նստել էր ժայռի նեղլիկ գոգին և կրած սարսափներից կապտած ու ապշահար՝ իր առաջն էր նայում: Լավ էր, եղևնին իր զզգզված և աջ ու ձախ տարածած ճյուղերով փակում էր անդունդի երախը տղայի աչքից, թե չէ լեղաճաք կլիներ և գուցե շփոթմունքից ցած ընկներ:
Վերևից նա սկսեց լալագին ձայնով իր ամենօրյա աղաչանքը.
- Ձեզ մատա՛ղ, ինձ հանեցեք այստեղից...
Տղաները լուռ էին:
- Փրկի՛ր ինձ, Աշոտ ջան, գուցե մի օր էլ ես եմ քեզ պետք գալու, - խնդրում էր Սարգիսը:
Աշոտը հեգնանքով ժպտաց:
- Վայ մեռնի իմ գլուխը, որ դո՛ւ պիտի ինձ պետք գաս, - ասաց նա՝ կարծես իր համար: Տրամադրությունը վատ էր, մաղձը Սարգսի վրա էր թափում:
Շուշիկը նայում էր նրան և հանդիմանանքով գլուխն օրորում: Նրա հայացքը կարծես ասում էր. «Մեծամիտ մի՛ լինիր, Աշո՛տ, լավ չի...»:
- Ի՛նչ ես նայում... Ինձ նո՞ր ես տեսնում, - բարկացավ Աշոտը՝ աղջկա նախատող հայացքից նեղվելով: Նրան թվում էր, թե այդ օրը բոլորն էլ լարված են իր դեմ, նույնիսկ Բոյնախը:
- Ինձ հանեցեք այստեղից, ձեզ մատա՛ղ, - նորից լսվեց Սարգսի կերկերուն ձայնը:
- Ո՞նց հանենք, հնար չկա...
- Իսկապե՞ս հնար չկա, պարանով հնարավոր չէ՞, - հարցրեց Շուշիկը: Նա աչքերը հառել էր Աշոտի կլոր դեմքին: Իսկ սա շպրտեց.
- Գուցեև հնար կա, բայց այստեղ չի:
- Իսկ ո՞ւր է...
- Գնացել է թաքցրած ընկույզի մոտ:

- Ինչ անսիրտն ես: Տղան կործանվում է, իսկ դու ընկո՞ւյզն ես հիշում: Ամոթ է, ամո՛թ...
- Ոչ թե ընկույզը, այլ նրա հոգին ենք հիշում: Վերջ ի վերջո սրան պե՞տք է զգացնել տալ, որ ինքն առանց ընկերոջ, առանց կոլեկտիվի ոչինչ է:
Իր խոսքերից Աշոտը նորից զգաց, որ զայրույթը բարձրանում, ալիք է տալիս իր ներսում: «Ինչ են այսօր բոլորն էլ իմ գլխին խրատ կարդում», - նեղվում էր նա ու հետն էլ մտածում. «Մորթապա՛շտ, կաշին փրկելու համար տես ո՛նց է փոխվել, ո՛նց է լեզու թափում...»: Նա բարձր ձայնով հարցրեց.
- Սարգի՛ս, բա դու միշտ ասում ես՝ ամեն մարդ իրեն համա՞ր: Դե քեզ համար ապրիր այդտեղ, էլ ինչ ես ուզում մեզնից...
- Սխալ եմ ասել, Աշոտ ջան, փրկի՛ր, - մղկտաց տղան:
Գոհունակության մի լայն ժպիտ անցավ պատանու լայն դեմքով. «Հը, կակղեցի՞ր...», - ասում էր այդ ժպիտը: Գոհունակություն այն բանի համար, որ երկար ու համառ պայքարից հետո նա հասավ ինչին ձգտում էր: Վերջապես Սարգիսը մեղա եկավ, վերջապես զղջման խոսք ասաց:
Դրանից Աշոտը բավարարություն զգաց, տրամադրությունը փոխվեց:
- Հավատա՞նք, - հարցրեց նա ընկերներին:
- Պիտի հավատանք: Բայց չհավատանք էլ՝ պիտի ազատենք, ինչ արած, - իր կարծիքը հայտնեց Գագիկը:
- Հասո, պարանը տար վերևից իրեն տուր, թող ծայրը կապի եղևնուց, - պատվիրեց Աշոտը առանց նայելու ձեռքն աջ աչքին դրած պատրաստակամ կանգնած քուրդ պատանու դեմքին:
Իսկ սա զգում էր, թե ինչից է պղտորված իրենց պետը, ու մտքում ասում էր մեղմությամբ. «Դու էլ կկակղես, կուռո՛, դեռ շա՛տ կկակղես...»:
Մոտ կես ժամ անցավ մինչև Սարգիսը ստացավ ճիլոպե պարանը և տնքտնքալով նրա ծայրը կապեց եղևնու բնից ու ցած կախեց:
- Է՛հ, ուղտի պոչի նման բան է, - հիասթափված բացականչեց Գագիկը:
- Սարգի՛ս, մոտիդ թիակի կոթը կապիր պարանի ծայրից, - պատվիրեց Աշոտը:
Սարգիսը լուռ ու մունջ այդ ևս արավ: Փայտի ծայրը կախված էր անդունդի հատակից մոտ տասը մետր բարձրության վրա: Ինչ անեին, այլևս կեղև չէր մնացել թեղի ծառի վրա:
- Մնում է պարանի ուղղությամբ ձյուն կուտակել, - հնարը գտավ Աշոտը:
- Հա, արդեն նա սովոր է առանց պարաշյուտի թռչելու, նորից կթռչի, ինչ կա որ, - ուրախացավ Գագիկը:
- Դե՛հ, վեր կացեք ձյուն կրենք...
- Էս պարանը փորձե՞լ եք, որ ինձ եք տվել, - վերևից հարցրեց Սարգիսը:
- Ի՞նչ փորձենք, լղարել, մի հավի չափ ես դառել, չի՛ կտրվի, մի՛ վախենա:
- Չէ՛, Գագի՛կ, փորձել հարկավոր է... Մարդու կյանքի հետ հո չե՞նք խաղում, - նախատեց Շուշիկը: - Սարգի՛ս, պարանը ցած գցիր:
Անճոռնի, ծուռումուռ ճոպանը, որ առաջին հայացքից ամուր էր թվում, անպետք դուրս եկավ: Կապել էին մի ծառի ճյուղից և ո՛վ կախվում էր նրանից, կտրվում էր:
- Համա ազատելու էինք Պարույրի տղային հա՛, ձեր արևը վկա, - ծիծաղում էր Գագիկը: - Իսկական եղբայրական օգնություն էր լինելու... Ա՛յ խրախուսելի թռիչք... դեպի անդունդը...
- Դա նրանից է, որ ձմեռը թեղու կեղևը ցամաքած է լինում, - պատճառաբանեց Աշոտը:- Գարնան «ջուր ընկած» ժամանակ այս պարանից արջառ կախեիր չէր կտրվի: Է՛հ, ինչ արած, ուրի՛շ բան մտածենք: Շուշի՛կ, զկեռի հոգեպահուստ կունենաս, տուր Սարգսին, թող ուտի, մենք խելք-խելքի տանք, տեսնենք ինչ ենք անում... Ասենք, պարապ նստելով ոչինչ չի լինի: Գնա՞նք,, թե՛ կաշխատենք կածանի վրա, թե՛ կմտածենք:
Քիչ անց նրանք շարունակում էին իրենց տանջալի աշխատանքը Դիվային կածանը մաքրելու վրա:
- Բա ինձ համար ի՞նչ եք անում... Բա ես էստե՞ղ եմ մնալու... - լսվեց Սարգսի լալագին ձայնը, նա տեսել էր ժայռի լանջով ցած հոսող ձյան «ջրվեժները» և այնպես կարծել, թե ընկերները լքել են իրեն:
- Գնում ենք գյուղից քեզ օգնություն բերենք, - հուսադրեց Գագիկը:
- Հա, գիտեմ, թե ինչ բանի եք... Ձեր ազատվելու մասին եք՝ մտածում... վա՛յ, մամա ջա՛ն...
- Մի՛ գոռա, համ աշխատում ենք, համ մտածում... Պարանը անպետք դուրս եկավ, սանդուղքը՝ կարճ...

Երեկոյան նրանք սկյուռն ու մոշահավը նետեցին Սարգսին և վատ տրամադրությամբ վերադարձան քարայր:
«Գոնե մորթին կպահի՞, որ Շուշիկին տանք...», -ճամփին մտածում էր Հասոն: Նրա միտքը դեռ իր որսի հետ էր:
Այդպիսի հմայք ունի որսը: Որսը երբեք չի մոռացվում, անգամ ամենափոքրը, չնչինը...
Եվ եթե խփածդ որսը ուրիշը տարավ, ուրեմն սիրտդ էլ հետը տարավ:
Գիշերը բոլորել էին կրակի շուրջը և լուռ մտածում էին: Երբեք նրանք այդքան հուսահատ չէին եղել: Հերթը Գագիկինն էր պատմություններ անելու, բայց նրա կատակները չքացել էին, խոսելու տրամադրություն չկար: Ինչպե՞ս ազատեն իրենց աղետյալ ընկերոջը, որի նկատմամբ այլևս ոչ մեկի սրտում չէր մնացել ոչ վրեժի, ոչ ատելության զգացում:
- Լավ, պատմեմ, - վերջապես տեղի տվեց Գագիկը: Եվ նա մի քանի կարճ պատմություններ արավ իրական կյանքից, բայց բոլորն էլ ժայռից ցած թռչելու դեպքեր դուրս եկան, պատմելիս անգամ նրա ուղեղը այդ ուղղությամբ էր գործում: Պատմում էր տխուր, անտրամադիր, առանց իրեն հատուկ հումորի: Բայց դարձյալ զգացվում էր նրա կենսախինդ բնավորությունը, կյանքի սերը, նրա մոտ բոլոր դժբախտ պատահարներն էլ վարդագույն վերջավորություն էին ունենում:
Այսպես, Գառնիից մի հարս ընտանեկան մի վեճի պատճառով որոշում է վերջ տալ իր կյանքին: Գնում կանգնում է Ազատ գետի վրա կռացած ժայռերից մեկին, մնաս բարի է ասում աշխարհիս, աչքերը խփում ու նետվում անդունդը...
Շուշիկը, որ ակնդետ ու լարված լսում էր, ճչաց.
- Վա՛յ... խե՜ղճ աղջիկ...
- Խեղճ չի, անուշ ջան, հիմի իրենց գյուղում շատ լավ էլ ապրում է: Միայն կաղում է մի ոտքից:
- Ինչպե՞ս, կենդանի՞ է մնացել... Ի՞նչ հրաշքով:
- Առանց հրաշքի: Էն որ մեր հին գյուղերում հարսների փեշերը լայն են, կարծում ես մենակ շնորհքի համա՞ր է: Ցած թռչելիս քամին մտնում է դրա փեշերի մեջ, ուռեցնում է հագի բոլոր դեյրաներն էլ: Հո գիտեք, որ սարի գյուղերում հարսները իրար վրա չորս-հինգ շոր են հագնում:
- Հետո՞, հետո՞, - առաջ թեքված, անհամբեր հարցնում էր Շուշիկը:
- Հետո այն, որ դեյրաներն ուռչում-փքվում են հովանոցների նման ու մարդու աղջիկը փառավոր կերպով վայրէջք է կատարում գետի ափին... Ափսո՜ս, հին ձևի հագնված լինեիր, շորերդ կտայինք Սարգսին, կհագներ ու...
Մյուս պատմությունը ևս ողբերգական սկիզբ ուներ:
- Ազիզբեկովի շրջանի նախկին Ղուշչի գյուղից մի հարս Ջերմուկից ներքև անտառում մի արջի է հանդիպում: Արջն ընկնում է հարսի հետևից, ով գիտի, ուտելո՞ւ, թե հետը կատակ ասելու համար:
- Չե՞ք հավատում, - հարցրեց Գագիկը: - Ինչ չհավատալու բան կա, քանի որ նույն շրջանի Կարմրաշեն գյուղի կոլտնտեսության նախագահի կնոջը արջը պատահում է հանդում, գրկում է, իր քնքուշ թաթերով շոյում նրա թշերն ու երբ բանջար քաղող կանայք հարայ-հրոց են բարձրացնում, սիրտը կոտրված թողնում հեռանում է... Որսորդներն ասում են, արջերն այդ սովորությունն ունեն, չգիտեմ փչո՞ւմ են, թե ճիշտ են ասում: Դու, Աշո՜տ, որպես որսորդի տղա, այդ բանը պիտի իմանաս:
Մի խոսքով, ջերմուկցի հարսը լեղապատառ փախչում է, արջն էլ դրա հետևից: Գալիս դեմ է առնում Արփա գետին նայող մի քարափի: Թիկունքում գազանն է, ներքևում՝ անդունդը, ի՞նչ անի խեղճը: Ու նետվում է ցած... բայց էլի շորերը փրկում են դրան, ուռչում են, ամեն մեկը մի պարաշյուտ է դառնում, բայց ձորը խոր է լինում, եթե ներքևում կուտակված խազալը[14] չլիներ, ոտները կփշրվեին: Ուրեմն, եզրակացություն՝ իմ ջուխտ պատմություններից. Սարգսի ուղղությամբ մի փափուկ բլրակ պիտի շինենք: Կուզեք ձեռքերով խոտ քաղեցեք, կուզեք խազալ հավաքեցեք լցնենք շորերի մեջ և ուռած-փափուկ պարկերի նման դնենք իրար վրա, որ ընկնելիս կենդանի մնա: Կուզեք... Սպասեցե՛ք, ա՛յ քեզ գյո՛ւտ...

[14] Խազալ – չորացած, թափված տերևներ

Նա և՛ պատմում, և՛ չարչարվում էր մեջտեղից խանձված մի երկար ձողի վրա, որ կիսի, գցի կրակի մեջ, բայց ջահել կաղնուց կտրված այդ ձողը, որ սառած ժամանակ հեշտությամբ ջարդվել էր ձեռքով, հիմա տաք վիճակում երկուտակվել էր, բայց չէր ջարդվում:
- Ըմբռնեցի՞ք, - որոտաց Գագիկը ոտքի կանգնելով:- Էգուց ևեթ մենք Սարգսին կազատենք գերությունից: Կաղնու շիվեր կտրեցեք, տաքացնենք օղակներ շինենք: Այսինքն ոչ թե օղակներ, այլ մի երկար շղթա՝ փայտե օղակներով...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես մեր պատանիները շարունակում էին նորանոր միջոցներ հորինել իրենց ընկերոջը փրկելու համար

Անուժ և գունատ արևը վաղուց ծագել էր, բայց մեր պատանիները դեռ դուրս չէին եկել քարայրից: Դա նրանց գերության տասնհինգերորդ օրն էր: Կարմրած մոխրի մեջ նրանք կաղնու ճյուղեր էին փափկացնում և միացյալ ուժերով կլորացնում, ծայրը ծայրին հասցնում ու իրար վրա դրված ծայրերն ամուր փաթաթում քանդված «պարանի» ճիլոպով:
- Փայտը վերջացավ, - հայտարարեց Հասոն, երբ հերթական օղակը արդեն կռել էին:
- Մոխիրը մի լավ խառնիր:
Հասոն կատարեց պատվերը և մի բազուկի երկարությամբ ձող ևս գտավ:
- Կլորացրե՛ք: Ոչի՛նչ, թող փոքրիկ օղակ դուրս գա: Սպասեցեք մի հաշվեմ... մեկ, երկու, երեք... քսանչորս օղակ ունի մեր շղթան: Գագի՛կ, ծայրից բռնիր, հետևիցդ քարշ տալով դուրս արի: Օհո՛, սա հո տասը մետր կլինի:
- Որ ծանրություն կախենք՝ ավելի կերկարի, - ասաց Շուշիկը:
- Հա, հենց որ Սարգիսը կախվեց՝ կլոր օղերը երկարելու- ձվաձև են դառնալու, մեր շղթան երկու մետր էլ դրանից կերկարի: Բայց էլի կարճ է, մա՛րշ, գնանք էլի շիվեր կտրենք:
Եվ վերջին օղակը շղթային հագցնելուց հետո Աշոտը դուրս ելավ անձավից:
Հեշտ է ասել «շիվեր կտրենք»: Դե փորձիր մատիդ հաստությամբ կաղնի շիվ ջարդել, պրկված ու ճկուն պողպատի նման դիմադրում է: Այնպես որ իսկական գործ անողը դարձյալ Հասոյի դանակն էր:
Անքուն ու քաղցած՝ նրանք մինչև կեսօր շարունակեցին երկարացնել իրենց «փայտե շղթան»: Երբ հասան երեսունվեց օղի, Աշոտը հայտարարեց.
- Էլ ես համբերություն չունեմ, գնա՛նք...
Ժայռերում լսվում էին Սարգսի աղիողորմ կանչերը.
- Շուշի՛կ, գոնե դո՛ւ խիղճ ունեցիր... փայտ բե՛ր... Մի քանի զկե՛ռ...
- Սպասի՛ր, գալիս ենք...
Եվ երբ մոտեցան, Աշոտը սիրտ տվեց.
- Քեզ ոչ փայտ է պետք, ոչ զկեռ: Հիմա մենք քեզ կազատենք:
- Ինչո՞վ, ո՞նց... Ձեզ մատաղ, շուտ արեք, բա ես ձեր ընկերը չե՞մ...
- Մենակ ընկե՞ր ես, դու մեր աչքի լույսն ես, մեր քաղցր ազիզն ես: Քո կարոտից քունս ե՞րբ է տանում որ,
- ծիծաղը հազիվ զսպելով ասում էր Գագիկը:
Սարգիսը սսկված լսում էր ու չէր հավատում իր ականջներին. այդ ո՞ր օրվանից է ինքը Գագիկի աչքի լույսը դարձել: Թե՞ ձեռ է առնում...
Այդ առեղծվածը դեռ Սարգիսը չէր լուծել, երբ շխկշխկալով մի տարօրինակ շղթա ընկավ իր առաջ, ժայռի թարեքին:
Ծայրը կապիր եղևնու բնից, - վերևից լսվեց պատվերը և ցած ընկավ ճիլոպից հյուսած պարանի մի հաստ կտոր:
Քիչ անց անճոռնի շղթան կախված տարուբերվում էր անդունդի վրա:
- Հիանալի է, բայց ափսոս որ կարճ է:
- Եթե տակը փափկացնենք, կթռչի, ոչինչ, - ասաց Գագիկը, որ գիշերվա իր պատմությունների ազդեցության տակ լավատես էր բոլոր թռիչքների նկատմամբ, դե որ գյառնեցի հարսը չէր ջախջախվել, նիհարած ու թեթևացած Սարգիսը ինչո՞ւ պիտի թռչելիս վնասվեր:

- Հա, տակին մի փափուկ կույտ հարկավոր է: Ով գիտի, գուցե օղակներից մեկը չի դիմանում...
Թեև նրանք նախապես էին փորձել շղթայի ամրությունը, բայց հարկավոր համարեցին նախազգուշական միջոցներ ձեռք առնել: Նախ, շրջակայքում ինչքան որ եղևնու ու կեչի թփեր կային, ջարդոտեցին և նրանց փափուկ ճյուղերը իրար վրա կույտ արին ձորի հատակին, շղթայի ուղղությամբ: Ապա քանի որ օրը տաք էր, յուրաքանչյուրը հանեց իր բլուզը, թևերը կապեց, ժայռի շվաքից փափուկ ձյուն լցրեց մեջը և դրեց ճյուղերի կույտի վրա: Դրանով էլ չբավականանալով, նրանք արևահայաց լանջին սկսեցին հալ ընկած ձյուն գլորել դեպի ցած: Ձնագնդերը գնալով մեծանում էին, սկզբում մի ձմերուկի չափ, ապա հասնում մեծ ու փոքր տակառների: Մեծ տանջանքներով այդ գնդերը ևս դրին կույտի վրա, մի բլրակ ստացվեց: Մինչ այս, մինչ այն՝ կարճ օրը հասավ իր վախճանին, քրտնած պատանիներն սկսեցին դողալ:
Լավ կլիներ, որ նրանք մի քանի օղակներ ևս պատրաստեին և երկարացնեին իրենց շղթան, բայց դրա համար այլևս ժամանակ չէր մնացել, ինչպես գիտենք, Հովազաձորում օրը շատ կարճ էր, քանի որ նրա երկու կողմերից բարձրանում էին ապառաժյա պատնեշները:
- Սարգի՛ս, դե իջիր, - ձայն տվեց Աշոտը:
Սարգիսը կռացավ նայեց անդունդին ու սոսկումով ետ-ետ գնաց:
- Բա որ կտրվի՞, - բողոքեց նա լացակումած:
- Չի կտրվի: Ոտներդ դիր օղակներին ու կամաց իջիր: Վերջին օղակից կկախվես ու հենց որ ձեռքերդ բաց թողեցիր՝ կընկնես մեր պատրաստած փափուկ բլրի վրա:
Սարգիսը վախվխելով բռնեց եղևնու բնից և իսկույն ձեռքը ետ տարավ:
- Սառն է, օղակներից բռնել չի լինի... թողեք էգուց արևով իջնեմ... Մութն ընկնում է, ես ո՞նց իջնեմ...
Այսպես մի ամբողջ խումբ պատճառաբանություններ մեջտեղ, բերելով՝ Սարգիսը հրաժարվեց ոտքը դնելու կախված «սանդուղքին»: Իհարկե, բոլոր պատճառների պատճառը երկյուղն էր:
- Լա՛վ, ինչ արած, գնա՛նք, - վճռեց Աշոտը՝ ատամները կրճտացնելով:
Իրենց բլուզները ձյան կույտի մեջ թաղված թողնելով, նրանք բարձրացան քարայր:
- Շուշի՛կ, դու կրակը թեժացրու, մենք վառելիք տանենք նրան:
Այնքան վրդովված էր Աշոտը, որ Սարգսի անունը տալ չէր կարողանում: Իրոք, որքա՜ն օրեր և որքա՜ն ջանքեր խլեց այդ անարժանը:
Ցրտից դողալով և քաղցից տանջվելով, նրանք մի գիշեր ևս անցկացրին, մի ծանր գիշեր:
Ո՛ւմ քունը կտաներ:
- Ի՞նչ անեմ, Բոյնա՛խ, որ Չամբարի խելքն ու ճարպկությունն ունենայիր, մենք հիմի վաղուց էինք ազատվել, - շանը նախատում էր Գագիկը: - Մի կերպ դուրս կգար ձորից ու կգնար օգնություն կբերեր...
- Ո՞ր Չամբարի, - վիրավորվեց Հասոն. ա՛յդ էր մնացել, որ Բոյնախից էլ խելոք շուն գտնվի: Հասոյի համար այդպիսի շուն չկար աշխարհում:
- Որ Չամբարի՞: Լճավանցի որսորդ Միրուք Ասատուրին ճանաչո՞ւմ ես:
Տղան բացասաբար շարժեց գլուխը:
- Իսկ նրա թոռ Կամոյի՞ն: Իսկ իմ քեռու տղա Գրիգորի՞ն...
- Իսկապես, Գրիգորը քո քեռու տղա՞ն է, չեմ հավատում, - հետաքրքրվեց Շուշիկը: Նա ևս կարդացել էր այդ մշտուրախ և կատակասեր տղայի մասին:
- Չե՞ս տեսնում, որ Գրիգորն ինքն է, ոնց որ մի խնձոր միջից կիսած: Բնավորությունը, կատակները...
- Չէ՛, Աշո՛տ, ես Գրիգոր չեմ դառնա: Նա ո՛ւր, ես՝ ո՛ւր: Բարձրանում էր Ճանճաքարից մեղր հանում, մտնում էր Գիլլիի եղեգնուտներն ու ջրագռավի ձվերը հավաքում ուտում: Ո՛ր կողմ գնում էր՝ ուտելիք էր ճանկում, իսկ ես օջախի մոտ ընկած նվվում եմ սովից... Գրիգորը որ մեզ հետ լիներ, մենք այսպես կապրեինք, ա՞յ (և նա մատը քսեց իր կոկորդին):
- Իսկ որ մեր խմբի պետը Կամոն լինե՛ր, հիմի մենք...
Շուշիկը ձայնը ցածրացրեց ու երկյուղով նայեց Աշոտի դեմքին, որ նրա խոսքից վայրկենապես շիկնել կրակ էր կտրել:
- Դե ես ի՞նչ անեմ, - շփոթված ու դժգոհ ասաց Աշոտը: - Նրանք էլ Հովազաձոր ընկնեին, երևի չկարողանային դուրս գալ...

- Դե՛, դե՛, խնդրեմ, մեր պետի քեֆին չկպչեք: Մենք ոչ մի բանով էլ պակաս չենք լճավանցի Կամոյի խմբից, գիրք են գրել նրանց մասին, ուռեցրել, կարծում եք մենք պակա՞ս ենք նրանցից, - հոխորտաց Գագիկը՝ կրակը խառնելով: - Մեր Աշոտը Կամոյից պակաս չի, ես՝ իմ քեռի Գրիգորից (կարճության համար քեռի ասեմ, թեև ինձնից մի տարով է մեծ): Մեր Բոյնախը նրանց Չամբարից է լավը, մեր Հասոն՝ նրանց Սեթոյից, մեր Շուշիկը՝ նրանց Հասմիկից: Միայն, ասում են, նրանց Հասմիկը շատ սիրուն է, իսկ մերը, սրա տունը շինվի, դեռ գարունը չեկած պեպեններ են դուրս գալիս շեկ երեսին...
Տղաները ծիծաղեցին, իսկ Շուշիկը կարմրեց, նրա սիրտը նեղվում էր այդ համեմատությունից: Մի՞թե ինքը իսկապես տգեղ է լճավանցի Հասմիկից...
- Բայց ես Միրուք-Ասատուրին տեսել եմ, գիտե՞ք, - ոգևորված վրա նստեց Աշոտը: - Մի աշուն եկել էր ընկերացել իմ հորը, միասին որսի էին գնում: Ի՜նչ փառավոր մարդ է՜ր... Իսկական բնության փիլիսոփա... Շատ ծիծաղելի էր մորուքը, շտապելիս փաթաթում էր արխալուղի ծոցը դնում ու գնում, ո՜նց էր գնում... Չամբարն էլ հետևից, պոչը ոլորած-մեջքին դրած...
- Հա՛, Չամբարն էլ հետևից... Ա՜խ, թե հայրս նրան իմաց տված կլինի մեր կորչելու մասի՜ն... Մեկ էլ տեսար Ագրիջա սարի ձները ճղեց-անցկացավ ու իջավ ուղիղ մեր ֆերման, նրա նման որսկանին ի՞նչ կա որ. մեր հանդը Սևանից մի լեռնաշղթայով է բաժանվում:
- Իսկապես, ով գրի-չգրի մայրս իմ կորչելու մասին կգրի տատիս: Անպայմա՜ն կգրի: Ձա՜ն, հիմի իմ քեռի Գրիգորը դունչը կոխել է Այգեձորի գինու կարասներն ու ասում է՝ «Ասատուր պապի, էստեղ լավ է, քան մեր տունը, միշտ մնանք էստեղ, գինին շա՜տ, թթուն էլ վրեն...»: Ա՜խ, մեկ էլ մեր դիմացի ժայռի գլխին երևար Գրիգոր քեռին՝ քուֆթեն լավաշի մեջ փաթաթած ու ձեն տար՝ Գագի՜կ, բռնի՜ր, քուֆթեն եկավ...
- Հերի՜ք է մեզ տանջես, - բարկացավ Աշոտը և դուրս եկավ անձավից. նրա աղիքները կտրտվում էին, գլուխը պտույտ էր գալի:
Լեռների հետևից, ինչ-որ տեղից կիսալուսինն աղոտ լուսավորում էր Արարատի մշուշոտ կերպարանքը: Շրջակայքը սա՜ռը, խաղա՜ղ...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ. Այն մասին, թե ինչպես է ծնվում մարդկայնությունը

Լուսադեմին նրանք արթնացան ինչ-որ պայթյուններից, կարծես մոտերքում խառնիխուռն կրակում էին փոքր տրամաչափի ատրճանակներից:
Հասոն օջախի մոտ նստած ծիծաղում էր ընկերների քնաթաթախ ու խուճապահար տեսքի վրա: Նորից պայթյուններ լսվեցին, կարմրած մոխրի կույտերը ցրիվ եկան, կրակի կտորներ թռան այս ու այն կողմ, կարծես պայթուցիկ նյութեր թաղված լինեին մոխրի մեջ:
- Կերե՛ք, սա լավ սնունդ է, - այս ասելով Հասոն մեկ-մեկ վերցնում և ընկերներին դեմ էր անում պատյանները պատռված կաղինները: - Ցրտատար կաղինը կրակի մեջ գցեցիր՝ կտրաքի, - բացատրեց նա:
- Որտեղի՞ց:
- Ճարեցի էլի, Բոյնախի հետ գիշերհանա որսի էինք գնացել: Ա՜ռ, Բոյնա՜խ, առ դու էլ կեր...
- Հա՛, սա մեզ ուժ կտա, սրանից կոֆե էլ են պատրաստում, - հաստատեց Գագիկը՝ իր բաժինը խփշտելով:- Բայց խորհուրդ չեմ տա սրանից Սարգսին բաժին հանել:
- Ինչո՞ւ:
- Լավ չի, կծանրանա, շղթան չի դիմանա... - ու թույլ ժպտաց, ծիծաղելու ուժ չկար:
Երբ արեգակը բարձրացավ և ձորը տաքացավ, խումբը ցած գնաց ու կանգ առավ թփից կախված «սանդուղքի» դիմաց: Դա արդեն մեր պատանիների գերության տասնվեցերորդ օրն էր:
- Սարգի՜ս, մի որջիցդ դուրս արի տեսնենք ինչ ենք անում, - գոչեց Աշոտը:
Վարանոտ քայլերով ու վախվխելով տղան առաջ եկավ:
- Բռնիր եղևնուց ու ոտդ դիր առաջին օղակին:
- Չեմ կարող, ուրիշ հնար մտածեցեք, - անդունդին նայելով բողոքեց Սարգիսը:
- Լավ, դո՜ւ գիտես, մնա արծիվների բաժին դառիր, - դիտմամբ անողոք պատասխանեց Աշոտը:
Շուշիկը բերանը բացեց, որ բողոքի դաժան վճռի դեմ, Աշոտը սաստեց հայացքով:

Եվ Շուշիկի կարծեցյալ դաժանությունն այն հետևանքն ունեցավ, որ Սարգիսը վախվխելով ոտքը դրեց շղթայի առաջին օղակին ու սկսեց դողդողալով իջնել:
Երեսով դեպի պատը...
- Ցած չնայես: Աչքերդ խուփ արա:
Աշոտի այդ խորհուրդներն օգնեցին: Վերջապես Սարգիսը հասավ վերջին օղակին, իսկ խումբը ներքևում սրտատրոփ սպասում էր: Շուշիկը ձեռքերով ծածկել էր աչքերն ու անցել Գագիկի թիկունքը, իսկ Բոյնախը պպզել էր, լեզուն հանել ու հետաքրքրությամբ դիտում էր այդ անսովոր տեսարանը:
- Կա՛ց, չշարժվե՛ս, շղթան վերջացավ, - ձայն տվեց Աշոտը և Սարգսի ոտքը, որ ցած մեկնված կուրորեն հենարան էր փնտրում, ետ գնաց: - Հիմի պետք է կախվես վերջին օղակից ու թռչես: Չվախենա՛ս, ներքևում փափուկ ձյան կույտ է:
- Փափո՞ւկ: Հա, երեկ փափուկ էր, - մեքենայորեն ասաց Գագիկն ու իր խոսքի իմաստը նոր միայն հասկանալով, գոչեց.- Սարգի՛ս, չշարժվե՛ս, կաց ձյունն ստուգենք...
Լա՜վ փափուկ կույտի վրա էր թռչելու Սարգիսը: Նախորդ օրվա հալ ընկած ձյան գնդերը գիշերվա սառնամանիքից այնպես էին կարծրացել, որ ավելի շուտ քարաղի ճերմակ կույտի էին նման, քան ձյան բլրակի: Ի՜նչ ժամանակին գլխի ընկավ Գագիկը. մեկ որոպե էլ, և Սարգիսը՝ ենթարկվելով իր բարյացակամ ընկերների խրախուսանքներին, փշրվելու էր կարծր կոշտերի վրա...
- Վե՛ր բարձրացիր, - պատվիրեց Աշոտը: Հուզմունքից քրտինքի կաթիլներ էին դուրս ցայտել նրա ճակատին: Նա լուռ օրորում էր գլուխն ու իրեն հանդիմանում անզգուշության համար:
Գագիկը զննում էր նրա դեմքը, կարևոր բան ուներ ասելու, բայց տատանվում էր:
- Ընդունո՞ւմ ես, որ դու էլ կարող ես սխալվել, - մեղմ ու բարեկամաբար հարցրեց նա:
Աշոտը լուռ էր և շփոթված: Ընդունում էր, բայց՝ իր մեջ: Նրան թվում էր, որ եթե հրապարակով ընդունի սխալը, իր հեղինակությունը կընկնի խմբի աչքում:
«Հաստակո՛ղ, իսկի մեջքը գետնովը կտա՞ որ...», - մտքում հանդիմանեց Գագիկը և որոշեց փակել այդ անօգուտ բանավեճը, միևնույն է, այդպես հեշտությամբ չես կարող կոտրել նրա գոռոզությունը: Բայց և այնպես չկարողացավ չավելացնել.
- Դրա համար ես ասում՝ երկու խելքը մեկից լավ է, հիմի հավատացի՞ր... Գնանք նոր օղակներ շինենք:
- Սպասի՛ր, այստեղ ո՞վ է կարգադրողը, ե՞ս, թե՞ դու... Եկեք գոնե մեր բլուզները ազատենք:
- Կազատե՛ս, ինչպես չէ...
Եվ իսկապես, թաց ձյունը սառել էր բլուզների մեջ ու ՛այնպես կպել, որ նրանցից պոկ կգար միայն գարունը բացվելիս:
- Այ քեզ ձախորդությո՛ւն: Դե եկ հիմի էլ...
- Կրակ անենք, տղերք, առանց կրակի չի լինելու:
Մինչև կեսօր նրանք զբաղված էին իրենց զգեստները սառույցից ու ձյունից ազատելու գործով: Կրակ էին արել ձորում, ձյունով լիքը բլուզները տնքալով գլորել-հասցրել խարույկի մոտ ու հալեցնում էին:
- Ազիզ տիրոջդ թողած, գնացել ես ձյո՞ւն ես տաքացնում,- իր բլուզին մեղմությամբ նախատում էր Գագիկը և կրակի բոցերի դեմ պահած՝ շուռումուռ էր տալիս, որ չորանա:
Իսկ Աշոտը և Հասոն զբաղված էին նոր օղակներ պատրաստելով:
- Սարգսին ազատելը էլի հետաձգվեց վաղվան, - արդեն ուժասպառ հայտարարեց Աշոտը: - Սարգի՛ս, շղթան արձակիր, թող վեր ընկնի:
Շղթան շրխկոցով ընկավ ճերմակ ու կարծր կույտի վրա: Նրան նոր օղակներ ավելացրին, բայց դեռ որքա՜ն պետք է աշխատեին, որ շղթան երկարելով հասներ անդունդի հատակին...
- Սպասեցե՛ք, կարկաճիս մեջ հանճարեղ մտքեր ծնվեցին, - տեղից վեր թռավ Գագիկը: - Մենք հիմա ևեթ կազատենք, մեր խմբի ամենասիրելի ու ամենից արժանավոր անդամին: Շա՛տ մենակ մնաց, ոտներս քոռանան նրա համար (այստեղ տանջանքներից նիհարած Շուշիկի դալուկ դեմքին ժպիտ երևաց): - Սարգի՛ս, քո ելարան- ծառը այնպես ամրացրու, որ վերև բարձրանալիս չշարժվի: Կարո՞ղ ես:
- Ամուր է, ծայրը մտցրել եմ մի ճեղքի մեջ, վերևի ծայրն էլ երկու քարի արանքում է, - լսվեց թույլ ու դժգոհ պատասխանը, որին հետևեց տղայի հուսահատ քրթմնջոցը.- Վա՛յ, վա՛յ, հայրիկ, որտե՞ղ ես...

- Հայրիկդ հիմի մեծ տանջանքների մեջ է, նրա մասին մի՛ մտածիր, - շաղակրատում էր Գագիկը: - Ինչ տանջանքների՞: Ասե՛մ: Խորոված է ուտում ու անիծում աստծուն, թե ինչու իրեն մի հինգ-վեց փոր չի տվել, որ բոլորն էլ լցնի... ուրիշի տանը: Գնա՛նք, տղերք, գնա՛նք ազատենք Պարույրի երկարավիզ զավակին...
- Ո՞ւր գնանք... ի՞նչ ես քեզ ու գլխու կարգադրություններ անում... Էլի՞ դուրս եկար քո ֆունկցիաներից, - զայրացավ օղակավարը:
- Աշո՛տ, սովորիր վերևից չնայել ընկերներիդ, - անսովոր լրջությամբ խորհուրդ տվեց Գագիկը և առաջ ընկավ:
Ամեն անգամ ընկերների միջև վեճ ծագելիս Շուշիկը տագնապ էր ապրում: Իրար ասված յուրաքանչյուր կոպիտ խոսք սրի նման ցցվում էր նրա քնքուշ սիրտը: Այդ բանը գիտեին ընկերները, և Աշոտը ատամները կրճտացնելով լռեց: Շարունակեր վեճը, Գագիկի մի անզգույշ խոսքից նորից պիտի կարմրեր այս աղջկա առաջ, նորից պիտի տուժեր «պետի» իր հեղինակությունը: «Լա՛վ, ես քո քթից կհանեմ», - մտքում վճռեց նա, բայց և անհանգստացավ այն մտքից, որ իր մանկության սիրելի ընկերը կարող է գժտվել իր հետ: Այդ միտքը Աշոտի կրքերը զսպող սանձ դարձավ և նա որոշեց այս անգամ շարժվել Գագիկի խորհրդով:
Ընկերները թեև չգիտեին Գագիկի մտադրությունը, բայց շղթան վերցնելով, թույլ-թույլ հետևեցին նրան:
- Մի ասա, միտքդ ի՞նչ է, - ճամփին անհամբեր հարցրեց Աշոտը:
- Չեմ ասի: Ուզում ես գյուտս յուրացնե՞ս...
Երբ խումբը կանգ առավ Դիվային կածանի այն մասում, որտեղից ներքև Սարգսի ապաստարանն էր, Գագիկը ճոպանը փաթաթեց արահետի եզրին ցցված քարին և փայտե շղթան կախեց ելարանի ուղղությամբ:
- Սարգի՛ս, օղակները հասա՞ն գերանին, - հարցրեց նա:
- Հասան... Վա՛յ, էս ինչ են ուզում անեն... չեն թողնում, որ մարդ հանգիստ մեռնի իր տեղում:
- Ժամանակից շուտ մեռնելն արգելված է, ազիզ ջան, գերանով վեր բարձրացիր: Օղակավա՛ր, հիմի ըմբռնեցի՞ր: Գլուխ հո՛ չի, խելքով լիքը դդում է, - մատով իր ճակատին կտկտացնում էր Գագիկը:
Ընկերները ժպտում էին ոչ թե նրա կատակներից, այլ այն մտքից, որ վերջապես կարծես գտնվել էր Սարգսին ազատելու հնարը: Բայց Աշոտը մռայլ էր ու դժգոհ, սա ի՞նչ բան է, Գագի՞կն է ազատելու աղետյալին: Այդ դեպքում էլ ինչո՞ւ են իրեն պետ ընտրել...
Մինչ նրանք սպասողական դրության մեջ էին, մոտիկից տնքոցներ լսվեցին:
- Օ՛ֆ, էս անտեր քարը...
- Ոչինչ, անուշ ջան, մարդ էլ ցավից կտնքա՞... Ձնդանի նման ճակատովդ հարթելով արի... Հասա՞ր ելարանիդ ծայրին: Հա՞: Դե հիմի էլ օղակներով բարձրացիր, ալպինիստի կուլտուրական սանդուղք է, չէ՞...
Սարգիսը չէր երևում, բայց քարին փաթաթված ճոպանը ձգվեց և սկսեց ցնցվել, որից մեր պատանիները հասկացան, որ նա այժմ էլ փայտե շղթան է իրեն համար ելարան դարձրել: Գագիկը ցնծության մեջ էր, նա մերթ Աշոտին էր նայում, մերթ պարծենալու լուռ ցույցեր անում Շուշիկի առաջ և նրա հայացքն ասում էր. «Տեսա՞ք ինչ արավ էս տղեն...»: Եվ այդ ցույցերը խոցում էին Աշոտի ինքնասիրությունը:
Ճոպանը դադարեց ցնցվելուց, ներքևից հեծկլտոց լսվեց:
- Ի՞նչ է պատահել, այ հոգիս դուրս գա քեզ համար, - վշտահար հարցրեց Գագիկը: - Լաց մի լինիր, ախպեր ջան, աչքերդ ափսոս են...
Շուշիկը իր թևը կծել էր ու քրքջում էր անձայն, իսկ Հասոյի բրոնզագույն դեմքին մի անմեղ ու բարի ժպիտ էր խաղում. «Իսկապես որ սրա հետ ապրողը չի ծերանա», - մտածում էր նա:
- Ինչո՞ւ չես բարձրանում, - անհամբեր հարցրեց Աշոտը:
- Իմ ծանրությունից օղակները ձգվել պինդ կպել են պատին: Ոչ բռնել է լինում, ոչ ոտը դնել... Մնացել եմ օդում...
Նստիր ներքևի օղակին հանգստացիր, հիմի մի բան կմտածենք, - պատվիրեց Աշոտը:

- Չոմբախս մեկնենք, թող ծերից բռնի, - առաջարկեց Հասոն և, հավանություն ստանալով, ցած մեկնեց իր մահակը:
- Չի հասնո՞ւմ:
- Չէ՜... վա՜յ, ի՞նչ անեմ, իջնե՞մ...
- Սուգ մի անի, ախպեր ջան, քաշդ կպակասի, - իր քեռի Գրիգորի ոճով խորհուրդ տվեց Գագիկն ու թիակի կոթը Հասոյի մահակին միացնելով, նրանց ծայրերը գոտիով ամուր կապեց իրար ու կախ արավ ժայռի լանջն ի վար:
- Կանգնիր լոլոզ բոյովդ մեկ ու ձեռքդ մեկնիր, տես հասնո՞ւմ է:
Սարգիսը կանգնեց, ձեռքը հասնում էր:
- Ամուր բռնիր մահակի ծայրից ու ոտներդ քարի ցցունքներին դնելով, արի, մենք կօգնենք:
- Ո՜ւժ տուր...
- Ե՜տ չնայես...
- Հասա՜ր, հա՜... փայտը քաշում և հետն էլ սիրտ էին տալիս ընկերները:
Վերջապես նրանք վեր քաշեցին Սարգսին:
Մահից նոր ճողոպրած մարդու հուզմունքով համակված, տղան ցանկացավ չոքել իր ազատարարների առաջ, բայց Աշոտը կանխեց նրան, թևը բռնեց, վեր քաշեց և բարեկամաբար ու ամուր ասաց.
- Հարկավոր չի, Սարգի՜ս... Բայց այսուհետև իմացիր, որ կոլեկտիվից դուրս կյանք չկա...
Իսկ Շուշիկը մտքում նախատում էր իրենց պետին. «Ի՜նչ խրատելու ժամանակ է գտել...»:
Ապա երբ քարերին նստոտած խաղաղվել էին իրենց մեծ ապրումներից, Աշոտը շարունակեց իր միտքը ծանր, հանդարտ ու խրատական.
- Լավ է, որ ազատվեցիր, սրտներիցս մի-մի ծանր քար ընկավ: Հիմի որ կշարունակենք բացել փակված ճամփան: Բայց գործի անցնելուց առաջ ուզում եմ քեզ մի բան էլ ասել: Ես իմ հոր հետ շատ անգամ եմ որսի գնացել և տեսել եմ, թե ինչպես նույնիսկ վայրի կենդանիները խմբեր են կազմում, իրար օգնում, որ չկորչեն... Բա ո՞նց դու այդ մասին չես մտածել... Ո՞նց ես դու ասում՝ «Թող ամեն մեկն իր գլխի ճարը տեսնի...»՞:
Սարգիսը գլխահակ կանգնած էր նրա առաջ փքված ու լալու պատրաստ մեծ երեխայի նման, ուստի Աշոտն ինքն էլ զգաց, որ դրանից ավելին այլևս ասելու կարիք չկա: Եվ թիակը վերցնելով, շարունակեց բացել փակված կածանը:
Այն ժամանակ բոլորի համար անսպասելի մի բան կատարվեց. չնայած իր տանջված ու խղճալի վիճակին, Սարգիսը առաջ եկավ, նրա ձեռքից մեղմությամբ առավ գործիքը և իր ուժերի մնացորդները լարելով, սկսեց ձյունը ցած թափել այնքան սրտանց, ինչպես երբեք չէր աշխատել իր կյանքում:
- Ի՞նչ ես անում... Քո գործը չի... Սրան տարեք տուն...
Բայց Սարգիսը որոշել էր այս անգամ չենթարկվել օղակավարին:
- Դուք շատ եք չարչարվել, հիմա էլ հերթն իմն է, - ասում էր նա և բարակ վիզը ձգում, դողդողացող ծնկներին ուժ տալիս...
- Մի՜ խանգարի... քանի որ դարձի է գալիս, մի խանգարի, - Աշոտին մի կողմ տանելով խորհուրդ տվեց Գագիկը:
- Մեղք է, ի՞նչ եք անում... դեռ նրա մարմնի ջարդվածքները պիտի գտնել ու կապել, - բողոքեց Շուշիկը, բայց և հպարտ էր նա, ինչպես և ուրախ: Դատողություններ էին անում, թե «գայլի ճուտ է», դարձի չի գա: Ո՞վ ճիշտ դուրս եկավ, ի՞նքը, թե՞ այդ թերահավատները:
- Դեսը տուր, Սարգի՜ս, ախր քեզ չի կարելի: - Եվ նա մեղմությամբ խլեց «թիակը» պատանու, ձեռքից: Սա ուժասպառ նստեց քարին, մի քիչ մնաց լուռ և երբ միշտ կախ գլուխը վեր քաշեց, այն ժամանակ աղջիկը նկատեց, որ նրա քունքի տակն ուռած է ու կապտած:
- Վո՜ւյ, քոռանամ ես, - զուտ կանացիորեն բացականչեց Շուշիկը և իր թաշկինակը թրջելով սառը ձնաջրի մեջ՝ դրեց վերքին:
- Այ տղա, է՞լ որտեղդ է ցավում, - անհանգստացավ Աշոտը:
- Ծունկս... սրունքս... մեջքս... - տնքալով թվում էր տղան:

Շուշիկը հեռացավ, ընկերները Սարգսին մերկացրին և մի քանի ջարդվածքներ, քերծվածքներ ու կապույտ խալեր հայտնաբերեցին, իսկ արմունկից արյուն էր հոսել և չորացել:
- Այ տղա, բա ինչի՞ բան չես ասում... Ինչի՞ այդ դրությամբ աշխատեցիր, - նախատեց Աշոտը:
- Ինչու աշխատեցի՞: Որ հիշում եմ մահից պրծա, մնացածը դատարկ բաներ են թվում...
- Մալադե՛ց, այդպես էլ պետք է: Սրանից դժվա՛րը կա, արհամարհի՛ր ամեն ցավ, - գովեց Աշոտը: -Դե՛հ, բերեք կոմպրեսներ դնենք: Սառը թրջոցը լավ է ջարդվածքին, բայց ափսոս, օղի չկա խառնենք հետը...
- Քրդերի վրա ծիծաղում եք, թե էդ շալերն ինչի են փաթաթում քոլոզին ու մեջքին: Տեսա՞ք որտեղ պետք եկան, - ասաց Հասոն՝ իր հնամաշ ապրեշումե չալման ու գոտին արձակելով: Նրանով փաթաթեցին-կապկպեցին Սարգսի վերքերն ու թևերն ընկած՝ տարան հասցրին ձորի տափարակը:
- Մի փայտ տվեք, ես հենվելով կգամ, - ասաց նա:
Երբ աշխատանքից տուն վերադարձան, տնտեսվար Գագիկը մտադրվեց իրեն մեծ հաղթանակը նշանավորել մի համեղ ընթրիքով: Նա գնաց այրի խորքը, բարձրացավ մի քարի ցցունքի, ձեռքը մեկնեց աչքից հեռու մի խոռոչի խորքը ու այնտեղից ինչ-որ բաներ հանելով լցրեց գլխարկի մեջ:
Սպանված ճնճղուկներից էին:
- Խորովեցեք-վայելեցեք: Նեղ օրվա համար էի պահել... Բա՞, տան տնտեսուհու մի ձեռքը պիտի գող լինի, - պարծեցավ սա իր տնտեսվարական շնորհքով: - Հիմի կհարցնեք, թե ումից եմ սովորել: Մորի՛ցս: Ականջը կանչի, ինչքան տանը բան լինի պիտի ասի՝ «վերջացել է», կամ՝ «վերջանում է»: Մորս ամենասիրած բառերը դրանք են: Ասում է ու մեկ էլ տեսար այդ «վաղուց վերջացած» բաները լույս աշխարհ եկան իմ էս ճնճղուկների պես: Այնքան է ասել՝ «չկա», որ նրա «չկային» էլ ոչ ոք չի հավատում, թեկուզ իսկապես չլինի էլ...
Գագիկի սարքած այդ փոքրիկ «սյուրպրիզը» բոլորովին բարձրացրեց մեր «գերիների» տրամադրությունը: Ամենքին երկու ճնճղուկ ընկավ, խորովեցին-կերան, մի փոքր հանգեցրին իրենց լափող քաղցը:
Նոր, ջերմ և մինչ այդ անծանոթ զգացմունքներ էին առաջանում Սարգսի սառը հոգու մի անկյունում: Ի՜նչ լավ է, որ ինքն ընկերով է... Ի՜նչ լավ է, երբ ընկերները ուշադիր և հոգատար են իր նկատմամբ... Այն ի՞նչ էր դուրս տալիս, ո՞նց թե՝ ամեն մեկն ի՛ր համար: Չէ՛, դա մեծ սխալ է. առանց ընկերոջ կյանք չկա...
Սարգսի հետ պատահած դեպքը արագ հասունացրեց մեր պատանիներին, մեծացրեց նրանց տոկունությունն ու կենսափորձը: Այդ դեպքը ավելացրեց նրանց վստահությունն իրենց ուժերի նկատմամբ: Դուրս եկավ, որ նրանք ոչ միայն ընդունակ են ամենածանր պայմաններում անգամ պահպանելու իրենց գոյությունը, այլև փրկելու իրար, փրկելու խմբից նրան, ով աղետի կենթարկվի:
Ճիշտ է ասում Աշոտը՝ կա՛մք և համառություն, և այն ժամանակ բնությունն անզոր կլինի ոչնչացնելու իրենց:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես, այնուամենայնիվ, դժվարությամբ է դուրս գալիս արյան միջից այն, ինչ այնտեղ է մտել երեխա հասակում

Երեկոյան դեմ, երբ մեր գերիները հոգնած ու դադրած հանգստանում էին քարայրում, Սարգիսը մտադրվեց ընկերներին առաջնորդել դեպի «սկյուռի պահեստը» և նրա անցքը բանալով, ասել. ներեցե՛ք, ընկերնե՛ր, որ թաքցրել եմ: Դո՛ւք փրկեցիք իմ կյանքը, դո՛ւք էլ կերեք, ձեզ հալալ լինի...
Բայց նա հիշեց տանջալից վերելքը դեպի քարայրը: Հիշեց, որ իր ուժերն այնքան են պակասել, որ մի որևէ հիվանդություն՝ գրիպ, թոքերի բորբոքում, անգինա, կարող է իրեն տանել «մյուս աշխարհը»: Այդ մտքից համակվեց կենդանական երկյուղով և նորից նրա մեջ գլուխ բարձրացրեց ամենազոր եսը, նա, որ այդ տղային իր կամքն էր թելադրել սկսած մանուկ հասակից: «Նրանց ամեն մեկին երկու բուռ կհասնի, իսկ քեզ համար տասը օրվա սնունդ է: Այդպիսի բան չանե՛ս, կյանքն ազիզ է ամեն բանից...», - զգուշացնում էր այդ եսը:
Սկյուռի շտեմարանի շուրջը ներքին կռիվ սկսվեց Սարգսի մեջ և այդ կռիվը չթողեց, որ նա վճռականորեն ազնիվ քայլի դիմի:

Մեր պատանիների հպարտությունը թույլ չէր տալիս ձեռք տալու Սարգսից խլած ընկույզներին, որ Աշոտն իր զայրույթի պահին բուռ-բուռ նետել էր այրի մի անկյունը:
Այդ ընկույզից Հասոն ցանկանում էր մեկ-մեկ վերցնել, միջուկը հանել և դեմ անել իր սիրելի Բոյնախին, բայց չէր համարձակվում. ով գիտի ինչպես կընդունեին ընկերներն իր այդ քայլը... «Հարամ թիքեն մենակ շունը կուտի», - յուրովի մտածում էր նա և այդ մասին ուզում էր հարցնել ընկերների կարծիքը:
Թեժ խարույկի շուրջը նստած նրանք զրուցում էին:
Սարգսին ազատելը նրանց ամրապնդել էր բարոյապես, ավելացրել էր ինքնավստահությունը: Այդ համեմատությամբ այժմ ավելի հեշտ էր թվում փակված շավիղը բացելը: Իրոք, ի՜նչ մեծ բան է ձյունը ցած թափելը, համեմատած այն մեծ ջանքերի ու տանջանքների հետ, որ նրանք քաշեցին վերջին օրերին:
Այդ մասին խոսեց Աշոտը ընկերների հետ և ներշնչեց նրանց այն հավատը, որ երեք-չորս օրում կարող են դուրս գալ ձորից:
Այդ մեծ գործի համար մի «փոքրիկ» բան էր միայն պակասում՝ սնունդը...
Բանն այն է, որ Սարգսին ազատելով, նրանք թեև բարոյապես ամրացել էին, բայց ֆիզիկապես թուլացել էին. դե հեշտ չէր կիսաքաղց վիճակում այնքան աշխատել և այնքան ապրումներ ունենալ...
Բացի դրանից, այն օրերին իրենք և աղետի ենթարկվածը սպառել էին սննդի ողջ պաշարը: Ուստի խումբը վճռեց իր անդամներից մի մասին միայն հանել Դիվային կածանի վրա աշխատելու, մյուս մասը արևը ծագելուն պես պետք է տակնուվրա աներ ձորը և ուտելիք գտներ:
- Դե քանի որ սննդի մասնագետը ինձ եք համարում, դրանով ես կզբաղվեմ, - ասաց Գագիկը:
Շուշիկը պիտի մնար անձավում, վառելիք հայթայթեր, խարույկը վառ պահեր և խնամեր Սարգսին:
Աշոտը և Հասոն, որ ֆիզիկապես ավելի տոկուն էին, պիտի աշխատեին կածանի վրա:
Երբ այդ վճիռներն էին կայացնում, Սարգիսը նորից ներքին պայքար էր ապրում: Նա հավատում էր Աշոտի խոսքին, որ երեք-չորս օրից մնաս բարի կասեն Հովազաձորին: Դե որ այդպես է ինչու հրապարակ չհանի ընկույզի պաշարը: Եվ նա քիչ էր մնում ասի՝ «Ուտելիք կա, բոլորդ գնացեք ճամփան բացելու», երբ մանկուց ի վեր իր հոգում բուն դրած «եսը» նորից զգուշացրեց. «Իսկ եթե հանկարծ ձյուն գա ու ամբողջ ձմեռը փակված մնա՞ս...»:
Չէ, մի քանի օր էլ սպասենք, տեսնենք գործն ինչ ընթացք է ունենում, - վճռեց Սարգիսը և շարունակեց ականջ դնել Շուշիկին, որը (իր մտքերով տարված նա չիմացավ ինչ առիթով) ինչ-որ ջերմ խոսքեր էր ասում Հասոյի հասցեին:
- Այո՜, մեր նեղ օրերին Հասոն մեծ գործ կատարեց, - հաստատեց Աշոտը:
- Եվ այդպիսի տղան դո՞ւրս է պիոներական կազմակերպությունից...
Շուշիկն այնպիսի նախատինքով էր խոսում, կարծես Աշոտն է մեղավոր, որ նա պիոներ չէ:
- Դե ֆերմայում ոչ դպրոց կա, ոչ կազմակերպություն, ո՞վ է մեղավոր, - ասաց Աշոտը:
- Պիոներ չէ, բայց հոկտեմբերիկ եղել եմ, - ժպտալով ասաց Հասոն: - Ախր ես մեր գյուղում դպրոց էի գնում...
Այո, կար ժամանակ, երբ Հասոն ևս դպրոցական էր: Վերև, լեռներում մի փոքրիկ քրդական գյուղ կա, անտեղ է ծնվել Հասոն և այնտեղ էլ անց է կացրել իր դպրոցական կյանքի առաջին տարիները: Ի՜նչ երջանիկ օրեր էին... Այն ժամանակ նա իրեն հասակակից շատ ընկերներ ուներ... Հետո կատարվեց այն, ինչ ինքը չէր նախատեսել. Այգեձորի կոլտնտեսությունը մի հմուտ հովիվ խնդրեց քրդական գյուղից: Հայրը սիրով համաձայնեց տեղափոխվել հարուստ Այգեձոր. դե դա առաջին դեպքը չէր, արդեն սովորություն է դարձել, քուրդ հովիվները հաճախ են տեղափոխվում հայկական գյուղերում աշխատելու:
Հասոն ծնողների հետ տեղափոխվեց Այգեձորի ֆերման և դարձավ հոր օգնականը: Այդպես էլ նրա ուսումը կիսատ մնաց:
Պատմեց այդ մասին Հասոն ընկերներին և կարեկցություն առաջ բերեց նրանց մեջ: Այն ժամանակ Աշոտը ոգևորվելով մի տարօրինակ առաջարկ արավ.

- Ընկերներ, - ասաց նա, - ես չգիտեմ իմ առաջարկը որքան է համապատասխան մեր պիոներական կազմակերպության կանոններին, բայց ես կարծում եմ, որ Հասոյին այսօրվանից պետք է պիոներ համարենք...
Նրա այդ անակնկալ խոսքից հովիվ պատանու դեմքն այնպես բռնկվեց, որ քրտինքի հատիկներ ցայտեցին ճակատին, թեև քարայրում բավական ցուրտ էր: Նա գլխահակ լսում էր:
- Դեմ չկա՞...
Ո՞վ պիտի դեմ լիներ այդ հիանալի առաջարկին, նույնիսկ Սարգիսը համակրանքով էր նայում Հասոյին: Աշոտը հանեց իր վզկապը, անցկացրեց Հասոյի վզին և սովորեցրեց, թե ինչպես պիտի պատվի առնի և ինչպես երդում պիտի տա:
Ընդունված պաշտոնական երդման փոխարեն Հասոն ասաց իր զգացածը.
- Ես իմ կյանքը չեմ խնայի ոչ մեր իշխանության, ոչ էլ իմ ընկերների համար: Էս է իմ երդումը, կհավատա՛ք՝ լավ, չե՞ք հավատա՝ կապրենք կտեսնենք՝ հետո կհավատաք...
- Ա՛յ հրաշալի երդում, - գոչեց Գագիկը:
Բայց Աշոտը, այնուամենայնիվ, հարկ համարեց պիոներական պաշտոնական երդման խոսքերը մեկ առ մեկ կրկնել տալ Հասոյին. «Ես՝ Սովետական Միության պիոներս, հանդիսավոր կերպով խոսք եմ տալիս իմ ընկերների առաջ...»:
- Եվ մենք նաև պետք է հոգ տանենք, որպեսզի մեր ընկեր Հասոն հայերենից գրագետ դուրս գա Հովազաձորից, - հայտարարեց նա:
Գագիկի լեզուն խուտուտ էր գալիս, քիչ էր մնում վրա բերի, թե՝ «Որպեսզի կարողանա կարդալ պահեստապետ Պարույրի տված ստացականները», բայց հիշեց վերջին օրերի դեպքերը (որոնք, անկասկած, բեկման մոմենտ պիտի հանդիսանային Սարգսի կյանքում), հիշեց և զսպեց իրեն:
- Հայերենից գրագետ գնա՞... Ուրեմն մենք այդքան երկա՞ր ենք մնալու այստեղ, - երկյուղով հարցրեց Շուշիկը:
- Ո՛չ, նա է արագ գրագետ դառնալու, - շտկեց Աշոտը:
Ուրախ էր հնչում Հասոյի սրինգն այդ երեկո, և մեր պատանիների սրտերը թեթևացել էին թե՛ այն բանի համար, որ նա պիոներ դարձավ, թե՛ նրա համար, որ ճամփի կեսը արդեն բացված էր, թե՛ Սարգսին կործանվելուց փրկելու համար:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես մեծ փոթորիկներից առաջ միշտ խաղաղ է լինում բնության մեջ

Հաջորդ օրը արևը դեռ նոր էր ծագել, երբ Հասոն մտավ անձավը, իր սովորության համաձայն փռեց աբան և գրպանների պարունակությունը դատարկեց նրա վրա. լավ հասած զկեռ էր: Ընկերների ջերմ վարմունքից զգացված, նա քիչ էր քնել այդ գիշեր և լուսադեմին գնացել էր նրանց համար սնունդ փնտրելու:
- Դա ազատողներին ու հիվանդին, - կարգադրեց «տնտեսվար Գագիկը»՝ իր բաժնից հրաժարվելով: - Դե՛հ, Բոյնա՛խ, մենք գնացինք որսի... Վա՛յ Հովազաձորի կենդանիներին...
Աշոտն ու Հասոն զկեռ լցրին իրենց գրպաններն ու գնացին Դիվային կածանի վրա աշխատելու, իսկ Շուշիկը իր քայլերն ուղղեց դեպի Կաղնուտ՝ վառելիք ճարելու:
Գագիկն իր հետ չէր վերցրել ոչ նետ-աղեղ, ոչ էլ պարսատիկ, թռչուն խփելու հույս չուներ, հատապտուղ էր փնտրում: Շատ շրջելուց հետո հազիվ մի քանի բուռ կծոխուրի չորացած կարմիր հատիկներ գտավ, այն էլ այնքան թթու, որ ուտել չէր լինում: «Սա դատարկ փորին հարմար չի, յուղալի փլավի վրա է լավ», - դառնորեն մտածեց նա և դիմեց շանը:
- Բոյնա՛խ, գնանք վերևի թփերը ման գանք: - Նա շոյեց գամփռի գլուխն ու ստացավ կենդանու լուռ համաձայնությունը, այդպես է, Բոյնախին միայն քաղցր խոսքով կարող ես կաշառել:
- Ա՛խ, թե ձեռիս հրացա՛ն լիներ, տես քանի արծիվ էի երկնքից ցած բերում, - ընկերների բացակայությունից օգտվելով շան առաջ պարծենում էր Գագիկը:

Միայն ներքևի տափարակում էր ձյուն մնացել, մեկ էլ Հովազաձորի այն լանջերին, որոնք նայում էին արևմուտք: Արևելք և հարավ նայող լանջերը այնպես տաք էին ու չոր, որ Գագիկը գերադասեց ծռել ճամփան և քայլերն ուղղել դեպի այն կողմ:
Հարկ առ հարկ իրար վրա բարդված ժայռերի յուրաքանչյուր «հարկ» մյուսից բաժանված էր նեղլիկ դարավանդով-«տերրասով», որոնց վրա բարակ շերտով հող կար, դեղնած խոտ և ցրված թփեր:
Բոյնախը ինչ-որ կենդանու հոտ առնելով բարձրացավ այդ դարավանդներից մեկը և սկսեց թփերի մեջ հաչել:
- Պինդ բռնիր, գալիս եմ, - ներքևից հրահանգեց Գագիկը և շտապեց վեր:
Նրա ծնկները ծալվում էին, սիրտն սկսեց ուժգին բաբախել: «Վայ թե արյունս պակասել է», - մտածեց նա քարին նստելով ու իր զարկերակը բռնելով: «Չէ՛, արյուն դեռ կա, ի՞նչ եմ նստել»:
- Բոյնա՛խ, բաց չթողնես, գալիս եմ...
Իսկ Բոյնախը դունչը խոթում էր թփերի մեջ ու խայթվածի նման ետ ցատկում:
Երբ տղան մոտեցավ, տեսավ, որ շան թուխ քթի վրա արյան
շիթեր կան: Նրա հայացքն ասում էր. «Բռնելու հարմարություն չունի, ինչպե՞ս վարվեմ»:
Դե իհարկե, հարմարություն չի ունենա, այդ կենդանուն եթե կարելի լիներ բերանով բռնել, նրա ցեղը ջնջված կլիներ աշխարհի երեսից: Հենց մոտեցար՝ կծիկ է դառնում, սուր-սուր փշերով պատած կծիկ: Դե փորձիր բռնել...
Խեղճ Բոյնախի ոչ միայն դունչը, լեզուն ու լնդերն էլ էին արյունոտվել...
- Կա՛ց, դա քո բանը չի... Գտա՞ր, վերջացա՛վ, մնացածը վարպետ Գագիկի գործն է, - շանը խրատում էր տղան: - Ոզնի՛... Մի հավի չափ մի՛ս... Տո ուրախացիր է՞... Շուշի՛կ, սայլը բեր ոզնին տանենք...
- Սպասի՛ր, Գագի՛կ, ձեռք չտաս, գալիս եմ, - ներքևից լսվեց աղջկա բարակ ձայնը:
Ձեռք չի տա, իհարկե, Գագիկը գժվե՞լ է, որ այս փշագնդին ձեռք տա: Բայց ոտք կարելի է տալ: Նա ոտքով գլորեց ոզնուն, գցեց իր գլխարկի մեջ և վերցնելով՝ քայլեց դեպի ընկերները:
Բոյնախը մնաց տեղում:
- Գնա՛նք, հիմա՛ր, սրա փշերին մի՛ նայի, մեջը լիքը փափուկ միս ու յուղ է, գնանք բաժինդ ստացիր, - հորդորում էր Գագիկը:
Բայց շունը դունչը մեկնում էր մի քարի ճեղքի, հաչում, նորից խայթված ետ ցատկում:
- Էդ ո՞ւմ հետ ես խոսում, - հևալով հարցրեց Շուշիկը:
- Բոյնախի... մի գնա տես հո չի՞ խաբում:
Շուշիկը գնաց շան մոտ և քարի ճեղքում, չորացած տերևների մեջ մի փոքր ու գորշ կծիկ տեսավ:
- Գագի՛կ, ոզնու ճուտ եմ գտել, - գոչեց նա հանկարծ ուրախացած:
- Անհամեստ հայտարարություններ մի անի, դա Բոյնախի գտածն է: Փայտով գլորիր-գցիր փեշդ բեր...
Երբ հասան կրակի մոտ, Գագիկը իր առաջին գործը համարեց ոզնու մսից ճաշ պատրաստել, որի անունը «խորոված-սյուրպրիզ» պիտի դներ: Իսկապես, Աշոտի և Հասոյի համար փափուկ ոզնու միսը շատ անակնկալ պիտի լիներ և իսկական «սյուրպրիզի» տպավորություն գործեր:
Բայց Գագիկը որքան չարչարվեց, չկարողացավ հասնել իր այդ նպատակին, մի առ ժամանակ եթե ձեռք չէին տալիս, ոզնին զգուշությամբ իր թուխ դունչը հանում էր փշերի միջից, բայց Գագիկը մոտենում էր, որ բռնի-մորթի, իսկույն կծկվում էր ու ցցում փշերը:
- Գագի՛կ, մի՛ չարչարվիր, - լսվեց հիվանդի թույլ ձայնը:- Դա միայն ջրի մեջ կբացվի... Ջուր գտիր:
Գագիկը դես-դեն ընկավ, ժայռի մեջ մի գուշ գտավ, ձյուն հավաքեց մեջը լցրեց, բայց որքա՞ն պիտի սպասեր, որ ձյունը հալվեր... Ստիպված Հասոյի նման քարեր տաքացրեց կրակի մեջ, որ լցնի ձյան վրա:
Իսկ Շուշիկը գունատ և փշաքաղված կուչ էր եկել քարի տակ ու նայում էր, թե ինչպես իրար է խառնվել տղան, բայց չի հաջողեցնում մորթել գերի կենդանուն:
- Ո՞ւր ես, Գագիկ, ինչո՞ւ օգնության չես գալիս, - կանչում էր Աշոտը վերևից:
Բայց Գագիկն իսկի իր որսի մոտից կհեռանա՞ր որ: Ոզնին կտեսնի իր մոտ մնացել են մի անշարժ հիվանդ ու մի անճար աղջիկ: Կծլկի՞, թե ոչ: Իհարկե, կծլկի: Այնպես որ անօգուտ ձայն տալուց ձանձրացած, Աշոտը ինքը ստիպված գնաց Գագիկի մոտ և իր նախատինքների տոպրակը բացելուց

առաջ, բարեբախտաբար նկատեց խարույկից քիչ հեռու կծկված ոզնիներին: Նրանցից մեկը շատ խոշոր էր, իսկ մյուսը փոքր՝ մի խնձորի չափ:
- Առանց գնդակ արձակելու...- իրեն ցույց տալով և աչքով անելով հակիրճ պարծեցավ Գագիկը: - Արդեն բաժանված են. փոքրին ես անուշ կանեմ, մեծին՝ դուք չորսով, փորերը՝ Բոյնախին:
- Չեմ թողնի, չեմ թողնի փոքրիկին ձեռք տաք... Արի, ազիզ ջան, արի ինձ մոտ, թե չէ այդ տղաները խիղճ չունեն, կմորթեն քեզ...
Այսպիսի քնքուշ խոսքերով աղջիկը փոքր ոզնուն գցեց իր փեշը, նստեց և մնաց անշարժ:
Անփորձ փոքրիկը շուտով իր գլխիկը հանեց փշերի միջից և խոնավ դունչը առաջ մեկնելով, սկսեց հոտոտել աղջկա հագուստը:
- Վա՛յ, ի՞նչ լավն է... չեմ տա, պիտի պահեմ տանեմ տուն, - թռվռում էր Շուշիկը քաղց ու աղետ մոռացած:
- Բայց դրա մորը կզոհենք... Դե՛հ, տանենք սպանդանոց:
«Սպանդանոց» Գագիկը այն գուշ քարին էր անվանում, որի մեջ արդեն ձյունը հալվել-լճացել էր:
- Հասո՛, կարծես քո գրպանում մի նետ պիտի մնացած լինի, տուր ինձ:
Եվ Գագիկը ոզնուն դրեց իր գլխարկի մեջ:
- Միտքդ բացատրիր, - պահանջեց Աշոտը: Նա նորից սկսել էր նեղվել, որ առանց իրեն հարցնելու գործեր են բռնում:
- Բացատրե՛մ: Ոզնին դնելու եմ ջրափոսի մեջ, բացվի: Հենց որ գլուխը հանեց, որ չխեղդվի, վերևից նիզակս խրելու եմ ծոծրակը, որ չկարողանա գլուխը ներս քաշել....
- Ա՛հ, անխիղճ...
Եվ Շուշիկը երեսը շուռ սվեց:
Իսկ Գագիկը շարունակում էր.
- Ես կրիաներին էլ եմ այդպես մորթում, ազնիվ խոսք: Դե նրանց հո պատյանից հանել չի լինի: Բա՞, խելք է պետք է՞, խե՛լք...
- Դու կրիա է՞լ ես ուտում, - զզվանքով դեմքը թթվեցրեց Շուշիկը:
- Կրիա՞... Կրիան ի՞նչ է, որ, կրիան պատյան հագած վառեկ է... Ի՞նչ միս ունի՛, մատներդ հետը կուտես... Դե, մեր զոհը տանենք սպանդանոց...
Քարե գուշի ջուրը ծանծաղ էր, նրա մեջ ոզնի չէր բացվի: Բայց զուլալ ջրի տեսքը Գագիկի մեջ մի այլ միտք առաջ բերեց:
- Ա՛յ հիանալի աղբյուր, - գոչեց նա ուրախացած: - Ամեն առավոտ ձյուն լցրու, ճաշին եկ կռացիր վրան, խմիր... Հասո՞, ջուր ստանալու քո մեթոդն արդեն հնացավ...
- Հեռու չի՞ մեր բնակարանից, - հարցրեց Աշոտը աչքով չափելով: - Երևի հարյուր քայլ լինի: Լա՛վ, եղա՛վ... Աղբյուր էլ ունեցանք, - թեթևացած շունչ քաշեց նա:- Բայց պարզկա գիշերները ջուրը կսառչի...
- Վրան կեծացած քարեր կլցնենք... Տեսե՞ք, էս քարերով եմ հալեցրել... Հասո՛, ներողությո՛ւն, քո մեթոդը կարող է մեկ-մեկ հարկավոր գալ... Է՛հ, բերեք ինչ որ անելու ենք, անենք Շուշիկի աչքից հեռու...
Շատ ճարպոտ դուրս եկավ ոզնին, և շատ էլ համեղ:
- Ափսոս, ոչ մեկս գոնե ոսկրացավ չենք ընկել, որ ճարպ քսենք-առողջանանք[15], - շաղակրատում էր Գագիկը:
Երբ կշտացան, ջուր խմեցին իրենց նոր աղբյուրից և հանգստացան, արևն արդեն թեքվել էր դեպի արևմուտք: Բայց դրսում այնպես մեղմ էր ու տաք, որ ոչ ոք քարայր տեղափոխվելու մտադրություն չուներ:
Է՛հ, լավ է, նորից խաղաղ օրեր սկսվեցին մեր պատանիների համար: Այսօր ոզնի գտան, վաղը մի ուրիշ բան կգտնեն, և թեկուզ կիսաքաղց՝ կդիմանան երեք-չորս օր ևս: Եվ այն ժամանակ... Ի՞նչ ուրախությամբ են հարազատները դիմավորելու իրենց.... Այս մտքերն էին հուզում մեր պատանիներին այդ գիշեր: Ոչ մեկը չէր ենթադրում, որ Հովազաձորի բնությունը նոր աղետ է պատրաստում իր գերիների համար:

---

[15] Մեր գյուղերում ոզնու, գորշուկի և արջի ճարպը ոսկրացավի դեղ է համարվում: Նրանով շփում են ցավող տեղը և դեմ անում արևին կամ վառարանին, կամ էլ ճարպ քսած ոտքերը կախում են գոլ թոնրի մեջ:

Այո՛, այդպես խաղաղ է լինում միայն մեծ փոթորկից առաջ...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ. Թե ինչպես հանկարծ գործեց բնության նիրհող և կույր ուժերից մեկը

Այդ գիշեր Հասոն խարույկի մոտ նստած երբեմն խանձողներից[16] մեկն ու մեկը առաջ էր մղում, կրակը բորբոքում և հետն էլ մտածում էր զանազան բաների մասին: Օրինակ, նա մտածում էր, թե այս ինչպե՛ս է, որ Հովազաձորի բոլոր անձավներն էլ ծածկված են վայրի այծերի կտիտով, ինչպես դա լինում է փարախներում, իսկ այն անձավում, ուր ապաստանել էին իրենք, ոչ մի կտիտ չկար: Ուրիշ խոսքով, ինչո՞ւ քարայծերը մտնում են բոլոր անձավները, բացի այս մեկից...

Այդ երևույթի բացատրությունը չգտնելով, Հասոն նայեց իր քնած ընկերներին: Ինչպե՛ս էին նիրհել խեղճերը...

Հագի աբան հանեց, զգուշությամբ գցեց Շուշիկի թիկունքին: «Լա՛վ աղջիկ է...»,- անցավ նրա մտքով: «Լա՛վ քույր կլինի, ախր ես քույր չունեմ...»,- ինքն իրեն ճշտեց նա և իր այդ նոր մտքից ժպտաց թախիծով: Հետո շոյեց իր կարմիր վզկապը, ուշադիր նայեց: Խարույկի լույսի տակ հրդեհվում էր կարմիր կտորը բոցե լեզուներից մեկի նման:

Ի՜նչ լավ է լինել պիոներ՝ «Լենինյան պիոներ»՝ Աշոտի ու Շուշիկի նման:

Նայում էր նա իր վզկապին ու հրճվում երեխայի պես: Բայց ոչ, նա երեխա չէր, նա զգում էր, որ երդումն արտասանելուց հետո կարծես լրջացել, ծանրացել է և բարձրացել: Իսկ գի՞րը... Տոպրակից հանեց իր տետրը, որի մեջ հայերեն տառերով մի հիսուն տեղ մեծ-մեծ գրել էր իր անունը՝ **Հասո**ն, սկզբում չանգռտելով, ծուռումուռ, հետո մի քիչ լավ: Այսպիսով նա հո կարգին հայերեն գրել-կարդալ կսովորի: Ինչպե՛ս կուրախանա հայրը: Ուտելիք լիներ՝ նա իսկի չէր էլ ուզենա դուրս գալ Հովազաձորից, - այնքան լավն են իր նոր ընկերները: Ախր նա ոչ մի ընկեր չուներ, մանկություն չուներ, ֆերմայում բոլորն էլ հասակավոր մարդիկ էին, Հասոն մեծանում էր առանց հասակակից ընկերոջ: Նա կարոտ էր ընկերոջ, նա երազում էր իր հասակի ընկերներ ունենալ: Գուցե այդ էր պատճառը, որ անմիջապես սրտով ու անվերապահորեն նվիրվել էր կույր բախտի բերումով իրեն ընկեր դարձած այս դպրոցականներին: Ինչքա՜ն բան գիտեն... Մեկ էլ տեսար տվին-անցան Է՛լ Հնդուստան, Է՛լ Իրան-Թուրան, Է՛լ Յապոնի հողը: Սրանք նույնիսկ գիտեն, թե ո՛ր երկրում ի՜նչ կենդանիներ կան: Երևի դա է պատճառը, որ Հասոն այդ «գիտուն տղաների» հետ խոսում էր հատուկ հարգանքով, ակնածությամբ: Նա հորից լսել էր, որ «ուսումը մեծ ուժ է» ու երազել էր ուսման մասին:

Չէ՛, ուսումն ուրի՛շ բան է, ուսում որ ունենար Հասոն, որ հայերեն կարդալ իմանար, հո պահեստապետ Պարույրը էն խաղը չէր խաղա նրա հոր գլխին:

Այս մտքից պատանու դեմքը մռայլվեց: Նրա աչքն ընկավ այրի մի անկյունում խաշամի մեջ ցրված ընկույզներին: Դա փոխեց նրա մտքերի ընթացքը: Դրանք Սարգսի գրպանից հանված ընկույզներն են, որ այն երեկոյից մինչև հիմա թափթփված են մի անկյունում: Ի՜նչ անհարմար բան եղավ... Երբ Հասոն հիշում է այդ դեպքի մանրամասնությունը, ամաչում է: Ամաչում է, թե՛ Սարգսի փոխարեն, որ անազնիվ քայլ էր արել («Թո՛ւհ, քո նամուսին, մարդ էլ իր ընկերոջից ուտելի՞ք կպահի...»), թե՛ Գագիկի փոխարեն, որ առանց քաշվելու խուզարկեց նրան (ինքը գետինը կմտներ՝ այդպիսի բան չէր անի), թե՛ Աշոտի փոխարեն, որ ապտակեց ու այնքան ծանր խոսքեր ասաց Սարգսին, այնպիսի խոսքեր, որոնցից ամեն մեկը ինքը մի փութ մեղրով կուլ չէր տա: Այդքանը լսելուց հետո մարդ լավ է մեռնի, էլ ի՞նչ երեսով է ապրում էս աշխարհում...

Թեև բոլորն էլ քաղցած էին, բայց ոչ ոք դեռ ձեռք չէր տվել ընկույզներին: Շատ անհարմար դրություն էր ստեղծվել, ընկույզին նայելիս երևի հիշում էին «այն դեպքը» և բոլորն էլ ամաչում էին: Սարգիսը նույնպես չէր համարձակվում ինքն ուտել կամ առաջարկել ընկերներին: Դե այնքան «խոսք ու զրույցից» հետո ո՞վ ձեռք կտար, ամենքն էլ մարդ էին , ամենքն էլ ինքնասիրություն ունեին... Եվ Հասոյին դա հասկանալի էր, նա ինքն էլ սովից կմեռներ, բայց ձեռք չէր տա «հարամ թիքին»: Ինչքան փորի մեռած մարդ պիտի լինի,

---

[16] Խանձող կամ անձղակոթ, կամ ածխակոթ – մի ծայրն այրված վառելափայտ:

որ իր պատիվը դնի ուտելիքի համար, - մտածում էր Հասոն: Բայց շանը հո՞ կարելի է տալ: Խե՜ղճ Բոյնախ, ի՜նչ օրն է ընկել, ոսկորները համրվում են, ուժ չունի, որ հաչի: Որ պառկում է՝ չգիտես քնա՞ծ է, թե ուշքը գնացած... Հե՜յ գիտի ասլան-Բոյնախ... քա՜նի-քանի անգամ է ոչխարի հոտը գայլերից ազատել. գա՞յլ կկանգներ նրա առաջ... Ակնակիր գիշերներին որ ձորերը դղրդացնում էր, գայլերը «մկան ծակին օխտը թուման էին տալիս»: Հիմի՝ անշարժ մեկնված է, աչքերը կիսախուփ:
Պատանու այտերով արցունքներ գլորվեցին: Ձեռքը դրեց իր մանկության ընկերոջ բրդոտ վզին ու ցած նայելով հարցրեց.
- Բոյնա՞խ....
Շունն աչքերը բացեց, պոչը թույլ շարժեց և լիզեց տիրոջ ձեռքը: Նրա թախծոտ աչքերում այնպիսի քնքուշ սեր ու նվիրվածություն կար, որ... Եվ այդ հայացքը կարծես ասում էր. «Է՜հ, ի՞նչ արած, որ վիճակված է մեռնել, միասին կմեռնենք...»:
Կենդանու այդ հայացքից Հասոն սթափվեց, ձգվեց.
- Ուրեմն Հասոն մեռա՞ծ է, որ դու...
Խոսքը չավարտած, նա վճռականորեն վեր կացավ, վերցրեց մահակը, որ դուրս գնա:
Բայց ո՞ւր գնար, որտեղի՞ց ուտելիք ճարեր իր բրդոտ եղբոր համար, ինչպես քուրդ հովիվն է անվանում իր շանը:
Աչքը նորից ընկավ ընկույզներին: Գնաց նստեց անկյունում, դանակը հանեց և սկսեց անձայն կճպել ընկույզները և նրանց միջուկը դնել շան բերանը: Կենդանին հաճույքով ուտում էր և պոչը շարժում: «Էս ի՞նչ եմ անում, բա նրա՞նց», - մտածեց Հասոն: Ապա մտածեց, որ նրանք չեն մոտենա այդ «կռվախնձորին», ընկույզները ինչ-որ վատ բան էին հիշեցնում իր ընկերներին և պղտորում նրանց տրամադրությունը, իսկ Բոյնախը այնքա՜ն գործ է արել ֆերմայում, այնքա՜ն օգուտ է տվել գյուղին: Նա արժանի է, նրա կերածը կորած չի: Այդպես արդարացրեց իր արարքը Հասոն և, առանց մի կտոր բերանը դնելու, ընկույզը կերցրեց շանը: Միայն մի քանի միջուկ քնքշությամբ դրեց Շուշիկի գրպանը և խաղաղված գնաց-պառկեց իր տեղը, որ կրակից հեռու էր. ամենալավ տեղերը նա ու Աշոտը զիջել էին ընկերներին: Սարգիսը բնազդորեն սողալով մոտեցել էր կրակին և գրավել այրի ամենատաք ու ամենահարմար տեղը: «Էլի՜ չի խրատվում, էլի՜ ի՜ր մասին է մտածում», - գլուխը շարժելով ծլթծլթացրեց Հասոն և պատրաստվում էր քնելու, երբ հեռվից գայլերի ոռնոց լսեց, երկար ու չարագուշակ:
«Արծվաքարի գլխին են պպզած», - իսկույն նրանց տեղը որոշեց Հասոն ու մտածեց. «Խե՜ղճ իմ հեր, հիմի գոմի առաջ յափնջու մեջ կուչ եկած իմ մասին է մտածում...»: Այդ մտքից տղայի սիրտը լցվեց, բայց մի բան խանգարում էր նրան կենտրոնանալ մի որևէ մտքի վրա. այրի խորքում ջուրը շարունակում էր վշշալ, չռռալ և այնպիսի ահալի ձայներ էր հանում, որ մութ ու սնոտիապաշտ պատանու գլխով հազար ու մի մտքեր էին անցնում. «Դևե՞ր են, չարքե՞ր են, ի՞նչ են...» (հին հովիվները չարքերի մասին այնքա՜ն հեքիաթներ էին լցրել նրա գլուխը...):
Եթե ջուր է, որտեղի՞ց է գալիս, ո՞ւր է գնում: Ա՜խ, հնարավոր լիներ հասնել այդ հեռավոր ջրին: Որքա՜ն գլխացավանքից կազատվեինք, հե՞շտ էր ամեն ծարավելիս քար կարմրացնել ու նրանով ջուր ստանալ: « Է՜հ, ուտելիք ճարեինք, ջուրը ոչինչ...», - մտածեց Հասոն, շուռ եկավ, մեջքը դեմ արավ Աշոտի թիկունքին և քնելու դիրք ընդունեց: «Որ թիկունքներս տաք լինի, մնացածը՝ հեչ», - մտածեց նա և դեմքով դեպի այրի խորքը սկսեց ննջել:
Այդ պահին հանկարծ երկրի ընդերքից մի հզոր «բո՜լտ» լսվեց, փրփրաբերան մի հեղեղ գոռում-գոչյունով դուրս ժայթքեց ապառաժի մութ խորքից, ողողեց քնած պատանիներին և սրբեց-տարավ իրենց եղևնյա անկողիններով...

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Թե ինչեր ասես չէր հորինում ժողովուրդը, երբ անգետ էր ու սնահավատ

Լուսադեմ էր, պարզկա և ցուրտ լուսադեմ: Այգեձորի հանդերով տակառներ բարձած մի բեռնատար մեքենա էր անցնում: Պահեստապետ Պարույրը, տաք մուշտակի մեջ փաթաթված, ննջում էր խցիկում, երբ անակնկալ արգելակից մեքենան հանկարծ կանգ առավ և այնպես ցնցվեց, որ քիչ էր մնում Պարույրը իր մսոտ ու լայն ճակատով փշրեր դիմացի ապակին:
- Ի՞նչ պատահեց, - վրդովված հարցրեց նա:
- Մի հեղեղը տես...
Ձյունով ծածկված ճերմակ դաշտով պղտոր մի հեղեղ եկավ և մեքենայի քթի առջևից անցավ գոռում-գոչյունով: Անցավ արագ, տեսիլքի նման և հեղեղատը նորից ցամաքեց...
Դեռ մութ էր, եթե մութ չլիներ, գուցե նա տեսներ և իր որդու կաշվե թանկագին պայուսակը՝ հեղեղի պղտոր բաշին թառած ցած գնալիս...
Պարույրը սնահավատ մարդ չէր, բայց սիրտն ահ ընկավ այդ խորհրդավոր երևույթից և վարորդից թաքուն բնազդորեն խաչակնքեց. «Նալլաթ քեզ չար սատանա, է՞ս ինչ բան էր...»:
Եվ նրա երկյուղն անհիմն չէր, այդ երկյուղը գալիս էր իր պապերից, դարերի խորքից: Անհիշատակ ժամանակներից սկսած Այգեձորի հին բնակիչները նկատել էին, որ երբեմն, մեկ-երկու ամիսը մեկ անգամ, հանկարծ հեղեղ է գալիս սարերից, թափով կտրում-անցնում իրենց հանդերն ու գնում թափվում Արաքս գետը:
Հեղեղը երբեմն գալիս էր պարզ ու անամպ օրը, անգամ հունիսի շոգին, երբ սարերում հալվող ձյուն չկա, երբ օրերով մի կաթիլ անձրև չէր ընկել երկնքից:
Սանձազերծ վիշապի նման նա իջնում էր Հովազաձորի ժայռերից, կտրում-անցնում Արարատյան տափարակն ու մի քանի րոպեում այնպես չքվում, որ հետքն էլ չէր մնում...
Դե ոնց Այգեձորի հին ու սնահավատ բնակիչները չմտածեին, որ դա կա՛-չկա սատանաների սարքած բանն է...
- Դժոխքի մեծ պղինձը շուռ են տալիս, հին ջուրը դատարկում, որ նորը լցնեն՝ մեղավոր մարդկանց հոգիները նրա մեջ խաշելու համար, - մտածում ու բարձրաձայն ասում էին որսորդ Արամի, այգեգործ Արշակի և Այգեձորում այժմ ապրող ու աշխատող լուսավոր մարդկանց մութ ու հետամնաց նախնիները:
Հեղեղատի հունով նրանք գնում էին դեպի վեր, կանգնում Հովազաձորի ներքին պռնկի դեռ թաց ժայռերի տակ, ահով վեր էին նայում, երկյուղածությամբ խաչակնքում էին երեսները, չարը խափանող աղոթքներ էին մրմնջում ու վերադառնում սիրտները լի կասկածներով: Ո՛վ էր գլխից ձեռք վերցրել, որ Հովազաձոր մտնի, ստուգի, թե ի՞նչ երևույթ է դա, որտեղի՞ց է գալիս այդ «հանկարծակի հեղեղը»: «Աստծու գործերն անքննելին են»... - խորհրդավոր խրատում էր Տեր-Կարապետը, և այդպես էլ «անքննելի» մնաց մինչև նոր կարգերը:
Նոր մարդիկ՝ Աշոտի հայր Արամը և մի քանի ուրիշներ երբեմն, երեք-չորս տարին մեկ անգամ, որսի ազարտով բռնված՝ մտնում էին այդ ահալի ու անիծված ձորը: Չէին հավատում նրանք ո՛չ չարքերին, ո՛չ նրանց գործերին: Բայց մի անգամ, մի պայծառ աշնանային օր, երբ իրենց աչքով տեսան պղտոր հեղեղը Հովազաձորի ներքին ժայռերից կախված և երբ լսեցին նրա դղրդոցը, ակամայից ահ ընկավ սրտները և զարմացած շշնջացին. «Է՞ս ինչ բան էր...»:
Հնում մի անհավատ մարդ կար Այգեձոր գյուղում՝ Սարոյենց Արտեմը: Կարիքից հալածված այդ մարդը ոտքով գնացել-հասել էր Բաքու, իր պողպատե բազուկների ուժը և մարմնի երկաթյա առողջությունը թողել էր Նոբելի նավթահանքերում ու շատ տարիներ անց գյուղ էր վերադարձել ճերմակած, ուժասպառ: Հող չուներ Սարոյենց Արտեմը՝ մեզ ծանոթ որսորդ Արամի պապը: Իսկ ընտանիքը կերակրել հարկավոր էր: Գնաց նա արորով հերկ արավ գյուղից շա՛տ հեռու, Հովազաձորից ցած՝ դեպի Արաքս ձգվող խանձված ու չոր հանդում: Շատ քրտինք թափեց, փորեց խիճը, վազի կտրոններ տնկեց և աչքը գցեց

Հովազաձորի ժայռերին, ո՛վ գիտի, գուցե իր բախտից սատանաները իրենց կաթսան դատարկեն իր ցանքի հենց ամենածարավ ժամանակ...
Իսկ սատանաները իսկի չէին էլ մտածում, որ աղքատ Արտեմի արտը ներքևում թոռոմում է: Ծերունի Արտեմը դողդոջ ձեռքերով առուներ էր անցկացրել ցամաքած հեղեղատից դեպի իր ցանքն ու այգին և աչքը պղնձագույն ժայռերին՝ սպասում էր:
Գյուղացիք սկսեցին թուք ու մուր տալ նրան.
- Ա՛յ մարդ, դևերը քեզ ջո՞ւր պիտի տան, որ դու հացի տեր դառնաս...
Բայց դևերը անակնկալ կերպով ջուր ուղարկեցին և նա իրոք «հացի տեր դարձավ»: Ճիշտ է, հեղեղը սրբեց տարավ արտի մի մասը, բայց մնացածը ոռոգեց իր տղմուտ ջրով և արտը լավ բերք տվեց: Իսկ խաղողի կտրոնները շիվեր արձակեցին, աճեցին:
Խելացի հողագործ էր Սարոյենց Արտեմը. նա կտրոնները տնկել էր թոնրի նման խոր փոսերի մեջ: Առուներով բաժան-բաժան հեղեղը գնաց այդ փոսերը լցրեց ջրով ու պարարտ տիղմով: «Էս տարի որ էլ մի կաթիլ ջուր էլ բաց չթողնեն, էլի հերիք է», - մտածեց նա:
Այսպես, տարիների ընթացքում, ծարավի արևից խանձված այդ ամայի դաշտում մի փարթամ այգի ստեղծվեց, որ հեռվից մարդու աչք էր շոյում անապատի դաժան դեմքը մեղմող կանաչ օազիսի նման: Ի՜նչ մրգեր ասես, որ չկային այդ դրախտ-այգում՝ ալ ու ալվան խաղող, արյան նման կարմիր նուռ, հյութալի և արևագույն դեղձ:
Բայց Տեր-Կարապետը (օղորմի իրեն, ի՜նչ լուսավոր մարդ է՜ր) անիծեց այդ «սատանեկան այգին» և նրա պտուղը ոչ ոք չգնեց, նրանից ստացված գինին ոչ ոք չըմպեց. «Սատանի ջրով է ջրված...»: Տեր-Կարապետի թելադրանքով ոչ ոք այլևս չկտրեց Սարոյենց Արտեմի հացը: Ինքն էր մեղավոր, հետը կնունքի նստեին, հարսանիքի, թե՛ սովորական ընթրիքի, տանտերը սեղանին պիտի դներ իր ունեցած հացը, միրգը, գինին, - բոլորն էլ «դժոխքի ջրով» սնված-աճած:
Շատ համոզեց ծեր Արտեմը համագյուղացիներին, թե՝ ո՛չ սատանա կա, ո՛չ դժոխք (դե նա Բաքվի բանվորության մեջ կոփված մա՛րդ, ոչ աստծուն էր հավատում, ոչ սատանային), լսողն ո՛վ էր. նա հո Էջմիածնում կրթություն ստացած, հոգևոր ճեմարանն ավարտած Տեր-Կարապետից շատ բան չգիտե՛ր...
Սարոյենց Արտեմը ստիպված մի հոլիկ շինեց իր մենավոր այգում և այնտեղ ապրեց մարդկանց աչքից հեռու:
Երբեմն «դժոխքը» ջուր էր ուղարկում, երբեմն ամիսներով նրա ցանքն ու այգին ծարավ էին մնում: Մի տարի բերք էր ունենում, մյուս տարին՝ ոչ, ու այդպես ապրում էր ծերունի Արտեմը վիշտն ու կսկիծը սրտում, իր ժամանակի մութ աշխարհի դեմ դառնացած, մինչև որ տարիները իրենց հետ մաշեցին-տարան նրա ուժերի մնացորդները և մի օր էլ խաղաղ վախճանվեց իր մենավոր հոլիկում...
Այգին անտեր մնաց, վայրենացավ, ոչ ոք ձեռք չէր տալիս նրա պտուղներին: Հեղեղը երբեմն գալիս էր նրան ջրում, ծառերը ծաղկում էին, պտղակալում, վայրի կենդանիները՝ ոզնի, նապաստակ, սարից դաշտի աղուտներին այցի եկող քարայծեր, ամեն տեսակի թռչուններ, գալիս վայելում էին քաղցրահամ պտուղներն ու իրենց կենդանական լեզվով «օրհնում» այդպիսի բարիքներ իրենց ժառանգություն թողած բարի ծերունուն:
Բայց ինչպես որ մարդու խնամքոտ ձեռքը ետ քաշվելուց հետո անգամ Միջագետքի նման ծաղկած երկիրը ծածկվեց ավազով և վերածվեց անապատի, այնպես էլ այդ կանաչ օազիսը խամրեց-ամայացավ, քանի որ տիղմով լցվեցին առուները և ջուրը այլևս չէր հասնում ծառաստանին:
Երբ Արամը՝ տասնհինգ տարեկան մի պատանի՝ առաջին անգամ հոր հետ որսի գնաց դաշտ, նախկին փարթամ այգու տեղ հեռվից մի քանի չորացած ծառեր էին երևում, ճյուղերը ծուռումուռ ու կախ, թևակոտոր ագռավների նման:
- Քո պապի հոր այգին է, - տխուր ասաց հայրը, և որդուն պատմեց այն ամենը ինչ գիտեր այդ այգու և Հովազաձորից եկող խորհրդավոր հեղեղի մասին:
Երբ Արամը որդիներ ունեցավ և սրանք մեծացան, ինքն էլ իր հերթին իր Արտեմ պապի պատմությունն արավ սրանց: Այնպես որ Աշոտը արդեն լսել էր հորից, թե որտեղի՞ց է գալիս Այգեձորի հանդը կտրող-անցնող հանկարծակի ու կարճատև հեղեղը: Բայց այդ մասին նա իր ընկերներին ոչինչ չէր ասել, չէր

ուզեցել նրանց սրտները ահ ու կասկած գցել: Մանավանդ Հասոն չպիտի իմանար ոչ «սատանաների ուղարկած ջրի», ոչ էլ այն մասին, որ այդ ջուրը հենց Հովազաձորում է դուրս հորդում, թե չէ սնոտիապաշտ պատանին ահից գիշերները քուն չէր ունենա:
Չէր ասել, բայց նրա մտքով էլ չէր անցել, թե անակնկալ հեղեղը կարող էր սկիզբ առնել հենց այն անձավից, ուր իրենք բնակություն են հաստատել...
Հմուտ բնասերի համբավ ուներ Աշոտը Այգեձորի դպրոցում, բայց ահա այդ հարցում չարաչար սխալվել էր: Նա ընկերներին խրատում էր, որ աչքաբաց դիտեն-ճանաչեն ամեն երևույթ, բայց ինքը ուշադրություն չէր դարձրել, որ անձավից ներքև հին ջրամբարի նշաններ կան, որի ներքին պռնկին ջուր սիրող բույսեր ու ծառեր են աճել՝ եղեգներ, ուռենի, թեղի... Այս ցամաք վայրում որտեղի՞ց են նրանք ջուր ստանում, այդ մասին Աշոտը չէր մտածել: Այնուհետև, այրի հատակը հղկված էր, իսկ քարայծերը խուսափում էին այդ անձավից: Աշոտը եթե շրջահայաց լիներ և ուշադրություն դարձներ այդ նշաններին, խումբն այն սոսկալի աղետին չէր ենթարկվի:
Աշոտը լսել էր նաև այն, որ իր հայրը կոլվարչության առաջ մի քանի անգամ հարց էր հարուցել՝ մեծ այգի գցել իր պապի այգու տեղը և վերականգնել-լայնացնել վաղուց ոչնչացած օազիսը:
Ի՜նչ հող ուներ այդ հանդը, ի՜նչ ոսկի հող: Եվ ի՜նչ արևի տակ է՜ր... Միայն ջուրն էր պակասում: Եթե սանձ դնեին հեղեղի երախին և ստիպեին ծառայել մարդուն, Արարատյան դաշտի այդ մասը «երկրային դրախտ» կդառնար, ինչպես սիրում էր արտահայտվել Արամը: Դա մեծ օգնություն կլիներ հողից պակաս Այգեձորի համար, ուստի այդ առաջարկը շատերը պաշտպանեցին, բայց այդ հարցը մնացել էր անլուծելի, ոչ թե այն պատճառով, որ այգեձորցիք վախենում էին «սատանի ջրով» ոռոգել իրենց այգին, - վաղուց նրանք այլևս չէին հավատում իրենց պապերի հորինած հեքիաթներին, - այլ չէին ցանկանում այգի հիմնել պատահաբար եկող ջրի հույսով: Կարելի էր ջրամբար կառուցել և կուտակել ու աստիճանաբար օգտագործել հեղեղի բերած ջուրը:
Բայց ինչպես ընթերցողն արդեն մի ուրիշ առիթով տեսավ, Այգեձորի ղեկավարությունն ապիկար էր և այդ գյուղի մարդիկ ոչ այնքան նրա կատարելիք գործին էին սպասում, որքան նրա շուտափույթ փոխվելուն: Նրանք սպասում էին հունվարին, կոլվարչության հաշվետվությանը, որպեսզի նոր, գործունյա մարդիկ ընտրեն վարչության կազմում, որոնք կզբաղվեին նաև Հովազաձորից եկող խորհրդավոր հեղեղը օգտագործելու և Սարոյենց Արտեմի հին այգու տեղը նոր, հանրային այգի գցելու գործով:
- Քշի՜ր, Սե՜րոբ, քշի՜ր հեռանանք էս անիծված տեղից, - կրած երկյուղից ուշքի գալով կարգադրեց Պարույրը վարորդին: Սերոբը նորածիլ բեղի տակ քմծիծաղ տվեց և քաշեց բռնակը: Վաղորդյան աղջամուղջի մեջ մեքենան սլանում էր դեպի Այգեձոր:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Թե ինչքան ցանկալի է արևը, երբ շուրջդ մութ է ու խավար

Սարսափից Հասոյի լեզուն բռնվել էր: Մինչև ծնկները ջրի մեջ կանգնած՝ նա դողդողում ու մրմնջոցով օգնության էր կանչում ամենազոր Շամս[17] աստծուն, երբ շեմքից լսվեց Աշոտի կանչը:
- Ի՜նչ ես քարացել, դուրս վազիր փրկենք.,.
«Փրկենք» բառը շանթահարեց տղային: Իսկապես, գուցե հեղեղն ընկերներին սրբել-տարել է, իսկ ինքը տնկված նայում է ապշահար:
Սառը ջրերի մեջ չփչփացնելով, նա հենց դուրս եկավ քարայրից, հեղեղը կտրվեց: Գնում հեռանում էր նրա աղմուկը և քիչ անց դղրդոցով թափվեց Տափարակի ներքևի շեկ ժայռից և նրա թափից գետինը ցնցվեց:
Ոչ ոքի ջրից դուրս քաշելու կարիք չեղավ, ինչպես որ գետի ընթացքը հանկարծ փոխելուց հետո ձկները թպրտում են ցամաքող հունի մեջ, այնպես էլ հեղեղն անցնելուց հետո Հովազաձորի լանջին այստեղ-այնտեղ դեգերում էին քարայրից վռնդված պատանիները:
- Ո՜տս, ո՜տս, փրկեցեք, - խավարում լսվում էր Սարգսի լալագին ձայնը:

---

[17] Շամս – արև: Եզդի-քրդերն արևապաշտներ են եղել:

Նրանից ցած մի թույլ ճիչ լսվեց, կանացի մի հուսահատ կանչ. «Մե՛ռա...»:
Հասոն սայթաքելով ցած վազեց, ոտքը քարի առավ, բայց ընկնելու ժամանակ չունեցավ:
- Գալիս եմ, խուշկե Շուշի՛կ, - ձայն էր տալիս նա աղջկան, որ ջրերի մեջ խելակորույս փախչելիս վայր էր ընկել և, մի թփի դեմ առած՝ թույլ նվվում էր:
- Չվախենա՛ս, - ահից կանչեց Հասոն և Շուշիկին շալակելով, տարավ-դրեց մի չոր տեղ:
- Գագի՛կ...- տագնապահար գոռում էր Աշոտը:
- Թող մի սառը դուշ ընդունենք, ի՛նչ ես ձայնդ գլուխդ գցել, - լսվեց Գագիկի պատասխանը այրի շեմքից երկու քայլ ցած: - Դեսն արի Սարգսին տանենք:
Մթնում ո՛վ պիտի նկատեր նրա դեմքի սարսափը...
Է՛հ, լավ է, բոլորն էլ կենդանի են: Աշոտը ազատ շունչ քաշեց, բայց դեռ սիրտն ուժգին խփում էր: Դե ինչպես չվախենա մարդ, երբ քնի ամենաքաղցր պահին հեղեղի բերանն է ընկնում...
- Վա՛յ, վա՛յ, ջարդվեց, կամա՛ց, - գոռում-մղկտում էր Սարգիսը, երբ ընկերները փորձում էին նրան տեղափոխել:
- Շուշի՛կ, հանիր շորերդ ու մզիր: Շո՛ւտ, ես երեսս դենն եմ անում, - խրախուսում էր Հասոն:
Աղջիկը լալով ու զնգր-զնգր դողացնելով մզում էր հագուստը, իսկ Հասոն՝ երեսը շրջած շարունակում էր սրտապնդել նրան.
- Չվախենա՛ս, քուր ջան, չվախենա՛ս: Հիմի էնպես կրակ անեմ, աստծու ոտները խանձի...Չվախենա՛ս, քեզ համար չոր շորեր եմ պահել... Բոյնա՛խ, այ Բոյնախ, հե՛յ...
Ներքևում թույլ հաչոց լսվեց, որ հետզհետե մոտենում էր:
- Ջա՛ն, Բոյնախս, Բոյնախս կենդանի է, - արցունքն աչքերին կրկնում էր հովիվ պատանին: - Պրծա՞ր, դե թող հագցնեմ...
Ջուրը անցքից ժայթքելուն պես Հասոն տեղից վեր էր թռել խայթվածի նման ու ոտքի կանգնել: Եվ քանի որ երեկոյան նա համեմատաբար հեռու էր քաշվել խարույկից և լավ տեղերը զիջել
իր ընկերներին, այդ պատճառով էլ այրի կենտրոնով հոսող ջուրը Հասոյի միայն ոտքերին էր հասել: Ծնկներից վերև նրա հագուստները չոր էին: Տղան, առանց տատանվելու, հանեց իր բլուզը, հագցրեց աղջկան և պատվիրեց.
- Պա՛ր արի, տեղումդ մի՛ կանգնիր, պար արի, ես հիմի կգամ...
Ու վազեց ընկերներին օգնության: Երեքով նրանք դժվարությամբ Շուշիկի մոտ տարան Սարգսի թրջված ու կիսաշունչ մարմինը:
- Ասա, ո՞ւր ես ստեղծել էսքան բոյը, - տնքալով տանում ու ինքն իրեն բողոքում էր Գագիկը: - Անուշ ջան, ոսկորներդ տե՞ղն են: Հա՞, դե լավ է, պինդ կաց, վերջը լավ կլինի...
Գագիկը էլի կատակով է խոսում, ուրեմն վտանգն անցավ, չեն մեռնի, - մտածեց Շուշիկը և մի քիչ սրտապնդվեց: Բայց այդ վիճակում էլ նրա գլխով անցավ Հասոյի տարօրինակ առաջարկը՝ «Պար արի, տեղումդ մի՛ կանգնիր...»: Հո չի՞ ցնդել տղան, ի՞նչ սրտով ինքը պարի այդ ողբերգական գիշերը...
Տղաները միացյալ ուժերով մերկացրին Սարգսին, մզեցին նրա շորերը ու մնացին մոլորված. Ի՞նչ անեն, նորի՞ց հագցնեն թաց հագուստը, թե՞ մերկ թողնեն:
Իսկ Սարգիսն այլևս ցավից չէր բողոքում, երևի անզգայացել էր:
- Մարմինը շփենք, - առաջարկեց Հասոն: - Շուշի՛կ, քեզ չասացի՞ պար արի:
«Չէ, հեղեղի տեսքից ուղեղի ցնցում է ստացել...», - ահով մտածեց Շուշիկը:
Բայց տղան իրենն էր պնդում.
- Ձմեռը հանդում, որ ցուրտը զոռում է, մեր չոբանները բոլորն էլ պար են գալիս, որ չսառչեն... Չգիտե՞ք:
- Տխուր ժամանակ է՞լ...
- Սուգի ժամանակ էլ...
Եվ Հասոն սկսեց ինքը բերանով թե՛ նվագել, թե՛ «լեզգինկայի» նման մի պար պարել: Տարօրինակ էր, բայց նրա համար՝ սովորական: Ամեն բանից քաշվող պատանին այժմ պարում էր ազատ, այնպես, ինչպես շատ անհրաժեշտ գործ են կատարում, ասենք՝ փայտ են ջարդում, գոմ մաքրում, կամ խոտ բերում ոչխարների համար: Այդ կարգի պարը հովիվ մարդու համար զվարճություն չի, և ոչ էլ հոգեկան

բավականություն, այլ կյանքը փրկելու միջոց, ուստի այդպիսի պարին չեն ուղեկցում խնդագին բացականչությունները և ոչ էլ պարողն ուրախ տեսք է ունենում...
- Տաքացա... Պարի՛ր, Շուշի՛կ, պարեցեք, տղե՛րք, - կանչում էր Հասոն և զարմանում, որ ընկերները չեն հասկանում այդ հասարակ բանը:
Ի՜նչ արած, սևակնած սրտերով նրանք շուրջպար բռնեցին, ձեռք ձեռքի տվին ու սկսեցին թռչկոտել:
Եթե այդ պահին որևէ որսորդ Հովազաձորի ժայռերից ցած նայեր, կարող էր հավատալ, որ իրոք աշխարհում սատանաներ գոյություն ունեն, որոնք գիշերները պար են բռնում...
Երբեմն նրանք կանգ էին առնում շունչ առնելու, հերթով շփում էին իրենց վնասված ընկերոջ մարմինը, ապա նորից շարունակում հարկադրական ու տանջալից պարը...
- Մեռնո՛ւմ եմ, մեռնո՛ւմ եմ... - ուշքի գալով գոռում էր Սարգիսը:
- Այստեղ մեռնելն արգելված է, - կտրուկ իր վճիռն արձակեց Գագիկը: - Կաց մի թիկունքդ տրորեմ... Գոնե ձեռքերով շարժումներ արա, տո՛, ի՞նչ ես լեշի նման փռվել:
Ինչ էլ որ անեին, ցուրտը սպառնում էր ոչնչացնել մինչև ոսկորները թրջված մեր պատանիներին:
Այն ժամանակ Հասոն, որ տարվա բոլոր եղանակներին էլ իր կյանքն անց էր կացնում բաց երկնքի տակ, գործադրեց իր մի այլ միջոցը:
- Տղե՛րք, - ասաց նա, - թոքերը թիկունքից են մերսում, փչեցեք իրար թիկունքի: Ա՛յ, այսպես:
Եվ բերանը հպելով Աշոտի թիկունքին, ինչքան ուժ ուներ փչեց:
- Վա՛հ, թիկունքս վառեցիր: Շուռ արի, Շուշի՛կ, մեջքդ դեմ արա...
Նա էլ Շուշիկի թիկունքին սկսեց փչել: Հասոն՝ Գագիկի, Գագիկը՝ Հասոյի, իսկ Շուշիկը կռացել նույն ձևով տաքացնում էր գետնին նստած Սարգսի մեջքը:
Ոտքիդ ի՞նչ է պատ... պատ... պատահել, - հազիվ կարողացավ հարցնել աղջիկը, նրա ծնոտներն իրեն չէին ենթարկվում:
- Կոտրվել է՛, - լալով մղկտաց Սարգիսը ներքևից:
- Թևերդ շարժիր, սուգ մի՛ անիր, ոչինչ չկա, - ականջի մոտ որոտաց Աշոտը: Այդ ձայնից տղան ապրելու հույսեր առավ և սկսեց անկանոն շարժումներ անել:
- Մինչև լույս կդիմանա՞նք, - հարցրեց Շուշիկը:
Ի՜նչ սարսափելի է մահը, իսկապե՞ս պիտի մեռնի առանց մորը տեսնելու: Աղջիկը լուռ հեկեկում էր, իսկ Հասոն նայում էր աստղերին:
- Չվախենա՛ք, շուտով լույսը կբացվի, - գոչեց նա: -Նայեցե՛ք, էն բարձր աստղը Քյարվանղռանն է, լուսադեմից առաջ է դուրս գալիս, հետո կասեմ, թե ինչի են «քյարվանղռան» ասում էդ աստղին: Նրանից ներքև, քարափի գլխից մեզ մտիկ անողը լուսաստղն է, էն էլ՝ «բազումքը»: Կես ժամից լույսը կբացվի, չվախենա՛ք: Գնանք քարափի տակ...
Աշոտը նույնպես կարողանում էր քիչ ու միչ «կարդալ երկինքը», որսորդ հորից էր սովորել, բայց այդ գործում հովիվներին չէր հասնի, հովիվն աստղերով անսխալ որոշում է գիշերվա պահը: Նա ստուգեց Հասոյի տված տեղեկանքը և սրտապնդված հաստատեց.
- Մի քիչ էլ դիմանանք՝ կլուսանա, արևը դուրս կգա, չվախենա՛ք: Արի քեզ շալակեմ, այ մախաթ կուլ տված լոլոզ, էստեղ լուսադեմի քամին կբռնի:
Եվ Սարգսի երկար ու թուլացած մարմինը շալակելով, քայլեց դեպի ժայռերի կողմը, ուր խաշամով լիքը մի փչակ գտավ և իր բեռը խցկեց նրա մեջ:
- Հասո՛, կրակ անելու հնար չունե՞ս, - ցրտից ավելի ու ավելի նեղվելով հարցրեց Աշոտը:
- Չէ, աբեթն էլ է չարդ տարել, չախմախն ու քարն էլ: - Ապա քիչ լռելուց հետո ավելացրեց.
- Էլի պար պիտի գանք, ճար չկա, իսկ լուսանա՝ մի հնար կանենք...
Եվ թուլացած ընկերներին պարի մղելու համար Հասոն իր գոտուց հանեց սրինգն ու սկսեց նվագել արյուն եռացնող մի պարերգ:
Ցրտից սառչող պատանիները շունչ առան այդ եղանակից, արյունները շարժվեցին նրանց երակներում և իրար ուս բռնելով, շարունակեցին պարել:
Ապա դրանից էլ հոգնելով, Հասոյի խորհրդով նրանք գրկում էին իրար թիկունք և այդպես տաքացնում իրար:

- Ա՛խ, թե ուժ մնացած լիներ մեջնե՛րդ, տես ոնց էի կոխ բռնում, տաքանալու համար կոխից լավ միջոց չկա: Ի՞նչ անեմ, որ հետս կոխ բռնող չկա , -ափսոսում էր Գագիկը, բայց բոլորն էլ գիտեին, որ լեզուն է բլբլացնում, իսկ ինքը ոտքի վրա կանգնել չի կարողանում:
- Լուսանում է, պինդ կացեք, - սիրտ էր տալիս Աշոտը: - Ով հուսահատվեց, անշարժ մնաց, կսառչի, տեղում կմնա... Մի՛ վախեցեք... Սա ի՞նչ է որ: Ճակատում մեր հայրերը շորը հագներին սառցակալած գետեր են անցել: Կրակ էլ չեն վառել, որ թշնամին չտեսնի, ու գնդակների կարկուտի տակ դողացրել են, վիրավորվել, սպանվել, բայց առաջ են գնացել: Մեր դրությունը նրանցից շատ լավ է, չվախենա՛ք, մեր դեմ ոչ թշնամի կա, ոչ էլ ռմբակոծում են մեզ... Երկու ժամն ի՞նչ է, որ չդիմանանք... Մի տեսե՛ք արևելքը ինչպես է գույնը փոխում: Մի տեսեք Մասիսի կատարը ոնց լուսավորվեց... Չվախենա՛ք: Դե՛, Հասո ջա՛ն, փչիր սրինգդ մի քիչ էլ պարենք...
Հասոն և՛ պարում, և՛ փչում էր սրինգը, ինչպես անում են քուրդ իմպրովիզատորները: Իսկ քաղցից ուժասպառ, ցրտից կապտած մեր պատանիները վեր-վեր թռչելով՝ իրենց ուժերի մնացորդներն էին ծախսում՝ մահից փրկվելու համար:
Բայց րոպեներն անցնում էին ծանր ու տանջալի: Թվում էր ժամանակը կանգ է առել: Երբեք մեր պատանիները այդպիսի ուժով չէին զգացել արևի կարոտը, նրա կենսարար ջերմության կարոտը...
Վերջապես ուժերն սպառվեցին, վաղորդյան ցուրտը սեղմեց-կուչ ածեց նրանց: Թուլացած և գրեթե անզգա նրանք կուտակվեցին իրար վրա, թաղվեցին ժայռի տակ թափված խաշամի մեջ, հպվեցին իրար ու մնացին անշարժ: Հասոն էլ իր անբաժան ընկերոջ՝ Բոյնախի թաց մարմինն էր իր գիրկն առել ու հայացքը շարունակ Մասիսների բարձունքներին հառած՝ նվվում էր. այնտեղից էր սպասում իրենց փրկության նշանը...
Վերջապես Մեծ Արարատի ճերմակ գլուխը ոսկեզօծվեց և բերկրալից ճիչ դուրս թռավ պատանու հոգուց.
- Շա՛մսը... Շա՛մսը...
Եվ աջ ձեռքը կրծքին դնելով, խոնարհվեց ու երկրպագեց արևին...
- Շա՛մս, Շա՛մս, փրկի՛ր ինձ... փրկի՛ր իմ ընկերներին...- մրմնջում էին նրա կապտած շրթունքները:
Ապա ծունկի եկավ և ձեռքերը տարածելով դեպի Արևը՝ անձայն կրկնեց հորից լսած աղոթքը.
«Շամս աստված, տուր մեզ լույս ու խաղաղություն...»:
Թմրած և ընդարմացած պատանիները գլուխները վեր քաշեցին, տեսան Փոքր Ասիայի լեռների արքային արեգակի նարնջագույն ծիրանին ուսերին գցած, տեսան լեռան հավերժական սառցադաշտերը փայլփլելիս և թվաց հեռո՛ւ-հեռվում կայծկլտող ճառագայթներն անդրադարձան ու թափանցեցին իրենց հոգու մեջ, լույսով ու ջերմությամբ ողողեցին իրենց սրտերը:
- Ա՛րևը... արևը... - մրմնջում էին ցրտահար պատանիները և ապրելու, այս սիրուն աշխարհում նորից ապրելու հույսը վերակենդանանում էր նրանց մեջ...

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Թե ինչպես իսկական ընկերը երևում է նեղության մեջ

Այդպե՛ս բացվեց մեր պատանիների գերության տասնութերորդ օրը:
Առաջինը տեղից վեր կացավ Աշոտը, մի քանի կտրուկ շարժումներ արավ, սառած ու կաշկանդված մկանները աշխուժացրեց: Նա տեսել էր քուրդ պատանուն բազուկներն առաջ մեկնած, բայց նրբանկատություն ունեցավ չբարկանալու, չծաղրելու. հավանաբար հիշեց այն դեպքը, հիշեց կեծացած բրոնզի նման նրա դեմքը և վիրավորանքի կայծն աչքերի մեջ: «Չէ՛, սրա ինքնասիրությանը կպչել չի կարելի...», - մտածեց նա և բարեկամաբար առաջարկեց (այո՛, առաջարկեց և ոչ թե կարգադրեց).
- Հասո՛, եկ խոտ ու խաշամ հավաքենք:
Ոտքի վրա կանգնել չէին կարողանում, նրանց մարմնի բոլոր անդամները մասնակցում էին համատարած և անընդհատ դողին:
Բայց և այնպես իրենց տիրապետելու ճիգ գործադրեցին և սկսեցին չորացած խոտ քաղել, խաշամ հավաքել և լցնել իրենց ընկերների վրա:
Շուտով իրար «շուլալված» մարդկային կույտը թաղվեց փափուկ խաշամի տակ:

Հետո կտրտեցին ժայռի արանքում բուսած մշտադալար թփերը, և դարսեցին այդ կույտի վրա:
- Հիմի տակին կտաքանան: Հասո՛, կրակ անելու հնար չկա՞, - կրկնեց լուսադեմին տված իր հարցը Աշոտը: - Արևն ուժ չունի, որ կրակ չանենք՝ թոքերի բորբոքում կստանանք...
- Հնար հիմա կգտնենք: Սատանի եղունգ գտիր:
Է՛հ, ի՞նչն է շատ Հովազաձորում՝ «սատանի եղունգը»:
Աշոտի հագուստներից մի քանիսը ևս չոր էին մնացել: Նա էլ, որպես ֆիզիկապես կոփված և ընկերասեր պատանի, անցած երեկո հեռու էր քաշվել կրակից և նրա մոտ տեղ տվել ջարդվածքներ ունեցող Սարգսին ու նիհար, մրսկան Շուշիկին: Այսպիսով, այրի կենտրոնով հոսող հեղեղը ամենից շատ վնասել էր օջախին մոտ պառկածներին, իսկ Աշոտը «հեղեղվել» էր միայն մասամբ, թեև ջուրը նրա վրայից փախցրել էր իր աշնանային գորշ վերարկուն: Ափսո՛ս, հագից հանած չլիներ, կմնար վրան: Բամբակով աստառած նրա պիջակի փեշերը թրջվել-ծանրացել էին, իսկ թիկունքը չոր էր մնացել: Ահա այդտեղից էր, որ Հասոն բամբակ հանեց՝ դրեց կայծքարի վրա և սկսեց հարվածել իր դանակի հետևով: Քարը կայծեր էր արձակում, բայց բամբակը չէր վառվում:
Շատ չարչարվեցին, փտած չոր փայտ դրեցին սալի վրա և քարով հարվածեցին: Կայծեր թռան այդ հարվածներից, բայց կրակ չստացվեց:
Հետզհետե արևը բարձրացավ, սառը ժայռերն սկսեցին գոլանալ, խաշամի վրայից եղյամը վեր կացավ: Քամիներից պաշտպանված և արևահայաց այդ լանջերին նոյեմբերյան արև օրը տաք է լինում, այնպես ինչպես ամառը հյուսիսում: Տղաները իրենց զգեստները փռել էին քարերին և լուռ միմյանց հյուծված մարմիններին էին նայում: Հասոն, որ առաջ էլ նիհար էր, այժմ կարծես ոսկորների վրա քաշած կաշին էր մնացել:
Աշոտը մարզված մկաններ ուներ և ատլետիկ մարմին, ուստի համեմատաբար քիչ էր տուժել քաղցից ու զրկանքներից:
- Անշարժ կսառչենք, գնանք մի բան ճարենք, - առաջարկեց նա: Այ տղա. Է՛յ, Սարգի՛ս, կսառչես-կմեռնես, էս պիջակս հագիր... Փեշերը թաց են, բայց վերևը չոր է, թիկունքդ կպահի... Վերցրո՛ւ, էլ նազ մի անի, - խստությամբ պատվիրեց նա և հագուստը ուժով ընկերոջը հագցնելով առաջ անցավ:
Ամեն անգամ Սարգսի համար մի լավ բան անելիս թեթևանում էր նրա հոգին: Ձղջո՛ւմ էր դա, թե մի այլ զգացում, նա ինքն էլ հաշիվ չէր կարողանում տալ իրեն:
Թաց հագուստները քարերին թողած, միայն ճերմակ շապիկները հագներին, նրանք մագլցեցին ժայռերի ծերպերը և կարմիր ու թթվաշ պտուղներով բեռնավորված կծոխուրի մի թուփ գտան: Աշոտն ու Հասոն խժռում էին թթվաշ ողկույզները և թվում էր ավելի համեղ պտուղ չի եղել և չկա աշխարհում:
Թեև դժվար էր ետ կանգնել այնքան հաճելի զբաղմունքից, բայց քաղցած ընկերներին հիշելով, նրանք իսկույն կանգնեցրին իրենց «աղացները» և այնուհետև այլևս ոչ մի հատիկ բերանները չդրին:
Գլխարկները հատապտղով լիքը նրանք ցած իջան, հագան իրենց կիսաչոր շորերը և կանգ առան խաշամի ու ճյուղերի կույտի առաջ: Նրա տակից տնքոցներ էին լսվում, մեկի բաց ոտքը դեռ դողում էր: Ետ տվին կույտը, տակից գոլորշի բարձրացավ, իրար գրկած և խաշամով ծածկված պատանիները տաքացել էին, թաց հագուստները սկսել էին չորանալ:
- Կամա՛ց... ո՛տս... կո՛ղքս... - ճչում ու լալիս էր Սարգիսը:
- Աշո՛տ, իմ ծունկն էլ է ցավում, - շրթունքներն ուռցնելով՝ լցրեց Շուշիկը:
- Սպասիր նայեմ, մի՛ ամաչիր, այդպե՛ս...
Աղջկա ծունկը զարնվել էր քարի և նրա վրա ձվի չափ մի կապույտ ուռուցք էր առաջացել:
- Կա՛ց, դրա միջոցն էլ կա:
Աշոտը ծառից դանակով մի կտոր հարթ կեղև կտրեց-դրեց ուռուցքի վրա և շատ ամուր փաթաթեց թաշկինակով, այնքան ամուր, որ աղջիկը սկսեց ցավից հոնգուր-հոնգուր լաց լինել:
Հովիվ պատանին լցվել էր, նա զգում էր աղջկա ցավը և սիրտը մղկտում էր նրա համար:
- Դիմացի՛ր, քուր ՛ջան, դիմացի՛ր: Առ, կծոխուր կեր... հիմի կրակ էլ կանեմ, - խաբում ու մխիթարում էր նա, ինչպես երեխային կմխիթարեն:
- Էս ինչ քաղցր մեղեդիներ եմ լսում, - գլուխը վեր քաշեց և աչքերը տրորեց Գագիկը: - Հա՛, Հասոյի սիրային երգն էր...

Քուրդ պատանու նիհարած-կապտած դեմքը վայրկենապես շիկնեց, վզի երակներն ուռան:
- Իմ քույրն է, ինչե՞ր ես խոսում, - զայրացավ նա:
- Դե լա՛վ, հանաք եմ անում: Իսկապես, քրդի խասյաթ ունի, տո՛...
Նա գիտեր, որ քուրդը եթե մեկին իրեն քույր հռչակեց, նրա համար կդնի կյանքը: Դե՛հ, ուրեմն, Հասոյի սրբազան զգացմունքի հետ խաղալ չի կարելի:
- Ասենք, թեև դու տիպիկ քուրդ չես (ինձ թվում է արաբական ծագում ունես), բայց ենթադրում եմ, որ երակներումդ քրդի արյուն է: Է՛հ, Հասո՛, ձեռք տվեք իրար, Շուշիկն էլ արդեն եղբայր ունի...
Շուշիկն իր երկնագույն պարզ աչքերով նայում էր շփոթմունքից այլայլված քուրդ պատանուն ու մտածում. «Բնության մեջ է մեծացել, դրանից է հոգին անարատ...»:
Նա ձեռք տվեց Հասոյին և մի պահ այնքան ուրախ էր, որ ծնկի ցավն էլ մոռացավ, իր վիճակն էլ:
- Դրա համա՞ր էիր գիշերը ԽԾԲ[18]-ի կարգով քո աբան Շուշիկի վրա գցում... Կարծում ես չնկատեցի՞, ախր ես մի աչքս բաց եմ քնում...
Բռնվե՛ց... Հասոն այնպես էր քրտնել իր խոնավ շորերի մեջ այդ սառնաշունչ առավոտին, որ այլևս խարույկի կարիք չէր զգում:
- Աբա՞ն: Ո՞ւր է, - հարցրեց Շուշիկը: Նրան հաճելի էր, որ իրեն հոգատարությամբ ծածկել է իրեն «քուր» անվանող այդ տղան...
- Աբա՞ն: Աբան ջուրը տարել է վրայիցդ...
- Ափսո՛ս... Եվ դու իմ պատճառով մնացել ես առանց շորի՞: Վա՛յ, ի՛նչ վատ բան է եղել...
Աղջիկն այնպես խղճահարվեց, որ աչքերը նորից խոնավացան: Նա ակամայից հիշեց իրենց հետ այնպես անխիղճ վարվող պահեստապետ Պարույրին, նրա որդի Սարգսին, ապա նայեց Աշոտի պարզ ու խոշոր աչքերին, զգաց իր դեմքին Գագիկի հումորով ու ծիծաղով շաղաղված բարի հայացքը, անսահման նվիրվածություն կարդաց քուրդ պատանու դեմքին, նրա, որ իր առողջությունը, իր կյանքը վտանգների էր ենթարկում ընկերների համար և սիրտը լցվեց ջերմ սիրով դեպի մարդիկ, դեպի իր ընկերները: «Աշխարհում միայն պարույրները չեն, մեր աշխարհում լավ հոգիներ շատ կան...», - ուրախ մտածեց և նրա երկնագույն աչքերը սկսեցին խաղաղ փայլել:
Լուռ կերան կծոխուրը և Սարգսին մի կողմ տանելով՝ մերկացրին: Նրա ոտքը կարծես դուրս էր ընկել «խնձորի» մոտ, հին վերքերին նորերն էին ավելացել, քանի որ հեղեղը նրան զարկել էր քարերին, թեև ժամանակ չէր գտել խեղդելու ոչ նրան, ոչ իր երախն ընկած մյուս երկուսին, որովհետև արագ դուրս էր ժայթքել և արագ էլ անցել:
Ասենք, նրանցից ոչ մեկը չէր ազատվի կործանումից, եթե իրենց բախտից չլիներ քարայրի կենտրոնով վերից վար բնության փորած խոր ակոսը: Դա ջրի դարավոր հունն էր, որով և նա դուրս վազեց սրընթաց, իսկ տղաները այդ բնական տաշտի բարձրադիր ափերին էին պառկած: Եթե նրանք հեղեղը հայտնվելուն պես քաշվեին այրի հեռավոր անկյունները, այդքան չէին տուժի: Բայց այն ահավոր գիշերը քնաթաթախ և մթամած ուղեղով ինչպե՞ս հասկանային, թե ի՛նչ է կատարվում և ինչպե՛ս վարվեն, որ լավ լինի:
Եվ ահա հետևանքը. Սարգիսը, խաշամին մեկնված, նվում էր և ով փորձ էր անում ձեռք տալ նրա ոտքին, այնպես էր գոռում, կարծես ոտքը պոկելիս լինեին:
- Հիմի ի՞նչ ենք անելու, - լացակումած հարցրեց Շուշիկը: Ոչ-ոք նրան չպատասխանեց, դե ո՞վ գիտեր, թե ինչպես են տեղը գցում «դուրս ընկածը»:
Քուրդ հովիվ Ավդալը ֆերմայում հայտնի էր որպես կոտրվածքներ կապող հեքիմ: Ասենք, ամեն հովիվ մեր լեռնային երկրում գիտի կենդանիների ջարդված ոտքը միացնել, «յախու գցել» ու կապել: Արդեն արկածներով լի նրանց կյանքի թելադրանքն է դա. հո քաղաքում չեն, որ վազեն բժիշկ կանչեն, ուզեն-չուզեն պարզ ու հասարակ միջոցներով իրենք պիտի մի բան ձեռնարկեն: Ուշիմ երեխա լինելով, Հասոն հետաքրքրվել էր, թե ինչպես է իր հայրը կապում ջարդված ոսկորը և ինչպես է տեղը գցում «դուրս ընկածը»:

[18] ԽԾԲ – ժողովրդական հապավում՝ խնամի, ծանոթ և բարեկամ բառերի:

- Սովորիր, լաո[19], պետք կգա, -միշտ ասում էր հովիվ Ավդալն իր որդուն և ցույց էր տալիս խնձորոսկրը տեղը գցելն ու կապելը:
- Կաց, մի շոշափեմ, - ասաց Հասոն, - ձեռքը մեկնելով:
- Վա՛յ, մորթեց ի՞նձ, - գոռաց Սարգիսը ցավից, երբ Հասոն ձեռք տվեց նրա ազդրին:
- Հա՛, դուրս ընկածն է էդպես ցավում... Կա՛ց, դիմացիր մի տեսնեմ... Պարզ է, այ տե՞ս, Աշո՛տ, ոտի ոսկորի ծայրը, որին դուք խնձոր եք ասում, դուրս է ընկել իր բնից, տե՞ս...
Սարգսի նիհարած մարմնի վրա դա այնպես պարզ էր երևում, որ հավատացնելու կարիք չէր զգացվում:
- Շո՛ւտ արա, քանի շատ չի ուռել, - շտապեցնում էր Աշոտը:
Իրոք, ուռուցքն արագ բարձրանում էր, իսկ ցավերը դառնում էին անտանելի:
- Մեկնվի՛ր, այդպես: Աշո՛տ, առ շարֆս, ոտի ծայրից կապիր: Գագի՛կ, գլխից բռնիր, այդպե՛ս: Դե քաշեցե՛ք, ես հիմի տեղը կգցեմ, սա հեշտ բան է...
Քաշեցին՝ մեկը գլխից, մյուսը՝ դուրս ընկած ոտքի թաթից: Տղան ցավից բառաչեց մորթվող արջառի նման, բայց ո՛վ էր նրան լսողը:
Երբ ոսկրի ծայրը հավասարվեց իր բնին, Հասոն հուպ տվեց, «խնձորը» գցեց իր բույնը և իր ապարոշով ազդրը փաթաթեց ու պատվիրեց.
- Աշո՛տ, ձգած պահիր, կարող է նորից դուրս գա: Գագի՛կ, գոտիդ կապիր ոտի ծայրից, մյուս ծայրն էլ... Կա՛ց, քո բանը չի, դուք ձգած պահեցեք, ես ինչ որ պետք է՝ կանեմ:
Հասոն ճիլոպներ հանեց մեզ ծանոթ անբախտ թեղուց (որին հասնողը մաշկում էր իր կարիքների համար), պարան գործեց, մի ծայրին ծանր քար կապեց, մյուսը՝ Սարգսի ոտքին կապեց, մի կոճղ էլ դրեց ոտքի տակ և քարը այնպես կախեց ոտքի ծայրից,
որ նա շարունակ ձգած պիտի պահեր տղայի մարմնի այդ անդամը: Սարգիսը գոռում էր ցավից, մղկտում էր, որ ձեռք չտան իրեն, չշարժեն:
- Դիմացի՛ր, Սարգիս ջան, դիմացի՛ր, մի քիչ պնդի թե չէ՝ կարձակենք, - սիրտ էր տալիս Աշոտը և ինքն էլ զարմանում իր մեղմության վրա:
- Ընկերնե՛ր, կրա՛կը, կրա՛կը, - հանկարծ գոռաց Հասոն այնպես ուրախացած, որպես չէր ուրախանա, եթե մի բուռ ադամանդ գտներ:
- Ո՞ւր է, ո՞ւր է...
- Աշոտի պիջակին նայեցեք, թևքի ծայրին է...
Պիջակը հիվանդի հագին էր, նայեցին՝ ոչինչ չկար, ի՞նչ կրակ, ի՞նչ բան:
- Սպասի՛ր, Սարգի՛ս, թևերդ չշարժես, կրակը կհանգչի... Ընկերները զարմանքով հետևում էին Հասոյի շարժումներին:
Նա շատ զգուշությամբ բարձրացրեց Սարգսի բազուկը, ցույց տվեց թևքի ծայրի վաղուց վառված-սևացած բամբակը և դարձավ Աշոտին.
- Էն որ թևքդ կրակ ընկավ, ասացիր՝ «Հեյ վա՛խ, պիջակս», մի՞տդ է:
- Հեյ վախ չեմ ասել, բայց միտս է...
- Իմացա՞ր, որ բամբակը կրակ ընկավ, մեզ համար աբեթ պատրաստեց: Հիմի էդ աբեթը մեզ կփրկի...
- Ո՞ր աբեթը, - զարմացած հարցնում էին ընկերները: Շուշիկն էլ էր «կրակը, կրակը» կանչից դուրս եկել խաշամի տակից, շունն էլ էր հարցական նայում իր տիրոջ կերպարանափոխված դեմքին: «Երևի նապաստակի փորոտիք են գտել, որ այսքան ուրախացել են...», - հավանաբար մտածում էր նա:
- Աբեթն այս է, այս... Հիմի սա կրակ կդառնա, - ասաց Հասոն՝ վառված ու հանգած բամբակի վրայի սև մրճեղը ցույց տալով: - Դե էն չոր փթռակը դեսը բերեք:
Եվ կայծքարը այդ սև կետին մոտեցնելով, տղան սկսեց ծալած դանակի բութ կողմով հարվածներ հասցնել: Կայծերը ցած էին թափվում կամ ուժգին խփվում բամբակի մրճեղին: Շուտով սևացած բամբակը հազիվ տեսանելի մի շիթ ծուխ արձակեց և նրա վրա երևաց մի կարմիր կետ: Տղաներն առան

---

[19] Լաո - որդի

այրվող հագուստի հոտը և շունչները պահեցին: Հասոն շատ թույլ փչեց այդ կարմիր խալին, սա արագ մեծացավ, սևը ամբողջովին կարմրեց, ծուխը շատացավ և պիջակի թևքն սկսեց այրվել:
- Փթռակը դեմ արա... այդպե՛ս... փչի՛ր: Լա՛վ, հերիք է, մարդի ձեռքը կվառես, համ էլ պիջակն ափսոս է, թևը հանգցրու..

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. Թե ինչ է սովորեցնում Հովազաձորում անցկացրած ծանր օրերի փորձը

Քիչ անց մեր աղետյալները նորից բոլորել էին թեժ խարույկի շուրջը և մոռացած ցուրտ ու սարսափ, խաղաղ զրուցում էին: Մռայլ ու տաժանելի գիշերից հետո օրն այնպե՛ս պայծառ էր թվում, աշխարհը այնպե՛ս խնդուն: Մահն այնքան մոտիկից տեսնելուց հետո կյանքն այնպե՛ս քաղցր էր թվում: Նույնիսկ այդպիսի՛ կյանքը, երբ ջուրը տարել էր նրանց խղճուկ ունեցվածքն անգամ՝ դասագրքեր, պայուսակներ, տետրեր ու մատիտներ, հագուստներ, Շուշիկի մի կոշիկը, Սարգսի գլխարկը... Անգամ այդպիսի՛ կյանքը, երբ նրանք մնացել էին կիսամերկ, անզեն ու քաղցած վերահաս դաժան ձմռան դեմ-հանդիման: Այդպիսի խղճուկ կյանքն անգամ հիմա քաղցր էր թվում, ավելի քաղցր, քան մինչ այդ գյուղում անցկացրած իրենց տաք ու ապահով կյանքը:
Մեծամեծ վտանգներից դուրս պրծնելով, նրանք նոր էին զգում կյանքի ողջ արժեքը: Այդ վտանգներում նաև փորձ էին ձեռք բերել և վստահություն դեպի իրենց ուժերը: Նրանք զգում էին, որ աճել են, հասունացել:
- Էն ի՞նչ բան էր, Աշո՛տ, էն ի՞նչ զուլում էր, որ եկավ ու գնաց, - հարցրեց Հասոն: Նրա համար իրենց պետը հեղինակություն էր, նա պետք է որ իմանար աշխարհի բոլոր գաղտնիքները: Իր միամիտ, պարզ աչքերը Աշոտի դեմքին հառած, Հասոն պատասխանի էր սպասում: - Ես բոլորը տեսա: Ջուրը քարափի տակից դուրս եկավ՝ «բո՛ւհ», ոնց որ թե քարափը սիրտը ետ տա...
- Անհաջող պատկերներով ես խոսում, Հասո՛, բայց ճիշտ է, ետ տալու նման էր... Հե՛յ գիտի, հա՛, երազումս Շուշիկենց բակում իրենց հավերից մեկը փետրում էինք, որ խորովենք, մեկ էլ տեսա ոնց որ կծպծան մաճառը շշի խցանը չի շպրտում, դուրս թռա այրից: Զրխկացի ու պինդ բռնեցի մի թփից՝ քաղցր երազներս ցնդեցին... Հեղեղի հետ կոխ բռնեցի, ես նրան՝ նա ինձ, վերջը տեսավ ուժը չի պատում՝ ձեռ քաշեց թողեց կորավ... Անիրավը գոնե ժամանակ տար հավն ուտեինք, հետո դուրս վռնդեր մեր բնակարանից, - այդ վիճակում էլ հումորով իր տպավորություններն էր պատմում Գագիկը: Նա նույնպես կատակելու սիրտ չուներ, բայց ընկերների թախիծը պե՞տք էր ցրել, թե ոչ:
Աշոտը արդեն հասկացել էր, որ դա իր պապի հոր այգին ջրող հեղեղն էր: Պատմեց ընկերներին իր իմացածը և զգաց, որ Հասոյի սիրտն ահ ընկավ:
- Սատանի բան չի, Հասո՛, դրանք երկրի խորքում կուտակվող ջրեր են (հիշո՞ւմ ես, որ երկու-երեք շաբաթ էր «ծը՛լթ, ծը՛լթ, վը՛շ, վը՛շ» լցվում էր ավազանը): Երբ արդեն ավազանում տեղ չկա, ջրերը դուրս են հորդում: Բայց ինչու այդպես հանկարծ ու կարճատև, դա մեր խելքի բանը չի, կպատմենք մեր մեծերին, մասնագետներ կգան-կպարզեն: Գնա՞նք, Գագի՛կ, Հասո՛, տեսնենք մեր ավերված օթևանը...
Չէ՛, պրծա՛վ, Հասոն էլ էն կողմը գնացողը չի...
- Ախպե՛ր, ավելի լավ է ես գնամ փայտ ջարդեմ... Հա՛, Աշո՛տ, հիմի հասկացա՞ր, թե ինչու էծերը մեր երը չեն գալիս...
- Հա՛, իսկապե՛ս որ... իբր թե ես էլ բնասերների ղեկավար եմ, թո՛ւհ, - իր ճակատին ափով զարկեց Աշոտը:
- Դա շատ հետաքրքիր երևույթ է: Ուրեմն վայրի այծերը իրենց աչքով տեսնում են, որ մեկ-երկու ամիսը մեկ անգամ այդ այրից ջուր է ժայթքում, անապահով տեղ է: Տեսնում են ու վախից չեն մտնում այնտեղ... Ինքնապաշտպանության բնազդ... Տեսեք ի՞նչ բաներ կան բնության մեջ է՛...
Աշոտը գլուխն օրորելով գնաց չարաբաստիկ քարանձավի կողմը:
Մոտեցան: Անձավի առաջի լանջը հեղեղը սրբել մաքրել էր քարերից, իսկ ներքևը՝ ձյունից: Այրից դուրս քշված փայտի կտորներից ու եղևնու ճյուղերից մի քանիսը դեմ էին առել այստեղ-այնտեղ:
- Վա՛յ, վերարկուս, - ուրախացավ Աշոտը, թաց ու ցեխոտ հագուստը եղևնու ճյուղերից ազատելով, - Սպասիր, մզենք փռենք, թող չորանա...

Տղաները անորոշ երկյուղը սրտներում մտան քարայրը և կանգ առան: Թեև ջուր չկար, բայց նրանք ահով էին նայում խորքի մութ «որկորին», որտեղից դարձյալ վշշոցի ձայն էր լսվում և թվում էր հիմա նորից հեղեղ դուրս կժայթքի:
Աշոտը անվստահ առաջ գնաց, չոքեց թաց հատակին, ներս սողաց և ականջը դեմ արավ: Այո, դատարկված ավազանը նորից լցվում է ժայռի թիկունքից երկրի խորքը ծծվող ջրերով:
«Բայց ինչո՞ւ է ժայթքում ու նորից փակվում...»: Նա ետ եկավ և այրի պատերին նայելով գոչեց.
- Ձա՛ն, Շուշիկի պայուսակը մնացել է... Էս էլ նրա սիրելի ոզնին...
Այրի բարձրադիր ու չոր անկյունում, տերևների միջից մի զույգ մանր աչքեր էին պսպղում: Աշոտը մոտեցավ, սարսափահար կենդանուն գցեց իր վերարկուի թաց գրպանն ու դուրս եկավ չարաբաստիկ անձավից:
Ի՜նչ անհյուրընկալ դուրս եկավ այդ այրը: Ինչպե՜ս իր խելագար արարքով նա նոր խոչընդոտ դրեց գերիների ազատության ճամփին: Ի՞նչ անեն հիմա, նոր բնակարա՞ն փնտրեն, նոր անկողի՞ն, վառելի՞ք, թե շարունակեն աշխատել Դիվային կածանի վրա...
Այսպես դառն մտքերով էր Աշոտը հրաժեշտ տալիս իրենց «խենթ բնակարանին», երբ լսվեց Շուշիկի ուրախ կանչը.
- Վա՜յ, ոզնիս կենդանի է... Իսկ ես համոզված էի, որ ջուրը տարել է... Եկ տաքացնեմ, ջանի՜կս... Իսկ պայուսակս... Վա՞յ, այդ ոնց է չոր մնացել, ախր մոտս ընկած էր, - զարմացավ Շուշիկը:
- Այո՜, Հասոն գիշերն իր քրոջ պայուսակը կախել է պատից, իսկ մերը թողել հեղեղի բերանում... Է՜հ, Հասո՜, Հասո, կողմնապահություն ես անում, - մատը թափ էր տալիս Գագիկը:
Հասոն երջանիկ ժպտում էր. իր հայ «քուրացվի» նկատմամբ ուշադրության մի ապացույց էլ էր հայտնաբերված:
- Դե՜հ, ընկերնե՜ր, կծոխուրը կերել եք ու տաքացել: Հիմա ինձ լսեցեք: Սարգի՜ս, ինչպե՞ս է ոտքդ: Ոչի՞նչ, ցավերը մեղմացա՞ն: Ապրե՜ս, դա էլ կմոռանաս, նեղ օրերն էլ, մա՜րդը կմնա... Կգնանք տուն, ամեն բան կմոռացվի, բայց չի մոռացվի իրար արած վատությունը, ոչ լավությունը, - իր հանգի հանդիսավոր ու խրատական սկսեց Աշոտը: - Ուրե՜մն, ընկերնե՜ր, մեզ այնպես պահենք մեր այս նեղ օրերին, որ հետո կյանքում բաց ճակատով նայենք իրար երեսի... Ու իրարից ամաչելու ոչ մի պատճառ չունենանք: Չմոռանանք մեր պապերի իմաստուն խոսքը՝ լավ ընկերը նեղ օրին կերևա... Լավ, թույլ տվեք ես ամփոփեմ մեր վերջին ձախորդության հետ կապված դասերը (Ա՜խ այդ Աշոտը, որ չի կարող յոլա գնալ առանց ժողովի ու ճառերի...): Այո՜, մենք մեծ դաս ստացանք: Հեղեղը ցույց տվեց, որ մեզանից մի քանիսը կոփված չեն բնության դեմ մղվող կռվում և շուտ զենքերը վա՜ր են դնում, հանձնվում: Ես օրինակներ չեմ բերում, բայց դուք ամեն մեկդ հիշեցեք, թե ձեզանից ո՜վ ինչպե՜ս պահեց իրեն հեղեղի ժամանակ և նրանից հետո...
Եվ տղան խուզարկու հայացքով մեկ-մեկ նայեց իր ընկերներին: Սարգիսը խոնարհել էր իր հայացքը, իսկ Շուշիկը ծիծաղեց և պարզասրտորեն հանձն առավ.
- Ես լաց լինելով «մամա, մամա» էի կանչում... Էլ այդպիսի բան չեմ անի, Աշո՜տ...
- Այո՜, և չպի՜տի անես: Մենք, կարող է պատահել, ավելի ծանր ձախորդության հանդիպենք: Պիտի դիմանանք: Բա էլ ո՜ր օրվա համար ենք կապում այս վզկապները:
Երևում էր, որ զրկանքները Աշոտին չէին կոտրել:
- Ես մի պատմություն անեմ ձեզ: Ամեն օղակում զրույցներ են անցկացնում, իմ զրույցն էլ սա է լինելու: Մի անգամ (պապս էր պատմում) Պետրոգրադից մի ուսումնական հայ մարդ գալիս է Սևան, որ վանքը տեսնի: Վանքն էլ Սևանա կղզու վրա է: Ցամաքաբերդցի ձկնորսներին խնդրում է նավակով իրեն տեղափոխեն կղզի: Համաձայնում են: Երբ սկսում են թիավարել, այս մարդը ձկնորսներից մեկին հարցնում է.
- Բարեկա՜մ, մաթեմատիկա գիտե՞ս:
- Ո՜չ, աղա՜:
«Աղան» գլուխը հանդիմանանքով շարժում է.
- Ափսո՜ս, կյանքիդ մի քառորդը կորած է: Մյուսին է հարցնում.
- Իսկ դու քերականություն գիտե՞ս... փիլիսոփայությո՞ւն, աշխարհագրությո՞ւն...

- Ոչ, աղա՛, մենք անգրագետ մարդիկ ենք, մեր կյանքը ծովի վրա է անց կենում:
- Ափսո՛ս, կյանքիդ կեսը կորած է, - իր վճիռը արձակում է նորեկը:
Ճամփի կեսին մեծ փոթորիկ է բարձրանում: Ձկնորսները շորները հանում են ու նրանցից մեկը հարցնում է.
- Աղա՛, լողալ գիտե՞ս...
- Ո՛չ...
- Ափսո՛ս, քո ամբողջ կյանքն է կորած, նավակը հիմի շուռ կգա...
Ինչո՞ւ համար եմ ես պատմում պապիցս լսած այս դեպքը: Ասե՛մ: Մենք, մեր գյուղի երեխաներից շատերս, կարեկցությամբ ենք նայել Հասոյին. «Դե, անուսում խեղճ ու կրակ չոբան է...»: Տեսա՞ք, տեղ կա, որ նա պիտանի եղավ կյանքի համար, իսկ մեզանից մի քանիսը անպետք դուրս եկան: Նրանք, ովքեր Հասոյին մինչև հիմա վերևից են նայել, կկորչեին, եթե նրա օգնությունը չլիներ: Այո՛, նա պետքական դուրս եկավ բնության կույր ուժերի դեմ մղվող կռվում, իսկ մենք՝ ոչ: Նա իրեն էլ փրկեց, մեզ էլ: Ինչո՞վ: Փորձո՛վ: Ճիշտ է, մենք գիտություն ունենք, բայց նա փորձ ունի: Իսկ փորձը քիչ բան չի: Պարզվեց, որ մեր փորձը պակաս է, մենք բնությունը լավ չգիտենք: Հասարակ բան, նա աստղերով հասկացավ, որ լուսանում է և դրանով սիրտ առավ ու մեզ էլ սիրտ տվեց: Իսկ սիրտ առած մարդը կդիմանա, կապրի: Նա սառչող մարդուն փրկելու երեք-չորս ձև ցույց տվեց: Իսկ մե՞նք: Նա՛ չլիներ, սվսվալով կուչ էինք գալու, սառչելու էինք, կամ թոքերի բորբոքում էինք ստանալու: Ուրեմն, եկեք մեր գիտությանը ավելացնենք փորձը...
- Իսկ Հասոյին տանք այս, ինչ նա չունի՝ գիտությունը, - քուրդ պատանուն սիրալիր նայելով լրացրեց Շուշիկը:
- Այո՛, որ ուսում ունենա, աննման անասնապահ դուրս կգա նրանից: Դա մենք կանենք և՛ այստեղ, և՛ ֆերմայում: Անպայմա՛ն կանենք: Սարգի՛ս, քե՛զ եմ դիմում, չնեղանա՛ս, սա իմ վերջին խոսքն է, այլևս ինձանից թթու խոսք չես լսի: Քո հայրը միշտ պահեստապետ չի մնա, որ դու ասեն ինչ պատրաստի վայելես: Կարող է գա ժամանակ, երբ դու սեփական ուժերով պետք է հոգաս քո ապրուստը: Բայց դու, չնեղանաս, լոդր ես սովորել: Ծառի տակ պառկել ես ու մտածել՝ ա՛խ, էն տանձը ընկնի բերանս, կոթն էլ վերև...
Տղաները ծիծաղեցին, Սարգիսն ինքն էլ շփոթված ժպտաց:
- Կմեծանաս, բանակ կգնաս ու կմնաս մոլորված: Այնտեղ «մամայի բալային» չեն սիրում, այնտեղ կոշտ կյանքի սովոր ու պլոճիկ ունեցող տղաներ են պետք, որ դիմանան: Խրամատներին չես դիմանա, ընկերներիդ ծաղրի առարկան կդառնաս, ախպե՛րս, լավ չի լինի քեզ համար: Սովորիր աշխատել այստեղ էլ, տանն էլ: Տե՞ս, նորից որպես օրինակ, Հասոյին եմ ցույց տալիս հա՛, ոմանց կողմից արհամարհված այս հովիվ տղային...
Հասոն լսում էր գովասանքից շիկնած ու շփոթված և Շուշիկի սիրալիր հայացքներն իր դեմքին զգալով՝ քիչ էր մնում գլուխը կորցնի, - ախր նա իր կյանքում աղջիկ ընկեր չէր ունեցել, ֆերմայի աշխատողները մեծ մասամբ տղամարդիկ և պառավ կանայք են, իսկ իրեն հասակակից աղջիկները սովորում են գյուղում: Ինքն էլ ամառը սարերում է լինում, ձմեռը՝ ձմեռանոցում, միշտ հոտի հետ, - աղջիկ արարած նա որտեղի՞ց է տեսնում: Երևի դրանից էր, որ Շուշիկի ներկայությունը հենց առաջին օրից այնքան ճնշում էր նրան, ստիպում՝ ստեպ-ստեպ քրտնել: Բայց և այդ ներկայությունը նրան մղում էր գործի: Նրա գլխում ցնորքներ էին ծնվում, նա երազում էր այնպիսի անսովոր բան անել, որ միանգամից աչքի ընկներ խմբի մեջ, մանավանդ այն նուրբ ու սիրալիր դեմքով արարածի առաջ, որին անմեղ կերպով նա իրեն քույր էր անվանել...
Իսկ ինչ էր զգում Սարգիսը: Այդ տղաներն իրեն չէին սիրում և դաղված էին իր հոր արարքներից: Բայց երկու անգամ փրկեցին իր կյանքը: Ուրեմն, կոլեկտիվից դուրս ինքն անպայման կոչնչանար: Հիմա էլ ընկերները կծոխուրի մեծ մասը հանձնել են իրեն, ստիպում են ուտել և ծածկել են իրենց շորերով: Գիշերը կգա, նրանք կմրսեն, չեն քնի, բայց իրենց հագուստները ետ չեն վերցնի, - Սարգիսը դա հաստատ գիտեր:
Աշոտի խոսքը նրան շատ էր ազդել. «Այնպես պահենք մեզ, որ երբ գյուղ վերադառնանք, իրար երեսի բաց ճակատով նայենք»:

Ո՞նց բաց ճակատով նայի Սարգիսը իր ընկերներին, երբ նույնիսկ ուրիշի հավաքած ընկույզի պահեստը... Ամո՛թ... Ամո՛թ...
Եվ նա կյանքում առաջին անգամ հաստատուն կերպով ազնիվ վճիռ կայացրեց իր մեջ ու գոչեց.
- Ինձ վեր քաշեցեք, բան եմ ասում...
Հասոն նրա կռնատակերից այնպես զգուշությամբ բարձրացրեց, որ վնասված ոտքը չշարժվեց տեղից: Այն ժամանակ Սարգիսը շփոթված ու կակազելով թոթովեց.
- Ձեր առաջ մեղավոր եմ, ընկերնե՛ր... Գնացեք ընկուզենու մոտի շեկ քարի տակը քանդեցեք... Էնտեղ ուտելիք կա... Ներեցե՛ք...
Եվ հոգով թեթևացած, բայց մարմնով թուլացած նորից ընկավ իր տեղը:
Տղաներն իրար երես նայեցին և գոհ էին բոլորն էլ, որ նրանց անձավային կյանքի ամենամեծ կնճիռը հարթվում է:
- Տղե՛րք, վայ ես մեռնեմ ուտելիքին, բա ինչի՞ եք նստել:
Ու Գագիկը մահակն օդում ճոճելով՝ վազեց դեպի ընկուզենու տակի «շեկ քարը»: Բոյնախը տագնապով շարժում էր բրդոտ պոչն ու հարցական նայում իր տիրոջը՝ ուզում էր հասկանալ, թե ի՞նչ պատահեց: Հասոն ու Շուշիկը ևս ցած իջան և տեղ հասան այն ժամանակ, երբ Գագիկը, խաշամի վրա չոքած, ընկույզները լցնում էր փեշն ու հետն էլ զգացված ասում.
- Վայ ես քո դնչիկը կծեմ, մի տեսեք, թե ոնց է իր փոքրիկ տոտիկներով մեկիկ-մեկիկ գլորել-տարել իրեն բույնը, որ մեզ փրկի սովից: Ոնց որ մեր Հասոն փոքրիկ թաթիկներով մեկիկ-մեկիկ հավաքեց ու իրենց երեք տարվա ապրուստը տարավ լցրեց հորը...
- Ո՞ր հորը:
- Պարույրի փորը... Լա՛վ, գույնդ մի՛ գցիր, չլսեց... Վերջին նախատինքն է, այն էլ հեռակա... Պա՛հ, պա՛հ, պա՛հ, պոպոք հո չի, ուտողը գիտի, չուտողն ի՞նչ գիտի...
Այդ զվարթ բացականչությունները կցկտուր հասնում էին Սարգսի ականջին և նա, աչքերը երկնքով լողացող ամպի մի քուլայի հառած, մտածում էր, որ վերջապես ինքն էլ ընկերներ ունի կյանքում, լավ, սրտակից ընկերներ: Նա երբեք լավ ընկեր չէր ունեցել և կարծես չէր էլ զգացել դրա կարիքը: Հիմա կոլեկտիվի հետ էր, հոգատարությամբ շրջապատված և, որ գլխավորն է, զգում էր, որ իր հոգին մաքրվում է, ազնվանում:
Դրանից էլ նա հիմա խաղաղ էր ու թեթև, թե՛թև...

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես մեր պատանիները ստիպված էին ամեն ինչ սկսել նորից

Այո՛, դժբախտաբար ամեն բան նորից պիտի սկսեին, կույր տարերքը նրանց զրկել էր բնակարանից, անկողնուց, զենքերից, օջախից: Սնունդն էլ արդեն չկար ու չկար: Հիմա արդեն ճամփան բացելու մասին խոսք անգամ չէր կարող լինել: Առաջին հերթին հարկավոր էր ցերեկով պիտանի քարայր գտնել և հարմարեցնել բնակության համար:
Աշոտն ու Հասոն գնացին անձավ փնտրելու, Շուշիկը հերթապահ մնաց Սարգսի մոտ, իսկ Գագիկը սնունդ ճարելու հանձնարարություն ստացավ:
Ինչն է շատ՝ անձավները մեր երկրում: Ազատ գետից մինչև Ջուլֆա, Փոքր Կովկասի հարավային լանջերով ձգվում են կրաքարե ապառաժների անվերջանալի շարքերը: Իսկ կրաքարի մեջ ջուրը հազարամյակների ընթացքում անձավներ է փորում:
Աշոտն ու Հասոն լուռ բարձրանում էին ձորը աջ կողմից եզերող ժայռաշարքը, դեպի Կաքավի ժայռի կողմը, որի տակ մթին էր տալիս ճնճղուկների անձավի լայն մուտքը:
Հասան ժայռին, քրտնած կանգ առան անձավի առաջ:
- Մուտքը շատ է լայն, ցուրտ կլինի, - իր կարծիքը հայտնեց Աշոտը: - Վերադառնանք ընկուզենու մոտի անձավը, նրա մուտքը ցածր է, տաք կլինի: Մենք պիտի գտնենք այնպիսի այր, որի մուտքը փոքր լինի, փորը՝ մեծ:

- Հա, էդպիսի այրի մեջ ավելի տաք կլինի, ճիշտ ես ասում, - համաձայնեց Հասոն: - Բայց երբ դուռը նեղ է, ծուխը կնստի մինչև գետին: Շուշիկի աչքերը... այսինքն, բոլորիս աչքերն էլ...
Տղան շփոթվեց, կակազեց և իրեն հավաքելով շարունակեց.
- Ծուխը սրա միջից հեշտ դուրս կգա: Իսկ դուռը կպատենք, կփոքրացնենք:
Ուրիշ անգամ Աշոտը չէր համաձայնի, բայց այն օրվա «դեպքից» հետո կարծես մի փոքր փոխվել էր:
Նրանք ներս մտան ամբողջ հասակով մեկ կանգնած, բայց խորքը գնալով, հետզհետե ստիպված էին նախ խոնարհել իրենց գլուխները, ապա կռանալ, որովհետև այրի առաստաղը, որ մուտքի մոտ բավական բարձր էր, գնալով իջնում էր և աստիճանաբար թեքվելով գնում-խորքում հենվում էր քարե հատակին:
Հենց այդ թեքությունը նկատի առնելով էր Հասոն պնդում, որ այդ այրը ընտրեն իրենց բնակության համար, քանի որ ծուխը առաստաղի տակ չէր ամբարվելու, այլ նրա թեքությանը զուգահեռ գնալու-դուրս էր գալու բարձր մուտքի վերին մասից: Հասոն ֆերմայի հոտի հետ շատ անգամ էր գիշերել անձավներում և նկատել էր, որ հայրը այդ կառուցվածքի անձավը գերադասում է ցածր մուտք և լայն «փոր» ունեցող անձավից, որովհետև այս վերջինի մեջ ծուխը կուտակվում-կուրացնում է մարդկանց:
Այդ վայրը մեր պատանիների նախկին բնակարանից հեռու լինելով, զերծ էր մնացել նրանց ավերածություններից, վառելիք էլ կար, խաշամին ու խոտին էլ ձեռք տվող չէր եղել, գաճաճ գիհի ծառերն էլ էին դեռ կանգուն:
Այնպես որ մինչ Գագիկը սնունդ ճարելու անհաջող փորձեր էր անում, Աշոտն ու Հասոն անձավում բավական քանակությամբ գիհի փարթամ ոստեր և խաշամ կուտակեցին: Երբ նրանք իջան ցած, Գագիկն արդեն վերադարձել էր «որսից» և Շուշիկին պատմում էր իր արկածները.
- Էդպես, Շուշիկ ջան, արծվի ոտից որ բռնեցի, քթի տակ ժպտաց: Ասում է՝ լղարել մի աղվեսի չափ ես դառել, հիմի ես քեզ կթռցնեմ-կտանեմ ամպերը: Անիրավը որ չթափահարեց մետրանոց թևե՛րը, ոտներս կտրվեցին գետնից՝ թե՛թև, թե՛թև... Չէ, ասի, էս անգամ կյանքը իրեն բաշխենք թող գնա, ու բաց թողեցի... Իսկ դու նախատում ես, թե՝ դատարկ ես եկել... Հը, Աշո՞տ, աչքերդ պսպղում են, երևի լավ բնակարան ես գտել...
Է՛, թեկուզև գտել է, ով է գժվել այս արև օրը սառն անձավը մտնի, - մտածում էր Գագիկը: Արեգակը զենիթից այնպես ջերմություն էր թափում, որ բոլորն էլ չոր խոտերին մեկնվելու կարիք էին զգում, նախորդ գիշերն այնքան մեծ էր եղել ցրտից ոչնչանալու ահը, որ մեր պատանիները, չնայած արդեն շոգել էին, բայց ագահությամբ դարձյալ ու դարձյալ կլանում էին արևի ջերմությունը, նման Ջեկ Լոնդոնի այն հերոսին, որ երբ փրկվում է քաղցամահ լինելուց, մթերքի առատության մեջ անգամ ձեռքը մեկնում է անծանոթ մարդկանց ու հաց խնդրում...
Դա ոչ թե քաղցն ինքն է, այլ քաղցի արդեն ապրած ահը: Այդ ահը նույնիսկ թելադրում էր խարույկը թեժ պահել: Թեև գոլացած ժայռերից ջերմ օդի ալիքները խփվում էին նրանց դեմքերին, բայց երբ հիշում էին այն ահավոր գիշերը, բնազդորեն ձեռքները դարձյալ մեկնում էին խարույկին...
Ահա այդ տրամադրության մեջ էին մեր պատանիները, ուստի հասկանալի է, թե ինչու բացի Աշոտից, ոչ մեկը չէր շտապում գնալ նոր բնակարանը և գիշերելու հարմարություններ ստեղծել նրա մեջ:
- Հը՛, շարժվելու միտք չունե՞ք... գնանք տեղավորվենք, - իր հարցը կրկնեց Աշոտը: Նրա համբերությունը վերջանում էր, դեռ այնքա՛ն բան կար անելո՛ւ: Իսկ սրանք հանգիստ արևկող են արել...
- Կաց, մի քիչ էլ տաքանանք, Աշո՛տ, ի՞նչ ես կրակ կտրել, - բողոքեց Գագիկը շուռ գալով և այժմ էլ մեջքը դեմ անելով արևին:
Ի՜նչ լավ է արևը, ի՜նչ բարի...
- Արի՛, Հասո՛, արի գոնե աղեղներ պատրաստենք, - փնթփնթաց Աշոտը: - Տրեխներիդ քուղը, ինչպես երևում է, բոլորը պիտի քանդես:
Հասոն տխուր ժպտաց և լուռ ցույց տվեց իր բոբիկ ոտքը:
- Հա՛... տրեխներիդ մեկը տվել ես Շուշիկի՞ն... Լա՛վ, դե մյուսի քուղը քանդիր:
Հասոն իր միակ տրեխի թելերը քանդեց ու հանձնեց Աշոտին և սկսեց հարմար շիվեր կտրտել:
Մինչ նրանք աղեղներ էին պատրաստում, ընկերները շարունակում էին տաքանալ գոլ շողերով: Ի՜նչ լավ, ի՜նչ բարի է արևը...

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. Թե ի՞նչ անակնկալ է սպասում այն մարդկանց, ովքեր իրենց գրված պաշտոնի պատճառով մեծամտանում և վերևից են նայում ընկերներին

Այդպես ուրեմն, այդ պայծառ ու արևոտ օրը քաղցր թմբիրը համակել էր Հովազաձորի գերիներին և ամենից շատ՝ Սարգսին:

Հիվանդ ոտքը խարույկին դեմ արած, ձեռքերը գլխի տակ, մեջքի վրա պառկած, նա անքթիթ հայացքով նայում էր երկնի անհուն կապույտին ու լուռ վերապրում անցածը՝ երբեմն սոսկումով, երբեմն երջանիկ ժպտալով: Հասկանալի է, որ նրա հոգին համակված էր այն ուրախությամբ, ինչ ունենում է մահից նոր ազատված մարդը: Եվ քա՜նի մահից... Եվ ի՜նչ սոսկալի մահերից... Հենց աչքը խփում էր՝ իրեն զգում էր անդունդը գահավիժելիս, կամ հեղեղի երախում... Իսկ ո՞տքը: Սա էլ մահվան հավասար բան էր, բայց ընկերները գլխի չէին: Նրանք չգիտեին, թե ինչպես իրեն՝ Սարգսին ազատել են հավիտենական հաշմանդամությունից: Իսկ Սարգիսը գիտեր դա: Դրա օրինակը նա տեսել էր գյուղում: Կոլտնտեսության կալը էլեկտրական գիծ տանելիս մոնտյոր Ռուբենը գլորվել էր սյունից և ոտքը դուրս էր ընկել նույն տեղից, ինչ որ իրենը: Ժամանակին չէին տարել վիրաբույժի մոտ, ուշացրել էին: Տասը օր անց հիվանդին փոխադրել էին Երևան, այստեղ էլ մինչև զանազան անալիզներ էին կատարել, մինչև ռենտգենով նկարել էին դուրս ընկած մասը, անցել էր ևս չորս օր: Պրոֆեսորը նայել էր ու ասել. «Ափսո՜ս, գոնե երկու օր շուտ բերեիք, «խնձորի» բույնը լցված հեղուկն արդեն քարացել է, խնձորը տեղը դնել չի լինի...»: Հետո պրոֆեսորն ինչ-որ գրքեր էր նայել և ավելի ճշգրիտ տեղեկություն տվել հիվանդին, խնձորոսկրը իր բնից դուրս ընկնելուց հետո տեղը լցվում է հեղուկ նյութերով, որոնք քարանում են տասներեք օրվա ընթացքում: «Աշխարհում մի դեպք չկա, որ տասներեք օրն անցկացնելուց հետո խնձորն իր տեղը գցեն», - ասել էր պրոֆեսորը: Այդպես էլ մոնտյոր Ռուբենը հենակներով մնաց և հաշմանդամ կմնա ցմահ:

Ահա Սարգսին ինչ մեծ աղետից էր ազատել հովիվ Հասոն: Դե ինչպե՞ս երախտապարտ չլինես այդպիսի ընկերոջը...

Այսպես տարվել էր իր մտքերով Սարգիսը և նրա լսողությանն էին երբեմն հասնում ընկերների կցկտուր խոսքերը:

- Հա, լավ ես ասում, Աշո՜տ, էլի նետ-աղեղներ շինենք... Հասո՜, թելից-քուղից ի՞նչ կարող ես ճարել, - հարցնում էր Գագիկը:

Սարգիսը սթափվեց այդ ձայնից, բայց մտքերը նրան նորից հեռու տարան, նորից ընկերների ձայները հեռացան:

Իսկ Աշոտի արածը քի՞չ էր, սա ոչ թե հաշմանդամությունից, այլ մահից փրկեց իրեն, - նույնպիսի երախտիքի զգացումով մտածում էր Սարգիսը: «Բայց սարեր, ձորեր կան Աշոտի ու Հասոյի միջև, - մտածեց նա: - Հասոն ոսկի սիրտ ունի... Լավությունն այնպես է անում, որ աննկատելի մնա արածը, չճնշվես: Իսկ սա, համ շատ մեծ լավություն կանի, համ էլ խրատ կկարդա, գլխիդ... Մի տեսակ արածը երեսով տալու նման է ստացվում...»:

Այո՜, երբ Աշոտը խրատում է, հասկանում ես, որ իրեն իրավունք է համարում հովանավորի տոնով խոսել, որովհետև արել է քեզ համար, պարտ ես իրեն... Լավ չի, դա վիրավորում է, դա մեռցնում է երախտիքի զգացումը մարդու մեջ: Երևի այդ էր պատճառը, որ Սարգիսը որքան էլ ստիպում, համոզում էր իրեն, չէր կարողանում սիրել այդ տղային: Հիմա էլ, տե՜ս, նորից ամբարտավան տոնով է խոսում...

Եվ Սարգիսը ուշադրությունը կենտրոնացրեց ընկերների խոսակցության վրա: Նա իր մտքերով տարված կարգին չէր լսել Աշոտի խոսքը, բայց Գագիկի պատասխանից մի բան հասկացվում էր:

Հա՜, կարծես Աշոտը կարգադրում է վեր կենալ և ճնճղուկների այրը տեղափոխվել, բայց Գագիկը չի ենթարկվում, առարկում է: Իսկ Աշոտը առարկություն չի վերցնում... մանավանդ Շուշիկի ներկայությամբ... Ինչպե՞ս կարելի է առարկել պետին, ախր, հեղինակությունը կընկնի... Սարգսի տանջված դեմքին հեգնանքի ժպիտ երևաց:

Վա՜հ, ոնց է տաքացե՜լ, երևի Գագիկը դաղել է մի սուր պատասխանով... Արդեն նորից պետի տոնով է խոսում, վերևի՜ց...

- Իսկ եթե չեք ենթարկվելու, ինչի՞ եք ընտրել, - գոռգոռում էր նա կարմրած: Իսկ Գագիկը «ուտեցնում էր» հանգիստ տոնով.
- Լավ չի, Աշո՛տ, այդ տոնդ թող, - խաղաղասիրաբար համոզում էր նա: - Այստեղ բոլորս էլ գրեթե մի տարիքի հավասար ընկերներ ենք, ի՞նչ կարիք կա, որ մեկը մյուսին հրամայական տոնով դիմի... Սովորություն ունեցիր խորհրդակցել, խելք-խելքի տալ ընկերների հետ...
Աշոտը գողունի նայում էր Շուշիկին և Գագիկի խոսքերից կաս-կարմիր կտրած՝ դարձել էր անհամբեր: Իսկ սա զարմանալի հանգիստ ու լուրջ շարունակում էր.
- Ճի՛շտ է, մասսաների ճնշման տակ վերջերս մի քիչ դեմոկրատացել ես, բայց դեռ էն չի...
- Ես էն եմ, ինչ որ կայի, - կտրեց Աշոտը:
- Չէ, մի քիչ փոխվել ես: Էլ չես ասում՝ «այսինչ բանն արա», ասում ես՝ «անենք»: Դա լավ է: Բայց էլի մեկ-մեկ սիրում ես հրամայել, կոպտել: Թո՛ղ, ախպե՛ր, դրանից օգուտ չկա: Եթե շատ ես սիրում, որ քեզ լսեն, ենթարկվեն, քաղցր խոսիր: Եթե...
Գագիկի «եթե-ները» և դիտողությունները կպան Աշոտի ինքնասիրությանը և սա բոլորովին կողի ընկավ: Ձղջման զգացումը, որոշ մեղմությունն ու նրբանկատությունը, որ առաջացել էին տղայի մեջ նախորդ «դեպքերի» ազդեցության տակ, նորից տեղի տվին բիրտ ուժին և կոպտությանը: Եվ վեճի մեջ տաքանալով, նա շպրտեց.
- Այն է՞լ կժխտես, որ առանց ինձ հիմի կորած կլինեիք...
Այն ժամանակ Գագիկը, որ խոսակցությունն սկսել էր կիսակատակ, բոլորովին լրջացած հայտարարեց.
- Լա՛վ, Աշո՛տ, որ դու քո մասին այդքան մեծ կարծիքի ես, ես ստիպված պիտի լինեմ խմբի առաջ հարց դնելու քեզ փոխեն...
Աշոտը հեգնանքով ծիծաղեց:
- Ո՞վ է փոխարինելու ինձ, վախկոտ Գագի՞կը, թե...
Նա ցանկանում էր ամեն մեկին իրեն հարմար մի ածական կպցնել, բայց զգալով, որ կոնֆլիկտը կխորանա, իրեն զսպեց. չէր ուզում մյուսներին էլ իր դեմ հանել:
- Գագի՛կ, վե՛րջ տուր.. Աշո՛տ, խնդրում եմ լռիր...
Երկյուղով լի էին Շուշիկի աչքերը, իսկ փոքրիկ սիրտն սկսել էր անհանգիստ խփել. «Կռիվ չդառնա՛»...
- Չէ՛, սպասի՛ր, Շուշի՛կ, սա համը հանում է, - տաքացավ Գագիկը: «Սվսվոց չլսե՛մ», «մի՛ փնթփնթա», «կատարի՛ր, ինչ որ քեզ կարգադրում են»... Սա ի՞նչ տոն է, ինչպե՞ս է խոսում սս մեզ հետ: Սրա քիթը որ հիմիկուց չջարդենք, սրանից կամ բռնակալ դուրս կգա, կամ բյուրոկրատ... Դպրոցում թիկունքին ավագ ջոկատավար կար, դիրեկտոր կար, կարող էր մեզ սպառնալ նրանց անունով... «որպես ջոկխորհրդի անդամ»: Իսկ այստեղ ո՞վ է սրա թիկունքը: Ես հիմի կապացուցեմ, որ դրա հեղինակությունը փքուն է... Այո՛, ուռեցված է արհեստական կերպով... Եկե՛ք վերընտրություն կատարենք... գաղտնի քվեարկությամբ...
Եվ Գագիկը տեղից վեր կացավ, գնաց Շուշիկի պայուսակից տետր հանեց, մի թերթ պոկեց նրանից, մասերի բաժանեց ու սկսեց ցուցակներ կազմել:
Աշոտը արհամարհական մի ժպիտ բերանի անկյուններում, իր խոշոր աչքերով հետևում էր նրա շարժումներին և զարմանում, այդ ինչպե՞ս է, որ այնքան մեղմ ու կատակասեր Գագիկը այսպես լրջացել է, դարձել չոր ու անողոք: «Սա երևի հին վրեժ ունի իմ դեմ», - մտածեց Աշոտը և սկսեց փորփրել ուղեղը, թե ե՞րբ, ի՞նչ վատություն է արել նրան: «Թե՞ նախանձում է, որ ե՛ս եմ խմբի ղեկավարը... Հա՛, անպայման դա՛ է, ուզում է ինքը ղեկավար դառնալ... կդառնա՛ս, ո՛նց չէ...»:
Եվ նա չարախնդությամբ ծիծաղեց:
- Ի՞նչ ես ծիծաղում, կարծում ես կատա՞կ եմ անում... Առ քո բաժին ցուցակը, հինգ անուն կա, չորսը կջնջես մեկը կթողնես: Հետո թուղթը չորստակ կծալես ու կտանես-կգցես էն քարի հետև...
«Ի՜նչ անհարմար բան եղավ...», - մտածում էր Հասոն, բայց համեստությունը թույլ չէր տալիս իրենից ավագ և շատ բան իմացող այդ «ուսումնական մարդկանց» վեճին խառնվել:
Սարգիսը լուռ էր, բայց, ըստ երևույթին, դեմ չէր ղեկավարի վերընտրությանը:
Շուշիկը ևս լռել էր մի պահ և կենտրոնացած մտածում էր: Ապա մտքում մի բան վճռելով, նա կտրուկ ասաց.

- Լա՛վ, թուղթն ու մատիտը դեսը տուր... Հիմի կերևա, թե ո՛վ ի՞նչ է...
Այդ սպառնալիքը ուրախացրեց Աշոտին. դե ինչ կասկած կարող էր լինել, որ Շուշիկը ի՛ր «կադրն է»: Սարգսին էլ հո այնպիսի մի լավություն արավ, որ ապերախտ պիտի լինի, եթե իր օգտին չքվեարկի: «Հասոն էլ հո իմն է ու իմը... Իմ ձայնն էլ հետը՝ չորսը կա: Գագիկը մնաց մենա՛կ...»:
- Էլ ինչո՞ւ եք երեսներդ դենն անում, քաջություն չունե՞ք, - դիմեց նա Գագիկին: -Տե՞ս, քո աչքի առաջ ես անունդ ջնջում եմ... Էլ գաղտնի քվեարկությունս ո՛րն է:
- Չէ՛, ախպե՛ր, մենք վախկոտ ենք, թող գաղտնի քվեարկենք... Հասո՛, ուշադիր նայիր, էս առաջին անունը հո կարողանում ես կարդալ, քոնն է, երկրորդը Սարգսի անունն է, երրորդը...
- Սա գիտեմ... Սա...- շփոթվելով թոնթորաց հովիվ պատանին:
Գագիկը ծիծաղեց:
- Դե իհարկե կիմանաս, երրորդը Շուշիկի անունն է...
- Չէ՛, Շ-ի գլուխը իմ չոմբախի գլխի նման կեռ է, դրա համար չեմ մոռանում, - ծիծաղելով փորձեց արդարանալ տղան:
- Հա՛, ներքին ծայրն էլ Բոյնախի պոչի նման ոլորած-մեջքին դրած, - իհարկե չես մոռանա: - Լա՛վ, կատակը մի կողմ, չորրորդը Աշոտն է, վերջինը՝ նվաստս...
Խմբի ունեցած միակ մատիտով նրանք հերթով իրենց նշումներն արին ցուցակներում, ծալեցին և գցեցին Գագիկի ցույց, տված քարի հետև:
- Հիմա՛, Աշո՛տ, հաշվիչ հանձնաժողով ընտրենք: Քանի որ ես ու դու, ոնց որ ասում են՝ «շահագրգռված կողմեր» ենք, թող նրա՞նք հաշվեն:
- Լա՛վ, հիմա ես ու Սարգիսը կհաշվենք, - մեջ մտավ Շուշիկը:
- Իսկ Հասո՞ն:
- Դե նա միայն իմ ու իրեն անունն է կարդում, ձեր անունները դեռ չի ջոկում իրարից, - չարաճճիորեն ծիծաղեց Շուշիկը:
Նա հիմա ուրախ էր այդ վերընտրության համար և դարձել էր անհամբեր, հետաքրքիր է ո՛վ ինչքա՞ն ձայն է ստացել: Շատ հետաքրքիր բան «մոգոնեց» այդ Գագիկը...
Միայն Շուշիկը չէր, բոլորն էլ անհամբեր սպասում էին ընտրության արդյունքին:
Շուշիկը վազեց բերեց թղթերը ու, կռանալով Սարգսի վրա» սկսեց քչփչալով նրա հետ բացել ցուցակներն ու հաշվել:
- Մատներդ մեկ-մեկ ծալիր... Հասոյի օգտին՝ մե՛կ, երկո՛ւ, մեկ էլ... վա՞յ էս ի՞նչ շատ է... երե՞ք... - և՛ զարմացավ, և՛ ուրախացավ աղջիկը, բայց այնպես, որ ձայնը չհասնի ընկերներին, որոնք ամեն մեկը մի դիրքով հեռու նստած՝ մի որևէ գործով էր զբաղված, կամ, ավելի շուտ, ձևացնում էր, որ զբաղված է, իսկ իրականում բոլորն էլ, ականջները սրած, Շուշիկի և Սարգսի խորհրդավոր քչփչոցին էին ունկնդրում, - կարծես այնտեղ վճռվում էր ամեն մեկի լինելու կամ չլինելու հարցը...
Վերջապես առաջ եկավ Շուշիկը, թղթերը ձեռքին: Առաջ եկավ դանդաղ ու հանդիսավոր: Նրա դեմքը շողում էր ներքին հրճվանքից, խաժ աչքերում կար ջերմություն և մեկի հասցեին հեգնախառն մի բան:
«Անցե՛լ եմ...», - հպարտ մտածեց Աշոտը և իսկույն էլ հանդիմանեց ինքն իրեն, «Հենց ուրախանում ես, կարծես ուրի՛շը կարող էր ընտրվել... Սրանցից ո՞վ կարող է ղեկավարել խումբը...»: Եվ նա մի անգամ ևս հայացքով չափեց ընկերներին:
Իսկ Շուշիկը դիտմամբ դանդաղում էր (դե ինքն արդեն գիտեր, ինչո՞ւ պիտի շտապեր...)
- Գիտե՞ք ինչ է եղել, - ասաց նա ուրախությունը հազիվ զսպելով: - Զարմանալի բան է կատարվել... Այսինքն, զարմանալի չի, լավ է եղել, բնական է... Հասոն բոլորից շատ ձայն է ստացել... Սրանից հետո Հասոն է մեր ղեկավարը...
Ասաց և հայացքը ման ածեց ընկերների վրա, տեսնելու համար, թե ինչ ազդեցություն թողեց արտակարգ լուրը:
Սարգիսը խաղաղ ժպտում էր. ըստ երևույթին նա բավարարված էր կատարվածից: Գագիկի սև աչքերում հեգնանքի կայծեր կային, նա իր հաղթանակն էր տոնում: Հասոն «վա՛հ» արավ, շիկնեց մինչև մազերն ու շփոթմունքը թաքցնելու համար շուռ եկավ նայեց Բոյնախին: Իսկ Աշոտը մնաց տեղում քարացած...

Սկզբում նա չհավատաց իր ականջներին:
- Ո՞նց թե... Հո սխալ չե՞ք հաշվել... - բացականչեց նա զարմացած:
- Չէ՛, լավ ենք հաշվել... Մեկ էլ կարդամ. Սարգսին-մեկ կողմ, չորս դեմ... Շուշիկ-հինգ դեմ (ու աղջիկը բարեսրտորեն ծիծաղեց), Գագիկ- երկու կողմ, երեք դեմ: Հասոն երկու դեմ ունի, որից մեկն անպայման ինքը կլինի: Իսկ Աշոտը... Աշոտը - մեկ կողմ, չորս դեմ, - դժվարությամբ արտասանեց աղջիկը և երբ վերջացրեց, թեթև շունչ քաշեց, կարծես մի ծանր բեռից էր ազատվել:
Անսպասելի հարվածից Աշոտը շշմել էր: Ա՛յ քեզ բա՛ն, իսկ ինքը իրեն լճավանցի Կամոյից էլ լավ ղեկավար էր համարում: Բացի Գագիկից, իրեն ո՛վ կարող էր դեմ լինել և ինչո՛ւ... Գագիկն էլ որոպեական հակառակությունից... Տե՛ս, հիմա էլի մեղմացել, նախկին Գագիկն է դարձել ու ի՛նչ մեղմ տոնով է խոսում հետը:
Այստեղ մի թյուրիմացություն կա, լսենք-տեսնենք ի՛նչ է ասում, գուցե կպարզվի:
Իրոք, Գագիկը՝ իր հավատարիմ ընկերը՝ շուռ էր եկել դեպի իրեն և աչքը նրա աչքին մեղմությամբ ասում էր.
- Դու ինձ չես խնայել (Աշոտի տված «վախկոտ» ածականը դեռ այրում էր նրա սիրտը), դու չես խնայել, Աշո՛տ, բայց մենք խնայում ենք քեզ ու չենք ասում երեսիդ, թե էն մեկն ով է, որ ձեռքը չի բռնել քո անունը ջնջելու...
Հարվածը շատ ծանր էր և անսպասելի: Այնպես որ բոլորն էլ գլուխները խոնարհեցին չտեսնելու համար, թե ինչ ազդեցություն գործեց այդ հարվածը ինքնասեր և հպարտ պատանու վրա:
Լա՛վ է խնայում Գագիկը, դրանից էլ պարզ ակնա՞րկ: Աշոտը գունատվեց գողության մեջ բռնվածի նման: Նույնիսկ Հասոյի նման միամիտ և ընտրությունների կարգից անտեղյակ հովիվը հասկացավ, որ Աշոտը միակ մարդն է խմբի մեջ, որ ձայն է տվել ինքն իր օգտին... Մնացածները միաձայն դեմ են քվեարկել նրան: Ա՛յ քեզ խայտառակությո՛ւն:
Հասոն ամոթից վեր կացավ և, աղեղի համար փայտ կտրելու անվան տակ, գնաց դեպի թփերը: «Խմբի ղեկավա՛ր... Իմ ի՞նչ բանն է... Ձե՞ռ են առել ինձ...», - մտածում էր նա շփոթված:
Լավ չեղավ, բոլորովին լավ չեղավ: Եթե իմանար, որ ոչ ոք Աշոտի օգտին չի քվեարկելու, Հասոն իր ձայնը կտար նրան... Ամոթ բան ստացվեց, շա՛տ ամոթ: Ինքը լիներ Աշոտի փոխարեն, գետինը կմտներ...
Բայց ի՛նչ գիտես, որ Աշոտը իրոք «գետինը չի մտնում»: Նրա սիրտը կարծես դաշույն էին խրել: Այնպես էր վիրավորված, ինչպես Անուշի եղբայր Մոսին, երբ Սարոն նրա թիկունքը գետնովը տվեց հարսանիքում, հարս ու աղջիկների աչքի առաջ...
- Մի՛ նեղանա, ավելի լավ կլինի այս դեպքից դաս առնես, - մեղմ ասաց Գագիկը: - Տե՞ս, ինձ էլ չեն ընտրել, բայց չեմ նեղանում: Ի՞նչ կա որ, հո բոլորն էլ ղեկավար չե՞ն կարող լինել... Գիտեմ, չէիր սպասում... Բայց միշտ այդպես է լինում, երբ ղեկավարը գոռոզանում է, մասսաները քաշվում են, երեսին բան չեն ասում, ոմանք էլ նույնիսկ շողոքորթում են: Բայց հետո գաղտնի քվեարկությամբ տապալում են նրան, - կիսակատակ շարունակեց Գագիկը: - Դե, քիթդ մի՛ կախիր, մեծ բան չի պատահել, վեր կաց տեղափոխվենք մեր նոր բնակարանը...
Այնուհետև ոչ ոք ոչ մի բառ չարտասանեց: Հասոն լուռ փայտեր կտրտեց, պարզ պատգարակի նման մի բան պատրաստեց, չորսով զգուշությամբ Սարգսին դրին վրան ու ամեն մեկը մի ծայրից բռնելով, քայլեցին դեպի Կաքավի քարի ստորոտը:
- Շա՞տ է ցավում, - ճամփին մեղմությամբ հարցնում էր Շուշիկը:
Սարգիսը տխուր ժպտաց: Ցավում էր, բայց կարո՞ղ է մարդուս վերքին ավելի լավ սպեղանի լինել, քան սրտացավ խոսքն է...

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես հիվանդությունը եկավ առանց հարցնելու՝ Հովազաձորում բժիշկ ու բուժկայան կա՞, թե ոչ

Տարօրինակ ղեկավար դուրս եկավ Հասոն. ոչ ոքի ոչ մի կարգադրություն չէր անում:

Տեսնելով, որ Շուշիկը սփրթնել է և հազիվ է ոտքի վրա կանգնում, սուսուփուս գնաց ծեր ընկուզենու տակից այնքան խաշամ բերեց իր բլուզով, որ երբ աղջիկը պառկեց, կիսով չափ թաղվեց խշխշացող չոր տերևների մեջ:
- Մեզ շա՛տ խաշամ է հարկավոր, - կարծես ինքն իրեն ասաց նա և արևին նայելով՝ ծոծրակը քորեց: - Կհասցնե՞նք որ...
- Ի՞նչը, - հարցրեց Գագիկը, որ հետաքրքրությամբ հետևում էր Հասոյի գործողությանը:
- Ի՞նչ.... Դուռը պիտի պատենք... Հիվանդները չեն դիմանա...
- Մենք մի հիվանդ ունենք, նա էլ օջախի թիկունքում է, չի մրսի:
- Չէ՛, Շուշիկն էլ է հիվանդանում, - կամաց և ցավով ասաց Հասոն: - Պատի մեջ ուզում եմ ցեխի տեղ խաշամ լցնել: Պինդ չի լինի, բայց ամեն ծակ-ծուկ կբռնի, տաք կլինի...
Այո՛, քանի որ այդ քարքարոտ վայրում առանց ջրի հնարավոր չէր ցեխ գտնել, պիտի ընդունեին Հասոյի առաջարկը:
Նոր պետը թեև ոչ ոքի գործ չհանձնարարեց, բայց երբ վերցվեց իր թևքերով կապած և տոպրակի ձև տված բլուզը ու քայլեց դեպի ցած՝ ծեր ընկուզենու վերջին տերևները բերելու, Գագիկը և Աշոտը հետևեցին նրան:
Երբ արդեն բավական խաշամ էին կուտակել այրի առաջ, Հասոն սկսեց պատել-նեղացնել այրի մուտքը: Ընկերները առանց հարցնելու լուռ հասկանում էին նրա մտադրությունը և իրենք էլ նույնն անում: Նրանք տափակ քարերը շարում էին մոտ կես մետր լայնությամբ, վրան առատ խաշամ էին լցնում կրացեխի փոխարեն, ապա վրան շարում քարերի հերթական շարքը:
Երբ պատը բարձրացավ մոտ մեկ ոտնաչափ, Հասոն նրա վրա երկարությամբ երկու փայտ մեկնեց իրար զուգահեռ և քրտինքը սրբելով կարծես ինքն իրեն հետ խոսեց.
- Հիմի էլ երկու կողմից բարձրացնենք պատը, թող մեջտեղը մի նեղ դուռ մնա...
Քար շատ կար այրի առաջ թափթփված, այնպես որ գործը արագ էր առաջ գնում:
Աշոտը աշխատում էր լուռ և կենտրոնացած, իսկ Գագիկը երբեմն գաղտագողի նայում էր նրան ու ժպտում. «Շա՛տ է վիրավորված...»:
Եվ այն, որ Աշոտը «շատ էր վիրավորված»՝ գործին օգնեց, նյարդային շարժումներով, ամբողջովին լարված, նա այնպիսի քարեր էր բերում դնում պատի վրա, որ Գագիկը դրանք գետնից կտրել չէր կարող:
Երբ երկու կողմերից պատերը բարձրացան մոտ մեկ մետրաչափ, Հասոն վերցրեց նախորոք պատրաստած երկու փայտ ևս և իրար զուգահեռ դրեց պատի գլխին՝ դռնակից վերև: Գործը լիովին պարզ դարձավ, եթե այդ փայտերի վրա քար շարելով պատը շարունակեին մինչև այրի առաստաղը, մուտքը կփակվեր, բայց նրա մեջտեղը մի դուռ կմնար՝ մոտ մեկ մետր բարձրությամբ, իսկ լայնքն այնքան, որ մի մարդ անցներ:
Գագիկը գործի արդյունքին նայելով՝ ուրախանում էր, բայց ափսո՛ս, չկար սրտակից մեկը, որին Աշոտից գաղտնի աչքով աներ ու հասկացներ, թե՝ «Տեսա՛ր իմ առաջ քաշած թեկնածուն ինչ ղեկավար դուրս եկավ...»:
Այնուամենայնիվ չդիմացա՞վ, թե մոռացավ քիչ առաջ իր անցկացրած անախորժ ընտրությունները, Աշոտին գաղտնի աչքով արավ, թե՝ տե՞ս, էդ սուսիկ-փուսիկին, ինչեր է իմացել: Աշոտը խորթ-խորթ նալեց նրան:
Գործը դժվարացավ, իսկ օրը մթնում էր: Դժվարությունն այն էր, որ պատը գետնից արդեն բարձրացել էր մի մարդաբոյ և հեշտ չէր արդեն նրա վրա քարեր շարելը: Ստիպված այրի շեմքին մի քարակույտ կազմեցին, որի վրա Հասոն կանգնած շարունակում էր պատել, իսկ Աշոտը և Գագիկը ներքևից նրան «շինանյութ» էին մատակարարում:
- Բոլորովին մի փակիր... ծխի համար անցք թող, - ներքևից ձայն տվեց Գագիկը, երբ պատն արդեն հասել էր առաստաղին:
Հասոն մի ներողամիտ ժպիտով միայն պատասխանեց նրա առաջարկին, որ նշանակում էր. «Բա էդքանն է՞լ չենք իմանում...»: Բավական ուշ, կրակի լույսով նրանք հազիվ ավարտեցին աշխատանքը: Ստացվեց մի խախուտ, բայց հաստ և խիտ պատ, որից ցուրտը ներս չէր թափանցի: Մնում էր, որ պատանիները ներս ու դուրս անելիս զգույշ լինեին և պատին չկպչեին:

Երբ գործը վերջացավ, Հասոն Բոյնախի հետ քայլեց դեպի Կաղնուտը:
- Ո՛ւր, Հասո՛, - ձայն տվեց Գագիկը:
- Փե՛տի...
Ա՛յ քեզ ղեկավա՛ր: Պիտի գուշակես անելիքդ, ուրիշ ճար չկա: Աշոտն ու Գագիկը Կաղնուտ գնալու փոխարեն, գնացին դեպի այն չարաբաստիկ այրը, որից ներքև գտան հեղեղի դուրս նետած վառելիքի մի մասը այս ու այն թփին դեմ առած:
Երբ ներս եկան, Շուշիկը իր տաք անկողնում քնած էր անհանգիստ քնով, նրա այտերը վառվում էին ջերմությունից...
Քիչ անց Հասոն խարույկի մոտ նստած, փայտե բիզը ձեռքին՝ Շուշիկի պատռված կոշիկն էր կարկատում (աստված կարկատել համարի...) և աշխատում էր թեժ պահել կրակը:
Հիվանդը ջուր խնդրեց: Ինչպե՞ս խմեցնես հիմա նրան: Ստիպված էին խճաքար լցնել կրակը և նրանով ձյունից ջուր ստանալ:
- Սառը ջուրը կվնասի, նրան թեյ պետք է տալ, -մռայլ ու մտախոհ ասաց Աշոտը:
- Առանց ամանի՞...
Մտածում էին, ելք էին որոնում:
- Աման կարելի է պատրաստել... Մենք նախամարդու մասին դպրոցում անցնելիս... Դա հեշտ բան է, - տեղից ասաց Սարգիսը:
- Կավի՞ց: Այս քարերի մեջ կավ որտեղի՞ց, - առարկեց Աշոտը:
- Բա սա կավ չի, ի՞նչ է, - դժվարությամբ վրա նստելով և օջախի մոտ ընկած կարմրա-շագանակագույն սալը ցույց տալով՝ ասաց Սարգիսը:
Չհասկացան, ուստի նա սկսեց իր միտքը բացատրել, քաշվելով, շփոթվելով, նույնիսկ մռայլ տոնով, դե Հովազաձոր ընկնելուց հետո դա առաջին դեպքն էր, որ նա հանդես էր գալիս իր առաջարկներով՝ կոլեկտիվի վիճակը բարվոքելու համար, ուստի խոսում էր մի տեսակ կաշկանդված:
- Դե պարզ չի՞ որ: Էս շեկ ժայռերը կրաքարից են, իսկ կրաքարը ծովի տակ է առաջ գալիս: Դե որ առաջ այստեղ ծով է եղել, ուրեմն նրա տակ նստած կլինի հեղեղների բերած կավը: Ա՛յ էդ կավն է, որ քարացել է առաջ ծովի, հետո էլ երկրի շերտերի ճնշման տակ...
Ընկերները ուշադիր լսում էին. նրանք գիտեին, որ Սարգիսը սիրում է երկրաբանությունը և մտադրություն ունի դպրոցն ավարտելուց հետո մտնելու համալսարանի երկրաբանական ֆակուլտետը: Այնպես որ պատահականություն չէր, որ նա դեղնա-ճերմակ քարի կտորը կայծքարի փոխարեն հանձնեց Հասոյին. նա քարերը ճանաչում էր:
- Հա՛, կավաքար է, - հաստատեց Աշոտը սալը զննելով: - Բայց մեզ կավ է պետք, ոչ թե կավաքար:
- Որ դնենք ջրի մեջ կփափկի՞, - չգիտես լո՞ւրջ, թե՞ կատակով հարցրեց Գագիկը:
- Այո՛, կփափկի՛...-հաստատեց Սարգիսը և որպեսզի ծաղրի չենթարկվի, իսկույն ավելացրեց.- Կփափկի, բայց դարերի ընթացքում: Խոնավ տեղ գտեք, այնտեղ քարը քայքայված և նորից կավ դառած կլինի, ինչպես եղել է միլիոնավոր տարիներ առաջ...
Ասաց և տնքալով նորից մեկնվեց խաշամի վրա:
- Հա՛, սատանի ջուրը, - իր ճակատին խփեց Գագիկը: - Ախր այդ ջուրը դարեր շարունակ եկել է... Գնա՛նք, եղեգների տակ կարող է կավ լինել...
Սարգիսը գլխի շարժումով հավանություն տվեց: Նրա ուրախ հայացքն ասում էր. «Վերջապես գլխի՞ ընկաք...»:
Տղաները հետևերը կրակ վերցրին, Հասոն իր «անկողնու» ճյուղերից մի քանիսը հանեց և Բոյնախի ուղեկցությամբ մթնում խարխափելով շարժվեցին դեպի Ուռիները:
Այդտեղ նրանք վառեցին կենու խեժոտ ճյուղերը և նրանց արձակած լույսի տակ սկսեցին արմատահան անել եղեգները և բրիչներով փորել նրանց տակի խոնավ հողը: Դա դարերի ընթացքում կուտակված հումուս էր՝ բուսական մնացորդների փտվածքներ, որոնց տակ Հասոն կավի խոնավ շերտ գտավ: Երբ ընկերները հոգնած ու հուսախաբ հանգստանում էին, Հասոն գլուխը կախ դեռ փորում էր:
- Հասո՞, ի՞նչ բանի ես, - վերևից հարցրեց Գագիկը: - Բան չի դուրս գալիս, չգնա՞նք տուն...
- Ի՞նչ բանի պիտի լինեմ, կավ եմ հանում...

- Կա՞վ... վա՛յ ես կավի շեկ ջանին մատաղ, բա ինչո՞ւ չես խոսում, ա՛յ տղա...
- Դե ի՞նչ խոսեմ, էնա հանում եմ, էլի՛...
Աշոտն ու Գագիկը մոտեցան և կավը տեսնելով, վրա ընկան:
- Հիմի ամեն տեսակ ամաններ էլ կունենանք... Էնպես մի բրուտանոց բաց անեմ ո՛ր... Ա՛յ տղա, գոնե հավից օրինակ վերցրու. մի ձու որ ածում է, կչկչալով աշխարհին իմաց է տալիս, թե՝ ձու եմ ածել... Դու կարևոր բան ես գտել ու սուս արե՞լ, - նախատում էր Գագիկը՝ քուրդ տղայի համեստության վրա զարմանալով:
Քանի քանդեցին, կավը խոնավացավ, իսկ կես մետր խորությունից արդեն պատրաստի ցեխ էր դուրս գալիս:
- Ջա՛ն, քանդենք՝ տակից ջուր դուրս կգա, - ուրախացավ Գագիկը:
- Չէ՛, սա անձավից եկող ջուրն է ծծվել-մնացել, - իր կարծիքը հայտնեց Աշոտը:
Նրանք շեկ ցեխից մի-մի գունդ արին՝ ամեն մեկը մի փոքր -ձմերուկի չափ, հետո Գագիկը ուռենու թփից դալար ոստեր կտրտեց և վերադարձան խարույկի մոտ:
- Զամբյուղ կարո՞ղ ես գործել, - հարցրեց Գագիկը Հասոյին:
- Գործած չկամ, - խոստովանեց տղան:
- Լա՛վ, դուք կավը հունցեցեք:
Նրանք լուռ հունցում էին, իսկ Գագիկը սկսում էր գործադրել իր «արհեստը», իհարկե, նախապես գլուխը գովելով.
- Եկա՛ք իմ դուռը... ճիպոտները դե՛սը տուր...

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես արհեստ ունեցող մարդը չի կորչի կյանքում

Գագիկը գետնին տնկեց ոստերը և սկսեց մի կլոր զամբյուղ գործել մատների այնպիսի վարժ շարժումներով, որից դժվար չէր կռահել, որ նրա համար դա սովորական զբաղմունք է. տանը նա մեծ-մեծ զամբյուղներ էր գործում, որով հարդ էր կրում իրենց կովի համար: Ավելի փոքր զամբյուղներով ինքը, հայրը, մայրը ամեն աշնան հավաքում էին տնամերձ այգու խաղողն ու բանջարանոցի բերքը՝ պոմիդոր, բադրիջան, տաքդեղ, բամիա և մյուս բարիքները, որոնցից այնքան առատությամբ տալիս է Արարատյան դաշտի արգավանդ հողը:
- Արհեստավոր մարդը չի՛ կորչի, - և՛ աշխատում, և՛ խրատում էր Գագիկը: - Գիշերը երկար է, Հասո՛, քանի որ հերթն իմն է, լսիր մի հեքիաթ պատմեմ, պետք կգա, մանավանդ մեր ընկեր Սարգսին, որ աղվեսի նման սուտմեռուկ է տվել, աչքերը խփել, բայց ականջները չորս արած լսում է իմ իմաստուն խոսքերը (իրոք, մի ժպիտ անցավ Սարգսի գունատ դեմքով, արթուն էր): Հա՛, կուժ քե՛զ ասեմ, կուլա՝ դո՛ւ լսիր: Հասո՛, հին ժամանակ մեր Աղվանից աշխարհի թագավորի մինուճար որդին՝ Վաչագանը, որսից վերադառնալիս Հացիկ գյուղի աղբյուրի մոտ պատահում է այդ գյուղի նախրապանի աղջկան՝ Անահիտին, խմում է նրա տված ջուրը, բայց սիրտը հովանալու փոխարեն, կրակ է ընկնում: Դե ոնց կրակ չընկներ, Հասո ջան, Անահիտը աղջիկ հո չէր, ջե՛յրան էր, ջե՛յրան, աչքերը թուխ էին իմ աչքերի պես, ունքերը ոնց որ վրձինով քաշած մեր Շուշիկի ունքերի նման, ծամերը փռված թիկունքի վրա, բոյը՝ չինարի: Քաջ էր էդ աղջիկն ու իմաստուն, խելոք: Հացիկ գյուղի ծերունիներն անգամ նրանից էին խորհուրդներ հարցնում: Դե արի ու այսպիսի աղջկա վրա մի՛ սիրահարվիր: Թագավորի տղա Վաչագանն էլ սիրահարվեց, ու ինչպես բոլոր սիրահարվածները՝ խելքը կորցրած, դունչը կապած մոզու նման գնաց-կանգնեց իր մոր առաջ, թե՝ կա-չկա նա՛ է իմ ուզածը, կուզե՞ք՝ լա՛վ, չե՞ք ուզի՝ գնում եմ վանք մտնեմ, ճգնա՛վոր դառնամ... (էն ուռը դեսը տուր, Աշո՛տ, բերանդ բաց ինձ մի՛ նայի, համ լսեցեք, համ հունցեցեք: Իմ տատը միաժամանակ համ թել էր մանում, համ էլ առանց դժվարությամբ կռիվ մղում պապիս դեմ...): Հա՛, Շուշիկ ջան, ժպիտ երևաց երեսիդ, ուրեմն դո՞ւ էլ ես լսում: Լսի՛ր, մինչև հեքիաթը վերջացնեմ, թեյամանդ պատրաստ կլինի: Թագավորը, ճարը կտրած, իր իշխաններին ուղարկում է Հացիկի նախրապանի աղջիկը ուզելու: Բայց արի տես, որ հպարտ աղջիկը մերժում է արքայազնի ձեռքը (այստեղ Հասոն զարմանքից «վա՛հ» արավ): Մերժում է Անահիտը ու ասում է՝ եթե թագավորի որդին ուզում է ինձ ամուսին լինել, պետք է գոնե մի արհեստ սովորի:

Ասում են՝ ա՛յ աղջի (չէ, ներողություն, «այ աղջի» չեն ասում), նա ողջ աշխարհի տերն է, ամենքն էլ նրա ծառաներն են, արհեստը նրա ինչի՞ն է պետք: Ասում է՝ ո՛վ գիտի, աշխարք է, մեկ էլ տեսար փոխվեց, ով ծառա էր՝ տեր դարձավ, ով տեր էր՝ ծառա (իմաստուն խոսքեր են ունեցել հեքիաթ հնարող մեր պապերը, տեսա՞ք, ոնց կատարվեց նրանց գուշակությունը...) Հա՛, Անահիտն ասում է՝ ի՞նչ անենք, որ թագավորի տղա է, ասենք թե մի օր թագավորությունից զրկվեց, ինչո՞վ է ապրելու... Դա քեզ էլ է վերաբերում, Սարգիս ջան, լսի՛ր... Հիմի մտքումդ ասում ես՝ էլի ի՛մ օձիքը բռնեցին: Նեղանալ մի, ախպեր ջան, որ տեղը նեղանա՝ Աշոտը որսորդությամբ կապրի, ես՝ զամբյուղ գործելով, Շուշիկը լվացք կանի, շոր կկարկատի, Հասոն ոչխար կպահի, իսկ դո՞ւ... Բա՛, արհեստավորի ձեռքը ոսկի է, մի տես ի՞նչ զամբյուղ է դուրս գալի՛ս...

Վաչագան թագաժառանգը ճարահատյալ սկսում է արհեստ սովորել: Մի տարվա մեջ սովորում է դիպակ՝ այսինքն մետաքսյա ոսկեթել զգեստ գործել: Գործում է մի սիրուն բաճկոն և ուղարկում Անահիտին: Աղջիկը տեսնում է, որ թագաժառանգը իսկապես հիանալի զամբյուղ է գործել (մի դեսը նայիր է՛, Աշո՛տ): Վա՛հ, ինչ զամբյուղ, բաճկոն, բաճկո՛ն, - շտկեց Գագիկը և ուրախությամբ տեսավ, որ ընկերները բոլորն էլ մի պահ մոռացել են իրենց ցավերը և նույնիսկ հիվանդները զվարթացել են:

- Հա՛ հարսանիք են անում Վաչագանին, ի՞նչ հարսանիք, ձեր արևը, խորովածի հոտը բռնում է Աղվանից աշխարհը: Այդտեղ Վաչագան արքայազն ասում է՝ մինչև որ իմ փոքր ախպեր Գագիկը ներկա չլինի, ես էս խորովածից մի պատառ չեմ կտրի: Ի՞նչ իմանար, որ «ախպեր Գագիկը» Հովազաձորում սոված զկռտում է... Հա՛, ձեզ չտանջեմ խորովածի համով ու փլավի անմահական հոտով, հարսանիքից շատ չանցած՝ թագավորն ու թագուհին մեռնում են և գահին բազմում է նրանց որդի Վաչագանը:

Այդ ժամանակ գյուղերից ու քաղաքներից շատ մարդիկ խորհրդավոր կերպով անհետանում են: Ուղղակի, ասենք, ձմեռանոցից գրքերն առած Այգեձոր գնալիս, մեկ էլ տեսար կորան Հովազաձորի նման մի մութ աշխարքում...

Այսպես Գագիկը աշխույժ ու հումորով պատմեց «Անահիտ» հանրածանոթ հեքիաթը մինչև այն տեղը, ուր Վաչագան թագավորը քրմապետի զնդանում սկսում է դիպակ գործել:

- Նա դահիճի կացնի տակից փրկած իր մարդկանց սիրտ էր տալիս, թե՝ պինդ կացեք, մի դուռ էլ մեզ համար կբացվի, հո մենք միշտ գերի չե՞նք մնալու Հովազաձորում, - նորից սխալվեց Գագիկը:

Ընկերները լուռ ծիծաղում էին, իսկ Գագիկը և՛ գործում էր և՛ շարունակում նույն կատակախառն տոնով.

- Երբ դիպակը պատրաստ էր, ինչպես որ հիմա իմ կուկլա զամբյուղն է պատրաստ (կավը դեսը տուր, Աշո՛տ, սկսենք ծեփելը՝ մեր վայրենի պապերի նման...), վերակացու քուրմը գալիս է, վերցնում դիպակն ու մնում բերանը բաց: - Սրա գինը հարյուր քաշ ոսկի չի, այլ երկու հարյուր քաշ, -ասում է Վաչագանը: - Բայց սրա գինը մենակ Անահիտ թագուհին կարող է տալ, նրանից բացի ոչ ոք չի համարձակվի հագնել այսպիսի թանկագին գործվածք:

Այդ ժամանակ Անահիտ թագուհին մղկտում էր, ինչպես որ մեր հարազատներն են հիմա մեզ համար մղկտում, թե ինչո՛ւ չեկավ Վաչագանը, կամ ուր է Գագիկ-բալեն... Թագավորի Զանգի շունը կլանչում էր ու տխուր ոռնում, ձին խրխնջում էր, ոչինչ չէր ուտում և օր-օրի նիհարում էր ու մտատանջության մեջ գցում թագուհուն:

Այդ ժամանակ մի վաճառական է մտնում պալատ և ասում, թե մի անգին բան է բերել թագուհուն վաճառելու: Վաճառականին տանում են թագուհու մոտ, դա ճամպրուկից հանում է Վաչագանի գործած բաճկոնը... Թագուհու սիրտը տեղահան է լինում, թպրտում: Դե հիմի որ էս զամբյուղը մեկը տանի մեր գյուղը, ոճից չե՞ն ճանաչի, որ դա Գագիկ տղի ձեռքի գործն է... Ծիծաղում եք, հա՞, Հասո՛ն, կրակի փորը բաց արա, զամբյուղս կրակի բերանը տամ, թող մատաղ գնա մեր Անահիտին, այսինքն՝ քո Շուշիկ քույրիկին:

Թեժ կրակի մեջ զամբյուղը բոցավառվեց, իսկ նրա ներսից ծեփած կավը սկսեց թրծվել:

- Հա՛, աչքդ է՛ն բարին տեսնի, Անահիտը տեսնում է, որ դա իր ամուսնու գործած դիպակն է, ուշադիր նայում է նկարներին ու հասկանում է, որ դրանք նկարներ չեն, այլ ծաղկագրեր: Ու մտքում կարդում է հետևյալ խոսքերը. «Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ սոսկալի դժոխքի մեջ: Այս դիպակ բերողը նույն դժոխքի վերակացուներից մեկն է: Դժոխքը գտնվում է Պերոժ քաղաքի արևելյան ծայրին, մի

պարսպապատ մեհյանի մեջ, գետնի տակ: Եթե շուտ օգնության, չհասնես, ես կորած եմ, ինձ հետ էլ հարյուրավոր անմեղ մարդիկ: Քո Վաչագան»:
Կարդաց Անահիտն ու իրեն զսպելով, ասաց վաճառականին՝ իսկապես, անգին դիպակ ես բերել ինձ համար, հիմի ես քեզ կվարձատրեմ քեզ արժանի չափով: Ասաց ու նշան տվեց իր սպասավորներին: Հենց նշան տվեց՝ վաճառականի ձեռք ու ոտքը կապեցին ու տարան այնտեղ, ուր որ պետք է: Հետո շեփորներ հնչեցրին, քաղաքի դարբասները բաց արին ու զորքը դուրս եկավ՝ Անահիտ թագուհին էլ հրեղեն ձիու վրա նստած, ոսկե զրահները հագին: Էլ ի՞նչ ասեմ, գնացին Պերոժ քաղաքը շրջապատեցին, հիմնահատակ արին, քուրմերին բռնեցին և ստիպեցին դժոխքի դուռը բաց անել: Բաց արին, Վաչագան թագավորը նորից աշխարհ դուրս եկավ, ոնց որ մենք ենք շուտով դուրս գալու, ու իրեն հետ աշխարհ հանեց երկրի խորքում տանջվող շատ մարդկանց....
Հիմի իմացա՞ք արհեստի գինը: Ասենք, մինչև որ ես իմ ոսկի ձեռքերով կավե ամաններն ու կճուճները չշարեմ ու մեջներն էլ բոզբաշ չեփենք, դուք ի՞նչ պիտի իմանաք իմ արհեստի պատիվը...
Եվ Գագիկը վեր կացավ ու գնաց կրակի համար փայտ բերելու:
Նրա հեքիաթը թեթևություն բերեց իր ընկերներին: Երևի կգա օր, երբ իրենք ևս Վաչագանի նման դուրս կգան այս դժոխքից...
Իր պատմած հեքիաթից ոգևորված, Գագիկը կրակից հանեց կավե ամանն ու նրա պատերի ճաքերը տեսնելով, թուլացած նստեց տեղը:
- Էհե՛, ճաքճքում է, - արտասանեց նա խեղճացած:
Քիչ առաջ ոգևորված-աքլորացած Գագիկի հետքն էլ չէր մնացել:
- Ոճից երևում է, որ Գագիկ-տղի ձեռքի գործն է, - հեգնեց Աշոտը՝ նրան հիշեցնելով իր պարծենկոտ խոսքը:
- Թաց ցեխը միանգամից կրակն ես գցում, դե իհարկե կճաքճքի, - վրա նստելով ասաց Սարգիսը: - Չես տեսե՞լ մեր գյուղի բրուտանոցում ոնց են գինու կարասներ պատրաստում, առաջ ամանը չորացնում են արևի տակ, հետո թրծում կրակի մեջ:
- Լավ ես ասում, բայց էս գիշերվա կեսին արև որտեղի՞ց, գտնեմ... Ախր թեյը հիմի՛ է հարկավոր...
Եվ Գագիկը սկսեց ծոծրակը քորելով մտածել:
- Լա՛վ, գործի թափը դանդաղեցնենք, - վճռեց նա և ամանի ճաքերը ցեխով սվաղելով, դրեց կրակի մոտ:
-Թող հիմի էլ դանդաղ չորանա: Շուշիկ ջան, համբերի՛ր:
Երկար ժամանակ պահանջվեց, մինչև նոր սվաղը չորացավ: Չորացավ, բայց նորից ճաքճքեց, այս անգամ բարակ, սարդի ոստայնի նման: Գագիկը այդ փոքր ճաքերը ևս սվաղեց և հաղթական հայացք ձգեց ընկերների վրա, որ նշանակում էր. «էս տղեն հնարը գտնո՞ւմ է, թե չէ...»:
Իրոք, հնարը գտնվում էր: Այդպես մի քանի անգամ սվաղելով ս դանդաղ չորացնելով, նա ողորկ ման ստացավ, որ կրակի վրա թրծվելուց հետո այլևս ոչ մի ճաք չուներ: Բայց հարկավոր էր ամանը թողնել թեժ կրակի մեջ մինչև կարմրելը:
- Հիմա մնաց, որ ես անմահական դեղ բերեմ հիվանդի համար:
Նա վեր կացավ և վարանոտ քայլերով դուրս եկավ:
Այրի շեմքից նայում էր Գագիկը ժայռերի ուրվագծերին և շատ կուզենար Աշոտի սիրտն ունենալ, ցերեկով այրից ոչ հեռու մոռի թփեր էր տեսել, գիտեր, որ նրանց արմատներից մեր երկրի խաշնարածներն ու որսորդները համեղ և բուժիչ թեյ են պատրաստում: Մի քանի քայլ արավ դեպի թփերը, բայց դիմացից խշրտոց լսվեց: Տղան շուռ եկավ և հապճեպ մտավ քարայր:
- Գնացի մոռի թփեր գտա, Հասո՛, ափսոս դանակ չկար մոտս... Գնա, հենց ապրես, արմատից կտրի բեր, մոռի արմատը մրսածի լավ դեղ է... Համա ի՞նչ գիշեր է՛, Աշոտ. սիրտս ասում է՝ գնա ժայռերը բարձրացիր, գտիր քնած կաքավներին ու մեկ-մեկ բռնիր...
- Այդպիսի բան չանես, - լրջորեն անհանգստացավ հիվանդը:
- Որ իրավունք տաք, էս ոոպեիս կգնամ... Հը, չգնա՞մ... ինչո՞ւ չգնամ... Հա, իսկապե՛ս, ախր ես ամանն եմ թրծելու: Հասո՛, ախր քեզ բան խնդրեցի...
Հասոն հաճույքով հանձն առավ (միայն թե մի բանով հարկավոր գար Շուշիկին), և մի վառվող ճյուղ ձեռքին դուրս եկավ անձավից:

Հիվանդը ցամաքած բերանում շարժում էր լեզուն և ջուր խնդրում:
- Հիմա՛, հիմա՛, ազիզ ջան, մի թեյ պատրաստեմ քեզ համար, որ խմելուն պես քրտնես-լավանաս, - ասում էր Գագիկը՝ կրակից հանած իր ամանը զննելով: Դա մի շատ կոպիտ, ծուռումուռ «քրեղան» էր, որի նմանը պատրաստում էր մերկությունը գազանի մորթիներով ծածկող նախամարդը:
- Ձևը կարևոր չէ, ազիզ ջան, կարևորը բովանդակությունն է, - ասում էր Գագիկը: - Հիմի էս անճոռնի ամանի մեջ էնպիսի թեյ պատրաստեմ, որ համից չկշտանաս: Իսկ լուսացավ թե չէ՝ մի կաքավ եմ բռնելու, կավե ամանով սուպ եփեմ...

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ. Թե ինչպես չիրագործվեց հովիվ պատանու իղձը

Գիշերը հանգիստ անցավ, այս անձավում գիշերելու հարմարությունները համեմատաբար լավ էին. խարույկի ծուխը թեք առաստաղի տակով գնում-դուրս էր ելնում մուտքի վերևի անցքից և չէր կուտակվում այրի մեջ: Ցուրտը միայն դռնից կարող էր ներս թափանցել, այն էլ Աշոտը իր լայն վերարկուով փակել էր, այնպես որ ներսում տաք էր:
Չնայած այդ անձնազոհ արարքի համար ընկերները հանդիմանեցին Աշոտին, բայց նա ճիշտ էր վարվել, վերարկուն միայն իրեն պիտի պաշտպաներ ցրտից, իսկ հիմա տաքացնում է յոթ շնչավորի՝ հինգ պատանու, Բոյնախին և փոքրիկ ոզնուն, որը գիշերը դես-դեն վազվզելուց հետո, անկողիններից խաշամ էր գողանում՝ իրեն բույն պատրաստելու համար: Նա գլորվում էր չորացած տերևների վրա, իր փշերի մեջ խրում դրանք, գնում այրի մութ անկյունում դատարկում իր բեռը և նորից վերադառնում:
Բոյնախը հայացքով հետաքրքրությամբ հետևում էր նրա շարժումներին, բայց չէր համարձակվում մոտենալ, գուցե այն պարզ պատճառով, որ զգայուն քիթը դեռ մռմռում էր: Շուշիկը, չնայած իր գլխացավին և ծակոցներին, չէր կարող մեղմությամբ չժպտալ իր ոզնու այդ խելոք արարքների վրա:
Լուսադեմին արդեն մոռի արմատից պատրաստած թեյ էին խմել բոլորը: Բայց ահավոր քաղցը, որ մեղմացել էր ոզնու խորոված ի շնորհիվ, նոր ուժով գլուխ բարձրացրեց այդ առավոտ: Դա մեր պատանիների գերության տասնիններորդ օրն էր: Մինչ խումբը մոլորված էր և չգիտեր օրվա իր անելիքը, ղեկավար Հասոն լուռ էր, ինչպես միշտ: Իր ամբողջ փոքրիկ կյանքում նա միշտ կատարող էր եղել, հիմա ինչպե՞ս կարգադրություններ անի: Եվ ի՞նչ կարգադրի: Բեռ էր դարձել Հասոյի համար իր փոքրիկ «պաշտոնը» և նա շատ ուրախ կլիներ ազատվել այդ բեռից:
Գագիկը ևս հասկանում էր նրա վիճակը: «Չէ, մեծամիտ է, թե ոչ էլի Աշոտը կազմակերպչական ջիղ ունի... Արդեն կոտրվել է, հիմա կարելի է...»: Եվ Գագիկը ընկերների հետ քչփչալուց ու նրանց համաձայնությունն առնելուց հետո, մի անսպասելի խոսակցություն սկսեց.
- Աշո՛տ, - ասաց նա հանդարտ և լուրջ, - մենք ճիշտ արինք, որ քեզ տապալեցինք, «մասսաները երբեք չեն սխալվում», - փիլիսոփայեց նա ի միջի այլոց: Բայց էլի մեր ղեկավարը դո՛ւ կլինես: Դու մեզանից ուժեղ էլ ես, սրտոտ էլ... Իսկ ընտրությունը քիթդ մի քիչ ջարդելու համար էր, չնեղանաս...
Աշոտի ծանրացած սիրտը կարծես մի քիչ թեթևացավ: «Չէ՛, Գագիկն էլի նույնն է, ի՞նչ անձնական հաշիվ, ի՞նչ նախանձ, էն ի՞նչ հիմար բաներ էին անցնում գլխովս...», - մտածեց նա: Մյուսներն էլ վատը չեն, երևի նրանք էլ են տվել իրենց համաձայնությունը, թե չէ Գագիկը ինչո՞ւ պիտի խոսեր բոլորի անունից:
Գագիկի այդ առաջարկի վրա ամենից շատ Հասոն ուրախացավ:
- Հա՛, - հաստատեց նա քաշվելով, - դե ղեկավարելը իմ ի՞նչ բանն է... Իմ ձայնը էլի քեզ եմ տալիս, Աշո՛տ, երեկվանը հե՛չ...
Չէ՛, ընկերները իր լավն են ուզում, դա պարզ է լույսի նման, դա երևում է նրանց վարմունքից, աչքերից:
Եվ Աշոտն զգաց, որ մի նոր սիրով է լցվում իր ընկերների նկատմամբ, ա՛յլ կարգի սիրով, որի մեջ մեծ տեղ է գրավում հարգանքը: Իսկ երբ հարգում ես, գնահատում ես ընկերոջդ արժանիքներն ու նայում նրան որպես քեզ հավասարի, այլևս վերանում է գոռոզությունն ու արհամարհանքը նրա նկատմամբ:
Այս խմորումն էր տեղի ունենում Աշոտի մեջ և դրանից էր, որ նրա հոգին սկսեց մաքրվել իր ունեցած նախկին, արատներից: Մաքրվում էր դանդաղ, դժվարությամբ: Բայց մաքրվում էր:
- Լա՛վ, - վճռեց նա շփոթված, - ղեկավարս ո՞րն է... կաշխատենք միասին... եթե...
- Ա՞յ, կեցցե՛ս, էդպես խոսիր, - ուրախացած նրա խոսքը կտրեց Գագիկը:

- Ճիշտ է, բայց էլի կազմակերպվածություն պետք է: Բանակում, - հայրս է պատմում, - որ երկու հոգու մի տեղ են ուղարկում, մեկին անպայման ավագ են նշանակում: Ուրեմն դա հարկավոր է... Եթե ես երբեմն խիստ լինեմ, մի՛ նեղանաք... Հիմի մեր անելիքի մասին: Առայժմ ճամփա բացելը հետաձգում ենք, այնպես չէ՞: Մանավանդ, որ հիվանդներ ունենք... Ափսո՛ս,՛ ջուրը մեզ զինաթափ արավ, զենք չունենք...
- Զենքը իրիկունը ազատ ժամանակ կշինենք, - իր կարծիքը հայտնեց Հասոն:
Նրանք խորհրդակցում էին, երբ լսվեց Շուշիկի տնքոցն ու թույլ ձայնը:
- Գնացեք ճամփան բացելու.... Այստեղ ապրել չի լինի...
Աշոտը հարցական նայեց Գագիկին, իսկ նա նորից կատակի տվեց.
- Ո՞ւր եմ գնում, ախր գիշերս Շուշիկին տղամարդի խոսք եմ տվել կաքավի սուպ ուտեցնեմ:
- Գնա՛, Գագի՛կ, ես ոչ մի բանի ախորժակ չունեմ, - տնքաց հիվանդը: - Ոչինչ պետք չի, միայն ճամփեն շու՛տ բաց արեք...
Իսկապես, եթե ճամփան բացվի՝ սուպն էլ կլինի, խորոված էլ, կյանքն էլ, ինչի՞ են գլխավորը թողած՝ ընկել դատարկ բաների հետևից: Հեղեղը չընդհատեր, գուցե նրանք հիմա արահետը մաքրած-վերջացրած լինեին, այս հիվանդները շատ խանգարեցին:
Աշոտը տատանվում էր, երբ Շուշիկը նորից կրկնեց իր խնդիրքը: «Լա՛վ, գնանք Դիվային կածանի կողմը, թե՛ պտուղներ կճարենք, թե՛ մի քանի քայլ ճամփա կբացենք... գոնե հիվանդներին սիրտ տալու համար...»:
Իր այդ միտքը Աշոտը առանձին հաղորդեց Գագիկին: «Այնպես պիտի ցույց տալ, թե ճամփան բացում ենք, թե չէ էդ աղջիկը հուսահատությունից կմեռնի...», - քչփչում էր նա ընկերոջ ականջին:
- Լա՛վ, սուպը հանձնարարում եմ Հասոյին: Ա՛յ տղա, ժայռերը կբարձրանաս, կուտ կգցես, ջու-ջու կանես, էն վայրի վառեկներից մեկին կբռնես կմորթես: Դե, Աշո՞տ, մենք գնացինք...
Իսկապես, չփորձի՞ Հասոն իր բախտը: Ահա վերևում, ապառաժե թարեքներին կաքավները նստած երգում են: Ինչպե՞ս մոտենալ, ինչպե՞ս խփել նրանց: Պարսատիկ պատրաստեց և մագլցեց վեր: Բոյնախը ծույլ-ծույլ հետևում էր նրան:
Թեև Հասոն հմուտ պարսատիկ նետող էր, բայց ոչ մի կաքավ չհամաձայնեց իր տեղում հանգիստ նստել և սպասել նրա նետած քարերին, բոլորն էլ ապրել էին ուզում...
Այն ժամանակ նա թևը ջարդված մի անգղ գտավ (ա՛յ քեզ բախտ), մինչև կեսօր հետապնդեց նրան, շատ անգամ քարեր նետեց, շատ անգամ նրա պատճառով վայր ընկավ, որից քերծվեցին սրունքները, բայց շարունակ վրիպում էր: Գուցե դրա պատճառը այն ժանգագույն պուտ-պուտ ու բրդոտ «շալվարով» գառնակերն էր, որ զիլ ծղրտոցներով պտտվում էր տղայի գլխավերևը, շփոթեցնում, վրա քշում, սպառնում: Վիրավոր թռչունի մա՞յրն էր, ընկե՞րը, թե ամուսինը՝ դժվար էր որոշել:
Հասոն շարունակում էր քարերի արանքներով կուզեկուզ հետևել փախչող թռչունին: Արծվից շատ խոշոր, նրա նման կեռ կտուցով և մորուքավոր մի թռչուն էր դա, որի թուխ թիկունքին ու թևերի վրա ճերմակավուն զոլեր կային: Հասոն գիտեր, որ նա արծիվ չէ, բայց կարողանում է ընտանի ու վայրի ուլեր և գառներ փախցնել, մինչդեռ անգղի մյուս տեսակները որս չեն անում, այլ միայն լեշ են ուտում: Հետապնդում էր Հասոն վիրավոր գառնանգղին և Բոյնախին խրախուսում էր օգնել իրեն: Խե՜ղճ Բոյնախ, ո՞ւժ էր մնացել որ... Թռչունը, հակառակի նման, շարունակ ձգտում էր դեպի անմատչելի ծերպերը, բնազդով զգում էր, որ այնտե՛ղ է իր փրկությունը: Իսկ Հասոն իր պարսատիկով քարեր էր նետում իրար հետևից:
Վերջապես վերջին հարվածը հաջող ստացվեց և թռչունը փռվեց այնպիսի մի դարավանդի վրա, ուր իջնելու համար հարկավոր էր, որ մարդ առնվազն կուշտ լինի և ոտքերը չդողան: Հասոն այդ օրը այնքան էր քայլել, չարչարվել, որ այժմ, ժայռի կտուրին պառկած, հևում էր և ուժ չէր գտնում իր մեջ ցած իջնելու և տեր կանգնելու իր որսին: Բայց նրա սիրտը թնդում էր բերկրանքից, ա՜նգղ, դա հո, Գագիկի լեզվով ասած, չորս-հինգ կիլո մաքուր միս է... Հիմա որ Շուշիկը սուպ կունենա, ընկերները կկշտանան, ուժ կառնեն ու կշարունակեն ճամփա բացել դեպի ազատություն:
Ահա ինչ գործ պիտի տեսներ սպանված գառնանգղը:

Այդ հեռանկարն այնպես իրական էր Հասոյի համար, որ նա նույնիսկ պառկած տեղը սկսեց հոտավետ ուրց պոկոտել, որ գցի եփելիք կերակրի մեջ: Քաղցած մարդու վառ երևակայությամբ նա արդեն նույնիսկ զգում էր ապագա կերակրի բույրը...

- Բոյնա՛խ, գնա բեր, - հրամայեց նա՝ մատը անգղի կողմը մեկնելով:

Շունը հասկացավ, ցատկեց ցած, ուրախության վնգստոցով բերանն առավ թռչունին, իր շրթունքներին զգաց տաք արյունը, առավ թռչնային խելքամաղ անող բույրը և քարե թարեքներով շտապեց վեր:

Այդ պահին կարծես երկնքից ռումբ ընկավ Բոյնախի վրա, մեծ անգղը, իր հարազատին փրկելու համար, հզոր թևերով զարկեց շանը, մագիլներով բռնեց նրա թիկունքից և տեղից հազիվ կտրելով, նորից բաց թողեց: Չկարծեք, թե ուժը չէր պատում գամփռին վեր բարձրացնելու: Անգղի ճանկերը բութ են, չհաջողեցրեց խրել շան թիկունքը: Կենդանին ժայռի ճակատով ցած գլորվեց և անհետացավ Հասոյի տեսողությունից, իսկ սպանված թռչունը ընկավ այնպիսի մի թարեքի վրա, որտեղից ցած կարող էր բերել միայն թևեր ունեցող արարածը:

- Վա՛խ Բոյնախ ջան, վա՛յ ախպեր ջան, - գոռաց տղան և խելակորույս ցած վազեց:

Ժայռի տակ, փափուկ խաշամին, շշմած նստած էր շունը և իր բարի աչքերով նայում էր տիրոջն ու պոչը շարժում:

Տղան շուռումուռ տվեց նրան, ոտքի կանգնեցրեց, զննեց բոլոր կողմերից, ստիպեց քայլել՝ ոչինչ, ոսկորները տեղն են, խաշամի կույտը փրկել է: Բայց մեջքին ջարդվածք կար, որից արյուն էր ծորում:

- Վա՛յ, Բոյնախ ջան, դու է՞լ հիվանդների շարքը մտար: Հիմի ես ի՞նչ անեմ, ինչո՞վ պահեմ քեզ, - շան վզովն ընկած մղկտում էր տղան:

Առանց սննդի վիրավոր կենդանին հո երկար չէ՞ր ապրի: Իսկ Շուշի՞կը: Նա հիմա երևի խոստացած թռչունին է սպասում, տաք սուպի հեռանկարը երևի հիմա նրան հանգստություն չի տալիս: Իսկ Աշոտն ու Գագի՞կը: Խե՜ղճ տղաներ: Ահա իր դիմաց շավիղի ճերմակ ժապավենին երկու մուգ, մարմիններ են շարժվում՝կռացած, իսկ շաքարավազի նման ճերմակ ձյունը ընդհատ-ընդհատ ջրվեժ է կապում ժայռի լանջով: Հովազաձորի արևահայաց լանջերը բոլորը բացվել են և ձյունը հակառակի նման մնացել է այնտեղ, ուր իսկի հարկավոր չէր որ մնար, մնացել է դեպի ազատություն տանող արահետում, մեկ էլ ուռենուց ցած, փոքրիկ հարթության վրա:

Հասոն սուր աչքով հետևում էր ընկերների շարժումներին, նկատում էր, որ նրանք ստեպ-ստեպ դադարեցնում են աշխատանքը և շուռ են գալիս ու նայում իր կողմը:

- Ուտելու բան են ուզում, ես գլուխս ո՞ր քարով տամ, - մղկտում էր Հասոն:

Վերև նայեց, գուցե մի հնար գտնի թարեքին մնացած անգղը ցած բերելու: Քարեր նետեց՝ ապարդյուն: Թևերի շափշափյուն լսվեց ցած իջավ մինչ այդ Հովազաձորի վրա դանդաղ պտույտներ գործող խոշոր անգղը, կանգնեց սպանված հարազատի մոտ: Կտուցով շուռումուռ էր տալիս նրան, ջանում էր ոտքի կանգնեցնել ու թռցնել իր հետ դեպի ջինջ լազուրը, բայց անշնչացած ընկերը չէր արձագանքում նրա կանչերին: Ու այդ ահագին թռչունը զարմանալի բարակ ու սուր ձայնով ճչում, ողբում էր իր մեծ կորուստը, լաց էր լինում և շարժում ներքև քարացած պատանու գութը:

«Էս ինչ վատ բան արի... Սրա մեղքից ես հաց չեմ գտնի», - մտածում էր սնահավատ պատանին ու հիշում իր հովիվ հոր խոսքը, թե՝ ամեն շնչավոր էլ աստծու ստեղծածն է, ամեն կենդանի էլ սիրտ ունի...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ. Թե ինչպես դեպք է լինում, երբ ընկերոջդ համար պիտի զոհես ամենաթանկագին բանն անգամ

Կեսօրը նոր էր անցել, երբ Աշոտն ու Գագիկը ուժասպառ և քաղցած ետ եկան: Ի՜նչ գալ, ուղղակի մի կերպ քարշ գալով հասան այրին ու փռվեցին նրանից ներքև: Դառն փորձով նրանք նորից համոզվեցին, որ առանց սնունդ հայթայթելու հնարավոր չէ աշխատանքը շարունակել: Արևը տաքացնում էր մեղմ ու գորովագութ մոր նման: Մարդ այսպես պառկած անզգայանա, մոռանա ամեն ինչ՝ և՛ աշխարհ, և՛ քաղց: Բայց քաղց-հրեշը լափում էր նրանց ներսը, հանգիստ չէր տալիս: «Ուտելու բան չկա՞», -հարցնում էին նրանք հայացքով:

Հասոն մեղավորի նման գլուխը կախ էր գցել ու լռել: Ուզում էր պատմել այդ օրը իր գլխին եկածը, ուզում էր ասել, որ հիմա ինքը կգնա-կփնտրի պտուղներ կգտնի, բայց ուժ չուներ ասելու, թե որ խոստանար էլ, չէր կարող կատարել:
Տնքոցներ էին լսվում այրի ներսից և այդ տնքոցները մուրճի նման իջնում էին նրա զգայուն սրտին:
- Բոյնախը դժվար ապրի, - խեղդված ձայնով ասաց նա և կարճ պատմեց եղելությունը:
Աշոտը կենտրոնացած մտածեց և չորս կողմ նայելուց հետո մի տեսակ դավադիր շշուկով ասաց.
- Ստիպված ենք շանը զոհելու...
Հասոյի աչքերը արցունքով լցվեցին:
- Էլ ես ո՞ւր եմ ապրում, - տնքաց նա:
Մի պահ բոլորն էլ լռեցին: Նրանք գիտեին, թե ի՞նչ է Բոյնախը Հասոյի համար: Բայց ուրիշ ելք չկար և նրանք արդեն ագահությամբ էին նայում վիրավոր կենդանուն: Անծանոթ կրակներ էր տեսնում Հասոն նրանց փոս ընկած աչքերի մեջ ու սարսռում: Տես ո՛ւր է հասցրել սովն այս բարի տղաներին...
- Միայն սնունդը չի: Եթե Շուշիկին տաք չպահենք, չի ապրի... Պետք է տիկ հանել (նա չասաց, թե ում), շուռ տալ և տոպրակի նման հագցնել նրան, ինչպես բևեռային երկրներում են անում: Միայն դա կփրկի Շուշիկին, մեկ էլ տաք մսաջուրը...
Հասոն ընկավ սրի ու կրակի մեջ: Իսկապես, Շուշի՛կը... Այդպե՛ս է քուրդ մարդը հոգ տանում իր քուրացվի կյանքի համար: Բայց Բոյնախին ինչպե՞ս զոհի, ի՞նչ դաժան ձեռք պետք է լինի, որ բարձրանա նրա վրա... Երկու հակադիր զգացմունքներ երկար պայքարեցին Հասոյի ներսում: Վերջապես, այդ պայքարից ուժասպառ՝ տղան խեղդված ձայնով ասաց.
- Լա՛վ... Ես հեռանում եմ, էնպես արեք, որ չտեսնեմ... չլսեմ...
Ու մոլոր քարշ եկավ ու անցավ ժայռաբեկորների հետևը, որպեսզի ներկա չլինի այն եղեռնին, որ պիտի կատարվեր իր իսկ թույլտվությամբ...
- Բոյնա՛խ ջան, ախպե՛ր ջան, ես մեղավոր չեմ... - երեսի վրա փռված, դեմքը խաշամի մեջ թաղած՝ դառնագին մրմնջում էր հովիվ պատանին...
Գնում էր Աշոտը դեպի ներքին ժայռաշարքերը, գնում էր տրտում ու մոլոր քայլերով: Գագիկը հանդիսավոր ու լուռ հետևում էր նրան: Իր կյանքում դեռ երբեք նա այդքան լուրջ ու տխուր չէր եղել: Իր գոտին նա դրել էր Բոյնախի վզին ու քաշում էր կամաց.
- Արի՛, Բոյնախ ջան, արի՛...
Վիրավոր կենդանին հլու-հնազանդ, արյուն տալով հետևում էր նրան, առանց իմանալու, թե ինչ մտադրությամբ են իրեն տանում դեպի ներքին ժայռը: Միայն իր տերերի արտասովոր լուրջ դեմքերից և այն բանից, որ կապ էին դրել իր վզին, լավ բան չէր գուշակում:
Անցան ժայռերի հետևը և կանգ առան: Շունը իր խելացի աչքերով փոխն ի փոխ մեկ Աշոտի դեմքին էր նայում, մեկ Գագիկի: Տղաները խուսափում էին նրա հայացքից, չէին համարձակվում ուղիղ նայել կենդանու աչքերի մեջ. մեղավոր էին նրա առաջ, ահավոր մտադրություն կար թաքնված նրանց ներսում, ի՞նչ երեսով նայեին իրենց զոհին...
Իսկ շունը հայացքով շարունակում էր խուզարկել իր տերերին, ջանում էր պարզելու նրանց թաքուն մտադրությունը: «Ասացե՛ք, ինչի՞ եք բերել ինձ այստեղ...», - հարցնում էին նրա խելացի աչքերը:
- Հիմի ի՞նչ ենք անելու, - հարցրեց Գագիկը շշուկով ու դավադիր:
- Ի՞նչ... Ես այսպիսի բան արած կա՞մ, որ իմանամ... Կա՛ց, ավելի լավ է կապենք այն ծառից...
Եվ Աշոտը իր գոտին միացրեց Գագիկի գոտուն ու նրանցով շանը կապեց ծառին:
Կենդանին հասկացավ, մի թույլ ոռնոց արձակեց, խղճալի ու նվաղ մի կանչ, և սկսեց լիզել Աշոտի ձեռքերը: Ապա պառկեց փորի վրա, գլուխը դրեց տղայի ոտքերին և ներքևից վերև աղերսանքով լի այնպիսի մի հայացք ձգեց նրա աչքերի մեջ, որ Աշոտը սարսռեց:
- Վազիր կրակ բեր, - չգիտես ինչու, կտրուկ կարգադրեց նա:
Գագիկը վերադարձավ քարայր:
- Ինչո՞ւ ներս չեք գալիս... Էնտեղ ի՞նչ բանի եք... - տնքալով ու նեղսրտած հարցրեց Շուշիկը:
- Հիմի կգանք... ուտելիք ենք ճարում...
Եվ իրեն չմատնելու համար, վառվող ածխակոթը ձեռքին դուրս եկավ:

Հասոյի մոտով անցնելիս, թեև նրան չէր նայում, բայց իր դեմքին զգում էր հովիվ պատանու կարմրած աչքերի հարցական հայացքը:
Երբ տեղ հասավ, զարմանքով տեսավ, որ Աշոտը մերկացել է: Նա մերկ մարմնի վրա հագավ բլուզը, ապա պոկեց իր շապիկի թևը և վառեց ածխակոթով: Շունը հայացքով հետաքրքրությամբ հետևում էր տղայի շարժումներին, պակաս չէր հետաքրքրված և Գագիկը: Հարցնելն ավելորդ էր, Աշոտն իր անելիքների մասին իսկի մարդու բա՞ն կասեր...
Երբ շորի կտորը վառվեց դարձավ սև մրճեղ, Աշոտը բալասան հանդիսացող այդ մուրը դրեց կենդանու վերքին, պատառոտեց իր շապիկը և նրանով փաթաթեց:
- Վա՛յ ես քո հոգուն մատաղ, դու ինչ գիտեիր, որ իմ մտքումն էլ հենց դա է, - ընկերոջը գրկելով զգացված բացականչեց Գագիկը: Ապա ետ-ետ գնաց և հոնքերը խոժոռելով, խիստ հարցրեց.
- Թե՞ փաթաթում ես, հետո սպանես...
- Երեխա չլինես: Սա մեր նեղ օրերի ընկերն է, ով է լսել, որ անմեղ ընկերոջը սպանեն... Սրան մենք պետք է առողջացնենք: Մտիր թփուտները մի քիչ ուտելիք ճարիր...
Շունը հասկացավ: Եվ երբ կապն արձակեցին, փաթաթվեց իր բարերարների ոտքերով և նրանք անսահման նվիրվածություն կարդացին նրա աչքերում:
Շատ կուզեր, որ գնար իր Հասոյի մոտ և ուրախացներ նրան: Բայց ժայռից ցած ընկնելուց ինչ-որ բան էր կտրվել նրա ներսում և կենդանին զգում էր, որ այլևս չի վազելու, չի ցատկոտելու...
- Հասո, հե՛յ, արի՛, արի՛, Բոյնախը կանչում է, - թփուտից ձայն տվեց Գագիկը: Քաղցած էր նա և ուժասպառ, բայց հոգով թեթև՛, թեթև՛...
Եկավ Հասոն, սիրտը բերկրանքով լի եկավ: Եկավ, գրկեց ընկերներին և լուռ արտասվեց: Ուզում էր իր շնորհակալությունը հայտնել, բայց ինչ-որ բան սեղմում էր նրա կոկորդը: Նա հասկանում էր, որ շանը կենդանի թողնելով՝ շատ բան են զոհում իր ընկերները: Եվ երախտիքի զգացումը ալիք էր տալիս նրա ներսում ու արտացոլվում իր սև ու փայլուն աչքերի մեջ:
Բայց մեր պատանիների ուրախությունը երկար չտևեց. Բոյնախի վիճակը ժամ առ ժամ վատանում էր: Նրանք հատապտուղներ էին հայթայթում և իրենց բերանից կտրելով, տալիս էին իրենց անլեզու ընկերոջը, բայց ոչինչ չէր օգնում:
Բոյնախին տարան օջախի մոտ, պառկեցրին փափուկ խաշամի վրա, ծածկեցին իրենց հագուստներով:
- Բայց և այնպես մենք Շուշիկի համար սուպ էլ կպատրաստենք, մրսածի դեղ էլ, - ասաց Աշոտը և վեր կացավ:
- Ո՞ւր, - հետաքրքրվեց Գագիկը:
- Մոշահավ խփելու... Սպասիր, մի փորձեմ մեր նոր աղեղները... Լա՛վն են, - եզրակացրեց Աշոտը լարը տնտղելով:
- Բայց քանի օր է ես մոշահավ չեմ տեսել, - ասաց Գագիկը տխուր:
- Մոշահավ շատ կար ձորում, հիշո՞ւմ ես: Դրանք հիմի մի ինչ-որ տեղ են: Տես ինչ եմ ենթադրում...
Եվ Աշոտը, որ առաջ ուղղակի կհրամայեր լուռ հետևել իրեն, մանրամասն բացատրեց, թե իր ենթադրությամբ ո՞ւր անհետացած կլինեն մոշահավերը: Նա ասաց, որ հենց մոշահավ անունը ցույց է տալիս, որ այդ թռչունը ապրում է մոշուտում և սիրում է մոշ ուտել: Աշոտն այն միտքը հայտնեց, որ բնության մեջ բոլոր երևույթները կապված են իրար հետ. մեկի ծայրից բռնեցի՞ր՝ կգտնես հաջորդը, իսկ նրա միջոցով՝ երրորդը, և այդպես անվերջ: Ներկա դեպքում, - ասաց նա, - եթե Հովազաձորում այսքան շատ մոշահավ կա, ուրեմն մոշուտ էլ կա: Եվ եթե մոշուտ կա, ուրեմն մոշ էլ կարող է լինել: Իսկ մոշուտ լինում է խոնավ փոսերում:
Քանի դեռ Աշոտի ենթադրած «մոշուտը» ծածկված էր ձյունով, այդ թռչունները բնավեր թափառում էին ամեն տեղ: Այժմ քանի որ նրանք այլևս չեն երևում, պիտի ենթադրել, որ մի ինչ-որ փոսում մոշուտ է բացվել ձյան տակից և թռչունները գնացել են չորացած մոշ ուտելու: Նրանց հետևից պիտի գնալ-գտնել մոշը, որի թեյը օգտակար է նաև մրսածի համար:
Աշոտը խելքին մոտ բան ասաց, ուստի ընկերները անտրտունջ հետևեցին նրան:
Նրանք գնում էին ժայռաշարքի ստորոտով, ուր ցրված են կաղնի ծառերը, իսկ նրանց մեջ՝ ծեր ընկուզենին. դա մեզ ծանոթ Կաղնուտն է: Կաղնուտից ներքև մի կենտ ժայռ կա ցցված: Այդ ժայռն

անցար՝ նրա և բուն ժայռաշարքի միջև մի պարարտ փոս կա: Ահա այդտեղ գտան մեր պատանիները դես-դեն կչկչալով թռչկոտող մոշահավերին և փոսի թփուտը Մոշուտ կոչեցին: Շատ նետեր կորցրին նրանք, բայց միայն մեկ մոշահավ հաջողվեց սպանել: Դրա փոխարեն թփերի վրա չորացած մոշ քիչ չկար: Ճիշտ է, նրա մեծ մասը հասել-թափվել էր դեռ ամառը, բայց մոշը այնպիսի հատապտուղ է, որ մի կողմից հասնում է, մյուս կողմից ծաղկում: Այնպես որ վերջին բերքը ծածկվելով հանկարածահաս ձյան շերտով, ոչ միայն դեռ չէր թափվել, այլև մի մասը նույնիսկ դեռ թարմ էր:
Քաղցրաթթվաշ հատապտուղները շատ համեղ թվացին քաղցած պատանիներին: Նրանք թե՛ կերան, թե՛ հիվանդների բաժինը վերցրին ու ճամփա ընկան դեպի տուն:
- Էսօր էլ ապրեցի՛նք... էգուց տեսնենք... - Իրավունք ուներ Գագիկն այդպես ասելու, որովհետև թփերի վրա նրանք այլևս մոշ չէին թողել:
Մինչև մոշի թեյ պատրաստեցին և խմեցրին հիվանդին՝ մթնեց: Այսքան էլ կարճ օ՞ր: Իսկ մեր պատանիներին երկար օրեր էին հարկավոր, շա՜տ երկար: Այնքա՜ն գործ կար անելո՛ւ: Կածանի վրա աշխատելուց բացի, հարկավոր էր գոնե մի կավե գավաթ պատրաստել Շուշիկի համար: Հարկավոր էր կավից հարմար վառարան պատրաստել, որ կանգնած ժամանակ անգամ մարդ չնեղվի ծխից: Հարկավոր էր մի քանի ամաններ ունենալ, որպեսզի կարողանաս միաժամանակ և՛ թեյ եռացնել, և՛ կերակուր եփել: Թե չե հիմա ինչի նման է, պիտի սպասես թեյը դատարկվի, որպեսզի հետո նույն ամանի մեջ մոշահավի շորվա պատրաստես հիվանդի համար:
Մոշահավի շորվա՛... Այն ինչ եփեցին մեր պատանիներն այդ երեկո, իր ծավալով երևի ամենափոքր կերակուրն էր աշխարհում, ահագին կավե ամանի մեջ կրակին դրած եռում էր լորից փոքր մի թռչուն...
Խարույկի շուրջը բոլորած, աչքները հառել էին եռացող ջրին և նրա արձակած գոլորշուց խելքամաղ անող մսահամ էին առնում, ուստի և մռայլվել էին:
Կերակուրը դեռ չէր եփել, երբ Հասոն գրպանից մի քանի չոր պտուղներ հանեց և գցեց ամանի մեջ. վայրի սալոր էր, որ նա հավաքել էր մի ծառի տակից:
- Հիմի որ դառավ իսկական թթվով շորվա... Ափսո՛ս, երեկվա ոզնին կենդանի լիներ...
Ապա ձայնը ցածրացնելով, Գագիկը հարցրեց դավադիր.
- Լուսահոգի ոզնու ձագին չմաշկե՞նք...
- Դե, դե, ի՞նչ եք քչփչում այդտեղ... Ոզնու անուն չտաք... Կարծում եք չլսեցի՞, - անհանգստացած տեղում վրա նստեց Շուշիկը:
- Քրտնած ես, պառկի՛ր, խուշկե Շուշիկ... ես չեմ թողնի, որ դրանք...
Եվ հովիվ պատանին աղջկա վրայից մի կողմ ընկած շորերով ծածկեց նրան:
Մոշի թեյը քրտնեցրել էր Շուշիկին: Տղաները կրակը թեժացրին և Աշոտի վերարկուով փակեցին այրի մուտքը: Ծուխ էր, բայց պառկածների համար՝ ոչինչ:
- Այս ի՞նչ ես արել, Հասո՛, քո տակի ամբողջ խաշամը լցրել ես կողքերս... Դու փայտերի՞ վրա ես քնելու, ի՞նչ է, - բողոքեց Շուշիկը: - Այդ էլ տրե՞խն էր. իմ պատճառով բոբիկ ես մնացել...
Տղան շփոթվեց:
- Դա ոզնին տեղափոխած կլինի... Հասոն դրանից տեղյակ չի, - Աշոտին աչքով անելով վրա բերեց Գագիկը: Փորձեց ծածկել Հասոյի «գողությունը», բայց բոլորովին բացեց:
Մինչ այս, մինչ այն կերակուրն արդեն պատրաստ էր: Հասոն գրպանից հանեց վայրի համեմունքը (որ, ինչպես գիտենք, քաղել էր անգղի մսից կերակուր պատրաստելու նպատակով), փշրեց-լցրեց կերակրի մեջ, իսկ Գագիկը, որպես խմբի խոհարար, ամանը դրեց հիվանդի առաջ:
Տաք գոլորշին, սուպից բուրող թթվաշահոտն ու համեմունքը տարածվել էր այրի մեջ:
Տղաները անձավից դուրս ելան...:
Այսպես հաճելի ու խաղաղ էր անցնում երեկոն, երբ հանկարծ շունը սրեց ականջները, վեր թռավ տեղից և դուրս վազեց, բայց սիրտ չարավ շեմքից դենը գնալ: Հասոն լարվեց տեղում՝ ռունգները լայնացան, նա անծանոթ ու կասկածելի ձայներ էր լսում հեռվից:
Այրի շեմքին քարացած, Բոյնախը իր հայացքը հառել էր դիմացը՝ վեր ելնող աջ ժայռաշարքի սև ուրվագծերին ու անհանգիստ ծմրում էր:

Խավարի միջից մլավոց լսվեց՝ սկզբում հանգիստ ու մեղմ, նման քաղցած կատվի մլավոցի: Ապա շրջապատում տարածվեց խռպոտ մի խզզոց և հաջորդ վայրկյանին՝ կերկերաձայն երկար շառաչյուն՝ խորհրդավոր ու չարագուշակ...
Պատանիները մի պահ կարծեցին, թե քամին է ոռնում լեռան ծերպերում, որովհետև նրանց լսածը նման չէր ոչ մի կենդանու արձակած ձայնի, եթե չհաշվենք կատվի մլավոցը: Բայց շուտով պարզ դարձավ, որ դա քամին չէ, քանի որ հաջորդ վայրկյաններին լսվեց զայրագին գռմռոց՝ խռպոտ ու մռայլ....
Ի՞նչ կարող է լինել, ո՞ր կենդանին այդպիսի ձայներ կհանի: Մեր պատանիները մտածում էին այդ հանելուկի վրա, երբ խավարը պատռեց սուր ու աղիողորմ մի ճիչ և ժայռերն անդրադարձրին մի տարօրինակ ձայն, որ կրկնվեց երեք, թե չորս անգամ՝ «խուրա՛կ... խուրա՛կ... խուրա՛կ...»:
Զարզանդ ազդող այդ ձայնից պատանիները սարսռեցին: Զզվելի կանչը կրկնվեց, արձագանքեց ձորում և գնաց մարեց մթին անձավներում... Ապա ոռնաց չարագուշակ հողմը և կլանեց ու իր թևով տարավ կորցրեց ամեն ձայն ու շշուկ:
Տղաները մի պահ ևս ականջ դրին ահով ու լուռ մտան անձավը:
- Ի՞նչ է պատահել... Ինչո՞ւ եք գունատ, - անհանգստացավ Շուշիկը:
- Ի՞նչ կարող է լինել... Ո՞ր գազանն է այդպիսի ձայներ հանում, - մտամոլոր ու ինքն իրեն կրկնում էր Աշոտը և մտաբերում հանդերում իր լսած բոլոր ձայները:
- Ոչ, դա ինչ-որ ուրի՛շ բան էր... Անսովոր ու տարօրինակ բան...
- Էդպիսի ձեն ես կյանքումս լսած չկամ, - ասաց Հասոն և ձայնը ցածրացնելով, ավելացրեց երկյուղով, - երևի քաջքերն էին...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե ինչպես ահավոր վտանգը գաղտագողի մոտենում էր անձավի շեմքին...

Մեր պատանիների գերության քսաներորդ օրը երկու անակնկալ դեպք տեղի ունեցավ, մեկը աննշան, բայց ուրախալի, մյուսը՝ ահավոր:
Պատմենք հերթով:
Առավոտյան տղաների առաջին գործը եղավ ստուգել հիվանդների վիճակը: Սարգսի ոտքը չէր ցավում, ուռուցքն իջել էր: Բայց խմբի ինքնակոչ «սնոչին» ասաց, որ առայժմ նա պառկած պիտի մնա:
Երեկվանից մնացած մոշը լցրին կավե ամանի մեջ, վրան ջուր քամեցին, եռացրին, խմեցրին հիվանդներին ե դուրս ելան այրից:
Բոյնախը կաղալով հետևեց նրանց:
Տղաներն իջան Մոշուտը, բայց ոչ մի մոշահավ չէր երևում, բոլորը խրտնել-հեռացել էին իրենց բնակության ալդ հիմնական վայրից: Ապա նրանք ցրիվ եկան Կաղնուտում, ձեռքերով, ոտքերով, փայտի կտորով սկսեցին խառնել չոր խաշամը և կաղին փնտրել:
Օրը նորից արևոտ էր ու տաք: Կուշտ լինեին ի՞նչ եռանդով կաշխատեին փակված ճամփի վրա...
Գագիկն ու Աշոտը, ծեր ընկուզենու տակ նստած, իրենց մռայլ մտքերով էին տարված, երբ վերևից լսվեց Շուշիկի թույլ ձայնը.
- Աշո՛տ, ինչո՞ւ չեք ճամփեն բացում... Ինձ խաբեցի՞ք...
Ախ, այդ աղեկտուր կանչը... Պարզ էր, որ հիվանդ աղջիկը իր ապրելու միակ հույսը կապում էր կածանը բացելու հետ:
- Ներս գնա... դադար է... Հիմա էլի կգնանք – կշարունակենք, - ձայն տվեց Աշոտը և մնաց մոլորված, ի՞նչ անել:
Այդ պահին մոտիկից լսվեց Հասոյի կանչը.
- Եկեք, խնձոր եմ գտել...
Տղաներն իսկույն աշխուժացած վեր թռան:
Ա՛յ քեզ բան, այս որտե՞ղ է թաքնված եղել այդ գաճաճ խնձորենին: Ժայռի հետև՞... Գաճաճ, բայց՝ պտղաբեր: Այնքան շատ խնձոր կար այդ թզուկ ծառի վրան ու տակը, որ տղաները շուտով լցրին իրենց

գրպանները ու սկսեցին ագահությամբ ուտել: Ցրտատար և կնճռոտ վայրի խնձորը կծելուն պես պղպջակներ էր արձակում:
- Ես գնացի հիվանդների կողմը, - քոլոզը խնձոր լցնելով, վեր կացավ Հասոն:
- Սիրտ տուր, ասա՝ գնացին ճամփան բացելու, - նրա հետևից պատվիրեց Աշոտը: Ասաց և ներշնչվեց իր խոսքից, իսկապես, պարապ ինչո՞ւ են նստել, չգնա՞ն մի քանի քայլ ևս բացեն...
Զարմանալի բան, ամուր վճռում էին նախ սննդի պաշար կուտակել, բայց հենց մի քիչ ուտելիք էր ընկնում ձեռքները, բնազդորեն շարժվում էին դեպի Դիվային կածանը, ինչպես մութ գիշերին ձուկը ձգտում է դեպի վառվող ճրագը... Իրենք ևս հուսահատ էին, իրենք ևս հասկանում էին, որ այդ վիճակով ճամփա բացել չի լինի: Բայց ի՞նչ է պատրաստում իրենց համար ձմեռը: Կդիմանա՞ն... Այդ հարցն էր բոլորի ուղեղում, դա էլ մղում էր նրանց դեպի ուժից վեր գործի:
- Գնանք, Գագի՛կ...
Եվ Աշոտը վեր կացավ, կտրեց անցավ Նապաստակի տափարակը և անտրամադիր քայլեց դեպի Դիվային կածանը:
Չգնար, ի՞նչ աներ, օր-օրի թուլանում էին, իսկ Հովազաձորում եղած սննդի պաշարները գրեթե վերջացել էին. ճնճղուկներն ու մոշահավերը մեծ մասամբ ոչնչացված էին, իսկ հատապտղի թփերը՝ մերկացված: Հապաղել, նշանակում էր կործանվել: Քանի եղանակը թույլ էր տալիս, պետք էր մաքրել ճամփան և դուրս գալ «լույս աշխարհ»: Այդ հնարավորությունը կար, քանի որ արահետի կեսից ավելին արդեն մաքրված էր. մնացել էր քիչ, բայց դժվար տարածություն: Եթե լարեին իրենց վերջին ուժերը, երեք-չորս օրում կարող էին ավարտել աշխատանքը, և այն ժամանակ...
Այդ հեռանկարն էր, որ ուժասպառ պատանիներին գործի էր մղում:
Հասոն կերակրեց հիվանդներին և մի քանի սրտապնդող խոսքեր ասելով, դուրս ելավ անձավից:
- Շուշի՛կ, տղերքն արդեն բացում են ճամփան, - կանչեց նա շեմքից, - իսկ ես գնում եմ որսի... Բոյնա՛խ, դու կրակի մոտ մնա, - համոզում էր նա իր բրդոտ ընկերոջը:
Ուրիշ ժամանակ Բոյնախը միշտ էլ լսում էր իր տիրոջը: Այս անգամ թախիծով նայեց նրան, քսվեց ոտքերին, յուրովի «շոյեց» իր տիրոջը և թույլ-թույլ քարշ եկավ նրա հետևից: Ով գիտի, գուցե իր կենդանական բնազդով զգում էր մահվան մոտությունը, ուստի չէր ուզում անջատվել իր սիրելի տիրոջից: Ի՞նչ տեր, Հասոյի մանկության ընկերն էր նա, միասին էին մեծացել:
- Բոյնա՛խ, պառկիր այստեղ, տաքացի՛ր, ես հիմա կգամ, - պատվիրեց Հասոն, երբ մտան Կաղնուտը: Հիվանդ կենդանուն ևս դուր էր գալիս արևը: Նա մեկնվեց չոր ու գոլ տերևների վրա և գլուխը թաթերին դնելով, խփեց աչքերը:
Հասոն նետ-աղեղը ձեռքին դես-դեն ընկավ, ոչ մի թռչուն չերևաց: Եղածներն էլ դարձել էին զգույշ, այրի շրջակայքում այլևս չէին երևում: Վերադարձավ մի քանի սինձ բռի մեջ, մեկնեց շանը: Բոյնախը հոտոտեց, տխուր նայեց ու հրաժարվեց ուզելուց:
- Վա՛յ, Բոյնախ ջան, ուտելուց է՞լ ընկար, - մղկտաց Հովիվ պատանին, զգալով, որ մոտ է իր «մանկության ընկերոջ» վախճանը...
Շունը նորից գլուխը դրեց թաթերին և աչքերը խփեց: Հանկարծ նա մի ականջը առաջ մեկնեց, աչքերը բացեց և գլուխը բարձրացնելով՝ նայեց մոտիկ մասրի ցանցառ թփին: Ապա վեր կացավ, ուժերը լարեց, քարշ եկավ մինչև թուփը և ետ շրջվելով՝ հայացքով հասկացրեց տիրոջը, որ մոտենա: Հասոն առաջ գնաց, բայց շան առաջ նոսր մասրենին էր և ցաքուցրիվ քարեր, - ոչ մի շնչավոր արարած չկար:
Տղան շուռ եկավ, որ գնա սնունդ փնտրելու, շունը թույլ հաչոցով ստիպեց նրան վերադառնալ:
- Ի՞նչ է, ո՞ւր է, Բոյնախ ջան...
Շունը նայում էր իր առաջի քարերին և զարմանում, որ տերը չի հասկանում:
Այդ քարերից մեկը գրավեց տղայի ուշադրությունը իր կանոնավոր նախշած մակերեսով: Անհերևույթ մի ձեռք գլխի մեծության այդ տափակ քարի «մեջքին» քառակուսի և վեցանկյունի նախշեր էր արել:
- Վա՞յ, կրիա՞ - ուրախացավ տղան և անմիջապես շուռ տվեց կենդանուն, որպեսզի չփախչի ձեռքից: - Էս լավ եղավ, Գագիկի ասած՝ էսօր էլ ապրեցի՛նք, - ինքն իրեն խոսում էր Հասոն և մտածում, թե ինչպես մորթի այդ կենդանուն և ինչպես հանի նրա միսը չորս կողմը փակ պատյանի միջից: Հիշեց Գագիկի խոսքը, թե ինչպես է նա կրիա մորթում, և կենդանուն թևի տակ առնելով գնաց ընկերների մոտ:

Աշոտն ու Գագիկը դեռ հեռվից նկատեցին, որ Հասոն վստահ քայլերով էր մոտենում և նրա բրոնզագույն դեմքը փայլում է, - ուրեմն, դատարկաձեռն չի: Է՛հ, որ այդպես է, ինչո՞ւ մի քսան թիակ ձյուն ավելի ցած չթափել մինչև նրա գալը:
Ձյունը խշխշալով անդունդն էր թափվում նոսր ու ճերմակ ջրվեժների նման, և ճխում էր Հասոյի սիրտն այն մտքից, որ շուտով կգա բաղձալի ազատությունը:
- Այ տղա, եփեիր հետո բերեիր, - կանչեց Աշոտն ուրախացած: - Օհո՛, ի՛նչ մեծն է: Հա՛, մեր ցամաքի կրիաները ջրի կրիաներից մեծ են լինում... Վա՛յ, դեռ քուն չի մտե՞լ...
Ապա քիչ լռելուց հետո, երբ Գագիկը կենդանուն ձեռքով ծանր ու թեթև էր անում (երևի կշիռը որոշելու համար...), ինքն իրեն ավելացրեց.
- Զարմանալի է... Մեզ մոտ կրիաները մեծ մասամբ այգիներում են լինում... կրիան Հովազաձորում ի՞նչ գործ ունի...
- Այգիներո՞ւմ, ինչո՞ւ միայն այգիներում, - հարցրեց Գագիկը:
- Խաղողի համար: Խաղող են ուտում: Ուրեմն, Հովազաձորում խաղո՞ղ կա...
- Ախորժակիդ քացախ: Խաղո՛ղ... ձմերուկի ծառեր էլ կան, չե՞ս տեսել, - հեգնեց Գագիկը:
Աշոտը չպատասխանեց, բայց սիրտը կասկած ընկավ, եթե մեծ խմբով ճնճղուկներ կան, ինչպես լինում են մարդու բնակավայրում, ուրեմն մարդ է ապրել այստեղ: Եթե մարդ է ապրել, կարող է այգի էլ ունեցած լինի, որի պտուղներից կօգտվեն կրիաները, ոզնիները... Հա՛, ոզնիները... Իսկապես, նրանք էլ հաճախ այգիների հետ են կապված... Ի՞նչ են նշանակում այս նշանները... Եթե այս կենդանիները կան, կարող է և այգի լինել... (այստեղ նա հիշեց ընկուզենին, որ հավանաբար մարդ էր տնկել):
Մինչ Աշոտի ուղեղը ջանում էր լուծելու այս հանելուկները, Գագիկը անցավ գործի: Դե նա ի՞նչ գործ ուներ «բնության երևույթների փոխադարձ կապերի» հետ, որի մասին ընկերներին տեղի անտեղի հիշեցնում էր Աշոտը: Ձեռքդ ո՞րս է ընկել, շուտ միջոց գտիր նրանից կերակուր պատրաստելու:
- Աշո՛տ, սրան պետք է օջախի մոտ տանենք, այստեղ չի լինի... - ասաց Գագիկը՝ կրիան ցույց տալով:
- Լա՛վ, գնացե՛ք, ես մի քիչ էլ աշխատեմ՝ կգամ:
- Միասին գնանք:
- Աչքիցս հեռու եփես, ավելի հեշտ կլինի ինձ համար, - պատճառաբանեց Աշոտը՝ թին վերցնելով, կերակրի հեռանկարը նրան դարձրել էր դյուրագրգիռ:
Հասոն մնաց Աշոտի հետ աշխատելու, իսկ Գագիկը վերցրեց նրա դանակը և գնաց քարայր:
- Բոյնա՛խ, հանգստանո՞ւմ ես, - շոյեց նա կենդանու գլուխը նրա մոտով անցնելիս: - Կեցցե՛ս, իմացանք, որ էսօր էլ ենք քո աշխատանքով ապրելու... Չես ուզում գա՞լ... Լա՛վ, հանգստացի՛ր, ես քո բաժինը հիմա կբերեմ...
Բոյնախը տխուր լիզեց նրա ձեռքը և թույլ-թույլ շարժեց պոչը: Նրա հայացքը մշուշապատ էր:
Այնուհետև ամեն ինչ գնաց իր կարգով և մի ժամ անց արդեն Գագիկը ձայն էր տալիս այրի առաջից.
- Աշո՛տ, Հասո՛, եկե՛ք, եկե՛ք, գառան սուպը գնաց- չմնաց...
«Անունը գառան սուպ դնենք, որ էն աղջիկը չզզվի», - մտածեց նա, բայց արդեն ուշ էր. Շուշիկը արթնացել էր, տեսել կրակի մոտ ընկած դատարկ պատյանը, ամեն ինչ հասկացել ու հիմա բողոքում էր սրտնեղած.
- Ամեն զզվելի բան եփում եք ու ստիպում, որ մարդ ուտի..
Գագիկը շատ աշխատեց համոզել աղջկան՝ ապարդյուն, մինչև որ տեղ հասավ Աշոտը և այնպիսի բաներ ասաց կրիայի սուպի մասին, որ վերջ ի վերջո այն տպավորությունն ստեղծվեց, թե իբր կրիայի մսից համեղ միս չկա:
Նա ասաց, որ, իր հոր պատմելով, Բեռլինում կրիայի մսից պատրաստած սուպը երեք անգամ թանկ է ոչխարի սուպից:
Գագիկը փորձեց այդ բանը կասկածի տակ առնել, բայց Աշոտը նրան ջախջախեց:
Շուշիկին երկար համոզելու կարիք չզգացվեց. իրոք, համեղ մսաջուրը ինքը խոսեց իր օգտին, և երբ աղջիկը ճաշակեց այն, այլևս ոչ մի բառ չասաց կրիայի «հարամ» լինելու մասին:
Երբ կերան-կշտացան, Գագիկը հայտնեց իր զարմանքը.
- Աշո՛տ, այսքան ձյուն է եկել ու կրիան քուն չի մտել, սա ի՞նչ բան է...

- Թեև ձյուն է եկել, բայց կենդանիները զգում են, որ դեռ աշուն է, - իր կարծիքը հայտնեց Աշոտը: - Երևի եղանակից են զգում, կամ՝ արևի ուժից... Հայրս ասում է՝ ընդհակառակը, եթե տարի է պատահում, որ մինչև հունվար ձյուն չի գալիս, միևնույն է, արջը էլի իր ժամանակին քուն է մտնում: Ուրեմն ժամանակը գիտի ուրիշ նշաններից: Կամ՝ զգում է բնազդով, որ մտանք ձմեռ...
Աշոտը մտավ իր տարերքի մեջ: Փորը կուշտ, թեման՝ սիրելի... Նա շատ հետաքրքիր նորություններ հայտնեց ընկերներին բնության այդ երևույթի մասին:
Վայրի այծերը, օրինակ, իրենց «հարսանիքներն» սկսում են դեկտեմբերի սկզբներին, որպեսզի ձագ բերեն գարնան տաք օրերին: Բայց եթե նույնիսկ սեպտեմբերին ձյուն գա և ամբողջ աշունը նման լինի խոր ձմեռվա, դարձյալ քարայծերը չեն սխալվի և իրենց «հարսանիքը» չեն սկսի ժամկետից շուտ: Եթե սխալվեն, ծանր պատիժ կստանան, ուլերը կծնվեն ձմեռը և կոչնչանան սառնամանիքից: Դրան հակառակ, եթե մինչև փետրվար ձյուն չգա, և թվա, թե դեռ աշուն է, դարձյալ քարայծերը չեն խաբվի, իրենց բնազդով նրանք կզգան, թե ե՛րբ են մտել դեկտեմբեր և մտնելուն պես կսկսեն իրենց «հարսանիքների շրջանը»:
- Հիմա իմացա՞ք, թե ինչու կրիան դեռ քուն չի մտել, - հարցրեց Աշոտը մի փոքր հպարտ շեշտով, նախորդ օրերի նման նա այլևս ընկճված չէր:
- Տո թող քուն չմտնեն, է՛, դրանց հոգուն մատաղ... Ես դրա ընկերներին էգուց մեկ-մեկ կգտնեմ, պատյանահան կանեմ, - պարծեցավ Գագիկը. կշտանալուց հետո առհասարակ նա շատ լավատես էր դառնում:
Բայց Գագիկն իր այդ սպառնալիքը չկարողացավ իրագործել, որովհետև հետագա դեպքերը նրան ստիպեցին հաջորդ օրը կուչ գալ այրի մի անկյունում, ծխացող փայտը ձեռքին:
Բանն այն է, որ երբ տղաները կշտանալուց հետո գնացին ճանապարհի վրա աշխատելու և Շուշիկն էլ կիսաքուն վիճակում էր, խարույկի մոտ անշարժ մեկնված շունը հանկարծ վեր թռավ և սարսափահար ետ-ետ գնաց դեպի այրի խորքը:
Սարգիսը նկատեց, որ նա պոչը խոթել է հետևի ոտների արանքը ու դողում է ամբողջ մարմնով և երկյուղով լի հայացքը հառել է այրի շեմքին:
Այդ պահին երկու հաղթ ու չալ ոտքեր բարձրացան շեմքի ցածրիկ պատին և կատվակերպ մի գազան բռնեց այրի նեղ մուտքը: Նա հոտոտեց օդը, բեղերը գրգռված շարժեց և ժանիքները բացելով, թույլ մռլտաց:
Սարսափահար տղան բնազդորեն մի վառվող փայտ վերցրեց՝ ու շպրտեց գազանի վրա: Սա ետ ցատկեց ու անհետացավ, իսկ Սարգիսը մնացել էր տեղում կապտած:
- Ի՞նչ էր... էն ի՞նչ էր... - արթնանալուն պես հարցրեց Շուշիկը, բայց պատասխան չստացավ: Սարգսի լեզուն կապվել էր...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ինչպես ապրելու հույսը մեկ բոցավառվում, մեկ աղոտանում էր մեր գերիների մեջ

Գազանի երևալը անմիջապես խառնեց մեր պատանիների թե՛ ծրագրերը, թե՛ օրվա ռեժիմը: Այդ դեպքը փոխեց նրանց ապրուստի պայմանները, վիճակները միանգամից վատացավ:
Ճիշտ է, Աշոտը անհոգ ձևանալով պնդեց օրեր առաջ հանած իր եզրակացության վրա, թե իբր հիվանդներին այցի եկած կենդանին միջինասիական «մանուլ» կոչված կատուն է եղել, բայց Սարգիսը դրան առարկեց.
- Ի՛նչ կատու, փոքր վագրի չափ մի բան էր...
«Ընտրություններից» առաջ Աշոտը անփութորեն կշպրտեր, թե՝ «Վախկոտի աչքին կատուն կարող է վագր երևալ», բայց այժմ իրեն զսպեց:
- Մեր հանդերում ես վագր չեմ պատահել, - պարզամտորեն ասաց Հասոն, - կարող է լուսան լինել: - Սարգի՛ս, ականջների ծայրին փոքրիկ մազափնջեր չկայի՞ն:
- Չէ, ականջները ոնց որ կատվի, իսկ գլուխը կլոր էր...

Ի՞նչ կարող էր լինել, գուցե հովա՞զ... Ինչ էլ որ լինի պետք է զգույշ լինել: Եվ հաջորդ ամբողջ օրը նրանք չհամարձակվեցին ո՛չ գործի գնալ, ո՛չ որսի: Խելք-խելքի տալով նրանք եկան այն եզրակացության, որ այդ գազանը ևս իրենց նման փակված է մնացել ձորում: Այլապես, ի՞նչ գործ ուներ այստեղ, երբ քարայծերը ձյան փոթորիկն սկսվելուն պես քոչել էին Հովազաձորից: Հավանաբար այդ ժամանակ կուշտ լեշ լափած և իր որջում քնած չի հասկացել, թե ինչ է կատարվում դուրսը, և երբ դուրս է եկել որջից՝ ձյունն արդեն փակած է եղել ձորի միակ ելքը: Գոնե այդպես էր բացատրում Աշոտը:
Հիմա վատն այն էր, որ ձորում սնունդ չկար գերի գազանի համար. քարայծ չէր մնացել Հովազաձորում: Պարզ չէ՞ր, որ քաղցած կենդանին պիտի հետապնդեր մեր պատանիներին:
Հենց այն փաստը, որ համարձակվել էր օրը ցերեկով դունչը խոթել քարայրը, ցույց էր տալիս, որ նա քաղցից դարձել է աներկյուղ ու անամոթ: Պիտի կարծել, որ գազանն առաջին հերթին մտադրություն է ունեցել շանը փախցնելու:
Սովամահ լինելու վտանգին ավելացավ գազանին կեր դառնալու վտանգը:
Նրանք օջախը տեղափոխել էին այրի մուտքի մոտ, բայց շուտով փայտը վերջացավ, հարկավոր էր վառելիք հայթայթել:
Աշոտի նշանով մի-մի ածխակոթ ձեռքներին, վախվխելով դուրս եկան քարայրից:
Շրջապատը այնպես լույսով էր ողողված, որ երկյուղը հետզհետե նահանջեց նրանց սրտերում: Մեծ Արարատի հավերժական սառցադաշտերին կռացած արևը նայում էր Հովազաձորին մեղմ ու ջերմ հայացքով և այդ հայացքից արտասվում էին դեռ իրենց դարավանդների վրա ձյան շերտեր կրող ժայռերը: Շրջապատը պայծա՛ռ, լուսավո՛ր, - այս կուրացուցիչ լույսի մեջ չա՞ր կլինի, գազա՞ն կմնա...
- Եկե՛ք, մի՛ վախենաք... Սարգիս, դու էդ թաց թփերը դիր կրակին, թող ծուխ անի... Չվախենա՛ս, կրակին առյուծն անգամ չի մոտենա... Գնա՛նք, տղե՛րք... Իրեն և ընկերներին սիրտ էր տալիս Աշոտը: - Հա, լավ է, որ հեղեղը չի կարողացել տանել մեր ծանր զենքերը... Վերցնենք, պետք կգան...
Նրանք զինվեցին քարե կացնով, մուրճով, գուրզով, որ նախորդ օրը քարշ էին տվել-բերել իրենց հին բնակարանից և իջան Կաղնուտ, ուր և զգուշության համար իսկույն խաշամ կուտակեցին ու հրդեհեցին: Ապա սկսեցին կախվել կաղնի ծառերի դես-դեն մեկնված ճյուղերից ու ջարդել: Փորձից արդեն հասկացել էին, որ արեգունի լանջերին կաղնի ծառը ճկուն չի լինում, մանավանդ՝ նրա հասակավոր ճյուղերը: Երեքով կախվում էին մամռակալած ծուռումուռ ճյուղից և երբ հաջողվում էր ջարդել, մի պահ ուրախանում էին՝ քաղց ու գազան մոռացած:
Բայց վատ վառելիք է կաղնի փայտը, ծխում է առանց բոց տալու և նրա ծուխը դառն է ու կուրացնող: Ճարն ի՞նչ, հատապտղի թփերն ու ցածրիկ ծառերը այնպես ճկուն են, որ դիմադրում են պրկված պողպատի նման, իսկ ծեր ընկուզենին «չհամաձայնեց» իր ճյուղերից գոնե մեկը զիջել նրանց:
Երբ նստեցին ծառի տակ հանգստանալու, Աշոտն ասաց ընկերներին.
- Հիմի որ առանց նիզակների մենք չենք կարող յոլա գնալ: Քանի որ ձորում գազան կա, այնպիսի զենք պիտի ունենանք, որ պատահելիս հեռվից հարվածենք...
Այդպես հասունացավ նոր զենքի խնդիրը, վտանգն ստիպեց տղաներին մտածել նիզակներ պատրաստելու մասին:
- Ա՛յ լավ նիզակներ, - գոչեց Աշոտը՝ ընկերներին ցույց տալով կաղնի շիվերի մի ամբողջ խումբ: Փտած կաղնի կոճղի շուրջը, կարծես իր թոռների նման, շուրջպար էին բռնել մարդու բազուկի հաստության և մոտ երեք մետր բարձրության շիվերը:
Նրանք ծնվել էին մեռնող կաղնու արմատներից և ձգտում էին արագությամբ աճել ու փոխարինել նրան: Հինգ հատ էին այդ արդեն առնականացած շիվերը. հինգ եղբոր նման թիկունք-թիկունքի տված՝ Հովազաձորին այցի եկող փոթորիկների դեմ:
Նրանցից չորսը շուտով զոհ գնացին Հասոյի սուր դանակին: Երբ «զոհվելու» հերթը հինգերորդին հասավ, Աշոտը բռնեց ընկերոջ բազուկից:
- Թող աճի, փոխարինի հորը, - ասաց նա հանդիսավոր. Իր որսորդ հոր նման՝ նա ևս շնչավորում էր բնությունը...
Քիչ անց կաղնի ճյուղերը դանդաղ մխում էին կրակի վրա, իսկ տղաները այրի շեմքին նստած տեգեր էին պատրաստում:

Իրենց հագուստներով նրանք փաթաթել էին Շուշիկին և այրից դուրս հանելով, նստեցրել ժայռի տակ:
Մայր մտնող արևը իր շողերով ողողել էր շիկակարմիր ժայռը և նրա հետ էլ աղջկա գունատ դեմքը:
- Սարգի՛ս, կայծքարերը որտեղի՞ց գտար, - հարցրեց Աշոտը: Սարգիսը ևս ծխից նեղվելով դուրս էր եկել այրից:
- Գնա՛մ բերեմ...
- Չէ՛, քեզ չի կարելի, դու միայն մեզ տեղը ցույց տուր:
- Այ էն քարի հետևի ձախ կողմի... Չէ՛, չեք գտնի, իմ բաժին նիզակը տուր հենակ դարձնեմ, առայժմ ես նիզակ գործածող չեմ, - հաշտ, ժպտալով ասաց տղան և դժվարությամբ վեր կացավ:
- Հը՛, հեքի՞մ... գնա՞...
- Ինձ հետ կարելի է...
Եվ Սարգիսը մի թևով Հասոյին, մյուսով իր ապագա տեգին հենվելով՝ շարժվեց դեպի այն ապառները, որոնց տղաները Կայծքարի հանքավայր անունն էին տվել:
Զգուշության համար Հասոն իր հետ մի ծխացող փայտի կտոր էր վերցրել:
- Շուշի՛կ, ինչպե՞ս ես, ծակոցներ դեռ ունե՞ս, - հարցրեց Աշոտը:
- Չէ՛, էլ չի ծակում... միայն շատ եմ թույլ...
Նա ուզեց ասել քաղցած է և եթե ուտելու բան լինի՝ կկազդուրվի, բայց ընկերների հոգսը չավելացնելու համար զսպեց իրեն: Ասենք, առանց նրա ակնարկի էլ լույսի նման պարզ էր, որ նրան հիմա սնունդը կփրկի: Իսկ եթե երկու օր էլ քաղցած մնա, հյուծված- փխրուն օրգանիզմը չի դիմանա...
- Կաքավներին բռնելու հնար չունե՞ս, - հարցրեց Գագիկը. նրան ևս զբաղեցնում էր այն հարցը, ինչ բոլորին, եթե սնունդ չհայթայթեն՝ Շուշիկը չի ապրի...- Հա՛, Աշո՛տ, մի օր բերանիցդ խոսք փախցրիր, որ եթե ձիու պոչի մազ լիներ, բոլոր կաքավներին կբռնոտեիր...
- Այո՛, ձիու մազից թակարդներ կարելի է շինել: Բայց ո՞ւր է ձիու մազը:
- Բա էս ի՛նչ է...
Այս ասելով Գագիկը քնքշությամբ բռնեց Շուշիկի շեկ հյուսը, որ գորշ գլխաշորի տակից կախվել էր նրա նիհար կրծքին: Աղջիկը թույլ ժպտաց:
- Հը՞, կլինի՞... Շո՛ւտ ասա, քանի Հասոն չի եկել, թե չէ «խանչալ կքաշի», չի թողնի մոտենանք իր քուրացվի մազերին:
Աշոտը նեղացավ:
- Կատակելու նյութդ վերջացե՞լ է... .
- Ոչի՛նչ, Աշո՛տ, եթե պետք կգա, կտրեցե՛ք... - հևալով և դժվարությամբ արտասանեց աղջիկը, իր՛ հյուսերից մեկը դանդաղ քանդելով: Ինչպե՛ս բարակել-մոմի նման դեղնել էին նրա մատները: Իսկ աչքերի խոռոչները այնպես էին խորացել, որ առանց կարեկցության չէր կարելի նայել նրան:
«Կմեռնի՛», - անցավ սոսկալի միտքը Աշոտի գլխով և նա վեր կացավ տեղից:
- Առ պահի՛ր, Հասոն գալիս է...
Եվ Գագիկը Շուշիկի մազերից մի փունջ հանձնեց Աշոտին ու հարցական նայեց նրան, այսինքն, «Ասա՛, ինչով օգնեմ քեզ... Մի բան արա, թե չէ աղջիկը ձեռքից գնում է...»:
- Հա՛, երեքտակ կդիմանա... Բայց կուտ չկա, որով գրավենք կաքավներին... Հասո՛, - դիմեց Աշոտը մոտեցող տղային, - տոպրակումդ կարո՞ղ է հացի փշրանք մնացած լինել...
Հացի անուն լսելով, բոլորի բերաններն էլ լցվեց ջրով: Ա՛խ, մի կտոր սև հաց լինե՛ր...
Հասոն քարով լիքը գրպանները դատարկեց Աշոտի առաջ և մտավ այրը...
- Ա՛յ հրաշալի զենք... Մի տե՛ս, ծայրն ասեղի նման սուր է. - սև աբսիդի ծայրը բութ մատով շոշափում ու հիանում էր Աշոտը:
Սև աբսիդը (սև կայծքարը, կամ ինչպես ժողովուրդն է ասում՝ «սատանի եղունգը») սրելու կարիք չունի, որովհետև նրա շերտավոր կտորները ջարդելիս նույնպիսի մասնիկներ է տալիս, ինչպես եթե սև ու հաստ շիշ ջարդես:
Աշոտը ընտրեց իր ցուցամատի երկարության մի սուր կտոր, ապա դալար շիվի ծայրը ճեղքեց դանակով, լայնացրեց, սեպ խփեց կողքից և այդպես ճեղքը մնաց «բերանը բաց»: Ապա երբ աբսիդի բութ կողմը

դրեց ճեղքի մեջ և սեպը հանեց, փայտի «բերանը» ամուր խփվեց և կայծքարը մնաց նրա «լնդերի» միջև ամուր սեղմված:
- Դե՛, Հասո՛, թել հասցրո՛ւ...
Հասոն ոչ միայն թել հասցրեց Աշոտին (իր չալ գուլպայի ճիտքը նա քանդել-կծիկ էր արել «սև օրվա համար»), այլև նրան հանձնեց իր տոպրակի անկյուններում մնացած հացի հողախառն փշրանքը:
Աշոտը թելով փաթաթեց տեգի ծայրը, վեր կացավ և երբ գլխից վերև ճոճեց իր պատրաստած ծանր գեղարդը, թվաց, թե իր մեջ ուժն էլ ավելացավ, ինքնավստահությունն էլ:
- Դե հիմի թող գա քո գազանը, - հոխորտաց նա: - Սրա թափին ոչ մի կենդանի չի դիմանա...
Տղաները հերթով իրենց ձեռքը վերցրին գեղարդը և երբ ճոճում էին ետ և առաջ՝ մի որևէ բանի հարվածելու տրամադրություն էր առաջանում նրանց մեջ:
Իրոք, մոտիկ տարածության վրա այդ զենքը ատրճանակից ուժեղ էր. թափով նետելու դեպքում ո՞վ կդիմանար նրա հարվածին:
- Ձա՛ն, հիմի որ իսկական նախամարդ դառանք... Աշո՛տ, գնա լուսանին բեր մոտս վրան փորձեմ, տեսնեմ կծակի՞, - թռվռում էր Գագիկը, հավանաբար Շուշիկին սիրտ տալու համար: Բայց նրա հևքը լսելով և պղտորված աչքերին նայելով, իսկույն թափն իջավ: - Աշո՛տ, ի՞նչ ես անում, մնացածները գիշերը օջախի մոտ էլ կշինենք: Վեր կաց գնանք կաքավի, հիմի կմթնի:
Արևը մայր մտավ, Հովազաձորի շքեղ գույներն իսկույն խամրեցին, շրջակայքը դարձավ միագույն-գորշ: Միանգամից ցրտեց:
Տղաները Շուշիկին ներս տարան, պառկեցրին օջախի եզրին՝ իր փափուկ «թախտին», և Սարգսին մոտը թողնելով, շարժվեցին դեպի վերին լանջը, ուր ամեն օր խմբովին երգում էին կաքավները:
Նրանք հետները վերցրել էին մի-մի ածխակոթ, իսկ Աշոտը՝ իր պատրաստած տեգը:
Շատ հասարակ կառուցվածք ունեին, բայց և սրամիտ էին մտածված այն թակարդները, որ այդ երեկո տղաները լարեցին վերին դարավանդում: Աշոտը մազից օղակ էր պատրաստում, իսկ մազի երկու ծայրը խրում էր բռունցքի մեծության մի գունդ ցեխի մեջ: Գիշերը ցեխը պիտի սառչեր և իր մեջ ամուր սեղմած պահեր մազի ծայրերը: Օղակը դարանակալ սպասում է գնդից դուրս և եթե կաքավն իր գլուխը մտցնի այդ օղակի մեջ, չի ազատվի, որովհետև հենց գլուխը ետ քաշեց, օղակը սեղմվելու է: Թռչունը չի փորձելու թափ տալ-կտրել մազը, որովհետև գլուխն ազատելու համար որքան ուժեղ քաշի վիզը, այնքան օղակը նեղանալու և սեղմելու է նրա կոկորդը: Ստիպված պիտի սուսուփուս կանգնի այդպես և սպասի իր վախճանին:
Քանի՛-քանի անգամ Աշոտը հոր հետ լուսադեմին սար է բարձրացել և տեսել կաքավներին շարքով կանգնած, օղակները վզներին, - կարծես բրիչներից կապած հորթեր լինեին... Այն ժամանակ հայրը շտապեցնում էր. «Ցեխը որ հալվեց, մազը միջից կհանեն- կթռչեն», - բացատրում էր նա: Հենց այդ ցեխն էլ, եթե պատկերավոր խոսենք, գերի կաքավի համար նույնն է, ինչ խարիսխը՝ ափին կանգնած նավի համար: Անշարժ կանգնիր, քանի խարիսխը վեր չի քաշված:
- Ախր ո՞ր կաքավը կհամաձայնի կամավոր գալ ու գլուխը կոխել էս օղակի մեջ, - Աշոտի բացատրությունները լսելուց հետո հարցնում էր Գագիկը:
Դրան Աշոտը չպատասխանեց: Նա չոր խոտ քաղեց, մանր կտրտեց հարդ դարձրեց և գրպանի հացի փշրանքը խառնեց այդ հարդին: Ապա չորս կտոր քարով չորս պատ կանգնեցրեց և մի փոքրիկ սալ դրեց այդ «պատերի» վրա: Ստացվեց մի թիզ լայնություն և մի այդքան էլ բարձրություն ունեցող տնակ, որի մեջ դրված էր ցեխի գունդը՝ օղակի ծայրերը մեջը թաղած: Դռնակի փոխարեն Աշոտը մի ճեղք էր թողել, իսկ օղակը այդ ճեղքում այնպես էր հարմարեցված, ինչպես շրջանակը պատուհանին: Այդ ճեղքի միջով ներսում երևում էր ուտելիք խառնած հարդը: Է՛, ձմեռը քաղցած կաքավը որ հարդ տեսնի և զգա ուտելիքի հոտը, գլուխն այդ ճեղքով ներս չի՞ մեկնելու: Մեկնելու է, կտուցով քրքրելու է հարդը և ետ քաշվելիս մազի օղակը ձգվելու և սեղմելու է նրա կոկորդը...
Աշոտին նայելով, տղաները նրա նման տնակներ էին կառուցում դարավանդներում ու հարդ պատրաստում չոր խոտերից: Իսկ Աշոտը վարպետությամբ լարում էր իր ընկերուհու մազից պատրաստված թակարդները...

Երբ արդեն մութ էր և հինգ թակարդ էր լարված, նրանք նորից խոտ քաղեցին, մանր կտրտեցին դանակով, ծեծեցին քարի վրա և հեռվից շաղ տալով եկան դեպի թակարդները, կաքավներին ճամփա էին ցույց տալիս...
- Հիմի որ էգուց մեր Շուշիկը կաքավի շորվա կուտի, - ուրախ ասաց Աշոտը և ձյունով սկսեց մաքրել իր ցեխոտ ձեռքերը:
- Սպասիր, պարզենք, հետո գնանք: Քանի՞ կաքավ պիտի բռնվի, որ շորվայից մեզ էլ բաժին հանես, - հարցրեց Գագիկը՝ Հասոյին աչքով անելով: Իսկ սա փոքրիկ կրակն էր թեժացնում, երևի չէր մոռացել գազանի մասին:
- Գնա՛նք, ձուկը ջրի մեջ առևտուր չեն անի... Թող բռնենք՝ հեշտ է, - անորոշ պատասխանեց Աշոտը:
Տղաները նոր հույսերով անձավ մտան: Առանձնապես լավատեսորեն էր տրամադրված Գագիկը:
- Մի տես շեկլիկ մազերդ ի՞նչ գործ են կատարելու, - ասում էր նա Շուշիկին:
Այդ երեկոն նրանք անցկացրին տեգեր պատրաստելով, և երբ յուրաքանչյուրն ստացավ իր նոր զենքը, տղաներն արդեն նույն զգացումն ունեին, ինչ ունենում է լիքը ատրճանակը կողքից կախած մարդը...
Այնուամենայնիվ, Աշոտը անհրաժեշտ համարեց նախորդ գիշերվա նման հերթապահություն սահմանել: Տղաները մինչև լույս հերթով հսկում էին կրակին և անձավի մուտքին:
Երբ բացվեց մեր պատանիների գերության քսանմեկերորդ օրը, Գագիկը շտապեցրեց.
- Գնանք մեր վառեկներին բերենք...
- Մի քիչ էլ սպասենք: Արևը ծագելիս կաքավները համ երգում են, համ քուջուջ անում, - պատասխանեց Աշոտը:
Ռոպեներն անցնում էին ժամերի ծանրությամբ: Բոլորի մտքում և երևակայության մեջ դարավանդներում բռնված կաքավներն էին:
Քաղցը այնպես դյուրագրգիռ էր դարձրել նրանց, որ Գագիկը գոռաց.
- Հիմի ցեխը կհալվի, բռնվածները կփախչեն, վեր կացեք...
- Կփախչե՞ն... - տենդագին Հարցրեց Շուշիկը տեղում վրա նստելով: Նրա հայացքը թափառում էր անձավում...
Հասոն գրկել էր իր բրդոտ ընկերոջ գլուխը և գաղտնի արտասվում էր. Բոյնախը այլևս չէր կարողանում ոտքի կանգնել: Իսկ Շուշիկի տեսքը ահարկու էր:
Տղան վեր ելավ տեղից և մի ածխակոթ վերցնելով, դուրս գնաց այրից:
Աշոտը ևս վեր կացավ դժկամությամբ, նրա կարծիքով դեռ շուտ էր: Բայց թուլացած տղաները մինչև տեղ հասան, արեգակը «չվանաչափ» բարձրացավ Հովազածորի արևելյան պատնեշից:
- Բռնվե՛լ են, - ճչաց Գագիկը թափթփված փետուրներ տեսնելով, բայց Աշոտի մռայլ հայացքին հանդիպելով, սառավ.
- Ի՞նչ ես հորթի նման տրտնգի տալիս, չե՛ս տեսնում, որ աղվեսը կերել է մեր որսը...
Տղաների թևերը թուլացան, իսկապես, ամբողջ դարավանդով մեկ փետուրներ էին ցրված...
- Ոչի՛նչ, հետքով գնանք, բնի մեջ բռնենք, - հույս տվեց Գագիկը:
- Ինչո՞վ ես բռնելու, - հեգնանքով հարցրեց Աշոտը: Կարծես ունելիով սեղմում էին նրա սիրտը, ինչպե՛ս ձեռքից գնաց պատրաստի որսը՛...
- Ծուխ կդնենք՝ կխեղդվի բնի մեջ:
- Որ խեղդվեց, ո՞նց ես հանելու... Սպասի՛ր, աղվեսին բնից չհանենք էլ, ոչի՛նչ, որ խեղդվի, էլ մեր թակարդների կողմը չի գա... հետքը գտեք...
Տղաների մեռնող հույսերը նորից վերակենդանացան, իրոք, եթե մեջտեղից վերացնեն այդ «ավազակին», բռնված կաքավները կմնան իրենց: Է՛հ, մեկ օր էլ կարելի է դիմանալ՝ պտուղներ հավաքելով: Իսկ վաղը առավոտյան արդեն կարելի է փետրել բռնված կաքավները, չէ՞ որ արդեն գտնված է նրանց որսալու հեշտ ու հասարակ ձևը:
Որքա՞ն մեծ բան է հարկավոր այդ հասակի պատանուն ոգևորելու համար: Եվ ահա այդ նոր հեռանկարից ոգեշնչված՝ տղաները սկսեցին փնտրել իրենց նոր հակառակորդին:
- Սպասեցե՛ք, - գոչեց Գագիկը:- Իսկ կաքավները ցերեկով քուջուջ չե՞ն անում:
- Դժվար թե... Արդեն մեզ տեսան այստեղ... Բայց երեկոյան դեմ էլի դուրս կգան արոտի:

- Որ այդպես է, եկեք մի ուրիշ տեղ թակարդներ սարքենք, հետո գնանք աղվեսի հետևից: Էլ ո՞ւր ենք սպասում էգուցվան, մենք հենց այս երեկո կարող ենք կաքավ ուտել...
Խելացի էր Գագիկի առաջարկը, ուստի նրանք տեղափոխվեցին մի այլ դարավանդ, որ ավելի վերև էր՝ հետևապես որսով ավելի հարուստ՝ և սկսեցին այնտեղ թակարդներ լարել: Մի բան վատ էր, որ այլևս ուտելիք չէին կարող խառնել հարդին:
- Իսկ եթե խոտի սերմեր խառնե՞նք, - հարցրեց Գագիկը:
Բայց ոչ ոք չկարողացավ ասել, թե կաքավը վայրի բույսերից որի՞ սերմն է ուտում, ուստի որոշեցին այդ օրը միայն «հարդը» դարձնել գրավչանյութ, քանի որ կաքավները սիրում են քուջուջ անել հարդի մեջ՝ նույնիսկ եթե նրա մեջ մի հատիկ էլ չլինի:
Փոսերում, քարերի շվաքում եղած ձյան մնացորդները հալվում էին-ծծվում հողի մեջ: Մեր տղաները չոքեչոք ցեխ էին հունցում թաց հողից, քարե տնակներ կառուցում, հևում ու ընկնում գլխապտույտից, բայց դեռ դիմանում էին:
Աշխատանքը հույս էր ներշնչում, իսկ հույսը պահում էր նրանց: Ի՞նչ արած, քանի շնչում էին պիտի աշխատեին, այլապես... .
- Լա՛վ, հերի՛ք է, գնանք աղվեսի հետքը գտնենք, - առաջարկեց Աշոտը և իր տեգը վերցնելով, առաջ անցավ:
Նրանք հասան բզկտված թռչունների փետուրներով ծածկված դարավանդը և սկսեցին փնտրել գազանի հետքը:
- Գտա՛... Ի՜նչ մեծ աղվես է եղել, - գոչեց Գագիկը՝ ցեխի վրա տպված հետքը ցույց տալով:
Աշոտը նայեց հետքին ու գունատվեց:
- Ի՜նչ աղվես... մեծ գազան է... - շշնջաց նա և գոչեց. - Ածխակոթերը վառ պահեցեք... Քարեր գցեցեք... Աղմկեցե՛ք...
Նրա երկյուղը անհիմն չէր. աներևույթ գազանը իր նախաճաշը կատարել էր քիչ առաջ, արևածագին...
Տղաները քարեր գլորեցին, աղմկեցին և երբ իրենց կանչերից մի քիչ սրտապնդվեցին, Գագիկն ասաց.
- Մի լավ նայիր, Աշո՛տ, գուցե սխալվում ես:
- Ի՞նչ նայեմ, պարզ չի՞ որ... Մի տես ինչքան մեծ է...
- Գուցե գայլ է եղել, իզուր մենք վախենում ենք:
- Չէ, գել չի, - հետքը ուշադիր նայելուց հետո իր կարծիքը հայտնեց «գայլի մասնագետ» Հասոն: - Գելի ռադը[20] սրանից փոքր է ու երկարուկ:
- Եվ մեջտեղի երկու ճանկերը երկար, - լրացրեց Աշոտը այնպիսի շեշտով, որ հասկացնել էր տալիս, թե՝ «քո կյանքը գայլերի հետ է անցնում, բայց մենք էլ պակաս չենք ծանոթ էդ գազանին»:
- Հա՛, երկու մատը առաջ է ցցված, ճանկերն էլ բաց, - հաստատեց Հասոն: - Իսկ սրա ճանկերը բաց չեն...
Ասաց և իր խոսքից ահը շատացավ նրա մեջ, կարծես նոր ըմբռնեց, թե ինչ սոսկալի գազան է ապրում այրի մոտերքում:
- Իսկ ո՞ւր են ճանկերը, - միամտորեն հարցրեց Գագիկը:
- Ծալել է դանակների նման... որ չբթանան... Գնա՛նք...
Աշոտն էլ չգիտեր ո՞ւր գնան: Երկար ժամանակ նրանք մնացել էին դարավանդում մոլոր կանգնած:
Ինչպե՞ս, ի՞նչ երեսով ներկայանան նրանք իրենց ընկերուհուն, - որի մեջ կյանքը հետզհետե մարում էր ձեթը վերջացած ճրագի նման...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչպես մահը դանդաղ, բայց հաստատուն քայլերով մոտենում էր բնակարան-անձավին

Շուշիկին նրանք գտան գրեթե անզգա վիճակում:
- Շարունակ ասում էր՝ մրսում եմ, - տխուր հաղորդեց Սարգիսը:

[20] Ռադ – հետք, ոտնատեղ:

Ձեռք տվին ոտքերին՝ սառն են: Փայտը նորից վերջացել էր, ինչո՞վ թեժացնեին մարվող կրակը: Վառելիքի գնալու ո՛չ սիրտ կար, ոչ ուժ: Ի՞նչ իմանաս հիմա գազանը Կաղնուտում դարան մտած քեզ չի՞ սպասում...
Կամ ինչու Կաղնուտում, նա կարող է դարան մտնել հենց այրի դիմացի թփերի մեջ: Երեք շաբաթ շարունակ հետևելով այս երկոտանի արարածներին, գազանն անշուշտ համոզվել էր, որ նրանք զենք չունեն: Գոնե այդպես էր դատում Աշոտը: Եվ պարզ է, որ կաքավները մարսելուց հետո պիտի գա շուն կամ մարդ փախցնելու, - Հովազաձորում ուրիշ ի՞նչ հարմար որս կա նրա համար:
Այդ ծանր մտքերն էին պաշարել Աշոտին, երբ լսվեց Շուշիկի թառանչը. «Ջո՛ւր...»:
Ջուր ևս չկար: Քարե գուշը արդեն ցամաքել էր, որովհետև մոտերքում այլևս ձյուն չէր մնացել, որ լցնեն մեջը: Ձյուն կարելի էր բերել, բայց հարկավոր էր նախ վառելիք գտնել, առանց կրակի ջուր չես ստանա:
Տղաները լուռ դուրս եկան անձավից. վառվող փայտ անգամ չկա, որ վերցնեն հետները:
- Սարգի՛ս, կրակն անթեղի՝ թող չհանգչի, հիմա մենք կգանք, - ասաց Աշոտը, բայց նրա ձայնը նախկին վստահությունը չուներ:
Տեգերը ձեռքներին նրանք իջան Կաղնուտը: Քարե կացինը հետները չէին վերցրել, ուժ չկար: Իսկ ձեռքով ջարդելու այլևս ճյուղ չէր մնացել: Ստիպված դանակով մատի նման բարակ ճյուղեր կտրտեցին-խրձեր արին: Բայց ավելի շատ պառկում էին գոլ խաշամին, քան աշխատում:
Թողնեն մարդ մոռանա ամեն բան աշխարհում և այսպես քնի-մնա խաշամի մեջ...
Ձյունից նոր ազատված մի փոսում Աշոտը թփեր գտավ և նրանց վրա չորացած մոռի հատիկներ: Քաղեց գցեց գրպանը: Գագիկը երկու կաղին էր գտել, մեկը կերել, մյուսը պահել Շուշիկի համար: Իսկ Հասոն ժայռից կախված հաղարճի թփից չորացած հատիկներ էր քաղել, ընդամենը չորս հատ հաղարճ...
Վերջապես իրենց բեռով նրանք մտան անձավ, ձյան գունդը դրին մի կողմ, կրակը բորբոքեցին:
Մինչև երեկո հազիվ հաջողվեց թեյ պատրաստել, որի մեջ լողում էին Հասոյի գտած չորս հաղարճները և Աշոտի բերած կես բուռ մոռը..
Այնուամենայնիվ տաք ջուրը մի փոքր աշխուժացրեց հիվանդին. կարծես մարվող ճրագին մի քանի կաթիլ ձեթ ավելացրին...
- Ի՞նչ եղան կաքավները... ճամփան չե՞ք բացում... Ինչո՞ւ եք տխուր...- ուշքի գալուց հետո քնից նոր արթնացածի նման կցկտուր հարցեր էր տալիս Շուշիկը:
Ոչ ոք նրան չպատասխանեց:
- Չգնա՞նք թակարդների կողմը, - հարցրեց Գագիկը:
- Ի՞նչ գնանք, նորից կերած կլինի, - ձեռքը անհույս թափ տվեց Աշոտը:
- Ո՞վ կերած կլինի... Ինչո՞ւ եք այդպես խորհրդավոր խոսում... Մրսում եմ, Աշո՛տ...
Դե նրան հո չէին ասի գազանի մասին, խուսափեցին պատասխանելուց: Ասենք, նա պատասխանին չսպասեց էլ, արդեն նորից ինքնամոռացության մեջ միայն չորացած շրթունքներն էր շարժում:
- Լա՛վ գնա՛նք, - համաձայնեց Աշոտը:
Տղաները լուռ դուրս եկան անձավից և մի քանի քայլ անելով՝ կանգ առան, թփերից խշտոց լսվեց, մթնշաղի մեջ մի ճկուն մեջք գալարվեց և հազիվ նկատելի շողացին մի զույգ աչքեր...
- Խփեցե՛ք, խփեցե՛ք, - ահաբեկված կանչեց Աշոտը քարեր նետելով, ապա ետ վազեց ու հևիհև ընկավ անձավը: Ընկերները հետևեցին նրան: Բոյնախը հազիվ բացեց մի աչքը, իսկ Սարգիսը՝ վրա նստած հարցնում էր տագնապով.
- Էն ի՞նչ էր... էն ի՞նչ էր... Իմ տեսած վա՞գրն էր...
Դեռ երեկո էր, երբ վառելիքը նորից վերջացավ: Մեր պատանիները դողում էին ցրտից: Բայց դողում էին ոչ այն պատճառով, որ օջախի վառելիքն էր վերջացել, այլ այն պատճառով, որ վերջացել էր իրենց օրգանիզմի «վառելիքը»:
- Մրսում եմ... - երբեմն լսվում էր Շուշիկի թույլ բողոքը: Բայց ոչ ոք սիրտ չարավ այրից դուրս գալու, գիտեին, որ մոտերքում դարան է մտել կատվացեղ գազանը...
Կրակ էր մաղվում հովիվ պատանու գլխին, սիրտը կարծես սեղմում էին պողպատե աքցանով: Ի՞նչ աներ, ինչո՞վ օգներ իր աչքի լույս «քուրացվին»: Կամ ինչպես փրկեր իր բրդոտ ընկերոջ կյանքը:

Իր պիջակով նա Շուշիկին էր ծածկել, բլուզը գցել էր Բոյնախի մեջքին, իսկ ինքը, խաշամի մեջ կուչ եկած, մտածում էր: Տղաները լուռ նստած էին ծխացող խարույկի շուրջը և բռունցքներով տրորում էին իրենց կսկծացող աչքերը:
«Կմեռնի... եթե սնունդ չհասցնենք՝ կմեռնի...», - այս ահավոր միտքն էր յուրաքանչյուրի գլխում:
- Լա՛վ, գնանք թակարդների կողմը, գուցե մեր բախտից... - վճռեց Աշոտը:
Մի-մի ծխացող ձող ձեռքներին, դուրս եկան անձավից: Բոյնախը, չգիտես ինչու, հավաքեց վերջին ուժերը և քարշ եկավ տիրոջ հետևից:
- Մնա, Բոյնախ ջան, ո՞ւր ես գալիս, - մեղմ շոյում ու համոզում էր Հասոն:
Շունը չենթարկվեց: Նա լարվեց, ականջ դրեց, հոտոտեց օդը և սկսեց տագնապով ծմրալ ու դողալ:
Ընկերները առաջ էին անցել, իսկ Հասոն անձավի մոտ դեռ համոզում էր հիվանդ շանը, երբ Աշոտը նկատեց, որ թփերը խլրտացին, նրանց մեջ մի ճկուն մեջք երևաց, ֆոսֆորային փայլով վառվող երկու աչքեր ու մի գազան ցատկեց Հասոյի վրա... Նույն վայրկյանին, երբ գազանը դեռ թաթերն առաջ մեկնած օդում էր, հիվանդ շունը ծառս եղավ, նրա «գիրկը նետվեց» և երկու կենդանիներ իրար գզելով գլորվեցին զառիվայրով դեպի ցած...
- Խփեցեք... խփեցեք... հայ-հայ, - երկյուղից որոտաց Աշոտը՝ ձեռքի ածխակոթը օդում ճոճելով:
Տղաները, սարսափով բռնված, աղմկեցին, քարեր ու վառվող փայտեր նետեցին դեպի ցած և տեսան, որ գազանը բաց թողեց շանն ու փախավ-անհետացավ խավարում:
Այդ բոլորը կատարվեց ընդամենը մի քանի վայրկյանում, այնպես որ Հասոն անակնկալ դեպքից նոր միայն ուշքի եկավ ու գոռալով ցած վազեց.
- Վա՛յ, Բոյնախ ջան, վա՛յ, ախպեր ջան...- մղկտում էր նա՝ իր փրկարարին շուռումուռ տալով:
Տղաները ալեկոծված ու դողդողալով, շանը վերցրին, տեղափոխեցին անձավը ու պառկեցրին փափուկ խաշամի մեջ: Նրա վզից արյուն էր ծորում...
Սարգիսը ձայներից վեր էր թռել սարսափահար ու իր «անկողնում» նստած հարցնում էր շնչակտուր.
- Ի՞նչ է պատահել... էն ի՞նչ էր, հովա՞զ էր, թե ուրիշ բան...
- Լավ չտեսանք, - մռայլ պատասխանեց Աշոտը: - Գուցեև լուսան էր. - շարունակում էր հույս տալ իրեն և ընկերներին: Այգեձորում բոլորը գիտեին, որ լուսանը թեպետ նույնպիսի կատվացեղ գազան է, ինչ հովազը և արտաքինով էլ նման է նրան, բայց հովազի ուժը, համարձակությունը և անամոթությունը չունի:
Հասոն տնքացող սրտով զբաղված էր իր վիրավոր ընկերոջով: Իր շորի փեշը նա կտրեց, վառեց խարույկի վրա և նրանով դաղեց վերքը: Արյունը կտրվեց, բայց շունը շնչում էր ծանր, ընդհատումներով: Գագիկը առաջին անգամ շոյում էր նրա գլուխը և ցավ էր զգում, թե ինչո՞ւ մի բան չկա, որով հյուրասիրի այդ անձնվեր կենդանուն:
Իրոք, անձնվեր...
Գուցե սնունդ գտնեին և հետզհետե ապաքինվեր Բոյնախը, բայց հիմա արդեն հույս չկա: Զոհվեց իր տիրոջ համար, նրա կյանքը փրկելու համար...
- Բոյնա՛խ, - մեղմ կանչում էր քուրդ պատանին:
Շունը աչքերը բացեց, բարեկամաբար շարժեց պոչը և լիզեց տիրոջ ձեռքը:
Որքա՜ն արտահայտիչ էին նրա աչքերը, որքա՜ն թախծոտ խաղաղություն կար նրանց մեջ:
Կարծես գոհ էր, որ մեռնում է...
Գիշերը ծանր անցավ, շատ ծանր: Կրակն անթեղել էին, որ չհանգչի: Ցուրտը սաստկանում էր, Շուշիկի տնքոցները դառնում էին թույլ, մարվող:
Մեր պատանիները գալարվում էին ցրտից ու քաղցից և ոչ ոք չկարողացավ աչք փակել այդ գիշեր: Միայն լուսադեմին նրանք թմրեցին, բայց դա քուն չէր, այլ մղձավանջ...
Երբ լուսացավ, Բոյնախը վերջին անգամ լիզեց Հասոյի ձեռքերը, վերջին անգամ նայեց նրան իր բարի, իր երախտապարտ հայացքով, և տղան տեսավ, թե ինչպես խավարում են իր ընկերոջ աչքերը...
- Բոյնախ ջա՛ն... ախպեր ջա՛ն...
Ընկերները հասկացել էին ամեն ինչ և լուռ ու մտախոհ նայում էին մարած կրակին...

Ծանր մտքեր էին պաշարել նրանց: Բոյնախն էլ գնաց, իսկ ի՞նչ է լինելու իրենց վիճակը, ի՞նչ է սպասում իրենց հիվանդ ընկերուհուն...
Այդպես բացվեց նրանց գերության քսաներկուերորդ օրը...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչպես ձախորդությունն էլ, հաջողությունն էլ մարդուս այցի գալիս՝ միշտ ընկերով են գալիս

Իզուր չանցավ Բոյնախի մահը: Իր մահով նա փրկել էր ոչ միայն իր սիրելի տիրոջը, այլև մի հրաշալի աղջիկ: Շուշիկի դրությունը օրեցօր սկսեց լավանալ:, Դրան նպաստեց և ազատության աճող հույսը. տղաները հիմա կուշտ էին և ուժ էին զգում իրենց մեջ՝ աշխատանքը շարունակելու «Դիվային կածանի» վրա:
Եվ ահա երկու օր այրի մեջ փակված մնալուց հետո, իրենց գերության քսանչորսերորդ օրը նրանք տեգերով զինված դուրս ելան անձավից:
Այլևս ուշացնել չէր կարելի, որքան էլ որ վտանգը հսկեր շեմքում: Նրանք հույս չունեին, թե իրենց կհաջողվի նորից սնունդ գտնել, թվում էր այդ ձորում մնացել են միայն մերկ ժայռերը, ճյուղակոտոր այլանդակ ծառերը և մեկ էլ քաղցած գազանը, որը ավելի շատ ուտելու շանսեր ուներ, քան ուտվելու:
Ուրեմն, ի՞նչ էր մնում մեր գերիներին, եթե ոչ՝ ամեն բան մի կողմ դնել, անգամ մահու ահը և մի քանի օր եռանդուն աշխատելով, բացել ճամփան:
Նրանք խելք-խելքի տվին և որոշեցին, որ անծանոթ գազանից պաշտպանվելու գործում իրենց ամենազորեղ դաշնակիցը դարձյալ կրակն է լինելու: Որոշեցին ուր էլ գնան՝ հետները ծուխ արձակող փայտեր ունենան:
Այդպիսի փայտերով զինված նրանք դուրս եկան և ահով տեսան, որ ինչ-որ մեկը խնամքով հավաքել է այրից դուրս նետված ոսկորները:
Պարզ էր, որ գազանը չի հեռանում այրի շրջակայքից...
Տղաները անձավի շեմքից աղմկեցին, քարեր նետեցին, օդում պտտեցին ծխացող փայտերը: Հետզհետե սիրտ առան իրենց ձայներից և շրջապատն ուշադիր նայելով իջան անտառակը:
- Էսօր էլ է բան կերել, մի՛ վախենաք, տղերք, - սիրտ էր տալիս Աշոտը, անհետացած ոսկորները հիշելով:
Նրանք մի-մի գիրկ ցախ տարան անձավ, հանձնեցին Սարգսին և իջան ձորը: Ներքևում, «բնակարաններից» հեռու, վառելիք կարելի էր ճարել, եղևնու թփերին ձեռք տվող չէր եղել: Այդտեղ, Դիվային կածանի այս ծայրին, Աշոտը շունչ առավ և ասաց ընկերներին.
- Եկեք եղևնիներ ջարդենք, կածանի ամենանեղ տեղը կրակ անենք... զգուշության համար...
Հարցնելու կամ առարկելու կարիք չեղավ, պարզ էր Աշոտի միտքը, ներքև անդունդն էր, վերև՝ ուղղահայաց վեր գնացող ժայռը, դիմացը փակ էր, ուրեմն վտանգը կարող էր միայն հետևի կողմից՝ բացած կածանով մոտենալ խմբին:
Ահա այդ կածանի մեջտեղը, նրա ամենանեղ մասում էր, որ խումբը կրակ վառեց և վերսկսեց ընդհատված աշխատանքը: Մի քանի օր հանգստանալուց և լավ սնվելուց հետո նրանք այժմ աշխատելու բավական եռանդ էին զգում իրենց մեջ:
Այնպես որ երկու օր աշխատելուց հետո վերջապես ձյունը մաքրելով հասան այն տեղին, ուր ժայռը կռացել էր կածանի վրա և ստացվել էր մի կողը բաց թունելի նման մի բան: Այդտեղ արդեն շատ դժվար էր, բուքը այդ թունելը լցրել էր ձյունով, որը դուրս տալու համար նորից ու նորից սնունդ էր հարկավոր, իսկ քարայրում այլևս ոչինչ չէր մնացել ուտելու:
Ի՞նչ անեին, գոնե գազանը չհետապնդեր իրենց... Այդ երեկո տղաները սառն օջախի շուրջը նստած լուռ մտածում էին:
- Մեզ միայն վայրի այծերը կարող են փրկել, - վերջապես վճռեց Աշոտը:
Ոչ ոք ոչինչ չհասկացավ, այծերն ինչպե՞ս պիտի կանխեին խմբի գլխին կախված մեծ վտանգը:
- Եթե այծերը վերադառնան, գազանը մեզնից ձեռ կքաշի, կզբաղվի նրանցով, - իր միտքը բացատրեց Աշոտը:
- Հը՛մ... դու սպասիր, թե այծերը պիտի գան քեզ փրկեն... Ինչի՞ պիտի գան որ...

- Կգա՛ն, Գագի՛կ, վաղը դեկտեմբերն ենք մտնում, ուզեն-չուզեն պիտի գան: Սկսվում է նրանց հարսանիքների շրջանը: Իսկ հարսանիք նրանք Հովազաձորում են անում, հայրս է ասել..,
- Է՛հ, որսորդական փչոց է, - ձեռքը թափ տվեց Գագիկը: - Էդ որսորդներն էլ ի՞նչ ասես հնարում են: «Չե՞ս հավատում՝ գնա ստուգիր»: Դե ոնց ստուգես: Չեմ հասկանում, թե մեր սիրուն հանդերը թողած, այծերն ինչի՞ պիտի գան էս բանտը մտնեն...
Այստեղ արդեն Աշոտին հակաճառել չես կարող, որովհետև պիտի հերքես և՛ նրան, և՛ մեծ փորձ ունեցող իր հորը:
Իսկ հայրը Աշոտին պատմել էր, որ «հարսանիքի» շրջանում արու քարայծերը տարված են լինում իրենց կռվով, դառնում են անզգույշ, մոռանում են վտանգը: Դրանից օգտվելով գայլերը հարձակվում են նրանց վրա:
Ճիշտ է, Հովազաձորում ևս վտանգը հետևում է նրանց՝ երբեմն հովազ է երևում այստեղ: Բայց ձորից դուրս վտանգն անհամեմատ մեծ է՝ Է՛լ հովազ, Է՛լ գայլ, Է՛լ լուսան, Է՛լ որսորդները,, ամեն մեկն իր բաժինն է պահանջում քարայծերի ցեղից...
Այդ ժամանակ, երբ այծերը տարվում են իրենց մոլեգին կռվով, դեպքեր են լինում, որ նույնիսկ ֆերմայի գամփռները քարայծ են բռնում: Ահա այդ է պատճառը, որ այդ կենդանիներն իրենց, «հարսանիքներն» անում են ապահով վայրերում:
Աշոտը ասաց այդ բոլորի մասին և նորից կրկնեց իր միտքը.
- Ա՛խ, քարայծերը երևայի՛ն... Թե որ փրկվենք, նրանց շնորհիվ ենք փրկվելու...
Այդպես ծանր էր մեր պատանիների վիճակը և ծանր խոհեր էին համակել նրանց:
Դեռ, ասենք, գազանից կարելի էր պաշտպանվել անձավում, կրակի հետ դաշնակցած: Կարելի էր նույնիսկ խմբով հարձակվել, գոռում-գոչյունով վախեցնել-քշել նրան: Իսկ սնո՞ւնդը, որտեղի՞ց ճարեին, ինչպե՞ս դիմանային ահավոր քաղցին, որ սկսել էր նորից վիշապի նման լափել նրանց ներսը:
Բայց ինչպես որ ձախորդությունները զույգ-զույգ էին այցելել մեր պատանիներին, այնպես էլ հաջողությունը որոշեց ընկերով գալ նրանց մոտ:
Քսանյոթերորդ օրը, երբ տղաներն ուտելիքի փոխարեն քաղցր խոսքեր էին թողել իրենց հիվանդների համար և գլխիկոր գնում էին աշխատանքը շարունակելու, Աշոտը կանգ առավ ուռենուց ներքև, Հովազաձորի միակ հարթության եզրին, և ընկերներին ասաց.
- Սիրտս չի կտրվում շլդիկի փորած անցքից: Ինձ թվում է, այնտեղ մի բան կա: Թե չէ նապաստակը ինչո՞ւ պիտի քարի փչակները թողած՝ ձյունը ծակեր:
- Դե գնա, մենակ թե չմոռանաս գտածդ հետս կիսես, - հեգնեց Գագիկը: - Նույնիսկ եթե բան է եղել, լուսահոգի շլդիկը կերել է՝ հետո գնացել արծվի փորը...
- Չէ՛, քանի ուժ կա ոտներումս, գնամ ստուգեմ, - վճռեց Աշոտը և շիլայի նման թաց ձյան մեջ խրվելով՝ գնաց-հասավ նապաստակի փորած թունելին, որ արդեն հալվել-փուլ էր եկել և կորցրել իր նախկին տեսքը:
Այդտեղ ձյան մակերեսի վրա մեկնված վազեր կային, չորացած տերևները վրան խաղողի վազեր:
Տղան մեկ-մեկ վեր քաշեց այդ վազերը, ձյունը թափ տվեց նրանց վրայից՝ ոչինչ չկա: Է՛հ, մեր հարավային երկրում քի՞չ վայրի վազեր կան, որոնք կամ պտուղ չեն բռնում, կամ եթե բռնում էլ են՝ մարդուց առաջ վայրի կենդանիներն են այցի գալիս նրանց ու մաքրազարդում: Աշոտը ձեռքը հուսահատ թափ տվեց և շուռ եկավ, որ ետ գնա, երբ ոտքերը խճճվեցին մի անտեսանելի թփի մեջ: Նա կռացավ, ոտքերը ազատեց և տնքալով վեր քաշեց ձյան տակ մեկնված մի ճյուղ: Վեր քաշեց, տեսավ նրանից կախված սև ողկույզները և ցնծագին գոչեց.
- Տղե՛րք, խաղո՛ղը, խաղո՛ղը...
Գագիկն ու Հասոն զգացին, որ իրենց ոտքերի ուժը միանգամից ավելացավ: Հալ ընկած ձյան կույտերի մեջ խրվելով և իրար հրմշտելով, վազեցին-տեղ հասան և վրա ընկան խաղողին: Բայց Աշոտը նրանց թափը կոտրեց իր սառը վերաբերմունքով:
- Կարգո՛վ, կարգո՛վ, - գոչեց նա, ողկույզներով բեռնված վազը մի կողմ տանելով:- Մոռացա՞ք, որ հիվանդներ ունենք: Առաջին հերթին՝ հիվանդների՛ն...

Եվ եղած չորս ողկույզներն էլ խնամքով կտրեց ու դրեց ձյան վրա: Ընկերները ագահությամբ նայում էին հյութեղ պտուղներին և դարձել էին անհամբեր:
- Փնտրեցե՛ք, գուցե էլի կլինի...
Իզուր էր Աշոտի խստությունը. շուտով պարզվեց, որ ձյան տակ թաքնված խաղող շատ կա: Ձյունը տեղացել էր դեռևս տերևները չթափած թփերի վրա և խնամքով ծածկել նրանց տակ ծվարած սև ու արևագույն ողկույզները: Սառը, բայց հաստ վերմակով ծածկված լինելով, խաղողը չէր ցրտահարվել, թեև վերջին օրերի ձնհալը մեծ սպառնալիք էր նրա համար:
- Հիմի հասկացա՞ք, թե ինչու սիրտս չէր կտրվում նապաստակի թունելից: Դե, կերեք: Կուշտ կերեք, նոր սկսենք մեր այգեկութը:
Պատանիները ագահությամբ ուտում էին քաղցր ու հյութալի պտուղները և թվում էր իրենց կյանքում առաջին անգամ են այդպիսի խաղող ճաշակում: Ամեն գովասանքից վեր բան էր նրանց կերածը, պարզ էր, որ Արարատյան դաշտում նման խաղող չէր եղել և չէր էլ կարող լինել... Գոնե այդպես էր թվում նրանց: Ողկույզներով ծանրաբեռնված նոր թփեր վեր քաշեցին ձյան տակից և մեր պատանիների տրամադրությունը միանգամից բարձրացավ: Իսկույն մոռացան իրենց կրած տանջանքները և կարծես այլևս ոչ մի դժվարություն ու վտանգ չկար նրանց առջևում:
Գի՜ժ ջահելություն, որ միշտ անհոգ ես ու լավատես...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես մեր տղաները ջանում են պարզելու խորհրդավոր այգու գաղտնիքը

Երբ լավ կշտացան և ուշքի եկան, նոր միայն գլխի ընկան, որ իրենք մի շատ մեծ գյուտ են արել, բոլոր նշաններից երևում էր, որ իրենց կերածը վայրի խաղող չէր: Ճիշտ է, ողկույզները փոքր էին, նոսր, պտուղներն անհավասար՝ մեկը շատ խոշոր, մյուսները շատ մանր (այդպիսի տեսք վայրի խաղողն է ունենում), բայց նրանք այնպիսի տեսակների էին հանդիպել, որոնցից բնության մեջ չկա: Դրանք հազարամյակների ընթացքում ստացել են Արարատյան դաշտի հին բնակիչները, որոնք խաղողի մշակույթով էին զբաղվում նույնիսկ մեր էրայից շատ դարեր առաջ[21] : Ահա մարդուս բթի չափ խոշոր ու մսոտ «կարմիր կախանին», որ հայ գյուղացու մառանում կախված՝ դիմանում է մինչև գարուն և երբեմն էլ մայիսմեկյան տոներին պատվով բազմում նրա ճոխ սեղանին, որպես հին բերքի վերջին նմուշ: Ահա «ոսկեհատը», որն աչքի չի ընկնում իր արտաքինով, բայց այնքան քաղցր հյութ ունի, որ նրանից պատրաստած գինին «պորտվեյն» ու «մադերա» դարձնելու համար այլևս կարիք չի զգացվում լրացուցիչ սպիրտի, որովհետև հասունացած, դեղնած ոսկեհատը մինչև 30 տոկոս պտղաշաքար ունի իր մեջ: Ահա «իծապտուկը», որ երկար է այծի պտուկների նման և այնպես թափանցիկ, որ հունդերը պարզ երևում են պտուղների մեջ:
- Մի դեսը նայիր, Աշո՛տ, իսկապես, օրիորդի քնքուշ մատներ. լա՛վ անուն են դրել չէ՞, տես, ինչքա՜ն նուրբ են, ինչ բարակ ու երկար՝ ազնվական աղջկա մատների նման: Մարդ ափսոսում է, որ ուտի, - ասում էր Գագիկը, մի շողշողուն ողկույզ արևի դեմ պահած:- Ափսո՛ս, որ լուսահոգի շլդիկը չի հասկացել, թե ինչ ազնիվ սորտի խաղող է իր կերածը...
- Հիմի հասկացա՞ք, թե այստեղ ինչ գործ ունեին կրիան ու ոզնին... Ուրեմն մեր ենթադրությունը ճիշտ դուրս եկավ:
Այո՛, Աշոտը այս անգամ ասաց «մեր» ենթադրությունը:
- Իսկ ճնճղուկնե՞րդ.. - Հասոյին աչքով անելով հարցրեց Գագիկը:
- Այո՛, ճնճղուկները տեսնելուն պես, ես... մենք եզրակացրինք, որ մարդ է ապրել Հովազաձորում... Այդպես է, բնության մեջ մի նշանից պիտի մյուսը հասկանալ... Պա՛հ, ինչքա՜ն խաղող կա...
- Դուք սորտերը որոշեցեք, ես գնացի...

---

[21] Մեզնից 2400 տարի առաջ, երբ հունական բանակի մի զորասյուն անցնում էր Հայաստանով՝ Սև ծովի ափը հասնելու հույսով, հույն զինվորները Արարատյան դաշտի գյուղերում խաղողի գինի էին խմում և կարասներում պատրաստված գարեջուր (իր գրքում այդ մասին է վկայում նույն զորասյան հրամանատար Քսենոֆոնը, որը իր ժամանակի պատմագիրներից էր:)

Այս ասելով, Հասոն մի ճյուղի վրա շարեց ձյան վրա կույտ արած ողկույզները և շտապեց դեպի վեր. իր «քուր» Շուշիկին աչքալուսանք էր տանում...
- Սպասի՛ր, Հասո՛, վտանգը մոռացա՞ր, - նրան կանգնեցրեց Աշոտը:- Ածխակոթերը միացրու էն չոր տեղը կրակ արա... Երբ կանգնած ենք՝ կողքներիս կրակ պիտի լինի, երբ գնում ենք՝ ձեռքներիս ածխակոթ... Իմացա՞ր...
Հասոն լուռ աջ ձեռքը դրեց աջ աչքին և սկսեց կրակի պատրաստություն տեսնել, իսկ Աշոտն ու Գագիկը խելք-խելքի էին տալիս լուծելու խորհրդավոր այգու գաղտնիքը:
- Այս այգին ուրեմն մարդ է տնկել... - մտախոհ ասում էր Աշոտը:- Ո՞ւմն է հարկավոր եղել այս այգու պտուղը, ախր այստեղից բերքը հնարավոր չի դուրս տանել:
- Պարզ է, սրա տերը նստել է այստեղ, ամբողջ բերքը կերել ու ձմեռնամուտին արջի նման «չաղացած» լնգլնգալով գնացել գյուղ, - իր կարծիքը հայտնեց Գագիկը:
Աշոտը չարձագանքեց ընկերոջ կատակին, նրա հայացքն ասում էր. «Ավելի լուրջ բան մտածիր»:
- Սպասի՛ր, Աշո՛տ, ես այս այգու գաղտնիքը գտա: Սպասիր, ասեմ, թե ինչ նպատակով են հիմնել այս այգին և, քանի մարդ չկա, կաց գլխիդ մի խրատ կարդամ լճավանցի Ասատուր պապի լեզվով: Նա որ այստեղ լիներ, անպայման կասեր՝ երեխեք ջան, աշխարհումս քանի որ մահը կա, մարդ պետք է էնպես գործ անի, էնպես հիշատակ թողնի, որ իրեն մահից հետո էլ կենդանի մնացած մարդիկ նրա աշխատանքի պտուղը քաղեն ու բարի հիշեն նրան: Տեսե՞ք, էս բաղը գցողը ո՞վ գիտի ե՞րբ է մեռել-հող դառել, բայց էս սարերում մոլորված-ծարաված որսորդն էլ է գալիս նրա գցած բաղի պտուղով սիրտը հովացնում, վիրու անասուններն էլ են գալիս խաղող ուտում ու իրենց կենդանական լեզվով օրհնում էս բաղը գցողին... Հիմի իմացա՞ր ինչու են այս այգին հիմնել:
Գագիկը զարմանքով նկատեց, որ իր իմաստուն ու պաթետիկ ճառը ոչ մի ազդեցություն չի գործում ընկերոջ վրա. սա լուռ ինչ- որ մտքերով էր տարված և կարծես իրեն չէր լսում:
- Զարմանալի է, ո՛վ, ի՞նչ նպատակով է չարչարվել այստեղ այգի գցել, - մտախոհ կրկնում էր նա: - Չէ, երևի սա մարդու ձեռքի գործ չի:
- Ո՞նց մարդու գործ չի, ուրեմն «կարմիր կախանի» սորտը նապաստակնե՞րն են ստացել... սելեկցիայի միջոցով: Ահա և քեզ մի ճութ «եզան աչք...», բա սա մարդի ձեռքի գործ չի՞... Պա՛հ, մի դենը նայի՛ր, Աշո՛տ, տե՞ս հին առվի հետքը. առու են բերել այգին...
Իսկապես, լանջին հազիվ նկատելի էր հինավուրց առվի հետքը:
- Հետո, տե՞ս, սղոցել են այս կոճղը, որ վազը ջահելանա... Չէ, սա մարդի ստեղծած այգի է, ես դա հաստատ գիտեմ: Ես իմ պապից լսել եմ, որ դաշտի գյուղերից մի բարի ծերունի բարձրացել է ժայռերը, նրանց մեջ մի կտոր հող գտել, թմբեր կապել, վազեր տնկել ու ասել՝ թող իմ մահից հետո վիրու կենդանիներն ուտեն իմ վազերի բարն [22] ու ինձ ողորմի տան... Գուցե սա հենց այդ այգին է:
- Սպասի՛ր, Գագի՛կ, մեզ՝ պատանի բնասերներիս համար՝ հետաքրքիր գործ բացվեց: Եկ ուսումնասիրենք: Իմացիր, որ այս այգին մեծ գործ է կատարելու Արարատյան դաշտի կոլխոզների համար և առաջին հերթին, մեր գյուղի համար: Դրա մասին հետո կասեմ, առայժմ արի մի լավ ուսումնասիրենք: Այսպիսի մի կարևոր գործի համար կարելի է նույնիսկ այսօր մի քիչ ուշ աշխատանքի գնալ:
Աշոտի աչքերը փայլում էին արտասովոր կերպով, պարզ էր, որ նրա գլխում շատ կարևոր և անսովոր մտքեր էին ծնվել:
Նրանք սկսեցին ուշադիր զննել շրջակայքը:
Իսկապես, մի հին առվի հետք ուռիների մոտից ձգվում էր դեպի այգին: Կալի չափ այդ տափարակը, որի ներքին պռնկին եղեգներ էին բուսել և ուռի ու թեղի ծառեր, ըստ երևույթին, մի հին ավազան էր, որ ժամանակի ընթացքում լցվել էր տիղմով:
- Պարզ է, - այդ նշանները դիտելուց հետո իր եզրակացությունը տվեց Աշոտը: - Հիշո՞ւմ ես, որ հեղեղն այդ տափարակով անցավ: Դա ուրեմն ջրամբար է եղել, որ լցվել է այրից բխող պատահական հեղեղից: Մարդն այդ ջրով քիչ-քիչ ոռոգել է իր այգին: Բայց ի՞նչ մարդ է եղել դա, ինչո՞ւ է եկել-հաստատվել

[22] Բար - պտուղ

աշխարհից կտրված և մարդկանցից անիծված այս ձորում... Մենք պետք է այդ մարդու բնակարանը գտնենք, նա մի տեղ ապրե՞լ է, թե ոչ, - հանկարծ իր ճակատին խփելով բացականչեց նա:
- Ափսո՜ս, բնակարանի հասցեն չի թողել...
- Թողել է, - պնդեց Աշոտը, - նա տարիներ շարունակ ամեն օր գնացել-եկել է իր այգին, այնպես չէ՞: Ուրեմն այս այգուց մի կածան անպայման պետք է գնա այդ մարդու բնակարանը...
- Իսկապես, ո՞նց չենք մտածել... Սպասիր, այգու չորս կողմը մի գիծ քաշես...
Մինչ նրանք այսպես խոսում էին, քուրդ պատանու «լո, լո, լո»-ն գնալով հեռանում էր գլխից վեր տարածվող ծխի ժապավենի հետ. Շուշիկի համա՞ր էր երգում, աներևույթ գազանին վախեցնելո՞ւ, թե՞ իրեն սիրտ տալու համար...
Այգու շրջապատը հետազոտելուց հետո, մեր պատանիները նկատեցին, որ նրա արևմտյան եզրից մի արահետ գնում է դեպի Հովազածորը արևմուտքից փակող ժայռաշարքը: Պարզ էր, որ ինչ-որ ժամանակ, ինչ-որ մարդիկ երթևեկել են այդ արահետով:
Կանգնել էին մեր տղաները խորհրդավոր շավիղի վրա ու տատանվում էին. առա՞ջ գնալ, թե վերադառնալ այգին:
- Լա՛վ, ի՞նչ գործ ունենք... մեր ի՞նչ բանն է, թե ո՛վ է եղել, որտե՛ղ է ապրել, - ձեռքը թափ տվեց Գագիկն ու մտնելով այգին, նորից սկսեց խաղող փնտրել:
Բայց Աշոտին հանգիստ չէր տալիս այգու գաղտնիքը: Որ շավիղը պիտի նրանց տաներ այդ այգու երբեմնի տիրոջ բնակարանը, նա չէր կասկածում: Ո՞վ է եղել այդ խորհրդավոր մարդը... Մեռե՞լ է, թե գուցե դեռ կենդանի է...
Աշոտը խաղող էր ուտում, բայց միտքը փոթորկված էր:
- Լսի՛ր, խելոք, - դիմեց նա Գագիկին:- Ընդունո՞ւմ ես, որ այս այգու տերը իր ապրելու համար հարմարություններ ստեղծած կլինի:
- Հա, դռնով-պատուհանով տուն շինած կլինի... Թոնիրն էլ մեջը, որ Շուշիկը հաց թխի քեզ համար:
- Կատակի մի տա, մենք ուզենք, չուզենք պետք է գտնենք նրա բնակարանը:
Եվ Աշոտը բացատրեց, թե ինչպիսի կենսական անհրաժեշտություն է դա: Նրա կարծիքով գիշերը՝ իրենց քնած ժամանակ, և նույնիսկ ցերեկը, երբ այրում միայն հիվանդներն են մնում, կատվացեղ գազանը կարող է անարգել կերպով մտնել իրենց բնակարանը և պատառոտել մեկն ու մեկին, որովհետև անձավը դուռ չունի: Իսկ այգու տերը երևի դուռ ունեցող կացարանում է ապրել: Իրենք վառարան չունեն, - այգու տերը երևի վառարան կունենա, կամ թեկուզ հասարակ բուխարի: Նա անպայման գործիքներ ունեցած կլինի, այդ է վկայում սղոցած կոճղը... Եթե այդ մարդը ձմեռներն էլ է ապրել այս ձորում, նրա բնակարանը պետք է որ տաք և հարմար լինի: Եվ, վերջապես, նրա բնակարանում գուցե սննդի մնացորդ գտնվի...
Գագիկը, որ անտարբեր լսում էր Աշոտի երկար ու բարակ պատճառաբանությունները, այստեղ իսկույն կտրեց նրան.
- Ա՛յ, հիմի որ համոզվեցի... էլ մի՛ շարունակի... գնա՛նք...
Եվ մի ծխացող փայտ վերցնելով, առաջ ընկավ: Փայտը պտտում էր գլխից վերև ու գոչում.
- Այգու տե՛ր, պինդ կաց, գալիս եմ հոգիդ առնեմ...
Ա՛խ, մի կարգին բնակարան գտնեին, սղոցը մեջը, էն, որով կտրել են որթատունկի կոճղը... Ով գիտի, գուցե այդ արահետը դեպի իրենց փակված բախտի դո՞ւռն է տանում...
Շավիղը երբեմն կորչում էր թփերի մեջ, երբեմն ոլոր-մոլոր ձգվում քարերի միջով: Տեղ-տեղ մամխի թփերը աճելով ու տարածվելով՝ փակել էին շավղի առաջը: Այդպիսի դեպքերում մեր պատանիները կանգ չէին առնում, չէին մոլորվում, նրանք գիտեին, որ կածանը վերջանալ չի կարող, նա պիտի շարունակվի մինչև այգու տիրոջ կացարանը: Եվ շրջանցում էին թփուտը, նորից գտնում ընդհատված արահետի ծայրն ու առաջ գնում լուռ, ահը սրտներում: Իսկապես, ո՞վ է եղել այդ խորհրդավոր մարդը:
Իսկ եթե նա դեռ ապրո՞ւմ է...
Տղաները իրենք էլ չհասկացան, թե ինչու արդեն շշուկով էին խոսում իրար հետ...
Երբ մոտեցան ժայռերին, Գագիկը կանգ առավ և մի ինչ-որ բան գետնից վերցնելով ցույց տվեց ընկերոջը, կարկատած գուլպայի կտոր էր...

- Էս մարդը հիմի քավթառքուսի դառած կլինի, - ահով շշնջաց Գագիկը: Նա այնպես էր լրջացել, որ Աշոտը նայում ու ծիծաղը գալիս էր:
- Քավթառքուսին ո՞րն է, - հարցրեց նա ծիծաղն աչքերում (հարկավոր էր, որ Աշոտը իրեն սրտոտ ցույց տար, վերջ ի վերջո խմբի ղեկավարն ինքն էր):
- Պապս է պատմում: Մարդ որ հարյուր հիսուն տարին անցնում է, քավթառքուսի է դառնում, մորուքը հասնում է կոճերին ու ոտների տակն ընկնում, այլակերպվում է ու ժայռից գիշերներն իջնում է գյուղ երեխաներ փախցնում: Մի քանի տարի առաջ ամառը մեր գյուղից երեխա կորավ, հիշո՞ւմ ես:
- Նա հո բորենին էր տարել, խելո՛ք, որսորդները խփեցին՝ պարզվեց:
- Բա ինչո՞ւ են գյուղերում բորենուն քավթառքուսի ասում...
Թող բորենի եղած լիներ, միևնույն էր, Գագիկի սրտում որպե առ որպե ահը մեծանում էր: Բայց իսկի ցույց կտա՞ր որ... Կռվի գնացող աքլորի նման գլուխը բարձր պահած, նա քայլում էր հոխորտալի կեցվածքով ու հետն էլ նախատում ընկերոջը.
- Հիմի էլ քավթառքուսի թող լինի՛... ի՞նչ ես գույնդ գցել, տո՛...
Ասաց ու կռացավ, ետ ընկավ:
- Էս անտեր կոշիկն էլ հո... գնա՛, հիմի կգամ...
- Ո՞վ, ե՞ս գույնս գցեմ, - հպարտ պատասխանեց Աշոտն ու վճռական քայլերով առաջ ընկավ:
Ճիշտ է, Աշոտը հոխորտալով էր խոսում, բայց երբ կանգ առան ապառաժի շեկ պարսպի առաջ և տեսան, որ նրա կտրվածքով շավիղը վեր է բարձրանում ու նրա վրա քարե աստիճաններ կան, սիրտն ահ ընկավ:
Ահ ընկավ, որովհետև այդ աստիճանները մարդու ձեռքով էին շինված...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ. Թե ուր է տանում խորհրդավոր շավիղը

- Հը՛, հիվանդնե՞ր, խաղողից լիացա՞ք, - այրը մտնելով՝ զվարթ հարցրեց Աշոտը: Արտաքուստ էր անհոգ ձևանում, մտքում շարունակ նույն հարցն էր. «Տեսնես ո՞ւր էն տանում քարե աստիճանները...»: Նրանք չէին համարձակվել այդ աստիճաններով վեր բարձրանալ և գերադասել էին վերադառնալ իրենց կացարանն ու նախապես կշռադատել իրենց անելիքը:
- Այո՛, լիացա և ուռուցքներս իջան, - վրա նստելով առաջին անգամ կատակեց Սարգիսը:
Իսկ Շուշիկը Բոյնախի տաք մորթու միջից դուրս էր հանել իր փոքրիկ շեկլիկ գլուխը ու ժպտում էր նոր կյանք վերադառնող արարածի երջանիկ ժպիտով: Նրա վիճակը թեթևանում էր:
- Ամեն մեկդ քսան պորցի գյուկոզա եք ընդունել, դե, իհարկե, ուռուցքներդ կիջնեն...
Շուշիկը լսում էր Գագիկի կատակախառն խոսքը, բայց զգում էր, որ մտահոգ է թե՛ նա, թե՛ իրենց օղակավարը:
- Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ հետներդ խաղող չեք բերել, - կասկածանքով նայում էր նրանց ու հարցնում Շուշիկը:
- Ոչի՛նչ... Հասո՛, ո՞ւր են մեր ծանր զենքերը: Հին այրի առա՞ջ: Նիզակների հետ նրանք էլ վերցնենք:
Ապա Աշոտը կանգ առավ և, կարծես ընկերների առաջ արդարանալու համար, ավելացրեց.
- Զգուշությունը վախկոտություն չի...
- Ի՞նչ է պատահել, ո՞ւր եք գնում, - անհանգստացավ Շուշիկը: Նրա խաժ աչքերը երկյուղ էին արտահայտում:
- Ոչի՛նչ, գնում ենք քավթառքուսի սպանենք, - անհոգ ձևանալով պատասխանեց Գագիկը և դուրս եկավ քարայրից:
Հիվանդներին կասկածների մեջ թողնելով՝ նրանք՝ երեք ընկերներ, նախնադարյան զենքերով զինված, շարժվեցին դեպի ցած. տեգերից բացի, նրանք վերցրել էին նաև քարե կացինը:
Հանկարծ Աշոտը կանգ առավ և ուրախ գոչեց.
- Ձա՛ն, հիմի որ փրկվեցինք...

Ու մատով ցույց տվեց դիմացի ժայռը: Նրա թիկունքից զույգ եղջյուրները բարձր պահած մի գլուխ երևաց, քարայծը գաղտագողի հետևում էր մարդկանց շարժումներին:
Տղաները հասկացան և ուրախության մի հախուռն ալիք անցավ սրտից-սիրտ:
- Վա՛յ ես դրա հոգուն մեռնեմ... Դե ասա թող շուտ կյանքը զոհի մեզ համար, որ փրկվենք...
- Առանց մեր ասելու էլ հիմի գազանը մեկին տակը դրած ճաշում է, դու հանգիստ կաց, Գագի՛կ... Այդ լավ եղավ, բայց մենք, համենայն դեպս, պետք է զգույշ լինենք, թե չէ, ո՛վ գիտի...
- Հա՛, Աշո՛տ, ով գիտի, հանկարծ կամ հովազ լինի՝ հարձակվի, կամ քավթառքուսի լինի, - համաձայնեց Գագիկը: Թեև նա լրջորեն չէր հավատում «քավթառքուսու» առասպելին, բայց անորոշ երկյուղ էր զգում, ինքն էլ իրեն հաշիվ չտալով, թե ո՛րն է այդ երկյուղի հիմքը: - Բայց, Աշո՛տ, քանի մոտներս աղջիկ չկա, արի խոստովանվիր, որ վախենում ես... Չեմ ասում՝ շատ: Մի քիչ, այ, այսքան, եղունգիս չափ...
- Իհարկե, կվախենամ, ձեր բոլորի կյանքի համար ե՛ս եմ պատասխանատու...
- Որպես ջոկխորհրդի անդա՞մ...
Այնպես հեգնանքով էին ծիծաղում Գագիկի սև աչքերը և այնպես սուր էր լեզուն, որ նրան զսպելու միայն մեկ միջոց էր մնում, որին և շուտով դիմեց Աշոտը:
- Խելոք պիտի մնա՞ս, թե ոչ, - գոչեց նա ու բռնելով ընկերոջ վզից, վեր բարձրացրեց նրա լղարիկ մարմինն ու խաշամի վրա մեկնելով, սկսեց հունցել:
- Չե՛ս վախենում, չե՛ս վախենում, Դավթից էլ ես քաջ...Բաց թող, - ներքևից աղաղակում էր Գագիկը: Բայց հենց բաց թողեցին, ոտքերը գցեց ընկերոջ ոտքերի արանքը ու կատվի ճարպկությամբ շուռ եկավ փորի վրա: Աշոտն իր ամբողջ հասակով մեկ տապալվեց, և մինչ ուշքի կգար, հակառակորդը թռավ նրա վրա:
Այդպես կոխ բռնեցին, փոխեփոխ տակ ու վրա արին, քրքջացին, հևացին, ըստ երևույթին, Գագիկի ասած գյուկոզան՝ քաղցր պտղաշաքարը՝ արդեն տեղ էր հասել և ուժ էր տալիս նրանց ու ստիպում խաղալ ու տրտինգ տալ: Գազանի մասին հո արդեն սկսել էին մոռանալ:
Երբ գզվռտվելուց կշտացան, հևալով ու հաշտ նայեցին իրար, Հովազաձորում փակվելուց հետո նրանք առաջին անգամ էին խաղում:
Քիչ անց մեր պատանիները, տեգերով հարվածելու պատրաստ՝ կանգնած էին քարե սանդուղքի աստիճաններին:
Դա Կաղնուտից ներքև էր, աջ ժայռաշարքի տակ: Բայց որպեսզի ընթերցողը պատկերացնի, թե ի՞նչ թաքուն տեղ էին ընկել մեր պատանիները՝ այգու երբեմնի տիրոջը փնտրելով, թող նկատի առնի, որ Աջ ժայռաշարքը թեև Կաղնուտի, կամ բուն ձորի կողմից նայելիս իրենից ներկայացնում էր վերևից ներքև ձգվող մի ուղղահայաց պարիսպ, բայց եթե մարդ կանգներ այդ պարսպի կատարին և ցած նայեր, կտեսներ, որ ժայռը ներքև գնալով բաժան-բաժան է լինում մարդու մատների նման: Ձեռքդ ցած կախիր և վերևից նայիր մատներիդ, կստացվի աջ ժայռաշարքի պատկերը: Բութդ մի փոքր անջատ է ձեռքիցդ, այնպես չէ՞: Այդպիսի անջատ մի երկար ժայռ աջ բազուկի «բութն» էր կազմել: Մեր պատանիները ներքևից անցել էին այդ «բութի» հետևը և նրա երկայնքով դանդաղ շարժվում էին դեպի վեր:
Աշոտը, որպես խմբի ղեկավարը և գյուղում սրտոտ տղայի համբավ հանած պատանի, պարտավոր էր առաջ ընկնել, և այդպես էլ արավ: Մտքում իրեն քաջալերելով, նա վեր բարձրացավ և մտավ խիտ թփուտները, որոնց երկու կողմերից ուղղահայաց պատերի նման ժայռեր էին բարձրանում: Նրանց միջով մի նեղ միջանցք ձգվում էր դեպի վեր:
Երկու կողմերից մասրի, մամխի, գիրմաստի թփերը կռացել էին ճամփի վրա և ծածկել սանդուղքը: Դրանից քարե աստիճանները խոնավ էին մնացել և նրանց վրա աճել էին մամուռն ու քարաքոսը:
Աշոտը ընկերներին մատով ցույց էր տալիս այդ նշանները և շշուկով հասկացնում, որ շատ վաղուց մարդ չի անցել այդ ճամփով: Բայց զարմանալի բան. այն, որ այդ ժայռերում մարդ է ապրել (կամ ապրում է) տղաներին փոխանակ ուրախություն պատճառելու, անբացատրելի երկյուղ էր ներշնչում...
Վերջապես աջ կողմը, մեր ասած ժայռի պատին, կիսաբաց մի փայտե դուռ տեսնելով, նա կանգ առավ և մի պահ մնաց այդպես լարված-արձանացած: Ապա սիրտ տալով իրեն, գոչեց.
- Հետևեցե՛ք ինձ...
- Չվախենա՛ս, ես սարի պես թիկունքիդ եմ, - դողդողալով ասաց Գագիկը և ինչքան ուժ ուներ գոռաց.

- Վա՜ա՜շտ, հառա՜ջ... գնդացիրները պատրա՜ստ...
Ափսոս, ոչ ոք չարձագանքեց նրա սպառնալիքին և ոչ ոք ձեռքերը վեր չբարձրացրեց ու չհանձնվեց:
Լուռ էր անձավը հավիտենական համրի նման...
Դուռը կիսաբաց էր, իսկ ներսում աղջամուղջն էր թագավորում: Աշոտը ոտքով հրեց դուռը և քարե կացինը ձեռքին պատրաստ կանգնեց շեմքին:
Սկզբում ոչինչ չէր երևում, ապա հատակին նկատեց օջախի մոխիրը, ածուխները, մի քանի կիսայրվել փայտի կտորներ, իսկ սրանց վրա և շուրջը շերտերով նստած ինչ-որ մանր կտիտ, որ ոչ թռչնաղբի էր նման, ոչ վայրի այծի կտիտի: Մանր էր նա գարու՝ հատիկների նման, բայց թուխ գույն ուներ: Աշոտը կռացած տնտղում էր այդ նշանները բնասերի հետաքրքրությամբ:
Գլխի ընկավ, նայեց այրի առաստաղին ու ձեռքը շրթունքներին դնելով՝ ետ-ետ գնաց ու իր հետևից ծածկեց դուռը:
- Գագի՛կ, չղջիկնե՛րը...
- Մե՞ծ բաներ են... քանի՞ կիլո քաշ կունենան...
Աշոտը փռթկացրեց:
- Կիլոյի անուն մի տա, էլի կխափանվի: Ուսերիս բարձրացիր, պինջակդ խրի դռան վերևի անցքը:
- Ես այստեղ պահակ կկանգնեմ, դու մի ներսը նայիր, տես ապրող չկա՞, - առաջարկեց Գագիկը:
- Չկա: Մի տեղ, որ չղջիկներն են տեղավորվել, ուրեմն ապրող չկա: Ձմռան քուն են մտել, սո՛ւս, կզարթնեն...
- Տեսա՞ր... որտե՞ղ են...
- Կախված են առաստաղից... Շո՛ւտ, վեր բարձրացիր...
Դռան վերևի անցքը ինչ-որ ժամանակ ծխնելույզի դեր էր կատարել: Դա երևում էր ժայռի ճակատով դեպի վեր գնացող սև մրի շերտից:
Գագիկը խորոված՝ հույսեր ուներ, իսկի կհանգստանա՞ր որ... Իսկույն բարձրացավ-կանգնեց Աշոտի ուսերին, իր պիջակով անցքը փակեց ու ցած իջնելով՝ հարցրեց.
- Մի ցույց տուր, որտե՞ղ են:
- Սպասիր, կփախչեն: Դռան ճեղքերն ամրացրեք:
Դո՜ւռ... Միայն անունն էր դուռ, իրականում կացնով տաշած և իրար մի կերպ ամրացրած փայտեր էին դրանք, որոնք փտել էին անձրևից ու խոնավությունից:
Նրա ճեղքերը տղաները խոտ ու տերև խցկեցին և նստեցին խորհրդակցության և միաձայն եկան այն եզրակացության, որ այգու տիրոջ բնակարանը անհամեմատ լավ է իրենց անձավից: Խոր է, տաք, դուռ ունի, որի հետևը քար դնելով, կարելի կլինի ապահով քնել:
Եվ տղաները որոշեցին տեղափոխվել նոր բնակարան:
Բայց երբ հեռացան անձավից, Հասոն առաջարկեց ցերեկով գոնե մի քանի քայլ ևս բացել փակված ճամփից, իսկ տեղափոխությունը կատարել երեկոյան:
Նա ընկերներին հիշեցրեց, որ ամբողջ օրը զբաղվել են խաղողով, իսկ հետո՝ այգու տիրոջ անձավը փնտրելով և մոռացել են ամենակարևորը՝ բոլորովին չեն աշխատել կածանի վրա:
- Լավ, քանի դեռ արև կա, գնանք մի քիչ գործ անենք, - համաձայնեց Աշոտը:
Երբ մոտեցան Դիվային կածանին, Աշոտի լայն երեսը ողողվեց ինքնագոհ ժպիտով:
- Ուրեմն, մեր աշխատանքը իզուր չի կորել, այծերի համար ճամփա ենք բացել, որ գան մեզ փրկեն գազանից, - ասաց նա՝ մատով ցույց տալով քարայծերի հետքը:
Իրոք, «դրսի աշխարհից» կճղակավորների մի ամբողջ հոտ Հովազաձոր էր ներխուժել Դիվային կածանով:
- Գնա՛նք, Աշո՛ւտ, գուցե նրանք էլ մե՛զ համար են ճամփան բացել, - ուրախացավ Գագիկը:
Արահետով առաջ գնացին, հասան այնտեղ, որից դենը շավիղը փակ էր: Այդտեղ այծերի հետքը հանկարծակի չքանում էր:
Դիմաց, ձյունով ծածկված լանջը հարթ էր հայելու նման, կենդանու ոտնատեղ չէր երևում: Ներքևում անդունդն էր, վերևում՝ ժայռը: Հո երկնքից չե՞ն իջել այծերը: Բայց Աշոտի փորձված աչքը արդեն նկատել

էր, որ վերևից ձյուն է թափվել մաքրված շավղին, ուրեմն այծերն իջել են ժայռից: Նա մի քիչ վեր մագլցեց, հայացքով ստուգեց կածանի վրա խոնարհված ցցունքները և ցած թռչելով, բացականչեց.
- Վերևից են իջել... Ա՛յ սատանաներ... Ցցունքից-ցցունք թռչելով հասել են կածանին: Ա՛յ ռիսկ... Գայլն իսկի կարո՞ղ է էս քարափով իջնել որ... Իսկ դրանք իջել են...
- Գուցե դրանց իջած տեղով մենք բարձրանանք, - առաջարկեց Գագիկը և ժայռին կռթնելով իր նիհար ուսը դեմ տվեց, - Աշո՛տ, մի ուսիս բարձրացիր, փորձենք... Չէ՛, չէ՛, դու ծանր ես: Հասո՛, դո՛ւ արի, թե չէ դա խիղճ չունի...
Հասոն կանգնեց Գագիկի ուսերին, ձեռքերը գցեց քարի սեպ ժանիքին, ոտքերը պատ տվեց ու գնաց մնաց ժայռի կիսում:
- Էստեղ էծի ոտնատեղեր կան, Աշո՛տ, - վերևից հաղորդեց նա:
- Մի ձեռքդ մեկնիր, տես հասնո՞ւմ է ժայռի գլխին, - պատվիրեց Աշոտը:
- Գլխին չի հասնի, բայց եթե մեկը տակիս կանգնի, ձեռս քարափի ուսին կհասցնեմ, էն վերի սեպին...
Բայց Հասոն ինքը ահից հազիվ էր կանգնում ժայռի ստինքանման այդ ցցվածքին, ո՛վ կհամարձակվեր կանգնել նրա ծանրության տակ: Կամ թե կանգնեին էլ, Հասոյի ոտքերը չէի՞ն դողդողա, հավասարակշռությունը կարո՞ղ էր պահել...
- Իջի՛ր- իջի՛ր... - ներքևից լսվեց Աշոտի ձայնը:
Հասոն զույգ ձեռքերով կախվեց քարե ցցունքից և ոտքերը կախելով հասցրեց Աշոտի ուսերին:
Այծերի եկած ճամփով վեր բարձրանալու հույսները կտրելով, տղաները սկսեցին իրենց կիսատ թողած գործը:
...Երբ հասել էին թունելին, որի կեսն արդեն դատարկված էր ձյունից, Գագիկը խլեց Աշոտի ձեռքի թիակն ու սկսեց աշխույժ և արագ դուրս տալ ձյունը:
- Քո արևը, Աշոտ, խաղողը փորումս մաճառ է դառել-եռում է... որ մինչև լույս աշխատեմ՝ հերիք կանի: Հասո՛, ի՞նչ ես ապշել, դուրս տվածը ցած թափիր: Այդպե՛ս... Հիմի որ ճամփեն կբացե՛նք... Այսինքն, մենք չենք բացելու, մաճառն է բացելու:
- Հույսդ քե՛զ վրա դիր, - շտկեց Աշոտը:
- Չէ՛, Աշո՛տ, դու խամ ես: Կաց, ընդմիջում անեմ ու մի դեպք պատմեմ: Ես դպրոց էի գնում, ծնողներս՝ դաշտ, կոլխոզի աշխատանքին, մեր տնամերձ այգին մնացել էր առանց փորելու: Մի օր էլ երեկոյան դեմ հայրս դաշտից տուն եկավ ու բահը վերցնելով, գնաց, որ մեր այգին փորի, ես էլ հետը: Գնացինք, տեսանք իմ ծեր պապը բահը ձեռքին աշխատում է կրակ կտրած: Մեզ համար բաժին չէր թողել, այգին սևացրել էր ծայրեհծայր: Էս ե՞րբ ես փորել, - հարցրի ես զարմացած: Ծիծաղեց, ասում է՝ ես եմ փորե՞լ որ... թթի արաղն է փորել... Հիմի ըմբռնեցի՞ք: Սրանից հետո խաղողի մաճառն է մեր տեղ ճամփա բաց անելու, հո մե՛նք չենք աշխատելու...
Թեթևացած սրտերով և ուրախ կատակներով նրանք աշխատեցին մինչև մութն ընկնելը և դուրս եկան թունելի մյուս ծայրը:
- Վաղը երեկո կմոտենանք ճամփի ծայրին...
- Իսկ մյուս օրը ցերեկով դո՛ւրս կգանք ձորից: Վայ ես քո արցունքներին մեռնեմ, մե՛ր ջան, դիմացի՛ր, մինչև քո «գիժ մոզին» տեղ հասնի... Տղե՛րք, չգնա՞նք խաղողին տեսության...
- Մթնո՞վ:
- Դու ուտելու բանի տեղ ցույց տո՛ւր, մթնով էլ կգտնենք...
Եվ նրանք իրար փեշից բռնած, զգուշությամբ ետ եկան արահետով ու ձորը հասնելուն պես ածխակոթերն օդում թափահարելով և իրենց հետևից ծխի ժապավեններ թողնելով, վազեցին դեպի, խաղողի այգին:
Քիչ անց հասուն ողկույզներով ծանրաբեռնված նրանք բարձրանում էին դեպի քարայր:
Արդեն ուշ էր, ուստի որոշեցին նոր բնակարան տեղափոխվել հաջորդ առավոտյան:
Իսկ Շուշիկը հիմա տեղափոխվելուն առհասարակ դեմ էր:
- Մեկ-երկու օրվա գործ է մնացել, շուտ դուրս գանք, մեր տները գնանք, ինչ գործ ունենք ուրիշի տան հետ, - ասում էր նա:

Այո՛, սննդի հարցը լուծվեց բոլորովին անսպասելի կերպով և հիմա որ անպայման դուրս կգան այս ձորից:
Որոշ իմաստով ճիշտ էր բնորոշել Գագիկը. այսուհետև խաղողն ինքն էր բացելու ճամփան...
Ինչ ասել կուզի, որ այդ գիշեր նրանց համար ամենից ուրախ գիշերն էր, ուստի և Հասոն գոտիկից հանեց իր սրինգը և ուրախ եղանակներ փչեց:
- Չպարե՞նք, - հարցրեց Գագիկը:
- Ո՞վ պարելու հալ ունի...
- Հենց հեղեղի տակ պիտի ընկնեք, որ պարե՞ք... Մի «քոչարի» փչիր...
Եվ Գագիկը, Աշոտի թևն ընկնելով, սկսեց «քոչարին»: Շուշիկն ու Սարգիսը, կրակի մոտ թիկն տված՝ նայում էին նրանց ապաքինվող մարդու բարությամբ:
Շատ շուտ հոգնեցին մեր պատանիները, քիչ բան չէր շաբաթներով կիսաքաղց մնալը: Նորից նստեցին խարույկի մոտ և լուռ ունկնդրում էին նվագին:
Դայլայլում էր Հասոյի սրինգը մերթ թախծոտ ու լալագին, մերթ զվարթ և կենսախինդ: Եվ ամեն տուն նվազելուց հետո, նա շրթունքները կտրում էր սրինգից, և երբեք Շուշիկի կողմը չնայելով, դեմքը միշտ ստվերում, քրդական ձևով ձեռքը դնում էր ականջին ու քոլոզը թեք դրած երգում.

Բերիվանե՛, բերիվանե՛
Իրո մնի դլան գոթի դլան,
Ազե դուղակե բըկյամ,
Ձրաբի ալեմի մո՛րի...

Ի՞նչ էր այդքան երկար ու բարակ երգում Հասոն, ի՞նչ կար նրա երգի մեջ, որ մերթ հուզում էր նրան, մերթ դեմքը ողողում ժպիտով:
- Է՛, կարծում ես քո «իրո մնիից» բա՞ն հասկացանք, - ասաց Գագիկը:
- Սա քուրդ սարվորների երգն է, միտքը սա է: Ասում է՝ - բերիվա՛նե, բերիվա՛նե, այսինքն, կթվորնե՛ր, կթվորնե՛ր, ձեր մե՞ջ է իմ սիրածը: Թե որ ձեր մեջ է, ասացեք իրեն՝ աղջի, տնավե՛ր, առ կուժդ, մահանա արա աղբյուրը գնա, որ էնտեղ իրար հետ հանաք անենք:
Թե որ մայրդ հարցնի՝ աղջի, ինչի՛ ուշացար, ասա՝ ուլունքներս ու մարջաններս թափվել էին, հավաքում էի...
- Բռավո՛, Հասո՛, մի տես ինչե՛ր է իմացել: Հետո՞, հետո՞...
- Հետո, ի՞նչ ասեմ, քուրդ չոբանների երգերը բոլորն էլ աղջիկների մասին են, - շփոթվելով և գլուխը Աշոտի հետև թաքցնելով պատասխանեց Հասոն:
- Երկարամազ այծյամների՛... Ավելի լավ, դու երգիր ու թարգմանիր, - պնդում էր Գագիկը, որին քուրդ սարվորների այդ ուրախ երգերը շատ էին դուր եկել, հայ հովիվներից նա միշտ մելամաղձոտ երգեր էր լսել:
- Լա՛վ, կուզե՞ք մեկն էլ երգեմ:
Եվ Հասոն նորից աջ ձեռքն ականջին դրեց, դեմքը դեպի այրի մութ անկյունը դարձրեց և կլկլացրեց իր դուրեկան ձայնով.

Իրո հաթի՛ա գնդի թութո՛ւնա զարա...

Երգեց ամեն բառն այնքան երկարացնելով, որ թվում էր մի ամբողջ սիրավեպ երգեց, բայց երբ դադարեց երգելուց և թարգմանեց, պարզվեց, որ տղան մի քառյակով դիմել է աղջկան և նրանից ընդամենը մի քառյակ պատասխան է ստացել: Ահա այդ քառյակների իմաստը.
**Տղան.**
Ո՛վ հարևաններ, թե որ չեք ճանաչում իմ կթվոր սիրածին, նշաններն ասեմ, բոյը շիմշատ է, աչքերը՝ նախշուն, ճակատին՝ ոսկեշար, գույնը՝ թխավուն, ու միշտ քայլում է կթվորների առաջից:
**Աղջիկը.**
Էսօր գյուղը թութուն բերին, առել եմ սիրածիս համար՝ հալած յուղին բարեբար: Եթե վերցնի նվերս՝ լա՛վ թե որ չվերցրեց՝ մի զույգ համբույր կտամ վրան՝ հաստա՛տ կվերցնի...
Շուշիկը բարեսրտորեն ծիծաղում էր, իսկ հովիվ պատանին իր ասած խոսքերից քրտնած, քոլոզն աչքերին էր իջեցրել:

Այդպես, Հասոն իր սրինգով ու երգերով մեր պատանիներին տեղափոխել էր պարզ խաշնարածների աշխարհը:
Վերջապես, նկատելով, որ Շուշիկի կոպերը ծանրանում են, նա դադարեցրեց նվագը:
- Տանձ է կշռում, - Շուշիկի կողմն աչքով անելով կամաց ասաց Գագիկը, վեր կացավ և դանդաղ ու վարանոտ դուրս եկավ քարայրից: Ընկերները հետևեցին նրան:
Պարզկա գիշեր էր, երկինքն իր անթիվ-անհամար աչքերով երկրին ԷՐ նայում պլշած: Դիմացում, Արարատի փեշերին կրակե երկար ժապավեններ էին ձգվում, որոնք գալարվում էին հրե օձերի նման:
- Տաճկաստանի քրդերն են կրակ տվել հանդը, - ասաց Հասոն: - Հայրս պատմում է, որ գետի մյուս ափին անտեր հանդեր են՝ հայերի առաջվա հողերը: Վար չկա, ցանք չկա, հանդն արածեցնող չկա, երկիրը վայրենացել է: Ասում է՝ խոտի հինը մնում է խառնվում նորին, որ ձիավոր մտնի մեջը՝ կկորչի: Ու ամեն աշունք քուրդ չոբանները կրակ են տալիս հանդերը, մաքրում, որ նոր խոտ դուրս գա:
Ապա քիչ լռելուց հետո, մտախոհ և մեծավարի ավելացրեց.
- Հայերի դարդը մեծ է, բայց մերն էլ փոքր չի: Է՛ն վառվող երկիրը տեսնո՞ւմ եք, էնտեղ շատ քրդեր կային: Հերս ասում է՝ անգլիացիք դրանց զենք են տվել, թե՝ տաճիկները ձեզ օր ու արև չեն տալիս, կռվեցեք նրանց դեմ, մենք ձեզ պետություն կտանք: Քրդերը կռվում են ու տեղները հենց նեղանում է՝ քաշվում են Փոքր Մասիսի փեշը, Իրան: Քամալը, չգիտեմ իրեն երկրի ո՛ր մասից, հողեր է տալիս Իրանին, նրանցից վերցնում է Փոքր Մասիսի փեշն ու մեծ զորքեր է բերում, քրդերին քշում՝ դեմ է անում մեր էս Արազ գետին ու կոտորում... Ով կենդանի էր մնացել, անց էր կացել գետն ու հանձնվել մերոնց: Չգիտեմ Դավալվո՞ւմ, թե՞ Արտաշատում իմ հերը պատահել էր մի քանի քրդի, խոսել էր հետները: Պատմել էին, թե ի՛նչ զուլում են իրենց գլխին բերել Քամալի կառավարությունն ու երկու երեսանի անգլիացիք...
- Լուսանում է, ներս գնանք, - սրսփալով ասաց Սարգիսը, որ փայտին հենված ինքն էլ էր դուրս եկել այրից:
- Ինչի՞ց գիտես, - քննում է Հասոն:
- Ա՛յ, լուսաստղը դուրս եկավ...
Քուրդ պատանին ծիծաղեց:
- Դա լուսաստղը չի, դա Քյարվանղռանն է: Շատերին է խաբել էդ աստղը: Հիշո՞ւմ ես, Աշո՛տ, էն հեղեղի գիշերը ես էդ աստղի անունը տվի: Պիտի պատմեի, թե ինչու են դրան Քյարվանղռան ասում, բայց էնպես էլ մնաց: Քյարվանղռան, այսինքն՝ քարավան կոտորող: Երբ ուղտերը հանգիստ որոճալիս են լինում, քարվանչիներից մեկն ասում է՝ լուսաստղը դուրս եկավ, վեր կացեք, ճամփա ընկնենք: Աստղերին լավ ծանոթ չեն լինում ու մեր Սարգսի նման կարծում են, թե դա լուսաստղն է, որովհետև գրեթե նրա պես պայծառ է (մի տեսե՞ք), բայց նրանից շուտ է դուրս գալիս: Քարավանը ճամփա է ընկնում, գնո՛ւմ-գնո՛ւմ, չի լուսանում: Ղաչաղները կտրում են քարավանի ճամփեն, թալանում, մարդկանց կոտորում: Էդ օրվանից էդ աստղի անունը դնում են քյարվանղռան... Է՛հ, ներս գնանք, ցրտում է...
Նրանք պառկեցին փափուկ խաշամին, երեք կողմից շրջապատեցին խարույկն ու մեջք-մեջքի տվին: Իր անկյունից Հասոն նայում էր Շուշիկի դալկահար դեմքին և մի աղոտ ժպիտ էր նշմարում նրա նուրբ շրթունքներին: «Երևի երազում մոր հետ է...», - մտածեց տղան ու հաջորդ վայրկյանին ընկղմվեց քաղցր նիրվանայի աշխարհը, ինչպես դա հատուկ է բնության մեջ ապրող հովիվներին:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես մեր պատանիները արագությամբ կարճացնում էին դեպի ազատություն տանող ճամփան

- Հիմա ի՞նչ եք կարծում, գնանք մեր նոր բնակարա՞նը տեսնենք, այգեկութի՞, թե՞ ճամփան մաքրելու, - երբ արևաածագին քարայրից դուրս եկան, դիմեց Աշոտն ընկերներին:
Դա նրանց գերության քսանութերորդ օրն էր:
- Իհարկե, խաղող ուտելն ավելի հեշտ է... Բայց դժվարի կողմը պիտի գնանք:
- Ես նույն կարծիքին եմ, Գագի՛կ, ձե՛զ էի փորձում: Իմ կարծիքով, մենք այսօր մինչև մութն ընկնելը պիտի աշխատենք ճամփեն բացելու վրա:
Սարգիսը փայտի օգնությամբ վեր կացավ և կաղալով ու տնքտնքալով առաջ եկավ:

- Բա մինչև ե՞րբ եմ ես անգործ մնալու, - քաշվելով դիմեց նա ընկերներին: - Մինչև ե՞րբ եմ ձեր աշխատանքով ապրելու...
Աշոտը լայն ժպտաց. «Ահա իմ խմբի գլխավոր հաղթանակը...»:
- Ոչի՛նչ, Սարգի՛ս, առողջանաս՝ դու էլ կաշխատես, - մեղմությամբ պատասխանեց նա: - Հսկում ես մեր հիվանդ քրոջը, դա քի՞չ գործ է, - նրբանկատորեն ավելացրեց նա:
«Ինքն էլ է փոխվում...», - ուրախ մտածեց Շուշիկը:
- Չէ՛, հերիք է ձրիակերություն անեմ: Ինձ մի կերպ հասցրեք այգին, գոնե խաղող կքաղեմ...
- Թող խաղող քաղի ու հոգին դուրս գալով ուտի: Ի՞նչ կա որ, - խորհուրդ տվեց Գագիկը:
- Որ ոտով գնա, էլի խնձորը դուրս կընկնի բնից, - զգուշացրեց խմբի «հեքիմը»:
- Ճարն ինչ, պիտի շալակենք... Մենակ չե՞ս վախենա, Շուշի՛կ, - հարցրեց Աշոտը:
- Չէ, իմ դիմաց եք աշխատելու... Գնացեք: Այրի առաջ արևկող կանեմ, գիրք կկարդամ: Արդեն կարոտել եմ կարդալուն:
- Ու ականջ կդնես կաքավների երգին... Չէ՛, նախանձելի է մեր կյանքը, Աշո՛տ, մորս կարոտը չլիներ՝ այստեղից ո՛վ էր գնացողը: Հա՛, Շուշի՛կ, այրի առաջ կրակ արա մոտը նստիր... Դե՛հ, շարժվե՛նք, Հասո՛, Էս լոլոզին առաջ ե՞ս եմ շալակում, թե՞ դու... Ա՛խ, գոնե իմանամ՝ ինչի՞ համար են էս սաժենանոց բոյը տվել սրան...
Հասան այգուն, Սարգսին ցած դրին ու շարունակեցին իրենց ճամփան:
Խաղողի չորացած վազերը ջարդելով, տղան իսկույն մի թեժ խարույկ վառեց: Նման մի խարույկ էլ սկսեց ճարճատել Դիվային կածանի վրա: Ծուխ էր բարձրանում նաև անձավ-բնակարանի առաջից, ձորը լցվել էր խարույկների ծխով, այնտեղ գազա՞ն կմնար:
Չէ, վախենալու բան չկա, մանավանդ որ ընկերները աշխատում են դիմացի լանջին, ո՛չ հեռու իրենից: Ահա, Գագիկը պարծենալով ու աղմկելով ձյուն է թափում ցած:
Եվ Սարգիսը, աշխատելով չմտածել վտանգի մասին, սկսեց խաղող հավաքել:
Հեշտ չէր ձյան տակից իրար խճճված թփերը վեր քաշելը: Իրենց կյանքում այգեպանի մկրատ չտեսած վազերը, տարեկան մի քանի մետրաչափ երկարելով, հյուսվել-շաղաղվել էին իրար, և ձյան տակից նրանց հանելու համար Սարգիսը և՛ ջանք պիտի գործադրեր, և՛ համբերություն: Մյուս կողմից էլ ոտքն էր երբեմն ցավում, իսկ արմունկի վերքը դեռ կարգին չէր առողջացել: Բայց այն միտքը, որ Հովազաձոր մտնելուց հետո նա առաջին անգամ է աշխատում, այն էլ ընկերների համար, իրեն փրկող կոլեկտիվի համար, նրան ուժ և համբերություն էր տալիս:
Նստում էր որևէ քարի հանգստանում և նայում քաղած ողկույզներին: Նրանց մեծ մասը թոռոմած էր, կուչ եկած և խաղողի հյութը թանձրացած էր պտուղների ներսում: Կային նաև թփի վրա չորացած, չամիչ դարձած ողկույզներ: Սարգիսը վայելում էր խաղողը ու զարմանքով զգում, որ ընտրում, վատն է ուտում, իսկ ամենալավ ճութերը մի կողմ է դնում: «Շուշիկի համար... Այս էլ Աշոտին: Նա որ չլիներ՝ մեր խումբը կորած էր», - շշնջաց տղան, ամենամեծ ողկույզը առանձնացնելով: «Բա Հասոյի՞ն», ախր նրա՛ մահակով վեր քաշեցին իրեն: Այդ մահակը չլիներ... Չէ, մահակը՝ հեչ, միևնույն է, իր ընկերները ուրի՛շ միջոց կգտնեին իրեն փրկելու: «Հասոն լա՛վ տղա է, պա՛րզ, մաքո՛ւր, էս էլ նրան»: Բերիվանե՛, բերիվանե՛... ականջին հնչում էր քուրդ հովիվի դուրեկան, բայց տարօրինակ երգը: «Իսկ Գագիկի՞ն: խայթում է կարիճի պես, բայց սիրտը մաքուր է... էս իծապտուկն էլ նրան»:
Հանկարծ խշխշոց լսվեց և ձյան տակից մի գորշ ու տափակ կենդանի դուրս վազեց: Կարճ ոտներն արագ-արագ փոխելով, անճոռնի քայլվածքով նա շտապում էր դեպի ժայռերը: Իր տեսքով նա արջի ձագի էր նման, ուստի տղան չկարողանալով զսպել վախը, գոռաց.
- Վա՛յ, արջը՛, արջը՛...
- Պոչից բռնիր, գալիս եմ, - դիմացից լսվեց Գագիկի ձայնը:
- Մի՛ վախենա, փորսուղ է, խաղող ուտելու է եկել, - հանգստացրեց Աշոտը: Տեսնելուն պես՝ հեռվից նա որոշել էր ինչ կենդանի լինելը:
Ա՛խ, թե մոտ կլինեի՛ն: Կարելի էր շրջապատել ու մահակներով սպանել այդ կենդանուն, որ աշնանը գեր է լինում խոզի նման:

Աշոտը թիակն ուսին վազեց, բայց մի քանի քայլ չարած կանգ առավ, խուճապահար կենդանին այգուց դուրս գալով արդեն ժայռերն էր հասել, ուր և անհետացավ անմիջապես:
«Ափսո՜ս...», - մրմնջում էր Աշոտը:
«Փորսո՞ւղ... Ա՜յ քեզ խայտառակություն», - մտածում էր Սարգիսը: Հիմի Շուշիկն էլ այնտեղ իմացավ.... Աշոտը չէր վախենա, պարզ է, ոչ էլ Հասոն: Մենակ Շուշիկը կվախենար՝ իր նման: «Թո՜ւհ, խայտառակվեցինք...»: Ի՜նչ լավ է սրտոտ լինելը...
Նրան համակել էր ամոթի զգացումը, ականջին դեռ հնչում էր իր բարձրացրած վայնասունը. «Վա՜յ, ա՜ղջը, ա՜ղջը...»:
Հիմի Գագիկն ասում է՝ խե՜ղճ տղա, աչքին փորսուղն արջ է երևում: Ինչո՞ւ ինքն էլ սրտոտ չի ընկերների նման:
- Որ երկար մնանք այստեղ, կփոխվեմ, - ասաց նա ինքնիրեն, բայց և սոսկաց այդ մտքից, ձմեռն այս վայրենի տեղն ապրե՞լ կլինի: Այնպե՜ս է կարոտել փափուկ մահճակալին, մոր պատրաստած համեղ կերակուրների՜ն... Բայց պահեստին՝ երբե՜ք: «Պահեստ» բառն անգամ նա այժմ անախորժ զգացումով է հիշում, դրա հետ իր և հոր համար ինչ-որ ստորացուցիչ բան է կապված:
- Կստիպեմ թողնի պահեստը: Թող գերանդին վերցնի... Թող արտ ջրի...
Առաջին անգամ իր կյանքում նա զգում էր, որ ըմբոստանում է իր անարդար հոր դեմ, այն կարգ ու կանոնի դեմ, որով դաստիարակվել է ինքը...
- Սարգի՜ս, կարո՞ղ ես մի քսան պորցի գյուլկոզա ուղարկել, - դիմացից ձայն տվեց Գագիկը:
- Հիսունը կուղարկեմ: Մի տեսեք ինչքան եմ քաղել, - պատասխանեց նա՝ ուրախ ցույց տալով գույնզգույն ողկույզների կույտը:
- Աչքիս առաջ մառախուղ է, չեմ տեսնում, ի՞նչ ես ցույց տալիս: Ա՜խ Աշոտ, մի կտոր սև հաց լիներ, մառախուղն իսկույն կցրվեր... Ո՜նց մենք չենք իմացել սև հացի պատիվը...
Նա ձայնը նորից բարձրացրեց.
- Հոգիս դուրս գա քեզ համար, Սարգի՜ս, տանջվելով ուտում ես, էլի՜: Ինչքան դժվար բան կա՝ քե՜զ են հանձնարարում...
Քարայրի կողմից թույլ ու նվաղուն ծիծաղ լսվեց:
- Վա՜հ, ականջ ես դրե՞լ, աղջի՜: Մարդ չի կարողանում մի ինտիմ խոսակցություն ունենա սրտակից ընկերոջ հետ... Հասո՜ն, վազիր խաղողի... Ներողությո՜ւն, օղակավա՜ր, էլի ֆունկցիաներիդ մեջ մտա...
Ուրիշ անգամ Սարգիսը Գագիկի կծու ակնարկներին արհամարհանքով կվերաբերվեր: Բայց այս անգամ եթե մոտը մարդ լիներ կտեսներ, որ նրա մեծ-մեծ ականջներն անգամ կարմրել են: Իսկապես, իր ընկերները կյանքները վտանգի ենթարկելով իրեն համար ճամփա են բացում, իսկ ինքը խաղող ուտելով է զբաղված: «Մեծահոգի են... Ես դժվար թե այդպես վարվեի», - շշնջաց նա ինքն իրեն: Իրեն Հասոյի հետ համեմատելը, որ առաջ այնքան վիրավորական էր թվում, այժմ դրա մեջ Սարգիսը նվաստացուցիչ ոչինչ չէր գտնում և նույնիսկ զարմանում էր այն կարծիքի վրա, որ ինքն իր մասին ուներ մինչև Հովազաձոր մտնելը:
Ձախորդությունների մեջ, կոլեկտիվի շարքերում միայն նա սկսեց ճանաչել ինքն իրեն: Ճանաչեց և դառնորեն ժպտաց. «Իսկ իմ մոր համար ես գյուղում առաջին տղան եմ...»:
Հասոն փեշը լիքը խաղող էր տանում ճամփան բացող ընկերներին, բայց ինքն էլ չիմացավ, թե ինչպես շուռ եկավ և շտապեց դեպի այրը, որի առաջ, խարույկի մոտ Շուշիկը նստել գիրք էր կարդում: Աղջիկը ձեռքը ճակատին դրեց, հով արավ և աչքերը կկոցեց:
- Ինձ մոտ կա, ինչի՞ ես բերել, - բողոքեց նա:
- Սրանից չկա: Մի տես ի՞նչ ճութ է, ոնց որ քյահրուբահր լինի... Ասի՝ քրոջս տանեմ, թե չէ կերածս կուլ չի գնում...
Ասաց ու ծիծաղեց: Բայց այլևս չէր շփոթվում առաջին օրերի նման:
- Կարգին բացվել ես, Հասո՜ն... Տո՜ւր... Վա՜յ, ի՜նչ լավն է, ի՜նչ սիրուն, սա ես կպահեմ մորս համար, - դեմքին կարմիր խաղողի ողկույզը հպած՝ քնքշագին ասում էր աղջիկը: - Վաղը տանը կլինենք, չէ՞, Հասո՜ն: Դու էլի կգնաս ֆերմա... բայց ես քեզ չեմ մոռանա, - զգացված արտասանեց աղջիկն այս խոսքերը և աչքերը խոնավացան, կարծես մոտենում էր առհավետ բաժանվելու ժամը:

- Ես էլ քեզ կհիշեմ: Կնստեմ քարափի գլխին, շվի կածեմ ու կհիշեմ քեզ...
Այո, ծանր օրերի ընկերությունն ուրի՛շ ընկերություն է: Նրա կապածը ամբողջ կյանքի ընթացքում չի քանդվում:
Է՛հ, լավ է, բոլոր նշաններից երևում է, որ խումբը վերջին գիշերն է անցկացնելու խոնավ ու սառը քարայրում: Վաղը երեկո նրանք արդեն իրենց տաք վառարանների մոտ կլինեն, հարազատներով շրջապատված և կպատմեն իրենց հետ պատահած զարմանալի արկածները:
Երբ Հասոն վեր կացավ, որ վերադառնա ընկերների մոտ, Շուշիկը նայեց նրա անտրեխ ոտքին, որի գուլպան ծակվել էր ու հրճվում էր տղայի թաց մատները:
Նա իր ոտքից լուռ հանեց Հասոյի տրեխն ու մեկնեց իրեն: Տղան ոտքի կապտած մատներն արագ թաքցրեց ու շփոթմունքով ասաց.
- Ինչի՞ս է պետք... Ես ձնի մեջ բոբիկ ման գալու սովոր եմ...
- Վերցրո՛ւ, ես տեղս նստած եմ, ի՞մ ինչին է հարկավոր, - իրենը պնդեց Շուշիկը:
Հասոն հագավ իր տրեխն ու վազեց ընկերներին օգնության, - այնտեղ, ուր «վերջին գրոհներն» էին տեղի ունենում փակված արահետի դեմ:
Այո՛, քիչ էր մնացել կածանից, այնքան քիչ, որ Գագիկը գլուխը տարուբերելով ասում էր.
- Ափսո՛ս, որ չղջիկներին թողնելու ենք...
Իսկ Հասոն և՛ ուրախ էր, որ վերջապես կհասնի իր կարոտած ծնողներին, և՛ մեղմ թախիծով էր համակվում նրա հոգին, ինչպե՞ս բաժանվի այս լավ ընկերներից...
Երեկոյան դեմ նորից քարայծեր երևացին Հովազաձորում. գայլերի՞ց էին փախել ապաստանել այդ անմատչելի ձորում, թե՞ «հարսանիքի» էին եկել: Այս անգամ նրանց անհանգստացնող չկար, արածում էին ձյունից ազատված դարավանդներում և երբ նկատում էին մեր պատանիներից մեկն ու մեկին, գեղանազ թռիչքներով փախչում-անհետանում էին հարկ առ հարկ իրար վրա կանգնած ժայռերում:
Գիշերը մեր պատանիներից ով արթնանում էր, երբեմն քարայրի մուտքի մոտ ոտնաձայներ էր լսում, այդ քարայծերն էին վազվզում ժայռի կառնիզներով, որոնց տակ բացված էր քարանձավի մուտքը:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես ջուրը սառույց է դառնում, իսկ սառույցը փակում է ճամփան...

Իրենց գերության քսանիններորդ օրվա առավոտյան, երբ դուրս եկան այրից, փառահեղ տեսարան բացվեց նրանց առաջ. արևի առաջին շողերը ոսկեզօծել էին Մեծ և Փոքր Արարատների ճերմակ բարձունքները, իսկ հովիտը դեռ թաղված էր վաղորդյան նոսր մառախուղի մեջ: Ժայռերում կաքավները այնպիսի մի համերգ էին՝ սկսել, որ տղաները մի քանի րոպե զմայլված լսում էին:
- Գնա՛նք, ընկերնե՛ր, օրը հիանալի է: Այսօր մենք վերջնականապես բացելու ենք մեր ազատության ճամփան, - պաթոսով դիմեց Աշոտն իր ընկերներին: Նրա տոնից ու տրամադրությունից պարզ էր, որ շուտով իրենք տանը կլինեն:
Եվ քանի որ այդ բանում համոզված էին խմբի բոլոր անդամները, ուստի ոչ ոքի մտքով չանցավ գնալ-տեսնել ինչ կա իրենց գտած բնակարան-անձավում: Նույնիսկ վառելիք հայթայթելու կարիք չեղավ, թեև կրակը հանգչում էր: Ո՞ւմն էր հարկավոր կրակը, երբ երեկոյան տաքանալու էին թեժ վառարանների մոտ... և քնելու էին փափուկ անկողիններում...
Այդ միտքը ալեկոծում էր նրանց, բայց իրար ոչինչ չէին ասում, կարծես զգուշանում էին, որ իրենց ձեռքից նորից չթռչի արդեն ձեռք բերած ազատությունը: Երեկոյան, երբ ընկերները քնած էին, Հասոն այգուց մեծ քանակությամբ խաղող էր բերել, ճմռել և նրա նյութով լցրել Գագիկի պատրաստած կավե ամանն ու դրել կրակի մոտ: Խումբն այդ նյութին ձեռք չտվեց: Որոշեցին ճամփան բացելուն պես խմել իրենց ազատության կենացը և դատարկ ամանները հետները տանել գյուղ, որպես իրենց անձավային կյանքի վկայական:
- Իսկ քարե դարի մեր գործիքներն ու զենքե՞րը, - հարցրեց Գագիկը: - Հիմիկուց հետներս չտանե՞նք աշխատանքի տեղը: Էն տեղից էլ՝ լույս աշխարհ...
- Ետ չե՞ք գալու, - հարցրեց Շուշիկը և նրա սիրտը թնդաց իր հարցից:
- Չէ՛, պիտի գանք մաճառը խմենք ու ձեզ տանենք հետներս, - պատասխանեց Աշոտը: - Բայց հիմի հետներս կտանենք ինչ որ կարող ենք:

Նրանք վերցրին զենքերը, գործիքները, հագուստները: Սարգիսը ընկերների առաջ պարզերես դուրս գալու համար շատ էր ցանկանում գոնե վերջին օրը մասնակցել աշխատանքին, ուստի փայտին հենվելով առաջ ընկավ: Բայց երբ խումբը շարժվեց, Աշոտը հոգատարությամբ դիմեց նրան.
- Մնա՛, դու դեռ թույլ ես...
Այո, մնար լավ կլիներ: Նույնիսկ երբ առողջ էր և ուժեղ, աշխատանքը նրա համար ծանր բեռ էր, ուր մնաց հիմա, երբ նիհարելուց վիզը երկարել էր, իսկ ոտքերը ծալվում էին:
Բայց իր երբեմնի «հակառակորդի» մեղմ վարմունքը առաջին անգամ չէր, որ նրան ամոթահար էր անում: Շատ բան հիշեց նա. հիշեց իր առաջին օրերի անվայել վարմունքը, հիշեց, թե ինչպես հավաքույթներում, ներքին մղումով, միշտ Աշոտին դեմ էր արտահայտվում: Այդ բոլորը մի ակնթարթում հիշեց Սարգիսը և հաշտ նայելով ընկերոջը, պատասխանեց.
- Չէ, կգամ, գուցե մի բանի էլ ես պետք գամ...
Մեծ թափով և մեծ հույսերով գնացին մեր պատանիները ճամփի մնացորդը բացելու: Գնացին հաղթողի վստահությամբ: Գնացին ցնծացող սրտերով: Բայց շուտով պարզվեց, որ վաղ է նրանց ուրախությունը, տաք ցերեկը ձյունը հալել-ջրով լցրել էր կածանը, իսկ գիշերվա սառնամանիքը կաղապարել էր այն: Այժմ արահետում փափուկ ձյունի տեղ սառույց էր, կապույտ ու ողորկ սառույց...
Խումբը թևաթափ կանգ առավ: Հարվածն այնպես ծանր էր, որ մի պահ նրանք շշմել էին: Այ քեզ բա՜ն... նորի՞ց չնախատեսված խոչընդոտ...
Երեկ ուրախացան, երբ տեսան, որ վերջապես հալ ընկավ նաև արևմուտք նայող այդ լանջի ձյունը և առվակներ հոսեցին, որ հատում էին Դիվային կածանն ու թափվում անդունդը: Ո՞ւմ մտքով կանցներ, որ այդ անակնկալ բարիքը կփոխակերպվի չարիքի...
Մի գիշերվա մեջ ոչնչացել էր նրանց ամբողջ ջանքերի արդյունքը: Մաքրված ձյան տեղ հիմա էլ սառույցն էր փակել ճամփան, ուրեմն և խմբի դեմ էր ելել ավելի համառ, ավելի դիմացկուն հակառակորդ...
Ի՞նչ արած, պիտի փորձեին իրենց ուժերը այդ նոր հակառակորդի դեմ ևս: Եվ մեր տղաները, ձախորդությունից գազազած, նոր կռիվ սկսեցին համատարած սառցե կապանքների դեմ...
- Խփի՛ր, Գագի՛կ, ուժե՛ղ խփիր...
Որտեղի՞ց ուժը Գագիկի բարակ բազուկներում, որ բարձրացնի քարե կացինը ու վրա բերի սառույցի կույտերին:
Բայց լա՜վ տեսարան էր. փշրած սառույցի կտորները ցած էին թափում ու նայում հետևից ժայռի ուղղահայաց ճակատով սառույցները շխկշխկալով գնում-թափվում էին ձորը:
Այդպես փոխեփոխ աշխատեցին և հասան այնպիսի մի տեղ, ուր արահետի վրա կռացած ժայռից ոչ թե լուլաներ էին կախվել այլ սյուներ... Տեղ-տեղ կարծես շավղի վրա թափվող ջրվեժներ էին քարացել...
Պատանիները կանգ առան հոգնած ու հուսահատ:
- Ի՜նչ եք մոլորվել, բա սրանք ո՞ր օրվա համար ենք պատրաստել, - գոչում էր Աշոտը և քարե մուրճով խփում-փշրում ճամփան փակող սառույցի սյուները, ապա նայում էր, թե ինչպես նրանք չխկչխկոցով գլորվում են անդունդը: Իսկ Գագիկը մեկ զարկում էր ձեռքի մուրճով, մեկ նայում երկնքին ու ինքն իրեն փնթփնթում.
«Էս անտեր արևը տեղից չի շարժվո՞ւմ»:
- Արևին շուտ-շուտ մի նայիր, աչքերիդ վնաս է, - ասաց Աշոտը:
Լա՜վ խորհուրդներ են տալիս Գագիկին. մի՛ նայիր, թե երբ է գալու ճաշի ժամանակը, մի՛ հետաքրքրվիր, թե ո՞վ և ե՞րբ է գնալու խաղող բերի...
Վերջապես, երբ արեգակը հասավ զենիթին, Գագիկը արահետի կենտրոնում ուղիղ տնկեց իր մուրճը և հարցրեց Աշոտին.
- Տեսնո՞ւմ ես ստվերն ինչքան կարճացավ:
- Տեսնում եմ, տեսնում, - և Աշոտը քրտինքը սրբելով, ձայն տվեց.
- Հասո՛, գնա ուտելիք բեր...
- Ա՞յ մարդավարի խոսք, թե չէ՝ խփիր, խփիր... Մարդու ականջ են սղոցում էդ կոպիտ-անտաշ բառերը...
Մերթ հույսից պայծառացած դեմքով, մերթ հոգսից մթնած, մեր պատանիներն աշխատեցին մինչև երեկո, բայց առավոտյան եկան տեսան իրենց ամբողջ աշխատանքը նորից ջուրն է ընկել. օրվա տաք ժամանակ վերին ժայռերից ցած ծորող ջուրը լցվել էր կածանը ու գիշերը նորից սառչում, նորից փակում մեծ տանջանքների գնով ձեռք բերած ճամփան...
Այն ժամանակ մեր տղաները այսպիսի մի հնար մտածեցին. երեկոյան նրանք ոստեր շարեցին իրենց բացած կածանի վրա և առավոտյան եկան տեսան, որ ջուրը սառել է ոստերի տակ
ստացվել է այնպիսի ճամփա, որի վրա որքան էլ ցանկանաս, չես կարող սայթաքել: Իսկ սառույցը տակից ամուր բռնած պահում էր իր վրայի ճյուղերը:

Այդպես շավիղը մաքրելով և նրա վրա ոստեր շարելով, հասան այն ճեղքին, որի վրայով Հովազաձոր մտնելու ժամանակ վախվխելով էին ցատկել:
Այժմ այդ ճեղքն այլևս թռչել-անցնել չես կարող, նրա երկու ափն էլ սառցակալած է:
Այն ժամանակ տղաները երկու երկար կտոր փայտ բերին, դրին ճեղքի վրա և նրանց վրա ճյուղեր շարեցին: Ստացվեց կամուրջ, որի ծայրերը գիշերվա սառնամանիքից պիտի ամուր կպչեին թաց գետնին:
Կարծես գործը լավ էր գնում, երբ մեր պատանիները դեմ առան մի նոր և շատ լուրջ խոչընդոտի, վերևից հոսող ջուրը հետզհետե սառչելով և ուռչելով, լցրել էր «թունելը»:
- Հո՜, հո՜... է՛լ վերջ: Գնանք մտնենք մեր նոր գտած այրը ու սրթսրթանք մինչև գարուն...
Աշոտը զայրագին նայեց Գագիկին:
- Եթե դու թուլամորթ ես, գոնե ուրիշներին մի՛ հուսահատեցնի:
Ապա մի փոքր մեղմանալով, շարունակեց.
- Իսկ դու գիտե՞ս, որ ձմեռը դեռ մեր առաջն է... Դու կարծում ես բոլորը՞ կդիմանան հունվարի սառնամանիքին: Վերցրեք մուրճերը խփենք: Մինչև երեկո մենք թունելը կբացենք, մի՛ վախեցեք... Դե՛, արծվի ճուտե՛ր, ձեզ տեսնեմ...
Չէ՛, գործը նորից թափ առավ, նորից մոտեցավ ազատության բաղձալի ժամը, որ բնությունը հեռացրել էր այնպես անարդարացի կերպով : Հիմա որ նրանք հաստատ վաղը-մյուս օրը դուրս կգան ձորից, ուրիշ ի՞նչը կարող է արգելք հանդիսանալ այնքան մեծ տանջանքների գնով ձեռք բերված ազատությանը...
Այդպես, ցերեկները նրանք փշրում էին իրենց ազատության ճամփան փակող սառույցները, քրտնում էին ու հովանում, հուսահատվում էին ու ոգևորում, իսկ երեկոները մարխի[23] լույսով երբեմն գիրք կարդում, ամենից հաճախ լսում հովիվ Հասոյի անուշ երգերը..

- Լո, լո, լո, լո, բերիվա՜նե,
Ես տեսնում եմ քո աչքերը,
Ձուլա՛լ-զուլա՛լ, Ալագյազի ջրերի պես.
Խմում եմ, խմում,
Սիրտս չի հովանում...

Մի գիշեր էլ, երբ նա ածուխով կեղևի վրա գրեց ու սովորեց հայկական այբուբենի վերջին տառը, ուրախությունից մի ձոն երգեց՝ ուղղված իր ուսուցչուհուն.

Մեր հանդերում հազար աղբյուր կա,
Հազար ծաղիկ,
Բայց ոչ մեկը քեզ նման չի, իմ քուրիկ
Շուշիկ...

- Բռավո, Հասո, բռավո՛...
Այլևս ոչ «բռավոներով», ոչ ծափերով չես կարմրացնի Հասոյին. նա այնպես էր վարժվել ընկերներին, Շուշիկին, որ ազատ էր, զգում իրեն ամեն կաշկանդումից:
- Արդեն երեսի կաշին լրիվ մշակվել է, - եզրակացրեց Գագիկը:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ. Թե որքան մոտ և որքան հեռու էր ազատությունը

Հաջորդ օրը երեկոյան դեմ եղանակը կտրուկ փոխվեց: Ամպեր էին գալիս արևմուտքից և պատում երկինքը, օրը մռայլված էր, ցուրտ քամի էր փչում, քրտնած ու հոգնած տղաները հազիվ էին կանգնում նեղ շավղին:
- Հը, ինչ ես կարծում, Հասո՛, էլի՞ մեյդան է ավլում ձյան համար, - հարցրեց Աշոտը երկյուղով:
- Հա՛, գիշերս ձին կգա...
Աշոտի թևերը թուլացան, ուրեմն նորի՞ց է փակվելու այնքան չարչարանքով բացած արահետը...
Եկավ Գագիկը. նա գնացել էր Սարգսին, իր քաղած խաղողի հետ միասին, քարայր տեղափոխելու:
- Հը՛, ի՞նչ եք նոթներդ կիտել, - հարցրեց նա:
- Երևի ձյուն գա: Դե՛հ, հուփ տանք, տղե՛րք, մինչև մթնելը մի քսան քայլ էլ առաջ գնանք: Գագի՛կ, չափեցի՞ր, կածանից ինչքա՞ն ենք բացել առավոտից մինչև հիմա:
- Տասնչորս մետր, վեց սանտիմետր, երկու միլիմետր...
Իսկի մի լուրջ բան կիմանա՞ս Գագիկից:
Նրանք լարեցին իրենց վերջին ուժերը և նորից գործի կպան:

---

[23] Մարխ – դյուրավառ խեժ, որով հարուստ են եղևնու, սոճու, կեչու, գիհի ծառերը, մանավանդ նրանց արմատները, որոնցից տաշեղներ են ծինում և վառում ճրագի տեղ:

- Ո՛վ գիտի, գուցե մեր բախտից այս անգամ Հասոն սխալ դուրս գա՞, - ընկերներին սիրտ էր տալիս Աշոտը:
Հովիվ պատանին իրենը չպնդեց, չէր ուզում ընկերների թափը կոտրել: Բայց նա, որպես «բնության զավակ», իր բնազդով անսխալ կերպով զգում էր, որ շուտով սկսվելու է ձյան փոթորիկը...
Եվ իսկապես, մեր լեռնային գիժ բնությունն իսկի ժամանակ էլ չտվեց գոնե տասը քայլ շավիղ մաքրելու: Ձյան չոր ու կարծր հատիկները քամու հետ սկսեցին խփել տղաների դեմքերին:
- Տղե՛րք, ես էլ համբերություն չունեմ: Ես հիմա, ինչ էլ որ լինի, պիտի դուրս գամ այստեղից ու գնամ գյուղից ձեզ օգնություն բերեմ, - վճռեց Աշոտը և մի մահակ վերցնելով, առաջ ընկավ: Այնպես էր զայրացել իրար հետևից կրած անհաջողություններից, այնպես նրա ջահելությունը ըմբոստացել էր բնության չար ուժերի դեմ, որ վճռել էր անելիքը, և ոչ մի ուժ այլևս չէր կարող նրան ետ կանգնեցնել իր խելագար մտադրությունից:
- Կա՛ց, հիմարություն մի անի, - նրա փեշից բռնեց Գագիկը:
- Իսկ դու գիտե՞ս, որ չգնամ՝ ամբողջ ձմեռը փակված ենք մնալու: Ձմեռն սկսվում է, այս ձյունն այլևս չի հալվելու... Դե՛, ես գնացի, դուք վերադարձեք ու այրում սպասեցեք, երեք-չորս ժամից օգնությունը կհասնի:
Աշոտի համառությունը հայտնի էր ընկերներին: Վճռեց՝ պիտի կատարի, թեկուզ կործանվելու էլ լինի: Է՛հ, ուրեմն, թող գնա, ո՛վ գիտի, գուցե ճի՞շտ է վարվում:
Արահետը դարավանդի ձև ուներ, բայց այժմ ձյունն այնպես էր լցրել, որ հավասարվել էր ժայռի մակերեսին: Քանի սառած չէր, կարելի էր գնալ այդ թեք մակերեսով, որովհետև Աշոտը ուր դնում էր ոտքը, խրվում էր: Իսկ խրվել, նշանակում էր հաստատուն մնալ արահետի վրա: Միակ վտանգն այն էր, որ կարող էր ձյան տակ մեծ ճեղք լինել, կամ կածանի պռունկը պոկ եկած կլիներ՝ հետո ձյունով քողարկված: Տղան ձեռքի փայտը խրում էր ձյան մեջ, դրանով ստուգում ոտքի դնելիք տեղը, հենվում էր նրան և դանդաղ առաջ գնում՝ գլուխը շարունակ ձախ թեքած, հայացքը ժայռի պատին, որ նրա ձախ կողմից վեր էր ելնում ուղղահայաց: Ընկերները քարացել էին իրենց տեղերում և շունչները պահած հետևում էին նրա ընթացքին:
Շատ չէր հեռացել Աշոտը, երբ պատահեց այն, ինչից այնքան վախենում էր. փոխեց քայլը, բայց ձյան տակ չկար ոչ հենարան, ոչ շավիղ, հավանաբար շավիղի եզրը պոկ եկած էր: Այլևս չկարողացավ ետ կանգնել, և ոտքը իր տակ հենարան չգտնելով, ցած գնաց ու տղան երեսի վրա փռվեց ձյան վրա: Մահակը շիկրտոցով ձորը գնաց, տղան սողաց դեպի անդունդը և կախվեց նրա պռնկից...
- Բռնի՛ր քարից, պի՛նդ բռնիր... - սարսափահար գոչեց Գագիկը և առաջ նետվեց:
Իզուր էր նրա նախազգուշացումը. խորտակվողը ձեռքերը գցել էր արահետի եզրին ցցված սեպ քարին, ամուր գրկել էր այն ու զույգ ոտքերը կախել անդունդի վրա...
Եթե քարը պոկ չգար, կարող էր այդպես մի քանի րոպե կախված մնալ:
Հասոն տեսավ, որ Գագիկի սրունքները դողդողում են և ծնոտները զարնվում են իրար ու հասկացավ, որ նա գործը փչացնելու է:
Որտեղի՞ց այդքան սառնասրտություն և կամքի ուժ առաջ եկավ հովիվ պատանու մեջ:
- Կա՛ց, ե՛ս առաջ ընկնեմ, - գոչեց նա: Ապա շավիղի լայն մասում ընկերոջը իր հետևը թողնելով, քարայծի նման վազեց ժայռի ճակատով ու կռացավ-բռնեց խորտակվող ընկերոջ ուսից:
Տեղ հասավ և մյուս ուսից էլ Գագիկը բռնեց, բայց դողը չէր անցնում, սարսափը համակել էր նրան:
- Սպասի՛ր, Աշո՛տ, չշարժվե՛ս, քեզ թափ չտաս, թե չէ մեզ էլ կտանես հետդ, - արտաքին հանգստությամբ հրահանգներ էր տալիս Հասոն: - Դե՛, Գագի՛կ, ոտիդ տեղը պնդացրու, որ սոթ չտաս: Պի՞նդ է: Դե, քաշենք միասին, հո՛փ... հո՛փ... քաշի՛ր... եկա՛վ... եկա՛վ...
Վերջին «եկավը» հնչեց խնդալի, բերկրանքով: Նրանք գրկում էին մահից ազատված իրենց ընկերոջը, համբուրում և արցունքախառն ծիծաղում:
- Նստենք, թե չէ ուրախությունից հիմի ձորը կթափվենք, - զգուշացրեց Գագիկը:
Լուռ նստեցին և ունկնդրում էին իրենց սրտի զարկերին: Հետզհետե հանդարտվեցին, նույնիսկ Գագիկի դողն անցավ, բայց դեռ աչքերի առաջ էր ընկերը՝ զույգ ոտներով անդունդի վրա կախված...
- Դե, ետ դառնք, ես շարունակեմ իմ ճամփեն, - վեր կենալով պատվիրեց Աշոտը:
Գագիկն ահով բռնեց նրա ձեռքից:
- Մեր պետն ես, բայց այս անգամ քեզ չենք ենթարկվելու, - վճռականորեն հայտարարեց նա:
Աշոտը տատանվում էր: Ընդամենը քսան քայլ էր մնացել մինչև ազատություն: Իսկ հետևում տանջալի, զրկանքներով լի ձմեռն էր, որ կարող էր ոչնչացնել իրենց: Ի՞նչ պիտի անեին առանց սննդի: Այդ քսան քայլը հո նա չոքեչոք, ձեռքերով ձյունը մաքրելով կգնա:
Բայց քիչ առաջ նրան համակած մահվան երկյուղը դեռևս չէր անցել, ուստի լուռ հնազանդվեց ընկերների կամքին:

Ընդամենը քսան քա՛յլ... Ազատությունն այդքան մոտ էր և այդքան հեռո՞ւ...
Արդեն տրորված կածանով նրանք վերադառնում էին Հովազաձոր, իսկ շուրջը ոռնում էր բուքը և սպառնում անդունդը նետել խիզախ պատանիներին: Հասան թունելին, կռացած ներս մտան և խրվեցին ձյան մեջ. քամին նորից լցնում էր հա լցնում...
- Քանի մաճառը եռում է փորներումդ, մի՛ վախենաք, ճղեցեք-անցկացեք, տղամարդի պես հետևներիցդ գալիս եմ, - ասում էր Գագիկն իր առաջից ընթացող ընկերներին:
Սկսվեց տանջալից պայքարը մոլեգնած բուքի և հյուծված պատանիների միջև: Իր համար բույն փորող գորշուկի նման նրանք ձեռքերով ետ էին տալիս ձյունը ու առաջ սողում: Վերջապես դուրս եկան թունելից, բայց այլևս առաջ գնալ անհնարին էր, արդեն մթնել էր, կածանը չէր երևում, իսկ ձյունախառն քամին ոռնում էր քարափներում:
- Մտեք խոռոչը, -հրահանգեց Աշոտը:
Շավղի աջ պատին մի տեղ ժայռը կռացել էր և մի «պուճախ» առաջացրել, մի քարայծի թաքնվելու տեղ: Դա այն խորշն էր, ուր խումբն անց էր կացրել Հովազաձոր մտնելու առաջին գիշերը: Մեր տղաները մտան այդ խոռոչը և իրար սեղմվելով՝ դողացրին մինչև լույս: Գիտեին, որ քանի ձյուն է տեղում, չեն սառչի, այդ ժամանակ երկիրը ծածկված է լինում ամպի վերմակով և տիեզերական սառնամանիքը չի հասնում նրան:
Իհարկե, նախանձելի չէր մեր պատանիների վիճակն այդ գիշեր, բայց և հուսահատական էլ չէր. արդեն ավելի վատ գիշերներ էին տեսել նրանք: Քիչ առաջ էլ Աշոտի կյանքը մազից պրծավ, էլ ինչո՞ւ պիտի թափվող փափուկ ու տաք ձյունը անտանելի թվար նրանց, չէ՞ որ «կարկուտի տակ ընկնողը անձրևից չի վախենա»:
Երբ բուքը մի փոքր խաղաղվում էր, քարայրի շեմքից լսվում էին Սարգսի տագնապահար կանչերը.
- Աշո՛տ, Գագի՛կ, որտե՛ղ եք...
- Մի վախենաք, մեզ ոչինչ չի պատահի, - պատասխանեց Աշոտը:
Երևի ձայնը տեղ չհասավ, Սարգիսը շարունակում էր տագնապով կանչել, երևի Շուշիկը նրան հանգիստ չէր տալիս:
- Այստեղ ենք, այստե՛ղ, - որքան ուժ ուներ գոռաց Աշոտը:
- Եկե՛ք, ինչո՞ւ չեք գալիս..,
- Ճամփան փակ է, դուք քնեցեք, դուք քնեցե՛ք, մենք վաղը կգանք: Գիշերելու ենք այրի մեջ, դուք հանգիստ քնեցե՛ք...
Ի՜նչ սոսկալի էր շարունակ ձյուն փչող այդ մառախլապատ գիշերը...
Ես չեմ նկարագրի այն տանջանքները, որ կրեցին «Դիվային կածանում» փակված մեր պատանիները: Ձյունը շարունակում էր տեղալ առատությամբ և լցնել դարուփոս, իսկ նրանք ժայռի ճակատներով նորից պիտի վերադառնային ձորը, այն արահետով, որով չոր ժամանակ անգամ անվանի որսորդ Արամը ահով էր գնում:
Իրենց գերության երեսունմեկերորդ օրը, քաղցած և տենդագին աշխատելով, նրանք հազիվ կարողացան նորից լցված արահետը մաքրել և մոտենալ ձորին, ուր Սարգիսը, իր փայտին հենված՝ արձանացել էր տեղացող ձյան տակ: Անզորությունից նրա լացը գալիս էր, թե ինչու ինքն առողջ չպիտի լինի, որպեսզի ճամփա բանա դեպի ընկերներն ու սնունդ հասցնի նրանց: Մյուս կողմից էլ Շուշիկն էր վայնասուն բարձրացրել քարայրի առաջ: Նա ձայն էր տալիս, խնդրում, որ չշտապեն, զգույշ լինեն և ձայնը ցածրացնելով՝ լաց էր լինում այն մտքից, թե կարող է ընկերներից մեկն ու մեկը սայթաքել և ժայռից գլորվել: Տագնապալի օր էր այդ օրը, և մեր պատանիները բոլորն էլ մեծ ապրումներ ունեցան, մինչև որ վտանգն անցավ, երեք ընկերները հասան շավիղի ծայրին, բաշի գլխից ցատկեցին ձորը և վրա ընկան Սարգսի բերած խաղողին: Նույնիսկ Գագիկը ժամանակ չունեցավ կատակ անելու («Ինչ կատակի ժամանակ է, փորիս մտիկ եմ անում՝ գլխիս կրակ է վառվում», - յուրովի մտածում էր նա):
- Հո չե՞ք հիվանդացել... - հոգատարությամբ հարցնում էր Սարգիսը. - Մենք գիշերը չկարողացանք քնել...
- Չենք հիվանդացել, բայց հիվանդից պակաս չենք, - թույլ ժպտաց Աշոտը: Նրա թիկունքը բռնվել էր, ոսկորները տնքում էին, գիշերը սառած գլուխը ցավում էր:
Ավելի լավ վիճակում չէին և ընկերները. Գագիկը ծակոցներ ուներ կողերին և դրանից դժվարությամբ էր շնչում, իսկ Հասոյի ոտքերը, որ խոռոչից դուրս էին մնացել, մրմռում էին ցրտահարվածի նման:
- Ոչինչ, տաքանանք՝ կանցնի, - հուսադրում էր Աշոտը:- Շուշիկն ինչպե՞ս է:
- Ոչի՜նչ: Այդ ի՞նչ է, շալվարդ պատռվել է:
- Ոչի՜նչ, հով կլինի, - Աշոտի փոխարեն կարճ պատասխանեց Գագիկը:
Խաղող չէր դա, այլ ինչ-որ դրախտային մի բան, որի համը և պատճառած հաճույքը անկարելի է նկարագրել:

Երբ այնքան կերան, որ ուշքի եկան, Գագիկը մտածեց մռայլ եղանակը մեղմացնել.
- Այս հո լավ եղավ...
- Ի՞նչը լավ եղավ, - զարմացավ Սարգիսը:- Նորից ձյուն ու բուք և հանկարծ՝ «այս լա՛վ եղավ...»:
- Լավ եղավ, որ ճամփեն նորից փակվեց: Պատկերացրո՛ւ, Սարգի՛ս, պալատի նման մի տուն ենք գտել, որ կարելի է ձմեռը հրաշալի ապրել, դռնո՛վ, լուսամուտո՛վ... և մեջը լիքը մի քանի հարյուր հատ չաղլիկ խորոված՝ացու: Իսկ մեր խելոք պետը ուզում է այդ բոլոր հարմարությունները թողնի գյուղ գնա: Չէ՛, Գագիկը խամ բան չի անի. նա գյուղ կգնա միայն վերջին չղջիկը վայելելուց հետո...
- Իսկապե՞ս, Աշո՛տ, տո՞ւն էլ կա, խորոված է՞լ...
- Կա՛: Կապրե՞նք, չվախենաք: Եվ Աշոտը ամուր քայլերով առաջ ընկավ:
Նրանք՝ մահից ճողոպրած մեր պատանիները՝ վերջապես նորից օջախի մոտ են: Ձյունն անընդհատ թափվում է երկնքից, ձմեռն է վրա հասնում իր արհավիրքներով:
Ի՜նչ լավ էր երեկ, արև՛, պայծա՛ռ... Իսկ ճամփից քիչ էր մնացել, բոլորովին քիչ... Ինչպե՛ս հանկարծ խորտակվեց լույս աշխարհ դուրս գալու հույսը: Նամարդ բնությունը իր մի գիժ արարքով հիմնովին քանդեց մեր պատանիների հաշիվները:
Եվ խումբը ստիպված որոշում ընդունեց ձմեռել Հովազաձորում...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ. Թե ինչպես անցկացրին ձմռան առաջին օրը Հովազաձորի գերիները

Այդպես ուրեմն, մեր պատանիները, աղետի մեջ լինելով, ավելի մեծ աղետի ենթարկվեցին, այս անգամ արդեն վերջնականապես փակված մնացին Հովազաձորում, և միանգամից փշրվեցին ազատվելու նրանց այնքան վառ հույսերը: Հիմա արդեն պարզ էր, որ իրենք մինչև գարուն փակված են մնալու: Դրսի օգնության վրա հույս դնել չէին կարող, պարզ էր, որ գյուղում ոչ ոքի մտքով չէր անցել, թե պատանիները կարող են փակված լինել մոտակա ձորերից մեկում:
Չնայած այս անելանելի վիճակին, պիտի ասենք, որ մեր գերիները, բացի Շուշիկից ու Սարգսից, բավական արիաբար ընդունեցին մինչև գարուն փակված մնալու որոշումը որպես դառն իրականություն և արագ հաշտվեցին այդ փաստի հետ:
Սակայն որքան էլ անհավատալի թվա, պիտի ասենք, որ իրենց աղետալի վիճակը այս անգամ չէր ընկճել մեր պատանիներին:
Առաջին ձյունին, երբ պարզվեց, որ դրսից իրենց օգնություն չի գալու, ահն ու հուսահատությունը իսկույն պատեց նրանց, թեև եղանակը տաք էր, ձյունը հալվում էր և շատ էին ազատության շանսերը: Իսկ այժմ, թեև շուտով ազատվելու շանս բոլորովին չէր մնացել, բայց նվնվացող չկար: Նրանք այժմ համարձակ էին նայում ձմռան աչքերի մեջ, գրեթե մարտահրավերով: Շատ աղետների ենթարկեց նրանց Հովազաձորը, բայց իրենք բոլորն էլ նորից կենդանի են, և դա քիչ բան չէ: Հետո, նրանք այժմ մեծ փորձ ունեն ձմռան դեմ մղելիք պայքարի համար: Մարմինները վարժվել է անձավային կոշտ կյանքին, ցրտին, զրկանքներին: Եվ, ամենակարևորը, այժմ վստահ են, որ չեն կորչի, առաջին օրերի անվստահությունն այլևս չկա: Իսկ վստահությունն առաջացել և ամրապնդվել է նրանց հոգում դժվարությունների մեջ, Հովազաձորի դաժան բնության դեմ մղած կռիվներում: Մինչև այժմ Հովազաձորը նրանց չի կարողացել ընկճել: Այսուհետև առավել ևս. Չէ՞ որ անգամ Սարգիսն ու Շուշիկը այլևս այն չեն, ինչ էին այն օրը, երբ ձորը մտան: Ուրեմն խումբն ուժեղացել է: Այդ բոլորի մասին ասաց Աշոտը և ամուր ասաց:
- Ուրեմն, մենք պետք է պատրաստվենք ամբողջ ձմեռն այստեղ անցկացնելու, - դիմեց նա ընկերներին:
- Իսկ դրա համար՝ սննդից առաջ և նրանից շատ կամք է պետք և տոկունություն: Եթե կամք եղավ՝ սնունդ կճարվի: Առայժմ մենք խաղող և միս ունենք: Վաղը ուրիշ բաներ կճարենք: Հայտնի չէ, թե ինչ, բայց կճարենք: Գլխավորը՝ չհուսահատվել և չնվվալ: Այսպես, առավոտը տեղափոխվում ենք մեր նոր բնակարանը... Իսկ...
- Ճշտի՛ր՝ մեր ձմեռայի՛ն բնակարանը: Որովհետև մենք այս րոպեիս դեռ ամառանոցում ենք, - վրա բերեց Գագիկը, իր լրացումի վրա հիացած:
Աշոտը շարունակեց.
- Երբ կգնանք մեր նոր բնակարանը...
- Էլի սխալ ես արտահայտվում, Աշո՛տ, պետք է ասել՝ երբ կմոտենանք առատ և համեղ խորոված՝ացվին...
- Այդ ի՞նչ խորոված է, որ քանի օր է այդ Գագիկը գլուխն է գցել, - բարկացավ Շուշիկը, որը, հիվանդությունից նոր ապաքինված բոլոր կովկասցիների նման, սրտի թրթռոցով խորոված էր ուզում ուտել:

Գագիկը խորամանկ աչքով արավ.
- Համբերի՛ր, Շուշի՛կ, իմ սեփական վառեկների նման լցրել եմ հավանոցս, դուռը վրաները փակել, ամեն ծակուծուկ խոտով բռնել, որ չփախչեն: Վա՛հ, Աշո՛տ, դրուստ պիջակս մնացել է մեր նոր բնակարանի... բուֆետում կախած...
- Հավատալս չի գալիս, թե քո հավանոցում հավ կա, - գրգռում էր Շուշիկը, մի գաղտնի հույսով:
Նրա հաշիվները սխալ դուրս չեկան, Գագիկը տեղից վեր ցատկեց ու արժանապատվությամբ ասաց.
- Ես որսո՞րդ եմ, թե որսորդի տղա, որ փչեմ: Շամփուրները պատրաստեցեք, հիմի անփետուր վառեկները բերում եմ...
Հոխորտում էր, բայց մենակ իսկի այրի շեմքից կհեռանա՞ր որ: Հասոն արդեն գլխի էր, որ Գագիկը այն կարգի տղաների թվին է պատկանում, որոնք իրենց երկյուղը աշխատում են խլացնել ամպագոռգոռ խոսքերով, որով և հետզհետե, ինքնաբերաբար, քաջալերվում են: Գիտեր, բայց նրբանկատորեն ցույց չէր տալիս (իսկի ընկերոջ պատիվը կգցե՞ր որ):
- Գամ քեզ օգնե՞մ, - համեստաբար հարցրեց նա:
- Օգնականն ինչի՞ս է պետք... Հա՛, վառեկները շալակելու համար հարկավոր կգաս: Գրքերի պայուսակը հետդ վերցրու: Աշո՛տ, ինձ օգնող պետք չի, բայց քո հետաքրքրության համար կարող ես դու էլ ընկերանալ ինձ...
Այսպես նա հաջողեցրեց թե՛ իր երկյուղը քողարկել և թե այնպիսի խումբ կազմել, որի հետ կարելի էր անծանոթ անձավը մտնել:
Նրանք պետք է հետազոտեին այգու տիրոջ բնակարանը: Անցյալ անգամ մթության մեջ ոչինչ չէին նկատել և շատ էլ չէին հետաքրքրվում, թե ինչ ժառանգություն է թողել իրենց խորհրդավոր անձավաբնակը, - բոլորի ուշքն ու միտքը Դիվային կածանի կողմն էր: Այո՛, երեկ ուրիշ էր, երեկ նրանք պատրաստվում էին տուն վերադառնալու:
Երբ ձյունը եկավ և պարզվեց, որ վերջնականապես փակված են մնում ձորում, այգու տիրոջ բնակարանը նոր արժեք ստացավ նրանց աչքում: Իրենց փրկությունը շատ բանով այժմ կախված էր այդ բնակարանից, որի մեջ, անշուշտ, կլինեն այն հասարակ հարմարությունները, որով ապրել է նրա տերը:
Ահա ինչու Աշոտը ևս անհամբեր էր դարձել: Նա վերցրեց կենու խեժառատ ձողեր, որ Սարգիսը պատրաստել-չորացրել էր օրեր առաջ՝ երեկոները ճրագի տեղ վառելու համար, և դուրս ելավ այրից: Գագիկն ու Հասոն վառվող փայտեր վերցրին հետները (հո չէի՞ն մոռացել գազանի հարևանությունը) և գլխներից վերև պտտեցնելով ցած իջան, հասան քարե աստիճաններին և թեքվեցին դեպի վեր:
Երբ մտան այրը և խանձողները միացնելով փչեցին-բոցավառեցին, առաջին բանը, որ տեսան՝ հատակին ընկած մի մրոտ կաթսա էր, փայտե շերեփը մեջը: «Ա՞յ, ընկերն ինչի համար է, առանց ընկերի այստեղ սի՞րտ կդիմանար», -մտածեց Գագիկը և մեծահոգաբար թույլ տվեց Աշոտին, որ առաջ անցնի և մոտիկից զննի պղնձյա կաթսան, որի ներսը արջասպի գույն էր ստացել:
- Ահա թե ինչի մեջ է կերակուր եփել այգու տերը: Այս էլ նրա ափսեն, - և Աշոտը մի կավե ման վերցրեց այրի անկյունից: Կաթսա՛... ափսե՛... Անպատմելի ուրախություն պատեց մեր պատանիներին: Հիմի որ նրանք ջրի պաշար էլ կունենան, կերակուր էլ կեփեն:
Տղաները ժանգոտ կաթսան տարել-չորս կողմից զննում էին այրի շեմքին, լույսի առաջ, ապա կավե ամանն էին շուռումուռ տալիս և լուռ հրճվում:
- Տեսնենք է՛լ ինչ կա... Սող՛ցը պիտի գտնել, Աշո՛տ, հիշո՞ւմ ես սղոցած քոթուկը, - գոչեց Գագիկը: -Սղոցը որ գտնենք՝ էլ վառելիքի պակասություն չենք ունենա:
Այդ ժամանակ մի թռչուն, օդում անձայն և կեռումեռ պտույտներ անելով՝ բաց դռնից դուրս թռավ: Նրան հետևեցին երկրորդը, երրորդը, չորրորդը...
- Խորովածը ձեռից գնաց, - գոչեց Գագիկն ու դուռը ծածկելով՝ մեջքը դեմ արավ նրան: Երբ վեր նայեց, այրի առաստաղին կրակի լույսով բազմաթիվ թուխ ուռուցքներ տեսավ: Ծիծեռնակի ցեխաշեն բնե՞ր են ապառաժին ամրացված, թե՞
Նա դեռ չէր որոշել, թե ի՞նչ է իր տեսածը, երբ այդ «բներից» մեկը պոկ եկավ և թևեր առնելով սկսեց պտույտներ գործել այրի մեջ:
- Լույսից զարթնում են, Հասո՛, խանձողներն իրարից հեռացրու, - գոչեց Աշոտը:
Բոցը հանգավ, ճնշող խավար տիրեց այրում և Հասոյին թվաց, թե նրա մութ խորշերը լցվեցին քաջքերով. նա հանեց դանակը, բաց արավ և պողպատը թույլ առկայծեց մարվող կրակի ցոլքից: «Հիմի որ չեն մոտենա...», - սրտապնդված մտածեց նա: Հայրն ասել էր, որ «շեյթանը» վախենում է սրած պողպատից...
- Դո՛ւրս եկեք, - հրահանգեց Աշոտը:

- Էն աղջկա առաջ գլուխս գովել եմ, Աշո՛տ, ինձ մի՛ խայտառակիր, - չեղած մորուքը բռնելով խնդրեց Գագիկը:
- Ի՞նչ անենք: Ո՞նց բարձրանանք: Պատն ի վեր գերան պիտի կանգնեցնենք, ուրիշ կերպ չի լինի...
- Չգիտեմ, դուք մի հնարքով բռնեցեք մի քանիսին, տանելն ու Շուշիկին տալը իմ վզին... Կարող եմ ուտելն էլ վզիս վերցնել, արևս վկա...
Տղաները մթնում ծիծաղում էին:
- Ես էլ չեմ գնա առանց վառեկի: Իմ քույրը, որ վառեկ չուտի, ես չեմ հանգստանա, - կտրուկ հայտարարեց Հասոն: - Հասկացա՞ք, որ սիրտը խորոված է ուզում...
- Հասկացանք, հո գլուխներս դդում չի: Հա՛, Աշո՛տ, ասում ես՝ գերան է պետք: Բա ես ու դու մի գերանի չափ չկա՞նք: Արի ուսերիդ կանգնեմ, Հասոն էլ՝ ի՛մ ուսերին...
Ճարն ինչ, համաձայնեցին: Շարվեցին նրանք այրի պատն ի վեր և Հասոյի ձեռքը հասավ ամենամոտ չղջիկներին: Տղան սարսռում էր նրանց կակուղ ու սառը մարմիններն իր ձեռքի մեջ զգալով, բայց և քաղցած մարդու հաճույքն էր զգում այդ հպումից:
Ուսից կախած պայուսակը լցրեց չղջիկներով և զարմանքով տեսավ, որ նրանցից ոչ մեկը փախչելու փորձ չի անում, նույնիսկ չի էլ շարժվում տոպրակում: «Ա՛յ քեզ խելոք վառեկներ», - Գագիկի «ոճով» մտածեց նա և ցած թռավ:
- Որ պիջակս անցքից հանեմ, հո չե՞ն փախչի, - հարցրեց Գագիկը:
- Չէ՛, ամուր են քնած: Որոնք դեռ լավ չէին քնել ու արթնանալու էին՝ արդեն փախել են, իսկ սրանց քունը խոր է, - բացատրում էր Աշոտը:
Գագիկը դրսում հագնում էր իր պիջակը և հետը զրուցում.
- Խե՛ղճ, առանց ինձ մրսել է: Արի, արի մեջքիս կպիր տաքացիր...

- Վառեկները բերե՞ց թուխ տղան, թե չէ, - այրը մտնելուն պես գոչեց Գագիկը: - Քո արևը, Շուշի՛կ, մի ամսան ու մի պղինձ ենք գտել, որ ամեն մեկը մի աշխարհ արժե:
- Վա՞յ, ինչ լավ է, - ուրախացավ աղջիկը: - Իսկապե՞ս վառեկներ ես բերել:
Բայց իրենց թաղանթների մեջ փաթաթված և ձմռան քուն մտած չղջիկներին տեսնելով, աղջիկը զզվանքով դեմքը ծռմռեց:
- Սրանց կերածը միջատներ են բոլոր մյուս թռչունների նման: Իսկ միսը՝ հիանալի է, - համոզում էր Աշոտը:
Բայց Շուշիկը ոչ մի կերպ չէր համաձայնում ճաշակել սննդի այդ նոր տեսակից:
Այն ժամանակ Սարգիսը նորից դիմեց դպրոցում անցած առարկաների օգնությանը: Նա ասաց, որ իրենք շատ խաղող ունեն, բայց միայն խաղողով ապրել չի կարելի: Կենսաբանությունից հայտնի է, որ խաղողը միայն «վառելիք» է տալիս մարդու օրգանիզմին:
- Իսկ մեզ վառելիքից բացի, սպիտակուցներ են հարկավոր, - ասաց նա ծանր-ծանր: - Մեր թուլացած մկանները ինչո՞վ ենք վերականգնելու, չէ՞ որ օրգանիզմի շինանյութը սպիտակուցն է...
- Այո՛, -համաձայնեց Աշոտը: - Ուրեմն, եթե ուզում ենք ապրել, մի կողմ պիտի դնենք զզվանքը: Եվ ինչ զզվելու բան կա, կրիայից էլ էինք զզվում, տեսա՞ք ինչ համով էր:
- Է՛հ, բան ասացիր, Փարիզում գորտ են ուտում, Հունաստանում՝ խխունջ, ես Հովազաձորում փափլիկ չղջիկ չե՞մ ուտի: Դրանցից մեկը տուր տեսնեմ:
Այնքան ամուր էին քնել չղջիկները, որ Գագիկը կրակի լույսի տակ նրանցից մեկին ափերի մեջ շուռումուռ էր տալիս, բայց սա չէր արթնանում, դա նման էր լեթարգիական քնի:
Չղջիկը իր մաշկե թևերով չորս կողմից փաթաթվել էր այնպես, ինչպես թիկնոցով կփաթաթվեն անձրևի ժամանակ, կամ այն դեպքերում, երբ չեն ուզում, որ մարդ ճանաչի իրենց: Փաթաթանից դուրս էին մնացել միայն ոտքերի սուր ու կեռ ճանկերը, որոնցով և գլխի վրա կախվում ու հենց այդպես էլ կախված ձմռան քուն է մտնում նա:
- Ա՛յ հետաքրքիր ուսումնասիրության նյութ բնասերի համար: Աշոտը ափի մեջ զննում էր մի այլ չղջիկի և մեկ-մեկ ցույց տալիս ընկերներին, թե ինչպես այդ կենդանին իր հոտոտելիքը, շոշափելիքը, լսելիքը փակել է իր թաղանթով: Նա զգուշությամբ ետ էր ծալում թաղանթն ու ցույց տալիս: Չղջիկը քթի վրայի լրացուցիչ թաղանթով ծածկել էր անգամ իր քթի անցքերը:
Այդպիսով նա քնած ժամանակ կտրվում է արտաքին աշխարհից, տպավորություններ և գրգիռներ չի ստանում, ուստի և քնում է անվրդով, հանգիստ:
Երբ կենդանու «փաթաթանները» ետ տվին, բացվեց նրա մարմինը, որ բաց-գորշավուն էր, իսկ մեջքը թույլ մոխրա-շագանակագույն երանգ ուներ:
Հենց բացվեցին կենդանու ծածկված զգայարանները, արթնացավ և թպրտաց Աշոտի ձեռքի մեջ:

- Դե՛հ, ուսումնասիրությունը հետաձգենք, հիմա ընթրիքի ժամանակ է, - ընկերների հայացքներում անհամբերության որոշակի նշաններ կարդալով, վճռեց խմբի պետը: Դժվարը դա էր՝ պետի վճիռը: Մնացածը կատարվեց այնպիսի արագությամբ, որ մի քանի րոպե հետո արդեն խորովածի անուշ բույրը ծխի հետ թանձրացել էր այրի կամարների տակ:
Դե Հասոն հովի՛վ, Գագիկն էլ խոհարարի բնածին հատկություններով օժտված պատանի, պարզ է, որ խորովածը պիտի գլուխ բերեին հինգ րոպեում:
Շատ էին քաղցած, դրանի՞ց էր այդքան համեղ, թե՞ նրանից, որ այդ կենդանիները բռնվել էին իրենց ամենագեր ժամանակ, ձմռան քուն մտնելուց առաջ, մյուս բոլոր քնող կենդանիներին արջի, ոզնու, գորշուկի և մյուսների նման չղջիկն էլ է խիստ ճարպակալում:
Այդպիսի հաջող որսամիսը ավելացրեց ձմռանը դիմանալու, նրանց հույսերը:
- Եթե ձեռքից չփախցնենք այս չաղլիկ ճուտերին, ամբողջ ձմեռը մեր օջախից խորովածն անպակաս կլինի, - ասաց Աշոտը: - Միայն պետք է հնարը գտնենք, թե ինչպես վարվել, որ թե՛ մենք ապրենք այն ապահով այրում և թե՛ նրանք չարթնանան ու ցրիվ չգան: Այդ բոլորը՝ վաղը: Կաթսան ու ամանն էլ վաղը կուսումնասիրենք և կորոշենք, թե ինչպես գործածել դրանք: Իսկ հիմա.... Ինչո՞վ սպանենք ժամանակը, մի քիչ չկարդա՞նք...
Աշոտը զգուշությամբ էր առաջ քաշում իր առաջարկը, վախենում էր, որ ընկերների դիմադրությանը կհանդիպի: Բայց ոչ ոք չառարկեց նրան: Նույնիսկ Շուշիկը, որը կշտանալուց հետո լավ էր տրամադրված, ասաց.
- Գիտե՛ք, գյուղում այնքան էին ստիպել դաս պատրաստեմ, որ գրքերից զզվել էի... Իսկ երեկ չէ մյուս օրը ցերեկով սկսեցի կարդալ՝ երևակայեցեք, դուր եկավ: Գագի՛կ, դու լավ ես կարդում, մի բան կարդա մեր «մայրենի գրականության» դասագրքից:
- Դե իմ անուշ ձենը ում չի դուր եկել, որ քեզ դուր չգա... Սպասիր մոռի թեյը խմեմ՝ հետո: Աշխարհում, որ մոռի թուփ կա, էլ ինչի՞ են թեյի պլանտացիաներ հիմնում՝ չեմ հասկանում: Պա՛հ, պա՛հ, պա՛հ, թեյ հո չի՛, խմողը գիտի, չխմողն ի՞նչ գիտի, - գովում և իր բաժին թեյը իր իսկ պատրաստած կոպիտ «գավաթով» խմում էր Գագիկը:
Երբ արդեն քաղցն ու ծարավը հագեցրել էր, ձեռքը դրեց փորին ու իր հանգի ասաց.
- Հիմի որ խիղճս հանգստացավ...
Ասենք միայն Գագիկը չէր, որ անհոգ ձևանալու փորձեր էր անում, բոլորն էլ միմյանց սիրտ տալու կարիք էին զգում, բոլորն էլ այնպես էին ձևացնում, որ ճամփան փակվելով իբր թե առանձին մեծ բան չի պատահել...
Այո՛, դրսից էին ուրախ ձևանում: Իսկ իրականում յուրաքանչյուրի սրտում նույն ահն էր, նույն հարցը՝ կդիմանա՞ն Հովազաձորի դաժան պայմաններին...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե երբեմն որքան ձեռնտու չէ ձմռան քուն մտնելը

Դեռ չէր լուսացել, երբ անձավում փայտը վերջացավ: Ասենք, շրջապատում այլևս վառելիք չէր մնացել, որտեղի՞ց պիտի ձեռք բերեին: Այրին մոտ եղած ծառերը ճղակոտոր էին արված և քամու դեմ կանգնած էին ցից-ցից՝ այլանդակված ու հաշմանդամ: Ինչ որ կարելի էր ձեռքով ջարդել՝ մեր տղաները արդեն ջարդել-վառել էին: Մնացել էր կացնի բաժինը, կացին էլ չկար:
Նրանք կրակն անթեղեցին և իրար հպվելով, դողացին մինչև արևածագ, դրանից առաջ ո՛վ էր գժվել, որ դուրս գար: Գիշերը ձյունը դադարել էր, մի աներևույթ ձեռք երկնքից վերցրել էր երկիրը ծածկող ամպե վերմակը և միջմոլորակային կտրող սառնությունն իջնում էր ցած, քարացնում ամեն ինչ:
Երբ այրի շեմքին կուտակված ձյունը կայծկլտաց նոր ծագած արևի անդրանիկ շողերից, խմբի պետը գտավ, որ ժամանակն է գնալ վառելիք հայթայթելու:
Դա խմբի գերության երեսուներկուերորդ օրն էր: Փայտացած մարմինները ճրթճրթում էին ամեն լարված շարժումից: Հետզհետե արյան հոսքը արագացավ նրանց երակներում, մի քիչ տաքացան, դուրս ելան քարայրից և աչքները կկոցելով կանգ առան: Երկիրը նորից ճերմակ էր հագել, նորից ամեն ինչ ծածկվել էր փափուկ ձյունով և դիմացի լեռները կարծես բարձրացել էին ու շաքարի գլուխների նման ճերմակին էին տալիս երկնքի ջինջ լազուրում:
Հովտի աջ եզերքին վեհորեն նստել էր Արարատը՝ սպիտակափառ նահապետի նման, և խաղաղ նայում էր մոտը երկար շարքերով պար բռնած իր հսկա որդիներին ու թոռներին՝ հայկական լեռներին:
- Հիանալու ժամանակ չի, գնա՛նք, - հրահանգեց Աշոտը և առաջ ընկավ:
- Սպասի՛ր, - կանգնեցրեց Գագիկը, - մեր սիրելի հարևանին մոռացե՞լ ես... Էն, որ կատվի նման ճանկեր ունի...
Ի՞նչ անեին, գոնե մի ածխակոթ չէր մնացել, որ զգուշության համար վերցնեն հետները:

- Լա՛վ, Շուշի՛կ, էն մարխի ձողերը դիր կրակին, փչիր, թող ծուխ անի, մենք հիմի կգանք... Մի վախենաք, էս պայծառ օրը գազան չի լինի դրսում, գազանները չեն սիրում լույսը...
- Ձեզ չեմ հասկանում, - բողոքեց Շուշիկը: - Համ ասում եք պալատի նման տուն եք գտել, համ վեր չեք կենում գնանք-տեղավորվենք էն տաք տեղը... Ինչի՞ն եք սպասում, չեմ հասկանում, ախր սառչում ենք էստեղ...
- Ուզում ես խրտնեցնե՞նք մեր ճուտիկներին: Մինչև նրանց, չիջեցնենք իրենց թառից, տեղափոխվելը հանիր մտքիցդ, -բացատրեց Գագիկը: - Դե՛հ, մենք գնացինք...
Նրանք խրվեցին սառը ձյան մեջ, փշաքաղվեցին, սրսփացին: Ա՛խ, մի թեժ կրակ լինե՛ր... Այդ արևն էլ ի՞նչ դանդաղ է բարձրանում...
- Աղմկելով, գոռգոռալով եկեք հետևիցս, - կարգադրեց Աշոտը և առաջ անցավ:
Ճամփին Գագիկը նրան կանգնեցրեց:
- Աշո՛տ, վառելիքից առաջ մեզ սնունդ է պետք: Մի գնանք տեսնենք ի՞նչ բանի են մեր վառեկները:
Այո, սնունդը ամեն ինչ էր. ձյունը ծածկել էր և՛ այգին, և՛ արմտիքը, և՛ հատապտուղները: Պարզ էր, որ խմբի կյանքն այժմ կախված է Գագիկի «վառեկներից»:
- Լավ, Հասո՛, գնա կլեպով կրակ բեր, - համաձայնեց Աշոտը ու քայլերն ուղղեց դեպի խորհրդավոր անձավը:
- Լավ է, «վառեկները» դեռ թառած են: Բայց ինչպե՞ս բռնել նրանց: Տղաները լուռ մտածում էին:
Իսկ եթե անզգուշաբար ձեռքից փախցնե՞ն: Եվ դա ավելի հավանական էր, քան չղջիկներին ձեռք բերելը, որովհետև տղաներից ոչ ոք չգիտեր, թե ի՞նչ միջոցներով են որսում այդ կենդանիներին ձմեռային քուն մտած ժամանակ:
Անհանգստությունը հետզհետե պատեց մեր պատանիներին. եթե չղջիկները փախչեն, իրենք անպայման սովամահ կլինեն:
- Ծուխ դնենք, թող խեղդվեն ցած թափվեն, - առաջարկեց Գագիկը:
- Մինչև խեղդվելը կզարթնեն ու այն ժամանակ էլ քնեցնելու հնար չի լինի: Դրանց պետք է քնած ժամանակ բռնել:
- Չէ՛, արի փորձենք ծուխը, մեկ-մեկ բռնելու ո՛վ գլուխ ունի: Ծուխ դիր, թող մի որպեռում հինգ հարյուր հատ թափվի տանձի նման...
- Ախր անխելք առաջարկ ես անում, Գագի՛կ:
- Իսկ դու թո՛ղ ուրիշներին իշխելու այդ սովորությունդ, - լրջացավ Գագիկը: - Հենց միայն քո ձին ես քշում՝ ուր որ ուզում ես: Չի լինի՞, որ խորհուրդ անես ընկերներիդ հետ:
- Քեզ հետ ի՞նչ խորհուրդ անեմ, ախր բնության գործերից դու բան չես հասկանում, - շպրտեց Աշոտը, բայց և իսկույն զղջաց. Գագիկի խորհրդով չէ՞ր, որ Սարգսին փրկեցին մահից: Իր այս նոր մտքից Աշոտը ժպտաց: Եվ թեև համոզված էր, որ Գագիկի առաջարկը խելացի չէ, բայց և այնպես չկարողացավ նրա խոսքը մերժել:
- Լա՛վ, փորձե՛նք, - զիջեց նա:
Ներս մտավ Հասոն ծխացող փայտի ձողերը ձեռքին, իսկ նրա հետևից՝ Շուշիկը:
- Այդ վիճակում ո՞վ է քեզ թույլ տվել, - բարկացավ Աշոտը:
- Վախենում եմ էնտեղ... Հասոն օգնեց, մի կերա եկա... Ինչո՞ւ եք մութի մեջ, ինչո՞ւ դուռը չեք բացում... Ի՞նչ եք գտել...
- Հիմա կհասկանաս, սպասի՛ր...
Խռիվ հավաքեցին, ապա այրի ծակուծուկը նորից ամրացնելով, կրակ վառեցին: Ծուխը հասավ քարե կամարներին, բայց չղջիկները ոչ մի բանով չարձագանքեցին:
- Չե՞ս հիշում, ոնց էր թաղանթով քթածակերը ծածկել: Դրանք երևի չեն էլ շնչում, ի՛նչ խեղդվեն... Ես մի գրքում կարդացել եմ, որ քնած ժամանակ դրանց մարմնի ջերմությունը իջնում է յոթ աստիճանի, ուրեմն, համարյա կենդանի չեն, էլ ի՞նչ խեղդվեն, - ցած ձայնով խոսում էր Աշոտը:
- Կա՛ց, մի քիչ էլ զոռենք: Գոնե մի քիչ շնչելիս կլինեն:
Երբ ծուխը թանձրացավ այրի կամարների տակ, փափուկ թռիչք զգացվեց օդում և չղջիկները դռան նեղլիկ ճեղքով սկսեցին իրար հետևից դուրս թռչել:
- Բռնի՛ր... բռնի՛ր... վա՛յ, վառեկներս փախա՛ն, - գոչեց Գագիկն ու խուճապարար վազեց դեպի դուռը, որի ճեղքերով դրսից աղոտ լույս էր թափանցում: Բայց այդ ճեղքերն այնքան նեղ էին, որ բզեզը նրանցով հազիվ դուրս սողոսկեր, ո՛ւր մնաց Գագիկի «վառեկները»: Տղաները մոլորվել էին, իսկ չորս կողմից ուրվականի նման թռած գալիս և դռնով դուրս էին թռչում չղջիկները:
- Աշոտ, ո՞ր ծակով են փախչում:
Գագիկը խուճապահար դես-դեն էր ընկել, երբ նկատեց, որ նրանց փախուստի ճանապարհները հենց այդ նեղլիկ ճեղքերն են:

- Խցկի՛ր, շո՛ւտ... որտեղից լույս է երևում, խցկեցե՛ք... ասեղի ծակ էլ չթողնեք, ես դրանց էն, էն...
Աշոտը վրդովված էր թե՛ Գագիկի, թե՛ չղջիկների դեմ: Այդպես էլ աներես կենդանինե՞ր, չե՞ն հասկանում, որ սովահար պատանիների կյանքն իրենցից է կախված: Թո՛ւհ, այնպիսի անցքերով են փախչում, որ մատիտ չի մտնի...
- Հասո՛, կրակը տրորիր-հանգցրու... իզուր լսեցի... իզուր տեղահան արինք դրանց...
Երբ ճեղքերը արդեն բռնված էին, իսկ կրակը՝ հանգած, մեր տղաները հետզհետե հանդարտվեցին, բայց ափսոսանքի զգացումը կրծում էր նրանց սիրտը:
- Ուզում էիր հինգ հարյուրը միանգամից բռնել: Կերա՞ր, - նախատեց Աշոտը:
Գագիկը լուռ էր. ո՛նց թռան անիրավ խորոված ածացունե՛րը... դառնորեն մտածում էր նա:
- Բայց ախր էս անցքից մի բզեզ հազիվ դուրս գա, դրանք ո՞նց անցկացան, - ճեղքը ցույց տալով հարցնում էր նա: Նստեցին պատի տակ, մտածում էին:
«Երևի դուրս փախչողները չղջիկների ամենափոքր տեսակներից են», - մտածում էր Աշոտը: Նա գիտեր, որ մի տեսակ չղջիկ կա, բզեզի մեծության չղջիկ, որը կարող է խցկվել այնպիսի ճեղքեր, ուր ճանճից խոշոր արարած մտնել չի կարող: Աշոտը մտածեց, որ անձավի մի այլ անկյունում հավանաբար հավաքվել և առանձին ձմեռում էր չղջիկի հենց այդ տեսակից կազմված գաղութը:
Բավական ուշ, երբ արդեն բարկությունն անցել էր, նա ընկերներին տվեց իր բացատրությունը.
- Տես ես ինչ եմ ենթադրում, չղջիկի մարմինը հարմարեցված է նեղ ճեղքի, որ ինքը ներս խցկվի, իսկ թշնամին չկարողանա հետևից ներս մտնել: Աղվեսն էլ է այդպես, նրա բույնը այնքան նեղ է լինում, որ ամենաբարակ շունը չի կարողանում հետևից մտնել: Աչքովս եմ տեսել: Հիմի դուրս գանք, թող հանդարտվեն...
Ծխից արթնացած չղջիկներն անձայն թևածում էին քարայրում, երբ տեսան, որ դուռը բացվեց, դուրս թռան: Մնացին քնածները, որ դեռ անվրդով կախված էին այրի բարձր առաստաղից:
Տղաները արևկող էին արել ժայռի պատն ի վեր և լուռ մտածում էին: Ցուրտ էր, ձյան մեջ խրված ոտքերը սառչում էին, իսկ քաղցը նորից սկսել էր տանջել: Եթե չտարվեին այդ անիծյալ ճամփան բացելու ապարդյուն գործով, կհավաքեին խաղողի բերքը և ձմեռը մի կերպ կապրեին խաղողով: Հիմա ի՞նչ անեն, ո՞ւր գնան...
- Կանգնելով ոչինչ չի լինի, պետք է մի բան անենք: Հասո՛, քո դանակով կարո՞ղ ենք սանդուղք շինել, - հարցրեց Աշոտը:
- Ի՞նչ ասեմ: Ախր մեր խմբի մեջ արգելված է «չէ» բառը:
- Այո՛, արգելված է...
- Ուրեմն՝ կշինենք... Չկարողանանք էլ, պիտի շինենք...
- Դե եկեք երկու երկար ու բարակ ծառ գտնենք:
Հարավին նայող քարքարոտ երկի՛ր, այդտեղ երկարահասակ ծա՞ռ կլինի, նրանք երկարում են միայն խիտ անտառում, մանավանդ հյուսիս նայող լանջերին: Այնտեղ մրցություն կա արևի համար. ամեն մեկը իր կատարը վեր է մեկնում, որ հարևանից շատ արև ստանա: Այստեղ՝ Հովազաձորում ծառն ի՞նչ կարիք ունի դեպի վեր գնալու, երբ շրջակայքն ազատ է, իսկ արևը այնքան առատ, որ պիտի արմատներդ խրես մինչև հողի խոնավ խորքերը, որ չչորանաս:
Ամենաերկար շահել ծառերը, որ նրանք կատարներից կախվելով արմատահան արին, այրի բարձրության հազիվ կեսը հասնեին: Այն ժամանակ նրանք խելք-խելքի տվին և դիմեցին մի այլ հնարքի՝ այդ ջահել ծառերը զուգահեռ մեկնեցին գետնին և ճիլոպով նրանց ամրացրին փայտի կարճ կտորներ, նոսր աստիճաններով մի խախուտ սանդուղք ստացվեց, որը և հենեցին պատին: Նրանք գտան մի այլ ձող, որ երեք ճյուղանի վերջավորություն ուներ, այդպիսի ձողով է այգեպանը, ծառի տակ կանգնած՝ բարձր ճյուղերից մեկ-մեկ պոկում և վար բերում խնձորներն այնպիսի զգուշությամբ, որ սրանք չեն էլ «զգում», որ պոկվել են իրենց մայր ճյուղից:
Գրեթե ամբողջ օրը կորցրին նրանք այդ գործի վրա:
Երբ արդեն պատրաստ էր, Գագիկն ասաց.
- Սանդուղքը խախուտ դուրս եկավ, բայց ինձ կդիմանա, հիանալի թեթևացել եմ, տղե՛րք: Դուք ամեն մեկդ մի կողմից բռնեցեք:
Նա վեր բարձրացավ, տեղավորվեց ամենավերին աստիճանին և ձեռքի ձողը մեկնելով առաստաղին, այնտեղից իր «եռամատով» մի չղջիկ ցած բերեց այնքան զգույշ, որ սա նույնիսկ չարթնացավ:
- Մտիր տոպրակս, անուշ ջան, - մեղմությամբ արտասանեց նա՝ կենդանուն խոթելով իր վզից կախած պայուսակը:
- Ըմբռնեցի՞ր, - հաղթական հարցրեց նա վերևից:
Աշոտը ծիծաղեց, մութի մեջ խնդաց և Հասոն: Դե ինչպե՞ս չուրախանային, չէ՞ որ վերջապես գտնվել էր «վառեկներին» իրենց բարձր թառից իջեցնելու հնարը: Լավ է, հիմի որ չեն կորչի:

Բայց Աշոտը գոհ չէր Գագիկի «տեմպերից»:
- Այդպես դու երեք օրում չես վերջացնի:
Ապա դուռը կիսաբաց անելով, տեսավ այրի գմբեթը ծածկված մուգ կետերով և սկսեց մտքում հաշվել:
- Եթե ամեն րոպեում մեկ հատ ցած բերես, ուրեմն հինգ- վեց հարյուր րոպե պիտի աշխատես:
- Վեց հարյո՛ւր... Սրանց հոգուն մատաղ, ուրեմն այդքան շա՛տ են: Սպասիր, մեկը ցած գցեմ, տեսնեմ մինչև մեռնելը կզարթնի՞...
Նա ցած նետեց ձողի ծայրի չղջիկը:
Ինչ արթնանալ, այդ բարձրությունից ընկնողն իսկի կարթնանա՞ որ...
Գործը հեշտացավ. Գագիկն արագ-արագ ցած էր թափում խոր քուն մտած կենդանիներին և նրանք ներքևում շարունակում էին քնել, բայց այս անգամ արդեն հավիտենական քնով...
- Ջա՛ն, ապրեցի՛նք... - վերևում խնդում էր Գագիկը և եթե տակը խախուտ չլիներ, երևի պար էլ գար:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ով է բնակվել խորհրդավոր անձավում

Երբ բոլոր չղջիկներն էլ արդեն թափված էին գետին, Աշոտը հայտարարեց.
- Հիմի որ կարող ենք տեղափոխվել այստեղ: Դե, դուռը բաց անենք, տեսնենք մեր նոր բնակարանը:
Դուռը կրնկի վրա բաց արին, ճերմակ ձյունին անդրադարձող առատ լույսը ներս խուժեց և մեր պատանիների առաջ բացվեց մի ոչ մեծ անձավ, խորդուբորդ պատերով և գմբեթաձև բարձր առաստաղով: Նրա հատակը ծածկված էր մի քանի մատնաչափ հաստությամբ կտիտով, որ տասնամյակների ընթացքում թափել էին վերև թառած «վառեկները»: Պատի տակ կավե խուփը վրան մի կճուճ կար կանգնած՝ նույնպես պատած թռչնաղբի հաստ շերտով: Նրա մոտ մի փայտե կոթ էր երևում: Գագիկը վերցրեց և ուրախությունից գոռաց.
- Կացի՛ն, ձեր արևը, կացին եմ գտել...
Թեև ժանգից քայքայված այդ գործիքը շատ էլ նման չէր կացնի, բայց եթե Գագիկի շինած կավե ծուռումուռ ամանը փոխարինել էր էմալե կաթսային, սա ինչո՛ւ չէր կարող փոխարինել կացնին. բավական է, որ ծանր էր ու բերան ուներ, հերիք էր:
Կացի՛ն... Դա հո փրկություն էր, քանի որ տղաների համար մինչև այժմ ամենատանջալի գործը ձեռքով փայտ ջարդելն էր: Հիմի կտրիր արա՛գ, հե՛շտ: Հիմի կացնով պատրաստիր ուզածդ գործիքները՝ ձյուն մաքրելու համար թիակներ, կոպիտ աթոռներ: Ամենակարևորը, որ ցրտից չեն սառչի, կարելի է վառելիքի ամբողջ պաշարը կուտակել այրի մի անկյունում ու հանգիստ ապրել: Իսկ կճուճով ձյուն կհալեն, ջուր կպահեն:
Մեր պատանիները այրվում էին հետաքրքրությունից: Այրի անկյուններն ընկած, նրանք կռանում-վերցնում էին ամեն իր, շոշափում էին պատերը, խուզարկում ամեն անցք ու անկյուն՝ գանձ փնտրողի ագահությամբ:
Ահա Աշոտը պատի տակից մի անճոռնի երկաթե գործիք հանեց և դեպի լույսը տանելով, ճչաց ուրախությունից.
- Թակա՛րդ, գայլի թակարդ... Բայց չէ, դա գայլի չի, ավելի մեծ գազանի է...
Դա տեղական դարբնի ձեռքով շինված մի ծանր ու կոպիտ թակարդ էր, ահագին երկաթե պոչով, որը նավի խարիսխի ձև ուներ: Ժանգից այնպես էր քայքայվել թակարդը, որ նրա ճանկերից մեկի «վիզը» բարակել, քիչ էր մնում պոկ գար:
- Ես սրանով կբռնեմ էն գազանին, - ոգևորվեց Աշոտը: - Վա՛հ, սա հենց հովազի թակարդ է, - գոչեց նա գործիքը լավ զննելով: - Ախր գայլ չի մտնում այս ձորը, ես էլ մտածում եմ, թե ինչի համար է թակարդը: Սրա տերը հովազներ է որսացել...
- Ի՛հ, դա ի՞նչ է, որ ոգևորվել ես, սպասիր մի տեսնեմ կճուճի մեջ ի՞նչ կա: Աղա՛նձ, աղա՛նձ եմ գտել...
Եվ կճուճը պառկեցնելով, Շուշիկը նրա հատակից մի քանի բուռ բոված հատիկ հանեց: Տղաները շրջապատեցին նրան և մի-մի բուռ վերցնելով, լույսի տակ զննում էին:
Դրանք բարակ և շատ երկար հատիկներ էին, նման մեր «տարեկան» կամ «աշորա» կոչվող ցորենին, բայց նրանցից նվազ:
- Սա պետք է որ վայրի ցորեն լինի, ես հանդերում սրանից շատ եմ հանդիպել, - իր կարծիքը հայտնեց Աշոտը, - ես մի տեղ կարդացել եմ, որ աշխարհում վայրի ցորենով ամենից հարուստ երկրները Հաբեշստանն ու Հայաստանն են:
- Վիրու ցորեն է, հա՛, - հաստատեց Հասոն, հատիկների համը տեսնելով:
Ցորե՛ն... դա հո քաղցից կփրկեր, եթե գտնեին այդ հատիկները տվող «վայրի արտը»:
Չորս շաբաթ էր նրանք հաց չէին դրել իրենց բերանները, ուստի այդ նիհար հատիկներին նայելիս՝ բերանների ջուրը գնում էր:

- Բաժանել և անմիջապես աղա՛լ, - առաջարկեց Գագիկը անհամբեր:
- Ինչո՞վ աղալ:
- Ատամներո՛վ:
- Հիանալի առաջարկ...
Շատ համեղ թվաց աղանձը, շա՛տ: Մի՞թե վայրի ցորենը ընտանի ցորենից համեղ է եղել, իրենք չեն իմացել...
- Հենց որ ձյունը հալվեց, մենք այս ցորենի վայրի արտը պիտի գտնենք, ինչ էլ որ լինի, - վճռեց Աշոտը:
- Ա՛խ, թե մի քիչ էլ աղ կգտնե՛նք... Անալի կոտորվեցինք...
Երբ խուզարկեցին անձավը և գտան ու ագահությամբ զննեցին նրա երբեմնի տիրոջ ողջ ունեցվածքը, բոլոր չղջիկներին հավաքեցին ու կույտ արին: Ի՜նչ շատ էին դրանք... Ա՛յ սննդի հրաշալի պաշար...
Բայց ո՞վ է եղել այդ անձավի բնակիչը, ինչո՞ւ ազատ աշխարհը թողել-եկել է և կամովին բանտարկվել այդ ահալի ձորում, մարդկանցից կտրված: Հնում իշխանությունից փախած մա՞րդ է եղել, թե՞ բնակչությանը կողոպտող ավազակ, որ ծերանալով և ուժից ընկնելով, ստիպված է եղել իր կյանքի վերջին տարիներն անցկացնել մարդկանց աչքից հեռու:
Մտածում էին մեր պատանիները, հազար ու մի ենթադրություններ էին անում, բայց ոչ մի եզրակացության չէին հանգում, մինչև որ Գագիկի սուր աչքը այրի խորքում մի բան նկատեց, որից և պարզվեց, թե ով է եղել այդտեղ բնակվող խորհրդավոր մարդը:
Ժայռի բնական թարեքին ընկած հնամաշ ու ծխից սևացած մի գիրք էր դա: Թարեքի վրա, պատն ի վեր, մի փոքրիկ խաչքար էր կանգնած, իսկ ներքևում, հատակին, մանր ու փափուկ ավազ էր լցված, որի վրա նշմարելի էր երկու ծնկան հետք...
- Ճգնավոր է եղել, - որոշեց Աշոտը: - Տեսե՛ք, չոքել է ավազին, ժամագիրքը կարդացել և ծունր դրել խաչաքարի առաջ...
- Հա՛, ես գրքերում կարդացել եմ, առաջներում այդպիսի մարդիկ եղել են, որ հասարակությունից կտրված, իրենց կյանքն անց են կացրել այսպիսի վայրերում:
Նրանք հետաքրքրությամբ շուռումուռ էին տալիս և բոլոր կողմերից զննում այդ տարօրինակ գիրքը, որի նմանն իրենց կյանքում չէին տեսել:
Գիրքն իր վրա խաչ ուներ, մեջը՝ սրբերի նկարներ և տպված էր հնաձև ծուռումուռ տառերով: Սկսեցին կարդալ.

*Առաւօտ լուսոյ, արեգակն արդար,*
*Առ իս լոյս ծագեա,*
*Բղխումն ի հօրէ, բղխյա ի հոգւոյս,*
*Բան քեզ ի հաճոյս...*

- Չէ՛, սա մեր խելքի բանը չի: Բայց իսկական աքրոստիքոս է, Աշո՛տ, մի նայի՞ր՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, հի՛նգ... սպասիր հաշվեմ, երեսունվեց տուն է և ամեն տունն սկսվում է հայկական այբուբենի մի տառով: Դե՛հ, ժամագիրքն ու խաչն էին պակաս, հիմի որ իսկական ճգնավորներ դառանք... Վա՛յ, վառեկնե՛րս, ես դրանց հոգուն մատաղ, եկեք շուտ փետրահան անենք դրանց անփետուր մարմինները...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչպես ժամանակավոր զինադադար կնքվեց Հովազաձորի գերիների և բնության միջև

Այո՛, մեծ փոթորիկներից և պայքարներից հետո այդ օրը իրոք զինադադարի էր նման: Նրանց հայտնի չէր, թե նորից ի՞նչ է պատրաստում իրենց համար Հովազաձորի բնությունը և այժմ խաղաղվել էին, թեկուզև զգում էին, որ ժամանակավոր է իրենց և բնության միջև կնքված զինադադարը:
Խելացի զորավարը օգտվում է զինադադարից և լավ պատրաստվում՝ ետ շպրտելու հակառակորդի նոր, հնարավոր գրոհները:
Մեր պատանիները պատրաստվեցին տեղափոխվել ճգնավորի այրն ու հարմարություններ ստեղծել այնտեղ ձմեռելու:
- Շուշի՛կ, դու պառկիր հանգստացիր, - հոգատարությամբ նրան դիմեց Աշոտը: Աղջիկը չառարկեց, որովհետև բոլորովին ուժասպառ էր եղել:
Տղաներն ամենից առաջ տեղափոխեցին իրենց զենքերը, Գագիկի պատրաստած կավե ամանը և վառելիքի մնացորդները: Ապա որքան որ չոր խոտ ու տերև կար այրում, որի վրա պառկում էին, լցրին իրենց բլուզների մեջ, ամուր ճխտեցին և տարան իրենց նոր բնակարանը: Եղևնու փափուկ ճյուղերը, որ «անկողնու» տակ շարված նրանց համար զսպանակի դեր էին կատարում, նույնպես տեղափոխեցին:

Այդպես մի քանի անգամ գնալ-գալով, տղաները ձյան մեջ այնպիսի արահետ բացեցին, որով կարող էին գնալ և հիվանդությունից նոր ապաքինվածները, թեև, ճիշտն ասած, Շուշիկն այնքան էր հոգնել, որ օգնության կարիք ուներ:
- Արի՛, Շուշիկ ջան, արի եղբայրաբար քեզ շալակեմ, - դիմեց Գագիկը:
Շուշիկը հրաժարվեց: Երերացող ոտքերով նա հասավ այրի շեմքը և շուռ եկավ.
- Վա՛յ, քիչ էր մնում ոզնիս մոռանամ... Աշո՛տ, ցերեկը չի շարժվում, տե՞ս, անկյունում քնած է տերևների մեջ:
Աղջիկը գնաց այրի անկյունը, իր ոզնին գցեց փեշը, իսկ սա այլևս չէր վախենում ու չէր կծկվում, սև դնչիկը դուրս էր հանել ու հոտոտում էր նրա ձեռքը:
- Առ խաղող կեր, ջանի՛կս...
Փոքրիկ կենդանին կտկտոցով ուտում էր ինչ տալիս էին, իսկ ամենից շատ խաղող էր սիրում: Երբ կշտացավ, խումբը դանդաղ շարժվեց և ուշ էլ տեղ հասավ, որովհետև հիվանդները քայլում էին դժվարությամբ:
Իրենց նոր բնակարանը հասնելուն պես, Շուշիկի առաջին գործը եղավ պատի մի մութ խոռոչում չոր տերևներից բույն պատրաստել իր սիրելի ոզնու համար, իսկ տղաները փռեցին իրենց կոպիտ ու բնական անկողինները: Այդպես, քիչ անց խումբն արդեն հիմնավորապես տեղավորվել էր իր նոր բնակարանում: Ճգնավորի կացնով փայտ կտրեցին, քարշ տվին այրը: Կճուճը մաքրեցին և մեջը ձյուն լցնելով դրին կրակին: Աշոտը հաշվեց «ճուտիկները» և տեղափոխեց, կույտ արավ այրի հեռավոր անկյունում, ուր եթե ջուր դնեին, կսառչեր:
Կշտանալուց հետո խմբի անդամների մեջ վեճ ծագեց օրապահիկի շուրջը:
- Մարդս չորս հատ... օրեկան ընդամենը քսան, - առաջարկում էր Աշոտը:
- Այ տղա, թող մի կուշտ ուտենք, ո՛վ գիտի, ի՞նչ կպատահի, - աշխատում էր իր համառ պետին համոզել Գագիկը:
- Դո՞ւ, - հարցրեց Աշոտը Սարգսին, որ թմրած մեկնվել էր կրակի մոտ և չէր խառնվում խոսակցությանը:
- Ե՛ս... Ես կարծում եմ, որ միշտ էլ շատը քչից լավ է...
- Բռավո՛, կատակ էլ է անում... կարգին ժրել է, - ուրախացավ Գագիկը: - Դե, իհարկե, կուշտ ուտելը կիսափոր մնալուց միշտ էլ լավ է:
Հասոն համեստորեն լռում էր, իսկ Շուշիկը ուսերը թոթվեց.
- Ես ի՞նչ գիտեմ...
Բայց նկատելի էր, որ նա ևս Գագիկի կողմն է, քանի որ այնպես էր ուտել ուզում, ինչպես երբեք չէր ուզել իր կյանքում:
- Ո՛չ, ընկերնե՛ր, կամաց գնա, որ երկար գնաս: Չափով կգործածենք մեր պաշարը և պարենի օրվա նորման երբեք չենք խախտի, այլապես կկորչենք, - կտրուկ տվեց իր վճիռը Աշոտը և նրա այդ վճռին վերջապես համաձայնեց խումբը:
Օրական քսան «ճուտիկ» սպառելով, մսի պաշարը մոտ մեկ ամիս կբավականացներ խմբին: Դե կողմնակի բաներ էլ հո միշտ կարելի էր ձեռք բերել: Այ, օրինակ, խաղողը: Ինչո՞ւ չփորձեն ձյան տակից խաղող հանել, մանավանդ հիմա, երբ կուշտ են, լավ տաքացել են, իսկ դրսում օդը մեղմ է:
- Ես գնացի Կավիանք... Կավ եմ բերելու մի կուկլա թեյնիկ պատրաստեմ, - հայտարարեց Գագիկը:
Ոչ ոք դեմ չեղավ: Իրոք, այդ ցրտին թեյը պահանջ էր դառել բոլորի համար էլ:
- Գավաթներ էլ կշինես, - պատվիրեց Աշոտը: - Դե՛, Հասո՛, հետևիր ինձ...
Նրանք գնացին այգի: Դժվարը ձյան տակ կքված ու պառկած վազը գտնելն էր ու վեր բարձրացնելը, բարձրացրի՛ր, խաղողը ինքն իրեն կախվելու է քթիդ առաջ:
Չէ՛, լավ է, կա՛, շա՛տ կա: Ի՜նչ բերք է եղել, որ թե՛ փորսուղն է լիացել, թե՛ նապաստակը, թե՛ թռչունները, և այդքան էլ մնացել է:
Թեև ձյունը խոր էր, բայց մերկ կանգնած թեղի ծառերը մատնում էին Կավիանքի տեղը: Այնպես որ քիչ հետո Գագիկը մի գունդ կավացեխ ձեռքին շտապում էր դեպի քարայր:
- Սրանից մի աման դուրս կգա, իսկ գավաթներ վաղը կպատրաստեմ... Ոտներս մրսում են, էլ Կավիանքի կողմը գնացողը չեմ, - ոտքերի ձյունը շեմքում թափ տալով ասաց Գագիկը: - Վա՛հ, Շուշիկ
ջան, էլի՛ դողում ես...
- Հա՛, լավ չեմ, Գագի՛կ... Կրակը թեժացրու...
- Հիմա՛: Արդեն ամանը թրծելու համար էլ թեժ կրակ է հարկավոր... Պի՛նդ կաց, Շուշի՛կ ջան, հիմի տեղներս լավ է, երկու օր չանցած բոլորովին, կազդուրվելու ես:
Այդպես ընկերուհուն հույս տալով, նա կրակը բորբոքեց և սկսեց իր «բրուտությունը»:
Աշոտն ու Հասոն, չգիտես ինչու, ուշանում էին, այնպես որ երեկոյան դեմ Գագիկը արդեն չորացրել, ապա խարույկի մեջ թրծում էր կավե մի ծուռումուռ աման, որին «թեյնիկ» էր անվանել:

Մինչ Սարգիսը մի անկյունում չոքած կացնով սեպեր էր տաշում-պատրաստում, Գագիկը երկմատ եղանի նման մի փայտով կրակից հանեց շիկացած «թեյնիկը» և հիացած նայելով, ասաց.
- Շուշի՛կ ջան, թեյնիկ հո չի, կուկլա է, կուկլա՛:
Ապա գաղտնի աչքով անելով, առաջ թեքվեց, փսփսաց նրա ականջին.
- Գյուղում տարածել են, թե՝ Գագիկի ձեռքերից ոսկի է թափվում... Անհարմար լուրեր են տարածում, տո՛ռ... մարդ լսելիս քրտնում է...
Աշոտն ու Հասոն այգուց վերադարձել էին և այրի շեմքին կանգնած լսում էին Գագիկի զրույցը Շուշիկի հետ: Իսկ նա թիկունքը այրի մուտքին, դեմքով դեպի օջախը, շարունակում էր իր շաղակրատանքով զբաղեցնել հիվանդ աղջկան, ցրել նրա թախիծը.
- Սրանից հետո, Շուշիկ ջան, էդ թեյնիկի մեջ էնպիսի թեյ եփեմ քեզ համար, որ բուրմունքը հասնի Այգեձոր, նրա հոտովը գան մեզ գտնեն... ծիծաղո՛ւմ ես... ծիծաղի՛ր, անո՛ւշ ջան, ծիծաղի՛ր, որ կերածդ չղջիկապուրը շուտ մարսես...
Քիչ լռելուց հետո, Գագիկը շարունակեց խրատական տոնով.
- Եվ ցրտից էլ մի՛ նեղվիր, անուշ ջան: Ցուրտը նախ՝ կոտորում է միկրոբներին, դրանից էլ ոչ մեկս դեռ վարակիչ հիվանդություն չենք ընկել: Երկրո՛րդ, ինչո՞վ է լավ ցուրտը: Նրանով որ չի թողնում շեկ երեսիդ պեպեններ դուրս գան. ախր գարունը որ բացվի, պայծառ երեսդ էլի լորի ձվի նման նախշվելու է: Երրո՛րդ, ցուրտը նրանով է լավ, որ ամրացնում է մարդուս օրգա... վա՛հ, իմաստուն խոսքերս թաքուն լսո՞ւմ եք... Էդ ի՞նչ է, խաղո՞ղ: Վայ ձեր հոգուն մատաղ, գյուլկոզա՛ եք բերել հիվանդիս համար:
Հասոն չոքեց և հատուկ ջերմությամբ Շուշիկի առաջ շարեց սև ու դեղին ողկույզները:
- Իսկ հիվանդապահի՞ն... Հենց էսքա՞նը... Երկու ժամ է մեյմունություն եմ անում՝ ծիծաղեցնում ցիրկի ծաղրածվի նման, բա իմ վարձն էսքա՞ն է...
Երբ իր բաժին խաղողը կերավ, Գագիկը հանդիսավոր կերպով հայտարարեց:
- Ժողովո՛ւրդ, ստամոքսումս սկսված պատերազմները վերջացա՛ն: Ձինադադա՛ր է: Եվ ո՞ւմ շնորհիվ: Լուսահոգի ճգնավորի: Գոնե գլուխը վեր քաշեր գերեզմանից մի շնորհակալությունս լսեր, էլի վեր դներ...
- Ո՛ւֆ, ինչ սարսափելի բաներ ես ասում, - բողոքեց Շուշիկը: Նրա սիրտը իրոք ահ ընկավ:
Աշոտն ու Հասոն բավականին խաղող էին բերել և այժմ պատանիները, խարույկը շրջապատած՝ հանգստանում էին և կամաց զրուցում: Արդեն մթնել էր:
- Ուրեմն, մենք ձմեռն այստեղ կանցկացնենք, - ասաց Աշոտը:- Եկեք մտածենք մեր անելիքների մասին: Իմ կարծիքով, ցերեկը, քանի լույս կա, վառելիք և ուտելիք պիտի հայթայթենք: Մթնեց, դրսի աշխատանքը վերջացավ, սկսում ենք զբաղվել որևէ օգտակար բանով, օրինակ, մեզնից ամեն մեկը մեջտեղ կդնի իր գտած որևէ բան, կուսումնասիրենք, կքննենք, կամ կպատմի Հովազաձորում իրեն հանդիպած որևէ բնական երևույթի մասին: Հետո կքննենք մեր ներքին կարգ ու կանոնի հարցերը, և եթե մեզնից որևէ մեկը խախտի կարգապահությունը, օղակը կզբաղվի նրա հարցով: Գիշերները երկարում են, ամեն գիշեր մեզնից մեկը մի պատմություն կամ հեքիաթ պիտի պատմի, ինչպես պատմել ենք մինչև հիմա, որով թե՛ ժամանակը կկարճացնենք, թե՛ իրարից բան կսովորենք, թե՛ ուսանելի բաներ կվերցնենք մեր լսածներից, որոնք հետո կյանքում մեզ պետք կգան:
- Միայն այդքա՞նը, - հիսաթափվեց Գագիկը:
- Այդքանը քի՞չ է:
- Քիչ չի, բայց մի՞թե մենք այս ամբողջ ձմեռվա ընթացքով ոչ մի բանով չե՞նք աջակցելու մեր ծնողներին, - կատակախառն հարցրեց նա:
- Հեռակա՛... Նրանք ո՛ւր, մենք ո՛ւր...
- Այո՛, հեռակա աջակցություն, բայց գործով: Իմ կարծիքով, նույնիսկ Հովազաձորում փակված, երբ կուշտ ենք և տեղներս տաք է, մենք կարող ենք պետք գալ մեր գյուղին:
- Կատակի մի՛ տա, բան ունես ասելու՝ ասա, - համբերությունից դուրս եկավ Աշոտը:
- Ես ասելու բան չունեմ, ոչ է ոմանց նման սիրում եմ երկար-բարակ ճառերը: Իմը գո՛րծն է:
Այս ասելով Գագիկը վեր կացավ և գնաց դեպի դուռը:
- Վա՛հ, արդեն մթնե՛լ է, -ու վարանման մեջ կանգ առավ շեմքին: - Հասո՛ռ, դանակդ գոտուցդ կապա՞ծ է, - հարցրեց նա:
- Այո՛, քուղով կապել եմ, որ չկորչի:
- Հա՛, ուրեմն չե՛ս կարող ինձ տալ... Դե լա՛վ, որ այդպես է դու էլ արի, դանակի համար ստիպված եմ քեզ էլ հետս տանելու...
Հասոն մտքում ծիծաղելով հետևեց ընկերոջը:
- Սարգի՛ս, լուռ ես, - կրակը խառնելով խոսեցնում էր Աշոտը:
- Ի՞նչ խոսեմ... դժվար է լինելու...
- Ոչի՞նչ, կդիմանանք: Այստեղ տաք է, իսկ սնունդը մեզանից է կախված: Դեռ ցավո՞ւմ է...

- Չէ՛, ուռուցքն իջել է... Արի մի էս պղնձի ժանգը մաքրենք, որ Շուշիկը մեջը կերակուր եփի:
- Ինչո՞վ, հողո՞վ:
- Ինչո՞ւ հողով: Մենք ֆիզիկայից անցել ենք չէ՞, որ ժանգը օդի մեջ եղած թթվածնի միացումն է մետաղին: Հիմա եկ թթվածինն անջատենք պղնձից և կմաքրվի:
- Հա... կրակո՛վ: Հասկանում եմ, լավ միջոց է:
Նրանք կաթսան բերանքսիվայր դրին թեժ կրակին, բայց փորձը անհաջող անցավ, կաթսայի հետևի մասն սկսեց հալվող մեղրամոմի նման կախ ընկնել:
- Շուտ դուրս հանիր, հալվե՛ց...
Է՛հ, հոգ չէ, կավե կճուճը ամեն բանից մաքուր է, նրա մեջ, պատրաստած ճաշն էլ է համով լինում:
Լուռ նստած էին, և, զարմանալի բան, թեև վաղուց հաշտ էին իրար հետ և ոչ մի հակասություն այլևս չկար նրանց միջև, ինչպես և չկար նախկին հակամարտությունը, բայց և այնպես չէին կարողանում իրար աչքերի մեջ նայել և խոսք չէին գտնում իրար ասելու: Փորձեցին զրուցել՝ չկպավ, դուրս չեկավ: Է՛հ, խմբի հետ ավելի լավ է...
Շուշիկը կրակի լույսով մտքում կարդում էր աշխարհագրության դասագիրքը, իսկ տղաները լուռ շարունակում էին կրակին նայել: Մի տեսակ անախորժ ու ճնշող էր այդ լռությունը:
- Դուրս գամ տեսնեմ ո՞ւր գնաց էդ գիժը...
Աշոտը դուրս եկավ քարայրից և նոր միայն թեթև շունչ քաշեց: Նա երկար կանգնեց շեմքին, մինչև աստղալույսով տեսավ, որ ճերմակ ձյան վրա երկու ուրվականներ են գալիս, ինչ-որ բաներ իրենց հետևից քարշ տալով: Մոտեցան, ձյունը թափ տվին ոտքերից, ներս մտան:
Նրանցից յուրաքանչյուրը մի խուրձ գերմաստի[24] ճիպոտ էր բերել:
- Ծայրերը սրիր, - դիմեց Գագիկը Հասոյին:
Նա վերցնում էր ծայրը սրած կոկիկ ու ճկուն ճիպոտը և իրարից երեք-չորս մատնաչափ հեռու ցցում հատակին (նրանց բախտից դա այն բացառիկ քարայրերից էր, որոնց հատակը հողից է լինում): Հաստ ճիպոտներից նա կլոր շրջանակ շինեց, իսկ բարակ ուռերով սկսեց գործել:
- Վերջը՞, միտքդ ի՞նչ է, - հարցրեց Աշոտը, որ լուռ հետաքրքրությամբ հետևում էր ընկերոջ շարժումներին:
- Միտքս պարապ չմնալն է: Ձանձրույթից կզբաղվենք էս՛ ճիպոտներով, դե ձմեռվա երկար գիշերներին ի՞նչ անենք: Վերջը մի բան կստացվի:
- Ոչինչ էլ չի ստացվի, - ձեռքը թափ տվեց Աշոտը:
- Կստացվի՛: Ինչո՞ւ չպիտի ստացվի: Ի՞նչ տարօրինակ բան կլինի, եթե երեկոները կրակի մոտ պարապությունից մեզ համար զբաղվենք կողով գործելով: Ինչո՞ւ պիտի պարապ մնանք, չեմ հասկանում, - խելացի կերպով պատճառաբանեց Գագիկը: - Իսկ դա աշխատա՛նք է: Աշխատանքն էլ, ոնց որ գիտեք, ապրուստ է տալիս: Եթե օրեկան ամեն մեկս կես կողով գործենք, գարնանամտին, երբ մեզ գյուղ տեղափոխելիս լինեն, կասենք՝ ներողություն, իսկ մեր բեռնե՞րը: Բարի եղեք սայլեր բերել, որ շինած կողովները տանեն...
- Լա՛վ, ենթադրենք, թե ժամանակը սպանելու համար քո խելքին ընկանք ու կողովներ գործեցինք, էս սատանի ձորից կողով հանել կլինի՞...
- Չլինի՞ կարծում ես սայլերը Հովազաձոր եմ բերելու: Խելոք ես, բայց գլուխդ չի աշխատում... Քթոցները ձորի ներքին պռնկից գլորիր ցած, թող գնան դաշտում սայլերի առաջ շարվեն...
Իսկապես, գերմաստին ամենից ամուր ու դիմացկուն ուռն է, նրա կողովը շատ է արժեքավոր, իսկ այգեկութի ժամանակ այնքան կողովներ է հարկավոր լինում Այգեձորի՛ն...
- Ու հետո, երբ կողովները տեղավորեցին պրծան, բռնիր ժլատ նախագահ Հարութի ականջն ու ասա՝ ներողություն, իսկ մեր աշխօրե՞րը... Ծիծաղո՞ւմ եք: Մենք կարող ենք պարապությունից հանաք-հանաք աշխօր էլ վաստակել: Փորձենք՝ կտեսնեք....
- Լա՛վ, - համաձայնեց Աշոտը: -Իսկ ճիպո՞տ: Այդքան «շինանյութ» կճարվի՞:
- Ճիպոտ շատ կա, էն քարափների արանքները լիքը ճիպոտ է՝ է՛լ գերմաստի, է՛լ ալաժահրի, է՛լ՝ մյուսների անունները չգիտեմ, բայց որ պարապ մնանք՝ ամեն բանից էլ կգործենք... Մեծ, փոքր, բոլորն էլ պետք կգան: Կտրելն ու սրելը ինձանից, կրելը ձեզանից, - տեղից վեր բերեց Հասոն:
- Էդ հո կաղ մարդի բան է: Ամբողջ օրը նստած կողով կգործեմ, - ուրախացավ Սարգիսը:
- Այսօրվանից Այգեձորի կողովագործական արհեստանոցը հայտարարում եմ բացված, - կատակով սկսեց Գագիկը: - Ես նշանակվում եմ արհեստանոցի գլխավոր վարպետ և վարիչ: Սարգիսը ինձ

[24] Գիլմասրը կամ գերմաստը –բրդոտ թուփ է, որի ճկուն և ամուր շիվերը պատած են շիկակարմիր կեղևով: Գերմաստի ճիպոտը փափուկ է և շատ դիմացկուն:

օգնական, Հասոն՝ շինանյութի մատակարարման բաժնի ավագ հրահանգիչ... Շուշիկը՝ ստախանովական կողովագործ: Պլանը գերակատարողին ի՞նչ մրցանակ ես տալու:
- Պլանից դուրս գործած ամեն կողովի համար երկու վառեկ, - խոստացավ Աշոտը:
- Դե երկու վառեկ բեր, էս մեկը պլանից դուրս է...
Մեր պատանիները անհրաժեշտ համարեցին հենց այդ երեկո գործի անցնել. յուրաքանչյուրն իր համար գետնին մի կլոր գիծ էր քաշել և այդ գծի ուղղությամբ տնկում էր Հասոյի սրած ճիպոտներն ու, «գլխավոր վարպետ» Գագիկին ընդօրինակելով՝ դանդաղ գործում:
Ամբողջ երեկոն զբաղվեցին դրանով: Ուռը պակասեց, դուրս վազեցին, նոր ոստեր կտրտեցին թփերով ծածկված միջանցքից, որով ընթանում էր անձավը տանող շավիղը:
Ձանձրույթը փարատելու համար լավ զբաղմունք էր կողով գործելը: Մանավանդ, որ աշխօրեր կարելի էր ստանալ, էլ ինչո՞ւ պարապ նստել:
Ուրախալին նաև այն էր, որ Սարգիսն էլ էր կպել գործի, նույնիսկ ոգևորվել էր:
Գուցե այն պատճառով, որ իր կյանքում այդ առաջին բանն էր, որ նա անում էր իր համար և բոլորի համար...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչպես մի անակնկալ դեպք հիշեցրեց մեր պատանիներին, որ վրա հասած խաղաղությունը երկար չի տևելու...

Դա տեղի ունեցավ ճգնավորի այրում տեղավորվելու երկրորդ օրը առավոտյան, երբ մեր գերիները ամբողջ խմբով դուրս էին եկել վառելիք մթերելու:
Թեև օրը պայծառ էր ու տաք, բայց զգուշության համար նրանք Կաղնուտում թեժ կրակ էին վառել և փոխն ի փոխ ծառ էին կտրում ճգնավորի կացնով: Կտրում էին, նայում կացնի փայլող բերանին ու հիանում, թեև բութ էր այդ գործիքը, բայց, համենայն դեպս, հո՞ կացին էր...
Կիսաչոր ծառը երերաց և դղրդոցով տապալվեց:
- Ձա՛ն, սա հո մի շաբաթ վառենք՝ չի վերջանա, - ճչաց Շուշիկը ուրախացած:
- Այծե՛րը, այծե՛րը, - գոչեց Հասոն ալեկոծված:
Բոլորը միանգամից նայեցին նրա մեկնած ձեռքի ուղղությամբ:
Հովազաձորը վերևից փակող լանջին երևաց քարայծերի խումբը, որ դղրդոցից խրտնած փախչում էր դեպի վեր: Նրանք, որոնք առաջ էին անցել ընկերներից, կանգնում-ետ էին նայում, որից հասկացվում էր, որ տղաների ներկայությունը առանձնապես չի վախեցնում իրենց, երևի փորձով համոզվել էին, որ անվտանգ արարածներ են իրենց հարևանները:
Բայց ահա հանկարծ այծերը խուճապի մատնվեցին: Հետաքրքիր է, ի՞նչ պատահեց...
Մինչ տղաները դատողություններ էին անում, Հասոն իր սուր աչքերով խուզարկում էր ժայռերի ծերպերը:
Հանկարծ նա ալեկոծվեց և մահակը մեկնեց քարե կածանի վրա կռացած ժայռին: Բնազդորեն վտանգ զգալով, Աշոտը լարեց տեսողությունը, բայց այն քարին, ուր ուղղված էր մահակը, ոչինչ չէր երևում: Երկար նայելուց հետո նա դիմացի սալի վրա «կուտապ» եկած մի ահագին կատու տեսավ, որի շիկավուն ու խալավոր մորթը ձուլվել էր ժայռերի շեկ ֆոնին: «Կատուն» անձայն մռլտում էր, ժանիքները բացում և շարժում բեղերը: Ապա նա իր երկար պոչով սկսեց զայրագին խփել քարին, լարեց մկաններն ու թաթերն առաջ մեկնած թռավ ներքին կածանն ու անհետացավ տեսողությունից:
- Տեսա՞ք, տեսա՞ք, - հևալով հարցնում էր Աշոտը:
- Հովա՞զ էր, - ահով հարցրեց Շուշիկը:
- Իսկական հովազ... Աղմկեցե՛ք, միաբերան աղմկեցեք...
Եվ տագնապահար պատանիները սկսեցին խմբովին գոռգոռալ՝ «Հո՛ւռ՛ւ, հո՛ւռ՛ւ...», - ու մեծ-մեծ քարեր գլորել դեպի ձորը: Այնպիսի աղմուկ բարձրացրին նրանք, որ հովազ չէ, «դժոխքի պետ» Սաթայելն անգամ, եթե երևար այդ կողմերում, մինչև աշխարհի ծայրը մի շնչում կփախչեր:
Աշոտը ուշքի էր եկել ու մտածում էր. «Ահա ումի՛ց էր փախչում իմ գլխարկը փախցնող այծը... Թիկունքում հովազ կար, իսկի ետ կդառնա՞ր որ... Ահա ինչու վրա քշեց ինձ...»:
- Հիմա հասկացա՞ք, թե ինչու է այս ձորը Հովազաձոր կոչվում, - հարցրեց նա:
Ոչ միայն այդ հասկացան, այլև ուրիշ շատ բաներ: Հովազի երևալով միանգամից լուծվեցին մեր պատանիներին մտահոգություն պատճառող բոլոր հանելուկները, նրանք հասկացան, թե ինչ շեկ մեջք էր տեսել Սարգիսը գորշ քարերի արանքում Հովազաձոր մտնելու առաջին օրը, հասկացան, թե ով էր այցի եկել անձավում պառկած հիվանդներին, ով էր վայելել վերին Դարավանդում բռնված կաքավները...
- Ա՛յ քեզ մանո՛ւլ...- ուշքի գալով բացականչեց Գագիկը:
- Հա՛, լավ մանուլ էր, - շփոթված արձագանքեց Աշոտը:- Երևի էն գոռգոռողն էլ սա էր...

Տղաները երկար մնացին այդպես ցնցված ու լուռ:
Մինչ այս մինչ այն, աշնան կարճ օրը պատանիների համար աննկատելի մոտեցավ իր վախճանին, արևը թեքվեց Մեծ Մասիսի վրա:
- Գնա՛նք, ուշ է, - հրահանգեց Աշոտը՝ ցած իջնելով:
- Ո՞ւր գնանք, բաց թող գնամ հովազին տիկ հանեմ, մորթին բերեմ գցեմ էս ջեյրան-աղջկա ուսը, - սաստիկ վախից նոր ուշքի եկած շաղակրատում էր Գագիկը ու հետն էլ ափսոսանքով գլուխն օրորում:
- Ո՛նց թռավ ձեռքի՛ցս, ափսո՛ս, ափսո՛ս, էլ այսպես հաջող որս ե՛րբ կպատահի որ...
Գագիկը կատակում էր, բայց նա ևս հասկանում էր, թե ի՛նչ մեծ վտանգ է կախված եղել խմբի գլխին... Ուրեմն, Հովազածոր մտնելու օրից այդ գազանը գաղտնի հետևե՞լ է իրենց... Հասոն հիշեց մութի մեջ փայլող աչքերը, հիշեց քարայծի ոսկորները, Բոյնախի ոսկորների անհետանալը: Շա՛տ բան հիշեց, մանավանդ այն գիշերվա սարսափելի դեպքը:
Այո, Հասոն մազից պրծավ: Աշոտը սոսկումով հիշեց այն պահը, երբ հովազը ցատկեց Հասոյի վրա: Եթե շունը կես վայրկյան ուշ հասներ օգնության, գազանը պիտի պատառոտեր տղային:
Եվ Աշոտը նորից հիշեց իրենց նեղ օրերի ընկերոջը՝ Բոյնախին:
Իսկ Հասո՞ն: Այո, հովազի երևալը նրան նորից ալեկոծեց: Եվ նրա հուզմունքը երկյուղից չէր - հիշում էր իր մանկության ընկերոջը, որ կյանքը զոհեց իր համար...
Այն ինչպե՛ս ծառս եղավ...
Որտեղի՞ց այդքան ուժ հիվանդ ու թուլացած կենդանու մեջ, - արդեն քանիերորդ անգամ մտածում էր Հասոն, բայց այդ հարցի պատասխանը չէր գտնում:
Որքան էլ Շուշիկի ներկայությամբ տղաներն աշխատում էին անհոգ ձևանալ, չէր ստացվում. հովազի երևալը փչացրել էր նրանց տրամադրությունը: Կարծես պայծառ օրը միանգամից մռայլվեց:
Դե եկ խաղաղ ապրիր այդպիսի ահռելի գազանի հարևանությամբ: Այո՛, հովազի ներկայությունը միանգամից թունավորեց պայծառ մթնոլորտը:
- Ոչի՛նչ, նա իր որսը չի թողնի մեր կողմը գա, - ընկերներին սիրտ տվեց Աշոտը, բայց ահը սողոսկել էր նաև նրա սիրտը:
Լուռ ու մտահոգ նրանք սկսեցին վառելիքը կրել իրենց բնակարանը և դարսել նրա խորքում:
Ապա Աշոտն ու Գագիկը գիլամասրու ճկուն ճիպոտներով դռան .խախուտ «տախտակները» կապկպեցին-ամրացրին իրար, որից հետո Աշոտը իր հասակի մի գերան ներսից հենեց դռանը:
- Դե հիմի թող գա - ասաց նա, որով ուզեց ընկերներին հասկացնել, թե այրի ներսում իրենց ոչ մի վտանգ չի սպառնում:
Դե որ վտանգ չկա, «վառեկի սուպն» էլ կրակին դրված եփում է, խաղողի ողկույզներն էլ պատից կախված են, վառելիքի կույտն էլ գրեթե առաստաղին է հասնում, - էլ ինչո՞ւ տանջվել ավելորդ մտքերով:
Եվ այդ բոլորի շնորհիվ իրոք շուտով խաղաղ տրամադրություն սկսեց թագավորել անձավում:
Մանավանդ, որ Հասոն այնպես մեղմ ու խաղաղ էր նվագում իր սրինգը...
Այդպես անցկացրին երեկոն, ձանձրույթները փարատելու համար նույնիսկ մի քիչ կողով գործեցին, բայց ո՞ւմ քունը կտաներ: Գազանի կապակցությամբ առաջացած դառն մտքերը ցրելու և լիովին խաղաղ տրամադրություն ստեղծելու նպատակով Աշոտը հայտարարեց, որ իրենք՝ պատանի բնասերները, այժմ պիտի զբաղվեն չղջիկների ուսումնասիրությամբ: Եվ այրի անկյունից մի չղջիկ բերելով, նրա թևերը կրակի լույսի առաջ բաց արեց ու ասաց, որ այդ կենդանին վախ է առաջ բերել հին գյուղում: Շատերը կարծել են , թե նա գլխարկ է փախցնում, ոմանք էլ հավատացել են, թե ծծում է երեխաների արյունը: Մինչև օրս էլ երեկոները, երբ տավարածները հանդից նախիրը տուն են բերում, չղջիկները հետևում են նրանց և վախեցնում...
- Հա՛, հենց որ երևում են, ես էլ եմ քոլոզս պինդ բռնում, իմ հերն էլ, - խոստովանեց Հասոն ծիծաղելով:
- Ախր սրանք քո քոլոզը փախցնելու համար չեն հետապնդում քեզ: Մոծակները ուղեկցում են նախիրին, իսկ սրանք մոծակ շատ են սիրում: Հետևներից գալիս են մոծակ բռնեն:
- Վ՛ա՛ա՛ ...
- Սրանք մեր բարեկամներն են, հանդ ու այգի մաքրում են միջատներից:
- Խե՛ղճ մեր բարեկամներ, - շշնջում էր Գագիկը. – տեսա՞ք ոնց բարեկամաբար կոտորեցինք բոլորիդ...
- Մի՛ նախատիր մեզ, Գագի՛կ, այս պայմաններում մենք ուրիշ կերպ վարվել չէինք կարող... Հա՛, չղջիկը կաթնասուն կենդանի է, բայց՝ թռչող: Սրա ամեն ինչը հարմարեցրած է թռչելուն: Տեսե՛ք, որ բացում է թաղանթը, երկար թևերի նման բան է դառնում: Մարմինը փոքր է, բայց այստեղ-այնտեղ լայն թաղանթներ ունի, նույնիսկ՝ քթի վրա: Ականջներն էլ, տեսե՛ք, ինչքան բարակ են ու մեծ-մեծ:
Աշոտն ասաց, որ դրանով չղջիկի մարմնի թեթև մասերը շատ են դառնում և հեշտանում է օդում մնալը: Դա նույնն է, եթե մի կին կտուրից ցած թռչելիս լայն շորեր ունենա հագին, իսկ ձեռքերին հովանոցներ պահի... Այդպիսի լայն ու թեթև բաներ շատ են պետք, մանավանդ մայր չղջիկին, որովհետև նա իր

ձագերին հետը թռցնում է և նրանք իրենց մոր փորից կպած՝ հենց թռիչքի ժամանակ էլ ծծում են նրա ստինքները...
- Երա՜նի նրանց, ոչ ցավ ունեն, ոչ խելք...
- Սպասի՜ր, Գագի՜կ, մի խանգարիր, թող ինչ որ գիտեմ սրանց մասին, ասեմ:
- Իսկ դու որտեղի՞ց գիտես այդ բոլորը, - հարցրեց Սարգիսը կասկածանքով:
- Էլ ինչ բնասերների ղեկավար, որ այդքանն էլ չիմանա:
- Դու ճիշտ ես, Շուշի՜կ, կարդում եմ, հորս եմ խոսեցնում, ուրիշ որսորդների եմ հարցնում: Մի տեղ մի բան եմ կարդացել ու ինքս էլ փորձել, ափսո՜ս, թել ունենայինք, այստեղ էլ կփորձեինք: Հայրս մի լոշտակականջ չղջիկ էր հանդից տուն բերել: Սենյակում բազմաթիվ թելեր անցկացրի, օդում ոստայնի նման մի բան ստացվեց ու չղջիկին՝ աչքերը կապելով՝ բաց թողեցի: Այնպես էր ծուռումուռ թռչում այդ թելերի արանքներով, որ ոչ մեկին թևերը չէին կպչում:
Աշոտը գոհ այն տպավորությունից, որ գործեց իր տված տեղեկությունը, շարունակեց պատմել իր իմացածը այդ թռչող կաթնասունների մասին: Նա ասաց, որ դրանք ապրում են գաղութներով, լցվում են ամայի անձավները, վանքերը, եկեղեցիները ու գիշերում են նրանց առաստաղից կպած, գլխների վրա կախ: Մեզ համար հանգիստ է, երբ մեր գլուխը վերև է, նրանք էլ իրենց հանգիստ են զգում այն ժամանակ, երբ մարմինն է վերև լինում, գլուխը՝ ցած...
- Դե ասա շեյթանի պես թարս են, էլի՜, - տեղից վրա բերեց Հասոն:
- Շեյթանը ո՞նց է թարս, - ժպտալով հարցրեց Աշոտը:
Հասոն շփոթվեց.
- Դե ես ի՞նչ գիտեմ... հերս ասում է՝ շեյթանի կրունկն առաջ է լինում, թաթը՝ հետև...
Պատանիները միաբերան ծիծաղեցին:
- Հետո՞, է՞լ ինչ է ասում հայրդ շեյթանի մասին, - խոսեցնում էր Աշոտը:
- Մեկ էլ, ասում է, մութ ժամանակ ջուր խմելիս մարդի գլխի խփում են...
- Հա՜, դրա համա՞ր ես ջուր խմելիս ձեռքդ գլխիդ դնում: Ա՜յ դու խորամանկ, դե ասա մենք էլ պաշտպանվենք, էլի: Է՞լ, է՞լ...
Հասոն գիտեր, որ քննում են իրեն, գիտեր, որ իր ընկերներից ոչ մեկը չի հավատում շեյթանի գոյությանը, բայց պարզամտորեն շարունակեց.
- Մեկ էլ ասում է՝ գիշերը դանակը բաց պահիր, որ շեյթանը չմոտենա: Պողպատը չարը խափանում է...
- Դրանք հեքիաթներ են, Հասո՜ն, մի՜ հավատա, - ամուր ասաց Աշոտը: - Շեյթան չկա և չի էլ եղել: Տե՜ս, մենք դանակ չենք հանում և քեզ մոտ ամեն օր ջուր ենք խմում՝ առանց ձեռքներս գլխներիս դնելու: Ո՞ւր է, ինչո՞ւ մի սատանա չի երևում... Հա՜, շարունակենք մեր խմբակի պարապմունքը: Ուրեմն, չղջիկները գաղութներով են ապրում: Ռուս կենդանաբան Սատունինը վաթսուն տարի առաջ մեր Արաքսի հովտում դիտել է նրանց կյանքը և շատ հետաքրքիր բաներ է գրում: Ասում է՝ մի անգամ Օրդուբադից դենը մի քարայր մտա՝ մեջը մի քանի հազար չղջիկ կար... Իսկ Մցխեթի եկեղեցում ինը հազար չղջիկ են հաշվել: Գիտնականները մտածել են, թե ի՞նչ հնար գտնեն, որ դրանք թողնեն-հեռանան եկեղեցուց, որպեսզի ժամերգությունը չխանգարեն...
Մինչ Աշոտը երկար-բարակ խոսում էր չղջիկների կենցաղի ու սովորությունների մասին, Հասոն, օրվա աշխատանքից հոգնած, քաղցր քուն էր մտել և քաղցր էլ երազ էր տեսնում:
Ահա ինքը ոչխարի հոտը փռել է սարի զմրուխտ լանջին ու մեկնվել արևի տակ, գոլ կանաչին: Այնպես արև է, այնպես տաք... Բոյնախը, իր մանկության ընկեր Բոյնախը... փաթաթվում է իր ոտքերին, պոչը շարժում ու կարոտով լիզում է ձեռքերը... Բոլորովին վշտացած չի, որ մահացել է. աչքերի մեջ այնքա՜ն բարություն կա, այնքան խելք: «Բոյնախ ջան, ախր դու... դու չկայիր... էդ ի՞նչ հրաշքով... Իսկապես, դու կենդանի՞ ես...»: Եվ հովիվ պատանու աչքերից ուրախության ջերմ արցունքներ են հոսում, նա գրկում է իր ընկերոջ բրդոտ վիզը, իսկ Բոյնախը լիզում է նրա ձեռքերը և մեղմ թախիծով նայում... Հետո, իբր թե ոչխարները հանկարծ խրտնեցին և դես-դեն փախան: Ի՞նչ պատահեց... Հա, քարերի արանքում մի ահագին կատու երևաց ու մի ոչխար վերցնելով՝ փախավ այնքան արագ, որ Բոյնախը ժամանակ չունեցավ գազանին հետապնդելու: Ասենք, նա այդպիսի մտադրություն չուներ էլ, քանի որ իր կենդանական բնազդով արդեն որոշել էր, թե ի՞նչ ահռելի գազան է իր տեսած «կատուն»...
Նորից հանդարտվեցին, նորից Բոյնախը պառկել է իր ոտքերի մոտ և կարոտով ու անձնվիրությամբ լի հայացքով նայում է իրեն...
_ Բոյնախ ջան, ախպեր ջան...- Իր ձայնից արթնացել էր Հասոն, իրականության և երազի միջև շփոթված՝ կրկնում էր սիրելիի անունը, և արցունքները գլոր-գլոր ցած էին հոսում նրա դալուկ այտերով...
Վերջապես ուշքի եկավ, լռեց:
Լուռ ու մտախոհ էին բոլորն էլ: Գիշերն արդեն կես էր եղել, կրակն իջել, իսկ Շուշիկը սկսել էր նստած տեղը «տանձ կշռել»:

- Քնե՛լ, - հրահանգեց Աշոտը: - Վաղը գնում ենք այգեկութի;
Բայց նրանք հաջորդ օրը երկար ժամանակ չէին համարձակվում հեռանալ իրենց բնակարանից, վախենում էին, որ գազանը կարող է թաքնված լինել մոտերքում: Այդ ահը հիմա ամենից շատ զգում էր Հասոն. սնահավատ պատանին համոզված էր, որ իր տեսած երազը մի տեսակ նախազգուշացում է հանդիսանում:
Մինչև կեսօր նրանք անձավում էին: Կեսօրին որոշեցին նորից վառելիքի գնալ, կացնի թրխկոցը, ընկնող ծառերի դղրդյունը սրտապնդում էին, - դե գազանը ծառ կտրող մարդուն հո չի՞ մոտենա...
Փոխնիփոխ աշխատում էին հին, ժանգոտ ու բութ կացնով, կտրում էին մոտակա ծառերը և մեծ-մեծ կտորներով քարշ տալիս այրը:
- Օ՛ֆ, սա հո կացին չի՞, ծամում է անատամ եզի նման... Վե՛րջ, էլ սրանով ես փայտ չեմ կտրի, -քրտինքը սրբելով գործադուլ հայտարարեց Գագիկը:
- Ա՛խ, այս տղաները, որ գլուխները տաքացած՝ ուժով են գործ անում, - հանդիմանեց Շուշիկը: - Չի կարելի՞ սրել... Ախր սուր կացնով գործն էլ կհեշտանա, փայտ էլ շատ կջարդեք:
- Լավ է ասում, Սարգի՛ս, մի դարբնոցից գործիքները բեր սրեմ, - հաստատեց Գագիկը:
Իսկապես, ինչո՞վ սրեին:
- Սպասեցե՛ք, ես հիմի իսկական սրոց բերեմ, - ձեռքը ճակատին խփեց Աշոտը: - Ո՞նց չենք մտածել... Հապա՛, ի՞նչ եք կարծում, Հովազաձորում որտե՛ղ կլինի սրոցի հանք:
- Սատանի եղունգը կսրի՞, ես տեղը գիտեմ:
- Չէ, Սարգի՛ս, սրոցներ պատրաստողը բնության մեջ ջուրն է, նա՛ է դարերի ընթացքում կոկում քարերը... Գնանք նայենք մեր հեղեղի հունը...
Այնտեղ մեր պատանիները իրոք հղկված «գետաքարեր» գտան:
- Կացին սրելն իսկական կաղ մարդու գործ է, տվեք ինձ:
Եվ մի մեծ ու ողորկ բազալտե քար առաջը դնելով, Սարգիսն սկսեց կացնի բութ բերանը քսել նրան:
- Լա՛վ, մենք գնանք խաղող հավաքելու: Իսկ փայտ կջարդենք այն ժամանակ, երբ արդեն կացինը սրված կլինի:
- Ոչ թե սրված, այլ ալմազ դառած, - ժպտալով ուղղեց Սարգիսը:
Ընկերները ծիծաղեցին: Զարմանալի բան, Սարգիսն անգամ սկսել է Գագիկի «ոճով» խոսել, նրա ազդեցությունն է անկասկած:
- Դե՛հ, գնացի՛նք... Հասո՛, վազիր կողովը բեր:
Չորքոտանի մի արարած օգտվում էր նրանց բացակայությունից և գողության էր գալիս այգին: Նա թաթերով ետ էր տալիս ձյունը և քաղցր ողկույզները խժռում:
Աշոտը հետազոտեց նրա հետքը և տեսավ, որ կենդանին շատ երկար ճանկեր ունի:
- Ա՛, մոռացել էի... Սա հո Սարգսին վախեցնող փորսուղն է, - գլխի ընկավ և տարակուսանքով գլուխը շարժեց. - ինչո՞ւ քուն չի մտել այս կենդանին...
- Հո անխե՞լք չի, որ անմահական խաղողը թողնի, քնի, - ասաց Գագիկը:
Առանց մտածելու ճիշտ պատասխան էր տվել. Աշոտը ընկերներին բացատրեց, որ կենդանիները քուն են մտնում սննդի պակասությունից, և պարզ է, որ քանի այգում դեռ խաղող կա՝ փորսուղը քուն չի մտնելու:
Սովի ահի՞ց էր, թե ինչից, իրենք էլ չհասկացան, միայն այն զգացին մեր պատանիները, որ հանկարծակի ատելությամբ են լցվել այդ կենդանու դեմ:
- Այդ սրիկային պետք է գտնել, տիկ հանել և մեջը խոտ լցնելով, դնել Շուշիկի գլխի տակ, - ատամները կրճտացնելով ասում էր Գագիկը:
Պակաս չէին զայրացած և մյուս պատանիները: Խա՞նդ էր դա նախա՞նձ, թե որսորդական կիրք...
Խմբով գնացին կենդանու հետքերով և նրա բնին հասնելով՝ կանգ առան:
Փորսուղը իր համար բույն է փորում փափուկ հողերում, բայց այստեղ ժայռերի տակ ստորերկրյա բնական անցքեր կային, ինչո՞ւ պիտի նա ավելորդ ջանք թափեր բույն շինելու վրա, երբ կար պատրաստին: Ահա ժայռի տակ ձյունոտ ոտքերը թափ է տվել ավազի վրա և ներս սողոսկել:
- Ծուխ չդնե՞նք, - հարցրեց Հասոն:
- Բան չի դուրս գա: Կսատկի կմնա խորքում:
- Բա կենդանի թողնենք, որ գնա մեր այգին թալա՞նի, - բարկացած հարցրեց Գագիկը:
- Անցքը փակենք թող քնի...
Եվ Աշոտը տնքոցով այնպիսի մի քար բերեց խցկեց անցքը, որ հինգ փորսուղ միասին չէին կարող շուռ տալ:
- Հիմի որ խաղողը մնաց մե՛զ, - ուրախացավ Գագիկը:- Կախ կանենք ու ամբողջ ձմեռը կուտենք:

Երբ խաղողով ծանրաբեռնված նրանք մտան անձավ, Աշոտը կողովի պարունակությունը շուռ տվեց մի անկյունում.
- Թող մնա այստեղ, - ասաց նա՝ իր արածից գոհ:
- Սպասի՛ր, Աշո՛տ, ախր դու տնտեսությունից բան չես հասկանում. խաղողը կույտ արած մի օրում կփչանա, -բողոքեց Գագիկը: - Եկեք կախենք...
Է՛, ասենք թե Հասոն, հովիվ մարդ, չգիտեր խաղող կախելու ձևը, այգիների մեջ մեծացած մյուս պատանիներն էլ չգիտեի՞ն:
Իսկույն դանակով բարակ ճյուղեր կտրտեցին-բերին: Ամեն ճյուղի վրա նրանք թողել էին մի-մի մատնաչափ կեռ ցցունքներ, որոնցից և կախեցին խաղողի ողկույզները: Ապա պատի ճեղքերին փայտից սեպեր խփեցին և խաղողով ծանրաբեռնված ճյուղերը զույգ-զույգ կախ տվին այդ սեպերից, իսկ թափված պտուղները լցրին կճուճը:
Այրը դարձավ իսկական մառան:
Գագիկը ձեռքերը կողքերին կանթած ետ էր կանգնել և հրճվանքով նայում էր խաղողի գույնզգույն կախաններին: «Չէ՛, հիմար կլինենք, եթե էսքան խաղողը թողնենք, գնանք գյուղ...», - յուրովի մտածում էր նա:
- Բոլորը քաղենք էսպես կախենք, մինչև գարուն կդիմանա, - հայտարարեց նա իր գյուտից բավական:
Բայց Գագիկի ուրախությունը երկար չտևեց: Քիչ անց, երբ կրակը թեժացրին, նա տեղից վեր կացավ, ճութերը տնտղեց, որ Շուշիկի համար ընտիր խաղող ջոկի, նկատեց, որ կախաններից հյութ է ծորում:
- Պա՛հ, ձեր տունը չքանդվի, խաղողը ցրտահարված է, փչանում է, - բացականչեց նա ողբագին:
- Հա՛, պտուղները պատռվում են, մաշկը ցրտահարված է, - ստուգելով հաստատեց Աշոտը:- Ափսո՛ս, պահել չի լինի... Ի՞նչ անենք...
Պատանիների թափն իջավ: Սննդամթերքը կա, բայց պահել չի լինում, դրանից էլ մեծ ձախորդությո՞ւն:
- Կարկաճիս մեջ հանճարեղ միտք ծնվեց, - բացականչեց Գագիկը: - Փչացող ճութերը տրորում ենք-լցնում կարաս-կճուճն ու դնում սառը տեղ, դառնում է գյուկոզա... այսինքն՝ ճամփան բացող շարժիչ ուժ... խմի՛ր ու թիակը վերցրու...
Չի կարելի ասել, թե Գագիկի առաջարկը խելացի չէր: Խելացի էր, բայց պատանիները (և հենց ինքը Գագիկն էլ) ափսոսանքով էին ճմլում-տրորում գույնզգույն ողկույզները, քանի որ դրանք ոչ միայն ուտելիք էին, այլև աննման գեղեցկություն: Այնուամենայնիվ, սմքած ու չամիչ դարձած ողկույզները նրանք ընտրեցին, լցրին կողովի մեջ և դրին այրի մի անկյունում:
Երբ քամում էին հյութը կճուճի մեջ, Հասոն ամբողջ հոգով միայն մի բան էր ցանկանում, մենակ լինեին Շուշիկի հետ, իր ձեռքով մի աման լցներ այդ քաղցր հյութից և տար նրան:
Բայց ինչպե՞ս հյութ առաջարկի Շուշիկին, որ այդ Գագիկն էլի ձեռք չառնի-չամաչեցնի բոլորի մոտ:
Լավ էր, Գագիկը գնաց կավ բերելու: Նրա բացակայությունից օգտվելով, Հասոն հարցրեց.
- Խուշկե Շուշիկ, ծարավ չե՞ս...
- Ծարավ եմ, բայց ո՞ւր է, ջուր չկա:
- Կա՛... Բա սա ի՞նչ է, խմիր ջրի տեղ...
Եվ նա ցույց տվեց դանդաղ զուլալվող հյութը ու մեղավորի նման նայեց Աշոտին:
- Տուր թող խմի, - քթի տակ ժպտալով հավանություն տվեց Աշոտը:
- Լավ, ի՞նչ կարիք կա...- բողոքեց Շուշիկը:
Բայց նա այնպե՛ս էր կարոտել «շիրային», երբ այգեկութի ժամանակ մայրը լցնում էր գավաթն ու տալիս իրեն...
Խմեց Շուշիկը իրեն առաջարկած քաղցր հյութը տատանվելով, քաշվելով և դարձյալ կխնդրեր, եթե իմանար, թե դրանով ի՛նչ մեծ բավականություն է պատճառում իր քուրդ եղբորը...
Գագիկը երկու օրվա մեջ կավե երկու կոպիտ աման պատրաստեց, որոնք կճուճի չափ խոր էին, բայց բերաններն ավելի լայն, քան «փորները», ուրիշ կերպ չէր ստացվում. «Գործիք չկա, դըրգ չկա, եղբա՛յր», - դժգոհում էր մեր ինքնուս բրուտը:
Նրա առաջարկով խաղողի հյութը հին կճուճի միջից քամեցին, լցրին նոր շինված ու թրծած «կարասները»:
- Պա՛հ, պա՛հ, պա՛հ, գինի էլ ունեցանք: Կյանք հո չի՞, մեր պապերի ասած արքայությունը հենց Հովազաձորում է եղել, - ոգևորված ասում էր Գագիկն ու ոտքերը լայն դրած, ձեռքերը կողերին կանթած հպարտությամբ նայում էր քաղցր հյութով լիքը կարասներին:
- Խորոված՝ կե՛ր, գինին վրան խմի՛ր, էլ ով է գժվել, որ գյուղ գնա... Աշո՛տ, էս մի կարասը թող կրակից հեռու մնա, որ գինի չդառնա, որպես գյուկոզա ենք խմելու: Էս մեկն էլ կրակի մոտ դիր՝ թող տաքանա, գինի դառնա, որ խմենք ցրտին դիմանանք...
Այդպես էլ արին:

Չէ՛, կարգավորվում է իրենց կյանքը և Հովազաձորի ձմեռն այնքան սարսափելի չէ, որքան որ կարծում էին:
Միայն մի բան էր այժմ երբեմն թունավորում նրանց տրամադրությունը. բոլոր նշաններից երևում էր, որ հովազը չի հեռացել ձորից: Հասոն վերևում քարայծի ոսկորներ էր գտել, նոր միայն հոշոտված քարայծի...
Այդ դեպքի մասին նա միայն Աշոտին պատմեց և երկուսով եկան այն եզրակացության, որ իրենց ապրած խաղաղությունը ժամանակավոր է,..

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես անշունչ չղջիկները հարություն առան և թռան-գնացին

Մի քանի օր ևս անցավ: Օրերը պարզ էին, անամպ, բայց արդեն ձմեռնամուտ էր, արևի ուժը պակասել էր: Պատանիները անձկությամբ նայում էին փակված կածանին, բայց իզուր, նրա քարերն անգամ չէին բացվում...
Այն ժամանակ նրանք որոշեցին շարունակել ձմեռելու պատրաստությունները: Այստեղ-այնտեղ կրակներ վառեցին, ձորը լցրին ծխով («Դե հիմա թող հովազը գա...») ու կոտորեցին ծուռումուռ ծառերը, խնայելով միայն ծեր ընկուզենուն, որի պտուղներով սնվել էին այն ծանր օրերին: Ձեռք չտվին նաև մերկացած թեղիներին, ինչպես և չկտրեցին սնձենին, որի վրա սկյուռը սունկեր էր չորացրել:
Փայտ հատելու գործը շատ էր հեշտացել:
Այն, ինչ որ դարբնոցում մեծ «չարխով» կարելի էր անել կես ժամում, Սարգիսը արել էր մի ամբողջ օրում, կեսօրից մինչև ուշ գիշեր և հաջորդ առավոտյան նա այնքան էր բութ կացինը քսել ողորկ բազալտին, որ բազուկները տնքում էին: Նրա այդ համառ աշխատանքի արդյունքը այն էր, որ հիմա արևի տակ երբ բռնում ես, փողփողում է, իսկ երբ հարվածում ես, այնպես է խրվում գերանի մեջ, որ ուժ պիտի ունենաս դուրս քաշելու համար: Դե ո՞նց չնայի կացնի փայլուն բերանին և չուրախանա Սարգիսը:
- Սպասեցեք չոր կաղնուց սեպեր պատրաստեմ...
Այդ էլ արավ Սարգիսը՝ գործը բոլորովին հեշտացավ: Սեպերի օգնությամբ նրանք ճեղքում-կոտորում էին տապալած ծառերը և կրում-դարսում անձավ-բնակարանի մի անկյունում:
- Այ, հիմի որ կչորանա և լավ կվառվի, - գոհունակությամբ ասաց Աշոտը: - Այսօր և վաղը թախտեր ենք պատրաստում ճեղքած գերաններից...
- Սպասի՛ր, Աշո՛տ, ախր ավելի կարևոր բաներ կան, - առարկեց Գագիկը: - Թախտն ի՞նչ ես անում, բա սա թախտ չի, ի՞նչ է, - նա ցույց տվեց գետնին պատրաստած իրենց փափուկ անկողինները:
Աշոտն իրենն էր պնդում, իսկ Շուշիկը հետևում էր բանավեճին: Գագիկը լրջացավ, վրդովվեց:
- Էլի քո էշը մի՛ քշիր, - ասաց նա: - Էստեղ կոլեկտիվ կա, բարի եղիր կոլեկտիվին հարցնելու, թե ինչո՞վ զբաղվենք, որ լավ լինի... Չե՞ս հարցնի, վերընտրենք... Թե՞ մոռացար...
Աշոտը կարմրեց մինչև ականջները: «Այն դեպքի» մասին իրեն առաջին անգամ էին հիշեցնում:
- Մեկ էլ տեսար նորից քվեարկության դրի՝ մասսաները դղրդոցով տապալեցին քեզ... Ձգույշ կաց հա՛, - ընկերոջ վրա կատակով մատը թափ էր տալիս Գագիկը:
- Լա՛վ, դո՛ւք ասացեք, առաջին հերթին ինչո՞վ զբաղվենք:
- Ա՛յ, այդպե՛ս... Մենք պատրաստվում ենք հիմնավորապես ձմեռելու, այնպես չի՞: Մեզ այս մութ անձավում ճրագ պե՞տք է, թե ոչ: Պե՛տք է...
- Ճրագը՝ հեչ, ճրագը ես կբերեմ, - ասաց Հասոն, որ կրակի մոտ նստած դանակն էր սրում:
- Կենո՞ւց, եղևնո՞ւց:
- Բա էլ ինչի՞ց... Արխաջում մենք շատ ժամանակ շամի ենք վառում:
- Լա՛վ, գնանք միասին:
Նրանք ժայռերը բարձրացան և կացնով հեշտությամբ կտրտեցին մի քանի գիհի ծառեր, որոնք մի մարդահասակ հազիվ լինեին, բայց դեպի չորս կողմ էին փռել իրենց թե՛ ճյուղերը, թե՛ արմատները: Քարերի մեջ աճած, շարունակ կիզիչ արևի տակ, նրանք ամբողջովին հագեցած էին յուղոտ խեժով:
Կացնով, դանակով մեր պատանիները ճեղքեցին-ձողեր պատրաստեցին այդ ծառերի թե՛ ճյուղերից, թե՛ բնից, թե՛ արմատներից, որոնք կարծես ամբողջովին կազմված էին դեղին սաթից[25]:
- Հիմի էլ լսեցեք ի՛մ առաջարկը, - ասաց Գագիկը, երբ «ճրագի» պաշարը արդեն կուտակված էր: - Ցեխ բերենք, ամեն մեկիդ համար մի-մի կուկլա գավաթ ու քերեղան[26] պատրաստեմ, հերիք է մեր պապերի նման մի ամանից ուտենք:

---

[25] Սաթը հենց առաջանում է սոճու և եղևնու նկարագրածս խեժից:
[26] Քերեղան – կավե ափսե:

Դրան էլ համաձայնեցին: Բայց երբ հասան Կավիանք, Շուշիկը բողոքեց.
- Մի ամիս է քոռանում ենք ծխի մեջ, ոչ մեկդ չեք մտածում վառարան պատրաստելու մասին:
- Դե, ամեն օր մի բան պատահում է, չի հաջողվում, - արդարացավ Աշոտը: - Բայց հիմա պիտի շինենք... Տղե՛րք, ամեն մեկս մի գիրկ կավացեխ տանենք...
Այդպես, «գերիներն» ամեն կերպ պատրաստվում էին դիմավորելու ձմռան:
Այդ օրերին, երբ նրանք պատրաստություններով էին զբաղված, հետզհետե քարայրը լցվեց եռացող մաճառի գազով:
Մեր պատանիների քեֆին քեֆ չէր հասնի, եթե մի արտասովոր դեպք չգար խանգարելու նրանց ուրախությունը:
Մի երեկո էլ հանդից տուն վերադարձան և տեսան, որ անձավի դուռը բաց է:
- Սա ի՞նչ բան է...- անհանգստացավ Աշոտը:
- Լավ են արել, որ բացել են, - ասաց Գագիկը, -օդը մաքրված կլինի... մաճառահոտից: Եռող գինու զզվելի հոտը գլուխս պտտեցնում է...
Բայց կատակի ժամանակը չէր: Նրանք զգուշությամբ ներս մտան և մնացին շեմքում սառած-կանգնած. կարասը շուռ էր տված, խաղողի կախանները պատից պոկոտել էին, անկարգություն էր տիրում անձավում: Անհայտ մարդիկ կերել էին խաղողը, բոլոր «խորոված ածացու ճտերը», և վրան էլ խմել ամբողջ գինին:
«Երկրային դրախտը» օդը ցնդեց և խորտակվեցին նրանց բոլոր հույսերը:
Այժմ առանց պաշարի, պատառոտված հագուստներով և հյուծված մարմիններով կանգնած էին նրանք դաժան ձմռանը դեմ հանդիման:
- Հովա՞զն է արել, - շշուկով հարցրեց Գագիկը:
- Հովազը մաճառ չի խմի, խաղող չի ուտի... Հովազն այսքան փոր չի ունենա... մտախոհ պատասխանեց Աշոտը:
Տեղները քարացած, նրանք մտածում էին. «Այս ո՞վ է թշնամություն անում մեզ...»:

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. Թե ինչպես գլխարկը գլխին մի այծ էր շրջում սարերում...

Փոքր Կովկասի բարձունքներին ձմեռը վաղուց մտել էր իր իրավունքների մեջ. այնտեղ բուքն էր թագավորում: Բայց լեռների հարավային փեշերին, Արարատին նայող ձորերում ու հովիտներում ձյունը ծալվում էր ու պղտոր վտակներ կապած՝ գնում-թափվում Արաքս գետը:
Վայրի այծերն ու ոչխարները ցուրտ լեռներից հովիտներն էին իջել ու մոտեցել գյուղերին: Եթե որսորդ Արամը կորած որդուն փնտրելիս չլիներ Հեռավոր Արևելքում, իր սովորության համաձայն ամեն լուսադեմի կբարձրանար իր տան տափակ կտուրը և այնտեղից կտեսներ վայրի խոյերին՝ գյուղի թիկունքի ժայռի գագաթին վեհորեն կանգնած:
Բքից հալածված և կեր որոնելով՝ սարահարթերից նրանք իջնում են դաշտ և կճղակներով քանդում-արածում աշնանացան արտերը կամ լիզում են հին գերեզմանաքարերը, որոնց վրա հովիվ Ավդալն աղ էր ցանում ֆերմայի ոչխարների համար:
Ձորերն էր իջել և հանրային հոտը ու արածում էր չալ ընկած լանջերին: Չարաճճի ու անհանգիստ այծերը, հովիտները թողած, ժայռերն էին բարձրանում և հանդիպում իրենց վայրենի ցեղակիցներին: Երբեմն էլ վայրի այծերի կամ լեռնային ոչխարների մի խումբ, խրտնած ու հալածված՝ գալիս ալեկոծում էր հանրային հոտը և ճեղքում-անցնում: Շները լարվում էին նրանց հետևից, բայց դե ո՞ւր, վայրի ոչխարի հետևից իսկի արաբական նժույգը չի հասնի, ուր մնաց շունը...
Նորից երկինքը ամպել էր, հատուկենտ փաթիլներ էին իջնում ցած: Նստել էր հովիվ Ավդալը ժայռի տակ, թիկունքը հենել ապառաժին և իր հնամենի սրինգն էր փչում.
- Լո՛, լո՛, լո՛, լո՛...
Նվագով էր նա արածեցնում հոտը, նվագով նրան հասկացնում, որ շուռ գա դեպի ավելի խոտավետ լանջը, նվագով էր զսպում գլուխները գիժ քամի մտած այծերին և նվագով էլ հոտին հրամայում էր իջնել առուն ջրի: Մեր երկրի բոլոր եզդի խաշնարածների նման նա ծնվել էր վրանում, մեծացել ոչխարների հետ և այնպես էր հասկանում նրանց «լեզուն», ինչպես հասկանում էր իր որդիներին: Կենդանիներն էլ նրան էին հասկանում ու սիրում և լուռ կատարում էին նրա բոլոր կարգադրությունները:
Արտաքուստ իր որդուն նման էր Ավդալը: Նա յափունջին լայն ուսերին, հաղթ հասակով որ կանգնում էր ժեռ քարափի գլխին, զգում էիր, որ այս վայրերում բոլոր հոտերի տիրակալն է նա: Սև ընչացք ուներ, ածուխի նման սև աչքեր, և բրոնզագույն էր, ինչպես անապատի բեդվինը, Հասոն արտաքինով մորը նման չէր, բայց իր մեղմ բնավորությամբ նրան էր քաշել՝ իր պղնձագույն մազերով մորը, որ մի աշխատասեր ու հեզ կին էր և որին Ավդալը հին ժամանակ քսանհինգ ոչխարով և երեք ռուսական ոսկով գնել էր Արագածի քրդերից...
Փչում էր իր սրինգը հովիվ Ավդալը, փչում էր մորմոքված սրտով և իր ուղեղում միշտ նույն հարցն էր կեծացած. «Յարաբ ո՞ւր մնաց իմ Հասո բալեն...»:
Նվագում էր հովիվ Ավդալը իր սրտաշարժ երգը և ուզում էր, որ ապառաժներն էլ մասնակից լինեն իր վշտին, որ նրանք էլ արցունք թափեն իր հետ:
- Հեյ վա՜խ, իմ թառլան ղուշ, ո՞ւր ես...
Ապա սև կարակուլի փափախը թեքում էր ականջին, ձեռքը դնում քունքին և աչքերը խուփ ու գլուխն օրորելով-մղկտալով երգում էր քրդերի սիրած մեղեդին՝ իր կորած որդու գովքն էր անում.

Ազե հայրանա լավկե մոնի
Բըժբըլընդա դիլ շիրինա,
Ազե հայրանա լավկե խոմա
Եկե ռանգ Ասմարա անի գետատ...[27]

Շները հեռվում, լանջերին ու քարերին զգաստ պահակների նման կանգնած՝ և՛ հսկում էին հոտին, և՛ լուռ ունկնդրում ծանոթ ու դուրեկան մեղեդին, կարծես նրանք էլ էին հասկանում, որ մեծ վիշտ ունի իրենց տերը՝ հովիվ Ավդալը:
- Լո, լո, լո, լո, Հասո՜... լո, լո, լո, լո... հնչում էր սրտաճմլիկ երգը քարափներում և ով լսում էր այդ երգը, գիտեր, որ հովիվ Ավդալն է կանչում իր կորած որդուն...
Եվ շները՝ իր լավ ու վատ օրերի հավատարիմ ընկերները՝ հասկանում էին իրենց տիրոջ վիշտը, նրանք էլ էին Հասոյի կարոտը քաշում: Ահա սրանցից մեկը՝ չալ կողերով մի գամփռ՝ մոլոր քայլերով մոտեցավ

---

[27] Ես մատաղ լինեմ էն ջահել տղի երկար բոյին, քաղցր լեզվին,
Ես մատաղ նրա ասմար գույնին, պայծառ ճակատին:

տիրոջը, լիզեց նրա ձեռը, պոչը շարժեց բարեկամաբար և գլուխը առաջին թաթերի վրա դնելով, թախծոտ հայացքը հառեց տիրոջ դեմքին:
- Դու է՞լ ես կարոտել Հասոյին, Չալո՛ ջան, քո սիրտն է՞լ է մղկտում նրա համար, - առանց արցունքի, բայց լալագին հարցնում էր Ավդալն իր շանը և լսում նրա տխուր տնքոցն ու արցունքներ էր տեսնում կենդանու վշտոտ աչքերում:
- Գնա՛ց կորավ մեր Հասոն, Չալո՛ ջան, - իր շան հետ մորմոքված զրուցում էր հովիվ Ավդալը, - թռավ ձեռքիցս իմ արծիվ բալեն... էլ տղա չունեմ, Չալո ջան, բա որ ծերանամ գնամ էս աշխարքից, ո՞վ է իմ օջախը վառ պահելու: Հանգավ իմ օջախը, Չալո ջան...
Հովվի սիրտը լցվեց, արցունքը դեմ առավ կոկորդին, այլևս չէր խոսում: Միայն հոգու խորքից եկող խոր թառանչները պատմում էին, որ մե՛ծ, շատ մեծ է հովիվ Ավդալի վիշտը:
«Հեյ վա՛խ, ո՞ր սարի, ո՞ր քարի տակ մնաց իմ թառլան բալեն...», - կսկիծով մտածում էր Ավդալը և որքան խրախուսում էր իրեն, որքան ջանք էր թափում, չէր կարողանում ազատվել իր սիրտը կեղեքող թախծից: Աշխատում էր տարվել գործով ու գոնե մի ժամով մոռանալ իր ահավոր կորուստը, բայց չէր հաջողվում, հանդերի ամեն ձորը, ամեն քարը, ամեն թուփը իր Հասոյին էր հիշեցնում: Հոտը այս ձորերից հավաքելիս իր բալեն քոլոզը դնում էր մահակի ծայրին ու իրեն զրնգուն ձայնով դղրդացնում ձորերը: Նստում էր քարի գլխին ու շվին կլկլացնում էն քաղցր ձենով առվի նման: Ո՞նց մոռանաս, ամեն բան նրան է հիշեցնում, - Ավդալը ոչ մի տեղ, ոչ մի ոոպե ազատ չէր իր սիրտը կեղեքող հուշերից: Ֆերմայում լիներ, ընկերներին հանդիպեր, շներին լակ տար, թե կենդանիներին՝ խոտ, ժայռը բարձրանար, թե մտներ թփուտները, ոչխար ծնեցներ, թե չարաճճի այծերին սաստեր՝ աչքի առաջ միշտ իր Հասոն էր, այդ բոլոր վայրերն ու գործերն էլ նրան էին հիշեցնում, այդ բոլոր գործերին էլ նա մասնակից էր եղել մանուկ հասակից, բոլոր առուներն էլ մտել էր բոբիկ ոտքերով, բոլոր աղբյուրներից էլ չոքել ջուր էր խմել...
Գոնե ընկեր լիներ, գոնե մի մարդ լիներ հետը զրուցող: Հովվի օրը կտրվի, հովիվ մարդու կյանքը միշտ մենության մեջ է անցնում, ծառ ու ծաղկի, սար ու քարի հետ է զրույց անում նա:
...Դիմացի ժայռի հետևից մի փափախ երևաց: Է՛հ, լավ է, ընկերը եկավ ֆերմայից, գոնե հետը կխոսի, մռայլ մտքերը կցրվեն:
- Սուրե՞ն, հաց ես բերե՞լ, - հարցրեց Ավդալը և զարմանքով տեսավ, որ իր ձայնը լսելուն պես «Սուրենը» վայրկենապես անհետացավ, ապա քիչ անց նույն փափախը նորից երևաց ժայռի ներքևի մի սեպ քարի հետևից:
- Պահմտոցի՞կ է խաղում սարսաղը, - տարակուսանքով փնթփնթաց հովիվը և նորից ձայն տվեց.- Սուրե՛ն, դեսն արի, էդ ո՞ւր ես գնում:
«Սուրենը» գլուխը բարձրացրեց, և Ավդալը տեսավ, որ փափախը կախված է մի խոշոր քարայծի եղջյուրից: Թե՞ աչքին այդպես երևաց...
- Նալլաթ քեզ չար սատանա... - երկյուղով փնթփնթաց հովիվը և աչքերը տրորեց, երազ հո չի՞...
Հաջորդ վայրկյանին փափախավոր քարայծն անհետացել էր, Ավդալին թողնելով ահի ու մութ կասկածների մեջ.
- Էդ ի՞նչ բան էր, փափախավոր էլ է՞ծ կլինի... Թե՞ շեյթան էր...
Երկյուղն իրենից վանելու համար, նորից սկսեց փչել իր սրինգը:
Դիմացի շեկ ժայռերից չրխկոց լսվեց, ոտքերի մոտ պառկած շունը ականջները վեր տնկեց, լարվեց: Ավդալը դադարեցրեց նվագը և ամբողջովին դարձավ լսողություն, նա գիտեր, որ սարերից հոտի հետ ցած էին իջել և գայլերը, ու հիմա ամեն թուփ, ամեն քար, ամեն խշրտոց նրան կասկածելի էր թվում:
Բայց ոչ, քարայծերն են իրար զարնվում իրենց ահագին եղջյուրներով. սկսվել էր նրանց զուգավորման՝ հետևապես և կռվի՝ շրջանը: ՞Չր՛խկ, չր՛խկ, չր՛խկ՞, - լսվում էր ժայռի ծերպերից, կարծես այնտեղ ոսկորներ էին խփում իրար:
Հովիվը որքան լարեց իր տեսողությունը, ոչինչ չերևաց, ժայռի գորշ ծերպերում գորշագույն կենդանի՞ կերևա:
Կողքից կախված հեռադիտակը դրեց աչքերին, հարմարեցրեց և մի պահ մնաց ապշած այն բանից, ինչ որ տեսավ ժայռերում: Ահա երկու հսկա քարայծ, կրքից վտանգ ու աշխարհ մոռացած, ետ-ետ են գնում ու մոլեգնած վրա հասնում իրար, և նրանցից մեկի գլխին մի փափախ կա դրված, իսկական մարդկային փափախ...
Ժայռի գլխին պահապան կանգնած գամփռը ցած նայեց, վրդովված հաչեց այծերի վրա և սրանք խրտնած եկան-անցան Ավդալի մոտով: Եղջյուրից կախված գլխարկը մեկ շպրտվում էր այծի ծոծրակը, մեկ ընկնում ճակատին և շփոթեցնում նրան: Կենդանին թափահարում էր գլուխը, որ ազատվի իր անախորժ բեռից, բայց գլխարկը շարունակում էր ամուր կախված մնալ կեռ եղջյուրի արմատից:
Ա՛յ քեզ հրաշք... Եթե Ավդալը քրիստոնյա լիներ, իսկույն կխաչակնքեր երեսը, այնքան անբացատրելի բան էր նրա տեսածը: Հավատում էր բնության ոգիներին անգրագետ հովիվ Ավդալը, հավատում էր

հրաշքներին և իր տեսածն էլ հրաշքի նման մի բան էր համարում: Բայց երբ այծը դեմ առավ առաջը փակող ժայռի պատնեշին և մի պահ կանգ առավ, որ իր փախուստի ճամփան որոշի, Ավդալը հեռադիտակով նրան բոլորովին մոտեցրեց և տեսավ, որ գլխարկի գագաթի մահուդը կարմիր է, «ականջները» ծալած և քուղով կապած իրարից, իսկ գույնը գորշ էր:
- Էս հո կարծես Արամի տղա Աշոտի փափախն է, - զարմացած ու տարակուսած շշնջաց հովիվը:
Այո՛, այն գլխարկը, որ Արամը կարել էր տվել գայլի մորթուց, որին ինքը՝ Ավդալը շների օգնությամբ սպանեց մահակով, անցյալ տարի սարում, մի ակնակիր գիշեր:
Ափսոս, շունը չթողեց երկար դիտի և հալածված կենդանին ժայռի երկայնքով ցած վազեց ու հասնելով ծայրին, անհետացավ նրա հետևում:
Արտասովոր լուրը զարմանքով ընդունվեց ֆերմայի աշխատողների շրջանում և ալեկոծեց նրանց: Ավդալի կինն ու Շուշիկի մայրը լաց ու կոծ բարձրացրին, իսկ հովիվները, երեկոյան ֆերմայի ընթերցարանում հավաքված, մտածում-գլուխ էին ջարդում այդ տարօրինակ երևույթը բացատրելու համար: Իսկապես, ի՞նչ կերպ, ի՞նչ ճանապարհով, ի՞նչ պայմաններում կարող էր անհետացած տղայի գլխարկը վայրի նոխազի եղջյուրին անցկացվել... Կամ եթե գտնվել է Աշոտի գլխարկը, ի՞նչ կարող է նշանակել դա, կենդանի՞ են մեր պատանիները, թե՞ աղետի ենթարկված-ոչնչացած:
Ոչ ոք չկարողացավ սպառիչ պատասխան տալ մարդկանց հուզող այս հարցերից մեկն ու մեկին: Մի բանում միայն համաձայնության եկան ֆերմայի աշխատողները, որ երեխաներին պետք է փնտրել ոչ թե Հեռավոր Արևելքում, այլ Այգեձորի հանդերում:
Մարդ ուղարկեցին գյուղ, լուր տվին Աշոտի մորը, թե՝ մի այծ որդուդ գլխարկը դրած՝ ման է գալիս սարերում...
Ո՞վ կարող էր այդ զարմանալի երևույթից բան հասկանալ, եթե ոչ միայն ինքը՝ բնության գործերի քաջ գիտակ Արամը: Թող գա, սարերն ընկնի, այծին խփի, նախ մի լավ ստուգի, տեսնենք, իրո՞ք իր որդու գլխարկն է նրա եղջյուրից կախ և եթե նրանն է, որտեղի՞ց, ի՞նչ ճանապարհով կարող էր գլխարկն իր որդու գլխից տեղափոխվել վայրի կենդանու գլուխը:
- Հա՛, ձեռագիր տվեք ետ գա, - լալով ասում էր Աշոտի մայրը: Բայց բարեկամները տատանվում էին. գուցե դրանով գործն ավելի կփչացնեն, գուցե, թյուրիմացության մեջ կգցեն ճիշտ ճանապարհով իրենց կորուստը փնտրող մարդկանց:
Արշակն ու Արամը իրենց վերջին նամակում, որ ուղարկել էին ավիոփոստով, գրում էին, որ երեխաների հետքը չի երևում և որ Հեռավոր Արևելքի բոլոր մարզերի, օկրուգների, շրջանների քրեական հետախուզության օրգանները ոտքի են հանվել, բայց երեխաները չկան ու չկան:
- Է՛հ, որ այդպես է, գրենք թող ետ գան, - վերջապես որոշեցին այգեձորցիք, և Պարույրը խմած, գլուխը տաքացած պահին այսպիսի մերկապարանոց հեռագիր տվեց Արամին.
«Մի վայրի այծ, տղիդ փափախը գլխին, ման է գալիս վերին ձորերում, արի տեսնենք ինչ ենք անում»:
Թող ճշգրիտ իմանա, որ իր դիրքը որոշի, - մտածում էր Պարույրը:
Հազար բան մտածեցին Արամն ու Արշակը մինչև որ իջան Երևանի օդանավակայանում, - ինչպե՞ս թե այծը ման է գալիս Աշոտի փափախը գլխին...
Գյուղ հասնելուն պես Արամը վազեց իր տուն, գրկեց վշտահար կնոջը, համբուրեց երեխաներին և լավաշի մեջ փաթաթած մի կտոր ղավուրմա գրպանը խոթելով, սար բարձրացավ: Կինը շատ էր համոզել, որ նստի, հանգստանա, մի կտոր հաց ուտի: Հա՞ց կուլ կգնա, երբ գիտես, որ կորած որդուդ գլխարկը վայրի կենդանիներն են ծածկում...
Շատ չգնաց Արամը, գյուղի վերևի ձորերում էին թե՛ ֆերմայի հոտերը, թե՛ ձյունոտ լեռնագագաթներից ու սարահարթերից իջած մուֆլոններն[28] ու այծերը: Արևը նոր էր թեքվել դեպի մայրամուտ, երբ նա հանդում գտավ Ավդալին, մոտեցավ, բարևեց ու տխուր նստեց մոտը:
- Արամ քիրվո[29] , ուրեմն մեր բալեքը կորա՞ն, - տխուր հարցրեց Ավդալը և նրա աչքերը պղտորվեցին:
Արամը լուռ ծխում էր: Ինչպե՛ս նիհարել-կերպարանափոխվել էր այդ միշտ անհոգ, միշտ կենսուրախ մարդը: Աչքերի տակը փոսեր էին գոյացել: Ճերմակը շատացել էր մազերի մեջ: Նա ծոցից հանեց մի կապ դրամ և խոթեց հովվի գրպանը:
- Տվածդ փողն է, ետ եմ բերել... հարկավոր չեկավ...
Հովիվը շատ բողոքեց՝ չեղավ:
- Է՛հ, երկինքը թող քո սրտովը տա քեզ, Արամ քիրվո, - խոնարհվելով օրհնեց նա:
- Դու էն ասա, հաստատ Աշոտի՞ս փափախն էր քո տեսածը, - խոսակցության նյութը փոխեց Արամը:

---

[28] Մուֆլոն – վայրի ոչխարի տեսակներից:
[29] Քիրվո – բարեկամ:

- Դե, ինչ ասեմ, Արամ քիրվո, գլուխը կարմիր էր, մորթին էլ կարծես իմ տված գելի մորթին էր... Ով գիտի, գուցե աչքիս է էդպես երևացել...
Արամը լուռ մտածում էր: Իրոք, Ավդալը սնահավատ մարդ է, գուցե իր մտքերով տարված ժամանակ այդպե՞ս է երևացել աչքին: Չէ, պետք է սար ու ձոր ընկնել, գտնել խորհրդավոր նոխազին և պարզել գլխարկի գաղտնիքը:
- Ավդալ ախպեր, դրանից հետո ասածդ թաքին[30] տեսնող չի՞ եղել:
-Չէ:
- Գնա՛նք միասին ման գանք:
- Իմ աչքի վրա...
Այս ասելիս Ավդալը արևելյան ձևով գլուխը խոնարհեց, աջ ձեռքը դրեց աշ աչքին և վեր կացավ: Նա հոտը հանձնեց ընկերներին ու քայլեց Արամի հետևից:
Քուրդը նեղ օրի ընկեր է, քուրդը չի թողնի, որ մենակ շրջես սարերում:
Տարբեր ձորերով էին բարձրանում նրանք վեր, շրջում էին տարբեր ժայռերում և յուրաքանչյուրը տարբեր այծեր էր տեսնում ահաբեկված փախչելիս կամ միամիտ արածելիս: Բայց արևը մայր մտավ, իրենց փնտրածը չկար ու չկար:
Արամը հոտի հետ գնաց ֆերմա, գիշերեց այնտեղ:
Անհանգիստ քնով քնեց որսկան Արամն այդ գիշեր, ինչքա՜ն տպավորություններ էր ստացել այդ օրը: Այդքան էլ երկար, այդքան էլ բովանդակալի օ՜ր... Ասում են՝ ձմռան օրը կարճ է: Ի՜նչ կարճ, առավոտյան նա նախաճաշել էր Վոլգոգրադում, Ռոստովն անցնելիս արևը նոր էր ծագում, իսկ երբ ամպերի միջով կտրեց-անցավ Անդրկովկասի լեռնաշխարհը, արևը նոր մոտենում էր զենիթին: Եվ հետո ասում են՝ ձմռան օրը կարճ է...
Նրա ականջներին դեռ հնչում էր պրոպելլերի դռռոցը, թռչում էր անհուն տարածության մեջ, սիրտը թրթռում էր «օդային վիհերն» ընկնելիս: Եվ երբ արթնանում էր «ցնցումից», աչքն ընկնում էր բուխարու կրակին և նրա մոտ թաղիքին նստած հովիվ Ավդալին, որ կամաց նվագում էր իր հնամենի սրինգը՝ տխուր ու մելամաղձոտ.
- Լո՛, լո՛, լո՛, լո՛...

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. Թե ինչպես ձեռնտու չէ կենդանուն, երբ մարդու գլխարկ է ծածկում...

Լուսադեմին Ավդալն ու Արամը նորից գնացին ժայռերի կողմը: Արամը գիտեր, որ քարայծերը լուսաբացին դուրս են գալիս իրենց թաքստոցներից, արածում են հապճեպ, որպեսզի մինչև ֆերմայի հոտի ու շների երևալը կշտանան և նորից գնան թաքնվեն ժայռերի մեջ, նրանց թաքուն անձավներում:
Արամն ու Ավդալը քայլում էին բարձունքներով և երբեմն պառկելով՝ ցած էին նայում ժայռերից:
Վաղորդյան ցուրտը կտրում-կսկծեցնում էր նրանց դեմքերը, բայց ներքուստ եփվում էին՝ այնքան անհամբեր ու այնքան տենդոտ էին դարձել իրենց որդիներին որոնող այդ հայրերը:
Վերջապես արեգակը ծագեց և շեկ ժայռերը հուրհրատին տվին, հեքիաթային ամրոցների ու պալատների տեսք ստացան: Եվ ահա նրանց պարսպապատ գոգավորություններից մեկում երևացին մի խումբ մայր այծեր, որոնք մերթ կռանում խոտ էին պոկում գետնից, մերթ վեր տնկում իրենց սիրունիկ դնչիկներն ու կերը կիսածամել, ականջ դնում շրջակայքի ձայներին:
Ավդալն ու Արամը, ժայռի կտուրին պառկած, ցած էին նայում և նրանց հայացքը ուրիշ բան էր փնտրում ներքևի ապառաժներում, մայր այծերը նրանց չէին հետաքրքրում:
Հանկարծ հովիվը դուրս հանեց յափունջու տակից իր ձեռքն ու մեկնեց ժայռի բեկորներից մեկի կողմը: Նրա այդ շարժումը տագնապ էր արտահայտում:
- Հա, տեսա՛, - շշնջաց Արամը և հեռադիտակը մոտեցրեց աչքերին:
Արոտի դուրս եկած մայր այծերից այն կողմ, խոշոր ժայռաբեկորի վրա, մի գլուխ էր երևում և եղջյուրին խրված մարդկային մի գլխարկ, որի կատարը իրոք կարմրին էր տալիս...
Այդ գլխարկի տեսքից որսորդի շնչառությունն այնպես արագացավ, այնպիսի հուզմունք համակեց նրան, ինչպիսի հուզմունք նա չէր զգացել անգամ արջի որջի առաջ, երբ նրա բրդոտ բնակիչը փնչոցով ու գոռոցով դուրս էր գալիս իր քունը խանգարողի հետ դատաստան տեսնելու:
Նա մեկնել էր հրացանը, բայց աչքերը շաղվում էին, զենքի փողը դողդողում էր իր սրտի անհանգիստ զարկերից:

---

[30] Թաքա – արու այծ, նոխազ:

Իսկ նոխազը, իր պահակակետում անվրդով կանգնած, դիտում էր շրջակայքը, հոտոտում օդը, ականջները ամեն խշրտոցից դեսդեն էր թեքում ու որսում ամեն շշուկ, ամեն ձայն, մի խոսքով, հսկում էր իր ցեղակիցների խաղաղ արոտը, ինչպես հայրը կհսկի իր ընտանիքի անդամների ապահովությունը: Ահա կասկածելի հոտ առավ ժայռի կտուրից, վեր նայեց և փախչելու ազդանշան տվեց՝ «փռ՛շտ... փռ՛շտ...»:
Պահակի ձայնից մայր այծերը ցնցվեցին, մի վայրկյան քարացան-լարվեցին իրենց տեղերում և սև յափունջու ծայրը նկատելով, գլխակորույս ցած վազեցին ու իրար հետևից ցատկեցին ժայռի ներքին թարեքները: Իր պարտականությունը վերջացած համարելով, առաջ ցատկելու համար լարվեց-պրկվեց և պահակ նոխազը: Բայց այդ ակնթարթին մեղվի բզզոցով մի գնդակ սուլեց- անցավ նրա վզի տակով: Ներքին ալեկոծումից որսորդը վրիպել էր...
Շիկրտոցն ընկավ ժայռերը, քարայծերը չէին երևում, բայց լսվում էր նրանց ոտնաձայնը, նրանց գլորած խճի ու մանր քարերի ձայնը:
Քառորդ րոպե անց, նրանք արդեն դուրս էին եկել ժայռերից և նազելի թռիչքներով սլանում էին դիմացի լեռան լանջով դեպի հաջորդ լեռնամատը:
Խմբի առաջից, մետրանոց եղջյուրները օդում ճոճելով և գլխարկը թափահարելով՝ վազում էր ծանոթ նոխազը:
Որսորդ Արամին կասկածների մեջ թողնելով, նա իր հետ դեպի անհայտություն էր տանում խորհրդավոր գլխարկի գաղտնիքը...
Երբ այծերի խումբն անհետացավ լեռնամատի հետևում, Ավդալը հարցրեց.
- Աշոտի փափախը չէ՞ր, Արամ քիրվո:
- Աչքերս ջրակալել էին, լավ չէի տեսնում... Ո՛վ գիտի... Մինչև չսպանենք, դժվար է ասել...
Եվ հրացանի կիսից բռնելով, շտապեց փախած այծերի հետևից:
Երբ լեռնամատն անցկացան, նկատեցին, որ ներքևից մի խումբ զինված մարդիկ են գալիս և գլխարկներն օդում շարժելով, կանգնելու նշան են տալիս իրենց:
Մոտեցան: Արշակն էր, շրջանի որսորդական միության նախագահը և մի քանի ուրիշ որսորդներ:
- Ուշացա... գնացել էի շրջանից օգնություն բերեմ, - արդարացավ Արշակը՝ ճակատի քրտինքը սրբելով: Խե՜ղճ մարդ, ի՜նչ էր մնացել այն հսկա տղամարդուց...
- Զուր եք նեղություն քաշել, ես հիմա նրան կբռնացնեմ Հովազաձորում, - ասաց Արամը ինքնավստահ և վեր կացավ:
- Հա՛, մենք հեռվից տեսանք, որ դենն են փախչում, - հաստատեց որսորդների նախագահը, որ սապոգները հագին, կարճ բեղերով ու լայն կրծքով մի տղամարդ էր: - Բայց հաստա՞տ Հովազաձոր գնացած կլինեն, - հարցրեց նա:
- Հա՛, էստեղ ղալմաղալը շատ է, ֆերման ցած է իջել, ես էլ վրաները կրակեցի... Էնպիսի տեղ են գնալու, որ խանգարող չլինի իրենց կռվին, իրենց հարսանիքին, - բացատրեց Արամը՝ բնության գործերին գիտակ մարդու համոզվածությամբ և առաջ ընկավ:
- Կաց, Արա՛մ, կաց, մի՛ շտապիր, - հանգիստ ասաց որսորդների պետը: - Կաց, Միրուք Ասատուրն էլ հասնի իր խմբով, տեսնենք ինչ ենք անում: Դե, փորձված մարդ է, գուցե մի բարի խորհուրդ կտա:
- Միրուք Ասատո՞ւրը: Ի՞նչ գործ ունի Ասատուրը մեր հանդերում:
- Դո՞ւ չես գրել նրան: Չէ՞: Ով գիտի, ոնց է իմացել ու օգնության եկել մեզ: Գիշերս վերին ֆերմաներում են եղել, հիմի ուր որ է կերևան... առավոտը հեռախոսով հետս խոսեց:
- Մեզ կգտնի՞ որ, - հարցրեց Արամը, որ անվանի որսորդի անունը լսելով ալեկոծվել էր: Միրուք Ասատո՜ւրը... Նա որ գա հո մի ճար կանի, մի ճամփա ցույց կտա...
- Կգտնի: Պայմանավորվել ենք իրար պատահենք Անգղաքարում: Լավ է, էծերի հետքն էլ կարծես էն կողմն է գնում:
Այն լուրը, թե Սևանա երկրի անվանի որսորդ Միրուք Ասատուրն իրեն օգնության է գալիս, թևեր տվեց Արամին: Ո՛վ գիտի, գուցե բախտն է իր այս նեղ օրին Ասատուրի նման մարդուն օգնության կանչում: Ի՞նչ իմանաս բնության խորհուրդները, - յուրովի մտածում էր Արամը և այդ մտքից հետզհետե ալեկոծվում, դառնում էր անհամբեր: Լսած լուրից հանդարտվելու փոխարեն, նա կրակ կտրած ու շնչակտուր վազեց դեպի Անգղաքար, թեև քիչ անց փախստական այծերի հետքը ծռվեց դեպի աջ:
Հևիհև անցան հերթական լեռնաբազուկը և երբ դուրս եկան Անգղաքարի դիմաց, Արամի սիրտը թնդաց, ահա անգղի նման թառել է Միրուք Ասատուրը՝ ահագին մորթե փափախը գլխին, որ սևին է տալիս կապույտ հորիզոնի վրա: Նրա մոտ քարերին էլի մարդիկ կային նստոտած, բայց Արամի հայացքը փափախավոր մարդուն էր ուղղված, նրա տեսքից նոր հույսեր էին ծնվել իր մեջ. «Հե՜յ գիդի որսորդի բախտ, մի բալես գտնվե՜ր, էլ բան չեմ ուզում աշխարքից...»:

Խումբը կանգ առավ, մարդիկ օդում թափահարեցին իրենց գլխարկները: Դիմացի փափախավոր մարդը անձայն վեր կացավ, օդում ճոճեց հրացանը (այսինքն՝ «նկատեցի») ու լուռ ցած իջավ իր թառից: Որսորդները հասկացան, որ իրար ձայն տալ չի կարելի:
Արամն իր խմբով ձորումն էր, երբ վերևից ծանր ու հանդիսավոր իջավ Միրուք Ասատուրը, արծաթապատ դաշույնը կապած, հրացանն ուսին, իր հավատարիմ Չամբար շունը հետևից գցած:
Արշակն ընդառաջ գնաց խմբին և գրկեց ծերունու կողքից քայլող պատանուն:
- Գրիգոր ջան, դու է՞լ...
Գրեթե իր որդի Գագիկի տարիքին էր այդ պատանին, նրա քեռու որդին, նրան խիստ նման, նրա պես չարաճճի ու կատակասեր: Տղան դեմքը սեղմել էր Արշակի թևին և հազիվ էր զսպում իր արցունքը, իսկ մարդը լուռ արտասվում էր:
- Տղամարդին լացը վայել չի, - մտերմաբար հանդիմանեց որսորդ ծերունին: Իր սովորության համաձայն նա երկար մորուսը փաթաթել-ծոցն էր դրել, որ քայլելու ժամանակ չխճճվի դաշույնին ու չխանգարի: Դեմքը քամհարված էր, աչքերը երիտասարդ էին ու բարի:
- Բարի աջողում ձեզ, ա՛յ այգեձորցի՛ք, - մոտենալով խրոխտ կանչեց նա:
Չամբարը հետաքրքրությամբ նայում էր անծանոթ մարդկանց և, իհարկե, այնքան անհասկացող չէր, որ հաչեր նրանց վրա, ում հետ բարեկամաբար խոսում է իր տերը:
- Բարին քո որդկերանց արևին, քեռի Ասատուր, դու բարով եկար, մեր գլխի, մեր աչքի վրա եկար, - գլխարկը հանեց և հարգանքով գլուխ տվեց Արամը:
- Թող երկնքի աչքը քաղցր լինի քեզ վրա, Արամ ջան, թող քո մուրազը կատարվի, - օրհնեց բարի ծերունին:
Ապա մի պահ հայացքը ման ածեց խմբի վրա, գլխով հավանության նշան արավ, այսինքն թե՝ ոչինչ, այսպիսի մարդկանցով կարելի է գործ անել, ու ծանր-ծանր շարունակեց.
- Ձախորդությունը մարդուս հին ընկերն է, նրա կյանքի չարակամ ուղեկիցը: Սիրտդ պետք է պնդացնես ու նրա արարքներին վարժվես, մինչև որ մի օր հաջողեցնես բկիցը բռնես ու թափահարես՝ թե՝ «Բա հերիք չի՞, -ձեռք քաշիր ինձանից, էլի՛...»:
Ապա նստեց քարին ու դանդաղ սկսեց լցնել իր հնամենի ծխամորճը:
- Էնքա՛ն ձախորդություններ են անցկացել գլխովս... Էն քարափի տակի կարճլիկ ծուռումուռ կաղնին տեսնո՞ւմ ես. ձախորդություններն են դրան շնորհքից գցել՝ քամին, կարկուտը, կայծակը: Բայց էլի դիմանում է, էլի ապրում է: Ու էլի կապրի, - սրտապնդող տոնով ձայնը բարձրացրեց ծերունին: - Հա՛, Արա՛մ, էս էլ իմ ասլան թոռն է, Կամոն, երևի լսած կլինես: Էս էլ մեր մասխարա Գրիգորն է, սրա հետ ապրողը տխուր օր չի ունենա...
Նրանց ոտքերը մինչև ծնկները թաց էին. դրանից երևում էր, որ խումբը սարերի խոր ձյունը ճեղքելով է եկել:
- Ծարավ կլինեք, քեռի Ասատուր:
- Հա, լցրո՛ւ, Արամ ջան, շան չարչարանք ենք քաշել սարերում: Էդ ի՞նչ ջուր է, կարմի՞ր... Հա՛, բախտավոր մարդիկ են էս Արարատյան դաշտի բնակիչները, ջրի տեղ գինի են խմում: Է՛հ, ողջ լինեք, ամեն մարդ թող իրեն կորուստը գտնի, աշխարքիս էլ թող մի խաղաղություն լինի... - օրհնեց ծերունին, և կավե ամանով իրեն մատուցված գինին խմեց փնչոցով ու ծծեց բեղերը:
- Իսկի որսի չպատահեցի՞ր:
- Բա ո՞նց չպատահեցի: Խոսրովի անտառում էս ասլան բալեքը Չամբարի հետ մի բոլուկ խոզ հանեցին...
- Հետո՞, խփեցի՞ր...
- Ի՞նչ ես կարծում խփած կլինե՞մ, թե չէ, - պարծեցավ ծերունին, որի գլուխը տաքացել էր գինուց և սիրտն ուզում էր գունազարդած պատմել իր կատարած որսը ամենայն մանրամասնությամբ: Բայց նկատեց, որ Արամը մռայլվել է ու անհամբերության նշաններ է ցույց տալիս, վեր կացավ.
- Մի վարազ գետնովը տվի, վարազ մի ասիլ, մի գոմեշ ասա, - այնուամենայնիվ չհամբերեց ու պարծեցավ ծերունին և չհասկացավ, թե ինչու իր ունկնդիրները զարմանալու փոխարեն ներողամտաբար ժպտում են. թիկունքից Գրիգորը նշաններով հասկացրել էր, որ սպանվածը խոճկոր է...
- Բա վարազդ ո՞ւր է, - հարցրեց Արամը, երբ արդեն քայլում էին:
- Որսը սպանողինը չի, ուտողինն է, - հանդիսավոր և խրատական տոնով ասաց ծերունին: - Հիմի ֆերմայում ով պատահում խորովում է: Հա, Արամ, դե պատմիր տեսնենք էդ ի՞նչ բան է, բա էդ երեխեքը... Ախր ո՞նց...
Լսեց ծերունին երեխաների անհետանալու պատմությունը ու ծլթծլթացնելով գլուխն օրորեց.
- Ասածիցդ տեսնում եմ, որ քո տղեն էլ իմ էս թոռան պես գլուխը լիքն է քամիներով: Ինչե՞ր բերեց սա իմ գլուխը, գիտե՞ք... Բայց վերջը լավ եղավ: Քոնն էլ լավ կլինի, չվախենա՛ս...
- Բա փափախը ինչի գլխին ի՞նչ գործ ունի, - վերջապես Արամը տվեց իրեն տանջող հարցը:

- Հա, դա հրաշքի պես բան է, - մտատանջության մեջ պատասխանեց ծերունին, ապա անմիջապես ավելացրեց, - ասենք մեզ մոտ պակաս հրաշքներ չկային, վերջը սուտ դուրս եկան: Մեր Գիժ սարում Սև քարափներ կան, որ միշտ խշշում-թշշում էին: Մարդիկ հին ժամանակ ասում էին՝ դժոխքի մեծ պղինձն է էնտեղ խլթխլթում: Վերջը մեր էս Կամոն իրեն բնասերների խմբով գաղտնիքը բաց արեց, ի՜նչ հրաշք, ի՜նչ բան, քարափը պայթեցրին տեսան տակովը գետ է գնում... Գիլլի լճից գոռոց էր լսվում, ասում էին հրաշք է, սատանա է, ջրի գոմեշ է, չգիտեմ ինչ է: Էլի սուտ դուրս եկավ, պարզվեց, որ Սև քարափների տակ հոսող էդ ջուրը գնում, Գիլլիում դուրս է գալիս բլդբլդալով, անճոռնի ձեներ հանելով, մարդկանց աիի մեջ գցելով... Չէ՜, Արա՛մ, հրաշք չկա, հիմի ուր որ է կգտնենք քու էդ իծին ու փափախը կվերցնենք գլխից - անհարմար է, տո՛, էծն էլ մարդի փափա՞խ կդնի...
Ծերունու լավատես տոնը որոշ չափով սրտապնդեց Արամին:
- Է՜հ, բերանդ տաճար դառնա, քեռի Ասատուր, ինչ ասեմ, - հոգոց հանելով արտասանեց նա ու առաջ ընկավ:
Խումբը նորից բռնեց քարայծերի հետքը և գնաց հևալով, քրտնաթոր: Ձյունից բացված լանջերին դեռ հողը թաց էր և նույնիսկ տեղ-տեղ՝ ցեխ: Ուստի փորձված որսորդի համար դժվար չէր որոշել այծերի փախուստի ուղղությունը: Իսկ ձորակներում և արևմուտք նայող լանջերին, ուր ձյունը դեռ նստած էր, փախչող կենդանիները թողել էին իրենց սուր-սուր կճղակների հետքերը, որոնցով ծեր որսորդը որոշեց, թե քանի՞սն են նրանք, ի՞նչ սեռի և ի՞նչ հասակի: Հետքերը հետազոտելով նա եկավ այն եզրակացության, որ խումբը բաղկացած է երկու նոխազից, չորս մայր այծից և յոթ-ութ ամսական երեք «չեփիչից»:
Նրանք տեղ-տեղ կանգ էին առել, շունչ քաշել, պոկել ձյան տակից նոր դուրս եկած «թոփալախոտի» կանաչ փնջերը[31] , ապա հեռվից զգալով, որ իրենց հետապնդում են, նորից սլացել էին առաջ, դեպի Հովազաձորի բնական ամրոցը:
Մինչև կեսօր հետապնդեցին քարայծերին և երբ մոտեցան այն պատնեշին, որի հետև Հովազաձորն էր, նկատեցին, որ այծերի հետքը մի այլ արահետով նորից ետ է գալիս և գիրթ իջնում Արարատյան դաշտը: Որսորդները կանգ առան երկմտանքի մեջ. Ի՞նչ անել, ո՞ր խմբին հետապնդել: Հովազաձորի պռնկից վերադարձած այծերի հետքը թարմ էր. ոտ կոխել էին հալած ձյունը՝ կճղակների տակից ջուրը դուրս էր ցայտում: Բայց գուցե ցած իջնողը ուրիշ խումբ է: Ձյունածածկ մի փոքրիկ տափարակում, որի վրա ժայռը շվաք էր արել, նրանք կռացան և սկսեցին հաշվել հետքերը, չորս մայր այծ էր անցել այնտեղով, երեք չեփիչ, բայց ոչ թե երկու, այլ մեկ նոխազ: Իսկ ո՞ւր էր մնացել մյուս նոխազը և եթե ցած էր գլորվի Հովազաձոր տանող «Դիվային կածանից», գլխարկավոր այծը չէ՞ր արդյոք գլորվողը...
Որսորդները, քարերին նստոտած, խորհում էին:
- Հը, նո՞ւյն խումբն է, թե չէ, - հարցրեց Արշակը:
- Հա՛, խումբը նույնն է... երևի ձորում արջի են պատահել- ետ եկել... Կամ, ո՞վ գիտի...
Ծեր որսորդը մտածում էր: Վերջապես նա վճիռ ընդունեց ու վեր կացավ:
- Հիմի դաշտում աղ են լիզում, գնա՛նք, - ասաց նա և առաջ ընկավ:
Խումբը նրա հետևից թեթև իջավ Արարատյան դաշտը և ծռվեց դեպի աջ, դեպի խորհրդավոր հեղեղատը, որի ափերին արածելու չոր խոտ կար, իսկ քիչ դենը՝ տափաստանի մերկ ու քաչալ մասերում պսպղում էր հողի ընդերքից արևի երեսը դուրս ելած աղը. կարծես դաշտի այդ մասում գիշերը եղյամ էր նստել, բայց արևը անզոր էր հալեցնելու նրան:
Լեռներից իջնում և այդ աղուտները լիզում են հայկական մուֆլոններն ու վայրի այծերը:
Ահա և նրանք, մի խումբ կենդանիներ, գլուխները կախ, տարված են իրենց համար այնքան հաճելի զբաղմունքով: Նայելով հանգիստ աղ լիզող այդ կենդանիներին, ճամփորդ մարդը կարող էր կարծել, թե հարևան գյուղի հորթերն են: Բայց ծեր որսորդի սուր աչքը դեռ հեռվից արդեն որոշել էր, որ քարայծեր են, և դա երևում էր միակ նոխազի մեծ-մեծ եղջյուրներից:
- Փափախավո՛րն է... - ալեկոծված գոչեց Ավդալը, հեռադիտակը Արամին հանձնելով:
- Հա՛, նա է: Կացեք խորհրդակցենք:
Երբ նստեցին խելք խելքի տալու, թե բաց դաշտում ինչպե՞ս մոտենաս այնքան զգույշ կենդանիներին, Ասատուր պապը որոշեց քամու ուղղությունը, ապա առաջ քաշեց իր տակտիկան.
- Սրանց որ փախցնենք, վազելու են դեպի վերին քարափները, դեպի իրենց բները: Ես ու Արամը կկտրենք դրանց փախչելու ճամփան, կպառկենք էն վերին թփի տակ, իսկ դուք ներքևով գնացեք անցեք թիկունքն ու քշեցեք թող գան մեր կողմը...

---

[31] Այդ խոտը, որ բուսնում է լեռների միայն հարավ նայող լանջերին, փնջերով կախված է հողի փոքր ու մեծ գուղձերից և այնքան ցրտադիմացկուն է, որ ձյան տակ անգամ կանաչ է մնում:

Թփուտների միջով քողարկված՝ խումբն առաջ գնաց, անցավ աղուտներն ու դուրս եկավ այծերի թիկունքում:
Մարդկանց հոտն առնելով, կենդանիները մի ակնթարթում կուտակվեցին իրենց առաջնորդի շուրջը և հաջորդ վայրկյանին, ուժ տալով իրենց երկար ոտներին, սլացան դեպի փրկարար ժայռերը: Ինչպե՞ս իմանային, որ իրենց փախուստի ճամփին, թփի հետևում, պառկել և հրացաններն առաջ են մեկնել իրենց ցեղի հին թշնամիները՝ Միրուք Ասատուրն ու որսորդ Արամը:
Որսորդներն իրենց առաջ պրկված ու աղեղնաձև մարմիններ էին տեսնում և օդում թափահարվող մի գլխարկ: Քամին փչում էր այծերից դեպի թուփը և նրանք չէին առնում թաքնված մարդկանց հոտը, որ քարայծի համար թերևս ամենից զարհուրելին է բնության մեջ գոյություն ունեցող բոլոր թշնամական հոտերի մեջ: Այդ հոտը հետապնդում էր նրանց թիկունքից, իսկ առաջից ոչ մի կասկած չունենալով, այծերը երբեմն կանգ էին առնում և գլուխները ետ թեքելով, նայում էին իրենց հետև մնացած աղուտներին:
Ահա նրանք բոլորովին մոտ են, պարզ երևում է առաջից վազող նոխազի լանջի բնական սև գոտին՝ նրա հողագույն մարմնի վրա: Կուրծքը չալ է, փորի տակը ճերմակավուն, իսկ խոշոր գլխին տնկված եղջյուրները կարծես մի-մի կարաբիններ լինեն ճոճվելիս: Այծերը, - փոքրիկ սուր-սուր եղջյուրներով, բարակ ոտքերով, գողտրիկ իրանով և բարակ նազելի վզով այդ արարածները, - թեթև թռչկոտելով հասնում էին իրենց առաջնորդին և երբ նա կանգ էր առնում ու ետ նայում, իրենք ևս, կարծես հրամանով, նույնն էին անում, և այդ պահին յուրաքանչյուր մայր իր վզի տակ պատսպարում էր փոքրիկ եղջյուրիկներով իր ձագին:
- Կրակի՛ր, աչքդ սուր է, -շշնջաց ծերունին:
- Չէ՛, շաղված եմ... չի դիպչի...
Միրուք Ասատուրը լուռ համաձայնության նշան տվեց և լարվեց, ամբողջովին դարձավ ուշադրություն, ինչպես դա լինում է որսի վրա կրակելուց վայրկյաններ առաջ:
Դավադիր թփից մի ճյուղ հազիվ նկատելի շարժվեց, - ծեր որսորդը նշան էր բռնում նոխազի կրծքին, -և այդ շարժումը հերիք էր, որ խումբը կանգ առներ ու կասկածանքով նայեր առաջ:
Մինչ նրանք գլխի կընկնեին, թե ինչ ահավոր վտանգ է թաքնված իրենց դիմաց, ծուխ ու բոց ժայթքեց թփի միջից և խմբի առաջնորդը ցատկեց վեր ու զարնվեց գետին...
Այծերը շեղեցին իրենց ճամփան և սարսափահար փախան դեպի այլ ժայռեր: Բայց իզուր էր նրանց երկյուղը, ծեր որսորդը դուրս էր եկել թաքստոցից և նրանց հետևից կրակելու ոչ մի միտք չուներ:
Արամը մոտեցավ հոգեվարքի մեջ թպրտացող կենդանուն, եղջյուրից հանեց մորթե գլխարկը և մնաց տեղում քարացած:
Իր որդու գլխարկն էր...

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. Այն մասին, թե ով է եղել մեր գերիներին կողոպտող ավազակը

Ստացած հարվածը այնքան անակնկալ էր, որ մեր պատանիները մի քանի րոպե մնացել էին շշմած: Ոչ ոք ծպտուն չէր հանում, բոլորը քարացել էին այրի շեմքին: Ապա երբ ուշքի եկան, արին առաջին բնազդական քայլը, կարծես մեկի հրամանով միասին դուռը ամուր ծածկեցին և հետևից հենեցին գերանը: Ապա շունչները պահած ականջ դրին, իսկ Գագիկը նույնիսկ ձեռքը ամուր հպել էր բերանին, որ խլացնի իր հազը:
Մի փոքր խաղաղվելուց հետո, նրանք շրջապատեցին մոխրով ծածկված, բայց գոլ օջախը և լսողությունները լարած մի փոքր էլ մնացին:
- Դուրս չգա՞նք հետախուզության, - շշուկով հարցրեց Աշոտը: Նա Հասոյին էր նայում, դե այդ ահավոր պահին ուրիշ ո՞ւմ վրա կարող էր հույս դնել:
- Գնանք... ձնի վրա ռադը կերևա... - համաձայնեց Հասոն իր նիզակի ծայրին նայելով:
Զգուշությամբ դուռը բացեցին, այրի ներսից հայացքով հետազոտեցին դրսում տեսանելի աշխարհը՝ դիմացի ժայռի պատը, նրա տակ ցաքուցրիվ թփուտները, և սիրտ առնելով՝ դուրս ելան այրից: Նիզակները բարձր և հարվածելու պատրաստ պահած՝ մի քանի քայլ արին և ետ նայեցին, այրի «ողջ բնակչությունը» զինված հետևում էր իրենց:
Այնուամենայնիվ Աշոտը Շուշիկին ու Սարգսին հայացքով սաստեց և սրանք վերադարձան կրակի մոտ, իսկ Գագիկը, կացինը բարձր պահած, առաջ եկավ:
- Մա՛րդ է տարել մեր մթերքը, - բացականչեց նա՝ մատը մեկնելով շավղի ձյունին:
- Իրոք, բոբիկ ոտքերով մարդ էր քայլել շավիղն ի վեր...

- Ձենքերը պատրա՛ստ, - գոչեց Աշոտը, մի քանի քայլ առաջ գնաց և կռացավ թարմ հետքի վրա: - Ա՛րջ է, - կարճ եզրակացրեց նա և մնաց տեղում լարված, ամբողջովին լսողություն դարձած:
Նրանք բնազդորեն ետ-ետ գնացին, մեջքները հենեցին դռանը, վտանգի դեպքում պատրաստ իսկույն քարայրը մտնելու:
- Հիմի խեղճը հարբել է... Մաճառը փորում եռ է գալիս, գլուխը շշմեցնում, - շշուկով ասում էր Գագիկը՝ ծնոտներն իրար; զարկելով: - Ի՜նչ ցուրտ է անտերը...
Հասոն հասկանում էր, թե ինչո՞ւ է մրսում նա, բայց խնայում էր ընկերոջը, «Է՜հ, մարդ է, էլի՛, հո ամեն մարդ սրտոտ չի՞ լինի...»:
- Գնամ տաքանամ, - ասաց Գագիկն ու այրը մտավ:
- Ի՞նչ կա, - ահով հարցրեց Շուշիկը:
- Ոչի՜նչ, դատարկ բան է...
- Հե՛չ, արջը... Մի վախկոտ արջ եկել է գողեգող մեր ունեցածը կերել ու փախել...
- Բա հիմի ի՞նչ եք անելու:
- Հե՛չ, սպանելու ենք...
Եվ Գագիկը մարտական հայացք ձգելով երկյուղից կուչ եկած աղջկա վրա, զարմացած հարցրեց.
- Բա հո չենք թողնելու, որ մարսի....
Այս Գագիկն այնպես անփույթ է խոսում, կարծես խոսքը ոչ, թե գազանի մասին է, այլ հորթի...
Սարգիսը ուզում էր բան ասել, ձեռքը հուսահատ թափ տվեց:
- Իսկ ինչպե՞ս եք սպանելու արջին, - միամտորեն հարցրեց Շուշիկը:
- Հե՛չ, սովորական ձևով... Կացնով կտանք գլխին՝ կպառկի...
Եվ նա ձեռքով ցույց տվեց, թե ինչպես է պառկեցնելու արջին:
Ներս մտան Աշոտն ու Հասոն, փայտ դրին կրակին և նստեցին օջախի մոտ:
- Քո պատճառով մենք քաղցած մնացինք, - տեղում վրա նստելով՝ գոռաց Սարգիսը: - Ինչի՞ մարդ չթողեցիր մթերքի մոտ...
- Իսկ դու մի նվնվա...
Իրավացի էր Սարգիսը, բայց Աշոտի հպարտությունը թույլ չէր տալիս իր սխալն ընդունել:
- Դո՛ւ, դո՛ւ... - մատն առաջ մեկնած գոռում էր Սարգիսը և սրա փրփրած բերանի անկյունները հողոտ էին...
Աշոտը հազիվ էր զսպում իրեն, նրա բազուկները դողդողում էին: Ընդհարումն անխուսափելի էր, բայց խոհեմություն ունեցավ լռելու: «Պարզ է, ջղերը խանգարվել են...», - մտածեց նա և իրեն մեղավոր զգաց:
Առիթ էր փնտրում հանգիստ թողնելու գրգռված ընկերոջը, ուստի Հասոյին հարցրեց.
- Դուրս չգա՞նք...
- Թող օրը տաքանա, ի՞նչ ես շտապում, - արտաքուստ անփույթ պատասխանեց Գագիկը:
- Չէ, դուրս պիտի գանք մի բան ճարելու: Իսկ արջից կարելի է պաշտպանվել էլի ածխակոթերով: Ամեն մեկդ մինը վերցրեք...
Նա այնպես ամուր ասաց այս խոսքերը, այնպես ինքնավստահ, որ երկյուղը մեղմացավ, նահանջեց ընկերների սրտերում:
- Հետդ եթե կրակ ունեցար, ոչ մի գազան քեզ չի մոտենա, - ներշնչեց Աշոտը: - Գնա՛նք:
Եվ ծայրը վառված մի փայտ վերցնելով դուրս ելավ այրից:
Ընկերները հետևեցին նրան:
- Մենակ եք թողնում, որ արջը գա ինձ ուտի՞... Դավաճանե՛ր, - հետևից լսվեց Սարգսի գոռոցը: Նա դուրս վազեց և ցրված նայեց շուրջը:
- Մ՛մ՛ս, - ձեռքը բերանին լռելու նշան արավ Աշոտը: Դա իսկույն ազդեց, կարող էր արջը լսել...
Առհասարակ այդ օրը Սարգիսը շատ տարօրինակ էր պահում իրեն, շարունակ գրգռված էր, հայացքն անհանգիստ թափառում էր: Երկյուղի՞ց էր, թե՞ ուրիշ պատճառ կար...
Աշոտի կարգադրությամբ նա և Շուշիկը պիտի մնային անձավում, խարույկը վառ պահեին, իսկ ապահովության համար դրան հետև մեծ-մեծ փայտեր շարեին:
Երբ երեքով զինված դուրս եկան այրից, Աշոտը ընկերներին ասաց.
- Իսկապես, այնքան մաճառը, որ նա է խմել, անպայման հարբած կլինի:
Եվ մի ձեռքում կացինը, մյուսում՝ նիզակը առաջ գնաց արջի հետքերով:
Գազանը անձավից դուրս գալուն պես «միջանցքի» շավիղը թողած ծռվել էր դեպի աջ և գնացել դեպի վեր: Մի տեղ թփերի մեջ այնպես էր թավալ տվել, ինչպես դա անում է հարբած մարդը փողոցում: Մի քանի քայլ այն կողմ նորից պառկել էր ձյան վրա:
Աշոտը ընկերներին լուռ ցույց էր տալիս այդ նշանները և հասկացնում, որ «բրդոտ քեռու» խելքը տեղը չի...

Սրտոտ պատանու մեջ մի խելահեղ միտք էր ծնվել, հարբած արջին գտնել մրափելիս և՝ կացնով գանգին... Ա՛յ հաջողություն կլիներ հա՛... Այն ժամանակ ոչ մի ձյուն, ոչ մի ձմեռ սարսափելի չէր լինի, - ապրիր քեզ համար մինչև գարուն...
Այդ միտքը այնպես հրապուրեց նրան և այնպես իրական էր թվում, որ տղայի մեջ երկյուղին հետզհետե փոխարինեց հանդգնությունը:
Եվ երբ մի խշտոց էր լսում, թփերում անակնկալ մի բան էր խլրտում, կամ ժայռի բեկորի հետևից ինչ-որ ստվեր էր երևում՝ Աշոտը իսկույն լարվում ու տագնապ էր ապրում, տագնապ ոչ այնքան ահից, որքան թշնամուն ոչնչացնելու այն տենչից, որ ուժգնությամբ ծնվել էր նրա երևակայության մեջ:
Այսպես, արջի հետքերով նրանք բարձրացան վերին լանջը և երբ տեսան, որ գազանը թեքվել է դեպի արևելքից ձորը փակող ժայռաշարքը, կանգ առան:
- Ձորից դուրս է գնացել, - վճռեց Աշոտը: - Մեր ձայներից էստեղ ա՞րջ կմնա, - ավելացրեց նա՝ երևի իրեն և ընկերներին հանգստացնելու համար: Ասենք, նա դրանում համոզվել էր, ուստի և շուտով հրաժարվեց արջին հետապնդելու և քնած վիճակում սպանելու մտադրությունից:
Խումբը իջավ խաղողի այգին: Այդտեղ նրանք կրակ արին, որը ոչ այնքան բոց էր արձակում, որքան թանձր ծուխ (հենց ծուխ էլ հարկավոր էր նրանց ինքնապաշտպանության համար) և սկսեցին խոր ձյան տակից խաղող փնտրել: Դա տաժանելի գործ էր, որ չնչին արդյունք տվեց: Այնուամենայնիվ, գտած մի քանի ողկույզներից նրանք Գագիկի միջոցով բաժին ուղարկեցին այրում մնացած ընկերներին:
Գնում էր Գագիկը ահը սրտում, ծխացող փայտը պտտելով, իսկ հետևից լսում էր ընկերների հարայ-հրոցը, որով սրտապնդում էին նրան և «քշում» աներևույթ գազաններին:
Խոր ձյան մեջ երկար պրպտելուց ու հոգնելուց հետո, Աշոտն ու Հասոն ևս վերադարձան անձավ:
Թեև անմիջական վտանգի ոչ մի նշան չկար, բայց և այնպես տղաները որոշեցին ինքնապաշտպանության մի քանի միջոցների դիմել: Նախ «միջանցքի» երկու ծայրերին քարերով բարձր բարիկադներ կառուցեցին, բայց շուտով գլխի ընկան, որ դրանք արջին խոչընդոտ հանդիսանալ չեն կարող: Այն ժամանակ որոշեցին յուրաքանչյուր բարիկադի գլխին մի պահակ կանգնեցնել: Այդ արդեն դժվար չէր, միայն հարկավոր էր, որ տղաներից ովքեր ֆիզիկապես ավելի ամուր են՝ ժամանակավորապես զրկվեն իրենց շապիկներից: Դրանց մեջ նրանք խոտ լցրին, թևերի տեղ փայտեր մտցրին, Հասոյի քոլոզն ու Սարգսի գլխարկը դրին այդ խրտվիլակների գլխին և ամեն մեկին մի քարակույտի գագաթի բազմեցրին:
Հեռվից նայողին այնպես կթվար, որ ճերմակ հագուստներով երկու տղա, մեկի գլխին քրդական քոլոզ, մյուսի՝ մահուդե գլխարկ, զգոն կերպով հսկում են շրջակայքին, և վա՛յ նրան, ով կմոտենա այն անձավին, ուր բնակվում են Հովազաձորի գերիները...
Ծանր երեկոն իջավ ձորի վրա: Տխուր էին մեր պատանիները, իսկ նրանց անդամները տնքում էին հոգնածությունից, որքա՜ն քար էին կրել այդ երեկո... Եվ այդ ծանր աշխատանքին Սարգիսը չմասնակցեց: Չկարողացավ: Նա մեկ օջախի մոտ մեկնված նվվում էր, մեկ վեր թռչում և խելագարի հայացքով նայում չորս կողմը: Ի՞նչ էր կատարվում նրա հետ, ոչ ոք չհասկացավ:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ. Թե ինչու ճգնավորը անպատճառ մի այլ կածան ևս պիտի գցեր իր «սրբազան ոտքերով»

Խախուտ դռան ճեղքերից լույսը ներս ընկավ, բացվեց մեր խմբի գերության երեսունութերորդ առավոտը:
Անձավի բնակիչները վրա նստեցին և տխուր նայում էին մարած կրակին:
Ի՜նչ լավ էր երեկ, այրի մի անկյունում Գագիկի «ճուտերի» կույտն էր, եռացող մաճառը դուրեկան գազեր էր արձակում կավե կճուճից, խաղողի քաղցր հյութը սպասում էր, որ վայելեն իրեն և «օխայ» կանչելով գովաբանեն: Չկային և գույնզգույն խաղողի ողկույզները. մի անխիղճ արարած անողոքաբար նրանց զրկել էր իրենց ձմեռվա պարենից: Ո՞ւր գնան, ի՞նչ փնտրեն, սպառված էին թվում Հովազաձորի ունեցած բոլոր պաշարները:
Եվ ահա պատանիները նստել էին գլխահակ ու նույնիսկ կրակը բորբոքելու սիրտ չկար, ինչպես և սիրտ չկար կիսատ մնացած գործերը շարունակելու, վառարանի համար բերած ցեխը մնացել էր մի անկյունում, մյուս անկյունում ճիպոտներն էին, որոնցից նրանք կողով պիտի գործեին: Նորից սովը չոքել էր անձավի դռանը, նորից սնունդ հայթայթելու մասին պիտի մտածեին: Բայց ի՞նչ, որտեղի՞ց...
- Գնանք մեր փախած «վառեկներին» փնտրենք, - առաջարկեց Գագիկը:
- Հա՛, - համաձայնեց Աշոտը, - դուրս թռածները մի տեղ մտած կլինեն, ո՞ւր պիտի գնան որ...
- Իսկ ա՞րջը... Իսկ հովա՞զը, - հարցրեց Շուշիկը:

- Արջը ձորից դուրս է գնացել, իսկ Հովազը վաղուց չի երևում... Երևի նա էլ գնացած լինի, - արտաքին հանգստությամբ պատասխանեց Աշոտը և վեր կենալով, քանդեց դռան հետևի «բարիկադը», որ նրանք կառուցել էին քնելուց առաջ: Նա զգուշությամբ գլուխը դուրս հանեց անձավից. պարզկա էր ու ցուրտ: Քարե «աշտարակների» վրա դեռ կանգնած էին զգոն պահակները: Աշոտը դառնությամբ ժպտաց: Ապա Հասոյի հետ դուրս եկան այրից, որսորդի զգուշությամբ անձայն շրջեցին անձավի շրջակայքը և ոչ մի հետքի ու կասկածելի բանի չհանդիպելով, ներս եկան, սիրտ վին ընկերներին:
- Կրակի ծխից հեռացած կլինեն, էստեղ գազան չի մնա, գնանք ուտելու բան փնտրենք, - ընկերներին համոզում էր Աշոտը:
- Ինձ հանգիստ թողե՛ք, - հանկարծ բորբոքվեց Սարգիսը:- Հերիք է ինչքան սուտ հույսեր տվիք:
Նա վրա նստեց, խելագարի աչքեր ուներ, որ վառվում էին այրի մթության մեջ, իսկ խոշոր գլուխը տմբտմբում էր բարակ վզի վրա...
- Քեզ ի՞նչ պատահեց, - հարցրեց Աշոտը զարմացած:
- Ոչինչ չպատահեց... Թո՛ղ հանգիստ մեռնենք...
Եվ տղան մեկնվեց իր «անկողնին» այնպիսի վճռականությամբ, որ այլևս նրան տեղից հանելու փորձն անգամ ավելորդ էր:
Գագիկը մատով կտկտացնում էր իր ճակատին ու լուռ հարցնում. «Սրա վերին հարկը կարգի՞ն է, թե՞...»: Աշոտը տարակուսանքով թոթվեց ուսերը. «Բան չեմ հասկանում»: Եվ նա սկսեց լրջորեն մտածել Սարգսի կերպարանափոխության մասին, հետաքրքիր է, դարձյալ ներսում գլուխ է բարձրացրել իր վատ բնավորությո՞ւնը, թե՞ սա էլ մի ուրի՛շ բան է...
Նա վեր կացավ, ձգվեց, լայն շարժումներ արավ:
- Գնա՛նք...
Բոլորը ոտքի ելան, Սարգիսը տեղից չշարժվեց:
- Ինձ հանգիստ թողեք, - գոռաց նա, թեև նրան ոչ ոք չէր անհանգստացնում:
Անձավից դուրս գալուց առաջ կամարների տակ զրնգաց Աշոտի ամուր, համոզված ձայնը.
- Չվախենա՛ք, չե՛նք կորչի:
- Առհասարակ ոչինչ չի կորչում աշխարհում, - տխուր փիլիսոփայեց Գագիկը: - Շա՛տ-շա՛տ պիտի կեր դառնանք գազաններին: Չենք կորչի, իհարկե... ուղղակի կկերպարանափոխվենք, ուրիշ բան կդառնանք...
- Որ տեղներս ընկած նվվանք, իհարկե, կեր կդառնանք ուրիշներին: Ռի՛սկ ու գո՛րծ, և մենք կապրենք: Չվախենաք, - ներշնչեց Աշոտը:
Սարգիսը ջղայնությունից դեմքը ծամածռում էր և տենդագին պոկոտում տակի ոստերը: Ապա պառկեց երեսի վրա, եղունգներով փորեց այրի հատակն ու սկսեց լիզել:
- Ա՛ղ, մի քիչ ա՛ղ - աղիողորմ գոչեց նա և թափով շուռ եկավ մեջքի վրա:
Ա՛ղ... Աղը մուրազ է: Մի բուռ աղի համար նրանք պատրաստ էին իրենց կյանքի կեսը տալու: «Աղ» բառը այնպիսի ռեֆլեքսներ առաջացրեց այրի բնակիչների մեջ, որ նրանց բերանների ջուրը վազեց և աղիքները սկսեցին գալարվել: Ա՛ղ.... Ինչպես նրանք գյուղում չէին հասկանում, որ ամենաթանկ բանն աշխարհում աղն է, որ աղը կյանք է...
- Համբերի՛ր, Սարգիս, աղ էլ կգտնենք, - հուսադրում էր Աշոտը, բայց ինքն էլ չէր հավատում իր խոսքին:
- Համբերի՛ր... հերիք է քարոզներ կարդաս: Դո՛ւ ես մեղավոր, դո՛ւ... - Սարգիսը վրա նստեց և բորբոքված հայացքը հառեց նրա դեմքին: - Սպանեցի՞ր մեզ, սպանեցի՞ր...
Եվ ջղաձգումների մեջ սկսեց գալարվել իր տակ փռված ճյուղերի վրա:
- Փառամո՛լ... ուզում էիր հերոս դառնա՞լ... Հասա՞ր, հասա՞ր, - գոռում էր նա իրեն կորցրած:
Աշոտը գլուխը կախեց, իրոք, ինքն է պատճառը ընկերների կործանման: Բայց ինքն էլ կգտնի, պարտավոր է գտնել փրկության միջոցը:
- Ա՛ղ... ա՛ղ... - շարունակում էր աղաղակել Սարգիսը խելագարի նման և խելագարի նման էլ ճանկռտում էր գետինը ու ծամում-ծծում կրաքարով հարուստ ավազը:
Սարգսի տրամադրությունը փոխանցվել էր ընկերներին, նրանք դարձել էին մտահոգ, դյուրագրգիռ, իսկ Շուշիկի գլուխը ցավում էր, սիրտը խառնում, - դարձյալ աղի պակասությունից չէ՞ր արդյոք...
Թե ի՞նչ է զգում մարդը աղի պակասությունից, Աշոտը չգիտեր, բայց մի բան գիտեր, որ երբ որսի էին գնում, հայրը տափաշշի ջրի մեջ աղ էր գցում: «Աղը չի թողնում, որ մարդ թուլանա», - ասում էր նա: Անտանելի թուլությունը, որ համակել էր իրեն և ընկերներին, անշուշտ աղի պակասությունից էր. օրգանիզմում վերջացել էր աղի պաշարը... «Դրանից հո մարդ կարող է մեռնել», - անսպասելիորեն անցավ նրա մտքով, բայց ուրիշ բան ասաց ընկերներին.
- Այնպես եք խոսում, կարծես դպրոցում բան չեք սովորել: Հասոն չգիտի, բայց դուք հո գիտեք, որ մեր կերած բոլոր բաների մեջ էլ աղ կա: Նույնիսկ մասուրի ու արմատների մեջ...

Նա սիրտ էր տալիս ընկերներին, բայց հասկանում էր, որ առաջ է եկել մի չնախատեսված և մեծ վտանգ, մի ծանր աղետ, և նրա դեմ արդեն չես կռվի ո՛չ քաջությամբ, ո՛չ համբերությամբ: Այո՛, շատ բանի էին դիմացել, բայց աղի պակասությանը նրանց թուլացած մարմինները չէին դիմանալու: Դա պարզ էր Սարգսի օրինակով:
Եվ այդ կողոպտված ու ծանր վիճակում խմբի առաջ իր ամբողջ սրությամբ կանգնեց մի նոր, ծանր պրոբլեմ ևս, աղի պրոբլեմը: Ի՞նչ անեն, դա էլ հո հատապտուղ չի, որ թփերում փնտրեն: Ո՞վ կարող էր նրանցից ասել, թե ո՞ւր է աղը, երբ ամբողջ Հայաստանում աղի մի հատիկ հանք չկա:
Արջի, հովազի, սննդի բոլոր հարցերը ժամանակավորապես ետ էին քաշվել և այժմ աղի հարցի լուծումով էր զբաղված մեր պատանիների միտքը:
- Տղե՛րք, - գոչեց Գագիկը, - լուսավոր միտք է ծագել կարկաճիս[32] մեջ, - և մատը դրեց իր ճակատին: - Իսկի մտածե՞լ եք, թե որտեղից է աղ վերցրել ճգնավոր քեռին...
- Որտեղի՞ց...
- Աղահանքից:
Սարգիսը վեր թռավ տեղից:
- Ո՞ւր է աղահանքը, - գոռաց նա անբնական ձայնով և ամբողջ մարմնով սկսեց դողդողալ:
- Ո՞ւր է... ժայռերի տակ: Նստիր ասեմ: Մեր էս կրաքարի ժայռերը որտե՞ղ կարող էին առաջանալ: Ծովի տակ: Աղը որտե՞ղ է առաջանում: Էլի ծովի տակ: Հո՞ էքսկուրսիայի ժամանակ տեսել եք Նախիջևանի աղահանքերը. բոլորը կրաքարի մոտ են. դե որ ծովը ցամաքել է՝ կրաքարի հետ աղ էլ է թողել: Մենք այդ աղը պետք է գտնենք և լիզենք ոչխարների նման, - իր լուրջ խոսքին նորից մի հիմար կատակ խառնեց Գագիկը:
- Ասենք թե այս ձորում աղահանք կա, իսկ ինչպե՞ս գտնենք, - հարցրեց Աշոտը:
- Իսկ ճգնավորը ո՞նց է գտել...
- Նա կարող էր գյուղերից աղ բերել:
- Իմ պապն ասում է՝ ճգնավորները գյուղ չեն մտնում, որ կնկա երես չտեսնեն...
- Բա ո՞ւր է նրա աղը, ինչո՞ւ չի թողել:
- Թողել է, բայց մնացել է քո վառեկների ծերտի տակ...
Այսպես կարծիքներ էին հայտնում ու վիճում մեր պատանիները, երբ Գագիկը նորից մատը դրեց իր ճակատին.
- Կարկաճիս մեջ նորից մի լուսավոր միտք ծնվեց: Իսկ ի՞նչ է խմել ճգնավորը:
- Ձյուն է հալեցրել:
- Սխալվում եք. եթե նա էլ ամբողջ ձմեռը ձնաջուր խմեր՝ աղի պակասությունից մեր օրը կընկներ, - մի ամբողջ ամիս մենք թորած ջուր ենք խմում, այնպիսի ջուր, որի մեջ աղի նշույլ չկա... Հասկացա՞ք... Դե հիմա գնանք ճգնավորի ջուրը գտնենք: Այստեղի ջրերի մեջ աղեր շատ են լինում, մանավանդ՝ լուծված կրաքար: Դա կօգնի, գնա՛նք...
Եթե այստեղ մարդ է ապրել, նշանակում է իրոք Հովազաձորի որևէ անկյունում ջուր կա, թաքնված ջուր, այլապես ո՛չ ճգնավոր կմնար այստեղ և ոչ էլ, գուցե, քարայծ: Հո այդ մարդը չէր կարող հույսը դնել քարայրից պատահաբար հորդող ջրի վրա:
- Մի ավելի լուսավոր միտք, - մատը նորից ճակատին դրեց Գագիկը: - Կարելի է ասել, որ ջուրն արդեն գտել ենք: Ասացեք՝ ո՞նց: Շատ հասարակ ձևով: Եթե Հովազաձորում աղբյուր կա, ճգնավոր քեռին իրեն սուրբ ոտքերով կածան գցած կլինի մինչև աղբյուրը...
- Բռավո՛, իսկապես որ լուսավոր միտք, - գոչեց Աշոտը, ձեռքով Գագիկի մեջքին թփթփացնելով: - Գլուխ հո չի ուսերիդ վրայինը, խելքի պուտուկ է... Ասածդ իսկական գյուտ էր: Իհարկե, եթե այդ մարդը մի տասը տարի էլ ապրած լինի այստեղ ու ամեն օր ջրի գնացած, ուրեմն առնվազն երեք հազար անգամ գնացել, մի այդքան անգամ էլ ետ է եկել: Պարզ չի՞, որ այրի շեմքից մինչև ջուրը կածան գցած կլինի...
Աղ գտնելու տենչը այնպիսի ուժով բորբոքվեց նրա մեջ, որ մյուս բոլոր ցանկություններն ու զգացումները՝ քաղցը, ահը, ամեն ինչը նախանշեցին այդ հզոր, ամբողջ էությունը լափող պահանջի հանդեպ:
Եթե աղ չգտնեն, վաղը, մյուս օրը նույնպիսի խելագարություն է սպասում իրենց, - Սարգսի պղտորված հայացքը բռնելով մտածեց Աշոտը: Նա վճռականորեն տեղից վեր կացավ և բոլորն էլ վերցրին իրենց զենքերը՝ մի-մի տեգ ու ծխացող փայտ և զգուշությամբ բացեցին այրի դուռը:
- Ես էլ եմ գալիս... ես այստեղ չեմ մնա, - Սարգսի կողմն ահով նայելով ասաց Շուշիկը:
- Մնա, մենք հիմա կվերադառնանք:
Դուրս ելան անձավից, դես-դեն նայեցին:

---

[32] Կարկաճ – դդում: Ներկա դեպքում՝ գլուխ:

Երբ տղաները անցան հարավային բարիկադը (այդպես էր անվանվում «միջանցքը» ներքևից փակող քարերի կույտը), իջան քարե աստիճաններից և նրանց դեմ բացվեց Հովազաձորը: Աշոտը կանգ առավ, հայացքով զննեց դեպի «այգին» գնացող արահետը: Այդ արահետից հազիվ նկատելի մի շավիղ ծռվում էր դեպի աջ և ժայռաշարքի տակով ցած իջնում նրան զուգահեռ:
- Դեպի աղբյուր տանող քո ասած կածանը սա պիտի լինի, Գագի՛կ, - ասաց նա և շտապ գնաց այդ շավիղով:
Ընկերները աղմկելով և չորս կողմ ծուխ տարածելով հետևեցին նրան:
Շավիղը թփերի և քարերի արանքներով իջնում էր դեպի ցած և ծռվելով աջ՝ ձգվում էր դեպի Հովազաձորը արևմտյան կողմից փակող ժայռաշարքի ներքին ծայրը: Ժայռը ծալել էր իր շեկ «ծունկը», որը և իր հետևում մեր տղաների տեսողությունից շարունակ գաղտնի էր պահել այն թաքուն անկյունը, ուր ինչ-որ ժամանակ ամեն օր այցելել էր ճգնավորը: Եվ երբ տղաները վախվխելով անցան այդ «ծունկը» (որի հետև, ձախ կողմում, անդունդն էր, այն անդունդը, ուր թափվում է Հովազաձորից իջնող հեղեղը), ժայռի հետև մի անհայտ փոս բացվեց, ժայռերի մեջ սեղմված մի շատ փոքրիկ ձորակ, որի հատակում առկայծեց-ցոլցլաց ջուրը:
- Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, վա՛յ ես քո հոգուն մատաղ, ո՞ւր ես տապ արել, - գոչեց Գագիկն ու առաջ վազեց: Բոլորին միանգամից համակեց ուրախությունը, բոլորն էլ թափ առած առաջ վազեցին:
Այսպիսով Գագիկի ենթադրությունը ճիշտ դուրս եկավ, շավիղը մեր տղաներին տարավ-կանգնեցրեց աղբյուրի գլխին: Բայց շատ տարօրինակ էր այդ աղբյուրը, բխում էր նա մի անձավի մուտքից և հենց այնտեղ էլ կուլ գնում ժայռի ճեղքին: Բլդբլդում էր նա իր իսկ աղերից գոյացած մի ծուռումուռ ահագին «վաննայի» մեջ, որի կողերից սառույցի լուլաների նման կախկիսված էին քարացած դեղնաճերմակ աղային նստվածքները:
- Աղը՛, - դեռ համը չառած գոչեց Աշոտը:
Զարմանալի բան, առհասարակ ոչ մի հոտ չունի աղը, բայց տղաները մի քանի մետր տարածությունից զգում էին նրա խելքամաղ անող բույրը, ինչպես այդ բանն զգում են աղի կարոտ խոտաճարակ կենդանիները...
Երեք ընկերներ երեք կողմից վրա ընկան և սկսեցին ագահությամբ լիզել «վաննայի» խորդուբորդ եզրերը: Նրանք բռերով ջուր էին վերցնում փոսից, խմում էին շոռ-շոռ հեղուկն ագահությամբ, և որքան խմում էին, այնքան բորբոքվում էր նրանց մեջ աղի անհագուրդ պահանջը:
- Հերի՛ք է, - իրեն զսպելով հրահանգեց Աշոտը:
- Որ ճակատիս ատրճանակ էլ դեմ անես, վաննայից պոկ եկողը չեմ, - անընդհատ լիզելով՝ ներքևից վերև գռմռաց Գագիկը:
Հասոն դժկամությամբ վեր կացավ և շարունակում էր լիզել աղոտ շրթունքները:
- Գագի՛կ, մոռանում ես առաջին օրվա մեր պայմանը, - գոչեց Աշոտը: Նա երկյուղ ուներ, որ չափից դուրս աղը կարող է վնասել վաղուց ալանի մնացած իր ընկերներին: - Մոռանում ես կարգապահությունը... հերի՛ք է, կտրաքվե՛ս...
«Կարգապահություն» բառը ուշքի բերեց աղի ներկայությունից խելագարության եզրին հասած պատանուն: Նա վեր կացավ, հևում էր:
- Հեռանա՛լ և շո՛ւռ գալ, - լսվեց հրամանը:
Քարերին նստոտած, նրանք հեռուներն էին նայում, բայց իրենց ծոծրակին զգում էին կախարդական աղբրի ներկայությունը...
Լուռ բավականությամբ զգում էին նրանք, թե ինչպես կենարար նյութը արյան հոսքով տարածվում է ողջ մարմնով մեկ և զգում էին դա իրենց օրգանիզմի յուրաքանչյուր նյարդով, յուրաքանչյուր բջիջով:
Ի՜նչ զորավոր բան է եղել աղը, այն ամենաէժան նյութը, որին մարդ իր առօրյայում հաճախ ուշադրության էլ չի արժանացնում:
Երկար մնացին նրանք այդպես արևի տակ նստոտած և զգացին, որ հետզհետե հագենում են աղից, ինչպես խիստ ծարավ մարդը, որին խմելու պահին թվում է, թե երբեք չի հագենալու, բայց անցնում է մեկ-երկու ժամ և այլևս ձրի պահանջ չի զգում:
Պատանիներն զգում էին, որ աստիճանաբար վերականգնվում են իրենց կորած ուժերը:
- Հիմա պետք է Շուշիկին ու Սարգսին աղ հասցնել, - ասաց Աշոտը:
- Ե՛ս կտանեմ, - տեղից վեր կացավ Հասոն:
Գագիկը ինքն էր մտադիր տանելու, բայց արջի մասին հիշելով՝ նորից ներքին պայքարի մեջ էր: Ասենք, բեկումն արդեն սկսվել էր նրա մեջ և պիտի խորանար բնական կարգով: Թուլամորթության համար նախատեց իրեն և գոտեպնդված վեր կացավ, քարացած նստվածքից մի կտոր պոկեց և վճռականորեն քայլեց դեպի այրը:
Աշոտն ու Հասոն նշանակալից հայացքներ փոխանակեցին:

- Դա շատ է, կեսը դեն գցիր, - հետևից ձայնեց Աշոտը:
Գագիկը լուռ համաձայնեց. նա լսել էր, որ շատ օրեր քաղցած մնացած մարդուն քիչ-քիչ են կերակրում, նույնը և աղը: Արջը հո չի՞ գա... Հարբածի խելքը գլխին չի լինում, ով գիտի որտեղ է լինում, մեկ էլ տեսար... Տղան կանգ առավ կես ճամփին, շուռ եկավ նայեց, ընկերները մնացին ժայռի հետևում: Սարսափելի է: Բայց լավ է, որ չեն երևում, գլխի կընկնեն, որ վախենում է: Ո՜վ է վախենում, սրանց նայեցեք, ինքը հո Պարույրի տղա Սարգիսը չի՜... Աշոտն ու Հասոն էլ իր նման տղաներ չե՞ն, ի՜նչ է... Չէ՜, այդ հիմար վախը ինչ-որ սովորություն է, երեխա հասակից եկած սովորություն: Մեծացել է ինքը, երեխայական շատ սովորություններ մնացել են հետևում՝ մատը ծծելը, քիթը քչփորելը, քրոջ մազերից քաշքշելը: Սա՛ էլ կարելի է հետևում թողնել, տղամարդ է դառնում, չէ՞, վաղը մյուս օրը. կմտնի կոմերիտմիության շարքերը, գուցեև կոմիտեի քարտուղար, ընտրվի: Ասենք չէ, Աշոտին քարտուղար կընտրեն, նա հենց կարծես քարտուղարացու է ծնվել...
Այս մտքից Գագիկը ժպտաց:
Ե՛տ մի նայիր, Գագի՛կ, առա՛ջ, առա՛ջ, վտանգի ժամանակ պիոները ետ չի նայում...
Այսպես ինքն իրեն սիրտ տալով, իրեն խոսք հասկացնելով՝ գնում էր Գագիկը կուզեկուզ, թփերի հետև քողարկվելով: Հանկարծ խշրտոց լսվեց, որից տղայի սիրտը թպրտաց: «Դե լա՛վ, հանգստացի՛ր, մոշահավ էր», - ձեռքը սրտին դրած համոզում էր նա:
Մի քանի քայլ ևս առաջ գնաց: Հազիվ էր մի փոքր հանգստացել, երթ նորից թպրտոց լսվեց թփերում, որից տղայի սիրտը նորից սկսեց ուժգին բաբախել:
- Քեզ ասում եմ մոշահա՛վ էր, - ձեռքը կրծքին դրած համոզում էր Գագիկը: Ապա տեսնելով, որ իր խոսքը տեղ չի հասնում, վրդովված սկսեց նախատել.
- Մոշահավ չի, զենքը ձեռքին ավազա՛կ է, հովա՛զն է... պրծա՞նք... դե տրաքվի՛ր...
Ու իր թույլ սրտի դեմ զայրացած, առաջ գնաց՝ կամքի ուժով... Այսպես, իր հասունացող ու կազմավորվող գիտակցությունը շարունակ պայքարում էր «սրտի թուլությունների» դեմ, մինչև որ վերջապես հասավ աստիճանների տակ մլմլացող խարույկին: Հասավ, ազատ շունչ քաշեց, շուռ եկավ ու բռունցքով սպառնաց չեղած գազանին.
- Դե հիմի տղա ես՝ արի կոխ բռնենք...
- Այդ ո՞ւմ հետ ես խոսում, Գագի՛կ, - շեմքից լսվեց Շուշիկի բարակ ձայնը:
- Արջերի՛...
Նա տղամարդու հաստատուն քայլերով վեր բարձրացավ, և թնդում էր հոգին այն գիտակցությամբ, որ ինքը հասունացել է և կարողանում է մերկ ձեռքերով, առանց զենքի քայլել այնպիսի վայրերում, ուր արջ է երևացել: Մայրը որ լսի՝ չի հավատա, գյուղի ընկերներն էլ չեն հավատա: Ա՜խ, մի այստեղ լինեի՜ն, իրենց աչքով տեսնեին...
- Սարգի՛ս, պինդ կաց, աղ եմ բերել, - այրի շեմքից գոչեց նա:
- Ա՞ղ:
- Ա՞ղ... - լսվեց երկու ճիչ և Գագիկը դեռ բերանը չէր բացել, որ պատմի իր վտանգավոր ճամփորդության մասին, երբ նրա ձեռքից հափշտակեցին քարի կտորը: Շուշիկն օջախի մոտ նստած ագահությամբ լիզում էր իր բաժին քարը, գցում ատամների տակ, փշրում, իսկ Սարգիսը խելագարի նման ոստոստում էր ու անդադար կանչում.
- Ա՛ղ... ա՛ղ... ա՛ղ...

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչ են պատմում մեծ և փոքր կճղակները

Գագիկի գնալուց հետո Աշոտն ու Հասոն բավական ժամանակ նստեցին աղբյուրի մոտ և զգում էին, թե ինչպես հետզհետե հանգստանում են իրենց գրգռված նյարդերը: Այժմ, երբ արդեն կշտացել էին շոռ ջրից և վերացել էր այն ահավոր վտանգը, որ մինչև վերջին րոպեն կախված էր խմբի գլխին՝ անաղ մնալուց ոչնչանալու վտանգը, - նորից իր ամբողջ հասակով ծառացավ սննդի հարցը: Նա վերադարձավ իր մշտական տեղը գրավելու մեր գերիների հոգսերի մեջ... Արջին սպանելու միտքը պատանեկան ցնորք դուրս եկավ: Խաղողը նորից թաղվել է խոր ձյան տակ: Ինչո՞վ են ապրելու ամբողջ ձմեռը: Եվ նորից հուսահատությունը կհամակեր մեր պատանիներին, եթե մի անակնկալ դեպք չգար յուղ ավելացնելու նրանց հույսի մարվող ճրագին:
Դա կատարվեց շատ պատահական և անսպասելի կերպով: Ուղղակի Հասոն աղբյուրի մոտ նկատեց, որ վերև, ժայռի տակի թփերի մեջ, ինչ-որ պտուղներ են կարմրին տալիս: Աշոտին ոչինչ չասաց: «Թող հանգստանա էս տաք տեղը, ես գնամ բերեմ», - վճռեց նա և գնաց դեպի թփերը: Գերմաստի կարմիր հատապտուղը, որ այնքան սիրում են արջերը, չնայած իր սիրուն տեսքին՝ անախորժ համ ուներ: Բայց քաղցած մարդուն սև հացը գաթա է թվում.

Կերավ Հասոն այդ պտուղներից, մնացածը քաղեց-լցրեց փեշը և այդտեղ այնպիսի մի գյուտ արավ, որ հուզմունքից շնչակտուր վազեց ընկերոջ մոտ, փեշի պտուղը դատարկեց նրա առաջ ու խնդագին ժպտաց:
Աշոտը ուտում էր ու հարցական նայում պատանի հովվի շառագունած դեմքին:
- Ի՞նչ է պատահել:
Պատասխանի փոխարեն Հասոն ծոցից մի փունջ թուխ մազ հանեց և մեկնեց Աշոտին:
- Ի՞նչ բան է:
- Բո՛ւրդ:
- Հետո՞:
- Հետո էն, որ սև բուրդ եմ գտել: Այո, էս էլ քեզ սպիտակ բուրդ...
Աշոտը տարակուսանքով թոթվում էր ուսերը: Ապա գլխի ընկավ:
- Որտեղի՞ց գտար...
- Վերևի՛ց... թփերի միջից...
- Հո կոլխոզի հոտը այս կողմերը չի՞ եկել:
- Չէ՛, ի՞նչ ես խոսում, էստեղ ոչխա՞ր կգա...
Հանելուկ էր, իսկական հանելուկ, ընտանի ոչխարը Հովազաձորում ի՞նչ գործ ուներ: Բայց կարևորը դա չէր, կարևորն այն էր, որ այստեղ, մոտերքում, ընտանի ոչխարներ կային, իսկական ոչխարներ, - վայրի ոչխարը հո բուրդ չի՞ ունենում: Առնվազն երկու ոչխար՝ մեկը ճերմակ, մյուսը թուխ: Այ հեշտ որս, գտի՛ր, մոտդ կանչիր ու...
Այո՛, եթե գտնեն այդ ոչխարներին, սննդի հարցը միանգամից կլուծվի և կվերանա կործանվելու վտանգը:
Եվ երբ եկան այդ եզրակացության, պահանջ զգացին առանց մի րոպե իսկ հետաձգելու փնտրել այդ կենդանիներին: Բայց ո՞ւր փնտրես: Աշոտն իրեն հատուկ անհամբերությամբ ուղղակի գործի անցավ:
- Որտեղի՞ց գտար... էն թփերի՞ց... Գնա՛նք... - Ու վեր կացավ տեղից: Հասոն առարկեց.
- Չէ՛, կաց, տես ի՞նչ եմ մտածել: Եթե էս հանդում ոչխար կա, պետք է դա էս աղբրից ջուր խմի: Արի դրանց իզը գտնենք:
Աղբյուրի շրջապատում լերկ քարեր էին, նրանց վրա հետք չէր երևա: Տղաները հեռացան աղբյուրից և սկսեցին հայացքով հետազոտել շրջակայքը: Ապառաժե մի բազուկ վերևից իջնում էր աղբյուրի վրա: Նրա հետև վերևից ցած իջնող մի ձորակ կար, ուր ձյունը դեռ նստած էր: Այդ ձորակն էլ, դեպի վեր գնալով՝ հետզհետե նեղանում էր և վերածվում կիրճի:
Ահա այդ թաքուն կիրճի հատակում տղաները ձյան մեջ վերից վար իջնող մի կածան գտան, որ գցել էին կենդանիներն իրենց կճղակներով...
Հասոն խոնարհվել էր շավիղի վրա և, ձեռքը բերանին դրած, ցույց էր տալիս ընկերոջը:
- Երեք հատ են... Մեկը մեծ ոչխար է, մեկը՝ գառ, մեկը՝ ջահել ղոչ, - շշուկով հաղորդեց նա:
- Հաստա՞տ...
Հասոն հանդիմանանքով նայեց ընկերոջը, նրա հայացքն ասում էր. «Չիմանամ-չիմանամ, բա ոչխարի հետքն է՞լ չիմանամ...»:
Դե փորձված հովվի համար ձյան վրա տպված կճղակներից դժվար չի որոշել կենդանու սեռը, մոտավոր տարիքը և նույնիսկ մարմնի չափը:
Տղաներն այնպես էին ուրախացել, որ չգիտեին վազե՞ն տուն և այդ բերկրալի լուրը հաղորդեն ընկերներին, թե՞ ուղղակի գնան հետքերով:
- Իսկ եթե արջը արդեն կերել է ոչխարների՞դ, - հարցրեց Աշոտը:
- Ե՞րբ կերավ: Արջը նոր է եկել էս ձորը, որ շուտ եկած լիներ՝ նշաններից կերևար: Երեկ կուշտ էր... Սպասի՛ր, ոչխարների իզը նոր է, տե՞ս, առավոտը իջել են ջուր խմելու, ետ գնացել: Երևի սրանք էլ են վիրու անասունի պես պինդ տեղերում ապրում:
- Իհարկե, եթե պնդոցում չապրեն, կենդանի չեն մնա: Գնա՛նք, Հասո՛, ես վառվում եմ հետաքրքրությունից: Ի՞նչ ոչխարներ են դրանք, պետք է պարզել...
Եվ շոռ ջրից ու ոգևորությունից նոր ուժեր առած, Աշոտն սկսեց մագլցել զառիվերը՝ դեպի կճղակավորների անհայտ թաքստոցը:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ. Թե ուր են տանում հետքերը

Ոչխարները տեղ-տեղ կանգ էին առել, թփերից կոկոններ ու չորացած տերևներ պոկել-կերել, կճղակներով փորել էին ձյունը և երբ անցել էին մացառների միջից, իրենց բրդից թողել էին նրանց բերանում:

Ոչխարը ժայռի անմատչելի ծերպերը չի սիրում, դա այծի տարերքն է: Բայց այս կենդանիները գնացել էին ամենադժվարին կածաններով, որից մեր պատանի բնասերները հասկացան, որ նրանք արդեն վայրենացել են և իրենց պահում են վայրենի կենդանուն հատուկ զգուշությամբ:
Քանի բարձրանում էին մեր տղաները, այնքան լայնանում էր նրանց հորիզոնը:
Հևալով, քրտնաթոր վեր մագլցեցին և կիրճից դուրս եկան աջ ժայռաշարքի «գոտկատեղից» մի քիչ ցած:
Այդտեղ հետքը կորավ, քարե արահետներում ձյուն չկար: Աշոտը մնացել էր մոլորված:
- Ե՛տ դառնանք, - առաջարկեց նա: Հասոն ներողամտաբար ժպտում էր:
- Ո՞ւր գնանք, էստեղ կածան չկա, - շփոթված արդարացավ Աշոտը:
- Կա՛, - ժպտալով պնդեց Հասոն: - Չի երևում, բայց կա՛: Քո աչքը սովոր չի... Դու հետևիցս արի...
Պարզ չէ՞ր, որ եթե ոչխարները ամեն օր ձորակով գնացել են ջրի և վերադարձել, ուրեմն շավիղը պիտի շարունակվեր մինչև նրանց արոտն ու թաքստոցը:
Այնպես որ հովիվ պատանին տատանվելու ոչ մի պատճառ չուներ: Նա սկսեց առաջնորդվել թափված կտիտով: Բայց, զարմանալի բան, ոչխարների թողած այդ նշանները տանում էին ոչ թե դեպի վերևում սևին տվող անձավները, այլ բարձրանում էին ժայռերը:
Է՜հ, ի՞նչ արած, դժվար էր, բայց պետք էր բարձրանալ նրանց հետևից:
Հևալով հասան ժայռաշարքի կատարին և կանգ առան, այդտեղից երևում էին Փոքր Կովկասի բարձունքներից դեպի Արաքսի հովիտն իջնող բազմաթիվ լեռնաբազուկները և տեղ-տեղ բաց, իսկ իր մեծ մասով ձյան ճերմակ վերմակով ծածկված Արարատյան դաշտի այն հատվածը, որ պատմական Հայաստանի Սուրմարի գավառն էր կազմում: Մեծ և Փոքր Մասիսները ուղղահայաց վեր էին ելնում ճերմակ դաշտից և իրենք էլ անբիծ ճերմակ էին հագած ոտից մինչև գլուխ:
Ի՜նչ ազատ, ի՜նչ լավ է հայրենի աշխարհը: Իսկ իրե՞նք...
Աշոտի սիրտը լցվեց, արցունքները լճացան խոշոր աչքերում: Ա՜խ, ե՞րբ են դուրս գալու այդ ազատ, այդ լայն աշխարհը: Եվ դուրս կգա՞ն արդյոք...
- Շարժվե՛նք, քամին կտրում է, - շշուկով զգուշացրեց Հասոն:
- Այո, գնա՛նք... Բայց էս ժայռերն անցնելու տեղ չպիտի լինի... Որ լիներ, հայրս կիմանար... կարծես ինքն իրեն դատում էր Աշոտը:
- Կա՛, էս կածանը մեզ արդեն ձորից դուրս է հանում, նայի՞ր, - իր գյուտից ալեկոծված ասաց Հասոն և քարի ցցունքներից բռնելով, շարունակեց քայլել ժայռի ճակատով ձգվող նեղ շավիղով: Նրանով տղաների համար դժվար էր ընթանալ, իսկ ցածրահասակ կենդանիների համար՝ հեշտ, որովհետև արահետը խոր ակոսի նման գոտի էր կապում ժայռի «մեջքին»: Ավելի շուտ դա մի երկար, խոր ընկած ճեղք էր, որով սողոսկել էին կենդանիները՝ իրենց մեջքի ու կողքի մազերը թողնելով սուր քարերի վրա:
Այո, այս անհայտ կածանը Հովազաձորից դուրս է տանում:
Նրանք ժայռի թամբաձև ուսը հասան և ձորը մնաց իրենց թիկունքում:
Տղաները մի պահ կանգ առան, շունչ քաշեցին: Նրանք կարկամել էին հուզմունքից: Մի՞թե իրոք դուրս են գալիս «լույս աշխարհ...»: Մի ժայռաբեկոր ևս բարձրացան և մի նոր տեսարան բացվեց նրանց առաջ, մի այլ ձոր՝ շրջապատված կրաքարի շիկակարմիր ժայռերով:
Տենդագին հայացքով զննում էին այդ «աշխարհը», բայց շուտով համոզվեցին, որ փորձված որսորդ Արամը սխալվել չէր կարող. իրենց անցած շավիղը ոչ թե ելք էր դեպի դրսի աշխարհը, այլ մուտք՝ չորս կողմից փակված մի այլ ձորակ, ինչպես դահլիճից ելք փնտրելիս մտնես կից սենյակը, որի միակ դուռը այն է, որով դու մտար...
Մի՞թե նորից հուսախաբություն: Ձորակը ափի նման երևում էր իր բոլոր մանրամասներով: Տղաները հայացքով ելք էին որոնում նրանից, բայց իզուր: Ձորը թիկունքից և երկու կողքերից շրջապատված էր շեկ ժայռերով, իսկ հարավում անդունդ էր:
Այդ ժայռերից ոչ մեկը իր վրա արահետ չուներ, ոչ մեկը չուներ այն դիրքը, որ կարելի լիներ բարձրանալ: Նրանք ուղղահայաց էին, իսկ թիկունքի ժայռերը՝ նույնիսկ կռացած ձորի վրա: Չէ, պարզ է, այստեղից ևս ոչ մի հնար չկա դուրս գալու...
Տղաների թափն իջավ, քիչ առաջ նրանց համակած ոգևորության հետքն անգամ չմնաց: Քարերին նստած, նրանք հավանաբար իրենց սրտում նույն ափսոսանքն ունեին, ինչ անապատի ծարավ ճամփորդը, որ իր առաջ քչքչան ջրեր է տեսնում արմավենիների տակ, հևիհև գնում է դեպի փրկարար օազիսը և հանկարծ... ցնդում է ամեն ինչ. միրաժ է եղել: Դարձյալ նույն անապատը, դարձյալ նույն ավազները...
Բայց ո՛չ, հիմա մեր տղաների վիճակի մեջ մխիթարական շատ բան կա. երեք ոչխար ունեն նրանք այդ ձորակում, երեք ընտանի կենդանի, դա հո կատակ բան չէ: Նրանք չէին մոռացել այն օրերը, երբ վեց հոգով «սեղան էին նստում»... ճնճղուկից քիչ մեծ մի մոշահավ ուտելու...

Չէ, պիտի գտնել ոչխարներին ու մի հնարքով բռնել նրանց: Դա արդեն կես ազատության նման մի բան կլիներ:
Իրենց լքած լավատեսությունը նորից վերադարձավ, վեր կացան և մտան ձորը:
Բայց ի՞նչ վայր էին ընկել Աշոտն ու Հասոն: Դա այն գաղտնի ձորակներից մեկն էր, որոնք պատահում են Փոքր Կովկասի հարավ-արևելյան ժայռոտ լանջերին: Ապառաժե պարիսպներն այդ ձորակներն ու փոքրիկ հողակտորները գաղտնի են պահում մարդկանց աչքերից: Նրանց հայտնագործած ձորակը Հովազաձորից շատ փոքր էր, բայց նրանից գրավիչ, օժտված վայրենի գեղեցկությամբ: Ժայռերը երեք կողմից իրենց նոթերը կախել էին բարձր աճած խոտով և նոսր թփուտներով ծածկված լանջի վրա, իսկ նրանց տակ այստեղ-այնտեղ երևում էին անձավների մթին երախները: Ա՛յ ապահով արոտ, ա՛յ հրաշալի թաքստոց: Վատ տեղ չէին ընտրել իրենց համար մարդկանց կողմից անխելք համարվող այդ կենդանիները:
Այժմ մեր տղաների համար հասկանալի էր, թե ինչպես կարող էին վտանգներով լի դաժան բնության մեջ կենդանի մնալ ամեն զենքից զուրկ ու անճարակ ոչխարները:
Այնպես տաք էր քամիներից պաշտպանված այդ արևահայաց լանջը, ժայռերն այնպես էին անդրադարձնում արևի ճառագայթները, որ ձյուն չէր մնացել այնտեղ: Ա՛յ ձմեռային արոտավայր:
Շավիղը մի նեղ սարավանդով իջնում էր այդ նոր աշխարհը; Տղաներն զգուշությամբ իջան նրանով և բոլոր նշաններից հասկացան, որ կենդանիներն այդտեղ են բնակվում, նրանք տրորել էին չորացած խոտը, որոճալու համար այստեղ-այնտեղ նստել էին և ամեն տեղ ցրիվ տվել իրենց թուխ կտիտը:
Այն գաղտնի ձորակը, որ գտան Հասոն ու Աշոտը, ուղղակի մի այլ Հովազաձոր էր, միայն նրա կիսի չափ: Ուրեմն Հովազաձորի աջ ժայռաշարքը կկազմեր այդ նոր ձորակի ձախ պարիսպը:
Բայց ընթերցողը կհարցնի, այդ ինչպե՞ս է, որ այդ նոր ձորակն էլ Հովազաձորի նման էր՝ շրջապատված անանցանելի բնական պարիսպներով: Հնարովի բան չէ՞, - կմտածի ընթերցողը, - երկու իրար նման ձորակներ դնել իրար կողքի:
Ո՛չ, այստեղ հնարովի բան չկա: Զենքը ձեռքիս, որսի հետևից ընկած, ես շրջել եմ Հայաստանի գրեթե բոլոր լեռներն ու ձորերը և նկատել եմ, որ զարմանալի օրինաչափություններ կան մեր հանրապետության բնաշխարհի մեջ: Այսպե՛ս, մեր բոլոր հրաբխային լեռներն էլ իրար խիստ նման են՝ շաքարի գլխի նման կոնաձև գագաթներով և ձագարաձև խառնարաններով, կարծես բոլորն էլ մի վիթխարի չարխով «չարխաքաշած» լինեն: Միայն չափերն են տարբեր:
Ով գնացել է Զանգեզուր, նկատած կլինի, որ այնտեղի բոլոր ժայռերն էլ սրագագաթ են և մեծ մասը իր գլխին «փափախ» ունի:
Ուրեմն, այն նյութը, որից կազմված են նրանք, - իսկ նրանք կազմված են փուխր լեռնային տեսակներից, որ քլունգով անգամ կարելի է քանդել-փշրել, - այդ նյութը միատեսակ է, ինչպես և միատեսակ են եղել այդ ժայռերն առաջացնող բնական պայմանները, պատճառները:
Կամ վերցնենք հենց Փոքր Կովկասի այն մասը, որ Արարատների դիմացով ձգվում է Երևանի թիկունքից մինչև լեռնաշղթայի վերջանալը, մինչև Ջուլֆա և Օրդուբադ: Այդ նույն բնական գործոնների պատճառով այդ լեռնաշղթայի հարավ նայող ձորերը իրար նման են (մեծ մասամբ պատած կրաքարի շիկակարմիր ժայռերով), իսկ հյուսիս նայող ձորերը՝ իրար նման:
Մի այլ օրինակ. Զանգեզուրի Խնձորեսկ գյուղը Հովազաձորի նման կազմված է կողք-կողքի իրար նման յոթ ձորակներից, - ամեն ձորակը մի թաղ է: Կանգնում ես մի թաղում, երեք կողմից շրջապատված ժայռերով, դիմացը՝ բաց: Թվում է, թե այդ է ամբողջ գյուղը: Բարձրացիր աջ կամ ձախ «ժայռամատը», նրա մյուս երեսին նույնպիսի մի ձոր է, նույնպիսի մի գյուղակ մեջը թաքնված: Չորս անգամ ես եղել եմ Խնձորեսկում, բայց դեռ լրիվ չեմ տեսել բոլոր այն թաղերը, որ թաքնված են նրա ժայռապատ ձորակներում:
Ֆանտանի թիկունքի Գութանասար (Քոթան-դաղ) լեռից մինչև Սևան ցածր լեռների մի շարք կա: Չորս-հինգ տեղ լեռնանցքներ ունի այդ շարքը, որով մենք անցնում ենք այդ սարերի թիկունքը՝ լորի որսի: Այնքան նման են իրար այդ լեռնանցքները (թե՛ լեռան ուսը, որով անցնում է ճամփան, թե՛ թիկունքի անջուր հովիտը), որ թեև մի հարյուր անգամ շրջած կլինեմ այդ վայրերում, բայց այժմ էլ իրար հետ շփոթում եմ այդ լեռնանցքներն ու լեռները՝ այնքան նրանք նման են իրար:
Այդպես զարմանալի յուրահատկություններ ունի Հայաստանի բնությունը:
Այժմ վերադառնանք մեր պատանիների մոտ:
Հասոն դեռ հեռվից որոշել էր, թե մոտավորապես որտեղ կարող են թաքնված լինել փախստական ոչխարները: Նա Աշոտին նշան տվեց անձայն հետևել իրեն, այստեղ արդեն նրանց դերերը փոխվել էին, այժմ նա էր պետը:
Տղաները կտրեցին անցան ձորակը, որի փարթամ բուսականությունը մինչև նրանց ուսերն էր հասնում, և մյուս լանջի եզրին գտան ոչխարների տրորած, գցած շավիղը: Դա արդեն ուղիղ նրանց թաքստոցը

պիտի տաներ: Եվ իրոք, այդ շավիղը մեր պատանիներին տարավ նեղ ու կլոր մուտքով մի անձավ, որի խորքից այնպիսի հոտ էր գալիս, կարծես նրանք կանգնած լինեին փարախի շեմքին: Մի փոքր տատանվելուց հետո, տղաները կռացան ներս մտան:
Աղջամուղջի մեջ հետազոտեցին այդ անձավը, բայց ոչ մի շնչավորի չհանդիպեցին: Այրը խոր էր, ցածր առաստաղով և ներսում մի ոլորան ուներ, իսկ նրա հետևում՝ մի թաքուն խորշ, ուր դրսի ցուրտը թափանցել չէր կարող: Պատերը շոշափելով հետազոտեցին խորշը՝ ոչինչ չկար, միայն հատակին հաստ շերտ կապած չոր կտիտից հասկացվում էր, որ այդտեղ են գիշերում ոչխարները:
- Հիմի որ պարզվեց, - ասաց Հասոն:
- Ի՞նչը:
- Պարզվեց, որ դմակները տեղն են...
Հասոն մթնում ցույց տվեց իր ճերմակ ատամները:
- Բա ո՞ւր պիտի լինեին որ:
- Ո՞ւր: Ձմեռվա ցուրտ գիշերը, եթե ոչխարը դուրս մնաց՝ դմակը ցուրտը կտանի: Բայց դրանցը չի տարել, էստեղ հո մարդ էլ քնի՝ ոչինչ չի լինի:
Նրանք դուրս ելան այրից և կկոցած աչքերով զննում էին իրենց շրջակայքը, հայացքով որոնում էին ոչխարներին կամ նրանց թողած որևէ նշան: Դարձյալ Արարատը վեհորեն կանգնած էր նրանց դիմաց, իսկ ձախ կողմում ձախ ժայռաշարքն էր, որ բարձր պարսպի նման Հովազաձորը անջատում էր Ոչխարանոցից, -այդպես կոչեց Հասոն նոր ձորը:
Այդ պարսպի լանջով մի կածան իջնում էր ձորակը և բոլոր նշաններից երևում էր, որ այդ կածանը միակ ճամփան է, որով կարելի է մտնել այդ թաքուն ձորը կամ դուրս ելնել նրանից:
Ոչխարներն էլ հենց այդ շավղով էին գնում Շոռ աղբյուրը՝ ջրի:
- Կարող է խոտերի մեջ տապ արած լինեն... Մի դեսն արի...
Եվ Հասոն մի սեպ քարի կատարը բարձրացավ: Այդտեղից լանջը կարծես ձեռքի ափի մեջ լիներ, խոտերի մեջ թաղված մանր քարերն անգամ երևում էին:
- Տե՛ս, տե՛ս ոնց են տապ արել, - հանկարծ ալեկոծվելով՝ նա մատը մեկնեց շավղի ներքևի բարձր «բոզախոտին»:
Առանց սուր աչք ունենալու էլ կարելի էր նկատել թուխ ոչխարը դեղնած խոտերի մեջ նստած: Նրա մոտ երկու ճերմակ կենդանիներ կային, մեկը ոլորուն եղջյուրներով, մյուսը եղջյուրից զուրկ փոքրիկ գլխով:
Կենդանիներն անշուշտ նկատել էին տղաներին և իրենց վայրենի նախնիների նման քարացել իրենց տեղում՝ չմատնվելու համար: Բայց հենց զգացին, որ մարդիկ իրենց նկատել են, վեր ցատկեցին ու, դմակները ծափ տալով՝ փախան դեպի ձախ, դեպի ձորակի միակ ելքը:
Հասոն ճիշտ էր որոշել, նրանցից մեկը մի խոշոր մաքի էր, մյուսը՝ երկու տարեկան ջահել խոյ, երրորդը՝ յոթ-ութ ամսական մի էգ գառ:
- Վա՛հ, սա հո մեր Թուխիկն է... Թո՛ւխիկ, Թո՛ւխիկ, Թո՛ւխիկ, գդը, գդը, գդը, Թուխիկ գըդը... - կանչում էր Հասոն ոչխարներին հասկանալի լեզվով:
Նրա կանչն իզուր չանցավ, հետևից ծանրաքայլ վազող թուխ ոչխարն իր արդեն մոռացված անունը լսելով, կանգ առավ, ետ նայեց և խղճալի բայուն արձակեց: Խոյը նույնպես կանգ առավ, բայց հեռու, քարե շավիղի կենտրոնում և նորից խելակորույս փախչելու պատրաստ: Իսկ գառը թեթև թռիչքներով անցկացավ Ձախ ժայռաբազուկը, դեպի Հովազաձոր, բայց մի քանի րոպե անց ժայռի հետևից նորից երևաց նրա փոքրիկ գլուխը, գաղտագողի նայում էր, թե ո՞ւր մնաց իր մայրը, ինչո՞ւ չի փախչում այդ երկոտանի, տարօրինակ արարածներից, որոնց նմանը նա իր կյանքում չէր տեսել...
Թուխիկը շարժվեց դեպի իր ձագերը, բայց այս անգամ չէր փախչում, այլ գնում էր:
- Ի՞նձ Թուխիկ է, - հարցրեց Աշոտը, որի հուզմունքը դեռ չէր անցել, երե՛ք ոչխար, դա հո փրկություն է: Հիմա հաստատ կարելի էր ասել, որ իրենք չեն ոչնչանա քաղցից: Միայն հարկավոր էր դրանց բռնելու հնարը գտնել:
- Թուխիկը մեր ֆերմայի ոչխարներից է: Անցյալ տարի ապրիլին, որ ներքին ձմեռանոցից սուրուն[33] բերինք, էդ ոչխարը կորավ՝ չորս ամսական գառը հետը, ախր քոչը արանից[34] բերելիս գառն ու ոչխարը խառն են լինում: Ես ու հերս, շները վերցրած՝ հանդերն ընկանք, ման եկանք, ման՝ չգտանք: Շատ զարմացանք, եթե գելը կերած լիներ, գոնե ոսկորները կգտնեինք: Բա՞, դրա ֆանդերը[35] տես, էնպես տեղ է եկել, որ ոչ մտքովդ անց կենա, ոչ գտնես: Բռռո՛ւ, բռռ՛ւ, բռու, գը՛դը, գը՛դը, գը՛դը,... յակ, յակ, յակ, - կանչում էր Հասոն և լեզուն ծալած՝ այնպիսի ձայներ էր հանում, որից անծանոթ մարդը կամ կսոսկար,

[33] Սուրու – հոտ:
[34] Արան – տաք երկիր, դաշտավայր:
[35] Ֆանդեր – հնարքներ:

կամ կզզվեր, բայց Թուխիկը վաղուց կարոտ էր այդ ձայներին: Այդ կանչերը նրա մշուշապատ ուղեղում քաղցր հուշեր էին արթնացնում՝ ֆերմայի ուրախ ժխորի մասին, որ վաղուց մարել-մոռացվել էր, իր հազարավոր ցեղակիցների մասին, որոնց հետ ինքը ապահով, առանց ահի արածում էր լեռնային մարգագետիններում, իսկ ձմեռը համեղ կեր ուտում տաք փարախում: Գուցե այդ ձայները նրան հիշեցնում էին և իր բարի պահապան շների մասին, սրնգի խաղաղ ու ականջ շոյող դայլայլի մասին և իր սիրասուն մոր մասին, - չէ՞ որ մի ժամանակ նա էլ էր փոքր, նրան էլ էին սիրում-փայփայում:
Հավանաբար հիշեց այդ բոլորը կենդանական կոլեկտիվից վաղուց կտրված Թուխիկը և սկսեց սրտակոտոր բայել, որով կարծես երազ դարձած այդ կյանքն էր կանչում...
- Լա՛վ, բա ո՞նց է ընկել Հովազաձոր... Ո՞նց է որ նորից գառ է ունեցել, - տարակուսած և թերահավատ ինքն իրեն խոսում էր Աշոտը:
Հովիվ պատանին միայն ժպտում էր. այսինքն թե՝ դրանք ի՛նչ հարցեր են Հասոյի համար որ:
- Հիմի ես քեզ ասեմ, թե դա ոնց է Հովազաձոր եկել: Դե ես ոչ դպրոց եմ գնում, ոչ էլ բնասերի խմբի մեջ կամ, բայց էդ բաներից կարող եմ գլուխ հանել, - իր պարծենկոտ տոնի համար շիկնելով ասաց Հասոն: - Թուխիկը, որ ետ է մնացել իր ընկերներից ու մոլորվել, էդ ժամանակ դրա կողքով վիրու էծեր են փախած անցկացել: Դա էլ խրտնած վազել է նրանց հետևից, - ախր դրանք էնքան խելք չունեն, որ, պատահում է, գելի հետևից էլ են վազում... Էդպես, էծերը մտել են Հովազաձոր, դա էլ՝ հետևներից: Խամ արոտի մեջ գառան հետ աղավարի ապրել են մինչև ձմեռնամուտ: Որ ձմեռը վրա է հասել, դրանք արդեն վիրունի էին ու կարող էին իրենց գլխի ճարը տեսնել...
- Բայց այս տարի նրան գառը որտեղի՞ց: Հովազաձորում հո ղոչեր չկա՞ն:
- Բա նա ղոչ չի՞, - ժպտալով պատասխանեց Հասոն և մատը մեկնեց քարե թարեքին կանգնած կենդանուն, որի խոշոր եղջյուրները պարզ գծագրված էին ժայռի ֆոնին:
- Ա՛ա՛ա, - հասկացավ և ծիծաղեց Աշոտը: - Փսլնքոտի՛ն նայիր, մեծացել է հայր դառել... Իսկապե՛ս, գառը սպիտակ է իր նման... Մալադե՛ց, Հասո, դու այս երեկո մեր խմբին կպատմես քո այդ հետաքրքիր գյուտերի մասին...
Այդ գովասանքից հովիվ պատանին թեթև շփոթվեց և խոսքը փոխեց..
- Որ Թուխիկին իր գառներով ֆերմա տանենք, համա կզարմանան հա՛...
- Ո՞նց տանենք, բա ինչո՞վ ենք ապրելու:
- Մորթե՞նք: Չէ՞, իմ ձեռը չի բռնի... Մեռած բան է, որ ես Թուխիկին սաղ-սալամաթ[36] ֆերմա չհասցնեմ, - անառարկելի տոնով ասաց Հասոն:
- Դու չե՞ս մորթի, ե՛ս կմորթեմ, - խոսեցնում էր Աշոտը:
- Չե՛ս մորթի:
- Ինչի՛:
- Ես չոլերը կընկնեմ ուտելիք կճարեմ: Աղը որ կա, էլ չեմ վախենում: Համ էլ ձեռքդ չի բռնի, որ մորթես:
- Ինչո՞ւ:
- Չես տեսնո՞ւմ, որ հղի է, էսօր-էգուց գառ կբերի...
- Ինչի՞ց իմացար:
- Երիշից[37] ... Չե՞ս տեսնում, որ փորը գետնին քարշ տալով անջախ [38] է տանում:
- Ուրեմն գա՞ռն ենք ունենալու... Վա՛յ քո հոգուն մատաղ Հասո:
Աշոտն այնպես ուրախացավ այդ լուրից, որ եթե չքաշվեր Հասոյից, կպարեր:
«Լավ, - մտածում էր նա, - Թուխիկին առայժմ կթողնենք սև օրվա համար, իսկ էն երկուսը մեզ մի ամիս հերիք են... իսկ կա՞թը...»:
Այսպես ուրախացած մտքում հաշիվներ էր անում Աշոտն ու անհամբեր սպասում, թե հովիվ Հասոն ինչ միջոցներ կգործադրի այսպիսի հաջող որսը ձեռքից չփախցնելու համար:
Հասոն դանդաղ առաջ էր գնում և միայն ոչխարներին հասկանալի հնչյուններ արձակելով՝ հորդորում էր Թուխիկին չվախենալ-չհեռանալ իրենից:
Մայր ոչխարը մոլոր քայլերով գնում էր դեպի իր ձագերը: Մոլոր, որովհետև Հասոն իրեն ծանոթ կանչերով նրա կենդանական սիրտը երկու մասի էր բաժանել: Ի՞նչ անի հիմա նա, կանգնի իր կարոտած տիրո՞ջը լսի, թե գնա ձագերի կողմը...
Վերջին բնազդն ավելի հզոր դուրս եկավ և նա, ոտքը դնելով քարե արահետին, առաջ գնաց: Այնուհետև ոչ «գդդը-գըդը»-ն, ոչ քրդերի սովորական «յակ, յակ, յակ» կանչերը այլևս նրան չկանգնեցրին: Այն ժամանակ Հասոն դիմեց ավելի զորավոր միջոցի, նա գոտուց դուրս քաշեց իր սրինգը և քարին նստելով՝

---

[36] Սաղ-սալամաթ – ողջ և առողջ:
[37] Երիշ – քայլվածք:
[38] Անջախ – հազիվ:

սկսեց «չոբան- բայաթի» կոչված մեղեդին, որի հնչյունների տակ հոտը քարանում է: Նվագեց ամբողջ սրտով, այնպես նվագեց, որ քարերը, եթե սիրտ ունենային՝ կարտասվեին:
Թուխիկը կանգ առավ վարանման մեջ, շուռ եկավ ու սկսեց բայել կարոտագին: Ապա դունչն առաջ մեկնած՝ մի քանի քայլ առաջ եկավ ու նորից կանգ առավ: Բայց երբ Հասոն դանդաղ քայլերով դիմեց դեպի կենդանին, սա շուռ եկավ և շտապեց դեպի իր ձագերը:
- Հիմի ի՞նչ անենք, Հասո՛ն: Ախր մենք ուրիշ ճամփա չունենք, մեր եկած կածանով էլ որ գնանք՝ ոչխարներդ ձորից դուրս կփախչեն...
Տղաները մնացել էին մոլորված, ընկերների մոտ գնալիս կամա-ակամա, իրենց անառիկ պատսպարանից դուրս էին վռնդելու ոչխարներին:
Մինչ նրանք ելք էին որոնում, ժայռաշարի մյուս երեսից մի մեծ անգղ երևաց և գառն ու խոյը կածանով ետ եկան լեղապատառ: Ապա տեսնելով, որ իրենց բնի մոտ մարդիկ էն կանգնած, ձորակի հատակով ցած իջան: Կածանը բացվեց: Տղաները շտապով կտրեցին-անցան խոտոտ ձորակը և մտան կածանը, ուր քիչ առաջ ոչխարներն էին կանգնած:
- Եթե ձորում գազան կա, սրանց հոտով գիշերը կգա-կուտի: Ի՞նչ անենք, Աշո՛տ:
- Ի՞նչ... Ի՞նչ...
Աշոտը մտածում էր:
- Գտա՛: Կրակ անենք կածանի ամենանեղ տեղում:
Այդպես էլ որոշեցին և տուն վերադառնալուն պես Հասոն կրակ վերցրեց, նորից ժայռերը բարձրացավ և խարույկ վառեց ժայռի ճակատով ձգվող շավիղի վրա:
Այդ խարույկը շատ անհանգստացրեց ճերմակ գառանը և նրա ջահել հորը: Բայց Թուխիկի վրա նա այլ ազդեցություն ունեցավ, այժմ նա այլևս գրեթե երկյուղ չուներ մեր պատանիներից:
Ողջ գիշերը ժայռի վրա ծխացող կրակը իր մանկության վայրերն էին հիշեցնում, իր արխաջը[39] ...
Բայց այդ ինչպե՞ս էր պատահել, որ հովազը մի քանի շաբաթ շարունակ ապրել էր ոչխարներից ոչ շատ հեռու և չէր վնասել նրանց:
Ո՛վ գիտի, բնության մեջ, բացառության կարգով, այդպիսի դեպքեր հանդիպում են. Միջին Ասիայի ավերակ շեներից մեկում որսորդները տեսել են, որ խայտաբադը ձագեր է հանել աղվեսի բնում, այդ գիշատիչի հարևանությամբ...
Բայց ո՛չ, քաղցած հովազը, երբ գաղտագողի հետապնդում էր մեր պատանիներից մեկն ու մեկին բռնելու համար, ոչխարներին չէր խնայի: Հավանաբար նրանց չի էլ պատահել, չէ՞ որ Ոչխարանոցը Հովազաձորից պատնեշված է աջ ժայռաշարքի պարսպով; Բոլոր նշաններից երևում էր, որ հովազն այդ պարիսպը չի էլ անցել:
Բայց ոչխարները հո՞ ամեն օր անցնում էին այդ պարիսպը՝ գալիս էին Հովազաձորի շոր-շոր աղբյուրից ջուր խմելու, - կհարցնի ընթերցողը:
Գալիս էին, բայց այն ձորակը, որով երթևեկում էին նրանը, ինչպես արդեն գիտենք, բուն Հովազաձորից անջատված է վերից վար ձգվող մի երկար ժայռով:
Հետո՛: Գիշատիչ գազանները սովորություն ունեն ցերեկը մրափելու իրենց թաքստոցում, սովորաբար նրանք գիշերով են որս անուս: Իսկ մեր ոչխարները, ընդհակառակն, իրենց հին սովորության համաձայն (սովորություն, որ նրանք ձեռք են բերել մարդու մոտ) մթնելուն պես մտնում էին «փարախը» և որոճում այնտեղ մինչև լույս:
Լույսը բացվելուն պես երբ հովազը մտնում էր իր անձավը, սկսվում էր ոչխարների արոտը:
Գուցե այդ էր պատճառներից մեկը, որ նրանք չէին հանդիպել իրար:
Բայց, զարմանալի չթվա, եթե ասեմ, որ հովազը հանդիպեր էլ ոչխարներին, կարող էր և չվնասել նրանց:
«Ինչպե՞ս, հովազի նման գազա՞նը...».- կբացականչի ընթերցողը: Այո՛, նա վայրենացած ոչխարին կարող էր բռնել անմեղ արածելիս կամ ջրի գնալիս, եթե դարան մտներ ճամփի եզրին, գաղտագողի: Այլապես հովազը չէր կարող հասնել արդեն վայրենացած Թուխիկի հետևից: Իսկ նրա գառը արդեն քարայծի նման մի կենդանի էր:
Բայց ինչպե՞ս, մի՞թե վատ է վազում հովազը, չէ՞ որ հայտնի են նրա հինգ-վեց մետրանոց թռիչքները:
Այո՛, սա լավ ցատկում է, բայց վատ վազում: Կատվացեղ գազանները՝ առյուծը, վագրը, հովազը և հենց ինքը՝ կատուն ոտքերից խեղճ են: Իզուր չէ ժողովուրդն ասում. «Կատվի վազքը մինչև մարագն է»:
Ասում են իբր առյուծն այնքան մեծահոգի է, որ երբ ցատկում է իր որսի վրա և չի հաջողեցնում բռնել նրան, այլևս չի հետապնդում, իր զոհի կյանքը «բաշխում է» իրեն...
Սխա՛լ է, մեծահոգության հարց չկա, քաղցած գազանին ի՛նչ մեծահոգություն, հաջողեցրե՞ց՝ պիտի պատառոտի: Ուղղակի մեկ-երկու թռիչքից հետո առյուծը և նրա ազգակիցները՝ հովազը, վագրը

[39] Արջախ – հոտի մակաղելու վայրը:

հուսահատվում են ու, տեղում փորը գետնին կպցրած, նայում փախչող որսի հետևից, ագահությամբ լիզում իրենց շրթունքները և ջղայնությունից պոչով հարվածում գետնին: Չեն հետապնդում, որովհետև ոտքերը շուտ հոգնում են և հույս չեն ունենում, որ կհասնեն որսի հետևից:
Հովազը դարերի ընթացքում դարանակալելու է վարժվել, ոչ, թե վազելու:
Ես այդ բանը մի անգամ աչքովս տեսա: Նկարագրածս Հովազաձորից ոչ հեռու, Փոքր Արարատի դիմաց, քարայծ էի որսում: Այդտեղ մի ժայռոտ սար կա, որին տեղացիները Փալանգիր են կոչում, որ նշանակում է Հովազանոց: Այդ սարի ժայռոտ ծերպերում հաճախ կարելի է հովազի հանդիպել: Եվ ահա ես ևս հանդիպեցի այդ ահռելի գազանին, քարայծերը փախչում էին ոչ այնքան արագ, իսկ նա կատվի նման հպվել էր սալին, մեջքն ուռցրել և պոչը գետնին խփելով բարկացած գոռում էր՝ «ուա՛խկ, ուա՛խկ...»: Վեր չկացավ և այծերի հետևից վազելու փորձ անգամ չարավ:
Չվազեց, որովհետև հույս չուներ, որ կհասնի...
Այդպես էլ Հովազաձորում: Գուցեև տեսել է փախչող ոչխարներին և հետապնդել մի փոքր տարածություն ու այնուհետև հույսը կտրելով՝ հպվել մի քարի ու երկար պոչով լախտի նման հարվածել գետնին:
Դե նա հո Թուխիկի նման ամուր «կոշիկներ» չունի իր հագին, հովազը բոբիկ է ման գալիս, նրա ոտքի տակը փափուկ է և անպաշտպան, ուրեմն և երկար չէր վազի Հովազաձորի քարքարոտ լանջերով:
Ահա թե ինչպես էր եղել, որ ոչխարները անվնաս էին մնացել այնպիսի սոսկալի թշնամու հարևանությամբ, որպիսին հովազն է:
Մոտավորապես այսպես էին դատում և խելք-խելքի տալով այսպիսի եզրակացության եկան մեր պատանիները:

## ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ. Թե նորից ինչեր կատարվեցին անակնկալ դեպքերով հարուստ այն զարմանալի օրը

Այսպիսով, երեկվա մեծ ձախորդությունից հետո այդ օրը իրար հետևից այնպիսի բարիքներ պարգևեց մեր պատանիներին, որ շուտով մեղմացավ այն կսկիծը, որ գող արջը պատճառել էր նրանց:
Այժմ Հասոյի հիմնական հոգսը դարձավ՝ հնարներ մտածել վայրենացած ոչխարներին բռնելու:
- Բախտ եմ ասում է՛, խորոված ածացուները եկել են իրենց ոտով, - ձեռքերը բավականությամբ իրար խփելով ասում էր Գագիկը և սպասում այն երջանիկ պահին, երբ իր տնօրինության տակ գտնվող սննդի դատարկ «պահեստը» նորից կլցվի:
- Փերմա-մերմա չեմ հասկանում, բռնածին մորթում ենք... Ո՞ւր մնաց էդ Հասոն, արջին չպատահի՞...
Եվ Գագիկը շեմքից գոռաց, կանչեց, նրան հետևեցին ընկերները: Նրանք անհամբեր սպասում էին քուրդ պատանուն, ոչխարներին բռնելու հնարը նրանից էին սպասում:
Վերջապես վերադարձավ Հասոն: Դեմքը փայլում էր գոհունակությունից, սև աչքերը խաղաղ էին:
- Եթե էս ձորում գազան էլ կա, Թուխիկի կողմը չի գնա, տեսե՞ք, - հաղորդեց նա իր կատարածից գոհ՝ մատը մեկնելով դեպի դիմացի ժայռերը:
Աջ ժայռաշարքի գագաթից ոլոր-մոլոր ծուխ էր բարձրանում դեպի երկինք:
- Հիմա հանդարտվեցի՞ն... Չգնա՞նք բռնենք, - հարցրեց Աշոտը: Հասոն նկատեց, որ նրա ձեռքին նիզակ կա ու բարեսրտորեն ժպտաց: Նա ասաց, որ կենդանիների մեջ նախ պետք է վստահություն առաջ բերել, նրանք պետք է սովորեն մարդկանց ներկայությանը: Իսկ դրա համար ժամանակ է պետք: Եվ՝ մեղմ վարմունք:
Պատանիների թափն իջավ:
- Բա ես հույս ունեի էս երեկո ոչխարի ոտ ու գլխից խաշ եփել... Չեղավ, Հասո՛, սոված մարդին համբերությո՞ւն կքարոզեն, - բողոքեց Գագիկը:
Է՛հ, ի՞նչ արած, եթե ոչխարներին բռնելու հույս կա, այդ հեռանկարով մի քանի օր ևս կարելի է ապրել: Բայց ինչ անեին հիմա, դեռ կեսօր էլ չկար:
- Եկեք փորձենք, գուցե այծ սպանենք... Հարսանիքի շրջանում նրանք անզգույշ են լինում, -առաջարկեց Աշոտը:
- Ինչքան անզգույշ լինեն, մոտ չեն թողնում, - առարկեց Հասոն, - դե նա շատ անգամ էր հանդերում հանդիսատես եղել այդ կենդանիների «հարսանիքին»:- Բայց, - ավելացրեց նա, - որ մտնենք խոր-խոր զաղաները[40] կարող ենք էծեր գտնել ու...
- Հա, եթե այրի մեջ պատահեցնենք՝ մերն են, - իրեն հանգի վստահությամբ ասաց Աշոտը և վեր կացավ:
Սարգիսը գրգռված շարժում արավ, բայց զսպեց իրեն:

---

[40] Զաղա – անձավ:

Նիզակները, կացինը, ածխակոթեր վերցնելով խումբը դուրս ելավ անձավից: Շուշիկն ու Սարգիսը նույնպես գնում էին մոտիկ թփերը նայելու, գուցե հատապտուղ գտնեն:
- Աշո՛տ, նիզակդ էնպես կշպրտես, որ աչքին չդիպչի, կքոռանա, - լուրջ խրատում էր Գագիկը:
- Ո՞վ, - հոնքերը խոժոռեց Աշոտը:
- Էծը... Ո՞ւր ես դեպի վեր գնում, չգիտե՞ս, որ ներքև գնալն ավելի հեշտ է...
Այո, ցած գնալն ավելի հեշտ է, Աշոտը դա գիտեր, բայց այծերն ապրում էին Հովազաձորը վերևից փակող ժայռերում միայն:
- Աշո՛տ, ես վախենում եմ... Իսկ չե՞ս մտածում, որ արջը կարող է վերևի քարի հետև տապ արած լինի, - շշուկով բողոքում էր Շուշիկը: Այդ զգուշացումից, թե նրանից, որ խումբն ընթանում էր արջի թարմ հետքերով, տղաները զգոնացան, և Աշոտը նշան տվեց զգուշություն պահպանել:
Արջի հետքերով տղաները բարձրացան այն ժայռի թիկունքը, որի մեջ ճգնավորի անձավն էր փորված: Հասան նրա «կտուրին», պառկեցին արդեն չորացած գետնին և անձայն սողալով՝ դուրս եկան ձորի դիմաց. այդտեղից երևում էր և՛ Հովազաձորի բուն լանջը, ուր խաղողի այգին էր, և՛ արևելյան ժայռաշարքերը՝ փակված արահետով:
Դիմացի դարավանդից չրխկոցներ լսվեցին: Հասոն, որ բոլորից սուր տեսողություն ուներ, տագնապով հրեց Աշոտի կողը.
- Փափախդ...
Նոխազները ետ-ետ էին գնում, որ նորից մոլեգնած իրար հասնեն, և նրանցից մեկի եղջյուրին կախված տարուբերվում էր մորթե գլխարկը...
Աշոտը դառն ժպտալով գլուխն օրորում էր. «Ո՛ւմ համար էին կարել, ո՛վ է ծածկում...»: Խումբը կազմված էր երկու նոխազից, չորս մայր այծից և երեք «չեփիչից»: Պատանիները սրտատրոփ դիտում էին նոխազների կռիվը, դիտում էին նրանցից քիչ հեռու արածող մայր այծերին և ամեն մեկն իր մտքում ցանկանում էր, որ այդ կռվում մեկն ու մեկի գանգը ջախջախվի: Բայց բնությունը վայրի նոխազի գլուխը շատ ամուր է ստեղծել, որպեսզի նա դիմանա ամեն աշուն կրկնվող ահեղ կռիվներին: Ուստի որքան էլ քարայծերը ուժգին էին զարկվում իրար, նրանցից ոչ մեկը չվնասվեց:
Եվ մինչ նոխազները, տարված իրենց կռվով, իսկ մայր այծերը, իրենց բախտին հնազանդ՝ պայքարի ելքին էին սպասում, վտանգն անձայն կախվեց մենամարտի բռնված կենդանիների գլխին: Վերին դարավանդում արևի տակ մի շեկ մեջք շողաց-խլրտաց: Ապա ճիրանները բաց մի հսկա կատու կախվեց օդում ու ընկավ մոլուցքի մեջ շրջապատը մոռացած նոխազների վրա...
Քարայծերը սարսափահար փախան դեպի ձորի ելքը, իսկ նրանց հետևից՝ գլխարկավոր նոխազը:
Ահա այդ ժամանակ էր, որ Միրուք Ասատուրն ու Արամը նկատեցին Հովազաձորից վերադարձած խմբի հետքին և զարմացան, թե ո՞ւր անհետացավ նոխազներից մեկը: Եթե դուրս գային Հովազաձորի դիմաց, կտեսնեին նոխազին գազանի թաթերի մեջ տրոփալիս...
Այդ ահեղ տեսարանին չդիմանալով՝ Շուշիկը թույլ ճիչ արձակեց և ետ սողաց, իսկ Սարգսի դեմքը կանաչեց: Նա ուզեց գոռալ, բայց Աշոտը իր ձեռքով վայրկենապես փակեց նրա բերանը, ետ հրեց ժայռի մյուս երեսը:
- Տեղդ կաց և ո՛չ մի ծպտուն, - բռունցքը տղայի աչքերի առաջ բռնելով՝ շշնջաց նա. փորձից գիտեր, որ սպառնալիքն իսկույն սանձահարում է թուլակամ ու վախկոտ մարդկանց:
Աշոտը վերադարձավ իր տեղը, Շուշիկին ետ քաշեց, շշուկով սիրտ տվեց ու սողաց միացավ ընկերներին: Նրանք գետնին հպված և շունչները պահած նայում էին ակնդետ: Հովազը նախ ծալեց իր զոհի մեջքը, ապա ժանիքները խրեց նրա կոկորդը և ժնգժնգոցով ու երկար պոչը տագնապահար շարժելով, սկսեց լափել նրա տաք արյունը...
Հովազն զբաղված էր իր քստմնելի գործով, իսկ մեր պատանիները, մի թփի հետև թաքնված, նրա ճյուղերի արանքներով շարունակում էին դիտել այս թաքուն հույսով, որ գազանն իր որսից իրենց ևս բաժին կթողնի:
Ասենք, իզուր էին մեր պատանիների բոլոր զգուշությունները, գազանը վաղուց նկատել էր նրանց և առանց նայելու էլ զգում էր մարդկային հոտը, լսում էր նրանց փսփսոցը: Բայց հովազը պատկանում է այն բացառիկ գազանների թվին, որոնք բանի տեղ չեն դնում իրենց հակառակորդներին և մարդու ներկայությամբ անգամ կարող են գործել ցանկացած ոճիրը: Նա երբեմն աչքի տակով նայում էր դեպի թուփը, որի հետևում թաքնված էին մեր պատանիները, և շարունակում էր լափել իր զոհին, բոլորովին նկատի չառնելով, որ իր այդ արարքով գրգռում է քաղցի ահով համակված պատանիներին:
Գագիկի ծնոտները դեռ իրար էին զարնվում, բայց աչքը չէր կարողանում կտրել դարավանդում մեկնված նոխազից և մտովին արդեն խորովում էր նրա յարդը: Ա՛խ, այդ ժլատ Աշոտը եթե երեկ թողներ մի կուշտ ուտեին, ինքն այսօր այդպիսի ագահությամբ չէր դիտի հովազի նախաճաշը...

Սխալվում էր նա յարդին տիրանալու իր հաշիվների մեջ, քանի որ թե՛ հովազը, թե՛ գայլը սովորություն ունեն ամենից առաջ իրենց զոհի յարդն ու սիրտը վայելելու, որից հետո անցնում են նրա մարմնի մյուս մասերին:
Վերջապես գազանը կշտացավ և բեղերը լիզելով, գնաց դեպի անձավները՝ նրանցից մեկի մեջ մրափելու:
Այս ահավոր դեպքից ցնցված, մեր պատանիները լուռ պառկած էին թփի հետև: Ոչ ոք չէր համարձակվում ո՛չ գլուխը վեր քաշել, ո՛չ ձայն հանել:
Նորից տաք օր էր, նորից ձյունը արագ հալվում էր, արեգունի լանջերը արդեն բացվել էին նորից:
Արևի տակ ընդարմացած պառկել էին նրանք գոլ խճին ու, եթե քիչ առաջ իրենց կրած սարսափը չլիներ, կնիրհեին:
Ասենք, ինչո՞ւ միայն սարսափը, ընկած որսի ներկայությունը պակաս չէր ալեկոծում նրանց: Ա՛յ քեզ բա՛խտ... Անհույս կերպով էին այծ փնտրելու դուրս եկել, իսկ հիմա ահագին նոխազը մեկնված է իրենց բնակարանից ընդամենը երկու հարյուր քայլ հեռու: Դե եկ սնահավատ Հասոյին հավատացրու, որ բախտ գոյություն չունի, թե ամեն երևույթ իր պատճառական կապն ունի: Չէ՞, իր հովիվ հայրը իզուր չի ասում, որ կան ձախորդ օրեր և կան հաջողակ օրեր: Քանի որ մեր պատանիները սովորություն էին դարձրել ամեն վայրի ու երևույթի հատուկ անուն տալու, հարկ է, որ իրենց գերության երեսունութերորդ օրը՝ դեկտեմբերի տասնհինգը կոչեին այսպես՝ «Անակնկալ հաջողությունների օր»:
Վերջապես Գագիկը շշնջաց Հասոյի ականջին.
- Մի գլուխդ բարձրացրու տես այծը տեղո՞ւմն է, թե եկավ տարավ... Բարձրացրո՛ւ, մի՛ վախենա, ես էստեղ եմ...
Հասոն չոքած նայում էր թփի հետևից:
- Հա, տեղումն է... Վա՛յ, Աշո՛տ, մի արծիվ մոտեցել է, ուզում է ուտի... ք՛շ, ք՛շ, - և Հասոն քար նետեց:
Արծիվը դժգոհությամբ թռավ-հեռացավ:
- Հը՞, չգնա՞նք շալակենք-բերենք, - աքլորանալով հարցրեց Գագիկը:
Իրոք, սպանված քարայծի ներկայությունը հանգիստ չէր տալիս մեր պատանիներին: Բայց Աշոտը տատանվում էր, երկյուղ ուներ հովազից:
- Դո՛ւ չես բերելու, բերողը մե՛նք ենք, բայց... ով գիտե պետք է զգույշ լինել...- ցածր ձայնով ասում էր Աշոտը:
- Փալանգն[41] էլ գելի պես բան է, չէ՞, - հարցրեց Հասոն: - Դե որ կշտացել է, մի տեղ մրափելիս կլինի... Նա մեկ էլ կգա իրիկունը...
Աշոտը տատանվում էր. արդեն ինքը շատ ձախորդությունների պատճառ էր դարձել, նորի՞ց իր պատճառով մի բան պատահեր:
Հետզհետե սիրտ առան, ձայները բարձրացրին:
- Քանի արծիվները չեն կերել, գնացեք բերեք, մնացածը թողեք ինձ վրա:
Չնայած կրած ողջ սարսափին, Շուշիկը փռթկաց, նա գիտեր, թե Գագիկի լեզվով ինչ է նշանակում «մնացածը...»:
- Թե՞ իրեն բախշեմ-գնա, - հարցրեց Գագիկը լրջորեն:
- Չէ՛, պիտի բերենք, - իրենը պնդեց Հասոն:
Նրանց տատանումներին վերջ տվեցին Շուշիկի երեխայավարի արտասանած խոսքը.
- Աշո՛տ, այնպե՛ս եմ կարոտել մսով կերակրի՛... Իսկ դուք քանի օր էր ինձ էն զզվելի չղջիկներից էիք ուտեցնում...
Է՛, այդպիսի սրտակտուր խոսքին Հասոն կդիմանա՞ր: Նա պատրաստ էր նույնիսկ հովազի բերանից որս խլելու իր «քուրացվի» համար:
- Խուշկե, Շուշի՛կ, ես հիմի...
Նա ամոթ համարեց խոստումներ տալ: «Դե որ բերես՝ կտեսնի, էլ ո՞ւր ես առաջուց գլուխդ գովում», - մտածեց տղան և վերցրեց իր տեգն ու մի մարած ածխակոթ: Աշոտը նույնպես վերցրեց իր նիզակը:
Երկյուղը մեծացավ Գագիկի սրտում և անբնական ժպիտը դեմքին հարցրեց.
- Կացինը չվերցնե՞մ, Աշո՛տ... Հա՞... Լա՛վ, դուք ո՞ւր եք գալիս, հիմի կգնամ՝ կ՛րպ՝ գլխին կտամ, ձեռքիցը կխլեմ-կբերեմ, ապուր կեփեմ Շուշիկի համար...
Ոչ ոք չարձագանքեց նրա կատակին և ուշադրություն չդարձրեց նրա կոմիկական վիճակի վրա: Աշոտն ու Հասոն լրջացել-կենտրոնացել էին, ինչպես դա լինում է գրոհից առաջ:
Բայց երկյուղը իրենից վանելու համար Գագիկը պահանջ էր զգում խոսելու: Եվ մինչ Աշոտը ածխակոթերի ծայրերը միացրել էր իրար և փոքր խարույկ էր անում, նա հարցրեց Հասոյին.

---

[41] Փալանգ – հովազ:

- Գայլը որ ուտում է կոլխոզի ոչխարներից, կարողանո՞ւմ ես նրա կիսատ թողած գործը շարունակել:
Հասոն շփոթվեց:
- Որտեղի՞ց գիտես... Պատահում է, որ շարունակում ենք, - ծիծաղեց նա:
- Տեսա՞ր, Աշո՛տ, մարդը փորձ ունի... Դե առաջ ընկիր, թիկունքդ պահած գալիս եմ...
- Սպասի՛ր, առանց կրակի չի կարելի գնալ...
Ածխակոթերից մի քանիսը հանգել էին, ուրիշների վրա դեռ մոխրով ծածկված կրակ կար:
Ծուխ բարձրացավ, խանձողների ծայրերը բոցավառվեցին:
Այն ժամանակ Աշոտը մտածեց Գագիկին հանել ամոթալի վիճակից:
- Գագի՛կ, դու սրանց տար տուն, կրակը թեժացրեք, մինչև որ մենք խորոված ածացուն բերենք, - շշուկով կարգադրեց նա:
- Բա առանց ինձ ո՞նց կլինի, - լրջորեն մտահոգվեց Գագիկը: - Բա որ հովազը ետ գա՞...
- Առանց քեզ մի կերպ կպաշտպանվենք, - ժպտաց Աշոտը:
Ի՞նչ աներ Գագիկը, հո չէր կարող չկատարել պետի կարգադրությունը... Ստիպված համաձայնեց և խմբի «բալաստ անդամներին» (ինչպես նա անվանում էր Սարգսին և Շուշիկին) ցած տարավ:
- Ա՛խ, ծանր քարերի նման կախվել եք ոտներիցս, չեք թողնում, որ մարդ գնա հովազի փորը թափի, - դժգոհում էր նա այրը մտնելիս:
Շուշիկը, չնայած կրած սարսափին, ստիպված էր ծիծաղել. «Ա՛խ այդ Գագիկը, որ հա՛մ վախկոտ է, հա՛մ աքլորանալ գիտի...»:
Աշոտն ու Հասոն ծխացող փայտերը ձեռքներին շարժվեցին դեպի դարավանդը, որի վրա հեռվից երևում էին մի զույգ եղջյուրներ:
Հովազը, իր ցեղի սովորության համաձայն, կերել էր իր զոհի փորոտիքը, լյարդը, ազդրերը, իսկ մնացածը թողել էր «ընթրիքի» համար:
Հասոն բռնեց կենդանու եղջյուրներից և քարշ տվեց դեպի ցած, բայց Աշոտը լուռ բռնեց նրա ձեռքից:
- Լեշի հետքով կգա, -շշնջաց նա ընկերոջ ականջին: Ապա կացնի մի հարվածով կիսեց կենդանու ողնաշարը, հետևի կրծած մասերը թողեց դարավանդի վրա, գլուխը՝ անարատ մնացած կրծքի և թիակների հետ դրեց ուսին և նշաններով հասկացրեց Հասոյին, որ կրակով ու ծխով կորցնի իրենց հետքը:
Ե՛վ սրտատրոփ ետ նայելով (հո գազանը չի՞ հետապնդում իրենց), և՛ ուրախ ալեկոծումով (նոխազի մարմնի կեսը արդեն իրենց ձեռքին է, ինչպե՞ս չուրախանային) նրանք շտապում էին դեպի քարայր՝ Աշոտը կքված իր ծանր բեռի տակ, իսկ Հասոն նրա հետևից ածխակոթերով հետքերն աղավաղելով:
Բայց մի վառ ածխակոթ նա պահում էր չնախատեսված վտանգի համար և չէր սխալվում, շուտով վտանգը վրա հասավ, բայց ոչ այն կողմից, որտեղից սպասում էին: Դեռ չէին հասել ճգնավորի անձավին, երբ վերևից մի ահեղ գոռոց լսվեց և մի բրդոտ գազան, թփերը ջարդելով, ձյուն ու քար իրար խառնելով զառիթափով ցած գլորվեց...
- Հասո՛ն, պտտիր ածխակոթը, Հասո, - գոռաց Աշոտն իր բեռը վայր գցելով:
Մինչ Հասոն դողդողալով վրա կհասներ, արջը բռնեց Աշոտի պիջակի փեշից ու շպրտեց ցած: Գնաց տղան խրվեց ձյան կույտի մեջ, բայց գազանը ոչ նրա կողմը գնաց, ոչ մսի. գոռգոռալով գլորվում էր ձյունոտ լանջին, վեր էր կենում տրտնգի տալիս, երկու ոտքերի վրա կանգնած ծամածռություններ անում: Ապա գլուխը խոթեց ոտքերի արանքը, երկուտակվեց կծիկ դարձավ ու փափուկ ձյան վրայով գլորվեց ցած. խաղ էր անում... Հարբած էր և հարբած մարդու նման էլ բարի էր այդ արջը, դե՛, ով իմանա-չիմանա, գինու մեջ մեծացած այգեձորցիք լավ գիտեին, որ մաճառի բռնածը երկու օր բաց չի թողնում...
- Հիմի ի՞նչ անեմ, Աշո՛տ, - ծխացող փայտն օդում պտտելով հարցրեց Հասոն. այնպես էր այլայլվել նա և ոտքերն այնպես էին դողդողում, որ տեղում կանգնել չէր կարողանում: Պակաս վախեցած չէր և Աշոտը, բայց արջի արարքից և գինու հոտից իսկույն հասկացել էր, որ կենդանու «խելքը գլխին չի»: Սակայն նա չէր հասկանում, որ ինչպես հարբած մարդը դառնում է համարձակ ու անամոթ, այնպես էլ արջը կարող էր մի կողմ դնել իր սովորական զգուշությունն ու հարձակվել:
- Սպասիր, մի դրան վախեցնենք: Խոտ քաղիր...
Մինչ տղաները խոտ ու չորացած տատասկ էին հավաքում, արջը նստել էր ձյունին, գլուխը օրորում էր ու կամաց բրդբրդացնում:
Հավաքած խոտը տղաները խուրձ կապեցին, խրեցին նիզակի ծայրը, վառեցին և երբ ծուխ ու բոց իրար խառնվեցին, «հո՛ւ» գոչելով Աշոտը վազեց դեպի գազանը և վառվող խուրձը նետեց նրա վրա:
Արջը գոռգոռալով փախավ և նրա խանձվող մազերի հոտը բռնեց շրջակայքը:
- Դե փախիր, էլ ետ չնայես...
Եվ տղաները իրենց ավարն ու գործիքները վերցնելով՝ փախան-մտան այրը:

- Վա՛յ, բերի՛ն, որսը բերի՛ն, - իսկույն աշխուժացավ և խնդալով դիմավորեց Շուշիկը: - Էն ի՞նչ գոռոց էր, - հարցրեց նա:
- Ոչի՛նչ... Կրակը թեժացրեք:
Օջախի մոտ ընկած էր ահագին քարայծի կեսը, որ համարյա երկու փութ կլիներ: Կարծես, ոչինչ, բախտը սկսել էր ժպտալ: Բայց մեր տղաների մեջ ամենից սրտոտը, չգիտես ինչու, բոլորից շատ էր անհանգիստ: Նա ցրված էր և շուտ-շուտ նայում էր շեմքին, ականջ դնում դրսի ձայներին:
Իսկ Գագիկը, որսի տեսքից աշխարի ու երկյուղ մոռացած, մտել էր իր տարերքի մեջ. միս էր կոտորում, ոստերից շամփուրներ շինում ու հետն էլ ասում.
- Բա որ ասում եմ վերջը լավ կլինի՞... Ձեր արևը, ոտ ու գլխից էնպես մի խաշ եմ եփելու, որ մատներդ հետը ուտեք... Հասո՛, գլուխը կտրիր ու կրակի վրա բռնիր թող խանձվի... Պա՛հ, պա՛հ, պա՛հ, կյանք հո չի՞, իմ պապի ասած՝ արքայության մեջ ենք...
- Սպասի՛ր, Հասո՛, գլուխը պիտի ուսումնասիրենք, - արգելեց Աշոտը:
- Չի լինի՞, որ խանձենք ուտենք, հետո ուսումնասիրենք...
Նորից ծիծաղ եկավ Հովազաձորի գերիների դեմքին, նորից սկսեցին աշխույժ խոսակցություններ, որոնք ընդհատվում էին Գագիկի հիացմունքի բացականչություններով՝ մանավանդ խորովածը շամփուրներից հանելու ժամանակ:
Չէ՛, բախտը վերջապես ժպտաց Հովազաձորի գերիներին:

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչպես ձախորդությունն ու հաջողությունը հարազատ քույր ու եղբայր են

Այո, այդ օրը բախտն ակներև կերպով ժպտաց մեր պատանիներին: Բայց երբ հանդարտվեցին, նրանք հետզհետե եկան այն եզրակացության, որ իրենց ուրախությունը «հորթի ուրախություն» է, և որ, իրենց վիճակը որքան փոխվեց դեպի լավը, նույնքան և վատացավ: Ճիշտ է, այժմ նրանք առնվազն երկու շաբաթ ապահովված էին սննդով և այժմ ավելի համբերությամբ կսպասեն այն օրվան, երբ Հասոն սրինգ նվագելով իր «հոտը» հետևից գցած Ոչխարանոցից կբերի ճգնավորի այրը: Աղն ու ջուրն էլ հո այնպիսի առատությամբ կար, որ հերիք էր մի ամբողջ գյուղի: Նրանք երբեք նույնիսկ չէին երազել Հովազաձոր ընկնելուց հետո այդքան բան ունենալ:
Բայց դրա հետ մեկտեղ ինչպե՞ս կարելի է մոռանալ երկու ահռելի գազանների հարևանությունը: Ճիշտ են ասում այգեձորցիք, որ հաջողությունն ու ձախորդությունը իրար քույր ու եղբայր են: Մեծ հաջողություն ունեին մեր գերիներն այդ օրը, բայց չէ՞ որ հովազը ուղղակի այրի շրջակայքում էր, ինչպես ժողովուրդն է ասում՝ «ատամն արյուն առած», գրգռված: Եկավ տեսավ իր որսը չկա՝ կգազազի, տղաներից մեկն ու մեկին «կորսի»: Իսկ ա՞րջը: Ո՞ւր էր, որտեղի՞ց հանկարծ հայտնվեց: Ուրեմն սխա՞լ էին կարծել, թե հեռացել է ձորից:
Տղաները լսել էին, որ արջը չի հարձակվում մարդու վրա, բայց մի տեղ որ արջ կա՝ դե գնա աղբյուրը ջրի, տեսնեմ կգնա՞ս... Կամ երբ ժայռերում հովազն է թաքնված, կուտապ եկած, ինչ սրտով գնաս ոչխարներին ընտելացնելու:
Այս բոլորի մասին խոսելով, մեր պատանիները հանգեցին այն մտքին, որ այժմ իրենք զրկվում են իրենց ձեռք բերած երկու-երեք նվաճումից՝ աղից, ջրից, ոչխարներից: Հետևապես դեռ վաղ էր նրանց ուրախությունը, դեռ վաղ էր կարծել, որ կապրեն մինչև գարուն: Գազանները նրանց փակած կպահեն այրի մեջ, երկու շաբաթից սնունդը կվերջանա, իսկ դրանից ավելի շուտ՝ աղի պակասությունը խելագարության կհասցնի նրանց, չէ՞ որ նորից ստիպված պիտի լինեն ձյուն հալել, իսկ ձյան ջուրը «թորած» է, աղի նշույլ չկա ոչ անձրևի, ոչ ձյան մեջ...
Այս բոլորը կշռադատելուց հետո մեր գերիները եկան այն եզրակացության, որ պիտի միջոցներ մտածեն գազաններին կամ ոչնչացնելու, կամ ձորից վռնդելու:
Աշոտն առաջարկեց ձորի զանազան մասերում շատ խարույկներ վառել, ապա վերևից ներքև շղթա տալ և վառ «կերոնները» ձեռքներին աղմկելով՝ աջ լեռնամատից շարժվել դեպի ձախ լեռնամատ ու դրանով գազաններին խրտնեցնել-քշել դեպի ձորի ելքը ու վռնդել Հովազաձորից:
Այստեղ Գագիկը մեղմ արտահայտություններով հասկացրեց, որ այդ մեծ ձեռնարկությանը կարող են մասնակցել միայն երեք հոգի՝ «երեքից ի՛նչ շղթա...»:
Այսպես և՛ զրուցում էին, և՛ նոխազի միսը խորովում վառ ածուխների վրա:
Երբ կշտացան, Աշոտը վերցրեց այրի մի անկյունում ընկած թակարդը և սկսեց զննել:
- Այո՛, սա իսկ և իսկ հովազ բռնելու թակարդ է, - ինքն իրեն ասաց նա, ժանգոտած երկաթը շուռումուռ տալով: Այդ միտքը նա հայտնել էր դեռ առաջին օրը, թակարդը տեսնելուն պես, բայց միայն այժմ նրա ուղեղը լրջորեն սկսեց զբաղվել այդ հարցով:

- Հովազը ճգնավոր քեռու ինչի՞ն էր պետք, որ բռներ. հո նա հովազի միսը չէ՞ր ուտելու, ոչ էլ մորթին ծախելու էր, - առարկեց Գագիկը:
Իսկապես, ինչո՞ւ, ի՞նչ նպատակով է հովազներ բռնել աշխարհից կտրված այն մարդը:
Շուշիկը մի բան հիշեց, տատանվեց, բայց վերջն ասաց.
- Ես մի տեղ կարդացել եմ, որ մի ճգնավոր իր ոտքերին բոժոժներ է կապել, որ նրանց զնգզնգոցից ճամփին եղած միջատները հեռանան, չընկնեն ոտքի տակը...
Գագիկը ծիծաղեց:
- Դա հո հեքիաթ է, - ասաց նա: - Հետո, որ իմանաս իր ոտներին բոժոժ կապող էդ մարդը ինչե՛ր է արել...
- Հա, բայց Շուշիկը ճիշտ է. դու նրան իզուր ընդհատեցիր, - տեղից վրա բերեց Աշոտը: - Նա ուզում էր ասել, որ ճգնավորները բարի մարդիկ են եղել և դա ճիշտ է:
- Իհարկե, ճիշտ է, էդ Գագիկը հո մարդու խոսք խլում է բերանից, - նեղացավ Շուշիկը: - Որ բարի մարդ չլիներ՝ քարայծ կբռներ, ոչ թե նրանց արյունը թափող գազան...
- Կեցցե՛ս, բա ասում եք մազերը երկար ե՞ն, - բացականչեց Գագիկը: - Բայց, իմ կարծիքով, ճգնավոր քեռին էդ բարի գործը էլի հաշվով է կատարել. հույս է ունեցել իր լավ գործերով դրախտ ընկնել...
Ընկերները ծիծաղեցին, բայց Աշոտի միտքը ուրիշ հարցով էր զբաղված, եթե ճգնավորը այս թակարդով հովազ է բռնել, ինչո՞ւ իրենք ևս չփորձեն: Ինքը հո տեսել է, թե իր հայրն ինչպես է թակարդ դնում գայլերի ու աղվեսների համար:
Նա իր այդ մտադրությունը հաղորդեց ընկերներին և հավանություն ստանալով, գործի անցավ:
Ի՞նչ է հարկավոր թակարդ դնելու համար, մի կտոր միս, ուրիշ ոչինչ: Միս կար, բայց թակարդն այնքան ժանգոտ էր, որ չէր կարելի այդ վիճակում լարել:
- Ժանգի հոտից կխրտնի, չի մոտենա, - բացատրեց Աշոտը:
Նման դեպքերում նրա հայրը ճարպ էր քսում երկաթին և դրանով չեզոքացնում ժանգի հոտը: Ճարպը որտեղի՞ց, արու քարայծը «հարսանիքի» ու կռիվների մեջ մի քանի օրում հալեցրել էր մարմնի ճարպի ամբողջ պաշարը[42] :
Միակ տեղերը, որ կարող էր մի փոքր ճարպ մնացած լինել, դա կենդանու երիկամներն էին ու հաստ աղիքը դրսի կողմից: Աշոտը այդ տեղերից մի քիչ ճարպ գտավ, տաքացրեց կրակի վրա և նրանով յուղեց թակարդի ժանգոտ մասերը:
Ապա ուժ տվեց-փորձեց զսպանակի դեր կատարող պողպատի բարակ շերտերը և գլուխն օրորեց:
- Վախենում եմ չդիմանա, - ասաց նա: - Աջ ճանկի վիզը ժանգը կերել-բարակացրել է...
Թակարդից մի երկաթ էր կախված, ծայրը խարսխաձև:
- Դա էլ նրա համար է, որ երբ գազանը թակարդը թափ տալով փախչի, խարսխի կեռերը բռնեն քարից, թփից՝ նրան ետ պահեն, ուշացնեն, մինչև որ առավոտյան վրա հասնի որսորդը՝ հրացանը ձեռքին, - բացատրեց Աշոտը:
- Իսկ չի լինի՞, որ այդ երկաթի ճանկը կապենք մի ծառից, որ հովազը հենց մնա տեղում մեխված, - հետաքրքրվեց Գագիկը:
Այս հարցուփորձը, այս պատրաստությունները հետզհետե հուզմունքով էին համակում Աշոտին, - չէ՞ որ կյանքում առաջին անգամ փորձում էր բռնել այնպիսի ահռելի գազան, ինչպիսին հովազն է...
Նրա երևակայությունը նորից այնպես էր բորբոքվել, որ միանգամայն իրական համարելով իր արտառոց ձեռնարկությունը, գործնական տոնով բացատրեց.
- Կանգնած չի մնա. թափ կտա կպոկի իր թաթն ու կփախչի: Դրա համար էլ էս խարիսխ-երկաթը ազատ թողնում են քարշ գա հետևիցը: Դե՛, Գագի՛կ, մի կտոր միս տուր դնենք մեջը...
- Առ հոգիս մեջը դիր, բայց միս չեմ տա, - կտրուկ հրաժարվեց Գագիկը: - Հազիվ ենք մի քիչ ուտելիք ճարել, ուզում ես գլխին փորձե՞ր անես...
- Էն կրծածից կդնենք, - տեղից գլխի գցեց Հասոն, որ համեստորեն լսում էր:
Իսկապես, հովազի բաժինը մնացել էր դարավանդում, նրանից էլ հարմար գրավչանյո՞ւթ:
- Գագի՛կ, դու մնա, մենք գնացինք, - ասաց Աշոտը ոչ այնքան ընկերոջ վախը նկատի ունենալով, որքան Շուշիկի վիճակը, որը երբեմն երկյուղալի հայացքներ էր նետում իր տեղում գալարվող ու մռնչացող Սարգսի կողմը:
Դարավանդում (որին տղաներն արդեն Հովազի դարավանդ անունն էին տվել) շատ արծիվներ էին հավաքվել, պարզ էր, որ շարունակում էին հովազի նախաճաշը:
Տղաները քար նետելով քշեցին նրանց:
Ափսո՛ս, միս չէին թողել ագահ գիշատիչները:

---

[42] Արու քարայծը ամբողջ ամառվա և աշնան ընթացքում գիրանում-ճարպ է կուտակում մինչև այծերի զուգավորման շրջանը: Այդ շրջանում մի քանի օրվա ընթացքում այնպես է նիհարում, որ թվում է նոր միայն ազատվել է ծանր հիվանդությունից...

Տնտղեցին նոխազի կրծոտած ազդրերը, «խնձորի» շուրջը մսախառն ջլեր էին մնացել: Կացնով կտրեցին այդ մասը, դրին թակարդի մեջ, ապա նրա երկաթեղեն մասերը բոլորը թաղեցին հողի մեջ, ձյուն շաղ տվին վրան: Բաց մնաց միայն ոսկորի կտորը: Թակարդի բաց ճանկերը նույնպես քողարկված էին ձյունով:
Հետո, արծիվներին խաբելու նպատակով, նրանք նոխազի բոլոր մնացորդները նետեցին նրանց ու վերադարձան քարայր:
«Ա՛յ թե հաջողվի բռնե՛լ... Դա այնպիսի մի դեպք կլիներ, որի մասին նույնիսկ թերթերում կգրեին... Լճավանցի Կամոն, որ լսի, թե Այգեձորի պատանի բնասերները կենդանի հովազ են բռնել, վայ թե նախանձից պայթի... Ո՞վ գիտի, գուցեև ուրախությունից իր խմբով գա մեզ տեսության: Ա՛խ, հովազը բռնենք ու ազատվենք այս ձորի՛ց, մեզնից բախտավոր մարդ չի լինի աշխարհում...», - ճամփին մտածում էր Աշոտը: Նրա ցնորքները նորից շարժվել էին:
Երբ վերադարձան, Աշոտը իրեն հատուկ լավատեսությամբ և ծանր-ծանր դիմեց այրի շեմքին սպասող ընկերներին.
- Հովազի ժամերը հաշվված են... մնաց արջի հետ մաքրենք մեր հաշիվը: Ես կարծում եմ, որ մենք պետք է...
Այդ ժամանակ Աջ ժայռաշարքի ներքին ծայրից, որտեղից դաշտն է սկսվում, կրակոց լսվեց և նրա արձագանքը տարածվեց Հովազաձորում: Վայրկենապես ցնդեցին Աշոտի ցնորքները, շնչառությունն արագացավ, գունատվեց: Մի՞թե իր հայրն էր... Ո՞րս է անում, թե՞ իրենց փնտրում... Անմիջապես լրջացել և ամբողջովին լսողություն էին դարձել մեր մյուս պատանիները ևս: Այդպես լարված մի պահ մնացին, բայց կրակոցը չկրկնվեց և ոչ մի տեղ մարդ չերևաց: Այդ ժամանակ նրանք միաբերան սկսեցին գոչել, ձայն տալ.
- Այստեղ ե՛նք, այստեղ ե՛նք...
Ձայնն արձագանքեց-կրկնապատկվեց ժայռերում: Նորից լռեցին, նորից շնչակտուր ականջ դրին՝ պատասխան չկա:
Արևն անցավ Մեծ Մասիսի հետևը և հրդեհներ վառեց այնտեղ, որոնց ցոլքերը խաղում էին հորիզոնում բարդ-բարդված ամպերի մեջ:
Ցրտեց, մեր պատանիները սկսեցին դողալ, բայց դեռ կանգնած էին Հարավային բարիկադի վրա, խարույկի կողքին: Նրանք փայտ էին դարսում կրակին և երբ մթնեց՝ բոցը երկինք հասավ:
Ո՞վ էր այն կրակողը, գուցե կտեսնի խարույկը և կգա Հովազաձոր...
Գիշերն անհանգիստ անցավ: Այնպես շատ ու ցնցող էին օրվա տպավորությունները, որ քարանձավի բնակիչներից ոչ մեկը կարգին չկարողացավ քնել: Սարգիսը երբեմն գոռում էր և իր ձայնից արթնանալով վեր ցատկում, Շուշիկը աչքը փակելիս ցատկող հովազին էր տեսնում, իսկ Աշոտը դեռ ձայն էր տալիս երազում. «Ով ե՛ս, ով ե՛ս... Այստեղ ենք, այստե՛ղ...»:
Միայն Հասոն էր, որ ձեռքերը դրել էր բաց գլխի տակ և մուշ- մուշ քնել հովվի առողջ քնով: Կրակի թույլ ցոլքի տակ նրա խաղաղ դեմքին կարելի էր կարդալ հոգեկան այն անդորրը, որ հատուկ է միայն իրենց ողջ կյանքը բնության մեջ անցկացնող մարդկանց: «Է՛հ, ի՞նչ վատ կյանք է որ... Սրանից վատն է լինում... Կապրե՛նք, մտածել պետք չի», - կարծես այս էր արտահայտում նրա դեմքը անգամ քնած ժամանակ:
Գիշերն Աշոտը երկու անգամ այրից դուրս նայեց, - չէր լուսանում: Խարույկները իջել-հանդարտվել էին, զարմանալի հանդարտ էր և շրջակայքը: Ոչ մի շշուկ, ոչ մի ծպտուն: «Որտե՞ղ են մեր գազանները, ի՞նչ են անում...», - մտածում էր նա ու անհամբեր սպասում լույսը բացվելուն, որ գնա ստուգի իր լարած թակարդը:
Ի՜նչ երկար է դեկտեմբերի գիշերը...
Առավոտյան շուտ պատանիները կուշտ կերած շրջապատել էին խարույկը, բայց բոլորն էլ մտահոգ էին: Նախորդ երեկոյան դեմ բավական զվարճացել էին հարբած արջի վրա, բայց գազանը հո միշտ հարբած չի՞ մնալու: Իսկ հովա՞զը: Երկուսն էլ այսօր լրիվ կմարսեն իրենց խփշտած ավարը և այն ժամանակ փորձիր այրից դուրս գալ...
Հասոն գնաց նորոգելու դրսի խարույկները, իսկ Աշոտը կացինն էր սրում ողորկ բազալտի վրա:
- Աշո՛տ, թակարդդ հիմի հովազի պոչից բռնած քեզ օգնության է կանչում, - Շուշիկին աչքով անելով ասաց Գագիկը:
- Ձե՞ռ ես առնում... Հիմի կգնանք-կտեսնես... Առ մի քիչ էլ դու քսիր...
- Քսե՛մ... թե սրանո՞վ ես հովազի վիզը կտրելու՝ իհարկե, կքսեմ... Ասում են իբր թե անվանի որսորդ Արամն ու իր որդի Աշոտը...
Նրա խոսքը մնաց կիսատ, դրսից խուլ գոռոց լսվեց, խախուտ դուռը տապալվեց և լնգլնգալեն ներս մտավ հարբած արջը...

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ. Այն մասին, թէ ինչից էր այնքան դժգոհ Միրուք Ասատուրը

Կարելի է ասել, որ բախտի խաղ էր այն, ինչ կատարվեց այդ օրը: Եթե որսորդների խմբերը չգային օգնության և Արամն ստիպված չլիներ սպասելու և նրանց հետ երկար-բարակ խորհրդակցելու, ինքը Հովազաձորի դիմաց դուրս կգար այն ժամանակ, երբ քարայծերը դեռ ձորից չէին վերադարձել: Այն ժամանակ ձորում փակված մեր պատանիները կտեսնեին նրան դիմացի հորիզոնը փակող ժայռաշարքի կատարին կանգնած և ուրախության աղաղակներով կմատնեին իրենց տեղը: Ու այդ պահից վերջ կտրվեր թե՛ իրենց և թե՛ ծնողների տառապանքներին:

Բայց բախտի բերումո՞վ, թե պատահմունքով քարայծերը հանդիպեցին այն զազրելի գազանին, Հովազաձորից դուրս փախան և զգալով, որ իրենց հետապնդողներ կան, ծռվեցին-իջան աղուտները:

Հիմա որսորդների խումբը հավաքվել, կրակ է վառել տափաստանում՝ Հովազաձորի Աջ ժայռաշարքի ծայրին: Արամը, հեռու նստած, նայում է որդու գլխարկին ու լալիս է նրա սիրտը առանց արցունքի: Դե ե՛կ, քանդիր այս հանելուկը... Ա՛խ, թե այդ կենդանին լեզու կունենա՛ր... Արամը հազար թակարդ կդներ ժայռերում, հազար հնարք կբանեցներ, կբռներ այդ նոխազին ու կհարցներ.

«Որտե՞ղ է այս գլխարկի տերը...»:

Հիմա կրակի մոտ մեկնված է այն կենդանին, որ տեսել է իր որդուն, բայց չի կարող պատմել, թե որտե՞ղ է տեսել, ո՞ւր է նա...

Միրուք Ասատուրը մռայլ ու մտախոհ ծխում էր իր հնամենի չիբուխը: Բոլորի հայացքները նրան էին հառած, բոլորը նրանից էին բացատրություն սպասում: Բայց ի՞նչ ասեր ծեր որսորդը: Շատ բան էր տեսել նա իր կյանքում, բնության շատ զարմանալի երևույթներ կարող էր բացատրել, բայց թե ինչպե՞ս է Արամի որդու գլխարկը նոխազի եղջյուրը խրվել՝ ոչ մի կերպ բացատրել չէր կարողանում:

Դժգոհ էր նա իրենից և անհարմար էր զգում օտար մարդկանց առաջ:

- Է՛հ, ասլան բալա, ինչպես երևում է մեր գալն իզուր էր քանի որ պետք չեկանք, - իրենից անբավական դիմեց նա թոռանը:

- Չէ՛, քեռի Ասատուր, չգայիր՝ էս էծը հիմի էստեղ պառկած չէր լինի ու գլխարկն էլ չէր ճանաչվի: Քո կրակոցը մեզ համար պարզեց, որ երեխեքը մեր հանդում են կորել, ուրեմն էլ ուրիշ տեղ փնտրել պետք չի: Դա էլ քիչ բան չի, քեռի Ասատուր: Սրտովս սև արյուն է գնում, աչքերս շաղված են, ես չէի կարող խփել. էսօր մի անգամ էլ եմ կրակել վրան՝ չի կպել: Որ մտածում եմ, թե էն իմ բալի գլխարկն է վիրու անասունի գլխին, սիրտս կտրատվում է, աչքերս շաղվում են... Գնանք, ցրտում է, գյուղ գնանք, դուք էլ հոգնած եք՝ կհանգստանաք..,

Նրանք իջան Այգեձոր, Միրուք Ասատուրը իր թոռան հետ գիշերեց Արամի տանը, իսկ Գրիգորն՝ իր հորաքրոջ մոտ, որն այդ երեկո հուզմունքից և՛ լալիս էր, և՛ ամենահամեղ պատառները դեմ անում իր եղբոր որդուն ու պաղատում.

- Կե՛ր, աչքերիդ մատա՛ղ, կե՛ր, Գագիկիս տեղն էլ կեր, որ սիրտս հովանա: Եվ շուռ գալով՝ գաղտնի սրբում էր արցունքները:

- Լավ կլինի, կնի՛կ, լաց մի՛ լինի, էս լեն աշխարհում ո՞ւր պիտի կորչեն, - ավելի շատ իրեն, քան կնոջը սիրտ տալու համար ասում էր Արշակը:

- Ի՞նչ ասեմ, ի՞նչ ասեմ, Գագիկս լիներ՝ ո՛նց կուրախանար քեզ համար, Գրիգոր ջան, - մրմնջում էր կինը:

Գրիգորի ժամանելով իր հորաքրոջ վերքերը բացվել էին: Այդ գիշեր նա չքնեց, իսկ առավոտյան, նախաճաշից հետո, երբ լսեց դպրոցի զանգը, նորից սկսեց արտասվել:

- Գնո՛ւմ են, բոլորն էլ դպրոց են գնում, բացի իմ բալից, - մղկտում, մրմնջում էր դժբախտ մայրը: - Գրիգոր ջան, ամեն անգամ զանգի ձենը լսելիս սիրտս կտրատվում է... Ամեն անգամ նրա ընկերներին տեսնելիս աչքերիցս հեղեղ է թափվում: Որ տեսնում եմ դասագրքերը ծալած, թանաքը չորացած՝ գլխիս կրակ է մաղվում...

- Այ կնի՛կ, դե հերիք է, մի՛ լացացնի էդ երեխին, է՛- արքով հանդիմանեց Արշակը ու քայլերն ուղղեց դեպի իր ընկեր Արամի տունը:

Իսկ այդ պահին Միրուք Ասատուրը գոռգոռում էր կոլխոզի նախագահի վրա:

- Ի՛նչ սառնասիրտ մարդիկ եք տո՛... Երեխեքը կորել են. իսկ դուք ամեն մեկդ սկյուռի նման ձեր բույնը պաշարով եք լցնում...

- Ի՞նչ անենք, - պատասխանեց նախագահը:

- Ինչ անե՞ք, - զխկո՛ւմ արեք, - ափերից դուրս եկավ դյուրաբորբոք ծերունին: - Էն կորած երեխաներից ամեն մեկը ինձ ու քեզ պես հինգ մարդ արժեն, իսկ դու, լսել եմ, որ Երևանի ձեր խանութի մասին ավելի ես մտածում, քան մարդու մասին, որովհետև... որովհետև... նալլաթ քեզ չար սատանա, բերանս ինչ է գալիս հա՛...

Այնպես էր զայրացել ծեր որսորդը, որ կարմրատակել էր ամբողջովին և ձեռքը բնազդաբար տարել դաշույնի դաստակին, ինչպես միշտ անում էր մեկի վրա հոխորտալիս;
- Ասատուր մի ասի, կրակի կտոր ասա, - շշնջաց շեմքին կանգնած կոլխոզնիկներից մեկը:
- Հա՛, կեծացած երկաթ է, հո մարդ չի: Համա ճակատին շրպացրեց է՛...
- Աչքն էլ հանեց...
Այդ քչփչոցը ևս նախագահի ականջին հասավ և նա վիրավորված դուրս գնաց, իսկ ծերունին, մի քիչ հանգստանալուց հետո,, ասաց.
- Վեր կացեք, Արա՛մ, Արշա՛կ, հավաքեցեք մարդկանց՝ հանդերը գնանք, իմ շունչը կտրվում է ձեր գյուղում... Էն է, Կամոն էլ պիոներներին բերեց, - պատուհանից դուրս նայեց ծերունին և վայրկենապես հարթվեցին դեմքի կնճիռները, խիստ հայացքը ջերմացավ: - Հա՛, Սիրան ջան, - տնավարի դարձավ նա Արամի կնոջը, - հիմիկուց հետս դիր իմ ճամփու պաշարը, քնելու եմ հանդերում ու էնտեղից էլ դենը գնամ մեր երկիրը:
- Ինչո՞ւ, բա ետ չե՞ս գալու, Ասատուր քեռի, - անհանգստացավ Սիրանը:
- Չէ, Է՛ն գյուղը, որ էսպես անսիրտ նախագահ ունի, էդ գյուղը ես ոտք չեմ դնի, - կտրուկ հայտարարեց ծերունին և հրացանը վերցնելով՝ դուրս եկավ տնից:
Այնուհետև հանդերը լցվեցին գյուղացիների ու վզկապավոր պատանիների խմբերով: Նրանք հետախուզեցին բոլոր ժայռերը, նրանց ծերպերն ու փչակները այն հույսով, թե գուցե մի նշան գտնվի: Երեկոները խմբերով իջնում էին ձորակներում ծվարած ձմեռանոցները, հյուր էին մնում հովիվներին, իսկ ցերեկները նորից բարձրանում լեռները:
Փոքր Կովկասի Մաս ի սին նայող բոլոր լանջերը, բոլոր ձորակներն ու ժայռերը նրանք հետախուզեցին, բայց ոչ մեկի մտքով չանցավ գնալ Հովազաձոր, թեև շատ անգամ մոտեցան նրան, անցան նրա կողքով: Ո՛վ կարող էր ենթադրել, որ Աշոտն իր ընկերներով գնացել է այնտեղ, ուր սրտոտ մարդը ամառն անգամ մուտք չի գործում, ո՛ւր մնաց ձմեռը...
Այն ժամանակ Արամը պիոներներին գյուղ վերադարձրեց, իսկ հասակավորներին հավաքեց մի տեղ և սիրտը լցված դիմեց նրանց.
- Շնորհակալ եմ բոլորիցդ էլ, իմ ազիզ համագյուղացիներ, և քեզանից նույնպես, քեռի Ասատուր: Ինչ որ պետք է՝ դուք արիք ինձ համար, սրանից դենը ձեր չարչարանքը ավելորդ է: Գնացեք ձեր տները, իսկ ես կմնամ ֆերմաներում, չոբանների հետ հանդ կգնամ, գուցե մի տեղից մի դուռ բացվի իմ փակված բախտի առաջ...
- Չէ՛, էդ ի՞նչ ես ասում, Արա՛մ ընկերությունը ես էդպես չեմ հասկանում, - բողոքեց ծերունին:
Նա ոչ մի պայմանով չէր համաձայնում վերադառնալ իրենց գյուղը, քանի չի գտնվել կորած երեխաների հետքը: Բայց Արամին հաջողվեց համոզել նրան, մանավանդ, որ չէր կարելի Գրիգորին դպրոցից այդքան ետ գցել:
Այն ժամանակ որսորդ ծերունին համբուրեց իր կրտսեր ընկերոջ ճակատն ու փիլիսոփայեց իր հանգի.
- Մարդս հույսով է ապրում էս աշխարքում, Արա՛մ: Հույսը որ չլինի, մարդը կխելագարվի: Ոչ մի րոպե հույսդ չկտրե՛ս: Էս բարի լույսը վկա, սիրտս վկայում է, որ երեխեքը կենդանի են...
- Է՛հ, երկինքը քո սրտովը տա քեզ, քեռի Ասատուր: Շնորհակալ եմ, բարի ճանապարհ...
Եվ Կամոյին ու Գրիգորին համբուրելով՝ Արամը ճանապարհ գցեց լճավանցիներին դեպի Ագրիջա լեռը, որ կանգնած էր վերևում, ամպերի մեջ, ծեր Արարատին դեմ հանդիման:
Գնաց ծեր ունի որսորդը դեպի լեռները, գնացքով ճամփորդելը հակառակ էր նրա տարերքին: Գնաց ու հետը տարավ դաշտեցիների ջերմ համակրանքը: Իրոք, լավ անուն և լավ հուշեր էր թողնում Միրուք Ասատուրը Այգեձորի մարդկանց սրտերում:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ. Թե ինչպես ցնդեց այն առասպելը, որ իբր թե երեխաները փախել են Հեռավոր Արևելք

Արամը քունն ու դադարը կորցրած՝ մինչև գարուն սարերից տուն չէր գա, եթե մի դեպք չջախջախեր նրա թևերը և վերջ չտար նրա թափառումներին:
Արարատյան դաշտի այն հատվածը, որ տարածվում է Հովազաձորից ներքև, ինչպես արդեն ասել ենք, ամուլ ու մերկ է մինչև Արաքսի ձախ ափը, ուր թփուտների և եղեգնուտի մի նեղ շերտ է ձգվում գետին զուգահեռ: Բուսական այդ շերտն էլ չէր լինի, եթե ամեն գարնան հորդացող Արաքսը դուրս չգար իր հունից և չողողեր ափերը: Այդ միակ տափաստանը մի բեկորն է այն անապատի, որ վերջին տասնամյակների ընթացքում հետզհետե ոռոգվեց, մշակվեց և պատեց խաղողի այգիներով ու բամբակի պլանտացիաներով:

Երկու կողմից սեղմված կուլտուրական մշակույթների միջև անապատի այդ կտորը ունկնդրում է իրեն հասնող մետաղե ձայներին, ջրի խոխոջին և պապակ սրտով սպասում իր մոտալուտ փրկությանը: Այժմ, սակայն, նա դեռ ամուլ է և ամռան շոգին այնտեղ աճում են միայն ծուռումուռ ուղտափուշը և արծաթագույն մազմզուկներով ու արբեցուցիչ հոտով օշինդրը:
Տափաստանի այդ հատվածում պիտանի բուսականություն կա միայն կենտրոնով անցնող հեղեղատի ափերին: Սկսած Հովազաձորի ներքին պռունկը եզերող ժայռերից մինչև Արաքսի առափնյա թփուտները, իրար զուգահեռ երեք նեղ շերտեր են ձգվում, կենտրոնի գորշ ու քարքարոտ շերտը խորհրդավոր հեղեղի հունն է, իսկ նրա երկու կողքերից ձգվող դեղին շերտերը հեղեղով ջրված ու աճած խոտն է, որ այժմ չորացած սվսվում է ձմռան ցուրտ հողմերի առաջ:
Նոր էր ձյունը վեր կենում դաշտից, խոտառատ այդ արոտը այնպես էր փափկել, որ հեռվից դեպի այդ դեղնած շերտերն էին ձգվում բոլոր կճղակավորները, և առաջին հերթին՝ մուֆլոնները:
Հովիվ Ավդալը հանդերը մասերի էր բաժանել և հերթականությամբ արածացնելով՝ հասել էր Արարատյան դաշտի ասածս խոպան մասին ու կանգ առել:
Արամի հետ միասին հետապնդելով քարայծերի խմբին, նա տեսավ առատ բոզախոտը հեղեղատի եզրերին և վճռեց հոտն արոտի բերել այդ վայրը:
Մինչ որսորդները թափառում էին հանդերում, նա ոչխարի հոտը քշեց հեղեղատ և ցածրահասակ կենդանիները կուլ գնացին խոտի շեկ ծովին:
Հոտը փռված արածում էր, իսկ հովիվ Ավդալը տխուր ու դարդոտ եղանակներ էր նվագում իր սրինգով.
- Լո՛, լո՛, լո՛, լո՛...
Քուրդ հովիվները սովորություն ունեն իրենց հետ մեկ-երկու ավանակ ունենալու: Նրանց վրա է ամրացված ուտելիքով լիքը խուրջինը: Եվ երբ հանդում ոչխար է ծնում, գառներին մտցնում են խուրջինի «թայերը» ու հանգիստ կենդանին օրորելով տուն է տանում իր մեջքին բազմած նորածիններին: Իսկ որ օրը ծնունդ չի լինում հանդում, հովիվները վառելիք են հավաքում ու բարձում էշերին, հարմար չէ, որ բեռի սովոր կենդանին դատարկ մեջքով տուն վերադառնա...
Երբ արևը թեքվեց դեպի Հայկական Պար, Ավդալը իր կրտսեր ընկերներին հեղեղատից ցախ հավաքելու կարգադրություն արավ:
Սրանք զարմանքով տեսան, որ շատ փայտ կա հեղեղատում ցրված: Իսկ երբ հավաքում էին փայտը, որ բարձեն էշերին, շներից մեկը ներքևից եկավ՝ մի աբա բերանն առած... Բերեց, հանձնեց տիրոջն ու նրա խելացի աչքերը կարծես հարցնում էին. «Մի տես, սա մեր Հասոյի աբան չի՞...»:
Այդ հողոտ ու կոշտ շորի տեսքից աժդահա հովվի սիրտը թպրտաց, արցունքը դեմ առավ կոկորդին ու սկսեց խեղդել նրան: Շուռումուռ էր տալիս իր որդու զգեստը և ցավից ուզում գոռալ, իմաց տալ աշխարհին իր մեծ կորուստի մասին:
- Որտեղի՞ց գտար, Չալո ջան, որտեղի՞ց, - մղկտալով և արցունքները կուլ տալով հարցնում էր նա:
Եկան, գլխին հավաքվեցին ընկերները, տնտղեցին շորը, մնացին սառած. իսկ և իսկ Հասոյինն է...
- Լո՛, լո՛, լո՛, լո՛... Ուրեմն Հասոն կենդանի՞ չէ, Հասոն խեղդվե՞լ է...
- Գնանք ցույց տուր, Չալո ջան...
Հեղեղատով ցած գնացին շան հետևից, անցան Արարատյան դաշտը կտրող ճանապարհը, որ գալիս էր Այգեձոր և այլ գյուղերից, և կանգ առան հեղեղի կողմից խոշտանգված մի թփի մոտ: Շունը հայացքով հասկացնում էր, որ այդտեղ էր դեմ առած Հասոյի Աբան:
- Էս ի՞նչ թուղթ է, - և հովիվներից մեկը կռանալով տիղմի միջից մի գիրք հանեց: Գտան և ցեխի մեջ թաղված մի տետր, որի միայն մի եզրն էր երևում:
- Հեյ վա՛խ, հեյ վա՛խ: Երեխեքին էլ հեղեղը տարել է... - ասաց վշտահար հովիվը:
Նստեց հեղեղատի բարձր պռնկին, գլուխն առավ ափերի մեջ և այդ դիրքով նա կարծես վիշտն ինքն էր մարմնացած...
- Լո՛, լո՛, լո՛, լո՛...
Սիրած որդուն կորցնելուց ծանր վիշտ կա՞ աշխարհում...
Երկար թափառումներից հետո գյուղ վերադարձավ որսորդ Արամը, սևակնած սրտով վերադարձավ: Ծանր նախազգացումով մտավ տուն և տեսնելով կնոջ նիհարած-կանաչած դեմքը, վշտից ճերմակած մազերն ու փոս ընկած աչքերը, փշրված սրտով ընկավ աթոռին:
- Մեր Աշոտը չկա, - փղձկաց կինը: Այլևս արցունք չկար նրա աչքերում, այնքան էր լացել ու ողբացել: Միայն նիհար ուսերն էին ցնցվում:
- Մի բան ասա հասկանանք, - մռնչաց Արամը՝ սրտին գնդակ առած կենդանու նման:
- Հեղեղը տարել է երեխանցը...
- Ո՛ր հեղեղը:
- Դժոխքի ուղարկած...

Ու կինը լալով պատմեց հեղեղատում գտնված նշանների մասին: Ապա ծալքի տակից հանեց որդու ցեխոտ տետրն ու մեկնեց, ամուսնուն.
- Էս է մնացել մեր Աշոտից...
- Բալա ջա՛ն... Բալա ջա՛ն... - Տետրը դեմքին սեղմած՝ ցավից տնքում էր Արամը:
Ապա վեր կացավ, գնաց հանրային ախոռը, երկու ձի թամբեց, և մեկին հեծնելով, քշեց Արշակի տուն:
- Նստիր գնանք, - ասաց նա ընկերոջը:
Սա դուրս էր եկել տնից աչքերն ուռած-կարմրած, իսկ ներսից լացի ու հառաչանքի ձայներ էին լսվում:
- Ո՞ւր... - հազիվ հարցրեց Արշակը: Այդ աժդահա մարդը մի ժամվա մեջ կուչ էր եկել-փոքրացել, հաղթ ուսերը կախ էին ընկել:
- Գնանք հեղեղատի կողմը, տեսնենք ինչ կա, ինչ չկա...
Արշակը լուռ հեծավ ձին, և նրանք մտրակեցին երիվարներին ու սլացան դեպի չարաբաստիկ հեղեղատը, որ ահից ու դժբախտությունից բացի, ուրիշ բան չէր բերել այգեձորի սերունդներին:
Արևը մտնում էր, երբ հասան հեղեղատին, ձիերը կապեցին անապատային մի թփի ու առաջ գնացին երբեմնի ջրի հոսանքն ի վար: Նրանք կանգ էին առնում, կռանում, զննում ամեն մի փայտի կտոր: Մի քարի տակից գրքի ծայր երևաց: Հանեցին տիղմի մեջ թաղված դասագիրքը, բաց արին: Ո՞ւմն է. հայտնի չէր, ամեն ինչ ցեխոտվել-անընթեռնելի էր դարձել: Թերթեցին, բաց արին անարատ մնացած թերթերը: Ռուսերեն գիրք էր: Ահա մի կտոր ծեր Ջամբուլի բանաստեղծություններից.

Пой от скорби и горе, Джамбул,
Пой печальней осенних рек...

- Սա ո՞ր գրքից կլինի, Արշա՛կ:
- Կաց, դա հո մեր Գագիկն էր անգիր սովորում... յոթերորդցիների գիրքն է, ռուսերենի ընթերցանության գիրքը: Վա՛յ, Գագիկ ջան, որտե՞ղ մնացիր...
Եվ դժբախտ հայրը, գլուխն ափերի մեջ առած, հեկեկում էր երեխայի նման: Հիշում էր որդու մշտուրախ դեմքը, ծիծաղը սև աչքերի մեջ, կատակները... Ո՞նց կարող է հողն ընդունել այդպիսի երեխայի, ի՞նչ խղճով...
- Գնանք, Արշա՛կ, տեսնենք է՞լ ինչ կգտնենք .
Եկան-տեղ հասան և պիոներները, եկան հարևան, բարեկամ, համագյուղացի և հեղեղատը պրպտելով՝ իջան մինչև Արաքսի ափը: Նրանք մի քանի դասագրքեր և տետրեր ևս գտան՝ բոլորն էլ Երևան տանող մեծ ճանապարհից ցած: Եվ մարդիկ խորհրդի նստեցին ու եկան այն եզրակացության, որ պատանիները, ճամփով անցնելիս, ընկել են հանկարծակի վրա հասած հեղեղի բերանն ու քշվել դեպի Արաքս:
- Բա դեսն ո՞ւր գնալիս կլինեին, - տարակուսում էր Արշակը: - Բա էն թղթերը ի՞նչ էին, Հեռավոր Արևելքը՞ որն էր...
Ճանապարհը անցնում էր հերթական կայարանի մոտով, գուցե երեխաները ֆերմայից մոտիկ կիսակայարանը գնալու փոխարեն մտածել են գնացք նստել «իսկական կայարանից» և ճամփին ընկել են հանկարծահաս հեղեղի բերանը...
Մի բան անհասկանալի էր մնում, թե ինչո՞ւ նրանք չեն փախել հեղեղից, չէ՞ որ հորդացած ջուրը գոռում-գոչյունով է մոտենում...
Ուշացած տեղ հասավ պահեստապետ Պարույրը՝ ճերմակ կիսամուշտակը հագին, երկարաճիտ կոշիկներով: Եկավ, իր սովորության համաձայն առանց բարև տալու սկսեց կարկուտի նման վրա տալ: Զարմանալի մարդ է այդ Պարույրը, կարծես ծանրաշարժ ու ծույլ Սարգսի հայրը չլինի, որդու շարժունակին հակառակ՝ նա խոսում է արագ, ձեռքերը թափահարելով, քայլում է արագ, աչքերը ման է ածում արագ, և ոչ մի բանի վրա չի կենտրոնանում ո՛չ ինքը, ո՛չ միտքը, ո՛չ հայացքը: «Քաջքաքամի է, հո մարդ չի», - մի անգամ սրա բնավորությունը բնորոշել էր որսորդ Արամը: Սովորություն ունի խոսելիս տեղի-անտեղի աչքով անելու խոսակցին, կարծես նրա հետ ինչ-որ դավադրության մեջ լինի... - «ժուլիկ մարդ է», նրա մասին կարճ ասում էին այգեձորցիք:
Այս անգամ էլ հայացքն արագ ման ածելով՝ արագ-արագ հայտնեց իր կարծիքը.
- Ով գիտի, գուցե հոգնած նստել են խոտերի մեջ, հաց կերել ու մեկնվել-քնե՞լ... Քնածն ու մեռածը մեկ է... Էլ չխոսենք: Էդ է որ կա...
Եվ որովհետև Պարույրի գլուխը տաքացած էր, նա չսոսկաց իր արտահայտած այդ մտքից: Այդ ենթադրությունը ամենից հավանականը համարվեց, այդ վայրերում, ինչպես մենք արդեն գիտենք, պառկելու համար փափուկ խոտ միայն հեղեղատի ափերին կար, որը և գրավել է երկար ճամփորդությունից հոգնած պատանիներին:
Նոյեմբերի 7-ի արևոտ օրը մեկնվել են նրանք չոր խոտին և այնպես խոր են քնել, որ չեն զգացել հեղեղի մոտենալը...

Մի բան միայն դարձյալ մնում էր անհասկանալի, ինչպե՞ս էր Աշոտի գլխարկը խրվել նոխազի եղջյուրը... Այս դեպքը վերջնականապես ընկճեց որսորդ Արամին և նա դադարեց փնտրել իր որդուն:
Այգեձոր գյուղում այդ օրերին սուգ էր, հետաձգվել էին բոլոր քեֆերն ու հարսանիքները: Նկուղներում կանգնած էին գինով լի կարասները, բայց ո՜վ խնջույքի սիրտ ուներ:
Ով էլ զվարճանալ էր ուզում, դա անում էր անաղմուկ, առանց նվագի, որպեսզի չվիրավորի դժբախտ ծնողներին...
Կոլխոզի նախագահ Հարութը պատահեց ծերունի փոստատարին՝ ծանր պայուսակը տնքալով տանելիս.
- Էլի նամակնե՞ր են:
- Հա՛, ընկեր նախագահ, ձեզ են ուղարկել, երևի էլի երեխաների մասին են հարցնում:
- Հոգիներս դուրս եկավ դրանց պատասխանելով, տո՛... Բա մենք էլ բան ու գործ չունե՞նք, - բարկացավ Հարութը: - Համը հանեցին, էլի՛... Բոլորին էլ պատասխանիր, որ խեղդվել ե՛ն, չկա՛ն,., պրծա՞նք... Չեն թողնում հանգիստ մեր գործին կենանք, ախպե՛ր, ամբողջ օրը նամակներին պատասխանելով ենք զբաղված:
Ճերմակ մազերով շրջանակված ծերունու դալուկ այտերը վայրկենապես հրդեհվեցին, վզի երակները ուռան:
- Չար մի լինի, Հարո՛ւթ, էս ուղտը մի օր էլ քո դռանը կչոքի:
Նրա աչքերում ծանր հանդիմանանք կար:
- Ի՞նչ է, սպառնո՞ւմ ես: Լեզուդ մի՛ երկարացնի, թե չէ պաշտոնից կհանեմ:
- Ախ քո պաշտոնը...
Եվ ծերունին նախագահի առաջ նետեց թերթերով ու նամակներով լի պայուսակը:
- Ես քեզ նման նամարդ մարդի ձեռքի տակ չեմ աշխատի... Դու հոգի չունե՛ս... Դու բոլոր բաներում էլ էստեղ ես հասցրել... Նա ցույց տվեց իր կոկորդը և շուռ եկավ գնաց:
- Դու պատասխան կտաս իշխանությանն անպատվելու համար, - հետևից լսեց նա Հարութի սպառնալիքը:
Գնաց դառնացած սրտով փոստատար Մուրադը, այլևս ուժ չուներ խաբելու վշտահար ծնողներին, այլևս չէր կարող դիմանալ նրանց հարցական հայացքներին՝ «Բա մի լուր չե՞ս բերել, քե՛ռի Մուրադ...»:
Այո՛, նա մեծ հույս ուներ բերելու երեխաների գտնվելու լուրը և «աչքալուսանք» անելու նրանց ծնողներին: Ինչպե՛ս կուրախանար որդուց զուրկ ծերունին իր հարևանների երջանկությունը տեսնելով:
Այդ հեռանկարով էր նա օրական երկու անգամ ձյունին ու բքին գնում շրջկենտրոն: Սիրո՛վ էր գնում, այդ հեռանկարը ուժ էր տալիս նրա թուլացած ոտքերին:
Ցնդեցին ծերունու հույսերը և դրանից հետո հանգավ նրա ներսում այն կրակը, որ ուժ էր տալիս նրան: Այլևս սիրտ չուներ փոստ գնալու:
- Մինչև ե՞րբ կեղծեմ... մինչև ե՞րբ դերասանություն անեմ, - շշնջում էր նա դառնացած:
«Հիմի էլ թող ուրիշը բերի փոստը... թող ուրիշին հարցնեն...», - մտածում էր ծերունին և անիծում այն օրը, երբ ինքը ուրախ-ուրախ փոստարկղ կախեց ֆերմայում:
Խիղճը հանգիստ չէր. նրան թվում էր, թե ինքը ակամայից մասն ունի երեխաների խորհրդավոր անհետանալու մեջ:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե ինչպես մարդուս սիրտը ամրանում է փորձանքների մեջ

Երբ տապալվեց խախուտ դուռը և ներս ընկավ հարբած արջը, հասկանալի է, որ անասելի խուճապ ու իրարանցում ընկավ քարանձավի բնակիչների մեջ:
Սարգիսը գոռաց և փախավ այրի խորքը, Շուշիկը թույլ ճիչ արձակեց, իսկ Աշոտը գոչում էր.
- Կրակո՛վ, կրակո՛վ...
Հասոն ձեռքի կացինը ցած գցեց ու վառվող փայտերը նետեց, կենդանու, վրա, Աշոտը մահակով օջախի կրակը արագ-արագ դեպի շեմքն էր շպրտում:
Արջը գոռգոռալով դուրս փախավ և ներքևի թփերի մեջ պպզած՝ լիզում էր իր այրված թաթն ու մռթմռթում, երևի դժգոհում էր, որ այնքան հյուրընկալ այրն այս անգամ անբարյացակամ է ընդունել իրեն:
Աշոտը, Հասոն և Գագիկը, մի-մի խանձող ձեռքներին, կանգնել էին այրի շեմքին և զգում էին, որ արջն այլևս այնպես սարսափելի չէ, ինչպես սարսափելի էր երեկ, երբ գինու ազդեցության տակ կտրում էր իրենց ճամփան:
Գագիկը, որ, համենայն դեպս, մի ոտքով այրի ներսում էր, լեզու ցույց տվեց արջին և նույնիսկ կատակեց.

- Սիրտդ չի՞ կտրվում մեր տնից, ազիզ ջան... Կարծում ես հենց ամեն օր վառեկ ու գինի՞ կստանաս...
Արջը շարունակում էր մռթմռթալով նայել այրի մուտքին, մսի հոտը խելքամաղ էր անում նրան:
- Հա՛, հասկացա, բրդո՛տ քեռի, գինին խմել ես՝ ախորժակդ բացվել է: Ա՛ռ կե՛ր...
Ու Գագիկը մի կարմրած ածուխ նետեց, որ արջի առաջ թշշաց ձյան մեջ և ծուխ ու դարբնոցահոտ արձակեց: Այդ չնչին ածուխի կտորից, նրա չնչին թշշոցից ահագին գազանը ետ փախավ:
- Տո՛ սա հո վախկոտի մեկն է եղել... Տո՛, Աշոտ, դա ի՞նչ է, որ մինչև օրս վախեցել եք դրանից...
Այնպես էր ուրախացել Գագիկն այդ նորությունից, որ շարունակ կատակելու և զվարճանալու պահանջ էր զգում: Դա բեկման պահ էր նրա կյանքում: Դա այն պահն էր, երբ մանկական օրերից եկող երկյուղը իր դիրքերը զիջում է արդեն առնականացող պատանու մեջ նոր-նոր ծնված արիությանը: Դա աճումն ինքն էր: Եվ Գագիկը զգում էր իր աճը, զգում էր, որ իր հոգին ազատվում է երկյուղի հարատև կաշկանդումից: Զգում էր, որ տղամարդ է դառնում: Զգում էր այդ ամենը և հպարտանում, հրճվում, հրճվում...
- Տո կաց, ես դրա քուրքը խանձեմ է՛, - գոչեց նա ոգևորությունից կերպարանափոխված և մի եղևնու յուղոտ ճյուղ վառելով՝ քշեց արջի վրա: -Ես հո մենակ էլ դրա հախից կգամ, դո՞ւք ուր եք հետևիցս գալիս,
- մի քանի քայլ անելուց հետո ետ նայելով՝ դիմեց նա իրենց տեղում անշարժ կանգնած ընկերներին: Սրանք հասկացան այդ ակնարկը (դե մարդ հո՞ մի վայրկյանում սրտոտ առյուծ չի դառնա) և խանձողները պտտեցնելով օգնության գնացին իրենց ընկերոջը: Գագիկը քաջալերված առաջ վազեց (իհարկե, չմոռանալով շուտ-շուտ ետ նայել...) և բերկրանքով տեսավ, որ գազանը թփերը ջարդելով փախչում է... Կենդանին շփոթ քայլերով աճապարեց ներքև և հասնելով հարավային բարիկադին, շտապելուց նրա գլխից ցած գլորվեց:
Նա ափալ-թափալ ցած նետվեց ճգնավորի պատրաստած քարե աստիճաններից, գնաց-հասավ ներքին տափարակն ու խաղողի այգու մեջ պպզելով, սկսեց իրեն-իրեն մռթմռթալ: Երբեմն էլ վեր էր քաշում ծանրացած գլուխն ու խեղճ-խեղճ նայում քարակույտերից վեր ելնող ծխի ժապավեններին:
- Մի դենը նայեցեք, Շուշիկի նման տանձ է կշռում...
Իսկապես, խիստ հարբելուց հետո թեև անցել էր մեկ և կես օր, բայց երևում էր, որ կենդանու գլուխը դեռ ծանրացած էր. դե Արարատյան մաճառի զորությանը իսկի նախագահ Հարութը չի դիմանում, ա՞րջ կդիմանա...
Բարիկադի վրայից նայում էր Շուշիկն այդ տեսարանին ու ծիծաղում, թեև նրա արցունքները դեռ չէին չորացել: Ծիծաղում էին և տղաները, միայն Սարգիսն էր կրակի մոտ անտարբեր պառկած:
- Ազիզ ջան, մի ուռա կանչիր է՞, - Շուշիկին ասում էր Գագիկը և նկատելի էր, որ նրա ուրախությունը սովորական չի, այլ վերածնվող մարդու ուրախություն է:
Ետ եկան, հևալով կանգ առան այրի մուտքի առաջ: Ընկերները հետաքրքրությամբ դիտում էին Գագիկին: Նրա նիհար ու վտիտ դեմքը շառագունել էր, սև աչքերը վառվում էին ածուխների նման:
- Հաղթանակի դափնիները պատրաստե՞լ ես, ազիզ ջան:
- Պատրաստել եմ, հիմա կբերեմ...
Եվ Շուշիկը այրի խորքից մշտադալար կենու մի ճյուղ բերեց, կորացրեց, ծայրերը կապեց իրար և հագցրեց տղայի գլուխը և ոսկեգույն մի տերև էլ ամրացրեց նրա կրծքին.
- Սա էլ քեզ «Արջ հաղթելու շքանշան», - ծիծաղեց նա:
- Կատակի ժամանակ չի, կրակներ պետք է վառենք այրի առաջ և ներքև, քարե աստիճանների տակ, թե չէ դա մսի հոտ է առել, մեզանից ձեռք չի քաշելու, - ասաց Աշոտը և գործի անցավ:
Քիչ անց արդեն ծուխ էր բարձրանում թե՛ անձավի առաջ, թե՛ քարե աստիճանների վրա, թե՛ մանավանդ «բարիկադների» գագաթներին:
Նայում էր Աշոտը ծխացող խարույկներին և նորից ու նորից շարժվում էին նրա ցնորքները... Ահա իրենց բերդը, ահա նրա աշտարակներից շեկ բոցեր են ելնում դեպի երկինք, իսկ պահակները արթուն կանգնած են բուրգերի վրա...
Քարակույտին կանգնած, նա իր վառ երևակայության թևերով տեղափոխվել էր մի այլ աշխարհ, իսկ Գագիկը շարունակում էր լեզու ցույց տալ հեռվում կանգնած գազանին:
Աշոտն ուշքի եկավ և այսպիսի խոսքերով դիմեց իր ընկերներին.
- Սա քնահարամ եղած արջ է: Մեր ներկայությամբ սա ձմեռվա քուն չի մտնելու և հենց որ սովեց՝ ամեն ավազակություն էլ անելու է: Ձորում կեր չի մնացել, ուզի-չուզի մեր ուտելիքն է խլելու, և եթե շատ սովեց, կարող է նույնիսկ...
Տեսնելով, որ երկյուղ է գծագրվում ընկերների դեմքերին, նա իր միտքը չշարունակեց և անցավ իր բուն մտադրությանը.
- Արջին այնպես պետք է վախեցնենք, որ նա սրանից հետո սիրտ չանի մեզ մոտենալ... Իմացե՛ք, որ բնության մեջ ամենից ուժեղը մարդն է: Մենք ձեռներ ունենք: Նա՝ չունի: Մենք խելք ունենք, հազար

հնարք կմտածենք, նա՝ չունի, - ներշնչում էր Աշոտն իր ընկերներին: - Դե՛հ, մի-մի խանձող վերցրեք ու հետևեցեք ինձ...
- Զորավարն առանց նիզակի՞ կռվի գնա, - Շուշիկին աչքով անելով ասաց Գագիկը: Իր տիտղոսից շոյված, Աշոտը Գագիկի հետ մտավ այրը՝ նիզակը վերցնելու, իսկ Հասոն մնաց քարե աստիճանների վրա:
- Բայց, Աշո՛տ, վախենում եմ արջի մորթին փչա...
Գագիկի բերանը բաց մնաց, դրսից այնպիսի գոռոց լսվեց, որ կարծես այրի կամարները ցնցվեցին:
- Հասոյին կերավ, - գոչեց Աշոտն ու նիզակը վերցնելով, դուրս վազեց:
Երբ հասավ քարե աստիճաններին, իր հետևից լսեց Գագիկի ահաբեկված ձայնը.
- Վախես ոչ, Աշո՛տ, հետևիցդ կրնկակոխ գալիս եմ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ինչպես թյուրիմացաբար կռիվ ծագեց նրանց միջև, ովքեր միշտ խուսափում են իրար հանդիպելուց

Դեռ կերածը կարգին չէր մարսել, դեռ արևը նոր էր ընկել Մասիսի սառցադաշտերին, երբ դուրս եկավ իր ժամանակավոր որջից և նրա չալ մորթին հուրհրաց արշալույսի ցոլքերից: Այդքան գեղեցիկ, և այդքան էլ չար կենդանի՛ ... Ութսուն կիլոյանոց երինջի չափ էր նա, բայց այնպես թեթև ու փափուկ էր քայլում, կարծես ոտների վրա ծանրություն չկար: Գեղիրան էր նա, մկանուտ ոտքերով, ողորկ փայլուն մորթով, որի բաց նարնջագույն ֆոնին բազմաթիվ սև խալեր կային ցրված: Դրանք առանձին շքեղություն էին տալիս այդ գազանին և միևնույն ժամանակ անտեսանելի էին դարձնում, երբ նա փորի վրա պառկած կամ տեղն անշարժ կանգնած էր լինում քարքարոտ չալ լանջերին:
Քայլում էր նա առանց մազաչափ լարման և այնպես ժիր ու ճկուն, որ կարծես ոչ թե կաթնասուն էր գնացողը, այլ քարերի միջով գալարվում էր մի չալ վիշապ:
Կլոր գլուխը և մետրանոց պոչը կախ, առաջ եկավ՝ կատվի նման բեղի տակ փափուկ մռլտալով, դարավանդից ցած նայեց, հորանջեց ու գնաց ստուգելու, թե փորձանքի չի՞ ենթարկվել իր որսը:
Տեղ հասավ, տեսավ քարայծից միայն ոսկորներն են մնացել և շատ բարկացավ: Պոչով հարվածներ հասցրեց գետնին, գոռաց կցկտուր, երեք-չորս անգամ և շատ տարօրինակ ձայնով, «խուրակ... խուրակ... խուրակ...»:
Առաջ եկավ, հոտոտեց, ձյան մեջ մի կտոր մսախառն ոսկոր գտավ ս թաթը մեկնեց: Բայց հենց բռնեց ոսկորից, մի բան դուրս պրծավ ձյան միջից, չրխկոցով ճանկեց իր թաթը և այնպես սեղմեց, որ գազանը ցավից գոռաց:
Թափահարեց թաթը՝ մի ծանր բան կախվել էր նրանից ու շարունակում էր սարսափելի սեղմել:
Վրդովվեց հովազը, թաթից կախված երկաթը խփեց քարին փշրեց[43]:
Այս ո՞վ է թշնամություն անում իրեն...
Արյունոտ աչքերով հետազոտեց շրջապատը և ապա ներքևում ննջող արջին նկատելով, հպվեց գետնին՝ «կուտապ եկավ»:
Ահա թե ով է գողացել իր պաշարը: Ահա ով է թակարդ լարել, որ բռնի իրեն... «Վրե՛ժ, վրե՛ժ անամոթ բրդոտից», - ասում էին զայրույթից կրակների նման վառվող նրա կլոր աչքերը:
Խե՛ղճ բրդոտ... Դեռ կարգին ուշքի չէր եկել իր ներսում երեկվանից ի վեր եռող մաճառից ու շիրայից, դեռ գլխի մեջ մշուշ էր տիրում, երբ լսեց թշնամու զզվելի ձայնը: Պղտոր հայացքով վեր նայեց և եթե ձեռք ունենար, հարբած մարդու նման թափ կտար ու անտարբեր կասեր, «Է՛հ, քո հերն էլ անիծած...»: Բայց հովազը արջի բարությունն ու մեծահոգությունը չունի, բնության մեջ դժվար թե ավելի նենգ ու քենոտ կենդանի գտնվի, քան նա է՝ դրսից սիրուն «հրեշտակ», ներսից՝ «դև»...
Եվ մինչ արջն անտարբեր ննջում էր իր համար, զգաց, որ մեկն իր շալակը թռավ, ժանիքները վիզը խրեց և սկսեց սուր դանակներով ծվատել իր կողերը...
Անակնկալի եկած բրդոտն այնպես վեր թռավ, այնպես գոռաց, որ ձորը դղրդաց:
Ահա այդ գոռոցն էր, որ լսեցին մեր պատանիները և դուրս վազեցին քարայրից:
Եվ այժմ նրանց աչքի առաջ կյանքի ու մահու կռիվ էր տեղի ունենում երկու գազանների միջև, որոնցից մեկն օժտված էր մեծ ուժով, մյուսը՝ մեծ ճարպկությամբ: Տեղում խելակորույս պտտվելով՝ արջն աշխատում էր մեջքից գցել և տրորել իր անկոչ հեծյալին, բայց՝ իզուր, հովազը իր նախնիների դարավոր փորձն ուներ, որ բնազդ դարձած մնում էր նրա ուղեղի ծալքերում ու արյան մեջ: Ատամներով ու առաջին ոտքերով ամուր բռնած իր հակառակորդի բաշից, հետևի ոտքերի սուր-սուր մագիլներով նա քրքրում էր հակառակորդի կողերը:

---

[43] Իրավացի էր Աշոտը. թակարդի աջ ճանկի վիզը, որ ժանգոտելուց բարակել էր, պոկ եկավ:

Միաժամանակ ժանիքներով քրքրում էր արջի բրդոտ վիզը, բազմաթիվ ջլերի ու երակների մեջ նրա զարկերակն էր փնտրում... Կյանքում երբեք չէր տեսել նա այդ անոթը, բայց գիշատչի իր բնազդը հուշում էր նրան, որ թշնամուն մեռցնելու համար այդ երակը պիտի կտրել...
Արջը ցավից գոռալով փախավ դեպի ցած՝ իր սարսափելի հեծյալը շալակին, բայց հասնելով Հովազածորի ներքին ժայռերի պռնկին, կանգ առավ, ներքևում անդունդն էր: Ետ վազեց, գլուխկոնծի տվեց խաղողի այգին ծածկող ձյան մեջ, հովազին գցեց իր տակ: Այն ժամանակ նենգ թշնամին փոխեց իր տակտիկան և դիմեց ավելի սարսափելի միջոցի, ժանիքներով կախվեց արջի դնչից, առաջին թաթերի ճանկերը խրեց վիզը և նորից գործի դրեց իր հետևի ոտքերի սուր «նշտարները»: Նրանցով ծվատեց արջի փորի տակը՝ պորտից մինչև հետևի ոտքերը, արագ-արագ պատառոտեց նրա մորթին, ծվենները ցրիվ տվեց:
Եվ երբ խեղճ բրդոտը վեր կացավ ու սարսափահար փախավ, թփերի տակից այս ողբերգությունը ահով դիտող մեր պատանիները տեսան, որ արջի ստամոքսը մնաց ձյան վրա: Խեղճ կենդանին առանց փորոտիքի էր մնացել...
Վազեց նա դեպի Հովազածորի ելքը, դողդողալով առաջ գնաց ձյունոտ շավիղով, ապա կանգ առավ, երերաց ու գլորվեց ցած...
Իսկ հովազը, չարագործի նման գլուխը կախ, լուռումունջ դեպի աջ գնաց: Գնաց դանդաղ, անտրամադիր, անհաստատ քայլերով: Առանց գլուխը վեր բարձրացնելու անցավ տղաների մոտով, կանգ առավ Աջ ժայռաշարքի տակ և սկսեց ագահությամբ լակել բնական գռի շորշոր ջուրը: Ապա լիզեց իր վերքերը և ոտքերը քարշ տալով ցած գնաց, մտավ ժայռերն ու անհետացավ նրանց ծերպերում:
Այսպիսով, թակարդն իր դերը չկատարեց, նրանք չկարողացան բռնել հովազին: Բայց թակարդը գազազեցրեց այդ գազանին և ստիպեց նրան հարձակվել այնպիսի հակառակորդի վրա, որից հանգիստ ժամանակ նա և՛ վախենում էր, և՛ խուսափում:
Իր թաթը սեղմող երկաթը վրդովեցրեց նրան և ստիպեց որս կատարել մեր պատանիների համար, ավելի խոշոր և պիտանի որս, քան ինքը հովազն է:
Այնպես որ Աշոտը կարող էր հպարտանալ իր հնարամտությամբ. նրա լարած թակարդը ջարդվեց, բայց անսպասելի մեծ արդյունք տվեց:
Սակայն այդ մասին այս անգամ նա լռում էր... համեստաբար: Ավելացնենք նաև այն, որ ճգնավորի ժանգոտ թակարդը ավելի մեծ գործ կատարեց, քան այն, ինչ տեսան մեր պատանիները և ինչ գիտենք մենք:
Բայց այդ մասին՝ հետո: Առայժմ ասենք, որ պատանիները մի քանի րոպե լուռ նայում էին հեռվում ճերմակ ձյան մեջ թուխին տվող մարմնին և լսում իրենց սրտերի անհանգիստ զարկերը: Այն, ինչ կատարվեց իրենց աչքի առաջ, այնքան անսպասելի էր ու ահավոր, որ նրանք պապանձվել էին: Ահավոր, բայց և ուրախալի: Իրենց աչքերին նրանք չէին հավատում: Դեռ երեկ առավոտ անհույս ու տրտում մի բուռ հատապտուղ էին փնտրում թփերում: Հիմա ահագին մի կենդանի մեկնված է իրենց առաջ... Ա՜յ քեզ անակնկալ բա՜խտ: Այդ դեռ սնունդը, իսկ վտա՞նգը: Իրենց ահավոր թշնամիներից մեկն այլևս չկա, իսկ մյուսը աննախանձելի վիճակում քարշ եկավ դեպի իր թաքստոցը...
Այս ամենը մեր պատանիները վերապրեցին մի քանի վայրկյանում և անպատմելի ուրախություն պատեց նրանց:
Առանց մի բառ արտասանելու, լուռ իրար նշաններ տալով, նրանք, կացինով ու տեգերով զինված, դավադիրների նման շարժվեցին դեպի սպանված գազանը: Տեղ հասնելուն պես Աշոտը կացնով, իսկ Հասոն իր սուր դանակով մարմնից անջատեցին կենդանու թիակներն ու ազդրերը: Շտապելուց քրտնել էին, հևում էին և շուտ-շուտ նայում այն կողմ, ուր անհետացավ հովազը:
Տղաներն այնպես էին շտապում, ինչպես գողերը ուրիշի տանը, և ժամանակ չունեցան նույնիսկ մաշկելու մարմնի այն մասերը, որոնք մտադիր էին տանելու հետները: Հենց այդպես մի-մի մորթապատ կտոր ուսները դնելով, նրանք հապճեպ քայլեցին, ավելի շուտ՝ վազեցին դեպի իրենց բնակարանը:
Հասնելով հարավային բարիկադին, Աշոտը քացով խփեց-խորտակեց այն: «Պահակը» գլորվեց իր բարձունքից և խումբը անցնելով «քանդված պարիսպը»՝ հևիհև խուժեց այրը: Ներս մտան, ցած դրին իրենց թանկագին բեռը և երջանիկ ժպտացին իրար:
Ապա «դավադիրների խումբը» նույն լուռ խորհրդավորությամբ դուրս ելավ անձավից, բայց «միջանցքում» Աշոտը կանգ առավ, ականջ դրեց և ետ դառնալու նշան տվեց: Փոքրիկ պետի իր դերը այնպես սազում էր նրան, այնպես հաջող էր տանում այդ դերը նա, որ Շուշիկը նայում էր տղայի մերթ զգուշություն, մերթ հանդգնություն, մերթ ուժ, մերթ արհամարհանք արտահայտող խոշոր աչքերին և մի տեսակ երկյուղախառն հարգանքով էր լցվում դեպի նա:
Երբ բոլորը նորից անձավում էին, Աշոտը, չգիտես ինչու, ցած ձայնով ասաց.
- Մնացածը ստիպված ենք առայժմ թողնել...

- Ինչո՞ւ: Գլուխս կթողնեմ էնտեղ, միսը չեմ թողնի, - աքլորացավ Գագիկը: - Տնտեսական գործերի կառավարիչ եք նշանակել չէ՞, ամեն օր միս եք պահանջելու ինձանից:
Բայց Աշոտը այլ կարծիքի էր. նա գտնում էր, որ գազանի դին իր տեղում այնքան պիտի թողնել, որ պարզվի հովազը կենդանի՞ է, թե ոչ: Եթե կենդանի լինի՝ անպայման կվերադառնա իր զոհին հոշոտելու: Իսկ եթե չվերադարձավ՝ նշանակում է սատկել է ստացած վերքերից:
- Արծիվները մեզ բաժին չեն թողնի, անխելք բան մի՛ արեք, - նորից բողոքեց Գագիկը:
- Ցերեկն արծիվներին կքշենք, արևը մտավ՝ նրանք թառելու են: Իսկ հովազը եթե կենդանի լինի՝ գիշերը կգա...
- Հա, գելն էլ է էդպես, կիսատ թողածը գիշերն է գալիս ուտում, - հաստատեց Հասոն:
Գագիկը պատի տակից լուռ ու դժգոհ բերեց իր գործած կողովը, արջի ահագին ազդրը դրեց մեջն ու տնքալով տարավ բազմեցրեց վառելիքի կույտի վրա:
- Մսի պահեստը նա է, տարեք մեջը դրեք, -ասաց նա սառը. երևի ուշք ու միտքը դեռ դրսում ընկած արջի կողմն էր:
Միսը տեղավորեցին, խորհրդակցեցին իրենց հերթական անելիքների մասին և իսկույն գործի անցան:
Նախ «պահակներին» նրանք տեղափոխեցին կռվի վայրը արջի դին արծիվներից պաշտպանելու նպատակով: Իրոք, խրտվիլակները, որ այժմ գրեթե այլևս դեր չունեին կատարելու «անձավ-ամրոցը» պաշտպանող «բուրգերի» վրա, հիանալի գործ կատարեցին գիշակեր թռչունների դեմ: Հեռու, քարերին թառած՝ նրանք նայում էին քոլոզը գլխին, ահագին մահակն ուսին քուրդ «մարդուն» և սիրտ չէին անում մոտենալ:
- Հասո՛ն, երեկոյան, երբ արծիվները գնան թառելու, պահակներին տուն կբերես, - պատվիրեց Աշոտը: - Այո, եթե հովազը դեռ կենդանի է, արջի մոտ պահակ թողնել չի կարելի:
Այդ էլ վերջացնելուց հետո որոշեցին զբաղվել խորտակված դուռը կարգի բերելով, իսկ Հասոն պիտի գնար Ոչխարանոց:
- Աշո՛տ, դու էլի ոգևորվեցիր ու վտանգը մոռացա՞ր, - բողոքեց Շուշիկը: - Մենք դեռ խմբով ենք՝ ոչինչ, Հասոյին դու ո՞նց ես մենակ տեղ ուղարկում:
Քուրդ պատանին կարմրեց և շփոթմունքից ձեռքը դեպի գլուխը տարավ, որ քոլոզն աչքերին քաշի՝ գդակը գլխին չէր: Տղաները ծիծաղեցին: Չարաճճիորեն ծիծաղեց և Շուշիկը. նրան անշուշտ դուր էր գալիս այն շփոթությունը, որ առաջ էր բերում իր յուրաքանչյուր հոգատար խոսքը քուրդ պատանու մեջ:
- Դու կարծում ես ես նրան հովազի բերա՞նն եմ ուղարկում, - հարցրեց Աշոտը: - Հովազը չկա, չվախենաք: Եթե կա էլ, նա էն դրության մեջ է, որ երբեք դեպի վեր՝ Ոչխարանոց չի գնա: Ինչո՞ւ եմ ես այդպես կարծում: Հիմի ասեմ: Հովազը քաղցած էր, որ սկսեց կռիվը արջի հետ, բայց երբ նրան սպանեց, նկատեցի՞ք, որ մսի համն էլ չտեսավ: Ուրեմն, ծանր վերք ուներ, տրամադրությունը տեղը չէր: Այդ մե՛կ: Երկրո՛րդ: Կռվի տեղից շարժվեց ուղիղ դեպի ջուրը, իմացեք, որ ծանր վիրավորը դեպի ջուրը կգնա... Երրո՛րդ, որ գնում էր դեպի ջուրը՝ օրորվում էր, գլուխը կախ էր և չուներ հաղթողի ամբարտավանությունը: Չորրո՛րդ՝ ջուրը խմելուց հետո չգնաց դեպի վերին ժայռերը: Ինչո՞ւ եմ ես ասում դա: Որովհետև կենդանիները միշտ աշխատում են թաքնվել ձորերի վերև, հեռավոր ժայռերում, ուր թշնամին դժվար կհասնի, և որտեղից շրջակայքը երևում է, որսի շարժմանն էլ կարելի է գաղտնի հետևել, թշնամու շարժմանն էլ... Այս բոլորը ես տեսել եմ աչքովս և հայրս որսի տեղն ինձ ցույց է տվել ու բացատրել: Հիմի, գանք մեր հովազին: Հենց որ ջուր խմեց ու վերևի պնդոցը թողած դեպի ցած գնաց, ես մտքումս ասացի՝ դրա օրերը հաշվված են: Ամեն որսորդ էլ գիտի, որ վիրավոր կենդանին դեպի ցած կգնա, քանի որ վերև գնալու ուժ չունի... Համաձա՞յն եք իմ այս եզրակացություններին:
- Ոչի՛նչ, խելքի մոտ բաներ ես ասում, - պատասխանեց Գագիկը:
- Դե որ համաձայն եք, քանի եղանակը լավ է շարունակենք մեր կիսատ թողած գործերը: Դու էլ մնա, Հասո՛ն, քանի որ Շուշիկը... Նա նայեց աղջկա կողմը, ժպտաց ու լռեց:
Այդպես թե՛ արջի անկումով, թե՛ Աշոտի այդ բացատրություններով նորից, լարվածությունը թուլացավ և նորից սկսեցին «խաղաղ ժամանակներ» քարանձավի բնակիչների համար:
Որքան ժամանակ կտևեր այդ խաղաղությունը և հետագայում ինչ էր սպասում նրանց, ոչ ոք չգիտեր:

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչպես բուռն արկածներից հետո կարող են վրա հասնել մանր հոգսերով լի ձանձրալի ժամանակներ

Այո, վերջին օրերի արկածները և իրար հաջորդող ցնցող դեպքերն այնպես էին բորբոքել Աշոտի երևակայությունը, այնպես լարել էին նրա էությունն ու առաջ բերել անսովոր սխրագործություններ կատարելու բուռն տրամադրություններ, որ վրա հասած խաղաղությունը կարծես նրա սրտովը չէր: Նրան թվում էր, որ ինքն ստեղծված է պայքարների և ոչ թե հանգիստ ու տափակ կյանքի համար:

Իսկապես որ՝ տափակ: Դե եկ զենքերդ մի կողմ դիր, ցեխ կրիր Կավահանքից և կնկա նման հունցիր... Չէ՛, անցան «ասպետական ժամանակները», երանի չէ՞ր այն պահը, երբ արջ ու հովազ իրար խառնված՝ թավալվում էին ձյան մեջ ու ձորը դմբդմբացնում իրենց մռնչյուններով... Ա՞յ կյանքը: Մարդու արյունը եռում է երակներում, այդպիսի տեսարանների ազդեցության տակ ինքն էլ է հերոսանում...
Միակ հետաքրքիր բանը, որ նրա համար դեռ մնացել էր շրջակայքում, դա հովազն էր: Ի՞նչ եղավ, արդյոք կենդանի՞ է, թե շունչը փչեց: Երկու դեպքում էլ հետաքրքիր է: Այո՛, հովազի հետ կապված նա դեռ կարող է որոշ ցնորքներ ունենալ: Այսպես, գտնում է վիրավոր գազանին և տեգի մի ուժգին հարվածով... Կամ թեկուզ սպանված է գտնում. մաշկիր և մորթին ուսիդ գցած գյուղ մտիր՝ քի՞չ բան է... Ամբողջ գյուղը «թամաշի» դուրս կգա... Իսկ հիմա դուռը կարկատելուց ու իր տեղում ամրացնելուց հետո ցեխ կրիր, որ կարասներ պատրաստես ջուր պահելու համար...
Բայց ոչ, ցեխը այլ բանի հարկավոր եկավ, ավելի անհրաժեշտ բանի:
Որքան էլ հաջող այր էր ընտրել իր համար անհայտ ճգնավորը, այնուամենայնիվ խարույկի ծուխը այնպես էր թանձրանում առաստաղի տակ, որ մեր պատանիները պիտի միշտ նստած կամ պառկած մնային, որպեսզի փրկեն իրենց աչքերը:
Այնպես որ բոլորն էլ վաղուց զգում էին վառարան ունենալու անհրաժեշտությունը և ամենից շատ դա զգում էր Շուշիկը, ուստի շարունակ շուռումուռ էր տալիս խարույկի եզրերին շարած կավացեխի քառակուսիները, որոնցից հազիվ նկատելի գոլորշի էր բարձրանում:
Վերջապես նա այլևս չհամբերեց և պահանջեց սկսել վառարանի կառուցումը:
- Արդեն աղյուսները չորացել են, էլ ինչի՞ եք սպասում, - դիմեց նա ընկերներին:
Վառարանի տեղն ընտրված էր՝ դռան մոտի, այրի մի անկյունում, բայց թե ինչ ձև պիտի ունենար իրենց ապագա վառարանը, ոչ ոք չգիտեր:
- Եկեք ուղղակի աղյուսներից երեք պատ կառուցենք, իսկ դիմացը բաց թողնենք, - առաջարկեց Աշոտը:
- Ինչո՞ւ երեք, երկուսն էլ հերիք է, իսկ երրորդը կլինի այրի պատը: Կդառնա բուխարի:
Շուշիկի այդ առաջարկը խելացի համարվեց, բայց վառարանի գլուխն ինչո՞վ պիտի ծածկեին, կամ ծխնելույզն ինչից պիտի շինեին, ոչ ոք չգիտեր:
- Լա՛վ, դուք պատեցեք, ես հիմի կգամ, - կարճ ասաց Հասոն և դուրս գնաց: Նա «խաս քարից» մի բարակ ու լայն սալ էր տեսել դրսում: Տնքալով ներս բերեց սալը ու հարցական նայեց ընկերներին:
- Հրաշալի է, դա կլինի մեր վառարանի «կտուրը»:
Սարգիսը, որ այնքան սիրում էր երկրաբանությունը, ինչպե՞ս կարող էր իսկույն չհետաքրքրվել այդ քարով և չասել իր կարծիքը նրա ծագման մասին:
- Այո՛, խաս քար է, ամեն տեսակի սրոցներ սրանից են պատրաստում, - որոշեց նա: - Սա էլ է ծովի հատակին առաջ եկել... Հեղեղների բերած մանր ավազի նստվածքն է... Տեսե՞ք շերտերը, սա կարելի է սեպով ճեղքել շերտ առ շերտ...
Չէ՛, Սարգիսը քիչ բան չգիտի, նրա մասին եղած կարծիքը միակողմանի է եղել:
Մի ժամ հազիվ պահանջվեց, մինչև որ տղաները աղյուսի պատեր բարձրացրին՝ ամեն մեկը մոտ ութսուն սանտիմետր բարձրությամբ: Պատերն իրարից հեռու էին այնքան, որքան սալի երկարությունն էր: Եվ երբ սալը դրին պատերի վրա, ստացվեց վառարանի նման մի բան, որի թիկունքը ժայռի պատն էր, կողերը՝ աղյուսից էին, կտուրը՝ խաս քարից, իսկ առաջը բաց էր:
- Սալը մի քիչ առաջ դնենք, որ հետևում ծխնելույզի համար անցք մնա:
Շուշիկի այդ առաջարկը ևս անցավ:
- Մնա՞ց ամենադժվարը, - հարցրեց Գագիկը, - դե մնացածը թողեք ինձ:
«Մնացածը» ծխնելույզի խողովակներն էին, որ ոչ ոք չգիտեր, թե ինչից պիտի պատրաստել: Իսկ Գագիկն արդեն գործի էր անցել: Այրի անկյունում դեռ մի քիչ ցեխ էր մնացել, որով նա սվաղեց վառարանի պատերը և վերևից մի կավե անճոռնի ծխնելույզ պատրաստեց, որը հիմքում վառարանի լայնությունն ուներ, բայց կես մետրաչափ բարձրանալով՝ բոլորովին նեղանում-դառնում էր վառարանի խողովակի նման մի բան: Կարծես ձագար լիներ շուռ տված՝ լայն մասով ներքև, նեղ մասով վերև: Պարզ էր, որ այդ «հարմարանքը» պիտի վառարանի ամբողջ ծուխը ի մի հավաքեր և ուղղեր դեպի վեր:
- Դե, հիմի կես-կես մետր երկարությամբ գյունգեր[44] ենք շինում... Ի՞նչ եք մոլորվել, կոլխոզը սարի աղբյուրը ինչով բերեց գյուղ, կավե խողովակներով չբերե՞ց, - գոչեց Գագիկը: - Կուկլա-կուկլա խողովակներ շինենք մի ծայրը լայն, մյուսը՝ նեղ, թրծենք, իրար հագցնենք, արմունկով դուրս հանենք այրի դռան գլխից, ահա ձեզ և ծխնելույզ...
- Շուշի՛կ, քանոնդ դեսը տուր, դուք վազեցեք կավ բերեք, իսկ բարձրությունը չափելն ինձանից:

---

[44] Գյունգեր – կավե խողովակ:

Վառարանից մինչև դռան գլխի անցքը երկու մետր էր, ուրեմն պահանջվում էր չորս ուղիղ խողովակ և երկու «արմունկ»:
- Ուրեմն, մի ծայրի լայնքը պիտի լինի 16 սանտիմ, մյուս ծայրինը՝ 12, հասկացա՞ք: Առաջ քանոնով չափել, հետո սկսել: Չափը խախտողին՝ տուգանք, - հրահանգեց խմբի «բրուտը»:
Ամբողջ երեկոն մեր պատանիները կորցրին խողովակներ պատրաստելով: Հեշտության համար նրանք իրենց վառելափայտի վրայից կեղևներ էին մաշկում, նրանցից խողովականման բան պատրաստում ու չորս կողմից ծեփում ցեխով: Պարզ էր, որ թրծելիս «հենքը» (կեղևը) պիտի վառվեր-գնար, կավը մնար խողովակի ձև ստացած:
Դրանք անճոռնի բաներ էին, բայց հաստ պատեր ունեին և ծուխ կանցներ նրանց միջով, այդ էր գլխավորը:
Թեև Գագիկը իրեն բրուտ էր հռչակել, բայց ամենից գեղեցիկ խողովակը ստացվեց Շուշիկի պատրաստածը:
Շարեցին խողովակները կրակի մոտ ու ժպտացին իրար: Է՛հ, լավ է, վառարան ևս կունենան:
Բայց երբ գործը վերջացրել էին և ամեն մեկը տարվել էր իր մտքերով, դարձյալ տրտմությունը սկսել էր համակել նրանց, հարազատների՞ կարոտն էր դա, թե՞ ազատության կարոտը...
- Դե՛հ, մի բան կարդանք, - ընկերների թախիծը վանելու համար կանչեց Աշոտը: - Շուշի՞կ, հերթը քոնն է, բաց արա «Մայրենի գրականությունը» և կարդա մեզ համար «Վլադիմիր Մայակովսկին»:
Իր զնգուն ու բարակ ձայնով Շուշիկը կարդում էր.

Քանդե՛ց
ժողովուրդը
կապանքը ցարի:
Ռուսաստանում՝ փոթորի՛կ,
Ռուսաստանում՝ ամպրո՛պ, -
Կարդաց
Վլադիմիր Իլյի՛չը
Շվեյցարիա՛յում,
Կարդաց լրագրերի՛ց
Հուցմունքո՛վ,
Դողո՛վ:

Կարդում էր աղջիկը սկզբում անտրամադիր, ապա հետզհետե ոգևորվեց, նրա արծաթահնչուն ձայնը ղողանջեց քարանձավի կամարների տակ և կարմրություն եկավ դալուկ դեմքին:
Պատանիները, առաջ թեքված, կլանում էին մեծ բանաստեղծի հրե խոսքերը, և նրանց մատաղ հոգիները թռչում էին դեպի Նևայի ափերը, ապա ֆինլանդական կայարան, ուր ապստամբ ժողովրդի ծովն էր հուզված ծփում և ուր զրահապատի վրա կանգնած մարդը մարգարեական խոսքեր էր ասում մարդկության ապագայի մասին.

- Ընկերնե՛ր,
և գլխավերևը հարյուրակների
առա՛ջ պարզեց նա
ձե՛ռքն իր –
ձեռքն առաջնորդող:
Մենք
ցածի խավերի
ձայնն ենք հզոր-
բանվորակա՛ն ցածի
ո՛ղջ աշխարքի:
Կեցցե՛ պարտիան՛
կոմունիզմ կառուցող...

Երբ վերջացրեց բոլորը լուռ էին և հուզված: Նրանց մտապատկերների մեջ Լենինն էր կանգնած և պոետի թևավոր խոսքերն էին դեռ սավառնում այրի կամարների տակ...
Քնելու ժամը մոտենում էր, ուրեմն և ժամն էր հեքիաթ լսելու:
Հերթը Հասոյինն էր:
Լսվեց սրնգի դայլայլը և առանց հրավերի նա մի հեքիաթ սկսեց մեծ Լենինի մասին:
- ...Ու Լենին փաշան հեծավ իր հրեղեն ձին, հազար լիդրանոց գուրզը դրեց ուսին ու գնաց թագավորի դեմ...

Պատմում էր քուրդ պատանին «Լենին փաշայի» հեքիաթը և մեջ ընդ մեջ նվագում էր սրինգն ու ձեռքն ականջին դնելով և դեմքը դեպի այրի պատը՝ երգում էր իր կլկլան ձայնով.
- Լո՛, լո՛, լո՛, լո՛...
Ձյունը հալչում է, սա՛րն է մնում,
Ջուրը գնում է՝ քա՛րն է մնում,
Իգիթը մեռնում՝ անունն է մնում...
Լո՛, լո՛, լո՛, լո՛...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչ մտադրություններ է ունեցել արջը Հովազաձոր մտնելիս

Արեգակը նոր էր դուրս եկել Հովազաձորը արևելքից եզերող բնական պատնեշի հետևից, երբ դրսից լսվեց Գագիկի խուճապահար կանչը.
- Ձեր տունը չքանդվի, արծիվներն արջին կերան...
Սարգսին և Շուշիկին թողնելով անձավում, տղաները վերցրին իրենց զենքերն ու ցած վազեցին: Իրոք, Հովազաձորում որքան անգղ ու արծիվ կար՝ հավաքվել էին արջի դիակի վրա և իրենց կտուցներով հարվածում էին քլունգների նման ու ամեն մեկն իր բաժինն էր պոկում արջի յուղոտ մսից: Ուզում են մեր պատանիներին ամբողջ ձմեռը քաղցա՞ծ թողնել, ի՞նչ է:
- Հա՛յ, հա՛յ, հա՛յ, հա՛յ...- օդում իրենց զենքերը ճոճելով և ձորը դղրդացնելով՝ տղաները վրա հասան և քշեցին գիշատիչներին: Սրանք ծանր-ծանր թռչում էին, իջնում մոտիկ քարերին ու արյունոտ կտուցները սրբելով՝ թշնամաբար նայում էին իրենց ավարը կողոպտողներին:
- Սրիկաները մորթին քրքրել են... Հասո՛, դանակդ հանիր տեսնենք... Դուք մաշկեցեք, ես մի նայեմ տեսնեմ հովազի նոր հետք չկա՞... Չէ՛, բան չի երևում, ուրեմն, պարզ է...
Հավաքվեցին սպանված կենդանու շուրջը, նրա թուխ մարմինը ոտքով հրեցին, կարճ պոչից վեր քաշեցին: Արջի կողերը պատառոտված էին, որովայնը ամբողջովին ճեղքած և դատարկ, իսկ խոշոր գլուխը հեզությամբ հանգչում էր տակը ճխլված մի թփի վրա...
Գագիկը լուռ վերցրեց գլխարկը ու խեղդված ձայնով սկսեց.
- Ախր ինչո՞ւ էիր աղքատ օրով հավաքած մեր ապրուստը տանում, բա չէիր իմանո՞ւմ, որ վերև աստված կա, կտեսնի՝ կպատժի: Գոնե մաճառից քիչ խմեիր, խելքդ տեղը մնար, որ կռիվ անես, այ իմ անբախտ քեռի բրդոտ, հա՛, հա՛, հա՛...
Եվ սկսեց ուսերը ցնցելով հեծկլտալ:
- Պահեստապետ Պարույրի պես խժռում ես, նախագահ Հարութի պես խմում, դե իհարկե վերջդ սա է լինելու, - թևքով աչքերը սրբելով իր «սուգը» վերջացրեց Գագիկը: - Է՛հ, ճգնավորի լեզվով ասած՝ աստված հոգին լուսավորի, գնա՛նք:
- Չմաշկե՞մ մի-մի կտոր հետներս տանենք, - խմբի ղեկավարին հարցրեց Հասոն:
- Հա, թե կարող ես առաջ լյարդն ու թոքը հանիր:
- Կարող ես ո՞րն է, խնդրեմ, վիրավորական ակնարկներ չանես ֆերմայի հովվի հասցեին, դա նրա արհեստն է, ինչի՞ չի կարող: Գայլը հենց որ ոչխար է խեղդում, նրա կիսատ թողած գործը Հասոն է շարունակում, -կատակեց Գագիկը:
- Հա՛, ուրիշ տեղերին ձեռք չենք տալիս, բայց ջիգյարը մերն է, - խոստովանեց Հասոն շիկնելով: - Պահ, ի՞նչ մեծ թոքեր ունի...
Զգուշության համար Աշոտն առաջարկեց խարույկ վառել:
- Մենակ դրա՞ համար, - զարմացավ Գագիկը, - ես կարծում եմ մարդիկ որսի մոտ ուրիշ նպատակով են կրակ անում: Եվ արջի՝ երիկամները հանելով ցույց տվեց. - Սրա խորոված ն ուտողն էլ չի մեռնի...
Մինչ ընկերները զբաղված էին արջը մաշկելով, Աշոտի միտքը զբաղված էր մի հանելուկով, եթե արջը Հովազաձորի բնակիչ է, ինչո՞ւ մինչ այդ նրա հետքերը չէին երևում շրջակայքում: Նա գնաց դիտելու ձորի մուտքը:
Օհ՛ո , արջը ահա եկել է Դիվային կածանով, դրսի աշխարհից է եկել: Առաջին հայացքից այդ կենդանին կարծես անճոռնի է ու անճարպիկ, բայց տես ի՞նչ անդունդների վրայով է եկել... «Թաթերով մարդի նման բռնում է քարերից», - իրեն հետաքրքրող հարցը լուծեց պատանի բնասերն ու իջավ ընկերների մոտ: Հարկավոր էր կտրտել միսը և կազմակերպել տեղափոխությունը, բայց բնության ամենափոքր երևույթն անգամ այնքան էր հետաքրքրում Աշոտին, այնպես էր ապրեցնում, որ նա անկարող էր համբերել և ընկերներին չհաղորդել իր մտքերը այն մասին, թե ինչպե՞ս և ինչո՞ւ է արջը եկել Հովազաձոր:
- Դադա՛ր, - հրահանգեց նա: - Նստեցեք - հանգստացեք, պատանի բնասերներով հիմա մի հարց պիտի պարզենք...

- Ներողությո՛ւն, քաղցած փորով ես հարց պարզողը չեմ: Խորովածը կուտենք, նոր կխոսենք, - առարկեց Գագիկը: - Համա սիրում ես ելույթներ ունենալ, հա՛...
Աշոտը մեկ ուզեց վիրավորվել, մեկ էլ մտածեց. «Թե որ այդպիսի դիտողությունների համար նեղանամ, օրեկան քանի՞ անգամ պիտի նեղանամ»: Եվ զգաց, որ այլևս չի վրդովվում Գագիկի նկատողություններից ու այդ նորությունից ուրախացավ:
- Լա՛վ, - ժպտալով համաձայնեց նա:
Բայց որպես մոլի բնասեր նա այնքան մեծ պահանջ էր զգում բնության ամեն մի երևույթի մասին իր տպավորությունն ու կարծիքը հաղորդելու ընկերներին, որ քիչ հետո չհամբերեց ու սկսեց.
- Ես կարծում եմ, որ մեր երկրում Հովազաձորից ապահով տեղ չկա արջի քնելու համար, ամբողջ ձմեռը ոչ մի որսորդ չի մանում այս ձորը: Արջը գիտի դա և միշտ այստեղ է ձմռան քուն մտնում: Այս անգամ էլ եկել է որ քնի, մեկ էլ, ը՞հը, ծուխ է բարձրանում այրից ու մարդու հոտ է գալիս... Իսկ որտեղ մարդ կա, նա չի քնի...
- Ու որոշում է՝ արի սրանց սոված թողնեմ, գուցե հեռանան - կորչեն էստեղից, - նրա միտքը լրացրեց Գագիկը և երիկամները մի ճիպոտի անցկացնելով՝ նայեց նրանց այնպես զմայլված, որ նույնիսկ «ուրբաթախոս» Սարգիսը ժպտաց:
- Շուշիկին չկանչե՞նք, - նրա ականջին շշնջաց Հասոն:
- Բա առանց Շուշիկի պատա՞ռ կուլ կգնա, - բարձրաձայն պատասխանեց Գագիկը, առանց նկատի ունենալու, որ քուրդ պատանին անհարմարությունից քրտնում է: - Շուշիկ, անմահական խորովածը գնաց-չմնաց, ծտից թև առ տեղ հասիր...
Աշոտն անհամբերության նշաններ էր ցույց տալիս, նրա համար անհասկանալի էր, թե ինչպես կարող է մարդ կողմնակի մտքեր ու ցանկություններ ունենալ այն ժամանակ, երբ քննվում է կենդանու բնավորությունը հասկանալու հարցը:
- Լսեցե՛ք, շարունակում ենք:
- Անուղղելի ես, անուղղելի՛, - գլուխն օրորեց Գագիկը: - Ախր քիչ առաջ խոսք տվիր, որ համով խորովածին անհամ ճառ չխառնես... Լա՛վ, շարունակիր:
Ընկերները ժպտում էին, իսկ Աշոտը թեև նեղվում էր Գագիկի սուր լեզվից, բայց ստիպված էր համբերել: ճարահատյալ ինքը ևս ժպտալով շարունակեց.
- Արջը տեսնում է մարդ կա Հովազաձորում, անհամբեր սպասում է, որ մենք հեռանանք, հիմարը կարծում է՝ մեր կամքով ենք մնում: Լավ էր, որ հովազի պատահեց, թե չէ ամբողջ ձմեռը մեզ օր ու արև չէր տալու:
- Չէ՛... ես ինչքան արջի եմ պատահել, թողել է հեռացել, իսկի ոչխարներին էլ չի դիպել, - առարկեց Հասոն:
- Հա՛, արջը խաղաղ կենդանի է, նա նույնիսկ Թուխիկին էլ չի ձեռք տվել: Բայց խաղաղ է, երբ հանդում կեր կա: Այս ձորում փակված նա սոված էր մնալու ու պտտվելու էր մեր ուտելիքի շուրջը: Իսկ որ շատ սովեր, մեկ էլ տեսար տապ արավ թփերի մեջ, թաքուն բռնեց մեզնից մեկն ու մեկին, դրեց կռնատակին ու լնգլնգալեն գնաց:
- Ի՞նչ, չհասկացա՛... Լա՛վ, մի՛ կրկնի, մեկ է, մինչև խորովածը չուտեմ՝ բան չի մտնելու գլուխս... Հասո՛ն, մի դանակը դեսը տուր, պատանի բնասերների համար մի հարց էլ ես եմ պարզելու...
Գագիկը մոտեցավ ձյան վրա ընկած ստամոքսին, դանակով ճեղքեց և քիթը ցցելով՝ սկսեց հոտոտել օդը.
- Օխա՛յ, մուսկաթ գինու հոտ է գալիս... Հիմի իմացա՞ք ինչու էր վատ կռվում Բրդոտը: Իսկական Հիտլերի քաջերի պես. հայրս ասում է՝ խմում էին օղին ու օրորվելով գալիս: Դե՛, տղա ես, «մաքսիմը» դեմ արա ու հնձիր... Վա՛հ, էս ի՞նչ բանի եմ, պլոճիկները ձեռից գնացին...
Գագիկը վազելով ետ եկավ, երիկամներից մեկը հանեց դեմ արավ այտին ու խուճապահար գոչեց.
- Երեսս վառում է, ժամանակն է, կերե՛ք... Ու բերանի «պատերն» այրելով, աչքերից արցունքներ թափելով սկսեց ուտել: Երբ կշտացավ և այլևս ուտելու բան չէր մնացել, քաղցր լեզվով դիմեց նոր տեղ հասած Շուշիկին.
- Ոտներս քոռանան քեզ համար, Շուշիկ ջան, պատառները չանգռելով էին կուլ գնում, առանց քեզ ուտե՞լ է լինում որ... Դե՛, Հասո՞, քուրացվիդ համար մի բան պատրաստիր, ես գնում եմ մեր այգին քրքրեմ, գուցե մի ճութ խաղող գտնեմ ու ջանս դուրս գալով մենակ ուտեմ...
Երբ արջի միսն ու մորթին տեղափոխեցին ճգնավորի այրը, Աշոտը համոզված ու հեղինակավոր հայտարարեց.
- Հիմի որ կարող ենք հանգիստ լինել, հովազը սատկել է: Եթե կենդանի լիներ, կերևար...
- Բա չգնա՞նք մորթին բերենք գցենք Շուշանիկ Ավետովնայի վիզը: Ախր նրա մուշտակը առանց օձիքի է մնացել, անհարմար է...
- Հերիք է ծաղրես... Ես հիմա սա կհանեմ դեն կշպրտեմ, - խռովեց Շուշիկը:

- Ուզենաս էլ, չես կարող, ազիզ ջան, չորացել-տախտակ է դառել, էդ տախտակի պարկի միջից դուրս գա՞լ կլինի...
Իսկապես, ամեն նստելիս, կռանալիս, շարժվելիս Շուշիկի հագի պարկը ճռճռում ու շխկշխկում էր. դե նիհար կենդանու չորացած մորթին ինչ պիտի լինի: Նստել էր Շուշիկը կրակի մոտ ընկճված տրամադրությամբ, նայում էր իր տգեղ, վայրենի արտաքինին ու լացը գալիս էր: Բայց ի՞նչ աներ, այդ տգեղ մորթին էր նրա կյանքը փրկողը, առանց նրա ինքը կսառչեր:
Աշոտը փորձեց աղջկա «մուշտակը» իր պիջակի հետ փոխել, բայց շուտով համոզվեց, որ առանց դանակի օգնության դա անհնար բան է:
- Ոչի՛նչ, Շուշի՛կ, մենք արդեն կազդուրվել ենք, իսկ արջի յուղը մեզ շատ կօգնի, շուտով լույս աշխարհ դուրս կգանք, այն ժամանակ էլի սիրուն-սիրուն շորեր կհագնես ու կգնաս ակումբ...
- Հասոյի հետ տանգո պարելու, - Աշոտին լրացրեց Գագիկը և նայեց քուրդ պատանու դեմքին, որ ողողված էր ամոթխած ու բարի ժպիտով:
- Է՛հ, դուք զրույց արեք, ես գնացի իմ ոչխարների կող, - ասաց նա ու վեր կացավ:
- Գնա՛, - համաձայնեց պետը: - Իսկ մենք մի քիչ կողով կգործենք, պարապությունն էլ մի բան չի...
Երբ Շուշիկը հոգնեց կռացած կողով գործելուց, այսպիսի խոսքով դիմեց իրենց պետին.
- Դուք շարունակ սննդի մասին եք մտածում, իսկ մաքրությո՞ւնը: Բոլորովին վայրենացել ենք, Գագիկն ու Սարգիսը նույնիսկ չեն էլ լվացվում:
- Դե առանց օճառ ո՞նց լվացվենք...
- Օճառ ես գտել եմ: Ինձ մի ժամով ազատիր, Աշո՛տ:
- Հովազաձորում օճա՞ռ:
- Այո՛, օճառին փոխարինող մի նյութ:
- Ագռավի օճա՞ռ[45]: Չէ՛, «ագռավի օճառը» գարնանն է լինում:
Շուշիկը խորհրդավոր ժպտում էր:
- Դա էլ ի՛մ գյուտն է... Հիմի կգնամ՝ կբերեմ: Գարնանն իհարկե կարելի է ագռավի օճառով թե՛ լվացվել, թե՛ շոր լվանալ, իսկ ձմեռը... Լա՛վ, ես գնացի, հետո կիմանաք...
Շուշիկը ուռենուց ներքև, ուր Կավահանքն էր, կռացած ինչ-որ բան էր փորում-հանում գետնից:
Քիչ անց նա վերադարձավ մի մեծ գունդ մոխրագույն ու պինդ, ցեխ ձեռքին:
- Ի՞նչ բան է դա:
- Վայրի օճառ... Գի՛լ... Սրա մեջ բուսական ճարպեր կան: Մայրս ասում է, կռվի տարին, երբ օճառ դժվար էր ճարվում, շորերը գիլով էինք լվանում... Լսել եմ, որ եթե քսան տոկոս ճարպ են ավելացնում այս հողին՝ հիանալի օճառ է ստացվում: Եկեք օճառ պատրաստենք: Ճարպ կոտորիր հալենք, Գագի՛կ:
Մաքրասեր չէր Գագիկը և դժկամությամբ մասնակցեց օճառ պատրաստելու գործին: Երբ նրանք գիլին հալած ճարպ էին խառնել, հունցել և ապա օճառի կտորների ձև տվել, Շուշիկն ուրախացած պատվիրեց.
- Դե՛հ, վերցրեք մեկ-մեկ կտոր, իսկ ես ջուր կլցնեմ: Ա՛խ, փնթինե՛ր, փնթինե՛ր, միայն ուտելու մասին եք մտածում...
Գիլն իրոք որ տաք ջրի հետ հիանալի մաքրեց նրանց ձեռքերի և երեսի կեղտը: Գագիկի օգնությամբ Շուշիկը նույնիսկ իր գլուխը լվաց:
- Մազերդ հո մազեր չեն, Շուշիկ ջան, ոնց որ աբրեշումի փնջեր լինեն կատարիցդ կախված, - ջուրը լցնում և գովում էր Գագիկը:
- Դե, դե, գիժ-գիժ մի՛ խոսիր... Քիչ-քիչ լցրու... Տաք ջրից մի քիչ էլ ավելացրու... Այդպե՛ս...
Գլուխն ու ոտները լվանալուց, իրեն զարդարելուց հետո այնպես էր թարմացել Շուշիկը, որ տղաները նոր միայն հասկացան, որ մաքրությունը կին արարածի համար նույնքան անհրաժեշտ բան է, որքան Գագիկի համար ուտելը:
- Ջուր տաքացրեք, բոլորդ էլ լվացեք ձեր ոտները, - հրահանգեց Շուշիկը և հասկացնել տվեց, որ այդ գործում արդեն խմբի, պետն ինքն է:
- Լուսավոր միտք, տղե՛րք, Շուշիկին նշանակում ենք մեր գաղութի սանիտարական մասի պետ:
- Պայմանով, որ ինչ որ առաջարկեմ՝ կատարեք: Լա՞վ: Դե, որ այդպես է, այսօր սանիտարական օր եմ հայտարարում: Ջուր ենք կրում-լցնում մեր բոլոր ամանները, տաքացնում և ես այսօր, լվանում եմ իմ և ձեր սպիտակեղենը:
- Էհե՛, դա դժվար գործ է...
- Ոչ մի դժվարություն չկա, դե՛հ, վերցրեք ամանները գնանք՝ ջրի...

---

[45] Ագռավի սապոն – մանրածաղիկ բույս է, որ օճառի նման փրփրում է և մաքրում մարմինը:

- Գնանք, բայց ինչո՞ւ պիտի դու լվանաս... Մենք ինքներս էլ կարող ենք լվանալ մեր սպիտակեղենը, - ասաց Աշոտը և դրանով ցանկացավ Գագիկին հասկացնել, որ հույսը չդնի Շուշիկի վրա:
- Է՛հ, չես թողնում, որ աղջիկը ծառայի կոլեկտիվին, բավականություն ստանա... Լա՛վ, ճգնավոր քեռու պտուկը ե՛ս վերցրի, գնա՛նք:
Այդ օրը ցերեկով եթե մեկը մտնելու լիներ ճգնավորի այրը, ականատես կլիներ հետևյալ տեսարանին, անձավաբնակները բոլորել են թեժ խարույկի շուրջը և յուրաքանչյուրը կրակին դեմ արած՝ չորացնում է իր սպիտակեղենը, որոնց շապիկները այնքան բծախնդրությամբ լվացել էր Շուշիկը:
- Մեզ միայն բաղնիքն է պակասում:
- Շուլուխի մի՛ տուր, Գագի՛կ, ես զարմանում եմ, որ չես նեղվում առանց լողանալու: Վաղը մենք բաղնիք էլ կունենանք:
- Այ քեզ բա՛ն, սանիտարական մասի պետ ընտրեցինք՝ կրակի մեջ ընկանք: Սա էլ մեզ հանգիստ չի տալու, Աշո՛տ, արի պաշտոնից զրկենք, թե չէ՛ իսկապես կստիպի լողանանք...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչպես Հասոն չէր հասնում այն բանին, ինչին որ ձգտում էր, այլ հասնում էր նրան, ինչին որ չէր ձգտում

Աղբյուրի շրջակայքում ոչխարների թարմ հետքեր չկային, պարզ էր, որ վայրենացած կենդանիները չէին համարձակվել ցատկելու արահետի հանգած խարույկի վրայից և մնացել էին ծարավ: Բայց դա Հասոյին չէր անհանգստացնում, նա որոշել էր հենց ջրով էլ գրավել նրանց: Նա մի կավե ամանով ջուր վերցրեց ու զառիվերով բարձրացավ դեպի ժայռերի մյուս երեսի ձորակը: Արահետում մոխրի տակ նվաղող կրակ էր մնացել: Հասոն ածխակոթերն իրար մոտեցրեց, փչեց, ծուխ բարձրացավ: Ապա նստեց քարին ու փչեց իր սրինգը՝ միշտ հայացքը հառած այն այրի մուտքին, որին տղաները Փարախ էին կոչել:
Նվագում էր պատանի հովիվը Թուխիկին ծանոթ եղանակները և շուտով նկատեց, որ այրի աղջամուղջում մի կենդանու գլուխ երևաց: Երևացին և ոլորապտույտ եղջյուրներ, ու ոչխարները վախվխելով դուրս եկան իրենց թաքստոցից:
Այն ժամանակ Հասոն ջրով լի ամանը ձեռքին ընդառաջ գնաց նրանց և ի ցույց դրեց մի սալ քարի: Խոյն ու գառը խրտնած փախան: Քիչ հետո դիմացի ծերպից նրանք կասկածանքով նայում էին մարդուն, բայց Թուխիկը տեղից չէր շարժվում:
Հասոն վերադարձավ կրակի մոտ և շարունակեց նվագել: Ոլոր-մոլոր ու դանդաղ բարձրացող ծուխը, սրնգի նվագը անասելի ուժով կենդանուն քաշում էին դեպի իրենց:
Դունչն առաջ մեկնած-հիպնոսացած նա քարացել էր տեղում, երբ սրինգը հնչեց ջրի գնալու եղանակը: Ոչխարի մարմնով հաճելի դող անցավ: Այնպես վառ կերպով վերակենդանացան անցյալի պատկերները կենդանու ուղեղի ծալքերում, որ նրան թվաց, թի տեսնում է իր հազարավոր ընկերներին լանջից ջրի իջնելիս և լսում է առվի խոխոջյունը: Շատ էր ծարավ Թուխիկը, և նվագի կախարդիչ զորությամբ շարժվեց դեպի ջուրը, որի ներկայությունը զգում էր հեռվից: Հասավ ամանին, զգուշությամբ դունչը մեկնեց, ապա փռռացնելով ետ քաշվեց խրտնած: Բայց ջուրը գայթակղեցնում էր նրան: Համոզվելով, որ վտանգ չկա, նա վերջապես խմեց, կշտացավ և շուռ գալով բայուն արձակեց, - երևի ձագերին էր հրավիրում: Ասենք, նրա հրավերը հարկավոր էլ չէր. ձագերից ավագը վախվխելով առաջ էր գալիս, ամեն վայրկյան ետ փախչելու պատրաստ: Շատ հավանական է. որ երազի նման նա ևս հիշում էր խարույկի ծուխը, մարդ արարածին կամ նրա նվագը...
Բայց նա շատ առաջ չեկավ, իսկ գառը նույնիսկ իր բարձունքից չիջավ լանջը: Հասոն դանդաղ մոտենում էր Թուխիկին և ձեռքն առաջ մեկնած, շրթունքներով «պռու, պռու, պռու» ձայներ էր արձակում, որով հասկացնում էր, թե ափի մեջ աղ կա. այդպես են հովիվները գրավում և բռնում ոչխարներին: Բայց աղը չէր գայթակղեցնում Թուխիկին, ամեն օր ջրի հետ նա աղ էր ընդունել և ժամանակի ընթացքում կորցրել աղի հետ կապված այն ռեֆլեքսները, որոնք այնքան զարգացած են բոլոր խոտաճարակ կենդանիների մեջ:
Ամբողջ օրը նստեց Հասոն խարույկի մոտ, նվագեց, հազաց, խոսեց ինքն իրեն: Այդպիսով կենդանիներին վարժեցրեց իր ներկայությանը և նրանց մեջ վստահություն առաջ բերեց իր նկատմամբ: Նրանք տեսան, համոզվեցին, որ խաղաղ արարած է այդ երկոտանին և նրանից ոչ մի վնաս չի գալիս իրենց:
Այնուամենայնիվ, գոյության դաժան կռվի փորձը նրանց թելադրում էր զգույշ լինել, ո՛վ գիտի, թե ի՞նչ դավադիր մտադրություններ կան քողարկված այդ գրավիչ դայլայլի տակ...
Երեկոյան դեմ Հասոն, դատարկ ամանը վերցնելով, քայլեց դեպի տուն: Վերադարձի ճամփին նա շրջեց Հովազաձորի վերին դարավանդներում, կուզեկուզ արավ կաքավների հետևից և մի արևկող բաց տեղում հասկավոր խոտերի պատահեց: Տրորեց բռի մեջ հասկերը՝ երկար, սուր-սուր և լղարիկ

հատիկներ դուրս եկան, որոնք կապտավուն գույն ունեին: Գցեց բերանը, համը տեսավ և ինչքան ուժ ուներ գոռաց.
- Աշո՜տ, Գագի՜կ, ցորեն եմ գտել, եկե՜ք, եկե՜ք, ցորեն եմ գտե՜լ...
Այդ լուրը կայծակի ազդեցություն ունեցավ անձավաբնակների մեջ: Ցորե՜ն... Դա հո մուրազ է, դա այն է, որի պահանջը նրանք զգում էին իրենց բոլոր նյարդերով: Հացի սովոր մարդու համար ավելի անտանելի բան չկա, քան միայն մսով սնվելը:
- Դարձել ենք իսկական էսկիմոսներ, - գանգատվում էր Աշոտը, բայց նպատակն ուրիշ էր. այսինքն՝ եթե էսկիմոսները կարող են միայն մսով ապրել, ուրեմն իրենք ևս կարող են ապրել առանց հացի: Բայց այդ ուժեղ և քաջառողջ պատանին անգամ խիստ նեղվում էր հացի բացակայությունից: Կիսահում խորովածից և գիշերները մրսելուց նրա ստամոքսն անգամ հիվանդանում էր: Այդ գործում բուժիչ դեր էին կատարում ուռենու տակից գտնված անանուխը, վայրի մրգերը, մանավանդ զկեռը և մամուխը, որոնք իրենց մեջ ստամոքսը բուժող նյութեր ունեն և որոնցից Շուշիկը միշտ դեղի համար ուներ թաքցրած:
- Գալիս ենք, գալի՜ս, - ներքևից ձայն տվեց Աշոտը և շտապեց դեպի վեր: Նրան հետևում էին Գագիկն ու Շուշիկը, իսկ Սարգիսը քարշ էր գալիս խմբի հետևից, ցորեն գտնելու լուրը նրան ևս հանել էր իր տաք տեղից:
Հևիհև տեղ հասան, փռվեցին խոտերի մեջ:
- Ես ձեր լղարիկ հասկերին մատաղ, որտե՞ղ եք, ախր ձեր կարոտից մեռանք, - վայրի տարեկանի նվազ հասկերը շոյում ու իր հանգի կատակում էր Գագիկը:
Փշրում էին նրանք հասկերը, փչում մղեղը և բարալիկ ու մանր հատիկները բերանները գցում:
- Չեղա՜վ, ընկերնե՜ր, հում-հում չի կարելի...
Ախ այդ Աշոտը, սպանեց էլի իր կարգ ու կանոնով, չի թողնում, որ մարդ ապրի իր ուզածի նման: Դե հիմա եկ թուքդ զսպելով հասկ հավաքիր: Այդքան համբերություն ո՞վ ունի:
Բայց քանի որ առաջին օրից խոսք էին տվել կատարել իրենց պետի պահանջները, ուրեմն և առարկել չէր կարելի:
Հասկեր քաղեցին ո՜վ ինչքա՜ն կարող էր, և երբ մութն ընկավ՝ իջան անձավն ու, օջախի մոտ նստած, սկսեցին մեկ-մեկ տրորել, հատիկահան անել: Ապա ինքնարար կավե ամաններից մեկը դրին կրակին և սկսեցին նրա մեջ բովել վայրի ցորենը:
- Շոռ ջուր խառնենք՝ համը տեղը գա, - առաջարկեց Գագիկը: Դե սննդի ու համի գործից նա ավելի էր հասկանում, քան մյուսները, ուստի նրան չառարկեցին:
Եվ քիչ անց մեր պատանիները խորին բավականությամբ ծամում էին համեղ աղանձը, այնքան համեղ, որպիսին առատ ու լի կյանքում երբեք չի պատահում:
- Հիմի որ հասանք լուսահոգի ճգնավորին՝ սննդի որակի գործում... խե՜ղճ մարդ, տեսնես ի՞նչ վախճան է ունեցել...
- Երևի մեռել է այրում և մեր տեսած արջի պապը գտել ու դուրս է տարել, - իր կարծիքը հայտնեց Աշոտը:
- Ինչի՞ց գիտես:
- Դրսի թփերում մի գանգ կա ընկած...
- Վա՞յ, գա՞նգ, - վախեցած շեմքին նայեց Շուշիկը. կարծես հիմա գանգը ներս պիտի մտներ:
- Դե լա՜վ, ուրիշ բանից խոսեցեք, - մեջ մտավ Հասոն:
Լռեցին: Ի՞նչ անել, ինչո՞վ զբաղվել: Զարմանալի բան, հենց լռում էին ու տարվում իրենց մտքերով, թախիծն սկսում էր պատել նրանց:
Օրվա պարենը հայթայթելու հոգսով տարված, մեր գերիները քիչ ժամանակ էին ունենում մտքով վերադառնալու իրենց հարազատների մոտ: Իսկ այժմ, երբ արդեն շատ թե քիչ ապահովված էին ձմռան պաշարով, իրենց հոգու թևերով տեղափոխվել էին որը՜ Այգեձոր, որը՜ Ֆերման ու պատկերացնում էին, թե ի՞նչ բերկրանք պիտի զգան իրենք ու իրենց հարազատները, երբ վերջապես դուրս կգան այս զնդանից:
Միայն Սարգիսն էր, որ այդ զգացմունքը չուներ, նրան այժմ ա՛յլ մտքեր էին հուզում, մտովին նա ա՛յլ կերպ էր պատկերացնում իր հանդիպումը հոր հետ և ա՛յլ բաներ էր ասում նրան...
Բայց ի՜նչ հանգիստ էին քնելու այդ գիշեր...
Գագիկը շուտով քուն մտավ, և Աշոտը ազատ մնալով նրա հսկողությունից, սկսեց խրատ կարդալ Շուշիկի գլխին.
- Կեցցե՜ս, ամենածանր պայմաններում էլ մարդ պետք է բարձր մնա: Կեցցե՜ս: Վաղը մենք բաղնիք էլ կունենանք, լավ ես մտածել: Ես այդ բանը կկազմակերպեմ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ. Թե ինչպես մի խեղճ կենդանի գերի գնաց իր մայրական զգացմունքներին

Մյուս օրը Հասոն գնում էր իր Թուխիկին գտնելու: Անհամբեր և ուրախ սրտով էր գնում: Գնում էր այն մեծ հուզումով, որով համակված է լինում քուրդ հովիվը կորած կենդանին փնտրելիս: Նրա հայրն էլ էր հովիվ, պապն էլ, պապի պապն էլ հովիվ էր եղել: Նա իր էությամբ խաշնարած էր: Աչքը բացել էր՝ գառ ու ոչխար էր տեսել, նրանց հետ էլ պիտի ապրեր մինչև խորին ծերություն: Քուրդն այդպես է, նրա համար ուրիշ կյանք, ուրիշ զբաղմունք գոյություն չունի: Քրդերն այսպիսի մի առած ունեն. «Թե որ ուզում ես տղադ մա՛րդ դառնա, չոբա՛ն դարձրու»:

Սարերի սիրահար է քուրդ հովիվը: «Քո սիրո համար ես ամեն ինչ կանեմ: Կուզե՞ս սարից իջնեմ չոբան դառնամ ձեր շոգ գյուղում», - ասում է նա իր սիրած հայ աղջկան:

Սարից իջնել Արարատյան շոգ դաշտը... Դա այնպիսի զոհողություն է, որ միայն սիրածի համար կարելի է անել, քրդին եթե կուզես ծանր պատիժ տալ, իջեցրու իր սիրած սարերից, ծաղկոտ մարգագետիններից, շաղոտ սարալանջերից:

Հիմի պա՞րզ է, թե ինչ հոգու տեր կարող էր լինել պատանի Հասոն: Վեց շաբաթ էր, որ նա կտրվել էր իր սիրած հոտից: Դա հո մի ամբողջ հավիտենականություն է քրդի համար: Այնպե՛ս էր կարոտել Հասոն ֆերմայի հոտին... Հիմի ոչխարներն սկսել են ծնել, հիմի փարախում անհաստատ ու թույլ ոտքերով շրջում ու բայում են չալտիկ գառները... Գոնե հաջողվեր Թուխիկին բռնել: Իր ձեռքով կծնեցներ նրան, կխնամեր ու կարոտը կառներ: Այդ Աշոտն էլ բոլորովին մարդ չի ճանաչում: Ոչխարները վերին ժայռերում են, իսկ նա Հասոյին ուրիշ գործի է դնում: Թող նրան պատվիրեն գիշեր-ցերեկ Ոչխարանոցում մնա և նա գոհ կլիներ: Եթե չկարողանա բռնել վայրենացած կենդանիներին, գոնե հեռվից կտեսնի, կլսի նրանց անուշ ձայնը...

Դուրս եկավ նա Ոչխարանոցի դիմաց, հայացքով խուզարկեց նրա անկյունները, թփերը և գոտուց հանեց իր սրինգը:

Ահա դիմացի չորացած մոլախոտերի միջից մի զույգ եղջյուրներ բարձրացան: Երևաց և գառը՝ եղնիկի նման ականջները սրած, ամեն վայրկյան փախչելու պատրաստ: Իսկ Թուխի՞կը:

- Լո՛, լո՛, լո՛, լո՛, - երկար նվագեց Հասոն, նույնիսկ ջրի գնալու եղանակը փչեց, բայց Թուխիկը չերևաց:

- Հա՛, ես գիտեմ ի՞նչ է պատահել, -հանկարծակի ուրախացավ տղան և գնաց ուղիղ Փարախը:

Հենց ներս մտավ, աղջամուղջից դուրս թռավ Թուխիկը և շուռ գալով, սկսեց տագնապահար մայել:

- Բալա ունես, հա՞, - ուրախ հարցրեց հովիվն ու խարխափելով առաջ գնաց: Նրա աչքերը հետզհետե վարժվեցին քարանձավի մութին, երևացին անհրապույր, խորդուբորդ պատերը: Ահաբեկված մայրը շարունակում էր մայել, կանչել, - ահաբեկված ո՛չ իր կյանքի համար, այլ այն փոքրիկի, որ այժմ, հավանաբար մի անկյուն խցկված՝ դողդողում էր բնազդական երկյուղից, այդ երկյուղը նրան ներշնչում էին մոր տագնապալի կանչերը: Բնազդը նրան թելադրում էր մնալ լուռ և անշարժ: Բայց դա նոր բնազդ էր, որ մայրը ձեռք էր բերել երկու տարում և փոխանցել իր ժառանգին: Իսկ հին, վաղուց արմատացած ոչխարային բնազդը ասում էր. «Հենց մայրդ կանչեց, արձագանքիր նրան»: Եվ նա արձագանքեց մի թույլ մայոցով: Հասոն գնաց ձայնի ուղղությամբ, պատերը շոշափելով գնաց: Վերջապես նրա ձեռքի տակ խլրտաց դեռևս խոնավ արարածը:

- Բռո՛ւ, բռո՛ւ, բռո՛ւ, - մեղմ օրորի նման ասում էր Հասոն և գրկի մեջ տաքացնում ու շոյում նորածնին: Նա դուրս ելավ այրից և քայլեց դեպի արահետի օջախը: Թուխիկը բարձր կանչերով հետևում էր նրան, ո՞ւր են տանում իր սիրասուն ձագին...

Եթե մեկը բարձրանար Ոչխարանոցի դիմաց, քիչ անց այսպիսի տեսարան կբացվեր նրա առաջ, դանդաղ ու ոլոր-մոլոր ծուխ է բարձրանում ժայռի ճակատին ձգվող արահետից: Կրակի մոտ նստել է Հասոն, սև դնչով ճերմակ գառը գրկին: Խաղաղված մայրը կանգնել է կրակի մոտ, տաքանում է և դունչը մեկնած՝ լիզում իր ձագին: Ճիշտ է, Հասոյի ամեն շարժումից նա խրտնում է ու ետ ցատկում: Բայց ո՞նց հեռանա ձագից և ո՞նց չվստահի այն մարդուն, որ այնպես սիրալիր փայփայում ու տաքացնում է իր բալիկին:

Հասոն ամանով լիքը ջուրը դրեց Թուխիկի առաջ. ծննդկան կենդանին սովորաբար խմում է ագահությամբ, տոչորված սրտով: Խմեց Թուխիկը և ինքն էլ զգաց, որ մտերմանում է այդ մարդու հետ: Նրա ձեռքից «թոփալախոտ» հափշտակեց ու կերավ:

Դունչը դեմ արավ, որ շոյեն իրեն... Ռոպե առ ռոպե վերականգնվում էին իր նախկին սովորությունները, իր կորցրած մտերմությունը մարդու հետ:

- Դե՛հ, թող ծծեցնեմ քեզ, Թուխի՛կ, ախր մեղք է բալեդ, - համոզում էր Հասոն: Բայց Թուխիկը դեռ լիովին չէր վստահում նրան, իր մյուս ձագերին նա պայքարով էր պաշտպանել: Ճիշտ է, Հովազածորում չէր հանդիպել իր ցեղի սարսափելի թշնամուն՝ գայլին, բայց երբեմն ժայռաշարքի մյուս երեսից անծանոթ

հոտ էր առնում և զարհուրում: Երևի դա այն ժամանակ, երբ հովազ էր մտնում ձորը: Այդ գարշելի հոտը և հեռվից եկող մռնչյունը նրան զգոն էին պահում: Ամեն աշնան արջ էլ էր երևում Հովազաձորում: Բայց Թուխիկը նրանից մեծ ահ չուներ, տեսել էր, որ նա ծառերի տակ միրգ հավաքելով է զբաղված: Իսկ արծիվներից նա սարսափում էր: Լուռ ու անշարժ նստած ժայռերին, նրանք հայացքով հետևում էին, որ գառը հեռանա մորից...
- Լո՛, լո՛, լո՛, լո՛, - մեղմ ու թախծոտ հնչում էր Հասոյի սրինգը և բոլոր տագնապները վանում կենդանու միջից, հանգստացնում, խաղաղեցնում նրան:
Վերջապես շոյելով ու համոզելով, Հասոն գառանը գցեց մոր տակը, և սա սկսեց ծծել, փոքրիկ պոչը արագ-արագ շարժելով: Նա դժվարությամբ էր կանգնում ոտքի վրա, սրունքները դեռ փափուկ էին ու թույլ, իսկ կճղակների տակ դեռ լպրծուն ճերմակ շերտ կար կպած, որ պիտի հետզհետե չորանար ու ամրանար:
Երբ ծծեց կշտացավ, Հասոն, ինչպես որ կարգն էր, կապ գցեց ու կտրեց գառան պորտը, ապա կրոլինի լուծույթի փոխարեն մոխրի լուծույթով դաղեց-ախտահանեց, որպեսզի վարակ չանցնի կենդանու որովայնը, և գրկելով նրան, առաջ ընկավ:
Թուխիկը դունչը առաջ մեկնած և երբեմն էլ բայելով հետևում էր նրան, բայց և իր ուշադրության կեսը մնացել էր հետևում: Նրա ավագ որդիները զարմացած նայում էին ու չէին կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ մայրը լքում է իրենց և հնազանդ հետևում այդ անծանոթ ու կասկածելի արարածին:
Այնուամենայնիվ, հեռվից հեռու, զգուշությամբ նրանք քայլեցին Հովազաձոր տանող կածանով և ժայռի գլխից տեսան, որ իրենց մայրը կանգ առավ մի այրի մուտքի առաջ, շուռ եկավ, երկար բայուն արձակեց (կանչո՞ւմ էր իրենց, թե՞ հրաժեշտ էր տալիս...) և մարդու հետևից մտավ ներս...
Երկար նայեցին կենդանիները վերևից և անմեկին թախիծ պատեց նրանց: Եվ եթե փոքրը լեզու ունենար, լացակումած կասեր մեծին. «Մաման գնա՛ց... մենք որբ մնացինք...»:
Իսկ «մաման» հանգիստ խոտ էր ուտում օջախի մոտ և սիրատոչոր հայացքներ ձգում կրակի մոտ տաքացող իր ձագի վրա:
Այրում ոչ ոք չկար, երբ Հասոն ներս մտավ, տղաները գնացել էին վառելիք հայթայթելու, իսկ Շուշիկը ուռենու մոտից բավականաչափ գիլ հանելուց հետո, շիվեր էր կտրում թփուտներում: Նա ներս մտավ մի խուրձ ոստեր ուսին, մի գունդ գիլ ձեռքին ու անակնկալի եկած կանգ առավ շեմքում:
- Վա՛յ, ինչ լա՛վն է, - ճչաց նա դեպի գառն շտապելով:
Մայրը երկյուղով վեր ցատկեց և իր վզի տակ առավ ձագին, այնպես, ինչպես անում էր անգղի հարձակման ժամանակ:
- Կամա՛ց, Շուշի՛կ, մի՛ խրտնեցրու... Արի մի փափուկ տեղ պատրաստենք գառան համար:
Նրանք խաշամից ու խոտերից փափուկ բույն պատրաստեցին և գառին դրին նրա մեջ: Մայրը, որ սկզբում անհանգստացել էր նրանց այդ արարքից, վերջապես հասկացավ և գոհ մնաց: Այժմ իր բալիկը ապահով է թե՛ ցրտից , թե՛ թշնամուց:
- Հիմի, քո՛ւր ջան, քեզ էնպես մի բան ուտեցնեմ, որ կյանքումդ կերած չլինես: Առ էս փուչիկը մաքուր լվա, - ասաց Հասոն՝ աղջկան հանձնելով «ոչխարի ծին» կոչված բարակ ու թափանցիկ պարկը, որ հետը բերել էր Փարախից:
- Լվացի՞ր, դե չոքիր ու պահիր ոչխարի տակ:
Թուխիկը շատ դժվարությամբ թողեց կթել իրեն, բայց երբ Հասոն մատների վարժ շարժումներով սկսեց կթել, կենդանին «շեքը» դեմ արած հանգիստ կանգնել էր. լիքը կուրծը նեղում էր նրան և հաճույք էր զգում, երբ դատարկում էին այն: Այդպիսի հաճույք նա մեկ էլ երկու տարի առաջ էր զգացել, որ հիմա հետզհետե վերականգնվում էր նրա պղտոր հիշողության մեջ:
- Գառնուկին բան չթողեցիր, - բողոքեց Շուշիկը.
- Սա դալն է, սրանից շատ չեն տա, փորհարինք կընկնի, - բացատրեց հովիվը, պարկի միջի դեղին ու թանձր կաթը ցույց տալով: - Դե հիմի տես ինչ եմ անելու:
Նա կապեց պարկի բերանը, ստացվեց խաղագնդակի նման կլոր և նրա չափ մի բան:
Կաթով լիքը փուչիկը տղան թաղեց կեծացած մոխրի մեջ և ծածկեց:
- Վա՞յ, հիմա կվառվի, կաթը կթափվի, - անհանգստացավ Շուշիկը, որ կաթի տեսքից դարձել էր անհամբեր ու դյուրագրգիռ:
- Արդեն չորս կողմից պանրի նման պնդվեց, չի թափվի, - ժպտալով հանգստացրեց Հասոն:
Նրանք մի պահ լուռ նայում էին կրակին:
- Հասո՛, քո եղբոր փոքր աղջիկն ինչքա՞ն դառավ, - լռությունը խզեց Շուշիկը:
- Ադլայի՞ն... Երկու տարեկան, - ջերմությամբ հիշեց Հասոն:
- Հիմի ճիպոտը ձեռքին վազում է գառների հետևից... Ու մեկ-մեկ էլ երևի հարցնում է մորը՝ ո՞ւր է մեր Հասոն...

Ասաց և զղջաց, տղայի աչքերում արցունքներ երևացին:
- Հա՛, կարոտել եմ լակոտին... Ախր չգիտես, թե ի՞նչ անուշ բալիկ է... Հիմիկուց ոչխարի գլուխը բռնում է ու մորս ասում՝ կթի, կթի.... Լա՛վ կթվոր կդառնա..,
«Լա՛վ կթվոր կդառնա»... Դա արդեն ամենամեծ գովասանքն է, որ կարող է ասել քուրդը իր հարազատի մասին:
- Ասում է, դա՛յե[46] , մածունը խառնիր կաթին՝ տուր ուտեմ: Խառնում են դնում առաջը: Ոտը գետին է խփում, թե՝ հիմի էլ կաթը մածնից ջոկեցե՛ք...
Շուշիկն անձայն ծիծաղում էր, նուրբ շրթունքների հետևից ցույց տալով իր ճերմակ ատամնաշարը:
Մի պահ երկուսն էլ լռեցին և նայում էին կրակին:
- Իսկ ինչո՞ւ է անունը Ադլայի: Այդպիսի անուն կարծեմ քրդերը չունեն, - հարցրեց Շուշիկը:
- Չունեն, ճիշտ է, նոր անուն է դա: Ադլայի, նշանակում է՝ խաղաղություն: Հիմի Ալագյազի քրդերից շատերն իրենց երեխաների անունը Ադլայի են դնում...
- Լա՛վ անուն է, գեղեցի՛կ, իմաստալի՛, - հավանություն տվեց Շուշիկը և քիչ մնաց հարցնի՝ «չբացե՞նք», բայց զսպեց իրեն, անհարմար էր, նա հո բկլատ Գագիկը չէ՞ր: Բայց Հասոն հասկանում էր, թե ինչ է կատարվում աղջկա հետ. դե որ կրակի մեջ «դալ» լինի եփելիս, ո՛վ կարող է հանգիստ նստել օջախի մոտ...
Է՞լ ինչ խոսեին, մինչև դալը եփեր:
- Իսկ ինչպե՞ս եք դուք մեր գյուղն ընկել, Հասո՛:
- Մենք հայերի հետ գաղթել ենք է՛ն մեր դիմացի սարերից, Մասիսի փեշերից: Մենք եզդի՛ քուրդ ենք, կան և մուսուլման քրդեր: Թուրքերը մուսուլման քրդերին հանեցին հայերի դեմ, իսկ մեր պապերը հայերին պաշտպանեցին, մենք միշտ հայերի հետ ախպեր ենք եղել: Թուրք փաշաները հայերի հետ մեզ էլ սկսեցին կոտորել: Մենք էլ հայերի հետ փախանք: Արազն անցկացանք, ռուս զորքի թևի տակ մտանք, ազատվեցինք յաթաղանից: Դե ես դրանք չեմ տեսել, հերս է պատմում: Հիմի մերոնք հայերի գյուղերում ցրված, նրանց հետ ախպերացած, չոբանություն են անում ֆերմաներում ու լավ էլ պատիվ ունեն:
- Բա ձեզ իսկի գյուղեր չունե՞ք:
- Գյուղեր էլ ունենք, դպրոցներ էլ, բանաստեղծներ էլ: Քրդերեն գրքեր էլ են տպում: Մենակ, ափսոս, իմ ուսումը մնաց կիսատ, դե մենակ մեզ համար հո դպրոց չեն բացելու:
- Ոչի՛նչ, Հասո՛, դու էլ հայերեն սովորիր, հայերեն տառերն արդեն գիտես, հայի նման ես խոսում, ի՞նչ է մնում որ... մնում է մի քիչ պարապես: Կսովորե՞ս, ես քեզ հետ կպարապեմ:
- Բա չե՞մ սովորի... էնպե՛ս եմ ուզում սովորե՛լ... Բայց մենք հո միշտ էստեղ չենք մնալու, որ դու ինձ գիր սովորեցնես...
- Ոչի՛նչ, ես ամեն կիրակի մեր օղակի հետ ֆերմա եմ գալու, մենք հո չենք թողնում հորթերի շեֆությունը: Մինչև կիրակի մայրս կպարապի հետդ, կիրակի օրերը ես կգամ կստուգեմ ու դասդ կփոխեմ... Լա՞վ...
- Լա՛վ, աչքի՛ս վրա, - ձեռքն աջ աչքին խոնարհաբար դնելով ասաց Հասոն: Կուզեր նաև ասեի որ ինքը շատ է շնորհակալ Շուշիկից՝ նրա սրտալի, ջերմ վարմունքի համար, բայց ամաչեց:
- Իմ էլ աչքի վրա, - Հասոյի նմանությամբ ձեռքը աջ աչքին դնելով ասաց Շուշիկը և ծիծաղեց: - Քրդավարի՞ դուրս եկավ, թե հայավարի...
- Քրդավարի՛, - ծիծաղեց Հասոն:
Է՞լ ինչի մասին խոսեին, որ ժամանակն անցներ:
- Բայց մեզ մոտ քրդեր չկան, հայրդ քո մորը որտեղի՞ց է բերել:
- Չի բերել, գնել է, - ծիծաղեց Հասոն: - Կարծեմ, քսան ոչխար է տվել, մի ձի ու բերել Ալագյազի գյուղերից...
Երկուսն էլ ծիծաղեցին:
- Հիմի որ ժամանակն է...
Այդ ասելով, Հասոն ձեռքի փայտով օջախի բլրակը քանդեց ու նրա միջից խանձված ու շագանակագույն մի գնդակ հանեց:
- Վա՛, դա կուտե՞ն որ... Ամբողջը մոխիր ու մրճեղ է, -ետ քաշվեց աղջիկը:
Տղան բարեսրտորեն ծիծաղեց:
- Հո էսպե՞ս չեն ուտելու: Կա՛ց, ես պատրաստեմ, կտեսնես, որ ամենամաքուր բանն է: Մի տետրակ տուր դեսը...
Նա կեղևահան արավ այդ գունդը և կլպած ձվի նման մի բան դրեց տետրին ու միջից կիսեց դանակով:
- Դե կեր: Մենք սրան սուլուղ ենք ասում, ու միշտ հանդում պատրաստում ենք սրանից... Համը տե՞ս, սրա նման համով բան չկա:
Իրոք, սքանչելի էր հովվական այդ պարզ կերակուրը, և եթե Շուշիկը չամաչեր բոլորը կխփշտեր:

---

[46] Դայե – մայրիկ:

- Իսկ դո՞ւ... Դու էլ կեր, - խնդրում էր նա:
- Է՜հ, ես էնքա՜ն եմ կերել: Գարունքն ամեն օր հանդերում սուլուղ եմ անում: Կե՜ր, դո՜ւ կեր...
Եվ իր ներկայությամբ աղջկան չընկճելու համար այրից դուրս գնաց ճիպոտներ կտրելու պատրվակով:
Բայց Շուշիկը հո այնքան եսապաշտ չէր, որ միայն իր մասին մտածեր: Նա խիժը հինգ հավասար մասերի բաժանեց, իր բաժնի վրա աղաջուր ցանեց ու կերավ, իսկ մնացածը թողեց ընկերներին:
Երբ քիչ հետո Հասոն մի կապ ճիպոտներ թևի տակին ներս մտավ, Շուշիկը ծիծաղելով հարցրեց նրան.
- Էն մյուսները չե՞ն ծնելու... Ի՜նչ համով բան էր...
- Չէ՜, նրանցից մեկը թոխլի է, մյուսը՝ ղոչ, նրանք չեն ծնելու, - ծիծաղելով պատասխանեց Հասոն: -Բայց ես քեզ ֆերմայից միշտ բաժին կուղարկեմ, - ավելացրեց նա ջերմությամբ:
- Չէ՜ հե՜, ԽԾԲ եք անում իրար հե՞տ, - այրը մտնելով գոչեց Գագիկը: - Պա՜հ, Թուխիկ ջա՞ն, մեզ տեսությա՞ն ես եկել...
Թուխիկը վայրենի «փռշտոցով» ետ ցատկեց, ապա վազեց իր ձագի մոտ:
- Կամա՜ց, կամա՜ց, - ձեռքը բերանին դրած՝ ներս մտնողներին զգուշացնում էր Հասոն:
Տղաներն իրենց բերած փայտը կույտ արին այրի մի անկյունում և նկատելով իր բնի մեջ առոք-փառոք տեղավորված ճերմակ արարածին, ուրախացան: Է՜հ, կարգավորվում է իրենց կյանքը, գառը տակին ոչխար էլ ունեցան...
- Ուրեմն, կա՞թ ենք ուտելու, վա՜յ ես քո հոգուն մատաղ, քուրդ ախպեր... - ու Գագիկը Հասոյին գրկելով սկսեց պտտեցնել:
- Չէ՜, կաթի անուն չտաք, գառի բաժնից ես մի կաթիլ էլ չեմ տա ձեզ:
- Ինչի՞, ախպեր ջան, ինչի՞ Ռոբինզոնը կարող էր օտար լամային կթել, մենք մեր հարազատ ֆերմայի ոչխարին կթել չենք կարող:
Հասոն իհարկե ոչինչ չհասկացավ Գագիկի ասածից, միայն ժպտալով լրացրեց իր միտքը.
- Եթե մորը լավ ուտացնենք՝ կարող ենք օրական կես բաժակ կթել... Շուշիկի համար...
- Շան քուրքը՝ Շուշիկին, տաք տեղը՝ Շուշիկին, համեղ պատառը՝ Շուշիկին... Երանի ես էլ աղջիկ ծնվեի, կարգին խանմություն կանեի ձեր գլխին: Դա՞ ինչ է, պանի՞ր: Չէ՜, ուրի՜շ համ ունի, կարծես խիժ լինի: Հիանալի բան է: Միակ պակասությունն այն է, որ քիչ է. վայ թե իսկի տեղ էլ չհասավ...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես նյութական ապահովությունը նոր, կուլտուրական պահանջներ է ծնում մարդուս մեջ

Այսպես, մեծ տանջանքների և մեծ ջանքերի գնով մեր պատանիները հասան ցանկալի խաղաղության և ապահովության: Եղանակը բարեհաջող էր, բայց նրանք բոլոր գծերով պատրաստ էին դիմադրելու և վատ եղանակին: Վառելիքը կար, սնունդը՝ նույնպես, իսկ բնակարանը տաք էր ու հարմար: Հիմա թող Փոքր Կովկասը որքան կուզե իր բուքն ուղարկի Հովազաձոր...
Աշոտը արջի կարկատած մորթին ներքնակի տեղ գցել էր Շուշիկի տակ: Գազանի ճանկերը չռված էին, երախը՝ բաց: Թուխիկը վայրենի փնչոցով ետ-ետ էր քաշվում այդ սարսափելի ներքնակից և ձագին առնում իր դնչի տակ այնպիսի լուրջ տագնապով, կարծես իրոք հիմա դատարկ փոստը շունչ պիտի առներ ու պատառոտեր իր սիրասուն բալիկին:
Աշոտը դարձավ ընկերներին.
- Օրը տաք է, իսկական բաղնիքի օր... Սկսում ենք: Շուշի՜կ, դու այրի մոտերքից մանր քարեր կհավաքես: Հասո, դու ճյուղեր կտրիր և ամեն մեկիս համար մի ավել պատրաստիր, որ ծեծելու ենք մարմիններս: Ես ու Գագիկն էլ ջուր կկրենք:
- Հիմի որ կորանք... թոքերի բորբոքում ենք ստանալու, - փորձեց լողանալու գործը խափանել Գագիկը:
- Ոչինչ չի լինի, մի՜ վախենաք, ես ամեն բան ծանր ու թեթև եմ արել, - հանգստացրեց Շուշիկը: - Մենք ռուսական բաղնիք կսարքենք: Գիտե՞ք որն է ռուսական բաղնիքը:
- Այո՜... Որ ասես՝ կիմանանք...
- Օջախի մեջ մանր քարեր են կարմրացնում, ջուր լցնում վրան՝ տունը լցվում է գոլորշիով... Եթե դռան ճեղքերը լավ փակենք, կարելի է մեր անձավը գոլորշիով տաքացնել: Դե՜հ, էլ ոչ մի առարկություն, դրսում ձյունը հալվում է, բոլորդ էլ պիտի լողանաք...
- Շուշիկ ջան, ավելի լավ է ինձ ուղարկես էն սատկած արջի հետ կռվելու, քան թե ստիպես, որ լողանամ: Հիմի ես ասեմ ձեզ իմ բնավորությունը, մայրս ինձ կռվով է ուղարկում բաղնիք: Առաջ, որ գյուղում բաղնիք չկար, գործս լավ էր, դուրս էի պրծնում: Բաղնիք կառուցեցին՝ արևս խավարեց: Հիմի ամեն շաբաթ օր մայրս սպիտակեղենը ձեռքս է տալիս ու կարգադրում՝ գնա լողացիր...
- Այդպիսի ծանր պարտականությունը ո՞նց ես կատարում, - հեգնեց Շուշիկը:

- Կարծում ես կատարո՞ւմ եմ որ, - խորամանկ աչքով արավ Գագիկը: - Հանգիստ կաց, դրա հնարն էլ եմ գտել, ամառը գնում եմ այգիները, իսկ ձմեռը, գոմը, մի թաքուն տեղ սպիտակեղենս փոխում եմ, նորը հագնում, հինը բերում դնում մորս առաջ: Մի ծիծաղ բան է, երբ տուն մտնելուն պես մայրս քաղցրությամբ ասում է՝ բաղնիքդ անո՛ւշ, Գագիկ ջա՛ն...
Ընկերները ծիծաղեցին, բայց Շուշիկը լրջորեն դիմեց Աշոտին.
- Ստիպի՛ր, որ լողանա: Եթե հրաժարվի՝ հարցը դիր օղակում, պատժենք...
- Այդպես էլ կանենք: Գագի՞կ, այդ մասին ոչ մի խոսք:
- Ախպեր, ձեր ջուրն էլ կբերեմ, քարն էլ, փայտն էլ, միայն թե ինձ ազատեցեք այդ պատժից: Իսկի գյուղում ինձ չեն կարողացել լողացնեն, Հովազաձորի սառնամանիքո՞ւմ եք լողացնելու:
Բայց տեսնելով, որ Շուշիկն անդրդվելի է մնում իր որոշման մեջ, ճարահատյալ համաձայնեց.
- Ինչ արած, պաշտոնի ենք դրել, պիտի ենթարկվենք: Աշո՛տ, սա թող քեզ խրատ լինի, իմացի՛ր, որ կինարմատին պաշտոնի դրի՞ր՝ քեզ օր ու արև չի տալու:
- Մի գործ էլ ինձ հանձնա...
- Ո՛չ, Սարգի՛ս, դու հանգիստ կաց, դեռ ցավող տեղեր ունես, - նրա խոսքը կտրեց Աշոտը:
- Դե որ այդպես է, ավելները ես կպատրաստեմ, թող Հասոն Շուշիկի հետ քար հավաքի...
- Կեցցե՛ս, խելոք առաջարկ է: Դե՛, մենք գնացինք ջրի...
Բաղնիքի պատրաստությունները երկար չտևեցին: Մեկ-երկու ժամ անց արդեն ջուրն էլ էր եռում, քարակույտն էլ էր շիկացել, անձավն էլ էր տաքացել թեժ կրակից:
- Դե՛հ, դուք հանվեցեք, ես վազեմ մի քիչ էլ բերեմ, - ասաց Գագիկը և դուրս գնաց:
Շուշիկը մի արևկող տեղ արածեցնում էր Թուխիկին, իսկ գառնուկը տաքանում է նրա գրկում: Աղջիկը լողանալու էր երկրորդ հերթին, բայց երկար սպասեց, հերթը ոչ մի կերպ իրեն չէր հասնում. երևի ինչ-որ դեպք էր տեղի ունեցել քարայրում: Դեպքս այն էր, որ տղաները արդեն լողացել-վերջացրել էին, իսկ Գագիկը դեռ գիլ պիտի բերեր նրանց համար... Աշոտն ստիպված եղավ իջնել Ուռանոց: Այնտեղ նա Գագիկին գտավ մի քարի հետև թաքնված ննջելիս:
- Ամոթ է, տո, ո՞ւր ես կորել, - գոչեց նա վրդովված:
Գագիկը, որպես աղաչանքի նշան, իր «մորուքն» էր բռնել:
- Դե լավ, էլի՛, Աշոտ շան, հենց ինչքան դժվար բան կա ինձ ես հանձնարարում:
- Դժվարը ո՞րն է:
- Լողանալը...
Աշոտը դեմքը խոժոռեց:
- Սարգսի պակասությունների մասին խոսում ես, նրան փոխելու մասին խոսում ես: Նույնիսկ ինձ չես խնայում... Իսկ դու կարծում ես փոխվելու կարիք չունե՞ս: Թե՞ դու արտոնյալ ես...
- Փոխվեմ, ախպեր, ի՞նչ կերպ կուզեք փոխվեմ՝ միայն թե ինձ լողանալու անուն մի տա, էս ցրտին ես շոր հանողը չեմ. Կուզես առաջս մի շամփուր խորոված դիր՝ հոգիս դուրս գալով ուտեմ: Ամոթ ինձ, թե հրաժարվեմ: Միայն թե ինձ մոտ լողանալու անուն մի տա...
Ինչպե՞ս վարվես այս ծաղրածվի հետ, ծիծաղե՞ս, թե՞ բարկանաս:
Աշոտը դիմեց վերջին միջոցին.
- Ամո՛թ է, Գագի՛կ, չէ՞ որ դու առաջին օրը խոսք ես տվել՝ չխախտել մեր կարգ ու կանոնը: Չէ՞ որ դու պիոներ ես, պիոները ինչպե՞ս կարող է այդքան անկուլտուրական լինել:
Այդ խոսքերն էլ չազդեցին:
Այն ժամանակ Աշոտն ուժի դիմեց, ուղղակի շալակեց Գագիկին մի պարկ կարտոֆիլի նման ու զայրացած քայլեց դեպի ճգնավորի այրը...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչ օգուտ կարող էր քաղել երկիրը մեր պատանիներին հասած դժբախտությունից

Իրենց գոյության համար պայքարելով բնության խստասիրտ տարերքի դեմ, մեր պատանիները կարևոր գյուտեր էին արել, որոնք մեծ օգուտ կարող էին բերել երկրին: Արել էին ակամայից, առանց մտածելու, առանց այդ նպատակն ունենալու: Ինչպես որ ջուր փնտրելիս ընկան ոչխարների հետքի վրա, այնպես էլ գյուտերը կատարել էին առանց դրանց մասին մտածելու, ուղղակի սնունդ փնտրելիս:
Նույնիսկ այժմ, երբ օրեր էին անցել, նրանք դեռ գլխի չէին, թե ինչ մեծ օգուտներ կարող էր քաղել երկիրը այն բանից, որ իրենք փակված մնացին Հովազաձորում: Միայն Աշոտը իր մեջ որոշ եզրակացություններ էր հանել և այնքան լուրջ էր համարում դրանք, որ խաղաղ դադարի էր սպասում, որպեսզի հանդիսավոր կերպով խոսք բացի այդ մասին:

Վերջապես հասել էր հարմար ժամը: Բոլորն էլ լողացած մաքրված, մարմնով ու հոգով թեթևացած՝ շրջապատել էին խարույկը: Երբ Շուշիկն էլ Հասոյի հետ պարապեց և փոխեց նրա դասը, Աշոտը հայտարարեց, որ հիմա իրենք պիտի քննեն վերջին օրերի նորությունները:
- Սկսենք Թուխիկից, - ասաց նա:
- Դե ոչխար է, ծնել է, գառան հետևից եկել, այդտեղ ի՞նչ քննելու բան կա, - դեռ զրույցը նոր սկսված՝ արդեն ձանձրացավ Գագիկը: - Ավելի լավ չի՝ քննենք հետևյալ հարցը, ինչպե՞ս պահենք արջի միսը, որ թարմ մնա մինչև գարուն...
- Չի փչանա, դու մի՛ վախենա, դիր այն անկյունը, որտեղ ջուրը սառչում է, մինչև գարուն կմնա: Իսկ դու կարո՞ղ ես ասել, թե ինչու է Թուխիկը հիմա ծնվել և ոչ թե ուրիշ ժամանակ:
- Է՛, ինձ համար մեկ չի՞:
- Ո՛չ, մեկ չի: Եթե Հասոն վրա չհասներ, թաց գառը ցուրտ անձավում սատկելու էր, որովհետև նա ծնվել է անժամանակ:
Հասոն գլխի շարժումով հաստատեց:
- Հա, -ասաց նա, - Թուխիկին գնել են Զանգեզուրի մի ֆերմայից: Էնտեղի ֆերմաները ամեն ձմեռ գնում են Մուղան[47], իսկ էնտեղ ձմեռ չկա: Դեկտեմբերին չորս կողմդ կանա՛չ, ոնց որ մարտ ամսին, մարդիկ կոների[48] մեջ են ապրում... Դրա համար էլ էնտեղ ամեն տարի ղոչախառնուրդը[49] ոչ թե աշնանամտին են անում, այլ ամառվա կեսին, որ ծինը շուտ սկսվի՝ դեկտեմբերին: Դրանից էլ նրանց ոչխարները սովորել են ոչ թե գարունը ծնել, այլ՝ դեկտեմբերին: Խեղճ Թուխիկը գլխի չի, որ սա Մուղանը չի, էստեղ ձմեռը ծնվածը չի ապրի...
- Կեցցե՛ս, հիմի իմացա՞ք ի՞նչ է նշանակում հովիվ լինել, - ոգևորվեց Աշոտը:
Բնության գործերին տեղյակ մարդիկ նրան սիրելի էին, նրա աչքում ավելի հեղինակություն ունեին:
- Հիմա ասա, Հասո՛, իսկ ինչպե՞ս է եղել, որ Թուխիկի մյուս գառն ապրել է, ձմեռը չի ոչնչացել ցրտից:
- Մյուսը գարունքն է ծնվել... Ես հենց հեռվից որոշել եմ, որ նա ութ ամսական է... Իսկ թե ինչու է գարունքը ծնվել և ոչ թե սրա նման դեկտեմբերին, դա էլ գիտեմ, և եթե մտածեք՝ դուք էլ գլխի կընկնեք...
Նույնիսկ Աշոտը անակնկալի եկավ այդ ակնարկից: Իսկապես, ինչո՞ւ Թուխիկն իր մի գառին աշխարհ է բերել մարտին, մյուսին՝ դեկտեմբերին, տարեկան երկու ծնո՞ւնդ...
Բոլորն էլ մտածում էին այդ երևույթի մասին, իսկ պատանի հովիվը բարեսրտորեն ժպտում էր. նրա հայացքն ասում էր. «Դա ինչ դժվար բան է, որ չեք հասկանում...»:
Վերջապես խմբի ղեկավարին «կոտր չգցելու» համար նա շտապեց բացատրել.
- Էդ բանը Աշոտն էլ կգիտենա: Ո՞նց կարող էր էն գառը անցյալ դեկտեմբերին ծնվել, երբ նրա հայրը անցյալ ամառ դեռ վեց ամսական էր...
- Լավ, հասկացա՛... էդ ի՞նչ էր որ, դու էլ նորությո՛ւն ասացիր, - բացականչեց Գագիկը, թեև ոչինչ չէր հասկացել Հասոյի «հովվական հաշիվներից»:
- Բայց Թուխիկի գառները մեծ օգուտ կտան մեր ֆերմային: Սա, - Աշոտը ձեռը մեկնեց դեպի նորածինը, - արդեն ոչխարի նոր ցեղ է, այնպիսի ցեղ, որ ձմեռը ցրտից չի ոչնչանում և ձյան տակից կեր է ճարում...
Հասոն նրա այդ խոսքից այնպես հանկարծակի ուրախացավ ինչպես սովոր են ուրախանալու պարզ մարդիկ:
- Էդ հո... Մի հնարքով մյուսներին էլ բռնենք... Նոր ցե՛ղ... էդ հո իմ հերը կգժվի ուրախությունից...
- Ուրախանալ կարելի է, բայց գժվել հարկավոր չի... Աշոտ, զրույցդ չի՞ վերջանում, ախր էն միսը...
- Համբերի՛ր, Գագի՛կ, դեռ նոր ենք սկսել:
Աշոտի սկսած բնասիրական զրույցը իսկի վե՞րջ կունենա որ: Նրան որ թողնես մինչև լույս գազանների մասին կխոսի:
- Այդ մե՛կ նվաճում, - հանդիսավոր հայտարարեց նա, - ուրեմն մենք արդեն ունենք ցրտադիմացկուն ոչխարի ցեղ: Անցնենք մեր մյուս կարևոր գյուտին: Իսկի մտածե՞լ եք, որ ժամանակից շուտ եկած ձյունը շատ մեծ վնաս տվեց մեր կոլխոզին, - հարցրեց նա:
- Հա՛, բամբակի մի մասը մնաց ձյան տակ, ո՞նց չմտածենք:
- Ո՛չ, Շուշի՛կ, բամբակը դեռ կարելի է գարնանն էլ հավաքել (թեև որակը նույնը չի լինի), բայց այգիները բաց մնացին, ձյունը ժամանակ չտվեց վազերը թաղեն: Հիմի դրա հետ կապված մի հարց պիտի պարզենք: Գնա՛նք, դեռ օր կա, գնանք մեր խաղողի այգին, այնտեղ կարևոր գործ կա անելու, այնտեղ էլ կպարզեմ իմ միտքը...

---

[47] Մուղանի դաշտը գտնվում է Ադրբեջանում, Արաքս և Քուռ գետերի ստորին հոսանքի ափերին:
[48] Կոն – քրդերեն՝ վրան:
[49] Ղոչախառնուրդ – խոյերին մայր ոչխարների հոտին խառնելը:

Երբ հասան այգուն, ցրիվ եկան, փորփրեցին ձյունը, պառկած վազերը վեր քաշեցին և նրանց տակ թափթփված խաղողի հատիկներ գտան, որոնք գիշերվա սառնամանիքից պնդել էին կաղինների նման:
- Անցա՛ն էն երանելի օրերը, երբ «ոսկեհատի» ճութեր էինք ուտում, - ախ քաշեց Գագիկը: - Ասա, ինչի՞ համար ես բերել մեզ այստեղ: Որ հիշենք ու տանջվե՞նք...
- Բերել եմ, որ կտրոններ կտրտենք ու թաղենք հողի մեջ: Հասո՛, դանակը դեսը տուր, իսկ դուք կացնով փորեցեք հողը երկար առվի նման...
- Հետո՞...
- Հետո կասեմ...
Երբ բավականաչափ կտրոններ կտրտեցին և պահ տվին հողին, Աշոտը նստեց մի թմբի ու բացատրեց իր միտքը.
- Մենք շատ նեղ օրեր քաշեցինք այս ձորում փակված: Բայց միայն այս կտրոնների համար կարելի էր երկու այդքան նեղություն կրել: Այս կտրոններից այնպիսի այգի կգցենք մեր՛ կոլխոզի համար, որի վազերը աշնանը չեն թաղում և գարնանը չեն բացում: Սրանք սառնամանիքին սովոր վազեր են ու ձմեռը չեն փչանում:
Հասոն զարմանքով տեսավ, որ Աշոտի այդ խոսքից անպատմելի ուրախություն պատեց իր ընկերներին: Միշտ ոչխարի հոտի հետ լինելով, նա չէր կարող հասկանալ, որ Աշոտի գյուտը մեծ հեղաշրջում է առաջ բերելու Արարատյան դաշտի այգեգործության մեջ: Իսկ այդ բանը, նրանից բացի, բոլորն էլ գիտեին, որովհետև այգեգործական գյուղի զավակներ էին: Նրանք գիտեին, թե ի՛նչ մեծ տանջանքների ու ծախսերի հետ է կապված ամեն աշնան այգիները հողով ծածկելը և ամեն գարնան նորից բացելը: Դա գուցե Արարատյան դաշտում միակ գործն էր, որ մեքենայացման չէր ենթարկվում, դե խաղողի ծուռումուռ, չռված-փռված թփերը մեքենայով ծածկե՞լ կլինի: Եվ ամեն աշուն հենց վազերը ազատվում էին իրենց բերքից, կոլխոզը ոտքի էր հանում իր բոլոր մարդկանց, նույնիսկ լեռնային շրջաններից օգնական ուժեր էր վարձով բերում, որ մինչև ձյունը գալը հողի տակ թաղի վազերը: Իսկ երբ ձմեռը հանկարծ շուտ էր վրա հասնում հերվա ձմռան նման, հնարավոր չէր լինում բոլոր այգիները ծածկել հողով և որը բաց էր մնում՝ ցրտահարվում էր:
Այդպիսի դեպքերում կոլտնտեսությունը երկու տարի զրկվում էր խաղողի բերքից, մինչև նոր շիվերը աճեին և դառնային բերքատու:
Հովազաձորի վայրի այգին այդ մեծ հոգսից կարող էր ազատել մեր կոլտնտեսություններին: Այդտեղի վազերն էլ էր մարդը տնկել: Բայց անթաղ մնալով՝ նրանք ցրտահարվել-փչացել էին և մնացել էին ու բերք էին տալիս միայն այն վազերը, որոնք դաժան բնության մեջ հարմարվել էին ցրտին, երաշտին:
Նրանք այլանդակվել էին, քանի որ չկար խնամող ու ձևավորող մարդը: Բայց մի կարևոր հատկություն էին ձեռք բերել տասնամյակների ընթացքում. Դիմանում էին դաժան տարերքին: Նրանք դիմացկուն էին դարձել նաև հիվանդությունների դեմ: Որովհետև չկար նրանց բուժող մարդը:
Մանկուց այգեգործությանը քաջ ծանոթ մեր պատանիներն այդ բոլորն առանց ասելու էլ գիտեին, ուստի մեծ ոգևորությամբ փոսեր փորեցին, նրանց մեջ թաղեցին մեծ քանակությամբ կտրոններ այնպիսի հոգատարությամբ, ինչպես եթե գանձ լինեին թաքցնելիս:
-Ա՞յ գործը... Մեր այս վազերի համար դեռ գիտությունների ակադեմիայից էլ մարդիկ կգան Հովազաձոր... Միայն թե այստեղից դուրս պրծնեինք:
Երբ աշխատանքը վերջացրին, ձորն արդեն կուլ էր գնացել աղջամուղջին, և խորխորատներում թանձրանում էր խավարը: Քրտնած էին:
- Է՛հ, հեղեղի մեջքը կոտրի, իմ աբան չտաներ, հիմի հագիցս կհանեի Շուշիկի մեջքին կգցեի,- ընկերներին աչքով անելով ասաց Գագիկը:
Հասոն, որպես պատասխան, իր մահակը ցույց տվեց:
- Իսկապես, բաղնիք ենք ընդունել, կմրսենք, գնա՛նք, - հրահանգեց Աշոտը: - Աչքով չտամ, տղե՛րք, ի՛նչ բան է, նույնիսկ գրիպ էլ չենք ընկնում:
- Հովազաձորի օդին գրի՞պ կդիմանա:
- Այո՛, Գագի՛կ, կատակի մի տա. Ես մի պրոֆեսորի գրքույկ եմ կարդացել գրիպի մասին, նա նույնն է ասում: Գրում է, թե չեյուսկինցիներից ոչ մեկը բևեռի սառույցների վրա գրիպ չի ընկել, քանի որ այնտեղ գրիպի բացիլներ չկան:
- Այո, ցուրտը դեզինֆեկցիա է արել Հովազաձորը, դրանից էլ չենք հիվանդանում, - եզրակացրեց Գագիկը: - Գնա՛նք:
- Հիմա մենք կարող ենք ասել, որ անտեղի չեն անցել մեր օրերը Հովազաձորում, - խորին բավականությամբ ասաց Աշոտը, երբ խումբը վերադառնում էր քարայր: Նրա բոլոր մտքերը դեռ վայրի խաղողի կտրոնների հետ էին:

Նոր հույսերով ու գաղտնի ուրախություններով լի նրանք սպասում էին այն օրվան, երբ գյուղ կվերադառնան և կասեն իրենց ծնողներին, ուսուցիչներին, իրենց կազմակերպությանը.
- Մի տեսեք ինչե՞ր ենք բերել Հովազաձորից...
Կասեն, որ ժայռերում փակված, մահվան դեմ կռվելիս անգամ իրենք մտածում էին երկրի մասին, նրան որևէ բանով հարկավոր գալու մասին...

## ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ. Թե ինչպես մեծ ճակատամարտից առաջ մարդ նախ պետք է հոգեպես և ֆիզիկապես պատրաստվի՝ դիմագրավելու վերահաս վտանգները

Ամեն ինչից խաղաղություն էր բուրում այդ երեկո, նոր կառուցած բուխարին գվվում էր և դուրեկան ջերմություն սփռում. - այրի մեջ ծխի նշույլ անգամ չկար, օդը մաքո՛ւր, իսկ Թուխիկը վերջապես հասկանալով, որ արջը կենդանի չէ, նստած հանգիստ որոճում էր:
Հասոն նորից հանել էր իր սրինգը և նրա քաղցր դայլայլով ընկերների ուշքն ու միտքը տեղափոխել էր Փոքր Կովկասի զմրուխտ բարձունքները, պարզ քոչվորների աշխարհը...
Երբ վերջացավ նվագը, Աշոտը շարունակեց գործել այն կողովը, որ սկսել էր նախորդ երեկոյան: Իրենց ձանձրույթը փարատելու համար կողովներ էին գործում նաև մյուս պատանիները և դա նման էր մի տեսակ մրցության, յուրաքանչյուրն աշխատում էր մյուսից շուտ և գեղեցիկ արտադրանք տալ:
Այդպես երկար ժամանակ շարունակվեց լուռ մրցությունը, մինչև որ լսվեց Աշոտի հաղթական կանչը.
- Ես իմ բաժին կողովը վերջացրի - և մի խոշոր ու ծանր քթոց տարավ դրեց այրի անկյունում, գիլամասրի ճիպոտներից գործած շեկ կույտի վրա:
Այդ կույտը առաստաղին հասած կլիներ, եթե մեր պատանիները չմտցնեին փոքր քթոցները մեծերի մեջ: Դրսից նայում ես մի մեծ կողով է, բայց նրա ներսում իրար մեջ են հագցված չորս-հինգ կողովներ՝ մեկը մյուսից մի քիչ փոքր չափսի:
- Թե թողնեիր խաշ եփե՛մ, հիմի ես էլ պրծած կլինեի: Բայց դե, նախանձություն ես անում, չես թողնում ապրենք... Ա՛ռ, ստուգի՛ր, ես էլ պրծա... Ասենք, էլ ինչ ստուգես, կուկլա է հո կողով չի...
Գագիկի ասած «կուկլան» հաստ ճիպոտներից անհավասար գործած մի անճոռնի կողով էր, որը գուցե գոմերից աղբ դուրս հանելու համար պետք գար: Բայց դե ո՛վ կարող էր Գագիկի «թանին թթու ասել», տեղն ու տեղը լեզվակոխ կաներ: Իսկ իսկական «կուկլան» դուրս էր գալիս Շուշիկի նրբին ու ճկուն մատներից, այն մատներից, որոնք սովոր էին ճաշակով ասեղնագործել, շնորհքով նկարել և դասարանում ամենից գեղեցիկ գրել: Զանազան տեսակի ու գույնի շիվերից նա մի նախշուն զամբյուղ էր գործել՝ կանթով, խուփը վրան, այնպիսի գեղարվեստական մի գործ, որը նրբաճաշակ նկարիչներին անգամ կհիացներ, ո՛ւր մնաց հովիվ Հասոյին, որ բերանը բաց նայում էր ու խոսք չէր գտնում իր զգացածն արտահայտելու:
- Սա ցուցահանդես կուղարկենք, - կրակի լույսի տակ շուռումուռ տալով՝ վճռեց Աշոտը:
- Ավելի լավ է նվիրիր մի պատվով մարդու, - մատով գաղտնի իրեն ցույց էր տալիս և աչքով անում Գագիկը:
- Այո՛, իմ միտքն էլ դա է. նվիրելու եմ մի շատ պատվավոր և շա՛տ սիրելի տղայի, - դանդաղ ու հանդիսավոր պատասխանեց Շուշիկը:
Բոլորն էլ անհամբեր սպասում էին, թե ով է լինելու նրա ընտրածը: Իհարկե, թե՛ Աշոտը, թե՛ Գագիկը հավասար չափով հավակնություն ունեին գեղեցիկ նվերին արժանանալու: Իսկ Շուշիկը դանդաղում էր: Նա վեր կացավ, ձեռքով հարդարեց գլխի մազերը և զամբյուղը Հասոյին հանձնելով, սիրալիր ասաց.
- Սրանով մոռ կհավաքես հանդերում ու կհիշես մեր նեղ օրերը, Հովազաձորի մեր լավ ընկերությունը...
- Բռավո՛, բռավո՛, ա՞յ այդ չէի սպասում, - ծափ տվեց Գագիկը:
Այդ ծափերը կարծես մի-մի ապտակներ էին Աշոտի այտերին: Ինչպե՞ս, ինքը խմբի ղեկավարը լինի... ինքը փրկի նրանց կյանքն ու հիմա... Բայց ախր պետք է որ խմբի մեջ ամենից սիրելին ինքը լինի, գոնե Շուշիկի համար.. Աշոտն անակնկալի էր եկել:
Սակայն նրա այդ տրամադրությունը վայրկենական էր: Գուցե դա մնացուկն էր իր մասին երբեմնի ունեցած մեծ կարծիքի, որ հետզհետե մաշվել էր Հովազաձորում անցկացրած դժվարին կյանքի մեջ՝ կոլեկտիվի մեջ: Նա արագ տիրապետեց իրեն, մտքում ամուր ասաց՝ «Արժա՛նի է», և իր բարի ու մեծահոգի ժպիտով լուռ հավանություն տվեց: Իսկ քուրդ պատանին անակնկալ երջանկությունից կաս-կարմիր կտրած՝ կարկամել, մնացել էր զամբյուղը ձեռքին:
Ապա աջ ձեռքը դրեց սրտին, արևելյան ձևով խոնարհվեց ու զգացված ասաց.

- Ձա՛ֆ, զա՛ֆ ռազիմա[50]... Իմ քուրն ես, իմ աչքի լուսն ես...
Կարճ ասաց, բայց դրանով քուրդը արտահայտում է ամեն ինչ իր նվիրվածությունը, իր երախտագիտությունը, իր գոհունակությունը, - այն ամեն լավը, ի՞նչ կա իր սրտում՝ «քուր» հայտարարվող աղջկա հանդեպ: Քուրդը, որ մեկին իրեն քույր կոչեց, նրա համար կտա նույնիսկ իր կյանքը:
- Դու էլ իմ եղբայրն ես... իմ քուրդ եղբայրը, - շփոթվելով ու ծիծաղելով ասաց աղջիկը և տվեց իր փոքրիկ ձեռքը:
- Ուռռա՛, ուռռա՛, - ոգևորվել էր Գագիկը: Բայց Հասոն ջուր լցրեց նրա ոգևորության վրա: Նա վերցրեց իր երկար մահակը և նրա երկաթած գլուխը ցույց տալով սպառնաց.
- Սրանից հետո էլ Շուշիկին ձեռք չառնես...
Գագիկը ետ-ետ գնաց.
- Սարեցի քուրդ է, խփե՞ց՝ խփե՛ց, ի՞նչ պիտի անես...
Տղաները ծիծաղեցին, բարի ու երջանիկ ծիծաղեց և Շուշիկը ու գոհ նստոտեցին խարույկի շուրջը՝ պատմություն լսելու:
Է՛հ, ինչն էր պակաս, որ գոհ չլինեին: Վտանգ գրեթե այլևս չկար, վառելիքով ու սննդով ապահովված էին: Բայց Աշոտը մտահոգ էր, որովհետև մտադրություն ուներ ընկերներին նախապատրաստելու մի կարևոր դեպքի: Եվ դրա առիթը տվեց Գագիկը:
- Դե՛հ, Աշոտ, փչելու հերթը քոնն է, - ասաց նա իր տեղը գրավելով:
Ի՞նչ անեին, որ չփչեին, լավատես վերջավորություն ունեցող հեքիաթներով նրանք թեթևացնում էին իրենց ծանր օրը և կարճացնում թե՛ երկար գիշերները, թե՛ այն ժամանակը, որ ստիպված պիտի անցկացնեին ա]դ ձորում:
Աշոտն իր զրույցն այսպես սկսեց.
- Մենք՝ պիոներներս, շատ բաներով պետք է տարբերվենք մյուս պատանիներից: Իսկ այս պայմաններում, Հովազաձորում, պետք է տարբերվենք մեր սրտոտությամբ և հնարամտությամբ: Մենք ամենանեղ րոպեին էլ, երբ թվում է, թե ամեն ինչ կորած է, հուսահատվելու իրավունք չունենք և արագ պետք է ելք գտնենք. չէ՞ որ մենք պատանի լենինյաններ ենք...
- Սպասի՛ր, - նրան կտրեց Գագիկը, - սպասիր, նախագահ-քարտուղար ընտրենք, հետո միտինգը բաց արա...
Բոլորն էլ ծիծաղեցին, ստիպված ժպտաց և Աշոտը:
- Ի՞նչ անեմ, պիոներական հավաքույթներում ու ջոկխորհրդում այնքան ելույթներ եմ ունեցել, որ սովորություն է դարձել, - խոստովանեց նա: - Դե, լավ, հնարամտություն սովորեցնող մի պատմություն կանեմ ձեզ, որ ես հանդիպել եմ միջնադարի հայ պատմիչ Սեբեոսի գրքում:
Եվ Աշոտն սկսեց: Նա ասաց, որ յոթերորդ դարում Հայաստանի մի մասը գտնվում էր պարսից իշխանության տակ, մյուսը՝ հունաց կայսեր:
Հայ իշխան Սմբատ Բագրատունին կոչ է անում ժողովրդին՝ ապստամբել հունաց բռնակալության դեմ: Դրա համար հունաց կայսրը նրան ձերբակալել է տալիս և տանում Բյուզանդիայի մայրաքաղաքն ու շղթայակապ բանտ նետում: Որոշում են նրան մերկացնել և կրկեսում գցել գազանների առաջ:
Այդպես էլ անում են: Սմբատը, ջլապինդ ձեռները թավամազ կրծքին խաչած, արհամարհանքով նայում է կրկեսում հավաքված բազմությանը: Նա հսկա մարդ էր, գեղեցկադեմ, լայնալանջ, պինդ մկաններով և վարժ մարտիկ: Շատ կռիվներում նա ցույց էր տվել իր ուժն ու քաջությունը:
Բացվում է գազանանոցի դուռը և Սմբատ Բագրատունու վրա է գալիս մի ահագին սևամազ արջ:
- Հիմի, որ մեզ արջ պատահի ո՞նց եք կռվելու հետը, - հարցրեց Աշոտը:
- Տղամարդի՛ պես, - աքլորացավ Գագիկը:
- Ոչ միայն տղամարդի պես, այլև խելքո՛վ: Սմբատը գիտեր, դուք էլ իմացեք, որ արջը շփոթվում է հանկարծակի բարձր ձայնից: Եվ ահա, երբ արջը հարձակվեց նրա վրա, Սմբատը վրա վազեց, բարձր գոռաց արջի ականջի տակ և բռունցքը մուրճի պես իջեցրեց նրա մահացու տեղը՝ «քներակին»: Գազանը շշմած ետ-ետ գնաց, ընկավ ու այլևս վեր չկացավ...
Սմբատի վրա բաց թողին մի կատաղած ցուլ: Սա ներս վազեց թափով և արշավեց իր զոհի վրա: Բայց Սմբատը կանգնել էր անսասան: Նա մի վայրկյանում հնարը գտել էր ու հանգիստ սպասում էր ձեռներն առաջ պարզած:
Երբ ցուլը մոտեցավ հարվածելու, նա բռնեց կենդանու եղջյուրներից, ու սկսեց լարված պայքարը: Իսկ հասարակությունը, նրա հետ և Մորիկ կայսրն ու թագուհին, շունչը պահած սպասում էր, թե ինչ է լինելու:

---

[50] Շա՛տ, շատ շնորհակալություն:

Ցուլն աշխատում էր հարվածել, եղջյուրների վրա բարձրացնել կամ տապալել մարդուն, իսկ մարդը, եղջյուրներից բռնած, մկանները լարած, ուզում էր ոլորել նրա վիզը...
Հանկարծ կրկեսը թնդաց ցուլի աղեկտուր գոռոցից... Եվ բոլորը տեսան, թե ինչպես նա ետ փախավ՝ գլուխը ցավից թափահարելով:
Սմբատ Բագրատունին նրա զույգ եղջյուրները հանել էր իրենց միջուկների վրայից և ցուլն արյունլվա կոտոշներով փախչում էր: Սմբատը դեն շպրտեց եղջյուրները, վազեց հասավ կենդանու հետևից և բռնեց պոչն ու ոտի կճղակներից մեկը: Կճղակը մնաց նրա ձեռքին և ցուլը, մի ոտը բոբիկ, փախավ:
Հասարակությունը թեթևացած սրտով «ահ» արավ, բայց անխոս մնաց կայսեր ահից:
Հիմի, դա ո՞ւժ էր, թե՞ հնարք: Ուժ էլ, հնարք էլ: Ամենից շատ՝ հնարք: Սմբատը տեսավ, որ իր բախտից ցուլը տարիքով է, իսկ ծեր ցուլի եղջյուրներն ու կճղակները թուլացած են լինում...
Բա՞, մինչև գազանի թույլ կողմը չիմանաս, նրա դեմ չես կարող կռվել:
Բոլորը սպասում էին, որ կայսրը հրաման կտա ազատության տալ քաջ հային, բայց Մորիկը մռայլ էր ու վրեժով լցված:
Այս անգամ բաց թողեցին ամեհի մի առյուծ, հրաշեկ, դյուրաշարժ ու կատաղի մի գազան: Սմբատը, մահն աչքի առաջ՝ սառնարյուն հետևում էր առյուծի շարժումներին: Նա գիտեր, որ առյուծը հարձակվելիս առաջ դեռ յոթ-ութ մետրի վրա նաև է բռնում իր զոհին, հետո նետվում առաջ: Կատուն էլ է այդպես անում, հովազն էլ, վագրն էլ: Այդ իմացողի համար դժվար չի ազատվել նրա ճանկերից. հենց կուտապ եկավ ու թռավ՝ դու մի կողմի վրա խույս տուր: Մեկ է, նա ուրիշ գազանի նման չի վազի բռնի, նորից է պատրաստվելու, նորից է փորը գետնին կպցրած կուտապ գալու. եթե քեզ չկորցնես կարող ես գլխիդ ճարը տեսնել: Այդպես էլ արեց Սմբատը. Հենց որ առյուծը ոստնեց, Սմբատը խույս տվեց, ապա մի ակնթարթում բռնեց նրա ականջն ու թռավ մեջքին... և սկսեց սարսափելի ուժով սեղմել գազանի կոկորդը: Առյուծը գլուխը բարձր բռնած, խեղդվելով առաջ էր վազում՝ իր մեջքն ու կոկորդն ազատելու համար, բայց շուտով նրա շունչը կտրվեց հսկա մարդու ունելիքի պես ամուր մատների ճնշումից: Առյուծն ընկավ և նրա լեզուն կախվեց կիսաբաց բերանից:
Այս անգամ ամբոխը հիացմունքից խելագարված, սկսեց ծափահարել և գոչել.
- Ներե՛լ, ներե՛լ...
Մորիկ կայսրը, ստիպված, ներումի նշան տվեց...
Աշոտը մի պահ լռեց, ձեռքի փայտով խառնեց կրակն ու արդեն փոխված ձայնով ու հանգիստ ավելացրեց.
- Հովազը դեռ այս ձորում է, դեռ մենք կարող է պատահենք նրան: Հիմի հո գիտե՞ք, թե ինչպես է նա հարձակվում մարդու վրա: Գիտե՛ք: Եթե հանգիստ մնաք ու ձեզ չկորցնեք՝ ձեզ վնաս չի կարող տալ: Արջը երևի կյանքում առաջին անգամ էր գործ ունենում այդպիսի գազանի հետ, թե չէ նա մի կողմ կթռչեր հենց այն ժամանակ, երբ թշնամին դեռ օդումն էր:
- Աշո՛տ, քո այս զրույցը ինձ շատ բան տվեց: Հիմի սիրտս ուզում է էս րոպեիս մի առյուծ պատահի բաշից բռնեմ ու թռչեմ գավակը... Քու արևը, արյունս եռում է, գազանների հետ կռվել եմ ուզում... Չգնա՞նք հովազի կողմը...
Եվ Գագիկը մի վառվող փայտ վերցրեց ու քայլեց դեպի դուռը:
- Կարծում եք ե՞տ եմ կանչելու: Թող գնա, վարժություն անի, սիրտը պնդի - մնացողներին ժպտալով շշնջաց Աշոտը:
Իսկ Գագիկը, այրից դուրս գալով, ընկավ թանձր խավարի մեջ ու կանգ առավ, սա ի՞նչ բան է, ընկերները ոչ հետևում են իրեն, ոչ ետ կանչում...
«Մի քիչ էլ գնամ, թե չէ կկարծեն, թե վախկոտ եմ...», - մտածեց նա և խանձողն օդում պտտելով՝ առաջ գնաց: Կայծեր էին ցրիվ գալիս վառվող փայտի ծայրից և լուսավորում խավարը փշրվող ասուպների նման:
- Գնանք տեսնենք մեր արջի փորոտիքին ոչ մի գազան այցի չի՞ եկել... գուցե աղվես, գուցե ուրիշ կենդանի...
Աշոտի մտադրությունն այլ էր. իր կարծիքով հովազին փնտրելուց առաջ ամրացնում էր ընկերների սրտերը:
Նրանք վերցրին իրենց նիզակները, մի-մի խանձող և դուրս ելան: Միայն Սարգիսը մնաց օջախի մոտ:
- Վա՛հ, իբր թե մի հովազի համար ես քի՞չ եմ, որ դուք էլ եք գալիս, - նեղացավ Գագիկը, ապա իսկույն մտածեց. «Հանկարծ խելքներին չփչի՞ ետ դառնան...», ու անփույթ ավելացրեց. - Դե լա՛վ, դուք գիտեք... թե որ շատ եք ուզում՝ պոչիցս եկեք...
Վառվող «կերոնները» սև գիշերի մեջ գլխներից վերև շարժելով, նրանք վազեցին դեպի ցած՝ դեպի ձորակը՝ այնպիսի հարայ-հրոցով, որ եթե հովազ չէ, վագրերի ոհմակ էլ հանդիպելու լիներ, սարսափահար կփախչեր:

Այդ տեսարանը նորից ցնորքներ ծնեց Աշոտի գլխում: Նրա երևակայությամբ դա «գիշերային զորաշարժ» էր: Եվ այդ զորաշարժի նպատակը իհարկե «հարձակողական մարտն» էր: Նիզակները ճոճելով՝ տղաները հասան «գազանների մարտադաշտին» և իրենց պետի հրամանով զենքերը միանգամից նետեցին արջի ստամոքսի վրա: Ապա ջահերի լույսով հետազոտեցին շրջակայքը և ոչ մի հետք չգտան: Միայն հովազի հին հետքն էր ձյան վրա ձգվում դեպի Աջ ժայռաշարքը, և այդ հետքին ուշադիր նայողը կհասկանար, որ նրա տերը ոչ թե քայլել, այլ երերալով քարշ է եկել...
- Հիմի լրիվ պարզ է... Էգուց գնում ենք այս հետքով, - հանդիսավոր հայտարարեց Աշոտը և կարգադրեց.- Հանգցրեք ջահերը, մթնո՛վ պիտի վերադառնանք տուն...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ. Թե ինչպես պայքարի մեջ ամրանում է մարդուս սիրտը

Այդ գիշեր Աշոտն անհանգիստ էր այնպես, ինչպես անհանգիստ է լինում զորավարը գրոհից առաջ: Այո՛, նա հենց մի փոքրիկ զորավար էլ երևակայում էր իրեն: Գլուխը բարձրացնում էր, նայում իր «զորքին» և՛ կարեկցության, և՛ ամենից շատ՝ հպարտության զգացումով այնպես, ինչպես Գևորգ Մարզպետունին Գառնիի վրա հարձակվելու գիշերը: Չէ՛, ամրացել են ընկերները հոգեպես, այսպիսի «զորքով» իրոք կարելի է արշավի գնալ: Նույնիսկ հովազի դեմ, եթե նա վիրավոր է, բայց դեռ կենդանի: Իր մտքերից ալեկոծված մի քանի անգամ դուրս նայեց, բայց դեռ չէր լուսանում:
Արթնացավ և Գագիկը ու ընկերոջն աչքով անելով՝ դավադիր շշնջաց.
- Հը՞, խաշը դեռ չի՞ եփել... Չէ՞... Բա ինչի՞ ես վեր կացել...
Աշոտը փռթկաց և գլուխն օրորեց: Ընկերներն արթնացան, հորանջեցին:
Իսկապե՞ս որկրամոլ էր Գագիկը, թե կատակում էր: Որն էլ լիներ՝ միևնույն էր, կարևորն այն էր, որ նրա հետաքրքրասիրությունը ուտելիքի նկատմամբ փչացրել էր պատանի բնասերների պարապմունքը: Այդ երեկո նրանք պետք է ուսումնասիրեին քարայծի գլուխը, բայց Գագիկն այնքան սրտանց էր խաշ ուտել ուզում, որ դեռ ցերեկով օգտվել էր իրենց կարգապահ պետի բացակայությունից և նոխազի գլուխը խնամքով խանձել էր բոցերի վրա, կոտորել ու կճուճը լցնելով՝ դրել կրակին: Երեկոյան կրակը մեղմ վառվում էր, կերակրի կճուճը աննկատելի ցնցվում էր իր ներսի խլթխլթոցից և գոլորշու դուրեկան բուրմունք արձակում: Դե եկ, Գագի՛կ, դիմացիր այդ գայթակղությանը:
«Մի համը չտեսնե՞նք», - քնելուց առաջ հարցրել էր նա հեզությամբ:
«Ո՛ւշ է, առանց այն էլ խորոված շատ կերանք, չենք մարսի», - առարկել էր պետը:
«Ո՛ւշ է... Լոնդոնում գիշերվա ժամը երկուսին բիֆշտեքս են ուտում, արևս վկա, մի ժուռնալում եմ կարդացել», - իր առաջարկը հիմնավորել էր Գագիկը:
Բայց Աշոտը անդրդվելի էր մնացել:
Քնելուց առաջ Գագիկը, համենայն դեպս, զգուշացրել էր.
«Մեր պապերը խաշը միշտ լուսադեմին են կերել, դա չե՞ս ժխտի, Աշոտ»:
«Պապերի հետ ի՞նչ գործ ունենք: Արևը դուրս կգա, հետո կուտենք»:
«Չէ՛, պապենական փորձից միշտ պետք է օգտվել, Աշո՛տ, արի մի՛ հակառակվիր...»:
Հիմա արդեն լուսանում է, բայց այդ Աշոտը խաշի անունն անգամ չի տալիս:
Գագիկը չեղած մորուքը որպես աղաչանքի նշան բռնելով, հարցրեց.
- Չսկսե՞նք, Աշոտ ջան...
Աշոտն այրի դուռը բացեց և դուրս նայեց:
- Այ տղա՛, դեռ գիշերվա կեսն է, - դժգոհեց նա:
- Ի՞նչ գիշերվա կես, կաքավի աքլորը երկու բերան արդեն կանչել է: Հասո՛, մի դուրս արի աստղերին նայիր, տես խաշն ուտելու ժամանակը չի՞ անցել:
Հասոն դուրս եկավ սրսփալեն: Գուցե այնքան էլ ցուրտ չէր, բայց հյուծված տղային թվում էր, թե դրսում սառնամանիքն է կանգնած:
- Դեռ լուսաստղը դուրս չի եկել, - ներս գալով հաղորդեց նա:
- Ի՛հ, միամիտ չոբան... Իսկի շնորհք չունես սուտ վկայություն տալու:
Ասենք, լուսաստղին ո՞վ էր նայողը, երբ տաք օջախից խաշն էր բուրում: Նույնիսկ միշտ անտարբեր մեկնված Սարգիսը նստել էր ծալապատիկ և ագահ հայացքով մեկ սևացած կճուճին էր նայում, մեկ ընկերների դեմքերին:
«Դե շուտ արեք, լցրեք է՛», -ասում էր նյարդային այն շարժումը, որ նա արավ տեղում:
- Լա՛վ, սկսե՛նք: Կուշտ կերեք, քիչ հետո գնում ենք գազանին փնտրելու և հայտնի չէ, թե երբ ետ կգանք, - ասաց Աշոտը:
- Իսկ չի՞ լինի, որ չգնանք, - անվստահ հարցրեց Սարգիսը: - Ո՛վ գիտի, ի՞նչ կարող է պատահել...

- Չի լինի: Քանի հովազին չենք գտել կենդանի կամ մեռած, չենք կարող հանգիստ լինել... Պարզ չի՞ որ, - բացատրեց Աշոտը:
Եթե Շուշիկը ներկա չլիներ, գուցե տղաներից ոմանք առարկեին, բայց աղջկա ներկայությունից ճնշվելով՝ լռեցին նույնիսկ նրանք, ովքեր սրտով դեմ էին այդ ձեռնարկությանը, որ հայտնի չէր, թե ինչով կվերջանար:
Եվ երբ լուսացավ ու քիչ հետո ծագեց արևը, Աշոտը վեր կացավ, վերցրեց իր զենքերն ու պաթոսով կանչեց.
- Գնա՛նք... բոլո՛ր գնանք... Մենք գյուղ պիտի մտնենք հովազի մորթին դրոշակի նման պարզած...
Այդ հեռանկարից ոգևորված՝ տղաները զինվեցին իրենց ունեցած բոլոր զենքերով՝ տեգեր, քարե մուրճեր, կացին, մահակ: Վերցրին նաև մի-մի վառ ածխակոթ և դուրս եկան այրից:
Սարգիսն ու Շուշիկը լուռ հետևում էին նրանց և չէր կարելի ասել, թե նրանք երկյուղ չունեին իրենց սրտերում: Բայց չգիտես ինչու Աշոտը նրանց այրում մնալու կարգադրություն չարավ. «Երևի ուզում է սիրտներս վարժեցնել», - մտածեց Շուշիկը:
Գագիկը քայլում էր քաջաբար, կռվի գնացող աքլորի կեցվածքով և ընկերները հասկանում էին, որ իրեն սիրտ է տալիս:
«Գոնե մեկ անգամ էլ ես առաջ ընկնեմ... պատվի հարց է», - վճռեց նա ու հոխորտալով առաջ ընկավ:
- Ի՜նչ եք կուզեկուզ գնում, ռիսկո՛վ եկեք հետևիցս, - գոչեց նա:
Շուշիկը զարմացավ և հարցական նայեց Հասոյին. «Սա իմ տեսա՞ծ Գագիկն է, թե...»:
Միշտ քարայրում՝ օջախի մոտ լինելով, նա չէր տեսել, թե ինչպես դրսում, վտանգների մեջ Գագիկն աստիճանաբար փոխվել է ու արիացել:
Խումբը իջավ Հովազածորի միակ տափարակը, ուր խաղողի այգին էր: Այդտեղ գտան գազանի հետքը և կանգ առան: Լուռ էին և ահ ունեին իրենց սրտերում՝ ոմանք շատ, ոմանք քիչ, բայց անորոշ երկյուղ զգում էին բոլորն էլ:
- Եկեք նախ նիզակ նետելու վարժություն անենք... Գուցե հարկավոր է գալիս, - առաջարկեց Աշոտը:
- Ուրեմն հովազի հետ կռվելո՞ւ եք, - գրեթե շշուկով հարցրեց Շուշիկը:
- Չէ, հովազը պետք է որ սատկած լինի իր ստացած վերքերից. տեսե՛ք, արյան կաթիլները ձյան վրա: Բայց... ո՛վ գիտի... Դե՛հ, նշան ենք բռնում էն թփին ու նետում տասնհինգ քայլ հեռավորությունից:
Աշոտը դիրք ընդունեց, նիզակը բարձրացրեց, որ նետի, բայց Գագիկը բռնեց նրա բազուկից:
- Չեմ ասե՞լ, որ առաջ կխորհրդակցեն ընկերների հետ հետո... Ախր նիզակիդ ծայրը կփշրես...
- Վա՛հ, իսկապես... Բա ինչի՞ վրա նետենք...
- Ձնե մարդի... Չէ՛, ինչո՞ւ, ձնե հովազի...
Ա՞յ խելացի առաջարկ: Տղաները մի քանի րոպեում ձյունից չորքոտանի մի կենդանի պատրաստեցին, որը ավելի շուտ ոչխարի էր նման, քան հովազի, ու սկսեցին նրա վրա հեռվից նիզակներ նետել:
Ա՛յ քեզ բա՛ն, հինգից մեկը հազիվ է կպչում: Այդպիսի անհաջողություն նրանք չէին, սպասում:
- Բա՛ռնր, Գագի՛կ, ծայրը բարձր պահիր, այնպես, որ օդում աղեղնաձև գիծ քաշի ու ծայրով հարվածի նշանին, իսկ քոնը կողքով է հարվածում, - ցույց էր տալիս Աշոտը:
Հասոն լուռ էր, ոչ ոքի դիտողություն չէր անում, բայց հարվածում էր ճշգրիտ, դե նրա գործը ամբողջ օրը այծերի հետևից փայտ ու քար նետելն է եղել, այդ է՞լ չկարողանա:
Շուշիկը տեսնում էր նրա շեշտակի հարվածները և լուռ հրճվում, դե բարձրաձայն ինչպես հայտնես հիացմունքդ, որ չկպչի Աշոտի սրտին...
Աշոտը ևս վարժվեց: Կես ժամ անց արդեն նրա նետածը երբեմն վատ, երբեմն շեշտակի հարվածում էր նշանին:
Սարգիսն ու Գագիկը այնպես էլ չկարողացան նիզակ նետել սովորել: Եթե պատահում էր, որ խփում էին նշանին, հարվածն այնպես թույլ էր լինում, որ հովազի ձնե մարմինն անգամ չէր ծակում:
Դա, իհարկե, չէր խանգարում, որ Գագիկը աքլորանա. վերջին օրերի առատ սննդից նա նկատելի կերպով աշխուժացել էր, աչքերը փայլում էին, վազելու և ցատկելու պահանջ էր զգում ջահել քուռակի նման:
- Աշո՛տ, ճարպս փորումս եռում է, նիզակը դենը դիր՝ արի կոխ բռնենք...
- Չհավատաս որ ճարպ է... Երևի ուրի՛շ բան է եռում, ճարպ ես կարծում, - ծիծաղեց Աշոտը և իսկույն, որպես պատիժ իր կծու ակնարկի համար, փռվեց ձյան մեջ. Գագիկը «ոտք էր գցել» ու մի ակնթարթում տապալել նրան:
- Հիմի հավատացի՞ր որ ճարպ է, - ասում էր նա մի կողմ փախչելով:
- Դե՛հ, հերիք է, գնա՛նք, - հագուստները թափ տալով և Շուշիկի ներկայությունից շփոթված ասաց Աշոտը: - Տանձի պոչ, ես քեզ հետ հետո կխոսեմ, - սպառնաց նա հեռվում փորը բռնած ծիծաղող Գագիկին:

Նրանք հովազի հետքը վերցրին և առաջ գնացին զգուշությամբ, նիզակներով հարվածելու պատրաստ: Տեղ-տեղ ձյունը կարմիր ներկելով, գազանը իջել էր ցած և, հասնելով Հովազածորի ներքին եզրի գահավեժ ժայռերին, ծռվել էր աջ ու գնացել դեպի մի անձավ, որի կլոր մուտքը կիսով չափ քողարկված էր մասրենու նոսր ճյուղերով: Հովազն այդ ճյուղերին քսվելով և նրանց փշերի վրա մի քանի մազ թողնելով, մտել էր այրը:
Պատանիները կանգ առան և աչքները հառած իրենց պետի դեմքին, նրա խոսքին էին սպասում: Նրանք վստահ էին Աշոտի փորձառությանը, բայց երկյուղալի էր անձավի մթին տեսքը և այն խորհրդավոր լռությունը, որ տիրում էր վտանգին դեմ-հանդիման կանգնած խմբի մեջ:
Աշոտը նշան տվեց խանձողները դնել մասրենու վրա և կրակ վառել: Շրջակայքից խռիվ հավաքեցին, կրակ արին այրի մուտքի մոտ, այնպիսի կրակ, որ ոչ այնքան բոց ու ջերմություն էր արձակում, որքան կուրացնող ծուխ:
«Մուտքից հեռո՛ւ կանգնեցե՛ք», - նշաններով կարգադրեց Աշոտը և ինքը, կացինը պատրաստ պահած՝ կանգնեց մի անկյունում այն դիրքով, ինչ դիրքով կկանգներ չարագործը, որ պատրաստվում է հարվածելու իր տնից անմեղությամբ դուրս եկող մարդուն:
Աշոտի մտադրությունը պարզ էր. ծխին չդիմանալով, գազանը կամ պիտի դուրս գար իր որջից, կամ շունչը փչեր այնտեղ: Ծուխը նաև ստուգելու և պարզելու էր, գազանը կենդանի՞ է, թե ոչ: Եթե կենդանի լիներ, անպայման պիտի հազար ծխից:
Շուշիկը, Աշոտի կարգադրությամբ, անցել էր մի ժայռաբեկորի հետև և խանձողը ձեռքին՝ ահ ու դողով սպասում էր: Իսկ Սարգիսը, քիչ հեռու կանգնած, քարե մուրճն ուսին այնպես էր տմբտմբացնում մեծ ու կլոր գլուխը, կարծես սառնամանիքի էր հանդիպել: Գագիկը շարունակում էր քաջ ձևանալ, աչքով էր անում ընկերներին, ժպտում անբնական, իսկ աչքերը վառվում էին ներքին տենդից: Իսկ Աշոտը, թեկուզ վախենում էլ էր, բայց ըստ իր պաշտոնի՝ պարտավոր էր սառնարյուն և անվախ լինել, ուստի այդպիսին էլ երևում էր արտաքուստ:
Անձավի մուտքի աջ ու ձախ պատերին հպված և իրենց քարե կացիններն ու մուրճերը պատրաստ պահած, նրանք մոտ կես ժամ մնացին այդպես քարացած-լարված վիճակում: Ծուխն առատությամբ ներս էր գնում, բայց ներսից ոչ մի ձայն չէր լսվում: Պատանիները հետզհետե սրտապնդվեցին, լարվածությունն անցավ: Խարույկն էլ իջավ, սկսեց մարել:
- Ուրեմն սատկել է, - բարձրաձայն վճռեց Աշոտը: - Հետքը անձավից դուրս չի եկել: Եթե սատկած չլիներ, կգնար արջի միսն ուտելու:
- Իբր որ սատկած չլիներ, մեզ ի՞նչ էր անելու... Հիմի ի՞նչ ես կարգադրում, ներս չմտնե՞մ քերթեմ...
Աշոտը բարեսրտորեն ժպտում էր, և եթե Շուշիկը ներկա չլիներ, հեգնանքով կասեր. «Ի՜հ՜, այ Քաջ Նազա՜ր...»:
Իսկ Քաջ Նազարը ձեռքի փայտը խոթել էր այրը, նրանով խռթխռթացնում էր ու գոչում.
- Դուրս արի է՜, հոգեառդ եմ, ուժդ խեղճ արջի՞ն էր պատում...
Գագիկի այդ կանչերից քաջալերված, Շուշիկն ու Սարգիսն էլ առաջ եկան:
- Հասո՜, կենի թփեր ջարդի՜ր:
Քիչ անց, կենու յուղոտ ճյուղերը իրենց համար լուսատու կերոններ դարձրած, մեր պատանիները մտան քարայր:
- Ռիսկո՜վ եկեք, - քաջալերում էր Աշոտը: - Էս կրակին ոչ մի գազան չի մոտենա, եկե՜ք, մի՜ վախենաք...
Այրի նեղ մուտքը գնալով բարձրանում էր 45 աստիճան թեքությամբ: Տեղ-տեղ նա լայնանում էր՝ կազմելով մինչև չորս մետր լայն և երեք մետր բարձր քարե բնական խցեր, կամ նեղանում էր այնքան, որ տղաները հազիվ էին ներս մտնում:
Անցքերը, որով նրանք գնում էին, ժայռի ներսում ճյուղավորվում էին և նրանց մի մասը վերջանում էր փակուղիով: Հատակի ցածրադիր մասերում և քարերի մոտ կային դեղնավուն կավի շերտեր: Տեղ-տեղ առաստաղից կախված էին շթաքարեր (ստալակտիտներ):
Քարանձավի մուտքերի ու անցքերի ամբողջ երկարությամբ, առանձնապես փոսերում, խորշերում ու խցերում թափթփված էին զանազան կենդանիների ոսկորներ: Նրանք ընկած էին և՛ բաց վիճակում, և՛ խրված էին չորացած կավի մեջ: Գլխավոր խցից, ուր շատ ոսկորներ կային թափթփված, մի այլ ներքնուղի գնում էր ժայռի խորքը, բայց մեր հետախույզները ներս սողոսկել չկարողացան, որովհետև անցքը նեղ էր, իսկ նրանք գործիքներ չունեին, որ լայնացնեին: Անցքի խորքում մեծ-մեծ ոսկորներ էին երևում...
Աշոտը կանգ առավ, ձեռքի «ջահով» լուսավորեց անձավի խորշերը: Ահն ու զարմանքը պատել էր մեր պատանիներին, ամեն տեղ թափթփված էին ճերմակ ոսկորներ, մեծ ու փոքր կենդանիների գանգեր, ճյուղավորված հսկա եղջյուրներ, ինչպես և այնպիսի կենդանիների գլուխներ, որոնք վաղուց վերացել են երկրի երեսից...

Գազանների գերեզմանո՞ց էր, ի՞նչ էր...
Կենու թփերի փշատերևները ճարճատյունով այրվեցին-վերջացան: Ջահերը մեկ-մեկ հանգան, և տղաները մնացին խավարի մեջ: Միայն հետևի կողմից հեռվում, աղջամուղջի մեջ, աղոտ լույս էր երևում, որից հասկացվում էր, թե որտեղ է անձավի մուտքը:
Երկյուղալի լռություն էր տիրում:
- Ե՛տ դառնանք, - ասաց Աշոտը:
Նրանք խարխափելով քայլեցին դեպի այրի ելքը և երբ լույս աշխարհ դուրս եկան, նա պատվիրեց Հասոյին, վազել ճգնավորի «այրը և բերել բոլոր «կերոնները», որ խումբը պատրաստել էր եղևնու յուղոտ արմատներից ու չորացրել՝ գիշերները ճրագի տեղ վառելու համար:
Քիչ անց Աշոտը՝ խիստ լուրջ ու կենտրոնացած, յուղոտ ճյուղերից զույգ-զույգ, երեք-երեք խրճիկներ էր կապում, որ վառի:
Այդ ժամանակ Գագիկի բաց գլուխը երևաց բարձր քարի հետևից, ուր նա մինչև Հասոյի գալը պարապությունից պտուղներ էր փնտրում:
- Հասո՛, խամ տեղ եմ գտել, արի, - կանչեց նա սնձի պտուղներով բեռնավորված ճյուղը ցույց տալով:
Հասոն գնաց: Աշոտը շարունակում էր «ջահեր» պատրաստել, իսկ Շուշիկն ու Սարգիսը մեկուսի ցածր ձայնով խորհրդակցում էին: Վերջապես առաջ եկավ Սարգիսը և նորից մի փորձ արավ Աշոտին ետ պահելու վտանգավոր ձեռնարկությունից:
- Թո՛ղ, Աշո՛տ, ի՞նչ գործ ունես... - ասաց նա: -Ավելի լավ չի՞ քարերով փակենք մուտքը ու գնանք հանգիստ մեր գործին:
Խելացի առաջարկ արավ Սարգիսը. իրոք, եթե այրի մուտքը պատեն, գազանը, եթե նույնիսկ դեռ կենդանի է, քաղցից ներսում կսատկի: Բայց Աշոտին իսկի համոզե՞լ կլինի: Որսի մոտիկությունից գրգռված որսորդի նման կորցրել էր սառը դատելու ունակությունը: Իսկ հովազի շքեղ մորթին ձեռք բերելու ցնորքը նրան հանգիստ չէր տալիս: Եվ երբ Շուշիկը ևս միացավ Սարգսի առաջարկին, նա զայրացած շպրտեց.
- Եթե վախենում եք, ե՛տ գնացեք, միայն ինձ մի՛ խանգարեք... Այրի մուտքը փակե՛նք... խելքին մտիկ... որ ներսում մորթին փտի՞...
Աշոտի հաստակողությունը վրդովեցրեց Շուշիկին.
- Նորից քաջությունդ բռնե՛ց... Մտքումդ հենց էն է, որ աշխարհ զարմացնես... լճավանցի Կամոյի նման... Բայց միևնույն է, Կամո չես դառնա, - խայթելու նպատակով անզգույշ շպրտեց աղջիկը և զղջաց: Շուշիկի այս խոսքից կարծես Աշոտի երակների մեջ եռացրած ջուր լցրին: Շիկնեց նա շիկացած մետաղի նման, ձախ այտն իր վրայի բազմաթիվ խալերով սկսեց ցնցվել: Հրացայտ աչքերով նայեց նա Շուշիկին և շպրտեց.
- Այդ դեպքում ես մենա՛կ կգնամ հովազի դեմ և կապացուցեմ, որ...
Նա չշարունակեց՝ նորից խոցված էր ինքնասիրությունը: Դրանից փոթորիկ էր առաջացել պատանու հոգում և այդ պահին համակվել էր մի գերագույն ցանկությամբ միայն՝ այնպիսի սխրագործություն կատարել, որ բոլորը խոսեն այդ մասին:
Գի՛ժ պատանեկություն, այդ հասակում մեզնից ո՛վ չի ցանկացել հերոս երևալ, մանավանդ... աղջիկների մոտ...
- Մի տեսեք ի՛նչ ինքնասիրություն է ունեցել, - հեգնախառն, չարաճճի աչքերը փայլեցնելով շարունակում էր գրգռել Շուշիկը:
Աշոտը վերցրեց նիզակը, մյուս ձեռքի ձողերի խուրձը դեմ արավ Շուշիկին և պատվիրեց.
- Վառի՛ր... Հիմի ինձ էլ կտեսնես, քո Կամոյին էլ...
- Ահա՛ թե ի՞նչ... - խնդաց աղջիկը, - ես կյանքումս նրան չեմ տեսել, իսկ դու արդեն խանդո՞ւմ ես...
Ծիծաղում էր, կատակում, բայց հաճելի էր հպարտ պատանու վրդովմունքը: Իսկ սև աչքերի կրակներն ու այդ ցնցվող խալերը հո...
Աղջիկը դեռ չէր լրջացել, երբ Աշոտը խրոխտ քայլերով մտավ անձավը և անհետացավ նրա խորքում:
- Աշո՛տ, ետ արի, ի՞նչ ես անում, - հետևից գոչեց Սարգիսը: Անհանգստացած էր և Շուշիկը, բայց նրան դուր էր գալիս տղայի խիզախությունը, արդեն առնականացող կամքը:
- Թող գնա հասնի լճավանցի Կամոյին, - ծիծաղեց նա:
Ապա լրջանալով, սկսեց իրեն սիրտ տալ.
- Կրակից գազանները վախենում են, չէ՞, Սարգիս... Ասենք նա երկար չի մնա այրի մեջ, հենց կրակը հանգավ՝ ետ կգա:
Բայց նա սխալվում էր. անսպառ էր Աշոտի և՛ սրտի կրակը, և՛ ձեռքի կրակը, քանի որ բազմաթիվ չոր ու յուղոտ ձողեր էր խրել իր գոտ ու մեջ:

Իսկապես որ «հեռակա մրցություն» կարելի էր անվանել այն, ի՞նչ տեղի էր ունենում Աշոտի հետ... Իր կյանքում նա չէր տեսել (և գուցե երբեք էլ չէր տեսնելու) հեռավոր Լճավան գյուղացի Կամոյին, բայց Շուշիկի մի խոսքից սկսել էր նորից այրվել՝ իր սխրագործություններով նրանից անցնելու ցանկությամբ: Եվ այդ տենչը այնքան հզոր էր նրա մեջ, որ երբ անցավ ոսկորների կույտերի վրայով և ստորերկրյա ճանապարհը երկու ճյուղի բաժանվեց, առանց վարանելու գնաց ձախ թունելով, որ ավելի մռայլ էր, խոնավ և սեպ-սեպ քարերով պատած ցածր առաստաղ ուներ:
Գնում էր առանց զգուշության, առանց դեմը հետազոտելու, առանց ետ նայելու և առանց մի րոպե կանգ առնելու. Շուշիկի կծու ակնարկը շարունակում էր նրան բորբոքել ու մղել դեպի անհայտություն:
Այրի առաստաղը ցածրացավ, ներքին ուղին փոխվեց ծուռումուռ անցքի: Տղան շարունակում էր գնալ՝ սկզբում կռացած, ապա չոքեչոք, և երբ անցքը բոլորովին նեղացավ՝ արդեն սողում էր փորի վրա՝ վառ կերոններն առաջ մեկնած:
Քանի դեռ շատ չէր հեռացել այրի մուտքից, հազիվ լսվում էր Շուշիկի լալագին կանչը.
- Աշո՜տ, Աշո՜տ, ետ արի, կատակ եմ արել, ե՛տ արի՜...
Պատանու սիրտը թնդում էր այդ կանչերից:
- Սիրտդ վառվե՞ց... մղկտո՞ւմ ես ինձ համար, - բերկրանքով ինքն իրեն ասում էր նա, և եթե մեկը ծածուկ դիտելու լիներ, կտեսներ, որ այդ մռայլ ներքնուղիներում տղայի դուրեկան, կլոր դեմքը ողողված է երջանիկ ժպիտով, իսկ սիրուն շրթունքներն ինչ-որ մրմնջում են. իր հեռավոր «հակառակորդի» հե՞տ էր վիճում, թե՞ դեռ սիրտը հովացնող սպառնալիքներ էր ուղղում Շուշիկի հասցեին. «Դեռ այնքան մղկտա՛ս, կարծում ես ե՞տ եմ գալու...»:
Եվ նա առաջ էր գնում ոչ թե գտնելու գազանի դին, քանի որ ոչ մի նշանից չէր երևում, թե վիրավոր հովազն այդ ճամփով է գնացել, այլ ընթանում էր այն բուռն հետաքրքրությունից մղված, որով կլանված են լինում այդ հասակի պատանիներն անծանոթ աշխարհներ ընկնելիս: Գնում էր մտքում հոխորտալով թե՛ Շուշիկի և թե՛ իրեն անծանոթ Կամոյի հասցեին...
Երբ ծնկներն ու արմունկները սուր-սուր քարերի բերանը տալով անցավ նեղ թունելից և դուրս եկավ մի ընդարձակ քարայր, արդեն այնքան էր հեռացել, որ այլևս դրսի կանչերը նրան չէին հասնում: Այն ժամանակ երկյուղի նման անորոշ մի բան սողոսկեց նրա սիրտը:
- Դատարկ բան է, - ձեռքը թափ տալով հոխորտաց նա:
Դրան որպես պատասխան դիմացից նա մարդու ծիծաղ լսեց, մի վայրենի քրքիջ, որից տղայի սիրտը կարծես կանգ առավ:
Սառն ու սուր քրքիջը կրկնվեց և չարագուշակ արձագանքեց մռայլ կամարների տակ...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ. Թե ինչպես խավարում շարժվող կրակները ճիշտ ճամփա ցույց տվին մարդկանց, բայց սրանք գլխի չընկան

Ինչպես արդեն ընթերցողը գիտի, Հովազաձորի խաղողի այգուց և ճգնավորի այրի շեմքից երևում է Արարատյան դաշտի մի նեղ շերտը, որով անցնում է Նախիջևանից Երևան ձգվող ասֆալտե ճանապարհը:
Իրար մոտեցած ժայռերի արանքով այդ ճամփի մի փոքր հատվածն է նկատելի, այնքան փոքր, որ անցնող մեքենան մեր պատանիների տեսադաշտում միայն մի քանի վայրկյան էր մնում: Այդ էր պատճառը, որ մեր գերիները չէին կարողանում դրսի աշխարհին իմաց տալ, թե ո՞ւր են իրենք:
Ոչխարանոցի բարձր դիրքերում նրանք խարույկներ էին վառում այն հույսով, որ մեկն ու մեկը կնկատի: Ճիշտ է, Արարատյան դաշտով անցնող մարդիկ գիշերները երբեմն կրակ էին տեսնում հեռավոր ժայռերում, բայց ոչ ոքի մտքով չէր անցնում, որ կորած պատանիները վառած կլինեն այդ կրակը: «Որսորդներն են խարույկ վառել: Երանի՜ իրենց...», - մտածում էր ճամփորդն ու անցնում:
- Ի՞նչ անեմ, մեր մեջ մի Ձենով Օհան էլ չունենք, որ արջի մորթին փորին փաթաթի ու էնպես գոռա, որ ձայնը դմբդմբալեն գնա-հասնի Արազի ափը, -ասում էր Գագիկը ու Երևան տանող ճամփի վրա մեքենա նկատելիս իր բարակ ձայնով ծղրտում էր.
- Հե՜յ, հե՜յ, այստեղ ե՜նք...
Միայն ժայռերն էին արձագանքում նրա ձայնին, դրսի աշխարհից ոչ ոք չէր լսում նրան:
Այն գիշեր, երբ մեր պատանիները կենու վառվող ճյուղերը օդում ճոճելով այրից վազեցին դեպի ցած, տեսնելու համար հո որևէ գազան այցի չի՞ եկել արջի մնացորդներին, - այդ գիշեր պահեստապետ Պարույրը բեռնատար մեքենայով վերադառնում էր Երևանից:
Մեքենայի խցիկում իր մուշտակի մեջ փաթաթված՝ նա լուռ ծխում էր: Մռայլ մտքեր էին պաշարել Պարույրին: Զգում էր, որ կարկտաբեր ամպեր են կուտակվում իր գլխին, և, որ ամենից զարմանալին էր, ամենազոր փողն այս անգամ անզոր էր գտնվել այդ ամպերը ցրելու...

Մեծ հավատ ուներ պահեստապետ Պարույրը փողի նկատմամբ և գլուխը գինուց տաքացած ժամանակ չէր քաշվում իր կարծիքը հայտնել նրա զորության մասին. «Փողը մութ տեղը լույս է տալիս...»: «Փողը որսկանի լցրած հրացան է, որս տեսա՛վ՝ կխփի...»: «Փողը որ կա՝ հանած թուր է...»: «Մարդիս դժոխք տանողն էլ է փողը, դրախտ տանողն էլ...»: «Վերև աստված, ներքև՝ փողը...»:
Ժողովրդական անգին իմաստություններից միայն սրանք էր յուրացրել Պարույրը: Նա մի փոքրիկ բան էր միայն մոռացել, որ այդ իմաստությունները ժողովուրդը ուրի՛շ կարգերի համար է հորինել, ուրի՛շ կարգերում է գործածել, և որ հիմա կարգերն էլ են փոխվել, մարդիկ էլ, փողի դերն էլ... Ասենք, վերջերս այդ բանում ինքն արդեն համոզվում էր. ամենազոր համարվող փողը այս անգամ նրան չէր փրկում արագությամբ մոտեցող աղետից: Ի՞նչ անի: Ո՞ւմ դիմի: Գոնե նախագահ Հարութի դիրքը խախտված չլիներ, կարելի էր նրա վրա հենվել: «Չէ՛, Հարութի օրերը հաշվված են, ընդհանուր ժողովին են սպասում, որ վռնդեն... Ու էն ժամանակ... կորած եմ...»:
Այս մռայլ մտքերն էին պաշարել պահեստապետ Պարույրին, երբ հասան Հովազաձորի դիմաց: Նա գլուխը թեքեց դեպի վերին ժայռերը, խավարի մեջ վազվզող բոցեր տեսավ և սարսռեց:
«Է՞ս ինչ հրաշք էր...», - ահով մտածեց նա, և եթե վարորդը կողքին չլիներ, հավանաբար գաղտնի խաչակնքեր:
- Սերո՛ւբ, էն ի՞նչ կրակներ են վազում, - հարցրեց նա վարորդին: Սա գլուխը թեքեց դեպի Հովազաձոր և ոչինչ չնկատելով, ծիծաղեց,
- Աչքիդ է երևում...
Մեքենան կանգ առավ, դուրս եկան խցիկից, նայեցին մթին կուլ գնացած ժայռերի կողմը, ոչինչ չկար, մեքենան արագ անցել էր Հովազաձորի դիմացից և կրակները մարդկանց տեսողությունից արդեն ծածկվել էին:
- Որ ասում եմ աչքիդ է երևացե՛լ... Որ չարքը խափանող աղոթք անես, էլ աչքիդ էդպես բաներ չեն երևա, - խորհուրդ տվեց վարորդը, որ մի կատակասեր երիտասարդ էր:
Պարույրը, մռայլ մտքերով տարված, մտավ խցիկ: «Շատ մտածելուց երևի գժվում եմ...», - անցավ նրա գլխով և մինչև գյուղ ոչ մի բառ չարտասանեց: Հիշում էր շարժվող կրակները լեռան լանջին ու մտատանջության մեջ էր: Դե, ինչպես մութ կասկածներ չծնվեին նրա սրտում, երբ հենց այդ ժայռերից երաշտ տարին անգամ հանկարծ հեղեղ էր գալիս...
Տեսածի մասին գյուղում նա ոչ ոքի չասաց. վախենում էր ծաղրեն. դե Այգեձորում մի մարդ կգտնվե՞ր, որ չարքերին հավատար:
Այնուամենայնիվ, դեպքից մի որոշ ժամանակ անց, նա մի գիշեր այդ մասին խոսեց իր կնոջ հետ: Կինն էլ հարևանուհուն պատմեց, սա էլ մեկ ուրիշի ու մեկ օրվա մեջ արտասովոր լուրը կանանց «անթել տելեֆոնով» տարածվեց գյուղում և հասավ որսորդ Արամի ականջը:
Արամը ձեռքը հուսահատ թափ տվեց.
- Է՛հ, վախկոտ մարդ է, ով գիտի աչքին ի՞նչ է երևացել,.. Մա՞րդ է, որ խոսքին հավատաս. քամի է, քամի՛, - ասաց նա:
Այդպիսով, գիշերվա մառախուղում ցոլացող կրակները ճիշտ ճանապարհ ցույց տվին մարդկանց, բայց Պարույրին հավատացող չեղավ, հեղեղատում գտնված իրերը անհերքելիորեն հաստատում էին, որ երեխաներին ջուրը տարել է և Այգեձորում արդեն մարդիկ հաշտվել էին այդ տխուր փաստի հետ:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ. Թե ինչպես կորածները փնտրում են կորածին...

Սկզբում, երբ իր կանչերի պատասխանը չէր լսվում, Շուշիկը կարծում էր, թե Աշոտը դիտավորյալ է լռել:
- Ինձ վախեցնելու համար է սուս արել... վրեժ է հանում ինձնից...
Բայց հետզհետե ավելանում էր նրա անհանգստությունը և փոխվում երկյուղի:
- Ո՞ւր կորան տղաները... Գագի՛կ, Հասո՛... Հիմա ի՞նչ անենք, Սարգի՛ս, մենք էլ չմտնե՞նք, թե՞ սպասենք տղաներին...
Պակաս անհանգստացած չէր և Սարգիսը: Ուրիշ դեպքում նա բութ հայացքով կնայեր աղջկան ու անտարբեր կասեր. «Իմ ի՞նչ գործն է, ոնց գնաց, թող էնպես էլ ետ գա»: Բայց շատ էր փոխվել Սարգիսը սկսած այն օրից, երբ ընկերները իրենց բլուզները հանեցին, մեջը ձյուն լցրին, որ ցած ցատկելիս ինքը չվնասվի՛. Ինչպե՞ս կարելի է մոռանալ այդ դեպքը: Սարգսի սրտում սկսել էր իր տեղը գրավել ընկերը:
Անշուշտ, այստեղ մասն ուներ նաև ահը, ահը այն բանից, որ ինքը կարող է մի դիպվածով նորից հասնել կործանման դուռը: Ուրեմն, թիկունք կանգնիր ընկերոջդ, որ վաղն էլ նա քո թիկունքում կանգնի, այդ բանը, վերջապես, մեծ ուշացումով հասել էր նրա գիտակցությանը... Եվ այդ գիտակցությունը մղեց նրան այնպիսի գործի, որին նա անցյալներում երբեք չէր ձեռնարկի, վառեց մարխի երկու ձող և «Աշո՛տ, Աշո՛տ» գոչելով մտավ քարանձավը: Աղաղակներով նա վանում էր իրենից երկյուղն ու առաջ գնում

պատերին երերող լույսի տակ: Թափթփված ոսկորների մեջ խարխափելով նրան հետևում էր Շուշիկը, որ իր հետ մարխի ձողեր էր վերցրել: Սարգսի հետևից, անձավի պատին երերալով առաջ էր գնում նրա երկար-վիթխարի ստվերը, և ինքն էլ հենց մի ստվերի էր նման իր բարակ, երկայն հասակով: «Սա կարծես առաջվա Սարգիսը չի... Ո՞նց է սրտոտացել...», - զարմանում էր Շուշիկը: Բայց սրտոտությունը չէր Սարգսին առաջ մղողը, այլ լավությանը լավությամբ հատուցելու այն նոր զգացմունքը, որ կյանքում առաջին անգամ այցի էր եկել նրան...

Այնտեղ, ուր ներքնուղին ճյուղավորվում էր, Սարգիսը կանգ, առավ երկընտրանքի առաջ, ո՞ր անցքով գնացած կլինի Աշոտը:

- Հանգչում է, առ մարխը վառիր, - լսվեց Շուշիկի ձայնը: Մինչ Սարգիսը նոր ձող կվերցներ և կպահեր մարվող բոցի վրա, մարխը հանգավ և վայրկենապես խավարը շրջապատեց նրանց այնպես, որ իրար չէին տեսնում: Սակայն նրանց աչքերը հետզհետե վարժվեցին մթին, խավարը նոսրացավ, վերածվեց աղջամուղջի:

- Ե՛տ: գնանք - ահով շշնջաց Շուշիկը:

Երկուսի մեջ միակ տղամարդը լինելով, Սարգիսն զգաց, որ ինքը այդպես հեշտ չպիտի համաձայնի:

- Առաջ գնանք ահա այս լայն կողմով-դեպի աջ: Քանի մեր ընկերոջը չենք գտել, մենք այստեղից դուրս գալու իրավունք չունենք, - հանդիսավոր արտասանեց նա և խարխափելով առաջ գնաց:

Հետզհետե մութը խտացավ այրի խորքում և նրանք համոզվեցին, որ առանց ջահերի առաջ գնալը միտք չունի: Բայց Սարգիսը ինչպե՞ս կանգ առներ, չէ՞ որ երկուսի մեջ ինքն էր տղամարդը և մանավանդ, որ քիչ առաջ հանդիսավոր խոստում էր տվել: Սակայն հազիվ մի քայլ էր արել, երբ մի ձայն նրան գամեց իր տեղում, կատվի մլավոց էր: Ականջ դրին՝ իսկ և իսկ մլավոց, որին հետևեց նույն կատվի մռմռոցը և ապա մկան ծվծվոցը... Ի՞նչ գործ ունի կատուն լեռան ընդերքում... Շուշիկը բնազդաբար բռնել էր Սարգսի թևից, բայց զգաց, որ նա էլ է դողում: Անձավի առաստաղից նորից մկան ծվծվոց լսվեց: Վերև նայեցին, բայց մկան փոխարեն կլոր գլխով, կլոր աչքերով մի կատու տեսան, որի ֆոսֆորային հայացքը սառը շողում էր մթնշաղի մեջ:

- Հա՛յ, հա՛յ, - ահից գոռաց Սարգիսը, որին հետևեց մի զարմանալի բան. կատուն թև առավ և անձայն ու փափուկ թռիչքով սլացավ դեպի այրի ելքը:

- Բու էր...- շշնջաց Սարգիսը ետ-ետ գնալով: Այստեղ արդեն նրանք լուռ համաձայնության եկան և արագ վերադարձան իրենց եկած ճանապարհով: Թվում էր խավարի միջից ինչ-որ ոգիներ (թե՞ արարածներ) ագահ հայացքներով հետևում են իրենց...

Դրսում նրանք ձողեր վերցրին, մեկական ձող էլ վառեցին, բայց նորից այն ահալի անձավը մտնելու սիրտ չունեին: Սակայն կարգն այն էր, որ Սարգիսը, որպես տղամարդ, հոխորտալով գոնե մի քանի քայլ անի դեպի անձավի մուտքը, որպեսզի Շուշիկը, որպես ավելի թուլակամ արարած, ճչա նրա հետևից և ետ պահի նրան իր վտանգավոր մտադրությունից: Այդպես էլ արավ Սարգիսը, և Շուշիկն էլ ճիշտ այնպես վարվեց, ինչպես ենթադրում էր տղան:

- Լավ չես անում, որ չես թողնում գնամ իմ կորած ընկերոջը փնտրելու, - նախատեց Սարգիսը:

- Ավելի լավ չի՞ գնանք Հասոյին ու Գագիկին իմաց տանք: Ավելի լավ չի՞ խմբով մտնել այրը...

- Լա՛վ, - վերջապես համաձայնեց Սարգիսը և քայլեց դեպի Հովազաձորի կենտրոնի տափարակը, որտեղից, ինչպես ձեռքի ափի մեջ, երևում էին ձորը պատնեշող բոլոր ժայռերն ու ծերպերը:

- Գագի՛կ, Հասո՛, - գոչեց նա խաղողի այգու եզրից:

Կենի թփեր արմատական անող տղաները դադարեցրին աշխատանքը:

- Եկե՛ք, եկե՛ք, Աշոտը գնացել է գազանի հետևից ու ետ չի եկե՛լ... եկե՛ք, - լալագին կանչեց Շուշիկը և նրա հաղորդած այդ գույժը մուրճի նման իջավ տղաների սրտերին: Ինչպե՞ս թե ետ չի եկել... ուրեմն գազանը հոշոտե՞լ է իրենց ընկերոջը...

Քրտնաթոր, հևիհև, նրանք հասան անձավի շեմքին և մարխի ձողերը վառելով, անմիջապես ներս մտան:

- Շուշի՛կ, ինչքան մարխ կա, բոլորը վերցրու, - հազիվ հասցրեց ետ դառնալ և պատվիրել Գագիկը:

Կրակ կտրած հասան այրի խորքի ճամփաբաժնին և առանց տատանվելու գնացին աջ կողմի լայն գետնուղիով. պարզ չէ՞ր, որ ձախ կողմի խոնավ, մռայլ ու նեղ թունելով Աշոտը չէր գնա...

Այդ սկզբունքով ղեկավարվելով, խումբը ամեն անգամ թունելի ճյուղավորման հանդիպելիս շարունակ ընտրեց ամենալայնը և ամենից հեշտ անցանելին: Եվ քանի որ Աշոտը դեպի ձախ էր գնացել, իսկ խմբի ընտրած ուղին շարունակ դեպի աջ էր գնում, ուստի հասկանալի է, որ անհետացածին փնտրողները գնալով հեռանում էին նրանից...

Ըստ երևույթին նրանց ընտրած ուղին շարունակ գնում էր ժայռի աջ պատերի տակով, որովհետև տեղ-տեղ ժայռի պատռվածքներով ներս էր թափանցում դրսի լույսը և կարելի էր գնալ առանց ջահերի օգնության: Միայն դժվարությունը այն էր, որ վերելք էր. ներքնուղին շարունակ գնում էր դեպի վեր:

- Աշո՛տ, Աշո՛տ... - ստեպ-ստեպ գոչում էին նրանք, ականջ դնում և ապա առաջ գնում հուսախաբ:
Նեղ թունելից ընկան ստորերկրյա մի հոյակապ շենք: Ընդարձակ և շատ բարձր առաստաղով մի քարայր էր դա՝ կարծես մարդու ձեռքով պատրաստած: Գորշ որձաքարերը կարծես նախապես կտրել էին, առանձին-առանձին տաշել-հղկել և իրար վրա կանոնավոր շարել մինչև առաստաղ: Անկյուններից նույնպիսի սրբատաշ քարերով վեր էին ելնում անկյունավոր փառահեղ որմնասյուներ, որոնք վերևում կորանում էին, ծայրերը հասցնում իրար և քառակուսի մի գմբեթ առաջացնում...
Մեր պատանիները բերանները բաց նայում էին այդ ստորերկրյա ամրոցին և զարմանում, թե ո՛վ և ի՞նչ նպատակով է ժայռերի խորքում հազարավոր քարեր հղկել, դրել իրար վրա, երբ առանց այդպիսի հսկայական ծախսերի էլ հարմար անձավներ շատ ունի այս ժայռը: Ի՞նչ իմանային անփորձ պատանիները, որ բնությունն ի՞նքն է կառուցել անձեռակերտ այդ շենքը: Ե՛վ գմբեթն իրենց ուսերին պահող սյուները, և՛ կոկիկ պատերը կազմված էին բյուրեղացած բազալտից: Իսկ ով բնության մեջ տեսել է բյուրեղացած բազալտե ժայռեր, բայց ծանոթ չի կյանքի այն էտապներին, որ անցնում է հրաբխային լավան՝ երկրի ընդերքից լույս աշխարհ դուրս գալուց հետո, միամտորեն պիտի կարծի, թե մարդն է տաշել ու իրար վրա կանոնավոր շարել բազալտե որմները:
- Բայց ոչ մի նշան չկա, որ այստեղ մարդ է ապրել, - լռությունը խզեց Գագիկը, երբ լուսավոր անձավից նորից թունելն էին մտնում:
- Ո՞նց չկա... լսո՞ւմ ես տնքոցները, - գունատվելով շշնջաց Շուշիկը: Իրոք, այրի վերին անկյունից հառաչանքներ լսվեցին և հիվանդագին տնքոցներ: «Երևի Աշոտն է». - միանգամից անցավ բոլորի մտքով էլ:
- Աշո՛տ, Աշո՛տ, - աղաղակեցին նրանք միաբերան, բայց պատասխան չստացան: Հանկարծ նույն տեղից լսվեց երեխայի լացի ձայն: Պատանիները, սարսափով համակված, մի պահ լուռ մնացին, և նրանցից յուրաքանչյուրը լսում էր իր սրտի ուժգին զարկերը: Երբ ճիչն ու լացը կրկնվեց, ավելի որոշակի դարձան տնքոցներն ու հառաչանքները, կարծես այրի անկյունում հիվանդ կին էր պառկած և նրա մոտ լալիս էր իր քաղցած երեխան...
Պատանիները, ահաբեկված, փախան իրենց առաջ բացված թունելով: Երբ մի լայն տեղ կանգ առան և նայեցին իրար դեմքերի՝ բոլորն էլ գունատ էին ու հևում էին շնչակտուր, կարծես նրանց հալածել էին աներևույթ ոգիները:
Հասոն գրպանից հանել էր իր դանակը, բացել էր նրա լեզվակն ու առաջ մեկնած՝ քրդերեն ինչ-որ բան էր մրմնջում՝ հավանաբար չարը խափանող աղոթք, որ լսել էր իր տատից: Այն համոզումը, որ ձեռքին սուր պողպատ ունեցող մարդուն չարքերը չեն համարձակվում մոտենալ, սիրտ տվեց քուրդ պատանուն և նա, արդեն մի փոքր հանդարտված, ասաց.
- Ե՛տ գնանք... չվախենա՛ք...
- Հա, գուցե իսկապես հիվանդ կա, հարկավոր է օգնել, - հաստատեց Գագիկը, որ կապտած ու դողացող շրթունքները հազիվ էր շարժում:
- Իսկ երեխա՞ն... խե՛ղճ...
Եվ Շուշիկը, որքան էլ ահաբեկված էր, շուռ եկավ դեպի մեծ այրը: «Գուցե իսկապես պետք է ազատել մի մեռնող երեխայի...», - մտածում էր նա և այդ միտքը ուժ տվեց նրան: Թե ի՞նչ գործ ունեն մարդիկ այս ստորերկրյա աշխարհում, այդ առեղծվածը հետո կարելի էր պարզել, առայժմ հարկավոր էր օգնության հասնել, - ամեն մեկն այսպես մտածելով իր մեջ, բոլորն էլ ետ դարձան, բորբոքեցին ջահերը ոչ այնքան լուսավորելու, որքան ինքնապաշտպանության բնազդով, և վախվխելով ու դանդաղ առաջ գնացին: Հասոն մեկնել էր իր դանակը, որ սառը փողփողում էր ջահերի լույսից և դա սիրտ էր տալիս նրան, պսպղող պողպատի առաջ էլ «շեյթա՞ն» կանգ կառնի...
Հենց այրը մտան, նորից հեծկլտոց լսվեց:
- Ո՞վ եք, - բարձր գոչեց Գագիկը, որ Աշոտի բացակայությամբ խմբի առաջնորդն էր համարում իրեն:
- Ձա՛յն հանեցեք, ո՛վ մարդիկ...
Պատասխան չկա:
Նրանք իրար սիրտ տալով, ջահերը բարձր բռնած, խուժեցին անձավը, գոռգոռացին, թնդացրին նրա կամարները, բայց ոչ մի տեղ ոչ հիվանդ երևաց, ոչ երեխա: Միայն բնական սյուներից մեկի քիվից երկու երկարականջ բու ցած ցատկեցին, անձայն պտույտներ գործեցին գմբեթի տակ և դուրս թռան պատի վերև սպիտակին տվող մի ճեղքով:
Պատանիները խուզարկեցին այրի բոլոր անկյունները և զարմացած կանգ առան:
- Թե՞ մեզ թվում էր, - ուսերը թոթվեց Շուշիկը:
- Բոլորդ էլ նո՞ւյն ձայները լսեցիք, - հարցրեց Գագիկը:
- Նույնը ո՞րն է:
- Հիվանդի տնքոցներ և երեխայի լաց:

- Այո՛... այո՛...
- Ուրեմն թվալու հարց չկա. հո բոլորիս էլ նույն բանը չէ՞ր թվալու...
Եվ Գագիկը, այդ առեղծվածից ուղեղը մթագնած, գլխիկոր դուրս եկավ այրից:
Խումբը հետևեց նրան:
Ես չեմ նկարագրի այն տանջանքներն ու չարչարանքները, որ կրեցին մեր պատանիները ստորերկրյա ուղիների, անձավների ու խորշերի այդ մռայլ լաբիրինթոսում: Միայն այն կասեմ, որ մի տեղ վերջացավ քարքարոտ թունելը, և նրանք հանկարծ դուրս եկան լույս աշխարհ, բարձրացան մի քարի, դիտեցին իրենց շրջակայքը:
- Էս հո մեր Ոչխարանոցն է, - բացականչեց Հասոն: - Հրե՛, էն էլ Թուխիկի վագրենի գառը...
Իրոք, ժայռի ատամի հետևից փոքրիկ եղջյուրներով մի գլուխ գաղտագողի հետևում էր մարդ արարածների շարժումներին:
Հոգնած և հուսախաբ, պատանիները նստոտեցին քարերին և մտածում էին սևակնած սրտերով: Ի՞նչ անեին, ո՞ւր գնային: Պարզ էր, որ նրանք չէին գնացել իրենց կորած ընկերոջ հետքերով, այլապես որևէ նշան կգտնեին:
- Գուցե Աշոտը հենց այստեղով դուրս է եկել ու հիմի էլ նա է մեզ փնտրում, - իր մեջ ծագած այդ մտքից ուրախացավ Սարգիսը:
- Գնա՛նք, կանչելով գնանք, - ոգևորվեց Շուշիկը:
Նրանք դուրս եկան ժայռերի գլուխը, ընթացան Ոչխարանոցը Հովազաձորի հետ կապող ապառաժե արահետով, մերթ ընդ մերթ կանգ առան և «Աշոտ, հե՛յ, Աշո՛տ» գոչեցին, բայց նորից պատասխան չկար:
Հոգնած և հուսահատ, իջան ճգնավորի այրը, աղոտ հույս ունենալով, որ Աշոտն օջախի մոտ քնած կլինի, բայց այրը դատարկ էր:
Անհետ կորավ իրենց հույսն ու ապավենը, ի՞նչ պիտի անեին հիմա առանց իրենց փորձված ընկերոջ: Եվ առհասարակ ինչպե՞ս հաշտվեին այդպիսի ծանր կորուստի հետ:
Շատ էին հոգնած, բայց դադար չունեին այն սոսկալի մտքից, որ Աշոտը կորել է անհետ, ուստի նորից դուրս ելան անձավից. հարկավոր էր գնալ որոնումները շարունակելու: Բայց արդեն մռայլ երեկոն իջնում էր երկրի վրա, քրտնած ու հոգնած պատանիները դողում էին:
- Ջահեր էլ չունենք, առանց ջահի գնալն իզուր է, - տխուր ասաց Գագիկը:
Որոշեցին կենի թփերը բերել, գիշերը չորացնել օջախի մոտ և մյուս օրը մարխի շատ պաշար վերցնելով, նորից մտնել Հովազի անձավը:
- Հետքը պետք է գտնել, առանց հետքն ընկնելու մենք իզուր այնքան գնացինք, - գիշերը, երբ օջախի առաջ մարխ էին չորացնում, կարծիք հայտնեց Սարգիսը:
- Չոր քարի վրա հե՞տք կերևա: Էդ թունելներում նույնիսկ հող չկա, փոշի չկա, որ գնացողը հետք թողնի իր հետևից:
Բոլորն էլ լուռ մտածում էին՝ աչքները հառած բոցկլտող խարույկին և բոլորի սրտերն էլ նույն ցավով էին համակված. Ա՛խ, երևար իրենց ազիզ ընկերը այրի շեմքին, այլևս ոչ մի հոգս նրանք չէին ունենա աշխարհում...
Տարի թվաց այդ գիշերը մեր պատանիների համար:
- Ա՛խ իմ ձեռքը կոտրվեր, ես նրա անունը չջնջեի...- մրմնջում էր ինքն իրեն Շուշիկը:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ. Թե ինչպես բնության մեջ հրաշք են թվում շատ հասարակ երևույթներ, երբ դրանց պատճառը չես իմանում

Ուրեմն աշխարհում ավե՞լի ծանր բաներ են եղել, քան Հովազաձորում անզեն ու անսնունդ փակվելն է... Իրենց նոր վշտի հանդեպ մեր տղաներին արդեն փոքրոգություն էր թվում առաջին օրերի իրենց խուճապը: Հիմա ընկեր են կորցրել, ի՛նչ սնունդ, ի՛նչ բնակարան, ի՛նչ ցուրտ, ի՛նչ ոչնչանալու ահ՝ մտերիմ ընկերոջ կորուստի դիմաց: Այն էլ այնպիսի ընկերոջ, ինչպիսին Աշոտն էր: Տարիքով թեև նա մեծ չէր իրենցից, բայց առանց նրա կարծես խումբը որբացել էր:
«Ո՛նց էի ամեն բանի համար կպչում սրտին, ո՛նց էի երեսովը տալիս իր ամեն փոքր պակասությունը, ամբողջ հոգով զղջում էր Գագիկը: - Այստեղ լինե՛ր, թող մինչև լույս ճառեր, թող առավոտից մինչև երեկո խրատներ կարդար, թող թեկուզ մեծամիտ լիներ...»:
Եվ, զարմանալի բան, այժմ որքան մտածում էր, Գագիկը ոչ մի պակասություն չէր գտնում իր կորած ընկերոջ մեջ:
Շուշիկը իր ծնկները գրկած լուռ հեծկլտում էր, իսկ, Հասոն երբեմն շշնջում էր հոգատարությամբ.
- Խուշկե Շուշիկ, քնի՛ր, ուշ է...
Բայց ո՞ւմ աչքերին քուն կգար, ալեկոծված հոգին արթուն է մնում անհանգիստ ծովի նման:

Նույնիսկ Սարգիսը վշտից ու մտածմունքից այդ գիշեր աչք չփակեց:
Հաջորդ օրը առավոտյան ուռած-կարմրած աչքերով նրանք կանգնել էին Հովազի այրի առաջ և զբաղված էին «կերոնները»՝ վառելով:
Դա նրանց գերության քառասուներորդ օրն էր:
- Սարգի՛ս, լավ կլինի, որ դու և Շուշիկը կրակ անեք մնաք՝ այստեղ, - խորհուրդ տվեց Գագիկը:
- Չէ՛, ես պարտք ունեմ Աշոտին տալու: Ես անպայման պիտի գամ, - անառարկելի վճռականությամբ պատասխանեց Սարգիսը:
Վսեմ զգացմունքներ են ծնվում մարդու սրտում, կարո՞ղ ես չհարգել:
Իսկ Շուշիկը ավելի լավ էր իր ընկերների հետ գնար դեպի՝ անհայտություն, քան թե ահի ու ծանր սպասումի մեջ մնար անձավի շեմքին: Նա շալակեց գոտիներով կապկպած ձողերի խուրձը և առաջ ընկավ, բայց երբ անձավի ներսում տեսավ մռայլ խոռոչները, նրան թվաց, թե դրանք հեքիաթային վիշապների ծուռումուռ երախներ են, կամ անհայտ գազանների որջեր, ու ետ ընկավ: Տղաները, ջահերն իրենց գլխներից վերև բարձր պահած, «Աշոտ, հե՛յ» գոչելով և այրի կամարները դմբդմբացնելով առաջ անցան:
Երբ հասան մեզ ծանոթ ճամփաբաժնին, Գագիկը ասաց.
- Երեկ մենք գնացինք դեպի աջ, այս մեծ թունելով: Լավ կլինի, որ հիմա էլ ձախ կողմի նեղ թունելը նայենք...
Ընկերները հավանություն տվին այդ առաջարկին, թեև նրանցից ոչ ոք համոզված չէր, թե Աշոտը կծռվի դեպի այդ գետնուղիները: Ի՞նչ իմանային, թե Շուշիկի խոսքը որքան ուժգին է կպել ինքնասեր տղայի հոգու լարերին...
Կուզեկուզ, երբեմն քարերին զարնվելով ու գաղտնի տնքալով, նրանք գնում էին այդ ծուռումուռ անցքով և գետնին ու պատերին կյանքի նշաններ էին փնտրում:
- Սպասեցե՛ք, հանճարեղ միտք, - ձեռքը ճակատին խփելով գոչեց Գագիկը: - Աշոտը մոռացել է պատերին նշաններ թողնի, բայց մարխը որ այրվի-վերջանա, վա՞յր է գցելու, թե չէ՞:
- Անպայման կգցի... Որ սկսեց ձեռքը վառել՝ կգցի:
- Մարխի մի ձողը հարյուր քայլից ավելի չի տանում: Ուշադիր նայեցեք քարերի արանքները.,.
Գագիկի այդ հրահանգից հետո պատանիները գրեթե երկուտակված էին քայլում: Վառ կերոններով նրանք լուսավորում էին ամեն մի ծակուծուկ և առաստաղից ժամանակի ընթացքում պոկ եկած ու ցած ընկած քարերի արանքները:
- Վերադառնանք, անցքը նեղանում է, - հրահանգեց Գագիկը, Բայց Սարգիսը այնպես էր տարվել պրպտումներով, այնպես սրտանց էր ուզում ինքը գտնել կորած ընկերոջ հետքը, որ անտեսեց այդ կարգադրությունը և գետնին խոնարհված առաջ էր գնում՝ կորած ասեղ փնտրողի նման:
- Ետ արի, Սարգի՛ս...
- Տաքացել է, հա՞, - գովեց Հասոն:
- Մարդ է դառնում, - շշնջաց Գագիկը և հենց բերանը բացեց, որ կրկնի իր կարգադրությունը, լսվեց Սարգսի ճիչը.
- Գտել եմ, եկեք...
Ընկերները կուզեկուզ առաջ վազեցին և տեսան նրա ձեռքին այրված-հանգած ձողի մի մատնաչափ կտոր:
- Հետքը գտա, առա՛ջ գնանք, - ալեկոծված կրկնեց Սարգիսը:
Այնպես էր շառագունել, այնպես ուրախացել, կարծես կորածին էր գտել...
Խումբը դուրս եկավ անորոշ վիճակից: Հիմա ուղղությունը պարզ է:
- Աշոտ, հե՛յ, Աշո՛տ...
Թունելը նեղացավ, այժմ սողալով էին գնում:
- Տեսե՛ք, առանց վառել մի ձող... Գոտուց է ընկել... Հասո, Շուշիկին չե՞ս օգնում... Օգնո՞ւմ ես, կապոցը վերցրե՞լ ես... Ապրե՛ս, դե հետևիցս կրնկակոխ եկեք, չվախենա՛ք...
«Իրեն է սիրտ տալիս», -անցավ Հասոյի մտքով (դե նա Գագիկին լավ էր ճանաչում), բայց սիրտ չկար նույնիսկ մտքում ծիծաղելու նրա վրա:
Այդպես ձայն տալով, իրար խրախուսելով, խումբը մտավ այն ամենանեղ անցքը, ուր նախորդ օրը խցկվել և սողեսող գնացել էր Աշոտը:
Բայց, իսկապես, ո՞ւր մնաց Աշոտը:
Նախորդ օրը, երբ նա սողեսող անցավ այս թունելով և մի մեծ ու լուսավոր անձավ դուրս եկավ, ինչպես ընթերցողը հիշում է, մարդկային քրքիջ լսեց և կանգ առավ քարացած: Սոսկումից նրա մազերը բիզ-բիզ կանգնեցին, ծնկները թուլացան: «Գուցե՞ ծերությունից խելագարված ճգնավորն է...», - այս սոսկալի միտքն էր, որ առաջին վայրկյանից փայլատակեց նրա ուղեղում: Շուռ եկավ, որ թունելով ետ գնա, բայց

երկյուղ ուներ, որ նեղ անցքով սողալիս կարող են բռնել ոտքերից: Այն ժամանակ, անցքում կաշկանդված, դե եկ պաշտպանվիր:
Իր դիմաց, այրի մյուս պատի մեջ, մի լայն թունել էր բացվում, որի ծայրը լուսավորված էր դրսի աշխարհից ինչ-որ ճեղքով ներս թափանցած լույսով: Ահա դեպի ուր պիտի գնալ: Եվ աջ ձեռքով կացինը սպառնագին ճոճելով, ձախով վառվող ձողերը, նա գոռգոռալով կտրեց-անցավ անձավը, մտավ լայն թունելն ու վազեց դեպի լույսը:
Երբ ետ նայեց, ոչ ոք իրեն չէր հետապնդում: Ձայն տվեց, աղմկեց, լուռ ու սրտատրոփ ականջ դրեց՝ ոչ մի պատասխան: Մի փոքր խաղաղվեց, բայց երկյուղը պատել էր նրան, այնպիսի երկյուղ, որպիսին իր կյանքում Երբեք չէր զգացել:
Այդտեղ լուսավոր էր, եթե լուցկի ունենար, նույնիսկ ջահը կհանգցներ: Բայց լույսը ներթափանցում էր շատ բարձրից, ժայռի մի նեղ ճեղքից: Ա՜խ, հնարավոր լիներ հասնել այդ ճեղքին և մեկ անգամ ևս նայել պայծառ աշխարհին... Ո՜նց նա մինչև այդ չէր գնահատել արևի շլացուցիչ լույսը, որն աշխարհը դարձնում է այնպես բերկրալի...
Հարկավոր է վերադառնալ եկած ճամփով, դուրս գալ ստորերկրյա զնդանից, գնալ դեպի ազատ աշխարհ՝ Հովազաձոր...
Այս մտքից տղան դառնությամբ ժպտաց: Որքա՜ն համեմատական բան է եղել «նեղ օր» հասկացողությունը: Մինչ այդ Հովազաձորը նրանք իրենց բանտն էին համարում: Ա՜յ իսկական բանտը... Մինչ այդ նրանք ձգտում էին Հովազաձորից մի կերպ դուրս գալ ազատ աշխարհ: Հիմա նրանց ազատ աշխարհը ինքը՝ Հովազաձորն է, իր մաքուր օդով, շնկշնկան քամիներով, լույսով ողողված շեկ ժայռերով... Ի՞նչ խղճով էին իրենք Հովազաձորին բանտ կոչում, երբ աշխարհում այսպիսի ստորերկրյա դժոխքներ են եղել... Չէ՜, որքան տանջեց Շուշիկին՝ հերիք է, ե՜տ, դեպի լույս աշխարհ:
Հիմի ինչքա՜ն են իրեն կարոտե՜լ... Այդ մտքից նա երջանիկ ժպտաց և քայլեց դեպի ետ, բայց հեռվից նորից լսվեց նույն քրքիջը և տղայի վարդագույն երազները նորից վայրկենաբար հօդս ցնդեցին: Ճամփան փակել էր «խելագար ճգնավորը», իսկ ձեռքի մարխը այրվում-վերջանում էր: Մնում էր շարունակել ճամփան այն հույսով, որ մի որևէ տեղ ելք կգտնի դեպի լույս աշխարհ:
Ահա ինչպես Աշոտը մնաց փակված ստորերկրյա այդ զնդանում: Նա բոլորովին էլ չէր կորցրել ճամփան, նա այնքան կողմնորոշում ուներ, որ անսխալ ետ կգնար ու չէր մոլորվի, թեև իր անցած թունելը տեղ-տեղ ճյուղավորումներ ուներ: Բայց նրան պատած ահը չէր թողնում քայլել դեպի այն կողմ, որտեղից լսվել էին սարսռեցուցիչ քրքիջները: Դեպի ետ այլևս ճանապարհ չկար...
Ջահը ձեռքին առաջ էր գնում վախվխելով, երբ աջ կողմը մի մռայլ ու ընդարձակ հայելի ցոլցլաց. լճացած ջուր էր, որ սև պատերի տակ մեկնվել էր սև վիշապի նման: Տղան փշաքաղված ետ-ետ գնաց, բայց հետևում էլ իր կարծեցյալ խելագարն էր: Ստիպված առաջ եկավ, ջրերը լուսավորեց և մնաց քարացած, այդտեղ վերջանում էր ստորերկրյա ուղին: Այլևս վերջ... Մի քանի քայլ ետ գնաց, մի հարմար խորշ գտավ և պատսպարվեց նրա մեջ: Ցուրտ չէր այդտեղ, բայց այնպես երկյուղալի էր, այնպես խորհրդավոր, որ հասուն ու սրտոտ տղամարդն անգամ չէր դիմանա:
Ասենք, չդիմանար ի՞նչ պիտի աներ: Դուրս եկավ իր խորշից, վախվխելով ետ գնաց, հասավ վերևից լույս ստացող այրին և տեսավ, որ այնտեղ ևս աղջամուղջն է թանձրանում: Հասկացավ, որ օրը մթնում է ու սկսեց աղիողորմ գոռալ: Կխելագարվեր, եթե օգնության չկանչեր իր գիտակցությանը: Թափահարեց իրեն, քաջալերեց, ամոթանքի խոսքեր շպրտեց իր հասցեին.
- Գլխարկ չկա՞ գլխիդ..., - բարձրաձայն հարցրեց իրեն: Եվ ի՞նչ վախենալու բան կա, - մտածում էր նա: Մի բան հաստատ գիտի, որ ոչ մի տեղ, նույնիսկ այդպիսի ստորերկրյա մռայլ աշխարհներում սատանաներ ու դևեր չկան: Հետո, որպես որսորդի որդի, նա համոզված էր, որ ոչ մի գազան չի հասնի այդտեղ: Էլ ի՞նչ է մնում, վախենալու ի՞նչ կա: Եթե նույնիսկ մի խելագար ծերուկ կա այդտեղ, դարձյալ սարսափելի չի, քանի որ ինքը զինված է կրակով ու կացնով: Չէ՜, դատարկ բան է, պիտի ետ գնալ, ամեն խելագար հո մարդու վրա չի՞ հարձակվում:
Այսպես իրեն սրտապնդում էր Աշոտը, երբ ահով նկատեց, որ ինքն այլևս մարխի պաշար չունի, գոտու տակից ձողերը թափվե՞լ էին ճամփին, թե՞ վառել-վերջացրել էր: Ահա այստեղ ահն ու հուսահատությունը միասին պատեցին նրան: Թևաթափ ու թուլացած նստեց քարին:
Երկար մտածեց այդ դիրքով և վճռեց գիշերել այդտեղ և հաջորդ օրը ցերեկով ետ գնալ եկած ճամփով: Ցերեկը նրանով էր լավ, որ տեղ-տեղ դրսի լույսը ժայռի ճեղքերով ներս էր թափանցում և գետնուղու ամենամութ տեղից անգամ հեռվում, մի ինչ-որ տեղ լույս էր երևում: Իսկ լույսը սիրտ է տալիս մարդուս, լույսը կյանք է ու հույս:
Ետ գնաց դեպի թունելի ծայրը, մտավ իրեն ծանոթ չոր խորշը և կուչ եկավ այնտեղ, կացինը ձեռքին պատրաստ պահած: Վերջին մարխն արդեն հանգել էր, մնացել էր առանց կրակի ու լույսի:

Այնպես խավար էր տիրում, որ եթե մեկը դիմացից մատը մեկներ ու աչքը խոթեր, չէր նկատի: Ինչ-որ տեղից ջուրը ծլթում էր ջրափոսի մեջ, միալար ու տաղտուկ՝ «ծը՛լթ, ծը՛լթ, ծը՛լթ»: Չնայած իր կրած սարսափներին (թե՞ հենց դրա շնորհիվ), այդ միալար ու քնաբեր ծլթոցից նրա կոպերը հետզհետե ծանրացան և քիչ հետո արդեն մուշ-մուշ քնած էր:
Եվ լավ էր, որ քնեց, այլապես այդ սոսկալի զնդանում սի՞րտ կդիմանար...
Շա՞տ էր հոգնած, թե՞ իր մեծ ապրումներից թուլացել էր, Աշոտը երկար քնեց: Մղձավանջային էր այդ քունը, լի սարսափելի երազներով: Երբեմն ճչում էր, վեր թռչում, բայց լրիվ չարթնացած, նորից քուն էր մտնում ծանր հևքով: Դրսի սառնամանիքից պաշտպանված բնական այդ խոր «նկուղներում» տաք էր և գուցե պատճառներից մեկն էլ այդ էր, որ տղան երկար քնեց:

Ինչ-որ խշրտյունից Աշոտն արթնացավ և կացինը վեր բարձրացնելով, քնաթաթախ գոռաց.
- Հեռո՛ւ, թե չէ գանգդ կփշրեմ...
Բայց պարզվեց, որ դիմացը փշրելու գանգ չկա: Իր ձայնից լիովին արթնացավ, հասկացավ, թե ուր է, և նորից սոսկումը պատեց նրան: Վեր կացավ, որ լվացվի, բայց իր դիմաց մեկնված ջրերն այնպես մռայլ ու ահարկու էին, որ սիրտ չարավ ձեռքը մեկնել նրանց:
Հեռվում լույս էր երևում և նա գիտեր, թե ինչ լույս է դա: Անհաստատ ու վարանոտ քայլերով գնաց-հասավ այն անձավը, որը վերևից լույս էր ստանում և որոշեց, որ արդեն արևը պետք է բավական բարձրացած լինի: Այստեղ նա հետզհետե խաղաղվեց:
«Հիմի սրտաճաք եղան իմ ընկերները... Հիմի Շուշիկը լաց է լինում...», - զգացված մտածում էր նա և խղճի խայթ էր զգում իր արարքի համար: Բայց, զարմանալի բան, այն միտքը, թե հիմա Շուշիկը լաց է լինում իր համար, կարծես նույնիսկ ուրախացրեց նրան: «Թող սիրտը փափկի», - եսասիրաբար մտածեց նա և նույնիսկ ժպտաց այդ մտքից:
Կարծես հեռավոր հուշ էին դարձել իր համար ընկերները: Ջերմությամբ հիշում էր Շուշիկի շեկ ու դալուկ դեմքը, որի վրա մի քանի պեպեններ կային, կարծես արևով լցված խաժ աչքերը, վիզը քնքշորեն ծռած և մեղմ ժպտալիս...
Ներքևից վեր մարդու նայելիս Շուշիկի աչքերը մի փոքր շեղ էին դառնում, և այդ նայվածքը առանձնապես դուր էր գալիս Աշոտին: Այժմ, երբ աչքը խփում է, շոյանքով լի այդ խումար հայացքն է հիշում:
- Գնամ, մեղք են, - բարձրաձայն վճռեց պատանին: - Հետաքրքիր է, ի՞նչ բանի է իմ «խելագար ճգնավորը»: Իրեն քաջալերելով («Բա դու տղամարդ չե՛ս, տո՛...») նա դեռ մի քանի քայլ չէր արել դեպի այն այրը, որտեղից երեկ լսվեց այն տարօրինակ քրքիջը, երբ վերևի ճեղքի մոտ մի ուրվական երևաց ու մեկը ռուսերեն ասաց՝ «Сплю, сплю...» («Քնում եմ, քնում եմ...»): Ասաց ու վերջում էլ բարձր ծղրտաց:
Տղան ահաբեկված ետ-ետ գնաց, շտապելուց ոտքը քարին առավ, փռվեց գետին և դեմքը կախեց ինչ-որ ստորերկրյա ճեղքի վրա, որից սուր ածխահոտ էր գալիս: Այդ հոտից նրա գլուխն այնպես ծանրացավ, որ չէր կարողանում վեր բարձրացնել: Ուժ գործադրեց, վեր կացավ, երերաց տեղում և քարե բնական թախտին նստելով, ծանրացած գլուխը հենեց ժայռին:
Այնուհետև ամեն ինչ հետզհետե անցավ մոռացության գիրկը, տղան անզգայացել էր...
Այդ ժամանակ Աշոտին որոնող խումբը արդեն դուրս էր եկել ամենանեղ թունելից և կորած ընկերոջից մնացած նշաններ էր որոնում ընդարձակ քարայրում:
Վերևում, աղջամուղջի մեջ, մի զույգ աչքեր երևացին և լսվեց խռպոտ սուլոց: Պատանիները ահով ետ-ետ գնացին, միայն Հասոն էր անվրդով ժպտում:
- Բվեճ է, մի՛ վախենաք, - ասաց նա և մի քար նետեց թռչունին: Բվեճը իր փափուկ թևերն անաղմուկ շարժեց և անհետացավ մեծ թունելի մեջ:
Այդ թունելը խմբին դուրս բերեց այն լուսավոր այրը, ուր Աշոտն այդ առավոտ ծղրտոց լսեց և ռուսի կանչը, թե՝ Сплю... Сплю... Այրի առաստաղի մի մութ անկյունում սև կետեր էին երևում:
- Գագի՛կ, վառեկներդ, - գոչեց Հասոն առաստաղից կախված չղջիկների գաղութը ցույց տալով: Նրա ձայնից մի քանի փոքրիկ բվեր արթնացան ու դուրս թռան ժայռի ճեղքից:
- Վառեկնե՞րս, - նրանց հոգուն մատաղ...
Տղան իր սովորության համաձայն ցանկացավ կատակել, բայց սիրտը ճմլվում էր. «Ա՛խ, Աշոտը գտնվե՛ր...», - մտածեց նա և նորից մռայլվեց:
Այդ քարայրից մինչև ջրափոսը հեռու չէր: Երբ գաղջ և ծուռումուռ գետնուղիով առաջ գնացին մի քանի տասնյակ քայլ, ջահերի լույսի տակ մի մարդ երևաց, որ նստել էր քարե թախտի վրա ու գլուխը հենել ապառաժե պատին:
- Աշո՛տը, - ճչաց Շուշիկը, և տեսնելով, որ տղան չի շարժվում, թուլացած նստեց տեղում:

- Աշո՜տ, Աշո՜տ, - թափահարում էին ընկերները, քաշքշում, տղան կենդանության ոչ մի նշան չէր ցույց տալիս:
- Հա՛սո, տանենք էն լույս տեղը...
Եվ Գագիկը շալակեց ընկերոջ անկենդան մարմինը ու տարավ դրեց լուսավոր այրում:
- Շուշիկն ուշաթափվել է, Շո՜ւշիկը, - հետևից լսվեց Սարգսի խուճապահար ձայնը: Հասոն ետ վազեց և ձեռքի վառվող ձողը ցած մեկնեց, որ աղջկա դեմքը լուսավորի, սակայն բոցն իսկույն հանգավ:
- Դեսը տուր...
Նա խլեց Սարգսի ձեռից ջահը, բայց սա ևս ճեղքին մոտեցնելուն պես հանգավ: Տղաները կռանալիս ծանր ածխահոտ էին առնում, որից պտտվում էին նրանց գլուխները, շունչները բռնվում էր: Չըմբռնեցին ի՞նչ երևույթ է դա, բայց Շուշիկին վերցրին ու տարան լուսավոր այրը:
Գագիկի սև աչքերը այրվում էին ներքին բերկրանքից:
- Շնչում է, - աչքով անելով ակնարկեց նա գետնին պառկած ընկերոջ կողմը:
- Իսկապե՞ս, կենդանի՞ է, - ճչաց նոր ուշքի եկած աղջիկը:
- Սպասիր, ես դրան արթնացնեմ...
Եվ Գագիկը սկսեց քաշքշել Աշոտի ականջներն ու ապտակներ հասցնել թշերին:
- Ի՞նչ ես անում, անխի՜ղճ, - ճչաց Շուշիկը նրա թևը բռնելով: Ապա իր փոքրիկ ձեռքը դրեց Աշոտի ճերմակ ու լայն ճակատին: Ստացած ապտակների՞ց, թե այդ հպումից տղան աչքերը բացեց, խոժոռ ու անիմաստ հայացքով նայեց աղջկա դալուկ դեմքին և նորից կոպերը փակեց:
- Ես եմ, Աշո՜տ, ես եմ, Շո՜ւշիկը, - նրա ուսը թափահարում և մեղմությամբ ասում էր աղջիկը:
Պատանին աչքերը բացեց, դժվարությամբ վրա նստեց ու շփոթված հարցրեց.
- Որտե՞ղ եմ...
- Վառեկներիս մոտ ես, մի վեր նայի՜ր...
- Վերև՞: Չէ, գլուխս ցավում է... Ձեզ գտե՞լ եմ... Հո երազ չի՞...
- Երազ չի բա ի՞նչ է, սրանից էլ քաղցր երա՞զ... - զգացված ասաց Գագիկը և իր արցունքները չմատնելու համար շուռ եկավ:
Նա լուռ լալիս էր...

Այդ դեպքից մի ժամ չանցած, խումբն արդեն բոլորել էր թեժ խարույկի շուրջը և խաղաղ զրուցում էր: Աշոտը նայում էր արևից հուրհրատին տվող շեկ ժայռերին, նայում էր մշուշի թեթև շղարշով պատած Արարատին և սիրտը լցվում էր բերկրանքից: Ի՜նչ պայծառ, ի՜նչ լավ է եղել աշխարհը...
- Հիմի որ լճավանցի Կամոյին հասար, - խաժ աչքերը չարաճճիորեն փայլեցնելով ասում էր Շուշիկը և ընկերներին գաղտնի աչքով անում:
- Կամոյի անունը մի տա, թե չէ հիմի էլի վեր կկենա-կգնա դեպի մութ-մութ աշխարհներ:
- Իսկապես որ մութ աշխարհներ, - հոգնած ու մեղմ ասում էր Աշոտը. կարծես հեռավոր հուշ էր այն, ինչ պատահել էր իրեն այդ առավոտ: Ուրեմն ավելի անելանելի վիճակ է եղել, քան Հովազաձորում փակված ապրելն է: Այն ինչ տեսավ և ապրեց Աշոտը ստորերկրյա այն աշխարհում, դրանից հետո Հովազաձորը երկրային դրախտի հմայք էր ստացել իր աչքին: Նորից ու նորից նայում էր սիրահարվածի աչքերով դեպի ամպերը բարդբարդվող ապառաժներին, ժայռերին թառած արծիվներին և հոգին ճախրում էր ուրախությունից, ինքը. նորից այս ազատ ու հմայքներով լի աշխարհումս է, իր հավատարիմ ընկերների հետ:
- Բայց ի՜նչ սարսափելի էր, գիտե՞ք: Խոստովանվում եմ, որ սիրտս ահ էր ընկել, - ասաց նա ցրված: Թովիչ ժպիտ ուներ հիմա Աշոտը, հայացքը դարձել էր մեղմ ու բարի: «Այսպես ավելի դուրեկան է... չեմ սիրում, երբ գոռում է ու հրամայում», - մտածում էր Շուշիկը՝ պատանու սիրալիր ու քնքուշ հայացքին հանդիպելով:
- Ինչո՞ւ ետ չէիր գալիս, ճամփեն կորցրե՞լ էիր, - հարցրեց Սարգիսը, որ կյանքում առաջին անգամ սիրով ու համակրանքով էր նայում իր երբեմնի հակառակորդին: Իսկ Հասոն, քիչ հեռու նստած, լսում էր ընկերների զրույցը և խաղաղ մի ժպիտ էր հանգչում նրա թուխ դեմքին:
- Ուզում էի ետ գալ, բայց ճգնավորը փակել էր ճամփես, - ժպտալով պատասխանեց Աշոտը:
- Ո՞ր ճգնավորը, մեր տան տերը, - անհանգստացավ Շուշիկը և նրա չալ աչքերում վախ երևաց:
- Այո՜, մեր տան տերը: Երևի մենակությունից խելքը թռցրել է... քրքջում էր լուսավոր այրում...
- Դու աչքովդ իրեն տեսա՞ր, - մեջ մտավ Հասոն, որ քիչ չէր ահաբեկված այդ լուրից:
- Չտեսա, միայն ձայնն էի լսում:
Հասոն ներողամտորեն ժպտաց:
- Բվեճ է եղել, - հանգիստ ասաց նա և գնաց խարույկի համար փայտ բերելու:
- Ա՛յ քեզ բան, բվեճն էլ մարդու նման կծիծաղի՞...

- Հա, Հասոն մի բվեճ թռցրեց ասածդ այրից, - հաստատեց Շուշիկը:
Աշոտը մնացել էր կարկամած:
- Հը, ինչո՞ւ ես ապշել, - ծիծաղելով հարցրեց Գագիկը:
- Ախր այդ քրքիջը ինձ շատ է վախեցրել, - գողունի Շուշիկին նայելով խոստովանեց տղան և շիկնեց իր խոստովանությունից: - Չէ՛, Հասոն սխալվում է, մարդիկ կային այդ խոռոչներում, մեկը նույնիսկ ռուսերեն պարզ ասում էր, «Քնում եմ, քնում եմ՝ сплю, сплю...»:
Հասոն փայտերը դրեց կրակին և լուռ ծիծաղում էր, որից նրա սև դեմքին ճերմակին էին տալիս բացված ատամներն ու աչքերի սպիտակուցը:
- Դա էլ բո՛ւ է եղել, - հանգիստ ասաց նա: - Հանդերում այնքա՛ն եմ լսե՛լ: Առաջ ես էլ էի վախենում, կարծում էի, թե շեյթաններ են, ծիծաղում են վրաս, շվվացնում, ձայն տալիս ու ինձ խաբում, թե՝ քնած ենք, քնած ենք: Բայց հերս բոլորը բացատրեց: Ու ամեն անգամ ձեն լսելիս, թևիցս բռնած տանում էր ցույց տալիս. կամ բու էր դուրս գալիս կամ բվեճ... Դրանք էդպես են, դրանցից զուր ես վախեցել...
Իսկապե՞ս բվեճ է եղել... Լավ է, որ ընկերները չեն տեսել իր սարսափահար կերպարանքը, չեն լսել խելագար կանչերը: Ամոթ էր զգում Աշոտն իր թուլության համար և ամենից շատ այն բանի համար, թե ինքը, որսորդի որդի լինելով, ինչո՞ւ չպիտի ծանոթ լիներ բվեճի ու բուի ձայներին:
Անհարմարությունից նա քրտնել էր. ա՛յ քեզ ամոթալի վիճակ: Գյուղում որ լսեն, ի՞նչ կասեն:
Իսկ Հասոն ծանոթ կլինի իհարկե: «Օրը վերջացավ՝ վերադառնում ենք որսից: Իսկ նա գիշերում է հանդում...», - փորձեց իրեն արդարացնել նա:
- Դե լա՛վ, քիթդ մի՛ կախի, մենք քեզանից պակաս չենք վախեցել: Մի այր ընկանք՝ կատարյալ հիվանդանոց, մեկը տնքում էր, մեկը հառաչում, մյուսը լաց լինում... Սարսափելի էր չէ՞, Շուշի՛կ: Ասենք, Գագիկ տղեն վախեցող պտուղ չի, ուղղակի խղճում էի, որ լսում էի մարդկանց հառաչանքները: Հիմի Հասոն կասի՝ դրանք էլ են բուերն ու բվեճները:
- Չէ, լաց ու տնքոց ես բուերից չեմ լսել... Դրանք քաջքեր էին...
Եվ հովիվ պատանին ահով նայեց Հովազի այրի մռայլ մուտքին:
Այժմ էլ ծիծաղելու հերթը Աշոտինն էր:
- Դա հո իսկական բու է եղել: Լաց է լինում երեխայի նման, հառաչում է, ծվծվում է մկան պես...
- Հա, իսկապես, ծվծվաց, - ոգևորվեց Շուշիկը: - Ուրեմն.,. Ա՛յ քեզ բա՛ն... Մենք էլ...
- Այո, մենք էլ կարծել ենք, թե հրաշքներով լիքն են այդ անձավները: Ահա թե ինչ է նշանակում վատ իմանալ բնության գործերը: Բայց եթե ես ձեր տեղը լինեի, դուք՝ իմը, ոչ մեկս չէինք վախենալու: Հասոն բվեճի քրքիջին է ծանոթ, ես՝ բուի լացին: Նույնիսկ չէինք զարմանալու: Հակառակ տեղեր ենք ընկել: Ա՛յ քեզ պատահականությո՛ւն... Դե որ ոչ մի հրաշք չկա այդ անձավներում, գնանք գտնենք մեր հովազին ու մաշկենք: Ափսոս է, բվեճները մորթը կքրքրեն...
Եվ Աշոտը տեղից վեր կացավ:
- Ջահերը կբավականացնե՞ն: Կեցցես, Հասո՛ն, սրանք դո՛ւ ճեղքած կլինես քո դանակով, ճեղքած ձողը չի հանգչի:
- Էլի հանգչում է, Աշոտ: Որ ուզեցինք Շուշիկին վեր բարձրացնել, իմ մարխն էլ հանգավ, Սարգսինն էլ, - իր պատրաստած կերոններից դժգոհ պատասխանեց Հասոն:
- Ո՞նց թե... ինչո՞ւ պիտի հանգչեն այսքան յուղոտ ու չոր մարխերը.... - մտատանջության մեջ ինքն իրեն հարցնում էր Աշոտը: - Սպասի՛ր, դա որտե՞ղ էր...
- Որտեղ դու ուշաթափվել էիր:
- Որտե՞ղ եմ ուշաթափվել, - կենտրոնացած մտածում էր Աշոտը: - Հա՛, կռացա մի ճեղքի վրա, որից քարածխի հոտ էր գալիս...
- Ես էլ կռացա, ու մարխը հանգավ, - մեջ մտավ Սարգիսը, որը սկսել էր մի կարևոր բան կռահել:
- Ասում ես Շուշիկն ուշաթափվե՞ց: Բա ո՞նց եմ կենդանի եմ մնացել... Ա՛յ քեզ հանելո՛ւկ... Ես պառկած չէի՞ ճեղքի վրա:
- Ո՛չ, թառել էիր վերևում...
- Քո վառեկների նմա՞ն... Հենց դա էլ ինձ փրկել է. ածխածինը ծանր է օդից, ներքևում լճացած է եղել... Ա՛յ քեզ բա՛խտ, մազից ենք պրծել:
Աշոտը գլուխն օրորում էր:
- Ուրեմն ինձ մահի՞ց եք փրկել... Եվ նույնիսկ Սարգի՞սն է մասնակցել ինձ փրկելու գործին:
- Ոնց թե նույնիսկ: Եթե նա չլիներ՝ մենք չէինք գտնելու: Նա գտավ քո հետքը, - բոլորի վրա մի հաղթական հայացք ձգելով վրա բերեց Շուշիկը: Այդ հայացքը ասում էր. «Տեսա՞ք, որ ես ճիշտ դուրս եկա»:
Նա հիշեց, թե ինչպես Սարգիսը աղաչում էր ժայռի ճակատից. «Փրկիր ինձ, Աշոտ ջան, գուցե մի օր էլ ես եմ քեզ պետք գալիս»: Հիշեց և Աշոտի ամբարտավան պատասխանը. «Մեռնի իմ գլուխը, որ դու

պիտի ինձ պետք գաս»: Հիմա առանց նրբանկատության չհարցնի՞ Աշոտին. «Պե՞տք եկավ Սարգիսը, թե՞ ոչ...»:
Բայց ինչպե՞ս հարցնի, ինչպե՞ս ամոթահար անի այդ մի քիչ ամբարտավան, բայց շատ սիրելի տղային...
Բայց Աշոտը հասկացավ նրա ակնարկը և հայացքը խոնարհեց: Հասկացան և մյուս ընկերները: Սարգսի հոգին թնդում էր բերկրանքից, թեև անհարմարությունից քրտնել էր: Ա՞յ իսկական հաղթանակը... Այսպես կհաղթեն, ոչ թե մեջը քար դրած ձնագնդիներով...
Իսկ Աշոտը դեռ դժվարանում էր հաշտվել տեղի ունեցածի հետ: Ուղղակի հրաշք էր կատարվել: Նրա մտքով իսկի երբևէ կարո՞ղ էր անցնել, որ իր կյանքը պիտի փրկեն (այն էլ ստորերկրյա մթին խորխորատներում) Սարգիսը, որին նա մորթապաշտ է համարել, Գագիկը, որի վախկոտությանը ինքը քաջ ծանոթ է, թուլակամ ու թուլակազմ այս աղջիկը, որին Աշոտը ե՞րբ է հաշվի առել որ... Ախր իր համեմատությամբ դրանք թույլ ու անճար արարածներ էին... Չէ՛, այստեղ թյուրիմացություն կա: Հավանաբար ինքը վատ է ճանաչել իր ընկերներին և թյուր կարծիքի է եղել նրանց մասին: «Իսկ իմ մասի՞ն»: Այո՛, մինչև այդ դեպքը իր մասին նա բավական մեծ կարծիք ուներ: Իր ընկերները, ըստ երևույթին, այն չեն եղել, ի՛նչ կարծել է ինքը: Հե՞շտ բան է այդ ստորերկրյա դժոխքը մտնել... Թե՞ այդ թույլ կամքերը, միանալով կոլեկտիվի մեջ՝ հզոր ուժ են կազմել, ինչպես երբ միացնում ես բարակ, դյուրաբեկ ու թույլ ճիպոտները, խմբովին անընկճելի են դառնում կաղնի գերանի նման...
Այդ մտքերն էին խռնվել Աշոտի ուղեղում և այդ մտքերից նա բուժվում էր վայրկյան առ վայրկյան: Բուժվում՝ իր թուլություններից, որոնց մասին Գագիկն ասում էր ճակատին, շիտակ, ինչպես վայել է անկեղծ ընկերոջը: Էլ ինչո՞ւ վիրավորվել նրա դիտողություններից, երբ դրանք ճիշտ են, դրանք օգնում են իրեն:
Մի քանի րոպե լուռ էր, և ընկերներն էլ զգում էին, որ կարևոր բան է կատարվում իր հետ: Ինքն Աշոտն էլ զգաց, որ այդ մի քանի րոպեում շատ բան փոխվեց իր մեջ: Ասենք, նրա վերափոխությունը ամեն օր էր կատարվել, դանդաղ, աննկատելի: Այդ վերջին րոպեները քառասուն օրվա բազմաթիվ դեպքերի ու ապրումների գագաթնակետն էին հանդիսանում, նման այն ստորերկրյա ջրերին, որոնք ամեն ժամ, ամեն վայրկյան հավաքվեցին երկրի ընդերքում և հասնելով իրենց բարձրագույն կետին՝ դուրս ժայթքեցին այն գիշեր ահեղ հեղեղի ձևով...
Բոլոր այն խրատները, որ նա կարդացել է ընկերների գլխին, և մասնավորապես Սարգսին, հարկ է, որ վերադարձնեն իրեն: Անվախ ու հզոր է կարծել իրեն, հերոսի դիրք է ընդունել, բայց կյանքը ցույց տվեց, որ առանց կոլեկտիվի ինքը ևս ոչինչ է... Եվ կարծես որպես իր այդ մտքի արձագանք, նա լսեց Գագիկի զգույշ ու մեղմ հարցը.
- Աշո՛ տ, եկ անկեղծ ասա, չե՞ս ընդունում, որ նույնիսկ դու առանց ընկերների անզոր ես...
Երևում էր, որ Գագիկի համար դա շատ կարևոր հարց է, որ շաբաթներ շարունակ նրան մտահոգություն է պատճառել:
Աշոտը մի պահ լռեց, ապա գլխատակ ու խուլ արտասանեց.
- Ընդունում եմ...
- Միակ խոսքը, որ կարճ ասացիր, - ծիծաղեց Գագիկը, բայց և զգաց, որ իր սրտից ծանրություն ընկավ. Է՛հ, լավ է, վերջապես «մեջքը գետնովը տվեց»: Հովազաձորը իզուր չի անցել նաև Աշոտի համար, դե ինչպես չփառավորվի Գագիկի նման ընկերոջ հոգին:
Աշոտը նորից լուռ մտածում էր:
- Այո՛, ածխածինը խեղդելու էր ինձ էլ, քեզ էլ... եթե սրանք չլինեին, - կարծես լսեց նա Շուշիկի ձայնը:
Աշոտը սթափվեց իր մտքերից. Շուշիկը հարցական, զննող և ժպտուն աչքերով նայում էր իրեն: Երևի շարունակում է կարդալ իր մտքերը:
- Այո՛, խեղդվելու էինք, - մեքենայորեն կրկնեց նա: - Դե անցածն անցած է, վառեցեք ջահերը, վերցրեք զենքերը, գնում ենք հովազի դեմ... Ա՛յ քեզ բա՛խտ, - շարունակում էր գլուխն օրորել նա: Ապա լիովին սթափվեց, ձախ այտը խաղաց իր խալերի հետ միասին, դա նշան էր, որ նա ալեկոծվում է իր ներսում ծնվող անսովոր մտքերից:
- Դե՛, գնացի՛նք, - գոչեց նա խրոխտ:
Նորից դարձել էր նախկին Աշոտը՝ սրտոտ, առնական, ինքնավստահ: Թախծոտ մեղմությունն անցավ՝ թավիշ ու շոյող հայացքն էլ հետը: Այժմ նրա գեղեցիկ աչքերը փայլում էին ոգևորությունից. տեղում դոփում էր ջահել ձիու նման և բոլորն էլ լուռ զգում էին, որ նա դեռ հեռակա մրցության մեջ է լճավանցի Կամոյի հետ ու մարտի է հրավիրում նրան:
- Աշոտ, սիրելիս, այդ սարսափելի անձավները մի՛ գնա: Հավատացնում եմ, որ դու Կամոյից քաջ ես, - խնդրում էր Շուշիկը և՛ ահով, և՛ հեգնախառը:
Դա ավելի բորբոքեց կրակը պատանու ներսում, վրդովվեց, շիկնեց աղջկա այդ խոսքից՝ գողության մեջ բռնվածի նման:

- Կամոն միայն քո մտքում է, իմ մտքում հովազն է, - զայրացած շպրտեց նա և գնաց դեպի անձավը: Ապա տեսնելով, որ ընկերները տատանվում են, հեգնանքով շպրտեց.
- Բուերը կարգին վախեցրել են ձեզ:
- Վախեցո՜ղ ես գտել, - կուրծքն առաջ ցցեց Գագիկը: - Ուղղակի զուր ես մեզ տանում, ահա թե ինչ: Երկու օր է ամեն ծակուծուկ նայում ենք՝ հովազդ չկա: Ուրեմն դուրս է եկել այրից...
Սարգիսն ու Շուշիկը ևս Գագիկի կողմն անցան, բայց Աշոտը գտնում էր, որ այդքան չարչարանք կրելուց և վտանգների ենթարկվելուց հետո գործը կիսատ թողնել, նշանակում է նմանվել այն զորքին, որը գրոհում է բերդը, զոհեր է տալիս, պարիսպ է կործանում, բայց հենց մոտենում է ներս խուժելու ժամը, նահանջում է վերջին դժվարությունների առաջ: Չէ՜, Աշոտը շուտ հուսահատվող զորավար չի. գործը սկսե՞լ է՝ կտանի մինչև հաղթական վախճանը: Միայն հարկավոր է նախ զորքին համոզել: Նա չոքեց այրի մուտքի առաջ և մատով ցույց տվեց փոշու վրա տպված կլոր թաթի հետքը, ճանկերն ուղղված էին դեպի այրի ներսը: Դեպի դուրս հետք չկար:
- Հասկացա՞ք... Համոզվեցի՞ք, որ ներսում է, - հարցրեց նա հանդիմանանքով:
- Գուցե գնացել, դուրս է եկել «հետևի դռնով», Ոչխարանոցում, - իր վերջին առարկությունն արավ Սարգիսը:
Աշոտը հեգնանքով քմծիծաղ տվեց: Դե ինչպես հասկացնես այս մարդկանց, որ վիրավոր կենդանին չի կտրի-անցնի այդ դարիվեր ճամփան:
- Նա ներս է մտել, քիչ առաջ գնացել ու մոտիկ մի անկյունում ոտները մեկնել, - շարունակում էր համոզել Աշոտը: - Ձեր ճամփին իրարից բաժանվող թունելներ չկայի՞ն:
- Կային, - խոստովանեց Սարգիսը:
- Բա էլ ինչու եք ասում, թե ամեն ծակուծուկ նայել եք... Գնա՛նք... Հետևիցս եկեք: Ամոթ մեզ, որ հովազի մորթին դրոշակ շինած գյուղ չմտնենք...
Աշոտի խոսքը համոզիչ թվաց, նրա ոգևորությունը վարակեց ընկերներին, և խումբն իր փոքրիկ պետի հետևից նորից մտավ անձավների ստորերկրյա լաբիրինթոսը...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ. Թե ինչպես վտանգը վճռականություն և քաջություն է ծնում մարդուս մեջ

Ծանր զենքերից մի քանիսը դրսում թողնելով, նրանք հետները վերցրել էին թեթև ու երկար նիզակները, նրանցով հեռվից ավելի հեշտ կարելի էր հարվածել:
Միայն Շուշիկն էր, որ զենքի փոխարեն եղևնու և գիհի յուղալի ձողեր ուներ: Աշոտը լրացուցիչ վերցրել էր «նախնադարյան մարդու գուրզը», Հասոն՝ իր անբաժան չոմբախը, իսկ Գագիկը՝ ճգնավորի կացինը: Երբ խումբը կանգ առավ մեզ արդեն ծանոթ ճամփաբաժանում, Աշոտը հարցրեց ընկերներին.
- Դեպի աջ գնացողը ճյուղավորումներ չունի՞:
- Ունի՜, քիչ դենը երկու ճյուղի է բաժանվում:
- Պարզ է: Ուրեմն հովազը ո՜չ աջ է գնացել, ո՜չ ձախ. երկու թունելն էլ մենք արդեն ուսումնասիրել ենք, մեկը ես, մյուսը՝ դուք: Գնա՛նք, հիմի պարզ է:
Գնացին դեպի աջ և դեռ քսան քայլ չէին արել, երբ թունելը նորից ճյուղավորվեց: Այս անգամ արդեն առանց վարանելու խումբը մտավ դեպի ձախ գնացող ներքնուղին, որի հատակին նույնպես թափթփված էին զանազան կենդանիների ոսկորներ:
Որքան էլ որ փորձ էին ձեռք բերել մեր պատանիները «մութ-մութ աշխարհներ» հետազոտելու գործում, որքան էլ հոխորտում էին վտանգի հանդեպ և քաջալերում իրենց, այնուամենայնիվ երկյուղն աննկատելիորեն և ակամայից սողոսկում էր նրանց սիրտը: Դե վիրավոր հովազի դեմ գնալը հո կատակ բան չէր, իսկ հովազը պետք է որ ա՛յդ թունելով գնացած լիներ, քանի որ մյուս թունելներն արդեն հետազոտված էին: Այդ էր պատճառը, որ Գագիկը անսովոր կերպով լրջացել էր, Սարգիսը «ոտը կախ էր գցել» և մի փոքր ետ մնացել, Շուշիկը երկյուղով լի հայացքով տղաների դեմքերն էր ուսումնասիրում և ջանում էր կարդալ այնտեղ, թե որքան մեծ է իրենց սպառնացող վտանգը:
Միայն Աշոտն էր, որ քայլում էր բոլորից առաջ, ի ցույց ընկերների անհոգ սուլելով և այնպես ցույց տալով, թե իբր վտանգ ասածդ դատարկ բան է իր համար:
Ոսկորների վրա արյան բծեր երևացին, դրանից երկյուղն ավելացավ մեր պատանիների սրտերում: Լուռ արձանացած, նրանք հայացքով հետևում էին, թե ուր են տանում իրարից հեռու կաթկթած արյան հետքերը: Աշոտը լուսավորեց ժայռի պատը, ապա ձեռքի «ջահը» ցած իջեցրեց, թեքեց աջ և հանկարծ ետ ցատկեց, մի խորշում, լույսի տակ, հուրհրատին տվեց հովազի չալ մորթին...
- Ե՜տ քաշվեցեք, - գոչեց նա:

Բոլորն էլ ետ-ետ գնացին, մեջքները հենեցին պատին և առաջ մեկնեցին ձախ ձեռքներում վառվող կենի ճյուղերը, իսկ աջ ձեռքերով՝ նիզակները: Կրակի վարդագույն ցոլքերի տակ այնպես էր շողշողում հովազի մորթին, կարծես արքայական ոսկեթել ծիրանի լիներ պատի տակ ընկած:
Գազանը դանդաղ բարձրացրեց գլուխը և պղտոր ու մշուշոտ աչքերով նայեց անկոչ հյուրերին: Եթե կյանքը մարելիս չլիներ նրա մեջ, կրակի ցոլքերի տակ աչքերը պետք է վառվեին ֆոսֆորային պաղ լույսով: Բայց մեռնող հովազի աչքերը զուրկ էին այն փայլից, որ մթության մեջ արձակում են բոլոր կատվացեղ կենդանիների աչքերը: Դրանից Աշոտը հասկացավ, որ գազանը իր կյանքի վերջին ժամերն է ապրում ու գոչեց.
- Չվախենա՛ք... դուրս չփախչեք... սատկում է...
Բայց գազանը հետզհետե դուրս էր գալիս անզգայության վիճակից, թաքնված ուժեր էին գլուխ բարձրացնում նրա մեջ՝ իր մարող կյանքի վերջին ուժերը:
Ահա նա բեղերը շարժեց, վերին շրթունքը դողացնելով վեր բարձրացրեց և ցույց տվեց ահռելի ժանիքները:
Պատանիների մարմնով սարսուռ անցավ:
Այդտեղ այրը բավական լայն էր, և նրանք հեռու էին գտնվում գազանից:
Դողացող ձեռքերի մեջ հպել էին տեգերը, իսկ Շուշիկը բնազդորեն մի քար էր վերցրել, և այդպես սպասում էին, թե ինչ կկարգադրի Աշոտը: Իսկ նա գոչում էր ահաբեկված.
- Չվախենա՛ք... չվախենա՛ք...
Բայց գազանին նայելով, Աշոտը գունատվեց, հովազը մեջքն ուռցնում էր և երկար պոչը խփում գետնին: Դա նշան էր, որ նա ցատկելու է պատրաստվում: Կուտապ եկավ, մկան վրա ցատկելու պատրաստվող կատվի նման հպվեց գետնին, մեջքը կորացրեց աղեղնաձև և արդեն աշխուժացած աչքերով սկսեց որոնել իր որսին. նախ պիտի կանգ առներ հինգ արարածներից մեկի վրա, իր ցեղի սովորության համաձայն նշան բռներ նրան և ցատկեր...
Այստեղ էր, որ հարկավոր եղավ այն սառնասրտությունն ու արագ կողմնորոշվելու շնորհքը, որ Աշոտը սովորեցնում էր իր ընկերներին:
Երբ հովազը կուտապ եկավ, Աշոտն իսկույն հիշեց, թե ինչպես են վագր որսում Մալայան Արշիպելագի բնիկները: Գտնում են վագրին, նիզակները ձեռքներին ճոճելով կլոր պար են բռնում ու պտտվում կուտապ եկած գազանի շուրջը: Վագրը շփոթվում է, չի կարողանում որոշել, թե ո՞րին նշան բռնի: Նրանք էլ հարայ-հրոցով օղակը նեղացնում են ու նիզակները նետում... Անցյալ տարի մի տեղ կարդացել ու երազել էր. «Ա՛խ, մի վագր պատահի հանդում՝ գնայինք վրան փորձեինք...»: Ահա թե որտեղ հարկավոր եկավ կարդացածը: Եվ նա գոչեց.
- Շարժվեցեք, որ չկարողանա նշան բռնել, շարժվեցե՛ք, թռչկոտեցե՛ք, որ շշկլվի... Քոչա՛րի բռնեցեք, քոչա՛րի, - հանկարծ վճռելով գոչեց նա և բոլորն ուս-ուսի տվին: - Փչի՛ր, Հասո՛, փչիր՝ շփոթեցնենք...
Տարօրինակ էր իրենց պետի այդ «հրամանը», բայց ո՛վ ժամանակ ուներ կշռադատելու, երկյուղից գլուխները կորցրած և իրենց բոլոր նյարդերով լարված, մեր պատանիները բնազդով կրկնում էին այն, ինչ անում էր իրենց օղակավարը:
Հասոն տագնապահար ու վայրիվերո փչում էր իր սրինգը և մեր պատանիները, սարսափը սրտներում, ոստոստում էին ռիթմիկ դոփյունով:
Խելագարություն կարող էր թվալ «պարն» այդ կրիտիկական պահին, բայց երբ գազանը մոլորվել էր, թե այդ ցատկոտող երկոտանիներից որի՞ վրա ցատկի, մեր պատանիները հասկացան, որ իրենց արածը մեծ հնարամտություն է:
- Թռչկոտելով մոտեցեք, մի՛ վախենաք, մեզ ոչինչ չի անի, - խրախուսում էր Աշոտը:
Ա՛յ քեզ հնարք: Գազանը այնպես էր շփոթվել նվագից, կրակներից, ցատկոտող արարածների տեսքից, որ բոլորովին կորցրել էր կողմնորոշումը: Նշան էր բռնում մեկին, բայց հենց սա ոստնում էր մի կողմ, հայացքը հաջորդին էր մեխում, ապա մյուսին: Այդպես անդադար նրա հայացքն անցնում էր մեկից մյուսին և ոչ մեկի վրա էլ չէր կարողանում կանգ առնել, որովհետև նրանք շարունակ շարժման մեջ էին: Իսկ կատուն չի ցատկի այն կենդանու վրա, որի վրա իր հայացքը գոնե մի պահ կանգ չի առել, որին նա նշան չի բռնել:
Ընկերները վերջնականապես գլխի ընկան, թե այդ սարսափելի պահին ինչու են թռչկոտում իրենք, հասկացան Աշոտի մտադրությունը և գոռում-գոչյունով շարունակեցին ցատկոտել: Իրենց ձայներից, գազանի շփոթությունից հետզհետե սրտապնդվեցին ու սկսեցին նեղացնել օղակը:
- Նիզակները շպրտեցեք, - գոչեց Աշոտը:
Չորս նիզակ միասին թռան օդում, իսկ Շուշիկի քարը ընկավ իր ոտքերի մոտ. նրա ծնկները դողդողում էին:
Գազանը հարվածներից ծառս եղավ, գոռաց, դարձյալ ընկավ առաջին թաթերի վրա:

Նետած զենքերից միայն մեկն էր խրվել նրա կողը: Գազանի ամեն շարժումից մարմնի մեջ խրված նիզակը տմբտմբում էր:
Պատանիները մնացին առանց զենքի, միայն Աշոտն էր ձեռքը վերցրել պատին հենած երկար մահակը, որի ծայրին ճիլոպով քար էր ամրացված:
- Քարեր վերցրե՛ք, մի՛ վախենաք... Շարունակ շարժվեցե՛ք... Ոչ ոք թող տեղում չկանգնի...
Աշոտը գործում էր ինչպես տենդի մեջ. հոր որսորդական արյունն էր եռում այդ պահին նրա երակներում: Բորբոքված աչքերով հետևում էր գազանի շարժումներին, խույս էր տալիս նրա «նշան» բռնելուց, հրում ու շարունակ շարժման մեջ էր պահում ընկերներին:
- Չոմբախի ծայրը բերանը կոխիր՝ զբաղեցրո՛ւ, - գոչեց նա: Հասոն հեռվից մեկնեց իր երկար մահակը և նրա ծայրը խոթեց ուժասպառ գազանի երախը:
Մինչ սա փայտն էր կրծում, ժնգժնգացնելով ցույց տալիս իր սուր-սուր ատամները, Աշոտն անցավ այրի մութ անկյունը, կողքից մոտեցավ և ձեռքի քարե մուրճը վրա բերեց հովազի կլոր գանգին...
Գազանի մարմինը խլրտաց, ոտքերը ջղաձգորեն ցնցվեցին և շուռ գալով կողքի վրա, մեկնվեց:
- Տեսա՞ր ինչ արավ էս տղեն, - ծնոտները կափկափացնելով և բռունցքը խփելով իր կրծքին՝ կանչեց Գագիկը: - Կաց, մի կարգին սպանեմ...
Եվ նա բարձրացրեց ճգնավորի կացինը, որ վրա բերի, մեկ էլ միտքը փոխեց ու հեռացավ-մեջքը դեմ արավ անձավի պատին:
- Անտերը վեր կկենա փորս-մորս կթափի: Ապա մի մեծ քար վերցնելով, ձայն տվեց: - Հեռո՛ւ կացեք, հովազ եմ սպանում:
Ու սկսեց քարկոծել անշարժացած կենդանուն:
Գազանն այլևս չէր արձագանքում ո՛չ հարվածներին, ո՛չ լույսին, ո՛չ տղաների խոսակցությանը: Նա շունչը փչել էր: Բայց մեռած վիճակում ևս այնքան զարհուրելի էր, որ միառժամանակ ոչ ոք չհամարձակվեց մոտենալ նրան: Նորից քարեր տեղացին՝ ոչ մի շարժում:
- Դե իմ զարկին հովա՞զ կդիմանա, - պարծեցավ Գագիկը:
Վախվխելով մոտեցան, պոչից վեր քաշեցին:
- Սպասեցե՛ք, քարշ մի տաք, մորթին ափսոս է: Կաց, մի նիզակը հանեմ կողից: Պա՛հ, ինչ խոր է խրվել... Սարգի՛ս, դու պոչից բարձրացրու, Հասո՛, դու գլխից, Գագի՛կ, դու ոտքից: Շուշի՛կ, լույս անելով առաջ ընկիր...
Այսպես գազանին վերցրին և իրենց զենքերը գետնին թափթփված թողնելով՝ թափորով դուրս բերին անձավից, ցած դրին և երջանիկ նայեցին իրար: Ա՛յ քեզ հաջողությո՛ւն, հիմի որ աշխարհը կզարմանա իրենց արարքից: Դե եկ, Աշոտ, համբերիր: Դե եկ հեգնանքով մի հարցրու Շուշիկին. «Քո Կամոն իսկի մի վայրի կատու սպանած կա՞»: Բայց ոչ, հարմար չէ... Լավ կլինի, որ այդ մասին նույնիսկ ինքը չմտածի էլ...
- Սպասիր, Աշո՛տ, քեզ էլ մի ուրիշ շքանշանով պարգևատրեմ, «Հովազին հաղթելու շքանշանով»:
Եվ Շուշիկը թխկենու մի նախշուն տերև գտավ, ամրացրեց պատանու կրծքին ու մի շատ ջերմ հայացք պարգևեց նրան:
Աշոտը շփոթված բողոքեց.
- Բոլորի՛ն, բոլորի՛ն... Ինչո՞ւ միայն ի՛նձ...
- Ա՛յ այդպես: Հիմա առաջվա Աշոտից և՛ լավն ես, և՛ բարձր, - մեղմությամբ և մեծավարի խրատեց Շուշիկը: - Եվ եթե միշտ այդպես համեստ մնաս, գին չես ունենա...
Աշոտն այժմ այնպես էր նեղվում իր հասցեին ասված և չասված գովասանքներից, որ հարկ համարեց շուտափույթ կերպով փոխել խոսակցության նյութը:
- Պարծենալու բան չկա, - ասաց նա: - Արջի սպանածին տեր ենք կանգնել ու հպարտանում ենք...
Շուշիկը բողոքեց.
- Ո՛չ արջը, ո՛չ էլ հովազը իրենք-իրենց չեն մեզ բաժին դառել: Երկուսն էլ ձեռք են բերվել մեր աշխատանքով...
- Վա՛յ, դատողությանը նայեցեք... Այդ ինչպե՞ս, - զարմացավ Գագիկը:
- Շատ պարզ: Եթե Աշոտը թակարդ չլարեր, ոչ այս գազանը այստեղ մեկնված կլիներ, ոչ էլ արջի միսը կախված կլիներ մեր բնակարանի պատերից...
Իսկապե՛ս որ... Այդ մասին նույնիսկ ինքը՝ Աշոտը չէր մտածել:
Այո՛, թակարդն ըստ երևույթին շատ ավելի մեծ գործ էր կատարել, քան կարծում էին մեր պատանիները: Եթե նա իր երկաթե ճանկերով այնպես չճզմեր հովազի թաթը, սա երբեք չէր հարձակվի արջի վրա, ուրեմն և փշրված ողնաշարով չէր էլ գնա մթին անձավում վախճանվելու...
Ընկերները դարձյալ գովում են իրեն, դարձյալ առաջ են քաշում... Աշոտը Հովազաձոր մտնելուց հետո առաջին անգամ շիկնեց համեստությունից: Չէ՛, արդարամիտ են իր ընկերները, ի՛նչ հիմար բաներ էր

մտածում մի քանի օր առաջ նրանց մասին: Լա՛վն են... Երբ լավ ես պահում քեզ՝ վեր են քաշում, բայց հենց գոռոզացա՞ր, տապալում են... գաղտնի քվեարկությամբ...
Աշոտը ժպտաց հաշտ, բարի ժպիտով: Այն չարաբաստիկ քվեարկությունը, որ մինչև հիմա հիշում էր սոսկումով, այժմ թախծալի ժպիտով է մտաբերում: Կարծես «այն տապալվածը» ինքը չէր եղել, այլ ուրիշ մարդ: «Տաքագլուխ էր, ընկերներին բանի տեղ չդնող», - այդ «ուրիշի» մասին մտածում էր նա:
Այդ «ուրիշը» այլևս մնաց հետևում... Աշոտը կարծես մի քանի օրվա մեջ աճել ու թևակոխել էր իր կյանքի մի նոր շրջան: Այո՛, այդ անցումը արագ կատարվեց, շա՛տ արագ: Բայց չէ՞ որ Հովազաձորում էլ դեպքերը և նրանց առաջ բերած տպավորություններն ու հուզումները իրար հաջորդում էին գլխապտույտ արագությամբ:
Դրանից չէ՞ր, արդյոք, որ մեր պատանիները հասունանում ու փոխվում էին ժամ առ ժամ...
Աշոտը վեր կացավ:
- Հասո՛, դու շատ զգուշությամբ մաշկիր, տիկ հանիր գազանի մորթին: Սարգիսն ու Շուշիկը կօգնեն քեզ, իսկ ես ու Գագիկը այրի մեջ ինչքան ոսկոր կա պիտի դուրս տանք, - կարգադրեց նա: - Լավ տիկ հանիր հա՛, ոչ մի տեղ չպատռես: Այնպես որ մեջը խոտ լցնենք՝ դառնա իսկական կենդանի հովազ ու կանգնի մեր դպրոցի բնագիտական կաբինետում...
Ասաց ու նորից քարայրը մտավ:
- Ոչ մի տեղ չպատռե՛ս... Նո՞ր պիտի պատռվի: Մի տե՛ս, Շուշի՛կ, նիզակի տեղերը, - ցույց էր տալիս Հասոն:
Նիզակներից մեկը խրվել էր գազանի թոքի մեջ և նրա կաշին պատռել մոտ երեք սանտիմետր լայնությամբ:
- Ինչ եք կարծում, ո՞ւմ նիզակը կլինի, - հարցրեց Գագիկը, - մատը իր սրտին դնելով:
- Հա՛, թափից երևում է, որ անպայման քոնը եղած կլինի, - հաստատեց Շուշիկը: - Իսկ սա, որ մի քիչ չանգռել է, Աշոտինը կլինի... Հասո՛, ուշադիր նայիր, կարծես մյուս երկու նիզակները մորթին բոլորովին չեն էլ ծակել: Ա՛յ ձեզ քաջե՛ր...
Բայց մաշկելու ընթացքում մի փոքրիկ ճեղքվածք ևս գտնվեց, ուրեմն չորսից երեքը կպել էին:
- Լա՛վ, հիմի Աշոտը նիզակները կբերի, կպարզենք քո կողմնապահությունը, - սպառնաց Գագիկը:
Իսկ Շուշիկը շոյում էր գազանի սքանչելի մորթին և հիանում:
- Համա նկարելու բան ես հա՛, - աղջկա հագի չորացած պարկին նայում ու ծիծաղում էր Գագիկը: Այդպես էլ ծիծաղելով այրը մտավ:
Շուշիկը նայեց իր տարօրինակ «հագուստին», որ ծուռումուռ և կարծր թիթեղի նման կախվել էր իր նիհար ուսերից և ամոթից լաց եղավ:
- Դե՛, քրոջս քեֆին չկպչես, - Գագիկի հետևից գոչեց Հասոն:
Հովազի ճարպից նա մի կտոր կտրել էր, կրակին դեմ էր անում ու քսում Բոյնախի մորթու չորացած երեսին:
- Շուռ արի- մոտեցիր կրակին, թող կակղի...
Այդպես ճարպով փափկացրեց, ձեռքերով տրորեց աղջկա «մուշտակը», իսկ սա բարությամբ նայում էր տղայի համակրելի դեմքին և ուրախանում այն մտքից, որ հոգատարությամբ է շրջապատված ինքը: Միայն Գագիկն էր երբեմն ձեռք առնում իրեն, դա էլ նրա բնավորությունն է, ո՛ւմ ասես, որ չի հեգնում:
- Հիմի դու տրորիր քուրքդ, էնքան տրորիր, որ մուշկ դառնա:
Շուշիկն իր մուշտակն էր «մշակում», Սարգիսը, իր սովորության համաձայն, միշտ լուռ՝ չոքել ու բռնել էր գազանի ոտքից, իսկ Հասոն դանակի վարժ շարժումներով շարունակում էր մաշկել հովազին:
- Ի՞նչ յուղ ունի՛... ափսոս, որ հարամ է:
Եվ Հասոն, գլուխը բարձրացնելով, նշանակալից նայեց Սարգսին.
- Մեր քրդերն ասում են՝ թող էն սարի գելն էլ մենակ չլինի: Բա՞, ընկերը անգին բան է... Լավ ընկերի հետ չես կորչի... Տեսա՛ր ինչ արինք ընկերներով...
Սարգիսը գլուխը կախ լսում էր, նա չէր կարողանում շիտակ նայել այդ տղայի աչքերի մեջ: Ամոթ էր զգում նրա առաջ, ամոթ՝ իր հոր տմարդի արարքի համար...
Նա վեր կացավ գնաց դեպի ժայռը և սկսեց չորացած հաղարճներ պոկել նրանից կախված թփից: Պոկում էր ու մտածում...
Աշոտը դուրս եկավ այրից՝ կացինն ու քարե մուրճը ուսին և մի խուրձ նիզակներ ձեռքին:
Արևի լույսից աչքերը կկոցած՝ նա դեռ ուշքի չէր եկել, որ նայի նիզակներին և որոշի, թե ո՛ւմն էր խրված գազանի կողը, երբ Հասոն վայրկենապես նկատեց լերդացած արյան բիծն իր նիզակի սուր ծայրին: Բոլոր նիզակներն էլ արագ հափշտակելով ընկերոջ ձեռքից, նա դրանք մեկ-մեկ խրեց հողի մեջ:
- Ի՞նչ ես անում, - նրա ձեռքը բռնեց Աշոտը:
- Ոչի՛նչ, մաքրում եմ... հարամվել են... չքմեղացավ քուրդ պատանին:

Այո, հողը մաքրեց տարավ բոլոր հետքերը և այնպես էլ հանելուկ մնաց, թե ո՞վ է այնպես մահացու հարվածել գազանին:
- Ախր պիտի որոշեինք, - շփոթված քրթմնջաց Աշոտը:
- Ի՞նչ որոշենք, պարզ չի՞ որ... - լայն ժպտալով պատասխանեց Հասոն և Աշոտի նիզակը մեկնեց իրեն: - Առ որոշիր, արյունը սրա՛ ծայրին էր:
- Հա՞... և Աշոտի սիրտը թնդաց ուրախությունից:
Իսկ Շուշիկը խնդագին նայում էր քուրդ պատանուն ու մտածում. «Սրտի՛ն նայիր... ասպետությա՛նը նայիր...»:
Այդ հայացքից շփոթված, Հասոն շարունակեց գլուխը կախ մաշկել գազանին:
- Իսկապե՞ս իմն էր արյունոտ, - նորից հարցրեց Աշոտը և թեթևացած սրտով շուռ եկավ դեպի անձավը: Ուրեմն ի՛ր զենքն էր գազանի կողը խրված: Եվ նա ուրախ էր ու հպարտ այդ մտքից:
Երբ Աշոտը նորից մտավ անձավ, որ այնտեղ թափթփված ոսկորները դուրս բերի, Շուշիկը հարցրեց Հասոյին.
- Ինչո՞ւ այդպես արիր...
Տղան քրտնեց գողության մեջ բռնվածի նման: Նա փորձեց, հավատացնել, որ այդտեղ կեղծիք չկա, բայց երբ համոզվեց, որ իր արարքը չի վրիպել Շուշիկի խուզարկու աչքից, ասաց լուրջ, հանդիսավոր.
- Ընկերոջ մեջքը գետնովը չեն տա...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳԵՐՈՐԴ. Թե ինչ անձավ էր դա և ինչեր հայտնագործեցին մեր պատանիները նրա մթին խորքերում

Դեռ Հասոն չէր վերջացրել իր գործը, երբ այրից ճչալով դուրս թռավ Գագիկը, գլխին մի զույգ եղջյուրներ բռնած.
- Բո՛ո՛ո՛, փախիր, հարու եմ տալու, - ճյուղավորված եղջյուրները առաջ մեկնած վրա քշեց նա Շուշիկին:
- Վա՛յ, ի՞նչ կենդանու է դա, - ետ-ետ քաշվելով հարցրեց Շուշիկը:
- Բնասերների պետը կարծում է, որ սա պետք է լիներ կովկասյան գիգանտ եղջերվի գլխին: Այդ եղջերվից հիմա չկա... Մի պոզերը տեսեք, ոնց որ կաղնու ճյուղեր լինեն: Սա ո՞նց է անց կացել էն նեղ կածանով...
Դուրս եկավ Աշոտը՝ Շուշիկի գրքերի պայուսակը լիքը մանր ոսկորներով, մի ձեռքին մի լայն թիակ, մյուսում՝ ոլորուն եղջյուրներով մի գլուխ: Ի՞նչ կենդանի էր դա, ոչ մուֆլոնի խոյ էր, ոչ քարայծ...
- Քուրքդ տրորելու ժամանա՞կ ես գտել: Դա գիշերն էլ կանես, արի ոսկորները շուտ դուրս թափենք, - ասաց Աշոտը:
- Հերիք է, ի՞նչ ենք անում այդքան ոսկորները, - բողոքեց աղջիկը:
- Ի՞նչ... մի կտոր էլ չեմ թողնելու: Հասկանո՞ւմ ես, որ կենդանիների գերեզմանոց ենք գտել: Կտեսնեք քանի գիտնական կզբաղվի այս ոսկորներով... Շո՛ւտ, Գագի՛կ, Շուշի՛կ, ներս գնացեք...
Դուրս էին կրում ամեն տեսակի ոսկորներ, կրում էին, հա կրում և կարծես վերջ չկար: Այդքան կենդանիներ ե՞րբ, ինչո՞ւ են մտել այդ այրը: Է՛լ խոտակերներ, է՛լ կրծողներ, է՛լ գիշատիչներ...
Կեսօրն անց էր, երբ մեր պատանիները հոգնած նստեցին այրի առաջ և սկսեցին խորհրդակցել:
- Մենք հենց այստեղ էլ կճաշենք, - հայտարարեց խմբի պետը: - Հասո՛, վազիր միս բեր: Ճաշից հետո, հենց այստեղ, մենք՝ պատանի բնասերներս, խելք-խելքի կտանք, կտեսնենք ինչ կենդանիներ են սրանք և ինչու են խցկվել այս խոռոչները...
Մինչ տղաները արջի լյարդը խորովելու պատրաստություն էին տեսնում, Հասոն հովազի խայտաբղետ մորթին գցել էր Շուշիկի ուսին և հեռու կանգնած՝ հիանում էր նրանով: Արևի տակ այնպես էր փողփողում ողորկ ու շքեղ մորթին, որ նայողը կզմայլվեր և երբեք չէր մտածի, որ այդքան գեղեցիկ կենդանին այդքան տմարդի է ու արյունարբու: Նրա մարմնի երկարությունը մեկ և կես մետր կլիներ, իսկ պոչը՝ մետրից ոչ պակաս:
- Սպասիր մի հովազ դառնամ, տեսնեմ Սարգսի սիրտը կդիմանա՞:
Եվ Գագիկը մտավ գազանի մորթու մեջ, աչքերը հարմարեցրեց նրա աչքերի բացվածքներին և նրա բեղերը ոլորելով մռնչաց, «ուլա՛խկ... ուա՛խկ...»:
Տղաները ծիծաղում էին, իսկ Սարգիսը ներողամտաբար ժպտում էր:
- Փառք երկնքին, վերջապես արևն ամպի տակից դուրս նայեց, - ասում էր Գագիկը՝ Սարգսի ժպիտն ակնարկելով:
- Դե՛հ, փռեցեք վրան ճաշենք: Մի աշխարհի բանը տես է, մի քանի օր առաջ սարսափը սիրտներս էր գցել, արջ էր պատառոտում, հիմա փոստահան մեկնվել է...

- Բայց սարսափելի էր, չէ՞, - մեջ մտավ Շուշիկը: - Աշո՛տ, իմ կարծիքով, դա մեծ ռիսկ էր: Դու սխալ արիր, բայց սխալդ լավ վերջ ունեցավ, գազանը կարող էր մեզ պատառոտել: Ես այնպե՛ս էի վախենո՛ւմ...
- Սխալ չէր: Ես տեսա, որ նա հալից ընկած է, կարող ենք սպանել: Թե չէ՝ ո՞վ է գժվել հովազի դեմ գնա: Բայց մի ուրիշ հաշիվ էլ կա: Եթե նա ուժերը կորցրած չլիներ, էլի ստիպված պիտի լինեինք ճակատ առ ճակատ կռվել ու վերջ տալ նրան, թե չէ, եթե շուռ գայինք-փախչեինք, մեր հետևից կհարձակվեր: Ուրեմն, երկու դեպքում էլ մեր փրկությունը հարձակման մեջ էր: Ես շուտ հասկացա այդ բանը և էլ ուրիշ բանի մասին չէի մտածում, միայն նրան վերջ տալու հնար էի փնտրում... Դե՛հ, արծվի ճուտե՞ր, ճաշե՛նք... Ինչ էլ որ ուտենք՝ մեզ հալալ է: Մեր մասին կգրեն պիոներական թերթերում, գուցեև գիրք էլ գրեն...
- Պա՛հ, այդ էր պակաս: Գիրքը պետք չի: Ինձ թռչնաբուծական ֆերմայում քո մոր մոտ գործ տային, օրական մի աքլոր խեղդեի... նախագահ Հարութի մեթոդով... Պա՛հ, պա՛հ, պա՛հ, էս ի՞նչ յուղալի են էս անիրավ հովազի պլոճիկները, չխորովե՞նք, Աշո՛տ...
Գագիկը շաղակրատում էր սրտի ուրախությունից, նա մարտական մկրտություն էր ստացել: Դե կատակ հո չի հովազի հետ կռվելը...
Կուշտ ճաշելուց հետո, պատանի բնասերները մեկ առ մեկ սկսեցին դիտել և ուսումնասիրել կենդանիների մնացորդները: Վերցնում էին մի ոսկոր, զննում, ամեն մեկը իր կարծիքն էր հայտնում և երբ գալիս էին մի ընդհանուր եզրակացության, մի կողմ էին դնում և անցնում հաջորդին: Չճանաչված ոսկորները առանձին կույտ էին անում:
Աշոտը զբաղվել էր կենդանաբանությամբ, գրքեր էր կարդացել, որսորդության պահին ուշադիր և հետաքրքիր նայել էր վայրի կենդանիների հետ կապված ամեն մանրուքի, դիտել էր նրանց ոսկորները և մտքում պահել, ականջները «չորս արած» լսել էր հին որսորդների զրույցները, երբ նրանք գիշերը հանդում կրակ էին անում և իրենց արկածալից կյանքից դեպքեր պատմում:
Ի՜նչ ոսկոր ասես, որ չկար այդտեղ, աղվեսի ճանկից սկսած մինչև գիգանտ եղջերվի մետրանոց ազդր: Որսորդ Արամի որդին, որ կարծես բնությունից բնասեր էր ծնվել, հմայված ու զմայլված նայում էր այդ տձև, կավոտ ոսկորների կույտին հրճվանքով ու ագահությամբ:
- Հիմա որ ակադեմիայի կենդանաբանական ինստիտուտը հարստացավ... Հարստացավ և՛ բնագիտական թանգարանը, և՛ մեր դպրոցի բնագիտական կաբինետը... - ասաց նա խորին բավականությամբ: - Դե՛հ, սկսենք տեսակավորել... Հիմի ես ուզում եմ մի քիչ պարծենալ ձեզ մոտ իմ որսագիտությամբ... - Ծիծաղո՞ւմ եք, դե էն պճեղը մի դեսը բեր: Մի՛ բերի, հենց այստեղից եմ որոշելու, դա վայրի խոյի պճեղ է, և ինքն էլ մինչև երեք փութ քաշ է ունեցել...
Այնուհետև Աշոտն սկսեց բացատրություն տալ ամեն ոսկորի մասին: Բայց ո՛վ կարող էր ասել, ստո՞ւյգ են նրա տված տեղեկությունները, թե՞ Շուշիկի մոտ իրեն կոտր չգցելու համար էր այդպես վստահ-վստահ խոսում:
Չենք երաշխավորում նրա կարծիքների ճշտությունը, բայց նույնությամբ կբերենք այստեղ.
- Այս չանչի կտորը խեցգետնի է, սա կաքավի կտուց է, սա էլ, կարծեմ, նրա ուղեղի տուփիկը: Սա էլ շնագայլի ծնոտի է նման, սա էլ...
- Կա՛ց... ա՛յ տղա, ճի՞շտ ես ասում, թե՞ հնարում ես քեզանից, - նրա խոսքը կտրեց Գագիկը:
Աշոտը վիրավորվեց:
- Դու ո՞նց կարող ես անասունի մի պճեղով նրա մեծությունը որոշել, - տարակուսած հարցնում էր Գագիկը:
- Ոչ միայն պճեղ, այլև կենդանաբանին մի ատամն էլ հերիք է, կամ պոչի մի կտոր ոսկորը, որ դրանով որոշի կենդանու մարմնի բոլոր մյուս ոսկորների չափերը: Երբ ոսկորները որոշեց, դժվար չի միսը որոշել և ճիշտ նկարել կենդանուն... Դա անում են գիտության օգնությամբ, մարմնի մասերի փոխհարաբերության տեսության հիման վրա... Այսինքն, եթե ա՛յս ոսկորը այսքան է, նրա շարունակություն կազմող ոսկորի չափը մեզ համար պարզ է, թե ինչքան պետք է լինի... Եվ այդպես շարունակ... Չէ՞ որ բոլոր ոսկորներն էլ կապ ունեն իրար հետ:
Բայց Գագիկն իր զենքերը վայր չէր դնում:
- Քեռի ճգնավորի նման գլխիս շարական մի կարդա, կաքավն ի՞նչ գործ ունի էդ հեռու, կորած մութ աշխարհում, -կեղծ բարկացավ նա և մի հաղթական հայացք գցեց Շուշիկի շեկ դեմքին:
- Բռնե՛ց, - շշնջաց Սարգիսը:
Աշոտը բարկացած պատասխանեց.
- Կաքավին բվեճն է բերել:
- Հա՛, էդ խելքակտուր բան է, - ծոծրակը քորեց Գագիկը:
Աշոտը շարունակեց.
- Էս ոսկորի կտորը, իմ կարծիքով, աղվեսի ներքին ծնոտի մի ճյուղն է: Սա աքիսի ողնաշարի ողը կլինի, սրանք կզաքիսի թաթի ոսկորներն են՝ իրենց ճանկերով: Սա փորսուղի գանգ է...

- Է, հետո՞, ասենք թե էդ բոլորը ճիշտ է, դրանից ի՞նչ դուրս եկավ, - հարցրեց Գագիկը՝ հայտնի չէ պարզասրտությամբ, թե՞ փորձում էր նսեմացնել Աշոտի քաջատեղյակ լինելը:
- Այս ոսկորներից ամեն մեկը մեզ մի բան է պատմում: Օրինակ: Այս եղջյուրները կրող կենդանիները՝ «գիգանտ եղջերուները»՝ ապրել են մեծ ու հաստաբուն ծառեր ունեցող անտառներում: Ամառն արածում էին այդ անտառների բացատներում, իսկ ձմեռը ուտում էին ծառերի ու թփերի բողբոջները: Ուրեմն, մեր այս մերկ հանդերում առաջ մեծ անտառներ են եղել: Նշանակում է, այս երկրում կան պայմաններ անտառների աճման համար: Ուրեմն, մենք համարձակ կերպով պետք է մեր լեռների լանջերը պատենք մատաղ տունկերով: Եվ երբ մեծանանք, կգանք այդ անտառներում արջեր ու եղջերուներ կորսանք...
Աշոտը ոգևորված, կերպարանափոխված՝ զննում էր ոսկորներն ու «սուտ ու շիտակ» շարում իրար հետևից:
- Սա նապաստակի ոտ է, իսկ սա հայկական մուֆլոնի վեգ: Այս ատամն իշի է (գուցեև վայրի իշի), իսկ սա ձիու սմբակ է: Սրանք էլ շան ոսկորներ են...
Գիշատիչ գազանները այրը օգտագործել են որպես որջ: Այստեղ էին բերում նրանք իրենց ավարը, հոշոտում, և ոսկորները, իհարկե, դուրս չէին թափում, այլ թողնում էին այրում[51]:
- Մալադե՛ց, հետո՞, - հավանություն տվեց Գագիկը, որ ժամանակավոր «հակառակորդի» իր դիրքը թողած, արդեն չէր կարողանում թաքցնել հիացմունքը ընկերոջ հանդեպ, ինչքա՜ն բան գիտի Աշոտը բնության մասին, որ իրենք չգիտեն...
- Այդ մնացորդների համար այրն էին մտնում մանր գազանները և, իհարկե, նրանց մի մասը ընկնում էր ուժեղների ճանկը և զոհ գնում, - շարունակեց Աշոտը:
- Խելքակտուր բաներ է ասում, հը՞, - դարձավ Գագիկն ընկերներին: - Ասա՛, շատ խելոք բաներ ասացիր, բայց ամենից կարևորը չասացիր. մեր սիրելի հովազը ինչի՞ համար էր եկել մտել այս անձավը...
Պատանի բնասերը մի պահ մտածեց, ապա կարծես մի կարևոր բան հիշեց և գյուտ արած մարդու նման նրա դեմքը պայծառացավ, լուսավորվեց:
- Այս անձավը գազանների համար գերեզմանատուն է եղել, - ժպտալով պատասխանեց նա: - Այստեղ գալիս էին նրանք մեռնելուց առաջ, մտնում էին գետնի տակի խոր և մութ խորշերը և մեռնում այնտեղ... Ես մեր գյուղի ծեր որսորդներից եմ լսել դա: Ասում են՝ մեռնող կենդանին միշտ ուզում է աչքից հեռու, մի մութը տեղ մեռնել...
- Ա՞յ հիմի հավատում եմ, որ որսորդ ես: Քանի որ քեզանից երկու շաբաթով մեծ եմ, արի ճակատդ մեծավարի պաչեմ... Հիմի որ մեր պետն ես...
Կատակով ասաց այս խոսքերը Գագիկը, բայց ասաց զգացված, խորին բավականությամբ:
Իրոք, ի՜նչ լավ է, որ քո կյանքի ամենանեղ օրին կողքիդ կանգնած է ուժեղ և խելացի ընկերդ...
- Սրանից հետո ինչքան որ ճառ ասես, ներելի է, քեզ հալալ, - ծիծաղելով ավելացրեց նա:
Սպա մի կտոր ածուխ վերցրեց և քարայրի ճակատին մեծ-մեծ տառերով գրեց.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԱՅԴԵՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱՍԵՐՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ՊԵՏ
ԱՇՈՏ ՍԱՐՈՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ,
1953 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ

Ետ էր կանգնել Գագիկը, ձեռքերը կողերին կանթած նայում էր իր գրածին ու հրճվում:
- Ա՜յ քեզ հուշատախտա՜կ... Բա որ ասում էի՝ վերջը լավ կլինի՞...
Աշոտը ձնե գնդակ պատրաստեց և նրանով ջնջեց «իրենց պետ Աշոտ Սարոյանի ղեկավարությամբ» բառերը:
«Առաջ իր անունը չէր ջնջի...», - ակամայից անցավ Շուշիկի մտքով: Նա ոչինչ չասաց, բայց ժպտաց Աշոտին: Իսկ սա գոհ իր արածից, կարծես ինքն իրեն արտասանեց.
- Այդպես ավելի լավ է... Դե՛հ, շարժվենք, արդեն ուշ է...
Արեգակը մայր էր մտել, նրա վառած հրդեհներն արդեն մարում էին լեռների հետև, երբ մեր պատանիները, իրենց բեռները վերցնելով՝ քայլեցին դեպի ճգնավորի այրը:
Այժմ նրանք բոլորովին խաղաղված էին հոգեպես: Այժմ արդեն պարզ էր, որ իրենք ոչ միայն չեն ոչնչանալու, այլև որոշ օգուտ են բերելու երկրին, գիտությանը...

---

[51] Ես այստեղ ինձնից ոչինչ չեմ հնարել: Ես թվարկել եմ միայն մի քանիսը այն 659 զանազան կենդանիների 1798 ոսկորներից, որ, իրոք, մեր գիտնականները գտել են պատմական Ուրծի լեռնաշղթայի հարավային լանջերից մեկի նկարագրածս անձավներում: Այդ ոսկորներն այժմ պահվում են Հայաստանի գիտությունների ակադեմիայի կենդանաբանական ինստիտուտի նկուղներում: Հեղինակ:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ. Թե ինչպես խաղաղությունը վերջնականապես մտավ Հովազաձոր

Այո՛, հիմա որ կարելի էր խաղաղ ապրել: Մեծ արկածներից և մեծ ապրումներից հետո մեր պատանիները նորից բոլորել էին օջախի շուրջը և խոսում էին իրենց առօրյա մանր հոգսերից:
Հասոյի ուշք ու միտքը ոչխարների կողմն էր:
Ո՞վ ավելի շուտ կհասկանար հովիվ պատանուն, եթե ոչ իր «քուրացու» Շուշիկը:
- Աշո՛տ, Թուխիկի գառներին ընտելացնելը դու կարևոր չե՞ս համարում, - հարցրեց նա:
- Ո՞նց կարևոր չեմ համարում: Եթե ձմեռը այստեղ մնալու լինենք, ոչխարներն են մեզ փրկելու, արջի միսը մեզ կբավականացնի՞... սպասիր հաշվեմ...
- Քո բանը չի, - մեջ մտավ Գագիկը ու սկսեց վրա տալ.- մարդս վեց հարյուր գրամ օրապահիկ-կանի օրական երեք կիլո, ամսական ինսուն կիլո, երկու ամսում՝ հարյուր ութսուն կիլո: Արջն այդքան չի լինի: Քսան կիլո էլ այծի միս կունենանք, - դա էլ մի շաբաթ: Ուրեմն, Թուխիկին մորթելու հերթը կհասնի փետրվարի քսանմեկին...
- Չէ՛, օրապահիկը շատ նշանակեցիր, - բողոքեց Հասոն: Նա հույս ուներ համոզելու ընկերներին, որ մսի պաշարը խնայողաբար գործածեն, որպեսզի հերթը երբեք Թուխիկին չհասնի:
- Ինչի՞, ախպեր ջան, էսկիմոսները օրական հինգ կիլո ճարպ կուտեն, մենք գոնե մի կիլո միս չե՞նք ուտի: Այո՛, կիլոյից ոչ պակաս, - պնդեց Գագիկը: - Այդ հաշվով մենք ուղիղ քառասուն օրվա պաշար ունենք: Գնա ինչ հնար ունես գործադրիր՝ բեր Թուխիկի գառներին:
Հասոն, իհարկե, կգնա, բայց ոչ այդ նպատակով, կգնա իր սիրած կենդանիների հետ օրն անցկացնելու: Թույլտվություն ստանալով, նա շարժվեց դեպի Ոչխարանոց, իսկ Աշոտը, կացինը վերցնելով, գնաց ծառ կտրելու: Դա նրան ավելի հարմար զբաղմունք էր, քան ցեխ տրորելը:
Իսկ «բրուտ Գագիկը» իր «բրիգադով» (այդպես էր արդեն նա անվանում Շուշիկին ու Սարգսին) սկսեց ցեխ հունցել:
- Գիտե՞ս ինչից է, որ ես էսպես տաղանդավոր բրուտ եմ, - հարցրեց Գագիկը Շուշիկին, - ախր մի ժամանակ հայրս աշխատել է կոլխոզի բրուտանոցում: Պարզ է, որ նրա տաղանդը ժառանգաբար անցած կլինի ինձ...
Շուշիկը ծիծաղում էր մեղմ ու անձայն:
Քիչ հետո Հասոն վերադարձավ Ոչխարանոցից և հոգնած ու հուսահատ մեկնվեց իր «թախտին»:
- Մոտ չեն գալիս... բոլորովին վայրենացել են... - ասաց նա տխուր:
Վերադարձավ և Աշոտը՝ մի ծանր փայտ ուսին:
Երբեք գերի պատանիները այդքան հանգիստ ու խաղաղ չէին եղել, որքան այդ երեկո: Բայց խաղաղությունը շուտով կարոտ ու թախիծ բերեց իր հետ:
Այն ժամանակ Աշոտը կրկնեց իր սովորական խնդիրքը.
- Դե, Հասո ջա՞ն, հերթը քոնն է, մի քրդական անուշ բան երգիր լսենք:
Եվ Հասոն, երեսը շուռ տալով դեպի այրի մութ անկյունը, սկսեց իր զրնգուն ձայնով երգել քուրդ բանաստեղծ Ջասըմե Ջալիլի հորինած երգը.

Բերիվանե՛, բերիվանե՛...
Ո՞ւմ է կանչում այդ նվագի ձայնը հստակ,
Ո՞ւր է տանում գյուղամիջի ճամփեն բարակ...
Ո՞վ է կանգնել չինար բոյով, չինարու մոտ,
Ո՞վ է այդպես ճամփեն շեղել սիրակարոտ...

Հասոն նվագում էր այսպես՝ Շուշիկի ներկայությունից շփոթված-շառագունած, իսկ Թուխիկը, խոտը բերանին կիսածամել, ականջ էր դնում այնպես տարված-հմայված, ինչպես մի ժամանակ Բոյնախն էր տարվում իր տիրոջ նվագով: Իսկ գառնուկը իր սովորական տեղն էր, տաքանում էր Շուշիկի գոգին:
Բայց ո՞ւր մնաց Շուշիկի մյուս սիրելին՝ ոզնին: Նա ամբողջ ցերեկը մրափում էր իր անկյունում և հենց մութն ընկնում էր, փշփշոտ գնդակի նման գլորվելով դես-դեն էր ընկնում, հոտոտում ինչ պատահեր, - ուտելիք էր փնտրում: Այդ երեկո, սակայն, նա դուրս չեկավ իր թաքստոցից և դրանով մտահոգություն պատճառեց աղջկաս: Նա կրակի մոտ բերեց իր ոզնուն, փեշի մեջ դեսդեն գցեց ու լացակումած ասաց.
- Աշո՛տ, հիվանդացել է իմ ոզնին, տե՛ս, չի քայլում, չի ուտում...
Իրոք, կենդանին թույլ ու անտարբեր ընկած էր նրա գոգում:
- Քնում է... ձմռան քուն է մտնում, մի՛ արթնացնի... Բեր տանենք իր բույնը:
Նրանք երկուսով ժայռի խոռոչը խոտ ու տերև լցրին, ոզնուն խցկեցին նրա մեջ և ետ եկան:
- Այլևս ոչ ոք չանհանգստացնի նրան... Արդեն քնեց... մինչև մարտ ամիսը:
- Այո՛, սրանից հետո հանգիստ կքնի, էլ ծուխը պրծա՛վ...

Այս ասելով Գագիկը ձեռքի կեռ փայտով կրակից մեկ-մեկ հանեց կավե շիկացած խողովակները և քարշ տվեց դեպի շեմքը:
Քիչ անց խողովակները հովացան և խումբը զբաղվեց իր վառարանը կատարելագործելով: Երբ իրար հագցված խողովակների ծայրը հասավ դռան գլխի անցքին, Հասոյի ուսերին կանգնած Գագիկը հագցրեց վերջին «արմունկը», նրա ծայրը դուրս հանեց ու վերևից գոչեց.
- Ձա՛ն, շնորհքով վառարան էլ ունեցանք...
Վառեցին կավե նոր վառարանը և մնացին բերանները բաց. այնպես էր կրակը գվգվում խողովակների մեջ, կարծես առաջնակարգ հնոց լիներ: Ի՜նչ ծուխ, ի՜նչ բան, անշնորհք տեսքով, բայց, կատաղի վառվող վառարան էր դա, որ կլանում ու ճարճատելով կրակ էր դարձնում, ինչպիսի թաց փայտ էլ որ մեջը գցեիր: Օջախի ծխի մնացորդները քաշվեցին-անհետացան, անձավի օդը դարձավ մաքուր և գոլ:
- Շատ ագահ վառարան դուրս եկավ, սրան փա՞յտ կդիմանա, - ասաց Աշոտը:
Իսկապես, այդ թափով եթե վառեին՝ Հովազաձորի աղքատ ու բզկտված Կաղնուտը տասը օր չէր դիմանա:
Բայց վառելիքի հարցը լուծվեց բոլորովին անսպասելի և անակնկալ կերպով:
- Շուշիկ ջան, ես ուզում եմ քիմիայի գծով ճակատամարտ տամ Աշոտին, տեսնեմ կդիմանա՞, - հարցրեց Գագիկը:
- Իսկապե՛ս, Գագի՛կ, դասերին կարոտել եմ, եկ մի քիչ զբաղվենք, ժամանակ անցնի:
- Այո՛, երբ կրակին անմահական ճաշ է եփում, պետք է մի բանով զբաղվել, թե չէ մարդ կարող է ուշաթափվել...
Նրանք սկսեցին ածուխով խնդիրներ լուծել հատակի սալին:
Վեճ բացվեց այն մասին, թե ինչպես զանազանել օրգանական նյութերը ոչ-օրգանականից: Այստեղ նրանք տաքացան և Աշոտը շպրտեց.
- Վիճում է այն բանի մասին, որից չի հասկանում:
Բայց Գագիկը կատակի տվեց.
- Աշո՛տ, զգույշ արտահայտվիր, թե չէ մեկ էլ տեսար վերընտրություն անցկացրի...
Շուշիկը սրտանց ծիծաղեց.
- Իսկապես, ի՜նչ ընտրություն է՛ր...
Աշոտը շիկնեց, բայց ստիպված ինքն էլ հաշտ ծիծաղեց:
- Վիճելու բան չկա, - մեջ մտավ Սարգիսը, - գցիր կրակը՝ վառվե՞ց, ուրեմն օրգանական ծագում ունի, չվառվե՞ց՝ անօրգանական աշխարհից է:
- Էս քարն էլ է հնոցում վառվում-կիր դառնում, ուրեմն սա կենդանի՞ է եղել, - ձեռքը այրի պատի ապառաժին խփելով առարկեց Գագիկը:
- Իհարկե... կրաքար է չէ՞, իսկ կրաքարն ինչի՞ց է առաջ եկել, պատյանավոր մանր խեցիներից...
- Սպասեցե՛ք, չշարունակեք վեճը, գլխումս հանճարեղ մտքեր են ծնվում, - մատը ճակատին դնելով գոչեց Գագիկը: - Ուրեմն ձեր այդ տեսության հիման վրա լուծվեց մեր վառելիքի հարցը: Իմ վառեկները օրգանակա՞ն ծագում ունեին, թե ոչ, էն որ գնացին լուսահոգի արջի փորը: Օրգանակա՞ն: Իսկ նրանց աղբը ի՞նչ նյութերից է առաջ եկել, նույնպես օրգանական, - մոծակներ, բզեզներ, թիթեռներ, հատիկներ...
Գագիկն այլևս չշարունակեց, նա վեր կացավ, փայտի վրայից մի լայն կեղև պոկեց, նրանով մեկ չղջիկի աղբ լցրեց վառարանը և ձեռքերը կողերին կանթած հպարտ-հպարտ նայեց ընկերներին:
- Մի տեսեք ո՞նց է բռռալով վառվում... Գյուտիս համար կպարգևատրե՞ք մի ման ճաշով...
Ա՛յ հիանալի վառելիք: Տասնյակ տարիների ընթացքում այրի թևավոր բնակիչները այնքան «օրգանական ծագում ունեցող» նյութ էին կուտակել, որ նրանով կարելի էր երկու շաբաթ անընդհատ տաքացնել այրը:
Է՛հ, լավ է, վառելիքի հարցն էլ լուծվեց, վառարանի հարցն էլ:
Դրսում առատ ձյուն էր տեղում: Թեժ վառարանի առաջ նստած, Հովազաձորի գերիները խաղաղ երազում էին:

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՑՈԹԵՐՈՐԴ. Թե ինչպես Աշոտը կկառավարեր գյուղը, եթե...

Սարգիսը իր խոշոր գլուխը օջախի վրա հակած մտածում էր: Որքան նա մերվում էր կոլեկտիվի հետ, այնքան դառնում էր լռակյաց և մտախոհ:
Նա գլուխը վեր բարձրացրեց և անսպասելի հարց տվեց Աշոտին.
- Որ ազատվենք, գյուղ գնանք, ի՞նչ դիրք բռնեմ իմ հոր հանդեպ...
Երևում էր, որ այդ հարցն է տանջում տղային:

- Ի՞նչ: Ինչպես որ կթելադրի քո պիոներական խիղճը...
- Իմ խի՞ղճը: Իմ խիղճն ասում է, որ... որ մեղք են մեր գյուղացիք...
- Կեցցե՛ս, լավ ասացիր, - ուրախացած բացականչեց Աշոտը: - Ուրե՞մն...
- Ուրեմն... պարզ է... Բայց դժվար է, ախր նա իմ հայրն է...
Իրոք, ծանրակշիռ հարց է առաջ քաշել Սարգիսը: Ընկերները պիտի դիրքորոշեին նրան:
Մինչ նրանցից յուրաքանչյուրն իր մտքում ծանր ու թեթև էր անում իր կարծիքն այդ հարցի մասին, Աշոտը շեշտակի հարցրեց.
- Պիոների համար ո՞րն է կարևոր, իր անձնակա՞ն շահը, թե՞ ամբողջ գյուղի շահը...
- Ես համաձայն եմ այդ վճռին, - տեղից գոչեց Շուշիկը:
- Իսկ դուք ի՞նչ կասեք, - հարցրեց Սարգիսը՝ դիմելով Գագիկին և Հասոյին: Կարծես փրկություն էր որոնում:
- Դե որ ձեռքը մաքուր չի... թող գնա ուրիշ գործ անի... - անհամարձակ կմկմաց Հասոն: Ապա ձայնը բարձրացրեց. - Իմ հերը, որ էդպես բաներ անի, կասեմ՝ չոմբախը դեսը տուր, հեռացի՛ր ֆերմայից...
Այդ պատասխանները չպղտորեցին, չվիրավորեցին, ոչ էլ շփոթեցրին Սարգսին: Դրանք վերջ տվին նրա ներքին պայքարին, վերջ տվին տատանումներին: Օգնեցին նրան կողմնորոշվելու:
Եվ նա հստակ ու մաքրված հայացքով նայեց Աշոտի աչքերի մեջ և ամուր ասաց.
- Լա՛վ...
Ուրիշ ոչինչ չասաց Սարգիսը, բայց նրա հայացքը, նրա դեմքի վճռական արտահայտությունը ասում էր ամեն ինչ: Բոլոր նյարդերը լարած, նա առաջ էր թեքվել այնպիսի դիրքով, կարծես հայրը անձավի շեմքին էր և նա պատրաստվում էր վեր կենալ և գոչել.
- Բավակա՛ն է... բավական է քո պատճառով թուք ու մուր ուտենք...
Ընկերների վճիռը և իր սեփական վճիռը նրան հանգստացրին: Քիչ հետո խաղաղ նայում էր Աշոտին:
- Ինչո՞ւ գյուղում չէիք ասում...
Խելացի խոսք էր և Աշոտը մտածում էր լուրջ պատասխանի մասին, երբ Գագիկը կիսակատակ վրա բերեց.
- Ինչու իր ժամանակին չենք ասե՞լ: Մեզանից ոչ մեկն էլ տանը ձի չունի, ո՞նց ասեինք...
- Ձի՞, - զարմացավ Սարգիսը, - ձին ի՞նչ գործ ունի իմ տված հարցի հետ:
- Ձիու սանձը հենց քո դրած հարցից է կապված: Լսե՞լ ես առածը՝ ճիշտ խոսողի ձին թամքած-պատրաստ պիտի լինի, որ ասելուն պես նստի ու փախչի...
Ծիծաղեցին, ծիծաղեց և Սարգիսը. նա այլևս չէր զայրանում Գագիկի կծու կատակների համար, - քանի՛-քանի անգամ էր փորձել այդ տղայի անկեղծությունը: Իսկ Գագիկը դեմքի լուրջ արտահայտությամբ շարունակում էր.
- Հա՛, ճիշտ խոսողը պիտի անմիջապես փախչի Հովազաձոր, որ գլուխն ազատի: Դե մենք արդեն Հովազաձորում ենք, այստեղ է՞լ լռենք... Հո ոչ ոք չի հասնի այստեղ, որ մեզ պատժի համարձակ խոսքի համար...
- Դա, իհարկե, լուրջ պատասխան չի, - առարկեց Աշոտը. - ճիշտն այն է, որ եթե գյուղում ասեինք, հակառակ ազդեցություն կունենար քեզ վրա... Այստեղ՝ ուրիշ... Այստեղի պայմաններն այլ են... Այստեղ կոլեկտիվը քո աչքերը բացեց... և որոշ պայմաններ օգնեց դրան... Ինքդ գիտես... Հետո՛, կարծում ես գյուղում չե՞նք խոսում անարդար բաների մասին: Մեզ լռեցնում են, թե՝ դուք դեռ երեխա եք, խելքներդ չի հասնում: Իսկ մեր խելքը հասնում է, մենք ամեն բան տեսնում ենք... - ձայնը բարձրացրեց Աշոտը: Նրա ձախ այտը դողաց և խոշոր աչքերում երևաց ծանոթ փայլը: - Թող չկարծեն, թե մենք փոքր ենք, բան չենք հասկանում: Մենք ամեն բան հասկանում ենք...
Նա բռունցքները սեղմեց և ատամները կրճտացնելով շարունակեց.
- Ա՛խ, շո՛ւտ մեծանայի՛նք... Մենք ուրի՛շ կերպ կկառավարեինք մեր գյուղը...
«Իսկապես, ի՞նչ արդար նախագահ կլինի՛...», - անցավ Շուշիկի մտքով, որ չէր կարողանում հայացքը կտրել տղայի զայրույթով վառվող աչքերից և դեմքի թեթև դողացող խալերից: Հավանաբար նույն հարցն առաջացել էր նաև մյուս պատանիների մեջ, որովհետև Հասոն պարզամտորեն հարցրեց.
- Աշո՛ւտ, որ մեծանաս մեր նախագահը դո՞ւ ես լինելու...
Ընկերները ծիծաղեցին, իսկ Աշոտը, առանց կեղծ համեստության, խոստովանեց.
- Այո՛, ես եմ լինելու: Գյուղատնտեսական կրթություն եմ ստանալու, ետ գամ ու Հարութներին ասեմ՝ ղեկը դե՛սը տվեք, այսպես չեն կառավարի ժողովրդին... Կարծում եք փառքի՞ եմ ձգտում: Ո՛չ: Ես ուզում եմ օգնել մեր գյուղացիներին, որ նրանք լավ ապրեն: Որ անարդար բաներ չտեսնեն ու արյունները չպղտորվի...
- Հետաքրքիր է, ինչպե՞ս ես կառավարելու գյուղը, պատմի՛ր, - իր խումար աչքերը չարաճճիորեն փայլեցնելով՝ հեգնախառն հարցրեց Շուշիկը:

Աշոտը բերանը բացեց, որ պատասխանի, բայց նայում էր Գագիկին ու տատանվում:
- Կարծում ես, նկատողությո՞ւն եմ անելու: Մի՛ վախենա, էն օրը որ կորար Հովազի անձավում, սրտիս կսկծից որոշեցի ազաբություն տալ քեզ: Ճառի՛ր, մատաղ, ճառիր սրտիդ ուզածի չափ, կարոտել եմ դասախոսություններիդ:
- Ձեռ չե՞ս առնում, Գագի՛կ:
- Չէ՛, նախագահ Հարութի ազիզ արևը վկա: Ասա՛, հետաքրքիր է ինչպե՞ս կկառավարեիր գյուղը:
- Ինչպե՞ս: Ասե՛մ: Վերցնենք անասնապահությունը: Հարութը շրջկոմի աչքին թոզ է փչում միայն թվերով: Մանր-մունր անասուններ է գնում, միացնում ֆերմային, հետո հաշիվ տալիս շրջանին, թե գլխաքանակի պլանը կատարված է... Հետո՞, դա ֆերմա՞ է: Ես այդ բանին վերջ կտամ: Մի հինգ հարյուր հեկտար խոտ, եգիպտացորեն ու ճակնդեղ կցանեմ, այնքան կուտեցնեմ կովերին, որ գյուղն էլ, շրջանն էլ հեղեղեն կաթով:
Տեսա՞ք, ինչ արավ անցյալ տարի, մի գրամ կեր չբաժանեց աշխօրերի դիմաց ու արգելեց, որ հանդից մարդիկ իրենց անասունների համար խոտ քաղեն: Խոտը չորացավ սարերում, նա չթողեց քաղեն... Բա դա խի՞ղճ է: Ինչո՞ւ Շուշիկի մայրն իր կովը ծախեց, ինչո՞ւ մենք ծախեցինք: Որովհետև պահելու հնար չկար՝ ո՛չ կեր կար, ո՛չ ուրիշ պայմաններ: Հետո՞, բա այդպես ժողովո՞ւրդ կապրեցնեն: Ասա, տո անխելք, քեզնից ի՞նչ է գնում, թող ապրեն, էլի՛...
- Սպասի՛ր, Աշո՛տ, - նրա խոսքը կտրեց Սարգիսը, - դա թող: Դուք այստեղ շատ եք խոսել մեր կոլխոզի պահեստի ու Երևանում ունեցած խանութի մասին: Նույնիսկ Գագիկը մի անգամ կատակով ասաց, որ պահեստն ու խանութը մարդկանց փչացնում են: Դա ճիշտ է, ես այդ գործին ծանոթ եմ... Դու այն ասա, ո՞նց կանես, որ, օրինակ, Երևանի մեր խանութը չփչացնի գործակատարին: Ախր մթերք է, փող է, ինչքան էլ լավ մարդ դնես՝ քիչ-քիչ կսովորի ուտելը...
- Ա՜խ այդ սրիկա խանութները, որ փչացնում են մեր ազնիվ մարդկանց, - գլուխը օրորեց Գագիկը:
- Դու լուրջ հարց ես դնում, - պատասխանեց Աշոտը: - Իսկ ես գիտե՞ս ինչ կանեի: վերցնենք գինու վաճառքը: Յուրաքանչյուր տակառի ճակատին կգրեմ, որ այսքան աստիճանի գինի է սա: Կբարձեմ մեքենային, կտանեմ Երևանի մեր խանութը, գնորդների կոնֆերանս կհրավիրեմ: Հավաքվեցին թե չէ, կասեմ՝ ընկերնե՛ր, մեր կոլխոզը որոշել է ձեզ՝ մայրաքաղաքի բնակիչներիդ համար ուղարկել իր գինու ամենալավը: Ընտրեցեք լիազորներ, որ ամեն անգամ ստուգեն մեր գործակատարին: Կընտրեն: Լիազորներին կհրավիրեմ տակառների մոտ, մի-մի բաժակ անարատ գինի կտամ, կխմեն ու կմնա բերանները բաց: «Այս գինին որտեղի՞ց է», - կհարցնեն նրանք: «Մեր կոլխոզից»: «Բա մինչև հիմա որտե՞ղ էր էս գինին»: Կասեմ՝ միշտ էլ սրանից ենք ուղարկել, բայց պահեստապետն ու գործակատարը «կնքում էին», հետո վաճառում ձեզ: Հիմա, կասեմ, հսկեցեք, որ ձեզ միշտ այս անարատ գինուց տան: Թնդությունը տասնվեց աստիճան է, ա՞յ, տակառի վրա էլ է հետևեցեք, որ այդ աստիճանը չիջնի: Եթե իջնի, իսկույն ակտ կազմեցեք և ուղարկեցեք ինձ, ես գիտեմ, թե ինչ կանեմ...
Այնքա՜ն բաներ կարելի է անե՛լ: Իսկ ինչո՞ւ մեր նախագահը չի անում այդ բաները: Չի անում, որովհետև ձեռնտու չի իրեն: Նա աչք է փակում գործակատարի զեղծումների առաջ, որովհետև ինքն էլ բաժին ունի այդ հարամ եկամուտից: Խանութում ասածս կարգը սահմանեց թե չէ, իր բաժին «փափախը» կվերանա, պարզ չի՞: Նկատե՞լ եք, որ մեր գյուղի ոչ մի բանում կարգ ու կանոն չկա՝ ո՛չ կալերում, ո՛չ ֆերմայում, ո՛չ առևտրում: Ինչո՞ւ չկա: Որ կարգ լինի, ախր գողանալը կդժվարանա...
- Ինչ կուզես ասա, Աշո՛տ, պահեստը շատ գայթակղեցնող բան է... Ես դա իմ փորձով գիտեմ, - ասաց ու հանցանքի մեջ բռնվածի նման շիկնեց Սարգիսը:
- Դե քանի որ այս երեկո պատմություն անելու հերթն իմն է, թողեք մի պատմություն անեմ մի պահեստի մասին: Այդ պատմությունից դու կտեսնես, որ պահեստը կարող է գայթակղեցնել միայն թուլակամ և, ներիր, ագահ մարդկանց: Այս պատմությունը մի օր, շատ վառված սրտով, իմ հայրը պատմեց: Շրջկոմի քարտուղարներից մեկը մեզ հյուր էր եկել, հայրս...
Այստեղ Աշոտը կանգ առավ, տատանվեց, նայեց Սարգսին և ապա ձեռքը թափ տալով շարունակեց.
- Գուցեև խոսքս տեղ կհասնի, բայց պիտի ասեմ: Ճիշտն ասած, Սարգի՛ս, հայրս քո հորից գանգատվեց և արավ այս պատմությունը:
Ասաց՝ սովետական կարգերը նոր էին հաստատվել Երևանում, ինձ էլ՝ քաղաքացիական կռիվը վերջանալուց հետո՝ հենց իմ զենքով, շինելը հագիս, պահակ էին նշանակել Երևանի կենտրոնական պահեստի վրա:
Սով էր, տիֆ, հիվանդություններ: Ե՛վ ղեկավարները, և՛ շարքայիններն աշխատում էին օրական կես ֆունտ «սելյոդկայով» և մեկ քառորդ ֆունտ հացով: Ասում է, էն ժամանակ աշխատավարձ չկար: Բայց կար բարձր ոգևորություն: Ընկերո՛ջ համար, ամենքի՛ համար, երկրի՛ համար, - այսպես էին մտածում մարդիկ:

Այդ օրերին մի գնացք փնչալով եկավ և կանգ առավ Երևանի կայարանում: Վագոնները մինչև առաստաղ լիքն էին այլուրով և... շոկոլադով:
Վագոնները դատարկեցին և շոկոլադը սայլերով տեղափոխեցին կենտրոնական պահեստ:
Երբ պահեստի բանվորները մթերքը տեղափոխեցին և գնացին իրենց տները, համոզված էին, որ իրենք էլ բաժին կստանան շոկոլադից: Այդ ուրախ լուրը նրանք հասցրին իրենց ընտանիքներին: Եվ երբ մյուս օրը նրանք գնում էին պահեստ աշխատելու, իրենց հետևից լսում էին իրենց երեխաների ձայնը.
- Հայրի՛կ, շոկոլադ կբերե՞ս, չէ՞...
Մարդիկ այդ օրը ցերեկով աշխատում էին պահեստում, առատության մեջ և շոկոլադի հոտը նրանց խելքամաղ էր անում: Երևի նրանցից մի քանիսը չդիմանալով այդ հոտին, մտածում էին տուն գնալիս մի-մի կտոր տանեն իրենց երեխաներին, ի՞նչ պիտի երևա, եթե ահագին տակառից մի թեյի գդալ ջուր վերցնես:
Բայց, հայրս ասում է, այդ անգրագետ մարդկանց մեջ հեղափոխությունն առաջ էր բերել ինչ-որ նոր, ավելի բարձր բան: Եվ այդ նորը, բարձրը սաստում էր նրանց թե՝
- Ո՞նց կարելի է, երբ երկրում սով է տիրում... Ի՞նչ խղճով պիտի երեխաներիդ շոկոլադ տանես, երբ ուրիշ երեխաներ սովամահ են լինում...
Ու այդ օրը կռիվ էր գնում պահեստի աշխատողների ներսում ու այդ կռիվն առաջ էր եկել մինչև առաստաղ հասնող շոկոլադի կույտի տեսքից:
Այդ կռվին վերջ տվեց ինքը՝ Հայաստանի պարենավորման ժողովրդական կոմիսար Բեկզադյանը:
Նա եկավ կառքով, իջավ պահեստի դռանը, ներս մտավ և ուրախ ողջունեց:
Շրջեց պահեստում, գոհ մնաց: Բայց քանի որ անցած-գնացած բան է, ասենք, որ անգամ ժողկոմը անտարբեր չմնաց շոկոլադի տեսքից, քանի որ նա նույնպես շարքային բանվորի չափ սննդի բաժին էր ստանում: Ճիշտ է, ղեկավար աշխատողներին սկսել էին «լրացուցիչ բաժին» տալ, բայց պահեստի աշխատողները Գիտեին, որ իրենց ժողկոմը տնտեսվարին խնդրել է իր այդ լրացուցիչ բաժինը բաշխել Կոմիսարիատի ավելի կարիքավոր շարքային աշխատողներին... Հայրս պատմում է, որ այն ժամանակ այդպիսի սրտի տեր մարդիկ շատ կային...
Եվ ահա պահեստումն է էդպիսի սրտի տեր մի ժողկոմ, հիմիկվա հաշվով՝ մինիստր:
- Ընկեր ժողկոմ, գոնե մի կտոր կերեք, - խնդրում է պահեստապետը:
Ասում է՝ ժողկոմը հրաժարվեց և կարգադրեց աշխատակիցների ժողով հրավիրել:
Երբ բոլորը հավաքվեցին, նա բարձրացավ մի արկղի և ասաց.
- Ընկերնե՛ր, մեր երկիրը որբերի երկիր է: Ես եկել եմ անձամբ ձեզ խնդրելու, որ ձեռք չտաք պահեստի շոկոլադին: Ամերիկայի հայերը մեր որբերի համար են ուղարկել...
Ասաց ու կառք նստեց-գնաց:
Ժողովրդական կոմիսարի այդ խոսքը անմիջապես վերջ տվեց մարդկանց ներսում սկսված պայքարին: Եվ պահեստի քառասունյոթ աշխատակիցներից ոչ մեկը չտեսավ շոկոլադի համը, և ոչ մեկը մի կտոր չտարավ իր երեխային:
- Մարդ էլ որբերի բաժինը կուտի՞, - ասում էին պահեստի աշխատողները:
Իմացա՞ր, թե առաջ ինչ հոգու տեր մարդիկ են աշխատել մեր պահեստներում: Իսկ դու ասում ես՝ պահեստը գայթակղեցնում է մարդկանց: Նայած ինչպիսի՛ մարդկանց: Հիմա մեր գյուղում ազնիվ մարդ քի՞չ կա: Շա՛տ կա: Բայց ազնիվին այդ տեսակ գործերից հեռու են պահում... Ձեռնտու չի...
Ա՛խ, ուրիշ բան չեմ ուզում, շուտ մեծանայի՛նք...
Մենք հարութների պես չէինք կառավարի գյուղը:
Մենք ուրի՛շ կերպ կկառավարեինք...

## ԳԼՈՒԽ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ. Թե ինչ էր գրում անվանի որսորդ Միրուք Ասատուրը Այգեձորի իր բարեկամներին

Պարույրին հանգիստ չէին տալիս այն կրակները, որ նա տեսավ գիշերը Հովազաձորի դիմացով անցնելիս: Այդ տեսիլքից նա չէր կարողանում ազատվել, կրակները շողում էին նրա մտքի մեջ ու անհետանում՝ խավար երկնքում երևացող ասուպների նման: Նրա բնազդը թելադրում էր, թե ինչ-որ բան նշանակում է իր տեսածը, բայց միտքը պղտոր էր, հանելուկը լուծել չէր կարողանում:
Մի գիշեր էլ, երբ անկողնում անքուն շուռումուռ էր գալիս ու հիշում մեկ շարժվող լույսերը, մեկ լեռներից եկող կատաղի հեղեղը, ինքն իրեն մտմտաց. «Ե՛րբ կորան երեխեքը... Նոյեմբերի յոթին... Իսկ հեղեղը ե՞րբ երևաց... Նոյեմբերի քսանհինգին... Բա երեխեքը ո՞նց կարող էին ընկնել էն հեղեղի մեջ, որ պիտի գար տասնութ օր հետո...»: Այս մտքից Պարույրի սիրտը թրթռաց, մի՞թե իսկապես իր որդին...
- Կնի՛կ, վեր կաց, - գոչեց նա լույսը վառելով:

- Ցնդեցի՞ր, մարդ, - նեղացավ կինը:
- Ցնդեցի, բա՞, հիմի որ ասեմ՝ դու էլ կցնդես: Մեր երեխեն չի խեղդվել...
Եվ նա կնոջը պատմեց այն, ի՜նչ մտածել-կշռադատել էր այդ գիշեր:
Հանկարծ հույսը վերածնվեց սգավոր ծնողների սրտում և նրանք մինչև լույս մնացին անքուն, տարված իրենց մտքերով ու ենթադրություններով:
Առավոտյան շուտ իր այդ գյուտի մասին Պարույրը հայտնեց բարեկամներին ու հարևաններին, իսկ քիչ անց կորած պատանիների ծնողները հավաքվեցին խորհրդակցության:
Չէր սիրում Արամը պահեստապետ Պարույրին, լուրջ մարդ չէր համարում նրան, ուստի և նրա խոսքը լսեց հեգնախառն չարությամբ, - շատ էր հակառակված նրա հետ, շա՛տ: Եվ երևի այդ հին հակառակությունն էր, որ դրդեց նրան լսածի մասին խոհեմությամբ մտածելու փոխարեն շպրտել.
- Բա՛ն ասացիր... Գուցե հենց նոյեմբերի յոթին էլ է հեղեղ եկել, ի՜նչ գիտես...
Ասաց ու գնաց, նեղվում էր Պարույրի ներկայությունից, իրենց բների մեջ անհանգիստ շարժվող նրա աչքերից:
Շատ հարցուփորձ արին, ոչ ոք չկարողացավ պնդել, թե նոյեմբերի յոթին սարից հեղեղ չի եկել: Դե ի՞նչ իմանային, երբ հեղեղատը գյուղից հեռու էր, ամայի դաշտում, իսկ հեղեղը գալիս՛ անհետանում էր ընդամենը մի քանի րոպեում: Ապա Արարատյան դաշտի տոթը այնպես արագ էր չորացնում թաց հունը, որ քիչ հետո անցորդը չէր էլ կարող ենթադրել, որ քիչ առաջ մի ամբողջ գետ է անցել այդ վայրով:
Նորից պղտորվել էր որսորդ Արամի հոգին, վերքը նորից էր բացվել: Տարակուսանքների մեջ էր նա ու լսածի մասին դեռ կարգին չէր մտածել ու իր անելիքը դեռ չէր որոշել, երբ մի նամակ ստացավ Միրուք Ասատուրից:
Հուզմունքից դողացող ձեռքերով բացեց ծրարը (դե, Ասատուր պապը բացի իր կորուստից ուրիշ ինչի՞ մասին պիտի գրեր) և կարդաց հետևյալ տողերը.
«Բարևներս Սևանա աշխարհի Լճավան գյուղից իմ բարեկամ Արամին, կորած երեխաների հարազատներին և Այգեձոր գյուղի մեծին ու փոքրին... Նմանապես իմ հարգանքը ձեր օջախին, և թող առատ լինի ձեր հացը, որ ես կտրել եմ:
Իմ բարեկամ Արա՛մ, երկինքը վկա, քուն ու դադար չունեմ էն օրից, երբ ձեզ թաց աչքերով թողեցի ու վերադարձա մեր գյուղը: Էդ օրից շատ գիշերներ լուսացրի ես ու շատ մտածեցի կորած երեխեքի մասին: Վերջը, երբ մեր Գրիգորի մերը Գագիկի հորից՝ Արշակից մանրամասն նամակ ստացավ, թե ոնց են երեխեքը ընկել հեղեղի բերանը, սիրտներս մղկտաց ու մտածեցի, թե ի՜նչ իմանաս աշխարհի բանը, գուցե նրանց ճակատին էլ է՞դ էր գրած...
Բայց, Արամ ջան, երեկվանից մի միտք գլուխս է մտել ու ինձ հանգիստ չի տալիս, գիշերս սառը գլխով մանրամասն քննել եմ երեխանց խեղդվելու հանգամանքը ու որոշել եմ, որ նրանք չէին կարող խեղդվել:
Ասա ո՞նց: Առաջինը, որ հինգ երեխեն էլ միասին չէին կարող հավասար կերպով խոր քուն մտնել, էնքան խոր, որ ոչ մեկը չիմանար հեղեղի մոտենալը: Էդ բանին ես չեմ հավատում: Իմացե՛ք, որ մարդ հանդում միշտ օյաղ  է քնում: Էդպես է մարդը, առանց հասկանալու թաքուն ահ ունի գազանից, բնությունից, պատահարից, - հո իրեն տա՞նը չի, որ հանգիստ լինի: Հեղեղը գալիս կամ կարթնանար մի կողմ կփախչեր, կամ ընկերներին հարայ կտար, իմաց կտար... Էդ մե՛կ:
Երկրորդը, արագ գնացող ջուրը խեղդվածին իր մեջ չի պահում, դուրս է գցում:
Երրորդը, էդ ո՞նց հեղեղը բոլորին էլ տարավ, որ ոչ մեկը մի թփի, մի քարի դեմ չառավ-չմնաց:
Չորրորդը, հեղեղը չէր կարող էն քուրդ երեխի հագից աբան հանել... Հասկացա՞ք:
Եվ ամենից կարևորը՝ շունը չէր խեղդվի: Իմացե՛ք, որ երբ տերը հանդում քնում է, նրա կողքին պառկած շունը չի՛ քնի, ինչ էլ որ լինի: Իմացե՛ք, որ շունը քնած կձևանա, բայց աչքերը խուփ նա տեսնում է, ականջները փակ՝ լսում: Եթե քնի էլ՝ շունը հեռվից զգամ է վտանգի մոտենալը, քանի որ նրա համար տիրոջ կյանքին ծառայելուց թանկ բան չկա աշխարհում:
Ուրեմն, հեղեղը մոտենալիս շունը պետք է վեր թռչեր, հաչեր, իմաց տար ու ինքն էլ մի կողմ փախչեր: Հեղեղի մեջ էլ ընկներ՝ սա լողալով կազատվեր, որովհետև սարից եկող ջրի թափը կոտրվում է դաշտում:
Հասկացա՞ր, Արա՛մ ջան: Եվ քանի որ դու էլ ինձ նման բնության գործերին ծանոթ մարդ ես, ուրեմն ես հանգիստ եմ, որ իմ խոսքը տեղ հասավ:
Եվ եթե ինձ լսեք, երեխաներին կփնտրեք հեղեղի հունն ի վեր... Վերև գնացեք, տեսեք որևէ նշան թողե՞լ է հեղեղը վերևում: Եթե երեխաներից մի նշան գտնեք վերևում, ուրեմն պետք է գնաք Հովազաձոր: Քանի որ ջուրը էնտեղի՛ց է գալիս, նշանն էլ էնտեղի՛ց բերած կլինի:
Ահա՛, Արա՛մ ջան, իմ բարի խորհուրդը ձեզ: Եվ թող երկնքի աչքը քաղցր լինի ձեզ վրա, և թող ամեն մարդ իր կորուստը գտնի... Մնամ ձեր բարին կամեցող՝

որսորդ Ասատուր

1953 թվականի դեկտեմբերի 17-ին:

Սևանի Լճավան գյուղ:
Պապի թելադրանքով գրեց իր թոռ Կամոն»:

Միրուք Ասատուրի նամակը իմաստ տվեց Պարույրի տարածած լուրերին:
Այդ նամակը կարծես եռացրած ջուր լցրեց որսորդ Արամի երակները: Թմրած ուղեղը արթնացավ, սկսեց գործել դինամոյի նման, թուլացած սիրտը թունդ առավ, հոգին տեղահան եղավ:
Մինչ այդ նա իր վիշտը մոխիրների տակ անթեղած՝ լուռումունջ սկսել էր հաշտվել իր որդու կորուստի հետ:
Միրուք Ասատուրի նամակը եկավ քանդեց այդ անթեղը, նրա խորքից դուրս հանեց շեկ կրակը, որ արագ բորբոքվեց ու հրդեհեց նրա ներսը:
Իր նոր հույսերից այլայլված, դուրս եկավ տնից, շտապեց ընկերոջ մոտ:
- Արշա՛կ, երեխանցը մենք գլխավոր ճամփից ներքև ենք փնտրել... Հո վերևը ման եկող չի՞ եղել, - հարցրեց նա:
- Չէ՛, վերևն ի՞նչ ման գային, քանի որ արդեն պարզ էր, - ընկճված պատասխանեց ընկերը:
- Պարզը պարզ է, բայց վատ չի լինի, որ գնանք վերևն էլ ման գանք: Քանի որ ոչ մեկի մարմինը չի գտնվել, մենք կարող ենք հույս ունենալ...
- Է՛հ, - ձեռքը թափ տվեց Արշակը: - Որ կենդանի լինեին, հիմի մի տեղից ձենները կգար... Իսկի չլիներ՝ նամակ կգրեին: Չէ՛, զուր է, շորները հո գտել ենք հեղեղի մեջ...
- Շո՛րը... Հեղեղը ո՞նց մարդու շորը կհանի հագից, - կրկնեց նա Միրուք Ասատուրի խոսքը: - Գնա՛նք, քեզ ասում եմ, դու ի՛նձ լսիր...
Նրանք հեծան ձիերը և քշեցին դեպի հեղեղատը:
Տեղ հասան, ձիերը կապեցին մի անապատային թփի և ցամաք հունը մտնելով, սկսեցին զննել քարերը, ջրի ծալած թփերը, տիղմը:
Այս անգամ հեղեղատով նրանք դեպի վեր էին գնում, դեպի լեռան ստորոտը, ուր հեռվից շեկին էին տալիս Հովազաձորի ժայռերը: Ճանապարհին այստեղ այնտեղ դեմ առած փայտերի էին հանդիպում, որ իր ժամանակին ինչ-որ տեղից բերել էր ջուրը, վերցնում զննում էին ու դեն նետում:
- Մա ի՞նչ բան է, Արա՛մ, էս հեղեղը հո անտառի միջով չի՞ գալիս, ի՞նչ փայտեր են սրանք... Ախր առաջ հեղեղից հետո մենք էստեղ փայտ չենք տեսել...
Ու կասկածները պատում էին Արամի հոգին, ու գնում էր նա դեպի վեր, մեռյալ հեղեղատում կյանքի նշաններ փնտրելով:
Ահա վերջապես գտավ իր փնտրածը՝ ալեկոծվեց, կերպարանափոխվեց: Դա եղևնու մի ճյուղ էր, որ ջուրը թողել էր իր ափին.
- Հովազաձորում են եղել մեր երեխեքը, - գոչեց Արամը՝ ճյուղը թափահարելով:
- Ինչի՞ց գիտես:
- Դանակով է կտրած: Սա Հասոյի դանակի տեղը կլինի, մեր երեխեքը դանակ չունեին:
- Է՛հ, - ձեռքը հուսահատ թափ տվեց Արշակը, - ի՛նչ ես կորցրե՛լ, ինչի ես ման գալիս...
Բայց Արամը, որ կոփված էր որսորդության հետ կապված արկածներում, դժվարությունների մեջ, այդպես շուտ հուսահատվող մարդ չէր: Նա շարունակում էր փնտրել, հոգու խորքում թաքուն մի հույս փայփայելով: Նա հավատում էր պատահականությանը, որովհետև որսորդության մեջ պատահականությունները շատ մեծ դեր ունեն: Այսպես, հոգնած ու դադրած, որսից հույսդ բոլորովին կտրած, տուն ես վերադառնում, և հանկարծ կես ճամփին, գյուղին բոլորովին մոտիկ, պատահաբար մի կենդանի է ընկնում հրացանիդ բերանը...
Նա նույնիսկ բախտին էր հավատում, բայց ոչ կուրորեն, սնոտիապաշտ մարդկանց նման: Անսպասելի գյուտը, իրեն հանդիպած անսպասելի որսը նա «բախտ» էր անվանում («Որսը բախտի բան է»: «Թե որ բախտս բանեց՝ որսից դատարկ չեմ գա»: «Էս անգամ, Սիրան, քո բախտից եմ որսի գնում...»): Բախտը նրան կյանքում m հանդերում այնքան հաճախ էր ժպտացել, այնպես էր հանել հուսահատ վիճակից, որ Արամը իր որդուն փնտրելիս չէր կարող հույսը բոլորովին մարած որոնել:
- Էլի լավ չես հասկացել, Արշա՛կ, ախր մենակ դանակը չի, էս ճյուղը Հովազաձորից է եկել:
- Ինչի՞ց գիտես, - թերահավատությամբ հարցնում էր Արշակը:
- Հենց թիկունքիդ լենքին ես զոռ տվել, - հանդիմանեց ընկերը: - Բա էս հեղեղի ուղղությամբ էլ որտե՞ղ եղևնի կա...
Արշակն հեղեղատն ի վեր նայեց: Վերևում Հովազաձորի ժայռերը հուրհրատին էին տալիս մայր մտնող արեգակի վերջին շողերից և նմանվում էին հարկ առ հարկ դեպի երկինք խոյացող անձեռակերտ պալատների, շրջապատված նրանց պաշտպանող աշտարակներով ու բուրգերով: Եվ ահա այդ կարմիր բուրգերին այստեղ-այնտեղ կանաչ բոցերի նման վառվում էին հատուկենտ եղևնիները...

- Հա, ասենք թե էս ճյուղը Հովազաձորից է եկել, վերջը՞, - հարցրեց Արշակը:
- Ուրեմն էս գիրքն էլ է Հովազաձորից եկել, Հասոյի աբան էլ...
- Է՛հ, մեկ չի՞, դաշտո՞ւմ են խեղդվել, թե սարում, - ծանր վշտով պատասխանեց Արշակը: - Ետ գնանք, մթնում է:
- Չէ՛, պիտի գնանք Հովազաձոր, տեղում նայենք: Ո՛վ գիտի, աշխարհում էնքա՛ն պատահական բաներ են լինո՛ւմ, - հրաշքի նման բաներ...
Արամի գլխում մի միտք ծագեց և դրանից լուսավորվեց նրա թուխ, առնական դեմքը:
- Բա որ կենդանի լինե՞ն... Բա որ իրենց գիրքը, շորերը հեղեղի հետ ուղարկած լինեն, որ մեզ իմաց տան իրենց տե՞ղը... Ա՛խ, որսորդի բախտ, ո՞ւր ես...
Այնպես թառանչ քաշեց այդ մարդը, որ թվում էր «ախ»-ի հետ հոգին էլ դուրս թռավ:
Դե որսորդները ցնորամիտ են լինում, Արշակը ինչպե՞ս հավատար իր ընկերոջ ենթադրություններին («Սրանց մասին ասում են՝ փչող են, թեև ես Արամից էդ բանը չեմ նկատել», - անցավ Արշակի մտքով: - «Ո՛վ գիտի, ինչքան չլինի մի մազ քաշած կլինի...», - շարունակեց կասկածել նա):
- Հը, ի՞նչ ես մտածում, գնա՛նք, - շտապեցնում էր Արամը:
- Լա՛վ, որ ստիպում ես, գնանք...
Նրանք հասան ժայռերի տակ և կանգ առան: Հովազաձորի ներքին պռնկին, ահռելի բարձրությունից գահավիժել էր հեղեղը, ներքևում փշրել-մանրացրել քարերը, փոս էր փորել, դրա մեջ պտույտներ գործել ու դուրս վազելով՝ շտապել դեպի Արարատյան դաշտ:
Ահա այդ փոսում ջրապտույտի հետ պտտվել և ափ էր նետվել մի հատիկ կանացի կոշիկ...
- Տեսա՞ր, Արշակ, որ ասում եմ Հովազաձորում են եղել... Էդ Միրուք Ասատուրը իմաստուն է, իմաստո՛ւն...- ալեկոծվեց Արամը՝ կոշիկը ձեռքին զննելով: - Աշխենի աղջկա կոշիկն է... խե՛ղճ երեխա... Չէ՛, Արշա՛կ, մեր երեխեքը կորան... Փուչ դուրս եկավ իմ ենթադրությունը... Մեզ իմաց տալու համար թղթեր կթափեին ջրի մեջ, հո կոշիկ չէին գցի, իրենք ձնի մեջ բոբիկ ման գան...
Արամը նորից հուսահատ նստեց քարին, նրա սիրտը կարծես սեղմում էին այնպիսի ուժով, որ թվում էր հիմա կպայթի: Գնաց- կորավ իր թառլան տղան, իր ամենից սիրած երեխան, որին հենց փոքրուց որսորդ էր պատրաստում: Դաստիարակում էր նա կրտսեր որդուն իր հասկացածի պես, որ նա վախ չունենա հովազի նման, լուսանի ճարպկություն ունենա և առյուծի սիրտ: Մեծ ապագա էր տեսնում Արամն իր շիտակ երեխայի առաջ. «Ղեկավար կդառնա, ազնիվ ղեկավար...», - միշտ մտքում ասում էր Արամը և այդ մտքից փառավորվում էր նրա հայրական հոգին:
- Գնա՛նք, - սթափվեց նա իր մտքերից և վեր կացավ: - Արշակ, դու գնա ձիերը տար գյուղ:
- Իսկ դո՞ւ:
- Ես մի վերև բարձրանամ, էլի ետ կգամ:
- Բարձրանալու տեղ չկա, գնանք, առավոտը ետ կգանք:
- Չէ, գիշերը լուսնյակ է լինելու, ոչինչ: Պտտելու եմ՝ քարափների թիկունքն անց կենամ... Վերջը, տեսնենք էլի... Գամ ի՞նչ անեմ, տանը սիրտս նեղվում է: Էն երեխի պատից կախված շորերին չեմ կարողանում մտիկ անեմ... Գնա՛...
Ու տեսնելով, որ ընկերը տատանվում է, բարկացավ.
- Այ տղա, հո ինձ երեխի տեղ չե՞ս դրել, թե՞ առաջին անգամ եմ գիշերով սար բարձրանում:
Արշակը հեղեղատով քայլեց դաշտում սպասող ձիերի կողմը, իսկ Արամը ժայռերի տակով թեքվեց դեպի աջ և լանջերով գնաց դեպի ֆերման, այն կողմից բարձրանալու իր ցանկացած տեղը:
Այդպիսով լեռը կիսով չափ նա պտույտ պիտի տար, ուստի կեսգիշերին միայն դուրս եկավ այն լանջը, որտեղից քարայծերի խումբը՝ գլխարկավոր նոխազի առաջնորդությամբ՝ Արարատյան դաշտի աղուտներն էր իջել:
Սիրտը լի հույսերով ու կասկածներով, նա բարձրանում էր Հովազաձորը արևելքից պատնեշող ժայռերի գլուխը:
«Հե՛յ գիտի բա՛խտ... Հե՛յ գիտի որսկա՛ն Ասատուր, ենթադրությունդ ճիշտ դուրս գա՛ր, էլ բան չեմ ուզում աշխարհից...», - մտածում էր Արամը ու իր մտքերից եփվելով հևիհև բարձրանում շեկ ժայռերն ի վեր:
Վերջապես քրտնքի մեջ կորած դուրս եկավ մեզ ծանոթ Դիվային կածանի» ծայրը, նստեց ժայռի սեպ կատարին ու նայեց իր դիմաց խորացող Հովազաձորին:
Աշնան վերջին գիշերն էր: Կեսգիշերից հետո՝ դեկտեմբերի քսաներեքին մեր մոլորակի հյուսիսային կեսը մտնելու էր ձմռան շրջանը:
Արդեն մաշվող լուսինը նոր էր բարձրանում գունատ երկնակամարում: Նա իր դժգույն լույսով ողողել էր ձորի մյուս ափի ժայռերը, որոնք նայում էին արևելք, իսկ այն ժայռերը, որոնց լանջով ձորն էին իջել մեր պատանիները, երեսով դեպի արևմուտք էին, ուստի և դեռ խավար էր տիրում այնտեղ: Ներքևում

անդունդն էր իր սև երախը բացել, իսկ բուն Հովազաձորի մի մասը լուսավորված էր, մյուսը՝ դեռ ստվերում:
Ականջը բնության ձայներին, աչքը դիմացի ժայռերին, Արամը այնպես էր լարվել, որ քունքերում զգում էր իր արյան զարկերը:
Լուսինը դանդաղ բարձրանում էր և լույսի շերտը կամաց-կամաց իջնում էր Հովազաձորի լանջերով դեպի բուն ձորը: Ահա նա հասավ խաղողի այգուն (այդ այգին Արամին լավ հայտնի էր), ստվերից դուրս եկավ միայն մեկ ուռենի: «Ախր երկուսն էին... բա մե՞կը ով է կտրել...»: Նրա մոտ ճերմակին էր տալիս մի մերկ ծառ՝ մինչև ճյուղերի ծայրը կեղևահան արած թեղին: Այո՛, ստվերի աղջամուղջի մեջ այդ ծառը կանգնած էր ճերմակ ճյուղերը տարածած... «Ի՞նչ բան է սա, - զարմացած մտածում էր Արամը.- «Թեղին թուխ է լինում: Ինչո՞ւ է սպիտակ, ո՞վ է տկլորացրել էդ ծառը...»:
Այդ մտքից Արամն ալեկոծվեց: Բայց դեռ ձայն չէր տալիս, սիրտ չէր անում: Նա նման էր այն մարդուն, որը նեղ հուն, բայց սրընթաց գետի ափին կանգնած՝ տատանվում է, ցատկե՞լ մյուս ափը, թե ոչ:
Պիտի գոչեր, ձայն տար ժայռի գլխից, դրա համար էր ողջ գիշերը հևիհև լեռը բարձրացել: Բայց ուշացնում էր, սիրտ չէր անում: Իսկ եթե միայն ժայռերն արձագանքեն իր կանչի՞ն... Չէր ցանկանում, որ կործանվի իր վերջին հույսը...
Սպասեց մի քիչ էլ: Վերևից փռշտոցի նման ձայն լսվեց և մի ուրվական վազքով անցավ ժայռի հետևը. վայրի խոյի ձայն էր, ընկերուհուն է զգուշացնում: Ահա նա, քարի պատվանդանին կանգնած, ոլոր եղջյուրները երկնքի ֆոնին գծագրված: Թե մի լույս կլի՜նի...
Արամը որսորդի բնազդով մեկնեց հրացանը, նշան բռնեց ու ետ քաշելով, սիրտը կոտրած կրկնեց իր ընկեր Արշակի խոսքը, «Է՛հ, ի՞նչ եմ կորցրե՛լ, ինչի եմ ման գալիս...»: Իր ցեղի սովորության համաձայն վայրի խոյը մեկ-երկու րոպեի չափ լարված դիտեց մարդուն և պատվանդանից ցած ցատկելով, բարձր ու աղեղնաձև թռիչքներով անհետացավ:
- Դե՛հ, քե՛զ տեսնեմ, որսորդի բախտ, - շշնջաց Արամը, բնազդորեն հայացքը դեպի երկինք բարձրացրեց, ինչպես դա անում են բնության մեջ ապրած մարդիկ, և վեր կենալով, ուզեց ձայն տալ, բայց դուրս չեկավ, շատ էր հուզված, սիրտը խփում էր ուժգին, շունչը բռնվում էր: Կարծես այդ ձայնը և նրան հաջորդող վայրկյանները պիտի վճռեին իր լինել-չլինելու հարցը: Այդ ճակատագրական վայրկյանները... Լուռ մնաց, մի փոքր խաղաղվեց, մաքրեց կոկորդն ու սառն օդով լցնելով իր առողջ, լայն թոքերը ինչքան ուժ ուներ կանչեց.
- Աշո՛տ, հե՛յ, Աշո՛ո՛տ...
Ձայնը դմբդմբալով գնաց ձորը և արձագանքեց ժայռերում:
Ամբողջովին լսողություն դարձած, գլուխը ձորի վրա թեքած՝ նա քարացել էր տեղում և չէր շնչում:
Վայրկյաններն անցնում էին արճճի ծանրությամբ: Թվաց, թե մի ամբողջ հավիտենականություն ապրեց Արամը: Նորից կանչեց և նորից մնաց անպատասխան:
Եվ երբ փշրված սրտով բացեց բերանը, որ մեկ էլ կանչի ու հուսահատ փլվի քարին, հանկարծ մթնում շողաց «որսորդի բախտը». դիմացի ժայռերից մի մարդկային բարակ ձայն լսվեց.
- Հե՛յ...
Ապա նույն ձայնը տագնապահար սկսեց կանչել.
- Վեր կացե՛ք, Աշո՛տ, Գագի՛կ, վեր կացեք, մե՛զ են կանչում...
Այնպես պարզ էր լսվում այդ ձայնը գիշերային խաղաղ օդի միջից, որ նրա սուր ականջին էին հասնում նույնիսկ արթնացող տղաների քրթմնջոցը. «Ի՞նչ է, Հասո՛, ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել...»:
Լսեց որսորդ Արամն այդ ձայները, լսեց իր որդու անունը, որին սիրում էր իր կյանքից ավելի, թուլացած նստեց քարին ու ժայռի նման այդ մարդը սկսեց հեկեկալ: Ջերմ արցունքները գլորվում էին նրա քամահարված այտերով, սիրտը դատարկվում էր շաբաթներ շարունակ իրեն ճնշող բեռից ու թեթևանում, թեթևանում...
Դիմացի ժայռից խառնիխուռն ձայն էին տալիս.
- Այստեղ ե՛նք, այստեղ ե՛նք...
- Հասե՛ք, փրկեցե՛ք...
- Ով ե՛ս, ով ե՛ս...
Իսկ մի աղջիկ լալիս էր բարձրաձայն, լալիս էր անշուշտ անակնկալ բերկրանքից, ինչպես հիմա Արամն է քարին նստած լալիս, հասակն առած, դժվարություններում կոփված այս տղամարդը:
Նրա կոկորդը սեղմվել էր, ուզում էր ձայն տա, պատասխանի՝ չէր կարողանում, ձայնը դավաճանում էր իրեն:
Այն ժամանակ ժայռերում ձայները դադարեցին, բոլորը քարացան-լսողություն դարձան, ու հետո խաղաղ օդում լսվեց որդու ծանոթ ձայնը.
- Է՛հ, Հասո՛, ականջդ ձեն է տալիս... Նե՛րս գնացեք, կսառչեք...

«Մատաղ արևին, տղա է, է՛... սրտի՛ն մատաղ, աչքերին մատաղ...», - լալով մրմնջաց հայրն ու հրացանը դեպի ձորը մեկնեց. «Թող իմ տեղը ախպերս ձեն տա...»: Եվ իրար հետևից բաց թողեց երկու փողի լիցքն էլ.
- Դո՛ւմբ-դո՛ւմբ...
Երկու բոց ժայթքեց պողպատե խողովակներից, և թնդյունների հետ թունդ առավ որսորդի հոգին:
- Ձա՛ն, հայրիկս է... Հայրի՛կ...
Աշոտին ծանոթ էր այդ կրակոցը: Հեռու սարերում, որսի ժամանակ, երբ կորցնում էին իրար, հայրը այդպե՛ս էր կանչում իրեն՝ զույգ կրակոցով, դա նրանց պայմանական նշանն էր:
- Արամ քեռի՛, Արամ քեռի՛, - լսվում էր Գագիկի դուրեկան տենորը:
- Հայրի՛կ, հայրի՛կ...
Իսկ Շուշիկը շարունակում էր լաց լինել:
Գիշերը լեռներում իրար հասկանալու համար գոռալ հարկավոր չէ, գոռալով բան չի հասկացվում, պիտի խոսել նույնիսկ ոչ այնքան բարձր ձայնով, բայց պարզ, հատ-հատ: Եթե խոսակիցների միջև ձոր է ընկած, իսկ մի լանջից մյուսը ուղիղ գծով մի քանի կիլոմետր տարածություն է, դարձյալ ձորը լցված խաղաղ Օդը ամեն փոքր ձայնից ալեկոծվում է և ալիք-ալիք մյուս ափը հասցնում դիմացի ձայնը: Այդ բանը լավ գիտեր Արամը և իր սրտին խոսք հասկացնելով-համոզելով, որ հանգստանա, սկսեց սովորական տոնով խոսել, ինչպես կխոսեր իրենց բակում.
- Երեխեք ջան, բոլորդ էլ կենդանի՞ եք...
- Կենդանի ե՞նք, կենդանի՛, - գոռաց Աշոտը՛
- Ինձ նման կամաց խոսի՛ր... Առո՞ղջ եք, հո հիվանդ չունե՞ք:
- Լավ ենք, քեռի Արամ, միայն Սարգիսն է մի քիչ վատ: Մեկ էլ Բոյնախը չարդ տարավ... Իսկական ամառանոցում ենք քեռի Արամ, օդը մաքո՛ւր, հո՛վ...
Արամն այնպես քահ-քահ խնդաց, որ ժայռերը դմբդմբացին:
- Ա՛յ տղա, էլի էն մասխարա՞ն ես... Ո՞նց եք, ո՞նց եք ապրել:
- Արջերի հետ կոխ բռնելով, հովազներին տիկ հանելով մի կերպ ապրել ենք, է՛լի, քեռի Արամ, - շարունակում էր կատակել Գագիկը:
- Ճգնավորի պես, - լսվեց Շուշիկի բարակ ձայնը և հետո էլ ծիծաղը:
- Չես երևում, հայրի՛կ, մի լույսը դուրս արի...
Արամը ստվերից ետ-ետ գնաց, բարձրացավ մի քարի, և այն ժամանակ մեր պատանիները երկնքի ֆոնի վրա գծագրված մի հսկա մարդ տեսան հրացանը ձեռքին:
- Պա՛հ, էդ ե՞րբ ես էդքան բոյ քաշել, քեռի Արամ, - հարցնում էր Գագիկը զարմացած: Կատակում էր. նա տեսել էր նույն քարին կանգնած արծիվը, որ երկնքի ֆոնին մի մարդու չափ էր երևում, դե մարդն ինչքա՞ն կերևա:
Այդպես նրանք երկար զրույց էին անում և հետզհետե խաղաղվում հոգեպես:
- Քույրերս, մայրիկս ինչպե՞ս են, Արամ քեռի, - հարցրեց Շուշիկը:
- Մերդ հիմի կոշիկիդ թայի վրա լաց է լինում: Կոշիկդ հեղեղատում ենք գտել, աղջի՛, դրանց գրքերն էլ... Հասոյի աբան էլ ենք գտել:
Պատանիները այրի շեմքին, աղջամուղջի մեջ խռնված՝ լսում էին այդ լուրերը, աղմկում, ուրախանում, պար գալիս: Հասոն չհամբերեց ու գոչեց.
- Արամ ափո՛, Թուխիկին գտել ենք, Թուխիկի՛ն...
- Թուխիկը ո՞րն է, այ տղա... Դե լավ, ես հիմի կիջնեմ...
- Այդպիսի բան չանես, հայրի՛կ, գնա գյուղ, էգուց կգաք, - անհանգստացավ Աշոտը:
- Մոտդ եմ գալիս, այ ասլան-բալա, ես գյուղում ի՞նչ գործ ունեմ:
- Կածանը սառած է, չգաս, - տագնապահար կանչեց Աշոտը: - Ետ գնա՛, մորս մի տեղեկություն տար: Գնա հանգստացրու Պարույր քեռուն, Արշակ քեռուն, Աշխեն մոքիրին, Հասոյի հորը... Ե՛տ գնա:
- Հա՛, էդ էլ ես լավ ասում, գնամ ուրախացնեմ, - համոզվեց Արամը և ինքն իրեն ավելացրեց.- Էդ ո՛ր օրվանից է ավազակ Պարույրը դրա քեռին դառել...- Դե՛հ, երեխեք ջան, բարի գիշեր, ես գնացի:
Ու Արամը շուռ եկավ և քայլեց դեպի գյուղ:
Նա այնպես թեթև էր քայլում, կարծես ոտքերը գետին չէին առնում, կարծես լողում էր ամպերի միջով:
Լուսինը կաթնագույն լույսով ողողել էր Արաքսի հովիտը, ծեր Մասիսի փառահեղ դեմքը, դիմացի լեռնաշարքերը, ձախ՝ դեպի ֆերման գնացող ձորը՝ ամեն քար ու թուփ, և այնպես խաղաղ էր շուրջը, այնպես վսեմ ու խորհրդավոր, կարծես տիեզերքը լցված էր խնդուն մի երգով, որ փառաբանում էր այս չքնաղ աշխարհը, խնդություններով լի այս կյանքը... Թե՞ երջանիկ հոր սրտի մեջ էր այդ երգը:
Քայլում էր որսորդ Արամը թեթև՛-թեթև: Երբեմն կանգ էր առնում, բարձունքից նայում աշխարհին հպա՛րտ, վսե՛մ, և այնպես ուժեղ էր զգում իրեն իր երջանկության մեջ, որ նրան թվում էր ոչ մի ուժ

աշխարհում իրեն հաղթել չի կարող, այդպես է զգում բախտավոր մարդը բարձունքից աշխարհին նայելիս:
Նա կանգ առավ գյուղի թիկունքի բլրի գագաթին: Այդտեղ վերջանում էին դաշտն իջնող լեռները, բլրի ստորոտից սկսվում էր տափարակը: Վերջանում էր և լեռներից ցած եկող ձորը, որի ներքին պռնկին հայրենի գյուղն էր մուշ-մուշ քնած:
Լանջերը բաց էին, իսկ ձորը ծածկված էր ձյունով, այգիները ճերմակ վերմակի տակ էին: Գյուղում միշտ արթուն ճրագներ էին վառվում:
Նստել էր Արամը մի քարի ու ցած էր նայում: Խաղաղվել էր նրա հոգին, ինչպես ծովը փոթորկից հետո, և այնպիսի հոգնածություն էր զգում, ինչպես դա լինում է մեծ ապրումներից հետո:
- Է՛հ, հիմի պառավս աչքը ճամփին ինձ է սպասում... Հիմի էլի լաց է լինում առանց արցունքի... Կաց մի ուրախացնեմ:
Եվ ոտքի կանգնելով, ինչքան ուժ ուներ ձայն տվեց.
- Այ այգեձորցիք, երեխեքին գտե՛լ եմ, վեր կացե՛ք, երեխեքին գտե՛լ եմ, վեր կացե՛ք...
Ապա հրացանը մեկնեց դեպի երկինք, նրա զույգ փողերից բաց թողեց հայտնի ազդանշանը և զույգ որոտներով ավետեց բերկրալի լուրը Այգեձոր գյուղին:
- Այ գյուղացի՛ք, վեր կացե՛ք... երեխեքին գտե՛լ եմ, վեր կացե՛ք...
Այգեձորի քնաթաթախ բնակիչները լսում էին բլրից եկող ձայնը, լույսեր էին վառվում տներում, դռներ էին ճռնչում, և կիսահագնված մարդիկ իրար ձայն էին տալիս.
- Արա՛մն է, երեխեքը գտնվել են... Վե՛ր կացեք, գնա՛նք...
Դեռ լույսը չէր բացվել, երբ Հովազաձորի բնական պարիսպները լցվեցին մարդկանցով: Վառել էին փայտերի ծայրերի նավթոտ փաթաթանները, և նրանց լույսի տակ մարդկանց շարժումները ֆանտաստիկ ձևերով ընկնում էին ժայռերին, ստվերները մեծանում էին, բազմապատկվում: Եվ թվում էր միջնադարն է ու Հովազաձորի բնական բերդը պաշարված է երկիրը ներխուժած զորքերով...
Մեր պատանիները այրի առաջ խարույկ էին վառել ու բոլորել նրա շուրջը՝ վերջին խարույկը... Նայում էին նրանք ապառաժե աշտարակներին ժխորող մարդկանց, նայում էին Հովազաձորը լուսավորող վիթխարի ջահերին և լսում էին իրենց մայրերի սրտամորմոք կանչերը.
- Բալեք ջա՛ն, բալեք ջա՛ն... Ձեր արևին մատաղ, այ ազիզ բալիկնե՛ր...

## ՎԵՐՋԱԲԱՆ

Տոթ է Արարատյան դաշտում, այնպես տոթ, որ օդը թանձրացել է մառախուղի նման: Շնչավորներից ով թև ունի թռել-գնացել է հով երկրներ, օձերն անգամ, շոգից նեղվելով, լեռներն ամառանոց են գնացել:
Եվ ահա այդ անտանելի շոգին, երբ երկնքում մի կտոր ամպ չկա, մեկ էլ տեսար դաշտը եզերող պղնձագույն ժայռերից հեղեղ թափվեց ցած և գոռում-գոչյունով գնաց, պղտորեց Արաքսի զուլալ ջրերը:
Ի՞նչ հեղեղ էր դա, որտեղի՞ց էր գալիս, - դարեր շարունակ մարդիկ գլուխ էին ջարդում այդ առեղծվածի վրա:
Եվ դարեր շարունակ մարդկանց ահի մեջ պահող ու նրանց միտքն զբաղեցնող այդ առեղծվածն այնպես էլ անլուծելի կմնար, եթե աշնան մի օր Այգեձորից մի խումբ պիոներներ չուղևորվեին դեպի անասնապահական ֆերմա՝ իրենց ենթաշեֆ հորթերին խնամելու և ապա պատահմունքով գերի չմնային Հովազաձորում:
Այդ ահավոր ձորից նրանք դուրս եկան նիհարած, քամուց ու արևից բրոնզագույն դեմքերով և պատառոտված հագուստներով: Բայց մարմնով կոփված էին և հոգով կորովի: Ձմռան դաժան տարերքը շրջապատեց նրանց սառնամանիքով, քաղցով, զրկանքներով և սպառնում էր ոչնչացնել: Բայց մեր պիոներները չոչնչացան և նույնիսկ չընկճվեցին: Նրանք հաղթող դուրս եկան Հովազաձորից, հաղթող՝ բնության դեմ մղած իրենց դժվարին կռվում:
Անցել են այն ծանր օրերը, անցել են և՛ սառնամանիք, և՛ բուք:
Նորից գարուն է Արարատյան դաշտում, նորից պղտորվել, հորդացել են Արաքսի ջրերը:
Հովազաձորից ներքև, հովտի խոպան մասում, ուր մարդիկ միշտ ուղտափուշ են տեսել ու տափաստանային օշինդր, պողպատե երիվարներ են արշավում՝ հռնդոցով և ծուխ արձակելով: Նրանք պատռում են անապատի ընդերքը, վեր հանում արևից խանձված շագանակագույն հողը և բարդ-բարդում իրար կողքի՝ օվկիանոսի ծառացած ալիքների նման: Նրանց հետևից ընթանում են այլ մեքենաներ, որոնք խրամատներ են փորում հերկի մեջ, իրար զուգահեռ խոր խրամատներ:
Այգեգործ Արշակը կողովից հանում է վայրի որթատունկի կտրոնները, խրձիկներով հանձնում է դպրոցականներին և պատվիրում.
- Դե՛, երեխեք ջան, շնորհքով տնկեցեք, էնպես որ բոլորն էլ կպչեն...

Եվ նրանք տնկում են խրամատների մեջ Հովազաձորից բերված կտրոնները, տնկում են հույսով ու բերկրանքով:
Նախագահ Հարութն այլևս չկա: Հիմա ուրիշ մարդիկ են ղեկավարում Այգեձորը և նրանց նախաձեռնությամբ է տնկվում այս այգին, միակը Արարատյան դաշտի այգիների մեջ, որը ձմեռները մնալու է բաց և ոչ մի սառնամանիք չի ցրտահարելու նրան: Իրականանում է վաղամեռ Սարոյենց Արտեմի իղձը, վերակենդանանում է նրա գցած երբեմնի այգին, որը շատ ավելի լայն է լինելու, շատ ավելի փարթամ, և նրա տերը անզոր չի լինելու բնության դեմ, ինչպես Սարոյենց Արտեմը:
- Տնկի՛ր, հա, տնկի՛ր, իսկի չես ասում, թե երբ ենք ուտելու սրա տված խաղողը, - քրտնած ճակատը սրբելով, ծիծաղը սև աչքերի մեջ Աշոտին դիմում է իր ընկեր Գագիկը:
- Սա բերք կտա այն ամառ, երբ մենք կավարտենք միջնակարգ դպրոցը և հասունության վկայականներ կստանանք, - պատասխանում է պատանին՝ երազուն հայացքը Արաքսի շամբուտներին հառած:
Երևանի կողմից մի «Վիլիս» եկավ, ծռվեց ճանապարհից դեպի ձախ, գնաց ցամաք հեղեղատն ի վեր:
Նրանից բրեզենտյա հագուստներով մարդիկ իջան, նայեցին դաշտում փռված աշխատող երեխաներին և մեկը՝ պիոներական թերթը բացելով՝ հարցրեց.
- Ովքե՞ր են ձեր մեջ Հովազաձորի գերիները... Թող առաջ գան և մեզ ցույց տան վայրի խաղողի այգին:
Գիտությունների ակադեմիայից են, եկել են փորձակայանի համար կտրոններ տանելու:
Նայում են նրանք անջրդի անապատին և գլուխներն օրորում: Իսկապես, ի՞նչ հույսով են այս մարդիկ այգի գցում այս անջուր ու պապակ վայրում:
- Քարայրից եկող հեղեղի հույսով, - բացատրեցին նրանց:
Երկրաբաններ են եկել Երևանից, հետազոտել են քարայրի խորքերը և բացել գաղտնիքը: Նրանք պայթեցրել են ապառաժները և ստորերկրյա մի գաղտնի ավազան հայտնաբերել, որի մեջ մեկնված են ստորերկրյա ջրերը՝ սառն ու մռայլ...
Այդ գաղտնի ջրամբարի առաջ մի շարժվող քար կա: Երբ լցվում է ավազանը, ջրի ճնշումից այդ քարը շուռ է գալիս, բացվում է ջրամբարի բերանը և հեղեղ է դուրս հորդում քարայրից: Երբ ջուրն իջնում է և ճնշումը պակասում, քարը նորից իր նախկին դիրքն է ընդունում և փակում ավազանի բերանը:
Ահա ինչպիսի հասարակ պատճառ են ունեցել այն խորհրդավոր հեղեղները, որ գալիս էին նույնիսկ երաշտ տարվա պարզ օրերին: Փրփրաբերան վիշապի նման մեջքներն ուռցրած, գոռում-գոչյունով գալիս-անցնում էին նրանք Արարատյան դաշտով և Այգեձորի հին սերունդներին բերում էին ահ ու մտահոգություն...
Չկա այլևս այդ հրաշք-հեղեղը և ոչ էլ մարդիկ ահով սպասում են նրան:
Հիմա ավազանը բանդել են ցեմենտյա պատվարով: Աշնանից մինչև գարնան վերջը ջուրը հավաքվում ուռչում է ստորերկրյա լճակում, և երբ ծարավում են մատղաշ որթատունկերը իրենց խրամատներում, որսորդ Արամը «Դիվային կածանով» Հովազաձոր է մտնում, հրացանը դեմ է անում այրի պատին և շլյուզը բարձրացնում:
Հորդում է ջուրը քարայրից, գնում-ջրվեժ է կապում Հովազաձորի ներքին ժայռերում՝ ճերմա՛կ-ճերմակ փրփուրներով ջրվեժ, և դաշտ դուրս գալով՝ վազում դեպի ջրի կարոտ որթատունկերը:
Նայում է Արամը գոչ-գոչող ջրերի հետևից, նայում է բերկրանքով ու շշնջում.
- Իմ բալի տանջանքը զուր չանցավ, իմ ասլան-բալի...
Ապա շուռ է գալիս դեպի դարավանդները և նորից տեսնում այն մենավոր կենդանուն՝ ջրերի հետևից զարմացած նայելիս. Թուխիկի գառն է: Մայրն ու հայրը վաղուց ֆերմայում են, իսկ ինքը դեռ վայրենի կյանք է վարում: Ո՛չ Հասոյի հորդորները, ո՛չ Արամի հնարքները՝ ոչինչ չօգնեցին, ազատ բնության մեջ ծնված և ազատ մեծացած այդ արարածը չիջավ իր սիրած ժայռերից:
- Է՛հ, մեղքը քո վիզը, արածիր-չաղացիր, աշնանը կգամ հրացանը ձեռքիս... Էն ժամանակ էլ ինձ չմեղադրե՛ս...
Ինքն իրեն ասում է Արամը վայրի գառան հասցեին և շլյուզը իջեցնելով, ճամփա ընկնում դեպի տուն:
Իսկ Հասո՞ն:
Նա նորից հովվի օգնական է ոչխարաբուծական ֆերմայում: Հոտը փռում է ծաղկոտ լանջերին, ինքը նստում է Հովազաձորի բա՛րձր-բա՛րձր ժայռերին, նայում է այն վայրերին, ոտ երազի նման անցան տանջանքներով և ուրախություններով լի այն օրերը, ու անմեկին թախիծով է պատում նրա մատաղ հոգին:
«Սարի գելն էլ մենակ չլինի...», -շշնջալով կրկնում է նա քրդական առածը ու զգում է, թե որքա՛ն շատ է կարոտել իր նեղ օրերի ընկերներին:
Ապա պայուսակից հանում է դասագիրքն ու վանկ առ վանկ կարդում.
- Ով աշ-խա-տի, նա կու-տի...
Սերտում է դասը, ժպտում ինքն իրեն.

- Էսօր ուրբաթ է... Երկու օրից Շուշիկը կգա ֆերմա... Էնպես պատասխանեմ դասս, որ զարմանա...
Ու ջերմ զգացումը սրտում, գոտուց հանում է սրինգն ու նվագում.
- Լո՛, լո՛, լո՛, լո՛, լո՛...
Ապա քար է նետում չարաճճի այծերին, մետաքսե փուշիով փաթաթած իր քոլոզը հանում-դնում է քարին և ձեռքը ականջին՝ քրդական անուշ մեղեդիներ է երգում.

- Բերիվանե՛, բերիվանե՛
Սերը՝ սիրով –
Կանաչեցնում է չոր հողը,
Ծաղիկներ է տալիս ռանգ-ռանգ...

Նայում է Շուշիկը խրամատներում շարք առ շարք կանաչած ընձյուղներին, նայում է ջերմությամբ: Ու երբ ծանոթ երգի դայլայլը լեռներից հովիտն է իջնում, ձեռքով հով է անում աչքերին, տեսնում է հեռո՛ւ-հեռո՛ւ ժայռերին արծվի նման թառած տղային ու դառնում է ընկերոջը.
- Աշո՛տ, լսի՛ր, Հասոն է երգում... Մեր Հասոն...

ՎԵՐՋ

1955